ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

11

ԵՐԵՎԱՆ 2010

9(47.925)
Հ-28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

4568

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
A COLLECTION OF SCENTIFIC ARTICLES
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

11

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
63

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
63

ԵՐԵՎԱՆ 2010

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Հ 282

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Ա. Ա. Մելքոնյան (նախագահ)
պ. գ. թ., դոցենտ Կ. Հ. Խաչատրյան
պ. գ. թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան
պ. գ. թ. Ա. Վ. Մաղալյան

Հ 282 Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)/ Խմբագրական խորհուրդ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյան (նախագահ), պ. գ. թ., դոցենտ Կ. Հ. Խաչատրյան, պ. գ. թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան պ. գ. թ. Ա. Վ. Մաղալյան. - Եր.: Պատմ. ինստ., 2010, - 358 էջ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» խորագրով գիտական հոդվածների ժողովածուի 11-րդ հատորում զետեղված աշխատություններն աղբյուրագիտական լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց հին, միջնադարյան, նոր և նորագույն պատմության առանձին հիմնահարցերի վրա:

Հոդվածների մեծ մասը զեկուցվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 31-րդ նստաշրջանում (4 հուլիսի, 2010թ.):

Ժողովածուն նախատեսված է մասնագետ-պատմաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-99945-73-47-1

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԳԱԳԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱՂՉՆԻՔԸ ԽԵԹԱԿԱՆ ԵՎ ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ (Ք. ա. 14-9-րդ դդ.)

Մեծ Հայքի 15 աշխարհներից Աղձնիքը հնագույն ժամանակներից նշանավոր էր երկրի պաշտպանական համակարգում: Աղձնիքն իր զբաղեցրած դիրքով բնական պատնեշ լինելով Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում՝ իր պաշտպանական ամրություններով կարևոր դեր էր կատարում Հայաստանի թե՛ սահմանների պաշտպանության թե՛ հարավ-արևմուտքից մտնող ճանապարհների վերահսկման գործում: Աղձնիք նահանգի հարավային եզրագծով պետական սահմանն անցնում էր Արևմտյան Տիգրիսով: Աղձնիքի արևմուտքում՝ Ծոփք, հյուսիսում՝ Տուրուբերան, իսկ արևելքում՝ Մոկք աշխարհներն էին:

Խեթական, ասուրաբաբելական և Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում Աղձնիքը հիշատակվում է *Ալշե, Ալսե, Ալզինի* անվանաձևերով:

Վանի թագավորության արձանագրություններում հանդիպող *alzini, alzina* բառերը որոշ գիտնականների ենթադրությամբ նշանակում է *ժայռոտ*[1]: Հայկական Տավրոսի բարդ լեռնագրությունը հնարավոր է, որ *Ալզինի* անվան ծագման պատճառ է եղել, քանզի Հայկական լեռնաշխարհում հաճախ են հանդիպում աշխարհագրական պայմաններին համապատասխանող տեղանուններ (օրինակ՝ Բյուրակն, Ջրվեժ, Կղեսուրք և այլն): Խոսելով Աղձնիքի մասին՝ Հ. Հյուբշմանը նշել է, որ այն միանշանակ նույնանում է հին Նաիրյան Ալզիի հետ և այն ոչ թե ժողովրդի, այլ «հին բնիկ երկրանուն է»[2]: Ըստ Ն. Հարությունյանի, Հայկական լեռնաշխարհի տարածքում շատ տեղանուններ, որոնք հիշատակվում են սեպագիր արձանագրություններում, հարմարեցվել են վանկագիր սեպագրի կանոն-

[1] Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001, с. 434. Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи, Вестник древней истории, 1971, N 4 , с. 268-267.
[2] Հ. Հիւբշման, Հին հայոց տեղւոյ անունները, թարգմանեց Պիլեզիկճեան Հ.Բ., Վիեննա, 1907, էջ 73:

ներին՝ հին հայկական Աղծնիքը դարձնելով Ալսե, Ալզինի, Տայքը՝ Դայաենի, Դիաուխի, Տմորիքը՝ Տումուրրու և այլն[1]:

Ըստ խեթական ծիսական բնույթ ունեցող մի արձանագրության (Ք.ա. 13-րդ դ.)՝, հարևան երկրների աստվածները հրավիրվում են Խաթթի, նշված երկրների շարքում կան թե՛ Ալշեն, թե՛ Ալասիան (Կիպրոս)[2]:

Մինչև հնագույն Խաթուսաս կոչվող վայրից խեթական սեպագիր արձանագրությունների հայտնաբերումը, Ալշեն երբեմն նույնացվել է Ալասիայի հետ: Նույն կարծիքն է հայտնել նաև Բ. Տուրաևը՝ Ալշեի թագավորի եգիպտական փարավոն Ամենհոտեպ IV-ին (Ք.ա. 1419-1400 թթ.) հղած նամակի կապակցությամբ[3]: Բ. Տուրաևը նշում է նաև Ալշեի թագավորի՝ փարավոնին հղած խնդրագրի մասին, որտեղ Ալշեի թագավորը հայտնում էր, որ Եգիպտոսում գտնվող իր մահացած հպատակի ունեցվածքն Ալշեի դեսպանի հետ վերադարձնի, քանի որ այստեղ նա ընտանիք ուներ[4]: Դեսպանի ներկայությունն Եգիպտոսում վկայում է, որ երկու երկրների առևտրատնտեսական կապը դրված էր ավելի ամուր հիմքի վրա: Ա. Խաչատրյանի կարծիքով Տուրաևի բերած բոլոր փաստերն Ալասիայի մասին, բացառությամբ ծովային հաղորդակցությանը վերաբերվող մասից, պետք է վերաբերեին Ալշեին[5]: Ուստի, Ալշեի նույնացումն Ալասիայի հետ հակասում է պատմական իրադարձությունների իրական պատկերին:

Աշխարհագրական բարենպաստ դիրքի հետ մեկտեղ, Աղծնիքի ռազմավարական նշանակությունը կարևորվում էր նաև պղնձի և երկաթի հանքերով հարուստ լինելու հանգամանքով: Աղծնիքում հնագույն շրջանի հանքագործության մասին տեղեկություններ են պահպանվել սեպագիր արձանագրություններում, որոնցում Ալշեն հիշատակվում է որպես «մետաղների երկիր», ինչը նաև հուշում է Աղծնիքում գինագործության զարգացման մասին:

Ուշագրավ է այն փաստը, որ որոշ գիտնականների կարծիքով պղինձն ու երկաթը հայտնաբերվել են Հայաստանում, և հենց այս-

[1] Ն. Հարությունյան, Հին հայկական տեղանուններն ու ցեղանունները սեպագիր աղբյուրներում և նրանց պատմական արմատները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Ե., 2000, հ. XX, էջ 176:
[2] Ա. Քոսյան, Անի-Կամախը խեթական դարաշրջանում, Պատմա-Բանասիրական Հանդես, 2002, N 3, էջ 231:
[3] Б. А. Тураев, История Древнего Востока, М.-Л., 1935, с. 313.
[4] Նույն տեղում, с. 314.
[5] Ա. Խաչատրյան, Միտանի-խարրի ժողովուրդը, Տեղեկագիր ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտ, Ե., 1926, էջ 140:

տեղ էլ Ք.ա. 20-րդ դարից առաջ ծնունդ է առել երկաթի արդյունաբերությունը[1]: 1963 թ. ամերիկացի հնագետ Ռ. Բրեյդվուդի ղեկավարությամբ Հայկական լեռնաշխարհում Հայոց Աղծնիք նահանգի Անգեղ Տուն գավառի (վաղ նեոլիթյան հնագույն բնակավայրերից մեկի) Արղանայի (էրգանի) պեղումների ժամանակ հայտնաբերվել են պղնձե հելուններ, ասեղներ և պղնձի ծուլակտորներ[2]:

Ալշեի թագավորն անդրադառնում է պղնձի արտադրությանը և, դատելով նրա նամակից, երևում է, որ Ալշեի թագավորն այդքան էլ գոհ չէր այդ տարվա պղնձի հանքերից ստացված հումքի չափից. «Այժմ՝ իմ տեր-եղբայր, իբրև նվեր ուղարկում եմ 500 տաղանդ պղինձ... Թեպետ այս շատ քիչ է, բայց թող քո սիրտը չվրդովվի. որովհետև Ներգալի (անդրաշխարհի և ժանտախտի աստվածը) ձեռքն իմ երկրում սպանեց բոլոր աշխատավորներին. և այս պատճառով էլ պղինձ չի կարող հանվել»[3]:

Ալզիի մետաղով հարուստ լինելու մասին են վկայում ասորական արձանագրությունները: Ասորեստանի թագավոր Աշուրնասիրապալ II-ն (Ք.ա. 884-859 թթ.) իր տարեգրության մեջ նշում է Բիտ-Զամանիի (Ամիդ, այժմ Դիարբեքիր) կառավարիչ Ամմիպալայի (Ամմաբալի, Ամմեբալա) պալատից վերցրած ավարի մասին, որում ուշագրավ են հատկապես արծաթի, ոսկու, պղնձի, բրոնզի և երկաթի կշռաչափերը. « 2 տաղանդ արծաթ, 2 տաղանդ ոսկի, 100 տաղանդ պղինձ, 100 տաղանդ բրոնզ, 300 տաղանդ երկաթ, 100 բրոնզե սպասք, 300 բրոնզե գավաթ...»[4]:

Աղծնիքի երկաթի մասին նշվում է նաև հայ պատմագրության մեջ: Փավստոս Բուզանդը հիշատակում է Աղծնիքի հարևանությամբ՝ Վասպուրական աշխարհի Ռշտունիք գավառում գտնվող մետաղահանքերի մասին «Գայր հասաներ ի լեառն երկաթահատացն և կապարահատացն...»[5]: Աղծնիքի երկաթահանքերից մեկն էլ, ինչպես վերը նշվեց, գտնվում էր Անգեղ Տուն գավառում (այժմյան Արղանա Մադեն)[6]:

[1] Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 17:
[2] Е. Черных, Первый металл планеты, Наука и жизнь, 1998, N 7, с. 33.
[3] Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 140: 20-րդ դարի սկզբին Արղանայի (այժմ Մադեն) հանքերից հանվում էր տարեկան 3000 տ պղինձ:
[4] И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, Вестник древней истории, 1951, N 2, с. 292.
[5] Փաւստոսի Բիւզանդացւոյ, Պատմութիւն հայոց, Ե., 1987, էջ 40:
[6] Ըստ L. Գոլովլևայի՝ Անգեղ Տան պղնձահանքերը ոչ միշտ են պատկանել Ալզիի թագավորությանը, այն մերթ եղել է Իշուվայի, մերթ՝ Ալզիի սեփականությունը, երբ նրանցից մեկը համեմատաբար հզորացել ու տիրացել է իրենց սահմա-

Ռազմավարական կարևոր դիրք ունենալու հետևանքով Ալզիին տարբեր ժամանակներում տարածաշրջանում առաջացած այնպիսի հզոր պետական կազմավորումների ուշադրության կենտրոնում էր, ինչպիսիք էին Խաթին, Միտանին և Ասորեստանը:

Լ. Գոլովլևան անդրադառնալով Ալզիի հարևան երկրներին (հարավում՝ Միտանին, արևմուտքում՝ Իսուվան (Ծոփք), իսկ հյուսիսում՝ Հայասա-Ազզին)՝ նշում է, որ վերջիններիս և Ալզիի միջև եղած բարիդրացիական հարաբերությունների մասին հնարավոր չէ խոսել, քանզի սեպագիր արձանագրություններում բացակայում են նշված երկրների միջև եղած հարաբերությունների մասին վկայությունները, ինչն, ըստ նրա, բացատրվում է նրանով, որ նրանց միջև հարաբերությունները հնարավոր է, որ լարված էին[1]:

Խեթերի համար Տիգրիսի վերին շրջաններն իրենցից ներկայացնում էին թե՛ պաշտպանության, թե՛ հարձակման համար կարևոր հենակետ՝ հյուսիսային և կենտրոնական Միջագետքի նկատմամբ: Իսկ Միտանիի և Ասորեստանի համար այդ շրջանները բանալի էին Հայկական լեռնաշխարհի կենտրոն թափանցելու և Եփրատի վերին հոսանք շարժվելու համար, ինչը ճանապարհ կբացեր դեպի Փոքր Ասիայի արևելյան և հյուսիսային՝ Սև ծովի ափամերձ շրջանների ուղղությամբ[2]:

Ք.ա. 14-րդ դարում խեթական թագավոր Սուպպիլուլիումաս I-ինը (Ք.ա. 1380-1340 թթ.) արշավանք է սկսում Միտանի պետության դեմ: Առաջին արշավանքի ժամանակ ունենալով մեծ կորուստներ՝ Սուպպիլուլիումասն ստիպված էր փոխել արշավանքի երթուղին, քանի որ Միտանիի թագավոր Տուշրատան իր ուժերը կենտրոնացրել էր հյուսիսային Ասորիքում (Սիրիա), և Սուպպիլուլիումասը ստիպված էր անցնել Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններով[3]: Նա իրեն էր ենթարկել Իշուվան (Ծոփք), իսկ հասնելով Ալսի

նագլխին գտնվող այդ շրջանին (Л. М. Головлева, Царство Алзи во второй половине II тыс. до н. э., Древний Восток, 1978, N 3, էջ 73): Հետագայում նման դեպք պատահել է մոտ մ.թ.ա. 160 թ., երբ Ծոփքի Արկաթիոս թագավորն այս գավառը միացրեց իր թագավորությանը՝ այն վերանվանվելով Արկաթիակերտ և դարձնելով իր թագավորության կենտրոնը (Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխարհացույցի, Ե., 1963, էջ 35):

[1] Л. М. Головлева, указ. соч., с. 76.

[2] Նույն տեղում, с. 72.

[3] О. Герни, Хетты, М.,1971, с. 12.

(Աղծնիք)՝ դաշինք էր կնքել վերջինիս կառավարիչ Անտարատլիի հետ և նրան հանձնել Կուտմար (Քղիմար[1]) ամրոցը[2]:

Ակնհայտ էր, որ Աղծնիքն իրենից նշանակալից ուժ էր ներկայացնում և ռազմավարական մեծ նշանակություն ուներ, հակառակ դեպքում Սուպպիլուլիումաս I-ը մյուս շրջանների օրինակով, Աղծնիքը նույնպես կհպատակեցներ, այլ ոչ թե դաշինք կկնքեր վերջինիս հետ: Շատ հավանական է, որ Աղծնիքն աջակցություն է ցույց տվել խեթերին՝ Միտանիի դեմ պատերազմում: Խեթական զորքը հնարավորություն էր ստացել անվտանգ անցնել Աղծնիքի տարածքով՝ Միտանիի դեմ արշավելիս: Նման աջակցությունն անվարձահատույց չէր մնացել: Խեթական մեկ այլ արձանագրությունում խոսվում է այն մասին, որ «Միտանին այլևս գոյություն չունի, Աշուրի և Ալշիի բնակիչներն այն բաժան-բաժան են արել միմյանց միջև»[3]: Այսինքն հաղթանակի պտուղներից օգտվել է նաև Ալսին (Աղծնիքը), ինչը բնորոշ է պատերազմում հաղթող պետությանն աջակցություն ցույց տվող կողմին: Տրամաբանական է. Ալսին նույնպես իր շահն էր հետապնդում պատերազմում:

Խեթական պետության և Ալշեի հարաբերությունները հետագայում նույնպես շարունակում են մնալ խաղաղ, բարիդրացիական պայմաններում, ավելին, եղել են դեպքեր, երբ Ալզիի թագավորը միաժամանակ նստել է նաև Միտանիի գահին[4]:

Այսպիսով՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավարևմտյան շրջաններում գտնվող համեմատաբար փոքր թագավորությունները Ք.ա. 14-13-րդ դդ. խեթական թագավորության հետ դաշնակից, այլ ոչ թե նվաճված երկրներ էին: Սակայն դա երկար չի

[1] Կուտմարը Մեծ Հայքի Աղծնիք նահանգի Քղիմարն է (В. Хачатрян, Восточные провинции Хеттской империи (вопросы топонимики), Ер., 1971, с. 114):

[2] Կուտմարն Ալսիին հանձնելու մասին Լ.Գոլովլևան նշել է, որ վերջնականապես պարզ չէ, թե ում էր այն պատկանում՝ Ալզիին թե Իշուվային (որոշ գիտնականների մոտ նշված է, որ Կուտմարը պատկանել է Ալզիին (В. Хачатрян, указ. соч., с. 114; Н. Арутюнян, Топонимика Урарту, Ер. 1985, с. 124): Այնուամենայնիվ ակնհայտ է՝ խեթական թագավորն այդպիսի քայլ կատարել էր դիվանագիտական նպատակներով, ցանկանալով ստանալ Ալզիի թագավորի աջակցությունը՝ խեթական զորքը դեպի Միտանի շարժվելու համար, քանի որ այն պետք է անցներ Ալզիի տարածքով (խ. Головлева, նշվ. աշխ., էջ 73): Նմանօրինակ կարծիք էր հայտնել Ի. Դյակոնովը՝ նշելով, որ Կուտմարի հանձնումը բացեց խեթերի ճանապարհը դեպի Միտանի (Дьяконов И. М., Предыстория армянского народа (История Армянского нагорья с 1500 по 500 г. до н. э., Хурриты, лувийцы, протоармяне), Ер., 1968, с. 94):

[3] Дьяконов И. М., Предыстория ..., с. 94.

[4] Նույն տեղում, с. 97.

շարունակվել, քանի որ խեթական թագավորությունն աստիճանաբար սկսել է թուլանալ և շուտով որպես պետություն դադարել է գոյություն ունենալ:

Ի տարբերություն խեթերի, որոնք քիչ թե շատ խաղաղ հարաբերությունների մեջ էին Ալշեի հետ, նոր հզորացող Ասորեստանն իր նվաճողական քաղաքականության ծրագրերից չէր հանում Ալզիին: Դա պատճառ էր դարձել Ասորեստանի հաճախակի հարձակումների՝ Ալզիի և նրա հարևան շրջանների վրա:

Այս ժամանակաշրջանում Աղծնիքն սկսում է հիշատակվել Ասորեստանի թագավորների արձանագրություններում, որոնցում, ի տարբերություն խեթական արձանագրությունների, այն ավելի շատ նշվում է որպես թշնամի պետություն, որի վրա տարբեր ժամանակներում հարձակումներ էր գործել Ասորեստանը:

Թուկուլտի Նինուրտայի (Ք. ա. 1260-1230 թթ.) աքքադերեն արձանագրության մեջ Աղծնիքը մի շարք տարածքների հետ, որոնցից թագավորը հարկեր էր գանձում, նշվում է որպես նվաճված երկրամաս[1]: Ասուրական զորքերը նվաճում և ավերում են էխլի-Թեշուբի՝ Ալզիի թագավորի տիրապետության տակ գտնվող չորս քաղաքներ, որոնց բնակիչները գերեվարվել էին Աշշուր, իսկ Ալզիի թագավորն իր ընտանիքի և մի քանի հավատարիմ մարդկանց հետ ստիպված փախուստի էր դիմել: Ալզին մի շարք երկրների (Պուրուլումզի, Ամադանի, Թեբուրզի) հետ ներառվել էր Ասորեստանի սահմանների մեջ[2]:

Թուկուլտի Նինուրտայի սպանությունից հետո Ասորեստանի դիրքերը հյուսիսային շրջաններում սկսում են թուլանալ, ինչից օգտվելով՝ Ալզին հրաժարվում է հարկեր վճարել Ասորեստանին: Նախկին դիրքը վերականգնելու համար՝ Ասորեստանի զորքերը կրկին հյուսիս էին շարժվել Թիգլաթպալասար I-ինի (Ք. ա. 1116-1090 թթ.) ժամանակ, որը նորից արշավել էր Ալզիի դեմ և այն հարկատու էր դարձրել[5]: Թիգլաթինըպալասար I-ինը չափազանցումներով է նկարագրել Ալզիի նվաճումը: Հետաքրքիր է այն փաստը, որ այդպիսի, իբրև թե կործանարար արշավանքից հետո Ալզին նորից հրաժարվել էր հարկ վճարել Ասորեստանին, ինչն ստիպել էր Թիգլաթպալասար I-ինին երկրորդ անգամ արշավել Ալզիի վրա:

[1] И. М. Дьяконов, Вестник ..., с. 267.
[2] Л. Головлева, укз. соч., с. 86.

Երկրորդ արշավանքի ժամանակ Թիգլաթպալասարը «նվաճում, հրի ու սրի է մատնում Ալզին, որը հրաժարվել էր հարկ վճարել իրեն»[1]:

Նմանատիպ արձանագրություն է թողել նաև Ադադներարի II-ը (Ք.ա. 911-890 թթ.)՝, նույնպես խոսելով Ալզին իրեն ենթարկելու և հարկատու դարձնելու մասին[2]:

Նման հաղորդումները ցույց են տալիս, որ ասուրական իշխանության թուլացման հետ մեկտեղ ավելի էր ուժեղանում Աղծնիքի ազատ լինելու ձգտումն, ինչը ցույց է տալիս նրա հաճախակի անհնազանդությունն Ասորեստանին: Այնուամենայնիվ, Ալզին աստիճանաբար սկսում է թուլանալ Ասորեստանի հաճախակի հարձակումների հետևանքով:

Խոսելով փոքրասիական պետությունների առևտրական հարաբերությունների մասին՝ Օ. Գեռնին և հիմնվելով սեպագիր արձանագրությունների վրա՝ նշում է, որ այդ համեմատաբար փոքր թագավորություններն, ունենալով մետաղի հարուստ պաշարներ, ապրանքափոխանակություն էին անում Միջագետքի քաղաքների հետ՝ մետաղը փոխանակելով միջագետքյան անագի և գործվածքների հետ: Ալզին ունենալով հարուստ մետաղահանքեր՝ հնարավոր է նույնպես մասնակցել է այդ առևտրին[3]:

Այսպիսով՝ խեթական և ասորեստանյան սեպագիր արձանագրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսին Ալզին եղել է Հայաստանի արևմտյան և հարավարևմտյան հատվածի քաղաքական և ռազմավարական կարևոր բաղադրամասերից մեկը: Առաջին հերթին այն ուներ աշխարհագրական բարենպաստ դիրք, որն երկրամասը դարձնում էր անառիկ թշնամիների հարձակումների ժամանակ, երկրորդ՝ Ալզիում լավ զարգացած էր մետաղի արդյունաբերությունը (Անգեղտան մետաղահանքերը), ինչը հնարավորություն էր տալիս նրան ունենալ զարգացած զինագործություն, և երրորդ՝ Ալզին համեմատաբար առևտրական լավ հարաբերությունների մեջ էր հարևան երկրների հետ:

[1] И. М. Дьяконов, Вестник ..., с. 267.
[2] Նույն տեղում, с. 271.
[3] О. Герни, укз. соч., с. 37.

ГАГИК МИКАЕЛЯН
ИИ НАН РА

АЛДЗНИК В ЗАВОЕВАТЕЛЬНЫХ ПЛАНАХ ХЕТТСКОГО И АССИРИЙСКОГО ГОСУДАРСТВ (XIV-IX вв. до н. э.)

РЕЗЮМЕ

Алдзник, один из 15 *ашхаров* (провинция) Великой Армении, имел важное значение в оборонной системе страны. Государственная граница, окаймляющая с юга провинцию Алдзник, проходила по Западному Тигру. С запада, севера и востока Алдзника соответственно находились другие провинции Великой Армении - Цопк, Туруберан и Мок.

Хеттские и ассирийские клинописные надписи позволяют заключить, что в западной и юго-западной части древней Армении во второй половине II тыс. до н.э. Алзи (Алдзник) являлся важной политической единицей, определяемой благоприятным стратегическим положением, металлообработкой и торговыми отношениями с соседними странами.

ԱԼԻՍ ԴՈՒՄԻԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՎԻԿՏՈՐ ԼԱՆԳԼՈՒԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

XIX դ. ֆրանսիական հայագիտական դպրոցը զարգանում էր հայ դասական պատմագիտության ավանդույթների և Առաջավոր Ասիայի երկրներում հայտնաբերվող ու վերծանվող սեպագիր արձանագրությունների նյութերի համադրման հիման վրա: Հայեցակարգային մոտեցումներ մշակելիս՝ կարևոր տեղ էր տրվում պատմագիտական ուսումնասիրությունների բնագավառում հայկական սկզբնաղբյուրների թարգմանությանը:

Հայոց պատմության ուսումնասիրության խնդրում հատկապես նշանակալից են ֆրանսիացի հայագետներ Ժան Սեն-Մարտենի (1791-1832 թթ.), Վիկտոր Լանգլուայի (1829-1869 թթ.), Մարի Բրոսեի (1802-1880 թթ.), Էդուարդ Դյուլորիեի (1807-1881 թթ.) աշխատությունները, որոնցում հետազոտված է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը՝ պատմա-աշխարհագրական, քաղաքական և հոգևոր-մշակութային պատմության հարցերի քննարկման առումով:

Պատմահոր երկի նկատմամբ հետաքրքրությունը Ֆրանսիայում դրսևորվել էր դեռևս XVII դարում՝ Լյուդովիկոս XIV-ի (1643-1715) գահակալության ժամանակ: Ֆրանսիայի ֆինանսների նախարար Ժան-Բատիստ Կոլբերն Արևելք գործուղված ֆրանսիացի արևելագետ և հնագետ Անտուան Գալանին հանձնարարել էր ձեռք բերել հայկական հին ձեռագրեր[1], հատկապես Մովսես Խորենացու երկը[2]: 1841 թ. Վենետիկի Սուրբ-Ղազարում լույս տեսավ Մովսես

[1] R.Kévorkian, Manuscrits arméniens (de la Bibliothèque nationale de France), Paris, 1998, p. IX, X.

[2] Համաձայն Ֆրանսիայի Ազգային գրադարանի նախագահ Ժան Պիեր Անգղեմիի՝ Ֆրանսիայի Ազգային գրադարանում հայկական ձեռագրերի հարուստ ֆոնդի առաջին նմուշները մուտք են գործել արքունի հավաքածուներ XVI դ. կեսին՝ Հենրի II-ի (1547-1559) թագավորության ժամանակ: Ժան Պիեր Անգղեմին գրում է. «Այս ֆոնդի առկայությունը համարվում է հայկական քաղաքակրթության հանդեպ ֆրանսիացի մտավորականների հետաքրքրության արտացոլումը», (տե՛ս R. Kévorkian, Op. cit., p. V):

Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի՝ Լըվայան Դը Ֆլորիվալի ֆրանսերեն թարգմանությունը՝ գրաբար տեքստին զուգահեռ[1]:

Ֆրանսիացի հայագետներից տեսական՝ պատմա-փիլիսոփայական մոտեցումներով առանձնանում է Վիկտոր Լանգլուան, ով կարևորել է Պատմահոր մեծ ներդրումը՝ «Ասիայի ազգերի տարեգրությունները կազմելու» խնդրում[2]: Մովսես Խորենացու երկի աղբյուրագիտական հիմքի պատմագիտական կարևորությունը հետազոտողը պայմանավորել է նրանում պարունակված եզակի տեղեկություններով, քանզի Պատմահայրը «մեզ համար պահպանել է անտիկ դասական գրողներին անհայտ մնացած փաստերի հիշողությունը, և որ մեզ է փոխանցել կորած հունարեն և քաղդեերեն (իմա՝ բաբելոնյան-Ա.Դ.) աշխատություններից հատվածներ»[3]:

Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը միջնադարում եղել է հայ ժողովրդի, ինչպես նաև Արևելքի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուր: Սակայն նոր ժամանակներում Պատմահոր ապրած դարաշրջանը և նրա աշխատության գնահատման խնդիրը պատմագիտության որոշ շրջանակներում «գերքննադատության» ենթարկվեց:

Վ. Լանգլուան անդրադառնալով այս հարցին՝ հետևյալ բացատրությունն է տվել. «Եթե որոշ հայտնի քննադատներ կասկածանքով են վերաբերվել Մովսես Խորենացու բարեխղճությանն ու ճշմարտացիությանն, ապա պատճառն այն է, որ նրանք բոլորովին չեն փորձել համեմատել նրա շարադրանքն իր ժամանակակից Ղազար Փարպեցու պատմությունների հետ, որը նշում է Մովսեսի հիշատակած բազմաթիվ փաստեր, չնայած որ երկու հեղինակներն էլ երբեք իրար հետ չեն խորհրդակցել, և նրանք (քննադատները-Ա.Դ.) բոլորովին չեն փորձել զուգահեռներ անցկացնել Հայոց Հերոդոտոսի (Hérodote de l'Arménie) (Մովսես Խորենացի-Ա.Դ.) հաղորդած տեղեկությունների և հույն ու լատին հեղինակների երկերում եղած հիշատակությունների միջև»[1]: Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի վերաբերյալ քննադատական կարծիքների մասին հետաքրքիր է Լըվայան Դը Ֆլորիվալի հետևյալ միտքը. «Քննադատությունը հեշտ է, դժվարն՝ արվեստ ստեղծելն է»[2]:

Վ. Լանգլուան Պատմահոր կենսագրության առնչությամբ հետևելով հայ պատմագրության տվյալներին՝ ընդունել է, որ Մովսես Խորենացին ծնվել է IV դ. երկրորդ կեսին Տարոն գավառի Խորնի կամ Խորոնք[3] գյուղում, և փաստարկելով Թովմա Արծրունու հաղորդած տեղեկությունը՝[4] նշել, որ Պատմահայրն ապրել է դեռևս 484 թ.՝ բյուզանդական կայսր Զենոնի[5] ժամանակաշրջանում և մահացել է ավելի քան հարյուր տարեկան հասակում՝[6] Տարոնում ու

[1] P. E. Le Vaillant de Florival, Moïse de Khorène Histoire de l'Arménie, Venise, 1841. Փարիզի արևելյան լեզուների դպրոցի հայերեն լեզվի դասախոս Լըվայան Դը Ֆլորիվալը դեռևս 1836 թ. ֆրանսերեն թարգմանել էր Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը, սակայն թարգմանությունում եղած որոշ անճշտությունների պատճառով այն շուտով հանվել էր շրջանառությունից: 1841 թ. թարգմանության հրատարակմանը, ըստ Վ. Լանգլուայի, զգալի օգնություն էր ցուցաբերել Մխիթարյան միաբան և Սբ. Էջմիածնի Սինոդի անդամ Գաբրիել Այվազովսկին (V. Langlois, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, Paris, 1867, t. II, p. 52 ; Jacques-Charles Brunet, Manuel du libraire et de l'amateur de livres: Nouveau Dictionnaire Bibliographique, Paris, 1862, t. III, p. 1921).

[2] V. Langlois, Etude sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren, Paris, 1861, p. 310.

[3] Նույն տեղում:

[1] Նույն տեղում, p. 305-306.

[2] P. E. Le Vaillant de Florival, Op. cit., p. XIII.

[3] Սանրամասն տե՛ս Ա. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Ե., 2007, էջ 29-33:

[4] Ըստ Թովմա Արծրունու՝ «Սահակս այս այն Սահակն է (Բագրատունի-Ա.Դ.), որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. որոյ ժամանակ կենացն տևեալ ծգեալ ամս *ճհ* լի և պարարտ ծերութեամբ...» (Թովմայի Վարդապետի Արծրունիոյ, Պատմութիւն տանն Արծրունեայ, Թիֆլիս, 1917, էջ 133):

[5] Զենոն կայսրը երկու անգամ է գահակալել՝ 474 թ. փետրվարից 475 թ. հունվարն, այնուհետև՝ 476 թ. օգոստոսից մինչև 491 թ. ապրիլ (The Cambridge Medieval History, vol. IV, The Byzantine Empire, Cambridge, 1966, p. 776) :

[6] V. Langlois, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, Paris, 1867, t. II, p. 47-48.

Ստ. Մալխասյանցը (Խորենացու առեղծվածի շուրջը, Ե., 1940, էջ 113), Գ. Սարգսյանը (Мовсес Хоренаци. История Армении. Перев. с древнеармянского яз., введение и прим. Г. Саркисяна, Ер., 1990, с. XXIII-XXXVI), Ա. Մուշեղյանը (Մովսես Խորենացու դարը, Ե., 2007, էջ 28 և այլ) իրենց հետազոտություններով, մերժելով Մովսես Խորենացուն ավելի ուշ շրջանի (VII դ., VIII դ. կամ IX դ.) հեղինակ համարելու և նրա երկի նկատմամբ Ա.Կարիերի (A. Carrière, Nouvelles sources de Moïse de Khoren, Vienne, 1893, p. VI-VII), Գր. Խալաթյանցի (Հանդէս ամսօրեայ, Մովսէս Խորենացու նորագոյն աղբիւրների մասին, Վիեննա, 1897, N 10,11,12, էջ 359, Г. Халатьянц, Армянские Аршакиды, Москва, 1903, с. 359), Ռ. Թոմսոնի (Moses Khorenats'i. History of the Armenians. Transl. and comment. on the literary sources by R.W. Thomson, Ann Arbor, 2006, p. 59-60) և այլոց մոտեցումները, հիմնավորապես ապացուցել են այն իրողությունը, որ Մովսես Խորենացին իր «Պատմութիւն Հայոց»-ը գրել է V դարում:

թաղվել Մուշ քաղաքի մոտ գտնվող Առաքելոց վանքի եկեղեցում, որը կոչվում է նաև Ղազար կամ Ելասար[1]:

XIX դ. սեպագիր արձանագրությունների հայտնաբերմանն ու վերծանմանը զուգընթաց, պատմաբանասիրության մեջ նաև փորձ կատարվեց հնագիտական նորահայտ փաստերով ստուգել ավանդաբար ընդունված ազգերի բիբլիական ծննդաբանությունը, որի արդյունքում կասկածներ արտահայտվեցին Հին Կտակարանի վրա հիմնըված ազգերի ծննդաբանությունների մեկնությունների կապակցությամբ: XIX դ. երկրորդ կեսին Մովսես Խորենացու երկի գերքննադատությունը հաշվի չէր առնում նրա դարաշրջանին բնորոշ գաղափարական սկզբունքները: Նման դիրքորոշումը պայմանավորված էր հայոց հին պատմության սկզբնաղբյուրային փաստերի նկատմամբ ժխտողական մոտեցմամբ: Այդպիսի գերքննադատությունը Վ. Լանգլուան բացատրել է Պատմահոր դարաշրջանում (V դ.) գերակայող գաղափարների իրական պատկերի անտեսմամբ: Ընդունելով այն փաստը, որ V դ. հայ պատմիչներն որոշակի հարցերին վերաբերող իրենց ուսումնասիրություններում հենվում էին պատմական օտար սկզբնաղբյուրների և Աստվածաշնչից եկող կրոնագաղափարական ընկալումների համադրման վրա, Լանգլուան գրելում էր, որ Մովսես Խորենացին, ում որոշ հետազոտողներ համարում էին Եվսեբիոսի «Ժամանակագրության» հայերեն թարգմանության հեղինակ, որպեսզի գրի իր հայրենիքի ծագման պատմությունն, անկասկած ներշնչվել է այդ աշխատության ընթերցումից: Համաձայն Վ. Լանգլուայի՝ «Մովսեսն ապրում էր հիրավի մի դարաշրջանում, երբ գաղափարները շրջադարձ էին կատարում դեպի նախնական սինկրետիզմ[2], որը բացատրում է, թե ինչպես քրիստոնյա հին տարեգիրները լուծեցին դժվարին խնդիրը՝ աստվածաշնչյան տոհմաբանությունը կապելով ազգային ծննդաբանություններին և այս երկարատև կիսա-հերոսական և կիսա-պատմական սերունդները հասցնելով մեկ ընդհանուր ակունքի, որի ավանդույթները նվիրված էին գոյությանը»[3]:

Հայոց պատմության էքսոհոգևոր հիմքերն իրենց արտացոլումը ստանալով պատմագրության և աստվածաբանության մեջ՝ սկզբնաղբյուրային նշանակություն են ունեցել պատմափիլիսոփայական իմաստավորման համար, որը որոշակի հիմքեր էր տալիս

[1] V. Langlois, Collection..., p. 48.
[2] Համոզմունքների, պատկերացումների տարբեր համակարգերի համաձայնեցում կամ միաձուլում՝ փիլիսոփայական և կրոնական պատկերացումներում:
[3] V. Langlois, Etude ..., p. 310.

ֆրանսիական հայագիտական դպրոցին տեսական վերլուծություններ կատարելիս:

Գոյաբանության տեսանկյունից անդրադառնալով պատմության՝ ֆրանսիացի հետազոտող Լա Կրոզը (1661-1739) գրել է. «Սովորաբար պատմությունը բաժանում են սուրբ և աշխարհիկի. առաջինը ներառված է Հին և Նոր Կտակարանների սուրբ Գրքերում, երկրորդը՝ Հին աշխարհի մնացած բոլոր հուշարձաններում... Աշխարհիկ պատմությունը բաժանվում է անհայտ և անորոշ, առասպելական և պատմական ժամանակների»[1]: Հաջորդ դարի երկրորդ կեսին պատմության ուսումնասիրության և գնահատման հարցում կարևորվում էր կրոնափիլիսոփայական մեթոդաբանությամբ մոտեցումը:

Վ. Լանգլուան իր դարաշրջանի այն եզակի գիտնականներից էր, ով կրոնական գոյաբանության տեսակետից Մովսես Խորենացու՝ հայ ազգի ծագման մասին հայեցակարգը պայմանավորել է հոգևոր ուղիով ազգային արմատներին անդրադարձով: Հետազոտողը խնդրին մոտեցել է պատմաբանասիրական և կրոնափիլիսոփայական գիտելիքների համադրման սկզբունքով՝ գրելով. «Այս սինկրետիկ մեթոդը, որը նաև հնարավորություն էր տալիս անցնել մի այնպիսի բարդ հարցի, ինչպիսին ժողովուրդների ծագումն է՝ պայմանավորված դարերի հավատալիքով (այսինքն՝ յուրաքանչյուր դարաշրջանի կրոնական վիճակով-Ա.Դ.), հատկապես վերջին ժամանակներում քննադատության հսկողությանն է ենթարկվել, և սբ. Գրքի մեկնողականությունը ջանքեր գործադրեց հատվածաբար քննելու խառը ծննդաբանություններից յուրաքանչյուրը, որտեղ բիբլիական տարրն արհեստականորեն համադրվել է աշխարհիկ տարրին և մի տեսություն սկզբնավորել՝ անկասկած հնարամիտ, բայց ոչ մի կապ չունեցող քննադատության ընդունած՝ փիլիսոփայական գիտությամբ հիմնավորված հիմնարար սկզբունքների և ժամանակակից բանասիրական հայտնագործություններով վերահսկվող տվյալների հետ»[2]:

Սինկրետիկ մեթոդի կիրառման արդի փուլը նույնպես վկայում է, որ պատմության հետազոտության կրոնափիլիսոփայական քննարկումները մեծագույնս պայմանավորված էին XIX դարում մշակված ըմբռնումներով: Այս տեսանկյունից քննարկելով հեթանոսական և քրիստոնեական փոխազդեցությունների խնդիրը՝ Ֆ. Վելանը XX դ. 80-ական թթ. գրել է. «Դասական հեթանոսական ավան-

[1] M. La Croze, Abrégé de l'Histoire universelle, Breme, 1765, p. 1.
[2] V. Langlois, Etude..., p. 311.

դույթին քրիստոնեության հարաբերակցությունը քաղաքագետները և քաղաքական մտքի պատմության մասնագետները շատ հաճախ դիտել են որպես մի հակադրություն... Այնուամենայնիվ, արդարության մասին բիբլիական և դասական-փիլիսոփայական գաղափարներն իրենց բովանդակությամբ ամբողջապես միանման են, ինչը լավագույնս ամփոփված է ստանդարտ հունական բանաձևում, որպես *ամենքին տալ իր հասանելիքը*»[1]:

Վ. Լանգլուան սինկրետիկ մեթոդով է մոտեցել արևելյան քրիստոնյա ժողովուրդների ծագումնաբանության ուսումնասիրությանը և անդրադառնալով Աստվածաշնչին որպես պատմական սկզբնաղբյուրի՝ դրանով է պայմանավորել տարբեր տոհմաբանությունների ուսումնասիրության մեթոդաբանական ընդհանրությունը: Այդ տեսակետից նա գրել է. «Ասիայի բոլոր քրիստոնյա ազգերը, որոնք գտնվել են այդ դժվարության առջև իրենց ծագումը բերել են Նոյ նահապետից՝ նրա երեք որդիներից մեկի հետ կապելով իրենց ազգային ծագումնաբանությունները: Հայերն իրենց անվանադիր նախնի Հայկին սերած են համարում Հաբեթից՝ բավականին դժվար ընկալելի ազգակցական կապով: Մովսեսն ինքը հաստատում է մի անձի գոյությունը, որի հիշատակումը չի հանդիպում ոչ մի տեղ Աստվածաշնչում և շտապում է նշել, որ ասորի գիտնականի բարեխղճության հիման վրա է տվել հայ ազգի նահապետերի ծննդաբանությունը»[2]:

Ըստ Վ. Լանգլուայի՝ Մովսես Խորենացին մի կողմից՝ գործ

ուներ Ծննդոց գրքի ժ գլխի տոհմաբանության, մյուս կողմից՝ ազգային ավանդույթների հետ, քանզի՝ «համածայն իր ժամանակներին դավանած գաղափարների, նրան անհրաժեշտ էր միահյուսել հերոսների և Հայկի ցեղի արքաների հաջորդականությունը Նոյի և Հաբեթի սերունդին: Նրա Պատմության առաջին գլուխներում կարելի է տեսնել այն միջոցը, որ նա օգտագործել է և այն հեղինակությանը (իմա՝ Մար Աբաս-Ա. Դ.), ում նա վկայակոչել է, որպեսզի Գամերի և Թորգոմի միջև ավելացնի Ծննդոցում չհիշատակվող մի առասպելական կերպար՝ Թիրասին, ով ծառայում է որպես միավորող կապ Նոյի որդիների և Հայաստանի անվանադիր նախնի Հայկի միջև»[3]:

Վ. Լանգլուան Թիրասին՝ Մովսես Խորենացու հիշատակած տոհմաբանության մեջ ավելացված առասպելական կերպար է հա-

[1] Frederick G. Whelan, Justice: Classical and Christian – Political Theory, vol. 10, N 3, August, 1982, p. 435-460.
[2] V. Langlois, Etude ..., p. 310-311.
[3] Նույն տեղում, p. 311-312.

մարել: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ Հին Կտակարանում հիշատակված Հաբեթի որդիների թվում են Գամերը և Թիրասը («Յաբեթի որդիներն են Գամերը, Մագոգը, Մադան և Թիրասը»)[1]: Իսկ ըստ Մովսես Խորենացու պահպանած տեղեկության՝ «Յաբեթ ծնաւ զԳամեր. Գամեր ծնաւ զԹիրաս»[2]: Ըստ Հին Կտակարանի՝ Գամերի որդիներից է Թորգոմը[3], իսկ Մովսես Խորենացու պահպանած ցուցակի համաձայն՝ «Թիրաս ծնաւ զԹորգոմ. Թորգոմ ծնաւ զՀայկ»[4]: Այսինքն՝ բիբլիական տոհմաբանությամբ՝ Թորգոմը Թիրասի եղբոր՝ Գամերի որդին էր, իսկ ըստ Պատմահոր պահպանած տեղեկության, որը գալիս էր Մար Աբասի երկից, Թիրասը Թորգոմի հայրն էր:

Հատկանշական է, որ այս տարբերության[5] առնչությամբ Մովսես Խորենացին գրել է. «Ամենայն ի ժամանակագրացն գրեն ... զԹիրաս՝ չորրորդ ի Նոյէ, իսկ Յաբեթայ երրորդ. թէպետ եւ ըստ մերում թարգմանութեանս (սբ.Գրքի) ոչ ուրեք ի բնագրի գտանի»[6]:

Բ. եպիսկոպոս Ճուղուրյանցն անդրադառնալով Ա. Գարագաշյանի՝ Պատմահոր շարադրանքի այս հատվածի քննադատությանը՝ գրել է. «Խորենացու բերած այս ազգաբանութեան (Յաբեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ) մասին Գարագաշեանն առանց արժանին ուշադրութեան՝ գրում է. *Յայտնի է թէ այս ազգաբանութիւնը Ծննդոց է*: Այդ անունները իրաւի կան Ծննդոց Գրքի մէջ, սակայն՝ ոչ նոյն կարգը ազգաբանութեան, այնտեղ Գամեր և Թիրաս եղբայրներ են, մինչ Խորենացու ցանկում՝ հայր և որդի»[8]: Նա նշել է, որ Պատմահայրը Նոյի երեք որդիների ազգաբանությունը «շարում է իւր Հայոց պատ-

[1] Գիրք Աստուածաշունչք Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1860, Ծննդ., ժ. 2:
[2] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 19:
[3] Ծննդ., ժ. 3:
[4] Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., էջ 19:
[5] Այս հարցին անդրադարձել է Ստ. Մալխասյանցը՝ (Բանասիրական հետազոտություններ, Ե., 1982, էջ 116-117) քննելով աստվածաշնչյան և Մովսես Խորենացու կազմած տոհմաբանական ցուցակները:
[6] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 19-20, «ամենայնք ի ժամանակագրացն գրեն... զԹիրաս՝ չորրորդ ի Նոյէ, իսկ Յաբեթայ երրորդ, թէպետ և ըստ մերում թարգմանութեանս ոչ ուրեք ի բնագրի գտանի: Իսկ զմեստրայիմ չորրորդ ի Նոյէ և երրորդ ի Քամայ՝ ոչ ի մերում թարգմանութեանս և ոչ ի ժամանակագրաց ուրեք կարգեալ գտանիմք: Այլ այսպէս զսա կարգեալ գտաք ի յուշմագուեէ և ընթերցասիրէ ումեմնէ Ասորւոյ»:
[7] Ա. Գարագաշեան, Քննական պատմութիւն Հայոց, մասն Ա, 1895, Թիֆլիս, էջ 133:
[8] Բարդուղիմէոս եպիսկ. Գէորգեան (Ճուղուրեանց), Խորենացին Ե դարի առաջին քառորդից մատենագիր, Վաղարշապատ, 1908, էջ 11:

41568

մութեան մէջ... ոչ թէ սբ. Գրքից, որը «զիւրսն ի բաց հատեալ յինքն սեպհական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարհամարհելեացն եւ իւրոց անարժան կարգելոց բանից: Զորոց մեք սկսեալ ճառեսցուք՝ որքան է կարողութիւն, որպէս գտաք զհաւաստին ի հնոց պատմութեանց, մերով մասամբ ամենեւին անսուտ»[1]: Այս տեսակետից Բ. եպիսկոպոս Ճուղուրյանցը ուշադրություն է դարձրել «ամենայն ի ժամանակագրացն» Պատմահոր արտահայտությանը, կարծելով, որ սբ. Գրքից տարբերվող տոհմաբանության այսպիսի կարգի համար Մովսես Խորենացու սկզբնաղբյուրը հին «ժամանակագիրներից» է եղել[2]:

Բարձր գնահատելով Մովսես Խորենացու գիտական ժառանգությունը և նրան անվանելով Հայ Հերոդոտոս (Hérodote arménien)՝[3] Վ. Լանգլուան հատկապես ընդգծել է պատմության մեջ նրա ներդրումը, այն է՝ «մեզ է փոխանցել Խալդեայի (Chaldée), Սիրիայի (Ասորիք՝ Syrie), Հունաստանի հին գրականությունից հատվածներ, որոնք լույս են սփռել նախաքրիստոնեական և քրիստոնեական դարաշրջանների վրա: Մովսեսը միշտ վեր էր իր ժամանակներում իշխող գաղափարներից, իր դարի նախապաշարմունքներից և նա շատ մեծ քայլ է կատարել իր հայրենիքի պատմության ուսումնասիրության գործում»[4]:

Վ. Լանգլուան Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի հետազոտությունը կատարելիս՝ պատմագիտությունը դիտարկել է պատմափիլիսոփայության լույսի ներքո՝ կարևոր ներդրում կատարելով հայագիտության բնագավառում: Այսպիսով՝ Վիկտոր Լանգլուան կարևորել է Պատմահոր պատմագիտական հայացքներն՝ ազգային և համամարդկային արժեքների ներդաշնակման համատեքստում:

[1]Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 17:
[2]Բ. Ճուղուրեանց, նշվ. աշխ., էջ 11-12:
[3]Հատկանշական է, որ Է. Պիշարը Մովսես Խորենացու վերաբերյալ իր ակնարկում նրան անվանում է հայ Հոմերոս (Homère arménien), C. E. Pichard, Essai sur Moïse de Khoren, Paris, 1866, p. 9.
[4]V. Langlois, Etude ..., p. 300, 367.

АЛИС ДУМИКЯН
ИИ НАН РА

ОЦЕНКА «ИСТОРИИ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ В ИССЛЕДОВАНИЯХ ВИКТОРА ЛАНГЛУА

РЕЗЮМЕ

Французская арменоведческая школа в XIX веке развивалась на основе традиций армянской классической историографии и сопоставления материалов выявляемых и расшифрованных клинописных надписей. В сфере историографических исследованийважное место предоставлялось переводу армянских источников, создавая определенные предпосылки для разработки концептуальных подходов. В исследовании истории Армении значительный вклад имеют в особенности французские арменоведы Сен Мартен, Виктор Ланглуа, Мари Броссе, Эдуард Дюлорье, которые обращались к сочинению Мовсеса Хоренаци «История Армении» в аспекте исследования историко-географических, политических и духовно-культурных вопросов.

Историографическую важность источниковедческой основы сочинения Хоренаци В. Ланглуа обусловил содержавшимися в нем исключительными сведениями, «сохранившими память о фактах, оставшихся неизвестными для античных классических авторов и передал нам отрывки из утерянных греческих и халдейских (т.е. вавилонских-А. Д.) сочинений».

Критику сочинения Мовсеса Хоренаци некоторыми телями в XIX в. В. Ланглуа объяснял игнорированием ими действительной картины доминирующих идей в эпоху Хоренаци. С точки зрения религиозной онтологии концепцию Хоренаци о генезисе армянского этноса, В. Ланглуа обусловливал обращением к этническим корням в духовном аспекте.

В. Ланглуа подходил к изучению генезиса восточных христианских народов с точки зрения синкретизма и, обращаясь к Библии как к историческому источнику, этим объяснял методологическую общность в исследовании разных генеалогий. В настоящем применение синкретического метода также свидетельствует, что религиозно-философские разработки исследования истории во многом были обусловлены понятиями, разработанными в XIX в.

В. Ланглуа, оценивая научное наследие Мовсеса Хоренаци и его вклад в историографию, изучил «Историю Армении» в историко-философском аспекте, что является важным вкладом в арменоведение.

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱ ՊԻ

ՍՍԻ, ԼՈՌԻԻ ԵՎ ԱՆԻԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովների[1] վերաբերյալ տեղեկություններ գլխավորապես հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, որն էլ, ինչպես հայտնի է, ժողովների պատմությունը քաղել է իր ուսուցիչ՝ Վանական վարդապետի, ցավոք մեզ չհասած, պատմությունից: Պատմիչներից ոմանք (Վարդան Արևելցի[2], Մխիթար Այրիվանեցի[3]) սահմանափակվել են ժողովների հպանցիկ հիշատակումով: Պատմագիտական գրականության մեջ մեզ հետաքրքրող իրադարձությունների վերաբերյալ ընդգրկուն անդրադարձ հանդիպում ենք Մ. Չամչյանի[4], Ա. Մխիթարյանցի[5], Մ. Մուրատյանցի[6], Ն. Մելիք-Թանգյանի[7] և Մ. Օրմանյանի[8] աշխատություններում: Վերջիններից, թերևս, միայն Մ. Օրմանյանն ու քիչ ավելի պակաս Մ. Չամչյանն են, որ ժողովների նկատմամբ ցուցաբերում են քննական մոտեցում: Հայագիտության մեջ ժողովներում Զաքարե ամիրսպասալարի դերակատարման վերաբերյալ, չեզոք դիրքորոշումից բացի, դրսևորվել է նաև բացասական մոտեցում: Այս կապակցությամբ Մ. Օրմանյանը գրում է. «Զաքարէ Օրբէլեան (պետք է լինի Զաքարյան - Վ. Թ.) Վրաց թագաւորութեան սպարապետ, որչափ եւ հայադաւան մնացած, եւ Իւանէ եղբօրը յունադաւանութենէն հեռու կեցած, սակայն միշտ ներքին ցաւ մը ունէր, երբոր Արեւելեայց ոճին հետեւելով ստիպեալ էր բոլորովին անշուք եւ անպաճոյճ ծիսակատարութիւններ պահել, եւ Վրաց եկեղեցւոյն շքեղութեանց եւ զարդուց հանդէպ

[1] Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովների թվագրման վերաբերյալ տե՛ս Վ. Թորոսյան, Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովների թվագրման շուրջ, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 10, Ե., 2009, էջ 50-59:

[2] Վարդան Արեւելցի, Համառօտ պատմութեան Վարդանայ վարդապետի (այսուհետև՝ Վարդան Արևելցի), Վենետիկ, 1862, էջ 138-139:

[3] Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 64-65:

[4] Չամչեանց Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Ե., 1984, էջ 179-185:

[5] Մխիթարյանց Ա., Պատմութիւն ժողովոյ Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874, էջ, 118-122:

[6] Մուրատեանց Մ., Պատմութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, Երուսաղեմ, 1872:

[7] Մելիք-Թանգյան Ն., Հայոց եկեղեցական իրավունք, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 448-449:

[8] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, էջմիածին, 2001, էջ 1836-1850:

նկուն ցուցնել Հայոց եկեղեցին»[1]: Զաքարեի դիրքորոշումը բացասական է գնահատել նաև Մ. Մուրատյանցը. «Չենք տարակուսիր վերագրեալ դեպքերէն հետեւցնել, որ Զաքարէի հալածական վարմունքն դատապարտելի է պատմութեան անաչառ դատաստանի առջեւ»[2]: Անկասկած, այս տեսակետները պայմանավորված են եղել նախ և առաջ այն հանգամանքներով, որ Լոռիի և Անիի եկեղեցական ժողովները մերժվել են Հայոց եկեղեցու կողմից, ինչպես նաև նրանով, որ վերը նշված հեղինակներն եղել են հոգևորականներ:

Թեև Լոռիի և Անիի եկեղեցական ժողովներն անվավեր են ճանաչվել ու հայ եկեղեցական իրավունքի աղբյուր չեն կազմում,[3] այնուամենայնիվ, Զաքարյան Հայաստանի պատմության կարևոր դրվագներ են: Զաքարե ամիրսպասալարի առաջարկներից գլխավորը արշավանքների ժամանակ պատարագ մատուցելու համար եկեղեցու շարժական սեղան ունենալն էր: Դրա հիմնական պատճառը Կիրակոս Գանձակեցին համարում էր այն, որ Զաքարեն «տեսնէր զզօրս վրաց, որ ընդ թագաւորին իւրում, զի իւրաքանչիւր ոք ի նոցանէ ունէր ընդ իւր քահանայս, և յամենայն տեղիս մատուցանէին պատարագ, և ինքն ոչ ունէր եկեղեցի ի ճանապարհի»[4]: Այնուհետև ավելացնում էր թե վրացիները հայերին նախատում էին ճանապարհին եկեղեցի չունենալու, անհաղորդ մնալու և աստուծո նահատակների տոները յուրաքանչյուր օրվա վերջում չտոնելու համար և «վասն այսորիկ, կարի յոյժ ցաւ էր նմա (Զաքարե - Թ.Վ.)»[5]: Նշենք, որ եկեղեցու շարժական սեղան կիրառելու սովորույթը խորթ չէր Հայոց եկեղեցու ծիսակարգին, և այն չկիրառելու պատճառը, ինչպես հաղորդում էր պատմիչը, պարսկական և արաբական բռնություններն ու դրանց հետևանքով հայկական իշխանական հզոր տների վերացումն էր «զի չէր սովորութիւն հայոց ի բազում ժամանակաց, յորմէ հետէ բարձան իշխանքն հայոց մեծամեծք ի պարսից և յիսմայէլացւոց բռնութենէն»[6]:

[1] Նույն տեղում, էջ 1836:

[2] Մուրատեանց Մ., նշվ. աշխ., էջ 465:

[3] Մելիք-Թանգյան Ն., նշվ. աշխ., էջ 448:

[4] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 166:

[5] Նույն տեղում, էջ 167:

[6] Նույն տեղում, էջ 166-167: Արշավանքների ժամանակ շարժական եկեղեցու սեղանի կիրառման փաստի հանդիպում ենք Վարդանանց պատերազմի ժամանակ: Եղիշեի հաղորդմամբ Ավարայրի ճակատամարտից առաջ Ղևոնդ երեցի խոսքն ավարտվելուց հետո «սեղան ուղղեալ՝ զամենասուրբ խորհուրդն կատարեցին. ուղեցին և աւազան, և եթէ գոյր ոք երեխայ ի բզնութեան զօրուն՝

Ջաքարեի կողմից եկեղեցու շարժական սեղանի կիրառումը վերականգնելու փորձը, կարծում ենք, չպետք է պայմանավորել զուտ վրացական կողմի հորդորներով: Այն առավելապես պայմանավորված էր Ջաքարյանների գլխավորած ազատամարտի վերելքով: Քաջ հայտնի է, որ հայոց զորքը մարտի մեկնելուց առաջ հաղորդություն է ստացել եկեղեցում: Մաթեոս Ուռհայեցու վկայությամբ հայոց սպարապետ Վասակ Պահլավունին Նիգ գավառ ներխուժած թշնամական ուժերի դեմ դուրս գալուց առաջ իր զորայինների հետ հաղորդություն է ստանում եկեղեցում և խոստովանանք կատարում[1]: Ուստի հայոց զորքը, որը Ջաքարե ամիրսպասալարի գլխավորությամբ մշտապես գտնվում էր արշավանքների մեջ և լինում այնպիսի վայրերում, որտեղ գոյություն չուներին հայկական եկեղեցիներ, հոգևոր օժանդակության կարիք էր զգում: Այդ իսկ պատճառով Ջաքարեի հիշյալ նախաձեռնությունը պետք է պայմանավորել վերոգրյալ հանգամանքով: Ջաքարե ամիրսպասալարը պարզելու համար, թե արդյոք հայերն արշավանքների ժամանակ երբևէ կիրառե՞լ են եկեղեցու շարժական սեղան, դիմում է ժամանակի նշանավոր հոգևոր-եկեղեցական գործիչ Մխիթար Գոշին. «Ո՞չ երբէք եղեալ է թագաւորացն մերոց, կամ իշխանացն ի պէտս ճանապարհաց եկեղեցի, տեղի պաշտամանն և պատարագի»[2]: Հարցից հստակ երևում է, որ Ջաքարեի նպատակը պարզելն էր, թե արդյոք երբևէ հայերը արշավանքների ժամանակ կիրառել են եկեղեցու շարժական սեղան: Մինչդեռ, ըստ Մ. Օրմանյանի, Ջաքարեն իբր հարցրել է. «Հայերն ալ կարենան Վրացիներու նման բանակի մէջ պատարագ ունենալ եւ հաղորդուիլ»[3]: Ջաքարեն դիմում է այլ վարդապետների ևս: Թեև Կիրակոս Գանձակեցին չի նշում վերջիններիս անունները, նրանք

զգիշերն ամենայն մկրտեցին. և ընդ առաւօտս սուրբ օրհնացն հաղորդեցան» (Եղիշե, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, թարգմանությունն և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1989, էջ 231): Եկեղեցու շարժական սեղանի՝ դեռևս Գրիգոր Լուսավորչի կողմից կիրառման փաստի վերաբերյալ վկայության հանդիպում ենք Հովհաննես Դրաստխանակերտցու «Պատմություն»-ում: Պատմիչի հաղորդմամբ, երբ մահանում է հայոց Գևորգ Գառնեցի (877-897 թթ.) կաթողիկոսը, երկրի քահանաները և իշխանները նրա դին հուղարկավորում են Վանաց Չորի գերեզմանոցում եկեղեցու մոտ, որտեղ «Լուսաւորիչն մերոյ զգաւազանն իւր և զսեղան տէրունական խորհրդոյն (ընդգծումն մերն է - Վ. Թ.), զոր նախ քան զհաստատելն եկեղեցեաց սրբոց ի հայս ընդ իւր շրջեցուցանէր» (Հովհաննես Դրաստխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս 1912, էջ 181):

[1] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 12:
[2] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 167:
[3] Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 1838:

պետք է, որ Լոռիի և Անիի ժողովների մասնակից եկեղեցական գործիչները լինեին: Վերջիններս Ջաքարեին պատասխանում են, թե « առ մեծազօր արքայիւն Տրդատաւ վրանն և սեղանն, զոր շրջեցուցանէին յարքունական բանակին, և որ առ սրբովք Վարդանամբք, որք զմկրտութիւնն և զհաղորդութիւնն կատարէին ի մէջ բանակին»[1]: Այնուհետև Ջաքարեն դիմում է հոգևորականներին խնդրանքով՝ իրեն ևս եկեղեցու շարժական սեղան կիրառելու իրավունք տալ: Իսկ Մխիթար Գոշը պատասխանում է. «Մեք ոչ կարեմք առնել զայդ առանց հրամանի կաթողիկոսին Հայոց և թագաւորին Լևոնի»[2]: Կիլիկիա դիմելու Մխիթար Գոշի առաջարկը, ինչպես նկատում է Մ. Օրմանյանը, «յայտնի կը ցուցնէ, թէ իբր Ամենայն Հայոց օրինաւոր կաթողիկոսութիւն, միշտ Հռոմկլայի աթոռը ճանչցուած էր, եւ թէ Անիի Բարսեղ, Սեբաստիոյ Անանիա, եւ Սիսի Դաւիթ կաթողիկոսները իբրեւ անոր օգնականներ կամ աթոռակիցներ կը նկատուէին, իւրաքանչիւրը իր սահմանին մէջ մասնաւոր իրաւասութեան իրաւունքով»[3]: Ապա Ջաքարեն, հետևելով Մխիթար Գոշի խորհրդին, պատվիրակներ է ուղարկում հայոց Հովհաննես Ձ Սսեցի (1203-1221 թթ.) կաթողիկոսի մոտ, որն, ըմբոստացել էր Լևոն Ա (1187-1219 թթ.) թագավորի դեմ և գտնվում էր Հռոմկլայում: Ջաքարեն նույն խնդրով դիմում է նաև Լևոն Ա-ին[4]: Վերջինս հավաքում է իր իշխանության եպիսկոպոսներին ու եպիսկոպոսներին և ներկայացնում Ջաքարեի դիմումը: Նրանք չցանկանալով, որ Ջաքարեն «ելցէ արտաքոյ յուղղափառ հաւատոյն, որպէս զեղբայր իւր», նրան ուղղված նամակում գրում են. «Մեծ սպարապետ և շահնշահ արևելեան կողմանցն Ջաքարիայ. ի խնդիր եղեալ եղծեալ և աղաւաղեալ կարգաց քրիստոնէից, որ ի ստրկութենէ այլասեռից, ժողով արարեալ վարդապետաց և եպիսկոպոսաց, և հարց, և երիցանց, որք քննեալ գտին զխնդիրս նորա (Ջաքարեի - Վ. Թ.) համաձայն աստուածային գրոց»[5]: Սակայն իրենց որոշման մասին նախ տեղեկացնում են Լևոն Ա-ին, իսկ վերջինս Դավիթ Արքակաղնեցի (1207-1211 թթ.) կաթողիկոսի գլխավորությամբ ժողով է հրավիրում Սսում: Այստեղ ևս ժողովականները, քննելով Ջաքարեի առաջարկները, դրանք համապատասխան են համարում ոչ միայն աստուածային, այլ նաև «առաքե-

[1] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 167:
[2] Նույն տեղում, էջ 168:
[3] Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 1839:
[4] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 168, հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 138:
[5] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 168-169, հմմտ. Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 139:

լական կանոնաց, և ոչ արտաքոյ»[1]: Այնուհետև ութ գլուխներից բաղկացած կանոններ են գրում և ուղարկում Ջաքարե ամիրսպասալարին.

«**Առաջին**. Մատուցանել զպատարագն սուրբ դպրաւ և սարկաւագաւ, որպէս օրէնն է:

Երկրորդ. Տօնել զտօն աւետեաց սրբոյ Աստուածածնին ի վեցն ապրիլի ամսոյ, յորում աւուր և հանդիպի. և զտօն փոխման նորին ի հնգետասանն օգոստոսի ամսոյ, յորում աւուր և հանդիպի. և զտօն սրբոյ խաչին ի չորեքտասանն սեպտեմբերի ամսոյ, յորում աւուր և հանդիպի: Նոյնպես և զայլ տօնս վկայից, յորում աւուր և հանդիպի՝ ըստ իւրաքանչիւր յիշատակի:

Երրորդ. Պահել զճրագալոյցս սրբոյ յայտնութեանն և զատկին մինչև ցերեկոյն պահօք և ոչ այլ իւիք լուծանել, բայց միայն ձկամբ և ձիթով:

Չորրորդ. Ընդունել զնկարագրութիւն պատկերի փրկչին, և ամենայն սրբոց. և մի՛ խոտել զնոսա իբրև զպատկերս հեթանոսաց:

Հինգերորդ. Պատարագ մատուցանել և կենդանեաց:

Վեցերորդ. Կրօնաւորաց միս ո՛չ ուտել:

Յոթերորդ. Չեռնադրել դպիր և ապա յետ բազում աւուրց սարկաւագ, և ի կատարեալ հասակի ապա քահանայ:

Ութերորդ. Միաբան կալ ի վանսն, և առանձին իրս ո՛չ ստանալ»[2]:

Խնդրո առարկա ժողովների առավել հանգամանալից ուսումնասիրության համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք Սսի եկեղեցական ժողովում վերոնշյալ ութ կանոնների քննարկումն ու հաստատումը կատարվել է Ջաքարե ամիրսպասալարի՝ Կիլիկիա ուղարկած դիմումի՞ համաձայն, թե՞ դրանց նախաձեռնությունը պատկանում է Սսի ժողովին: Քանի որ Կիրակոս Գանձակեցին մեզ չի ներկայացնում Ջաքարեի՝ Կիլիկիա ուղարկած դիմումի բովանդակությունը, այս կապակցությամբ պատմագրության մեջ հանդիպում ենք տարբեր վկայությունների և կարծիքների: Նկատենք, սակայն, որ խնդրի առնչությամբ վկայության հանդիպում ենք Վարդան Արևելցու մոտ, ուր մասնավորապես կարդում ենք. «Ջաքարէ եղբայրն Իւանէի մնաց ի սեփական հաւատն. սակայն կամեցաւ զտօն Տիրամօրն և զխաչին ի պատկեր աւուրն տօնել, և զճրագալոյցսն չլուծանել, և կրօնաւորաց միս չուտել, և կենդանոյն պատարագ մատուցանել. և վրանով պատարագել ի բացեայ՝ դպրօք և սարկաւագօք. վասն որոյ առաքեաց առ Լևոն»[1]: Հարկ է նկատել, որ Վարդան Արևելցին, հաջորդող տողերում խոսելով Կիլիկիայում Ջաքարերի առաջարկների հաստատման մասին, նշում է, որ դա «յաւերմանէ եկեղեցւոյ է խանգարեալ»[2]: Մինչդեռ պատմիչի կողմից որպես Ջաքարեի առաջարկներ ներկայացված կետերի մեջ նշված են այնպիսիք, որոնք հակասում են հայ եկեղեցու դավանանքին և կարող էին առավել նպաստել նրա ծիսակարգի խաթարմանը: Մ. Չամչյանը, որպես Կիլիկիա ուղղարկված առաջարկներ նշում է հետևյալ երեքը. «Շրջեցուսցէ ընդ իւր զսեղան պատարագի. երկրորդ՝ զի քահանայք հանդիսիւ կատարեսցեն զպատարագն, որպէս առնէին վիրք՝ սարկաւագօք և դպրօք. և երրորդ՝ զի զտօնսն, մանաւանդ վերափոխման և խաչի կատարեսցեն ըստ աւուրց պատշաճի ընդ վրաց»[3]: Մ. Օրմանյանը, կանոնների նախաձեռնությունը վերա-գրելով Ջաքարեին, գրում է, որ չնայած «Ջաքարէի առաջարկներուն գիրը չունինք սակայն տրուած պատասխանէն կը քաղենք, թէ Ջաքարէ անգամ մը որ խնդրին պաշտօնական կերպարանք կու տար, զայն բոլոր իր ընդարձակութեամբը ուզած է պարզել, եւ միայն շարժական սեղանի խնդիրով չէ գոհացած»[4]: Հարցի կապակցությամբ ուշագրավ է Կ. Կոստանյանցի դիտարկումը, որի համաձան «երբոր արևելեան վարդապետները տեղեկացան Դաւթի (Արքակաղնեցու – Վ. Թ.) և Լևոնի թղթի բովանդակութեանը և նոցա ու Յովհաննէսի տարաձայնութեանը յետ քաշուեցան. այս բանի պատճառ եղաւ մանաւանդ այն, որ Դաւթի և Լևոնի թղթի մէջ բացի շարժական եկեղեցու հարցից մէջ էին բերված և ուրիշ կէտեր, որոնցով խանգարվում էին Հայաստանեաց Եկեղեցու մի քանի էական կարգերը»[5]: Կ. Կոստանեանցը, փաստորեն, Հայաստան ուղարկված ութ կանոններից Հայոց եկեղեցու ծիսակարգին հակասողների նախաձեռնությունը վերագրում է Սսի ժողովին: Ավելին, նա, որպես Ջաքարեի ցանկություն, ներկայացնում է միայն եկեղեցու շարժական սեղանի կիրառումը[6]: Նմանատիպ տեսակետ է առաջ քաշում նաև Հ. Ոսկյանը՝ նշելով, որ կանոների նախաձեռնությունը պատկանում է Սսի ժողովին. «Իրապէս ալ Դաւիթ կաթուղիկոսն ու Լեւոն թագաւորը Սիս ժողովքի

[1] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 169:
[2] Նույն տեղում, էջ 169-170:

[1] Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 138:
[2] Նույն տեղում, էջ 139:
[3] Չամչեանց Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 180:
[4] Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 1839-1840:
[5] Կոստանեանց Կ., Հայոց վանքերը, Մոսկվա, 1886, էջ 60:
[6] Նույն տեղում, էջ 59:

մէջ կը շնորհեն անոր (Զաքարեի - Թ. Վ.) խնդրելին, բայց այդ արտօնագրին հետ կը ղրկեն ի ձեռն հրեշտակներու մի քանի կանոններ ալ, որոնք խնդրոյ նիւթ կը բանան արեւելեան եպիսկոպոսներու եւ վարդապետներու մէջ»[1]: Ս. Կոգյանն էլ պնդում է, որ չնայած. «Արեւելեան վարդապետներու աղմուկին ու բողոքին վրաcական սովորութիւնները իւրացուցած էր Զաքարէ լայնախոհ բարեպաշտութեամբ եւ հավանութեամբ Գոշի»[2]: Նման եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ ըստ Ս. Կոգյանի՝ Մխիթար Գոշն ու Զաքարեն հարել են քաղկեդոնական դավանանքին: «Վարդապետական դաւանութեամբ», - գրում է նա, - «տարբեր չէին Իւանէ ու Զաքարէ, տարբեր չէր կրնար ըլլալ նաեւ Գոշ, քանի որ Նոր Գետիկ վանքը շինուեցաւ օգնութեամբ եւ հրամանաւ Իւանէի»[3]: Չնայած հեղինակը ծանոթ է Գոշի՝ զորավար եղբայրների խնդրանքով գրված հակաքաղկեդոնական երկին, Ս. Կոգյանը գտնում է, որ «Այս թուղթը յայտնապես հակաքաղկեդոնական է: Գոշ պիտի չգրէր այն ոճով, այն անվայել բառերով, եթէ նույն իսկ ըլլար հակաքակեդոնիկ»[4]: Որպես անվայել բառեր Ս. Կոգյանը ներկայացնում է Գոշի թղթի հետևյալ հատվածը. «Իսկ ժողովեալք ի Քաղկեդոն՝ ոմանք յերկիւղէ եւ ոմանք ակնառութեամբ աղտեղի կնոջ նորա՝ (Բյուզանդիայի Մարկիանոս կայսեր - Վ. Թ.) եղեն հաւանեալք նորածայնութեան պիղծ հայհոյութեան թղթոյն Լեւոնի (Հռոմի Լևոն Ա պապ 440-461 թթ.)»[5]: Բացի այդ, Ս. Կոգյանն անհնարին է համարում այդ գրությանը քաղկեդոնիկ Իվանեի հավանություն տալը: Այն, որ զորավար եղբայրների խնդրանքով գրված թղթի հեղինակը Գոշն է, վկայում է Կիրակոս Գանձակեցին[6]: Ավելին, Ի. Աբուլաձեն ապացուցում է, որ Գոշի հիշյալ թուղթը պատասխան է Արսէն Վաչես-ձէի ««Դոգմատիկոնի» հակամիաբնական դրու ագներին»[7]: Ուշագրավ է նաև այն, որ Ս. Կոգյանի եզրահանգումը հերքվում է նույն թղթում առկա Գոշի այլ մտքե-

[1] Ոսկյան Հ., Մատենագրական քննություններ, Վիեննա, 1926, էջ 134-135:
[2] Կոգյան Ս., «Հայոց եկեղեցին» մինչև Փլորենտեան ժողովը, Բէյրութ, 1961, էջ 430:
[3] Նույն տեղում, էջ 431:
[4] Նույն տեղում:
[5] Մխիթար Գոշ, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, աշխատասիրութեամբ Պ. Մուրադեանի, Գանձասար, Աստուածաբանական հանդէս, հ. Զ, Ե., 1966, էջ 347, հմմտ. Կոգյան Ս., նշվ. աշխ., էջ 431:
[6] Կիրակոս Գանձակեցի, Նշվ. աշխ., էջ 221:
[7] Մուրադյան Պ., Դաւանական հանդուրժողականութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարը ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանում, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պրակ Ա, Ե., 2008, էջ 327:

րով: Այսպես, Գոշի պնդմամբ «սատանայ սերմանեաց ի մէջ հաւատացելոց զնախանձ եւ զատելութիւն, եւ վասն այն համարձակեցաք եւ զսակաւդ գրեցաք զթուղթդ՝ ոչ հակառակելով եւ կամ զոք պարսաւելով յազգաց, այլ զարժան եւ զիրաւն իբր դատաստանաւ ցուցաք ... եւ զճշմարիտ խոստովանութիւնն ցուցաք զմերոցս ազգաց, եւ զխոտելի իրսն ոչ թաքուցաք զմերոյ ազգի, և զիւրաքանչիւր ազգի զգովելին և զպարսաւելին գրեցաք, եւ ի գլուխ բանին ընտրեցաք զբարին և զլաւն»[1]: Հիշատակության է արժանի Մխիթար Գոշի հետևյալ միտքը. «Զի այն էր հաճոյ Աստուծոյ, զի ամենայն ազգ միակրոն լինէր, բայց տեսաք, որ սատանայ և ամբարտաւանութիւնն մեր զայդ չտայ առնել՝ լաւ համարեցաք, որ զմիմեանս չքշնամանեմք եւ զխաչ եւ զեկեղեցի միմեանց չանարգեմք, զի այն Քրիստոսի է եւ Աստուծոյ անարգանք»[2]: Ինչպես իրավացիորեն դիտում է Պ. Մուրադյանը, Գոշի թուղթը գրված է դավանական հանդուժողականության և ազգամիջյան համերաշխության գաղափարի դիրքերից[3]: Զաքարեի առաջարկներին Մխիթար Գոշի հավանություն տալը նշում է նաև Ս. Երեմյանը: Նա կանոնների գլխավոր նախածեռնող համարում է Մխիթար Գոշին, նշելով, որ Զաքարեն նրա խորհրդով է «մի շարք դավանաբանական խնդիրներ պարզաբանելու համար նամակներ ուղարկել Սիս՝ Լևոն Ա թագավորին և Հռոմկլա՝ կաթողիկոսին»[4]: Այն, որ Մխիթար Գոշը չէր կարող նմանատիպ նախաձեռնությամբ հանդես գալ, արդեն իսկ փաստվում է վերը հիշատակված նրա՝ Զաքարե և Իվանե եղբայրների խնդրանքով գրած թղթի բովանդակությամբ, որտեղ հեղինակը, մեկ առ մեկ քննելով վերնշյալ կանոնները, դրանք համարում է Հայ Առաքելական եկեղեցու դավանանքին հակառակ: Այս առումով հետաքրքրական են կանոններից մի քանիսին վերաբերող Գոշի մեկնաբանությունները. «Վիրք յամենայն տեղիս անզգուշաբար պատարագ մատուցանեն, ի պահս բազում զանազանութիւն առնեն, զծուկն և զձէթ եւ զգինի՝ պահոց քարոզեն, և Հայք ոչ եւս ... Յոյնք և վիրք կենդանւոցն պատարագ մատուցանեն, եւ Հայք ոչ ... Հայոց կրոնաւորք բամբասին ոչ առնել ծնունդ եւ ուտել միս եւ ոչ աւետեաց տաւնել եւ ոչ սարկաւագաւք և դպրաւք. եւ հանդերձիւ եւ բացաւ գլխով առնել պատարագ»[5]: Ինչ վերաբերում է վերը նշված տեսակետներին, ապա ավելի իրապա-

[1] Մխիթար Գոշ, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, էջ 341:
[2] Նույն տեղում:
[3] Մուրադյան Պ., նշվ. աշխ., էջ 101-106:
[4] Երեմյան Ս., Ամիրսպասալար Զաքարիա Երկայնաբազուկ, Ե., 1944, էջ 44:
[5] Մխիթար Գոշ, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, էջ 353:

տում են Կ. Կոստանյանցի և Հ. Ոսկյանի պնդումները, քանզի դրանք վկայող փաստերն առավել խոսուն են, ինչն կներկայացնենք ստորև:

Վերը նշվեց, որ եկեղեցու շարժական սեղան կիրառելու Ջաքարեի ցանկությունը որոշակիորեն պայմանավորված էր վրացական կողմի հորդորներով առ այն, որ հայերը «ոչ ունել եկեղեցի ի ճանապարհի և անհաղորդ մնալ նոցա, և ոչ տօնել զտօնս վկայից աստուծոյ յիւրաքանչիւր աւուր կատարման»[1]: Ինչպես հստակ երևում է Կիրակոս Գանձակեցու հաղորդումից, վրացիների հորդորները Սսի ժողովում ընդունած ութ կանոններից և ոչ մեկում չեն արտացոլվել: Դրանց մասին չի խոսվում նաև Ջաքարեի՝ Մխիթար Գոշին ուղղված հարցման մեջ[2]: Կ. Կոստանյանցի և Հ. Ոսկյանի պնդումները հաստատող առավել խոսուն փաստն այն է, որ եթե վերոգրյալ կանոնների նախաձեռնողը Ջաքարեն լիներ, ապա դրանք, մինչ Կիլիկիա ուղարկվելը, կարժանանային հայ հոգևորականության ընդդիմությանը, ինչին մենք հանդիպում ենք հետագայում: Ուստի անտրամաբանական է վերջիններիս կողմից Հովհաննես Ջ կաթողիկոսի և հայոց Լևոն Ա արքայի հաստատմանն ուղարկված կանոններն իրենց իսկ կողմից մերժելը: Իհարկե, հնարավոր է, որ Ջաքարեի նախաձեռնության մասին իմանային այն հոգևորականները, ովքեր Լոռիի ժողովում հավանության արժանացրին Սսի կանոնները, սակայն չպետք է մոռանալ Մխիթար Գոշի դերակատարման մասին, ով, անկասկած, չէր ողջունելու հայոց եկեղեցու դավանանքին հակասող կանոնները: Բացի այդ, ինչպես կտեսնենք ստորև, Սսի ժողովում ընդունված հայոց եկեղեցու ծիսակարգին խորթ կանոնների ընդունումը պատկանում էր սույն ժողովին, այլ ոչ՝ Ջաքարեին: Միաժամանակ հոգևորականների մի մասի կողմից Սսի կանոններին հավանություն տալը, մասնավորապես Անիի ժողովում, պայմանավորված էր սեփական աթոռները չկորցնելու հանգամանքով[3]: Այս տեսակետի մասին է խոսում նաև Կիլիկիայի մի խումբ վարդապետների և եպիսկոպոսների՝ Ջաքարեին ուղղված նամակի այն հատվածը, ուր ասվում է. «ի խնդիր եղեալ և աղաւաղեալ կարգաց քրիստոնէից, որ ի ստրկութենէ այլասեռից արարեալ վարդապետաց և եպիսկոպոսաց, և հարց, և երիցանաց, որք քննեալ գտին զխնդիրս նորա (Ջաքարեի - Վ. Թ.) համաձայն աստուածային գրոց»[4]: Այս

[1] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 167:
[2] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 167:
[3] Նույն տեղում, էջ 176:
[4] Նույն տեղում, էջ 168-169:

որոշման հիման վրա Սսում Դավիթ Արքակաղնեցի կաթողիկոսի գլխավորությամբ հրավիրված ժողովը ևս համաձայնում որոշում է կայացնում: Ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին. «Եւ նորա ժողով արարեալ ի մայրաքաղաքն Սիս զկաթողիկոսն Դաւիթ հանդերձ վարդապետօք և եպիսկոպոսօք և ճգնաւոր միաձամբք, գտանին գխնդիրս նորա (Ջաքարեի- Վ.Թ.) **համաձայն առաքելական կանոնաց, և ոչ արտաքոյ: <u>Վասն որոյ գուխս կանոնաց դրոշմեալ առաքեգին թուով ութ</u>»**[1] (ընգծումը մերն է-Վ. Թ.): Սեջբերումներից հստակ երևում է, որ քննության առարկա եղել են այն հարցերը, որոնք վերաբերվել են «եղեալ և աղաւաղեալ կարգաց քրիստոնէից», մինչդեռ վերոգրյալ ութ կանոններից, մասնավորապես երկրորդը, երրորդը, չորրորդը երբևէ չեն կիրառվել Հայաստանում, որպեսզի կարելի լիներ դրանք եղծված համարել: Ինչ վերաբերում է մյուս կանոններին, ապա դրանք, ինչպես հայտնի է, ժամանակին կազմել են Հայոց եկեղեցու ծիսակարգի մաս, ուստի որպես եղծված սովորույթներ, ամենայն հավանականությամբ, ընդգրկված են եղել Ջաքարեի՝ Կիլիկիա ուղղարկած գրությունում: Բացի այդ, հաղորդումից հստակ երևում է, որ դրանք գրվել են Սսում: Ավելին, Գանձակեցու վկայությունից պարզ երևում է, որ հոգևորականության դժգոհության պատճառը կաթողիկոսի և թագավորի հրամաններն էին. «Իսկ իբրև լուան և գիտացին զհրամանս կաթողիկոսին և թագաւորին, ոմանք հաւանեցան, և կէսքն ոչ: Եւ այսպէս անմիաբանք լեալ, քակտեցանի միմեանց.»[2]: Այս դեպքում հարց է ծագում, թե ո՞րն է Սսի ժողովում հայոց եկեղեցու ծիսակարգին հակասող կանոնների ընդունման իրական պատճառը: Խնդիրն այն է, որ Լևոն Ա-ն Կիլիկիայի հայկական իշխանությունը թագավորություն հռչակելու նպատակով ակտիվ բանակցություններ էր վարում Հռոմի պապի հետ: Վերջինս, ինչպես հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, թագի դիմաց պահանջում է որոշ փոփոխություններ կատարել Հայոց եկեղեցու ծիսակարգում՝ շրջանցելով Հայոց և Հռոմեական եկեղեցիները բաժանող հիմնական դավանաբանական խնդիրները: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Հռոմի կողմից հայերի առջև դրված պայմանները հետևյալ երեքն էին. «Տօնել զտօն տեառն և ամենայն սրբոց, յորում աւուր և հանդիպի. և միշտ յեկեղեցւոջն կատարել զաղօթսն տուընջեան և գիշերոյ ... և ո՛չ լուծանել զճրագալոյցսն ծննդեան և յարութեան, բայց միայն ձկամբ և ձիթով»[3]: Այս ամենը պատմիչի հաղորդմամբ առաջացնում

[1] Նույն տեղում, էջ 169:
[2] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ.,էջ 172:
[3] Նույն տեղում, էջ 156-157:

է հայ հոգևորականների դժգոհությունը, սակայն Լևոնին, ի վերջո, հաջողվում է համոզել վերջիններիս: Այն, որ Լևոն Ա-ի պահանջով հայ հոգևորականության կողմից Հռոմի պապի պայմանները բավարարելը կրել է ոչ թե կրոնական, այլ քաղաքական բնույթ, վկայում են ոչ միայն հայ, այլև օտար հեղինակները: Այսպես, նույն Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ Լևոնը հայ հոգևորականներին հավաստիացրել է, որ նման քայլի դիմում է զուտ ծևականորեն. «Դուք մի՛ ինչ հոգայք վասն այդորիկ, ես հաճեցից զմիտս նոցա առ անգամ մի կեղծաւորութեամբ»[1]: Այս առումով բավական ուշագրավ է Ռ. Գրուսեի հետևյալ դիտարկումը. «Ամենևին չպետք է խաբվել այդ, այսպես կոչված, կրոնական միությունից: Կիլիկիո հայ հոգևորականությունը կամ իշխող հարստությունը ոչ մի պահ չկամեցան ուրանալ իրենց յուրահատուկ հանգանակը և ընդունել «երկու բնությունները»: Այդ հարցում, ինչպես նաեւ պապի գերակայությունը ճանաչելու առումով, նրանք ընդամենը բանավոր զիջումներ կամ, ավելի ճիշտ, հմտորեն կազմված երկիմաստ ձևակերպումներ կատարեցին, որոնք թույլ տվին պահպանել լատինների հետ կնքված քաղաքական դաշինքը, առանց սակայն առանձնապես բախվելու կրոնական խոչընդոտներին»[2]: Հայ-հռոմեական եկեղեցական միության դրդապատճառը քաղաքական է համարում նաև Լ. Տեր-Պետրոսյանը՝ միաժամանակ բացառելով Կիրակոս Գանձակեցու կողմից Լևոնի կատարած զիջումները հետին թվով արդարացնելու հանգամանքը[3]: Այն, որ այսպես կոչված եկեղեցական միության հարցում գերակայել է քաղաքական շահը, երևում է նաև Լևոն Ա-ի և Հռոմի Ինոկենտիոս III պապի նամակագրությունից: Տակավին 1199 թ. մայիսի 23-ին պապին գրած նամակում, որով հայցում է պապի օժանդակությունը սելջուկների դեմ պայքարում, Լևոնը պատրաստակամություն է հայտնում «ածել օգնականութեամբն աստուծոյ ի միաբանութիւն զշնորհեալ մեզ յաստուծոյ բովանդակ աշխարհատարած թագաւորութիւնս մեր, և զամենայն ուրեք սփռեալ ազգս հայոց»[4]: Այս տրամաբանությամբ պետք է դիտել նաև 1207 թ. Սսի ժողովում ընդունված ութ կետերում լատինադավան մի քանի ծեսերի առկայությունը: Տվյալ պարագայում քաղաքական շահը պայմանավորված էր Անտիոքի խնդրում տեղի լատին պատրիարք Պետրոս Անգուլեմացու և հոգևորականության հայամետ դիրքորոշմամբ: Բանն այն է, որ 1207 թ. մարտի 4-ին, նախքան Սսի ժողովի հրավիրումը (1207 թ. կեսեր), Հռոմի Ինոկենտիոս III պապը, պայմանավորված Անտիոքի դուքս Բոհեմունդ IV-ի բյուզանդամետ դիրքորոշմամբ, իր լեգատին հանձնարարում է եկեղեցական բանադրանքով սպառնալ նրան[1]: Շուտով հենց նույն պատրիարքը Ս. Պետրոսի տաճարում Լևոն Ա-ի զարմիկ Ռուբեն Ռայմոնդին հռչակում է Անտիոքի պրինց[2]: Հետաքրքրական է նաև Ռ. Գրուսեի այն դիտարկումը, որ Պետրոս Անգուլեմացու հայանպաստ կողմնորոշումն արտահայտում էր լատինական տարրի մեծամասնության դիրքորոշումը[3]: Անտիոքի հարցում լատինամետ տարրի հայանպաստ դիրքորոշումը ընդունում է նաև Ղ. Ալիշանը. «Արդ եկն սա (Լևոն Ա - Վ. Թ.) բազմութեամբ զորաց, բայց անվնաս և անարգել եմուտ ի քաղաքն (1206). ընդ առաջ ելին նմա ոչ միայն եկեղեցականք՝ այլ և յոլովք ի պարոնայց և ասպետաց, և մեծաւ շքով մուծին ի մայր եկեղեցի Ս. Պետրոս. ուր երդուաւ Ռուբեն պատրիարքին՝ զօրինական մեծարանսն, և ընկալաւ ի նմանէ զԴրօշն կամ զՆշանն տիրական»[4]: Կիլիկյան արքաների՝ եկեղեցական միության հարցում քաղաքական շահի հետապնդումն ընդգծում է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Բաբկեն Ա Կյուլեսերյանը՝ նշելով, որ «Կիլիկեան թագաւորներ որ կողմէ որ ոյժ մը, նեցուկ մը, ապահովութիւն մը գտնէին, իրենց երկրին և իշխանութեան ապահովութեան համար, այդ նպատակին կը զոհէին իրենց ձեռքին տակ գտնուող բոլոր հնարաւորութիւնները: Ասոր համար է, որ Կիլիկիոյ դարպասը ուզեց յոյնի հետ ըլալ յոյն, լատինի հետ լատին, տաճիկի հետ տաճիկ, թաթարի հետ թաթար»[5]: Այսպիսով, Լևոն Ա-ի կողմից Սսի եկեղեցական ժողովի կանոնները Հայաստանում կիրառելու նախաձեռնությունը, կրել է քաղաքական բնույթ: Այս մասին անուղղակի վկայում է նաև այն հանգամանքը, որ Լևոն Ա-ն, պայմանավորված Լոռիի և Անիի ժողովների արդյունքներով, հետագայում հետամուտ չի լինում դրանց կիրառմանը: Ինչ վերաբերում է Զաքարեի շարունակվող պահանջներին, ապա Կիրակոս Գանձակեցու վկայությունից հստակ երևում է, որ Լոռիի ժողովից հետո դրանք գլխավորապես

[1] Նույն տեղում, էջ 157:
[2] Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե. 2007, էջ 338, հմմտ. նույնի՝ հ. Բ, Ե., 2007, էջ 193:
[3] Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 192- 193:
[4] Կղեմես Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, հ. Ա, Հռոմ, 1650, էջ 357-358:

[1] Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ, հ. Ա, էջ 299:
[2] Նույն տեղում, էջ 299:
[3] Նույն տեղում, էջ 298:
[4] Ալիշան Ղ., Սիսուան. Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 497:
[5] Կյուլեսերյան Բ., Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 1134:

վերաբերվել են այն կանոններին, որոնք ժամանակին կիրառվել են Հայաստանում. «Եւ այսպէս շփոթումն ունէր զեկեղեցիս արևելից, քանզի ի բազում ժամանակաց հետէ չէին սովոր առնել, զոր խնդրէր նա (Զաքարեն - Վ. Թ.), և ոչ զտօնսն իւրաքանչիւր աւուր, զի մի՛ պատճառաւ տօնին լուծցին պահքն. և զպատարագն սուրբ ոչ մատուցանէին սարկավագաւ և դպրաւ, այլ միմեանց քահանայքն սպասաւորէին ...այլ և ո՛չ զդրունս եկեղեցաց իշխէին թողուլ ի բաց ի ժամ սոսկալի խորհրդոյն, զի մի՛ ոճիրս ինչ գործեսցեն այլազգիէն»[1]: Պահանջներից միայն յուրաքանչյուր օրվա տոները տոնելու պահանջն էր, որ պայմանավորված էր վրացական կողմի հորդորներով: Հարկ է նկատել, որ նման ամբաստանությամբ հանդես էին գալիս ոչ միայն վրաց[2], այլև լատին հոգևորականները՝ նշելով, որ հայերը. «... յաւուրս աղուհացիցն ոչ առնեն պատարագ, եթէ ոչ միայն ի շաբաթ և ի կիրակի, ասելով, որ մարդն լուծանէ զպահս յորժամ պատարագէ»[3]:

Այսպիսով՝ վերը հիշատակված եկեղեցական երկու հավաքներն էլ, փաստորեն, հաստատեցին Զաքարեի առաջարկների համապատասխանությունն առաքելական կանոններին: Միևչդեռ Մ. Օրմանյանի կարծիքով՝ նման որոշումների «իսկական պատճառը խոհեմութիւնն էր, որպէսզի Զաքարէ ալ եղբօրը Իւանէի հետեւելով յունադաւանութեան չանցնի»[4]: Կարծում ենք, որ եթե Հայոց կաթողիկոսի, Կիլիկիայի հայ հոգևորականության և թագավորի նպատակը Զաքարեին քաղկեդոնադավանությունից հետ պահելն էր, ապա տրամաբանական կլիներ, որ մերժեին կամ որևէ կերպ ընդդիմանային վերջինիս առաջարկներին և ոչ թե՝ հաստատեին:

Հովհաննես կաթողիկոսը, հավանության արժանացնելով Զաքարեի խնդրանքը, Մինաս եպիսկոպոսի, սարկավագների, դպիրների և քահանաների հետ նրան է ուղարկում գմբեթարդ և եկեղեցածև մի վրան, մարմարյա մի սեղան, պատարագի համար անհրաժեշտ այլ սպասք: Զաքարեի կողմից եկեղեցու շարժական սեղանի կիրառումը կարծում ենք չպետք է պայմանավորել զուտ վրացական կողմի հորդորներով: Այն առավելապես պայմանավորված էր Զաքարյանների գլխավորած ազատամարտի վերելքով: Մշտապես գտնվելով արշավանքների մեջ և լինելով այնպիսի վայրերում, որտեղ գոյություն չուներին գործող հայկական եկեղեցիներ՝ բանակը հոգևոր օժանդակության կարիք էր զգում:

Կաթողիկոսի պատվիրակները Լոռի քաղաքում հանդիպում են Զաքարեին և հանձնում նրան հայրապետի հրամանը (ամենայն հանականությամբ եկեղեցու շարժական սեղանի կիրառման վերաբերյալ), թուղթն ու ընծաները: Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ. «Նոյնպէս և յարքայէն Լևոնէ և ի կաթողիկոսէն Դաւթէ եկին դեսպանք և հրամանաբերք»[1]: Հավանաբար վերջիններս էլ Զաքարեին հանձնեցին վերը նշված ութ կանոններն ընդգրկող Սսի ժողովի որոշումը:

Հարկ է նկատել, որ ութ կանոներից ոչ մեկում հիշատակված չէ պատարագի շարժական սեղան կիրառելու փաստը: Մ. Օրմանյանի կարծիքով նման իրավունք շնորհում էր առաջին գլուխը, որն էլ արտոնում էր պատարագ մատուցել միայն դպիրների և սարկավագների մասնակցությամբ[2]: Կանոնի բովանդակությունից հստակ երևում է, որ նրանում եկեղեցու շարժական սեղանի մասին որևէ խոսք չկա, այլ պարզապես նպատակ է հետապնդվել վերականգնել պատարագի մատուցման եղծված կարգը:

Ստանալով Սսի եկեղեցական ժողովի պատասխանները և Հովհաննես կաթողիկոսի ընծաները՝ Զաքարեն հրամայում է անմիջապես ժողով հրավիրել Լոռի քաղաքում (հավանաբար 1207 թ. երկրորդ կեսին): Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ ժողովին մասնակցում էին. «վարդապետք երևելիք՝ Սխիթար, որ Գոշն կոչիւր, ... Իգնատիոս, Վարդան, Դաւիթ Քոբայրեցին ի Հաղբատայ, Յովհաննէս, հայր Սանահնին, որ էր զկնի մահուան վարդապետին Գրիգորոյ, զոր Տուտայ որդին կոչէին, ... Գրիգոր, զոր Մոնոնիկն կոչէին, ի Կեչառուաց, Տուրքիկն ի Թեղենեաց,... Եղիայ ի Հաւուց թառոյ, ... Գրիգոր Դունացին, Սարգիս միակեացն ի Սևանայ,... Գրիգորէս եպիսկոպոս Հաղբատայ, Վրթանէս Բջնոյ և Դունայ, Սարգիս աթոռակալ Անւոյ, Յովհաննէս Կարուց և այլք յոլովք»[3]: Թեև Գանձակեցու վկայությունից հստակ երևում է, որ Սանահնի Գրիգոր Տուտերորդի վարդապետն արդեն մեռած էր, սակայն թե՛ Մ. Չամչյանը և թե՛ Մ. Օրմանյանը սխալմամբ Հաղբատի վանքից որպես Լոռիի ժողովի մասնակից նշում են Գրիգոր Տուտերորդուն[4]: Ծանոթանալով Սսի ժողովի որոշումներին՝ ժողովականների կեսն ընդունեցին դրանք, իսկ մյուս կե-

[1] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 174:
[2] Նույն տեղում, էջ167:
[3] Կղեմես Գալանոս, նշվ. աշխ., էջ 371:
[4] Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 1840:

[1] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 171:
[2] Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 1841:
[3] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 171-172:
[4] Չամչեանց Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 181, հմմտ. Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 1844:

սը՝ մերժեցին և հեռացան[1]: Ժողովի կանոններն ընդունողների շարքում Մ. Չամչյանը նշում է Խաչատուր Տարոնացուն և Մխիթար Գոշին[2]: Առաջինի հետ կապված՝ հեղինակը, կարծում ենք, իրավացի է, քանզի վերջինս, ժողովի կանոնների համաձայն՝ պատարագի մատուցման համար նույնիսկ հորինեց «Խորհուրդ խորին» երգը, որը Գ. Զարբհանալյանի հաղորդմամբ, երգում էին քահանային զգեստավորելու ժամանակ[3]: Ինչ վերաբերում է Գոշի՝ Սսի ժողովի պահանջներին հավանություն տալուն, ապա նա դրանց նկատմամբ ցուցաբերեց ավելի շատ չեզոք, քան բացահայտ համերաշխ դիրքորոշում: Դա ուներ առնվազն երկու պատճառ: Նախ, ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Օրմանյանը. «Շատ փափուկ էր Մխիթարի դիրքը, նա բացարձակ չէր կրնար Զաքարէի ուզածը արգելուլ, որ Կիլիկիայէ կաթողիկոսական եւ թագաւորական հաստատութիւն ստացած էր», ապա ավելացնում, որ «իւր (Մխիթար Գոշի - Վ. Թ.) կամ Արեւելեայց ժողովին հեղինակութեամբ չէր կրնար Կիլիկիայէ եկած հայրապետական որոշումը եւ թագաւորական հաստատութիւնը արգելուլ»[4]: Հաջորդ պատճառը պայմանավորված էր նրանով, որ Գոշը, թեև բացահայտ չէր ողջունում առաջարկվող ծիսակարգային փոփոխությունները, սակայն սկզբունքորեն դեմ չէր դրանց: Այս առումով հետաքրքրական է նրա «Դատաստանագրքի»՝ «Յաղագս դատաստանաց ոչ նորածեւել զհին սովորութիւն եկեղեցւոյ» խորագիրը կրող հոդվածը, որում մասնավորապես ասված է. «Ոչ է պարտ զվաղնջուցն սովորութիւնս ի գաւառի եկեղեցաց նորածեւել: Զվիճակաց եւ զաթոռոց եւ զժողովրդոց ասէ: Եւ եթէ փոխել յասացելոցդ կամի ոք ի հայրապետաց, ժողովաւք պարտի առնել, որ է անվտանգ ըստ դատաստանի գրոց»[5]: Տվյալ պարագայում Սսի ժողովը և Զաքարեի հրավիրած երկու ժողովները լիովին կարգավորվում էին հիշյալ հոդվածով: Այս ամենը հաշվի առնելով, կարծում ենք, որ Գոշի՝ Անիի ժողովին մասնակցելուց հրաժարվելը ավելի շատ պայմանավորված էր վերոգրյալ պատճառներով, քան՝ հիվանդությամբ[6]: Սսի պահանջներին ընդդիմացած եկեղեցականների շարքում, որոնցից գլխավորներն, ըստ Մ. Չամչյանի, Հաղբատի Գրիգորես եպիսկոպոսն ու Դավիթ Քոբայրեցին էին, հեղինակը հիշում է նաև Սանահնի

[1] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 172:
[2] Չամչեանց Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 181:
[3] Զարբհանալյան Գ.,Հայկական հին դպրութիւն (Դ-ԺԳ դար), Վենետիկ,1897, էջ 676:
[4] Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 1849-1850:
[5] Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Ե., 1975, էջ 98-99:
[6] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 174-175:

առաջնորդ Հովհաննես Խաչենցուն. «Եւ նոքա իբրև լուան և ծանեան զբանս թղթոցն և զվճռոց, ոմանք ետուն անդէն զհաւանութիւն մանաւանդ խաչատուր վարդապետ և մխիթար. և կէսք գտան անհաւան, մանավանդ գրիգոր տուտէորդի, դաւիթ քոբարեացի, յովհաննէս սանահնին»[1]: Կարծում ենք, որ սա քիչ հավանական է, քանզի նման պարագայում, ինչպես կտեսնենք ստորև, Գրիգորես եպիսկոպոսի բանտարկությունից հետո Հովհաննես Խաչենցուն Զաքարեն չէր նշանակի Հաղբատի առաջնորդ: Իսկ եթե իրոք այնպես է, ինչպես Մ. Չամչյանն է պնդում, ապա պետք է ենթադրել, որ Հովհաննես եպիսկոպոսը, ի վերջո, ընդունել է Զաքարեի պահանջները: Նշենք նաև, որ ըստ Պ. Մուրադյանի՝ Դավիթ Քոբայրեցին Մխիթար Գոշի հետ միասին «ժողովներում արծարծուող հարցերում ծայրահեղ պահպանողական դիրորոշումն ունեցողների շարքում չէր»[2]: Նման տեսակետը Պ. Մուրադյանը հիմնավորում է երեք հանգամանքով. նախ՝ հայոց Գրիգոր Տղայի (1173-1193 թթ.) կաթողիկոսի հետ վեճը շարունակողը Սանահնի առաջնորդ Գրիգոր Տուտեորդին էր: Փաստարկներից է նաև այն, որ 1178 թ. գրած ինքնագիր հիշատակարանում Քոբայրեցին «ակնածութեամբ է խօսում կիլիկեան հայրերի բանիմացության մասին»: Բացի այդ, Քոբայրեցին Գրիգոր Ապիրատի կաթողիկոսության (1194-1203 թթ.) օրոք այցելել է Կիլիկիա և կաթողիկոսից ստանալով Հովհաննու Ավետարանի մեկնութիւնը, նվիրել Հաղբատի առաջնորդին[3]: Ընդդիմացողների մի մասի հեռանալը, սակայն, արգելվեց, և նրանք ստիպված մասնակցեցին Հովհաննես կաթողիկոսի ուղարկած վրանում մատուցված պատարագին: Այնուհետև Զաքարեի հրամանով իր իշխանության ներքո գտնվող վանքերում Աստվածածնի վերափոխման և Սուրբ Խաչի տոները սկսեցին տոնել ոչ թե կիրակի, ինչպես ընդունված էր, այլ շաբաթվա կամ ամսվա ինչ օր, որ պատահեր[4]: Ապա, Զաքարեն Հովհաննես Սսեցի կաթողիկոսի պատվիրակ Մինաս եպիսկոպոսին իր եկեղեցական սպասավորներով ուղարկում է Հաղբատ, որպեսզի այնտեղ էլ ծեսերը վերը նշված եղանակով կատարեն: Սակայն Հաղբատի Գրիգորես եպիսկոպոսի հրամանով Մինաս եպիսկոպոսը և նրա սպասավորները բրածեծ են արվում, իսկ նրանց բեռները, ջորիներով հանդերձ, գահավեժ են արվում ձորը: Մինաս եպիսկոպոսին

[1] Չամչեանց Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 181:
[2] Մուրադյան Պ., Կովկասեան մշակութային աշխարհը և Հայաստանը, պ. Ա, Ե., 2007, էջ 310:
[3] Նույն տեղում:
[4] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 173:

կիսամեռ վիճակում տանում են Զաքարեի մոտ: Տեսնելով այս ամենը՝ հրամայում է բռնել Գրիգորես եպիսկոպոսին և մահապատժի ենթարկել: Վերջինս, տեղեկանալով այդ մասին, փախչում է Գետիկի վանք՝ ապավինելով Մխիթար Գոշի օժանդակությանը: Թեև Գրիգորեսին հաջողվում է առժամանակ խուսափել պատժից, սակայն որոշ ժամանակ անց նրան բռնում են Կեչառիսի վանքում և բանտարկում[1]: Վերջինիս փոխարեն, ինչպես արդեն տեսանք, Հաղբատի առաջնորդ է կարգվում Սանահնի առաջնորդ Հովհաննես Խաչենցին:

Այս իրադարձություններից հետո մի որոշ ժամանակ խառնաշփոթ էր տիրում եկեղեցիներում, որովհետև այն, ինչ առաջարկում էր՝ Զաքարեն, երկար ժամանակ սովոր չէին իրականացնել, այդ թվում պատարագը սարկավագով և դպիրով մատուցելը, եկեղեցիների դռները բաց պահելը[2]: Ինչ վերաբերում է եկեղեցիների անվտանգությանը, ապա կարծում ենք, որ այս դեպքում Զաքարեն ուներ զորեղ կռվան, այն է՝ իր իշխանության տարիներին հաստատված խաղաղությունը: Լոռիի ժողովում իր առաջարկներին ընդհանուր հավանություն չստանալով՝ Զաքարեն հրամայում է Անիում նոր ժողով գումարել (1207 թ. վերջերից 1208 թ. սկիզբն ընկած ժամանակահատվածում): Այս անգամ ևս ներկա են լինում Լոռիի ժողովի մասնակից եկեղեցականները[3]:

Անիի ժողովին մասնակցելու է հրավիրվում նաև Մխիթար Գոշը: Վերջինս, սակայն, պատճառաբանելով հիվանդությունը և տկարությունը, Զաքարեին նամակ է գրում՝ ասելով, թե. «Զոր ինչ առնեն դոքա և կամին, համաձայն եմ և ես այնմ, և աղաչեմ զքեզ, մի՛ ինչ աւելի աշխատ առներ զիս, զի չեմ կարող»[4]:

Ապա Զաքարեն ժողով է գումարում և ժողովականներին խնդրում տալ իրենց ստորագրությունը, որ կանեն այն, ինչ ուզում է ինքը: Վերջիններս, սակայն, մերժում են՝ պատճառաբանելով, որ «Անհնար է մեզ առանց մեծ վարդապետին առնել զայդ»[5]: Զաքարեն էլ, ի պատասխան, ցույց է տալիս Գոշի նամակը, բայց կարդալ բովանդակությունը, ինչպես նշում է Գանձակեցին, թույլ չի տալիս: Ժո-

[1] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 172-173:
[2] Եկեղեցիների դռներն արարողությունների ժամանակ փակ պահելը հետևանք էր օտար նվաճողների ոտնձգությունների, որոնք Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ, զանազան ոճիրներ էին գործում (Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ.,էջ 174):
[3] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ.,էջ 172:
[4] Նույն տեղում, էջ 174-175:
[5] Նույն տեղում, էջ 175:

ղովականները, սակայն, հաստատ են մնում իրենց պնդման մեջ և ստանալով Զաքարեի թույլատվությունը, նամակ են ուղարկում Մխիթար վարդապետին՝ գրելով հետևյալը. «Զանկարութիւն մարմնոյ մի՛ ինչ պատճառեր. եթէ ի ճանապարհի հասնէ քեզ վախճան, ընդ առաջի սուրբ վարդապետացն եկեղեցւոյ կարգեսցուք գյիշատակս քո»[1]: Ստանալով նամակը՝ Մխիթար Գոշը որոշում է գնալ և մասնակցել ժողովին: Ինչպես տեղեկացնում է աղբյուրը, մինչև Մխիթար Գոշի գալը, ժողովականների կեսը իրենց աթոռներից չզրկվելու համար, ընդունել էին Զաքարեի պահանջները: Տեղեկանալով Գոշի գալստյան մասին՝ Զաքարեն իր իշխաններից մեկին հրամայում է քաղաքի դարպասների մոտ դիմավորել նրան և ուղեկցել իր մոտ: Նա չէր ցանկանում, որ Գոշը, նախքան իր հետ զրուցելը, հանդիպի ժողովականների հետ: Վերջիններս, տեղեկանալով այդ մասին, ժողովի մասնակից Ներսես վարդապետին ուղարկում են Գոշի մոտ՝ հրավիրելով նրան հանդիպել իրենց հետ՝ միասնական որոշում կայացնելու համար: Ներսես վարդապետը Գոշին հանդիպում է այն պահին, երբ վերջինս պատրաստվում է մտնել Զաքարեի մոտ, ուստի նրան հաջողվում է միայն բարձրաձայն հաղորդել ժողովի պատգամը: Զաքարեն էլ, հանդիպելով Մխիթար Գոշին, հայտնում է. «Որովհետև եկիր դու, ինձ ոչ ինչ փոյթ է զնոցանէ»[2]: Այս ամենն առաջացնում է ժողովականների նախանձը, և նրանք սկսում են ամբաստանել վարդապետին՝ ասելով, թե իբրև Զաքարեն գործում է վերջինիս խորհրդով: Սակայն երբ նա տեղեկանում է կատարվածի մասին, մեղադրում է զորավարին՝ ասելով, որ «իշխանաբար ոչ էր պարտ առնել զայդպիսի իրս», այնուհետև դիմելով ժողովականներին, ասում է. «ես հոգամ վասն զօրաւարիս, զի մի՛ լիցի սա վրացի, իբրև զեղբայր իւր, որում սպասեն վիրք: Արդ թէ այդպէս է, զի՞ մեղադրէք ինձ, զի հրաման ունի ի կաթողիկոսէն և ի թագաւորէն Լևոնէ առնել զայս: Արդ դուք դարձջիք յիւրաքանչիւր բնակութիւնս և մեք աղաչեսցուք զսա ոչ հանել զձեզ յեկեղեցաց ձերոց և ի տեղաց. և մեք զպաշտօնն, զոր մինչև ցայսօր պաշտել եմք, զնոյն պաշտեսցուք»[3]: Այստեղ ևս հստակ երևում է Գոշի անհամաձայնությունը առաջարկվող նորամուծություններին: Փաստորեն, Մխիթար վարդապետն ստիպված է լինում մի կողմից՝ Զաքարեին մեղմել, իսկ մյուս կողմից՝ իր հոգևոր եղբայրներին հորդորել, որ խնդիրը չսրեն: Ի վերջո, ժողովն ավարտվում է առանց վերջնական համաձայնության

[1] Նույն տեղում:
[2] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 176:
[3] Նույն տեղում, էջ 177:

կայացման: Կարծես Գոշին հաջողվում է որոշակիորեն մեղմել Զաքարեի վրդովմունքը, սակայն վերջինս, առանց վարդապետի գիտության, հրամայում է իրեն ընդդիմացող հոգևորականներին արտաքսել իրենց եկեղեցիներից: Անիի ժողովից հետո Զաքարեն իր մտադրությունները չվերանայեց և մինչ մահ վարվեց այնպես, ինչպես ցանկանում էր, իսկ եկեղեցիներն էլ իրենց հերթին շարունակեցին հին պաշտամունքով առաջնորդվել[1]: Ուշագրավ է, որ լարված իրավիճակը մեղմելու փորձ է անում ոչ միայն Մխիթար Գոշը, այլ նաև զորավարի քաղկեդոնադավան եղբայր Իվանեն, և արտաքսված շատ հոգևորականներ նրա հրամանով վերադառնում են իրենց եկեղեցիները[2]: Հետևաբար, եթե Զաքարեի նպատակը Հայաստանում քաղկեդոնական որոշ ծեսերի տարածմանը նպաստելն էր, ապա տրամաբանական կլիներ, որ նա ստանար եղբոր աջակցությունը, այլ ոչ՝ հակառակը: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ նույնիսկ Զաքարեի ձեռնարկումների նկատմամբ բացասական դիրքորոշում ունեցող հեղինակները նրան չեն մեղադրել Հայաստանում քաղկեդոնականության տարածման մեջ: Այն, որ Զաքարեի նպատակը քաղկեդոնականության տարածումը չէր, նշում է նաև Մ. Օրմանյանը՝ գրելով, թե «Զաքարեի փափաքն էր հայոց եկեղեցիէն չբաժնուիլ»[3]: Ավելին, քննելով Սսի կանոներից երկրորդը, որը պատվիրում էր Ավետումը ապրիլի 6-ին, Վերափոխումը օգոստոսի 15-ին, իսկ Խաչվերացը սեպտեմբերի 14-ին տոնել, նա նշում է, որ «Ծնունդի խօսքը չկայ, վասնզի անիկա Յունար 6-ին կապուած էր արդէն, եւ Զաքարեն ալ Դեկտեմբերի 25-ին տօնել չէր ուզած, զայն իբրեւ հայադաւանութեան հակառակ նկատելով»[4]: Հավելենք նաև, որ Զաքարեի՝ իր կողմից առաջարկվող ծիսական փոփոխությունների հայկականության ամեն կերպ ընդգծումը ևս այս տեսակետի խոսուն վկայությունն է: Այսուհանդերձ, հարկ է նկատել, որ թեև Սսի կանոնների՝ Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգին հակասող դրույթներն ընդունվել էին ի ցույց կաթոլիկ եկեղեցու, սակայն դրանց քաղկեդոնական ծիսակարգին համապատասխանելը, ինչպես նաև Զաքարեի կողմից դրանց կիրառման պահանջները երկրում ձևավորում էին նպաստավոր մթնոլորտ քաղկեդոնական ծեսերի նկատմամբ: Այս առումով ուշագրավ է Գոշի «Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ» գրության շարժառիթը. «Յաւուրս մեր տեսանելով եւ լսելով զբամբասանս Վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ՝ յոյժ խոցեալ լինէի հոգի, մանաւանդ զի, - դիմում է զորավար եղբայրներին, - հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ»[1]: Չնայած այս ամենին Հայ Առաքելական եկեղեցին Զաքարեին ընդունել է որպես իր դավանանքի ջերմեռանդ պաշտպանի, հետևորդի և եկեղեցու հովանավորի: Դա վկայող բազմաթիվ փաստերից առավել խոսուն է Բագնայրի 1232 թ. «Ավետարանը», ուր մասնավորապես նշվում է «ապա յետ տարաժամ փոխելոյն առ Քիրստոս մեծին Զաքարիայի, որ և խաւար գործեաց աշխարհիս Հայոց, բարենշան նորին շառաւիղն Շահնշահ, յաջորդեալ զաթոռ թագաւորութեան հաւրն իւրոյ, լուսաւորեալ փարատեաց զմառախլապատ խաւարն, զոր ի գրկմանէ հաւր նորա մեծացեալ ունէր զեկեղեցիս Հայաստանեայց»[2]: Այս առումով ուշագրավ է հետևյալ վկայությունը ևս. «Եւ էին ի դրան իշխանք երկու հայասեռք՝ եղբայրք միմեանց. երիցագոյն անուն՝ Զաքարէ Շահնշահ, այր սուրբ եւ առաքինի և ամենեւին զարդարեալ երկեղիւն Աստուծոյ, մինչ, գրեթէ գերագոյն լեալ քան բազում ճգնաւորս, որ ի քարանձաւս»[3]: Այն, որ Զաքարեն մինչ կյանքի վերջը մնաց որպես Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ և պաշտպան, վկայում է 1212 թ. մի ձեռագրի հիշատակարան. «Ին Զաքարիայի և Իւանէի, որով փոխեցաւ ի Քրիստոս Զաքարիա և սուգ մեծ եթող Հայաստան եկեղեցեացս»[4]:

Ուշագրավ է, որ ժամանակի վրաց պատմիչները որևէ կերպ չեն անդրադարձել խնդրո առարկա ժողովներին: Շ. Մեսխիան այդ հանգամանքը բացատրում է վրաց թագավորական իշխանության և եկեղեցու վարած քաղաքականությամբ՝ նշելով, որ վերջիններս օգտագործելով Զաքարեի հայադավան լինելը և հայության վրա նրա ունեցած ազդեցությունը, փորձել են նրա միջոցով Հայոց եկեղեցուն պարտադրել մի քանի ոչ հայադավան սովորույթներ: Ուստի, ինչպես նշում է Շ. Մեսխիան. «Ակնհայտ է, որ այս դեպքում (խոսքը վերաբերում է Լոռիի և Անիի եկեղեցական ժողովներին - Վ. Թ.) Զաքարիա Երկայնաբազուկը գործում էր Վրաստանի թագավորական դարպա-

[1] Նույն տեղում, էջ 178-179:
[2] Նույն տեղում, էջ 177:
[3] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, էջ 1837:
[4] Նույն տեղում, էջ 1841:

[1] Սուրադյան Պ., Կովկասեան մշակութային աշխարհը և Հայասատանը, պ. Ա, էջ 326, հմմտ. Մխիթար Գոշ, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, էջ 340:
[2] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյանը, Ե., 1984, էջ 178:
[3] Հովսեփյան Գ., Յիշատակարան ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 697:
[4] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, նշվ. աշխ., էջ 79:

սի և վրաց եկեղեցու պատվերով»[1]: Հարկ է նկատել, որ Ջաքարեի՝ վրաց եկեղեցու հետ ունեցած հիշյալ «համագործակցության» անգամ հավանական չլինելը փաստվում է հենց վրաց աղբյուրի տեղեկություններով: Խոսքը վերաբերում է «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» երկում հիշատակված հայ-վրացական դավանաբանական վեճին,[2] որի մի կողմը Ջաքարե ամիրսպասալարն ու հայաստանից հրավիրված հոգևորականներն էին, իսկ մյուս կողմը՝ վրաց հոգևորականությունը՝ կաթողիկոսի գլխավորությամբ: Թեև ըստ այդ աղբյուրի, վեճում «հաղթում» է վրացական կողմը, այդուհանդերձ հստակ երևում է Ջաքարեի՝ հայ Առաքելական եկեղեցու դավանանքին հետևելու և այն պաշտպանելու վճռականությունը: Ավելին, դժվար է պատկերացնել, որ Ջաքարեի նման հեղինակությունը կարող էր հանդես գալ Շ. Մեսխիայի նշած դերում: Վերջինիս պնդման դեմ հակափաստարկների շարքում արժեքավոր է նաև այն, որ խնդրո առարկա ութ կանոններից հայոց եկեղեցու ծիսակարգին հակասող կանոնների նախածեռնությունը, ինչպես տեսանք, պատկանում էր Կիլիկիայի հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանություններին, որոնք երբևէ և որևէ կերպ չէին կարող վրաց պետության և եկեղեցու նման քաղաքականության կրողները լինել: Ինչ վերաբերում է ժողովներին՝ վրաց պատմագրության կողմից որևէ կերպ չանդրադառնալուն, ապա դա, հակառակ Շ. Մեսխիայի պնդման, զորեղ կռվան է: Հակառակ դեպքում ժողովները պետք է դիտել որպես վրացական պետության և եկեղեցու վարած կրոնական քաղաքականության ծեռքբերում, ինչն արձանագրելը, կարծում ենք, առավել տրամաբանական է, հաշվի առնելով արդյունքների արժանահավատությունը, քան «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» երկից հայտնի դավանաբանական վեճում վրացական կողմի տարած «հաղթանակը»: Ավելին, նույն երկի հեղինակը, նկարագրելով Ջաքարեի մահը, նշում է. «Եվ հավատով հայ էր»[3]: Հայ-վրացական դավանաբանական վեճերում հայ Առաքելական եկեղեցու դավանանքի պաշտպանության դիրքերից հանդես գալու Ջաքարեի վճռականությունը վկայում է նաև Կիրակոս Գանձակեցին: Խնդիրն

[1] Թորոսյան Խ., Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը որպես Ջաքարյան Հայաստանի ու Ջաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Ե., 1992, էջ 252:

[2] Картлис Цховреба. История Грузии, под. ред. Р. Метревели, Тбилиси, 2008, с. 278-281. հմմտ. Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Ե., 1936, էջ 16-20: Թորոսյան Խ., նշվ. աշխ., էջ 419-428:

[3] Картлис Цховреба. История Грузии, с. 290, հմմտ. Թորոսյան Խ., նշվ. աշխ., էջ 448:

այն է, որ 1197 թ. Ծոզատկի տոնի հետ կապված լուրջ վեճ էր ծագել երկու եկեղեցիների միջև: Վեճը հարթելու և տոնի կատարման ճշգրիտ օրը պարզելու համար վրաց Թամարա թագուհին (1185-1207 թթ.) և Ջաքարե ամիրսպասալարը մեկական իշխան են ուղարկում Երուսաղեմ: Պատմիչի հաղորդմամբ Երուսաղեմում պարզվում է, որ ծեսը պետք է տոնել ըստ հայոց ավանդույթի: Տեղեկանալով այս մասին՝ «խնդաց մեծ զօրավարն Ջաքարէ, և ամենայն հայեարն, որ էին ի զորուն. և առաւել ևս հաստատէին յուղիղ հաւատն հայոց»[1]: Այս իրադարձությունը հիշատակում է նաև Սամուել Անեցու երկի շարունակողը. «ՌճՂԹ (ՈԽՉ) (1197 թ.) Խանգարեցին զՋատիկ և ընդ աստուածասպանսն տօնեցին այլազգ. իսկ ի կատարման ս. յարութեան աւուրց բերին յեղբարց մերոց զաւետիս լուծման կանթեղաց ի գերեզմանէն Քրիստոսի ի մեր զատկին. և յամօթ եղեն հակառակողքն»[2]:

Այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչու՞ ժողովներից և ոչ մեկում կողմերը համաձայնության չեկան, և ինչո՞վ էր պայմանավորված եկեղեցականների մի մասի ժխտողական դիրքորոշումը: Ի մի բերելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ ի սկզբանե Ջաքարեի գլխավոր նպատակը բանակում եկեղեցու շարժական սեղան ունենալն էր: Այս մասին ուղղակիորեն վկայում է նաև Մխիթար Այրիվանեցին. «Եղև ժողով ի Լոռի վասն վրանաւ պատարագի և ոչ հաճեցան: Դարձեալ յԱնի ժողովեցան, և այլ ցրուեցան»[3]: Այս առումով հետաքրքրական է նաև այն, որ Ջաքարեն առաջին հերթին դիմում է Հովհաննես Ձ Սսեցի կաթողիկոսին, որն էլ զորավարի խնդրանքը, հավանության արժանացնելով նրան է ուղղարկում եկեղեցու շարժական սեղան՝ ոչ մի խոսք չասելով Սսի ժողովում ընդունված կանոնների վերաբերյալ: Իսկ ինչ վերաբերում է Սսի ժողովի հայտնի ութ կանոններին, ապա դրանցից հայոց եկեղեցու ծիսակարգին խորթ դրույթների նախածեռնությունն, ինչպես տեսանք, գլխավորապես պատկանել է Կիլիկիայի հայկական իշխանական դասին՝ Լևոն Ա - ի գլխավորությամբ: Ուստի Լոռիի և Անիի եկեղեցական ժողովները չպետք է պայմանավորել միայն Ջաքարե ամիրսպասալարի և Հայաստանի հոգևոր դասի փոխհարաբերություններով: Դրանք պետք է դիտել որպես Կիլիկյան Հայաստանի և Ջաքարյան Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանական դասերի փոխհարաբերությունների հերթական դրվագ: Ինչ վերաբերում է խնդրո

[1] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 215:

[2] Սամուէլ Անեցի, Հավաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ,1893, էջ 45:

[3] Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, էջ 65:

առարկա ժողովների արդյունքներին, ապա դրանք պայմանավորված են եղել հետևյալ հանգամանքներով: Նախ և առաջ՝ Զաքարեի առաջարկների նկատմամբ հայ հոգևորականության մի մասի բռնած ընդդիմադիր դիրքը պետք է պայմանավորել Սսի ժողովի կանոններում Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգին հակասող կանոնների առկայությամբ: Քաջ հայտնի է Հյուսիսային Հայաստանի հոգևորականների ժխտողական վերաբերմունքը օտարածին սովորույթների նկատմամբ: Բացի այդ, վերոնշյալ կետերի ընդունման հարցում Լոռիի և Անիի ժողովներին մասնակցած հոգևորականությունը կաշկանդված չէր քաղաքական այնպիսի շահով, որով պայմանավորված, ժամանակին Կիլիկիայի հոգևոր դասը ստիպված ընդունեց Հռոմի պապի պահանջները

Ժողովների ընթացքից նաև պարզ է դառնում, որ դրանց մասնակից հոգևորականների մի մասը որքան ընդդիմադիր էր ծիսակարգային նորամուծությունների ընդունմանն, այնքան էլ՝ եղծված կարգերի վերականգնման հարցում:

Վերը նշված հանգամանքների շարքում Զաքարեի պահանջների նկատմամբ հոգևորականության մի մասի մերժողական մոտեցումն որոշակիորեն պետք է պայմանավորել ոչ միայն վերջիններիս և Զաքարեի, այլև հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերություններով ընդհանրապես: Այս առումով հետաքրքրական է Անիի ժողովում Մխիթար Գոշի՝ Զաքարեին ուղղված դիմումն առ այն, որ. «իշխանաբար ոչ էր պարտ առնել զայսպիսի իրս»[1]: Խնդիրն այն է, որ Հայ Առաքելական եկեղեցին, թեև իր գոյության առաջին իսկ շրջանից ստացել է պետության, իշխանական դասի օժանդակությունը, ձևավորվել ու զարգացել է նաև վերջիններիս նվիրատվությունների և տրամադրած միջոցների հաշվին, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ բացասաբար է վերաբերվել նրանց կողմից եկեղեցու գործերին միջամտելուն: Այս առումով հետաքրքրական են Անիի 1036 թ. եկեղեցական ժողովում ընդունված որոշ կանոններ,[2]

[1] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 177:

[2] Անիի 1036 թ. եկեղեցական ժողովը հրավիրվել է հայոց Հովհաննես-Սմբատ (1020-1041) թագավորի հրամանով և այն ղեկավարել է Աղվանքի կաթողիկոս Հովսեփը: Խնդիրն այն է, որ հայ եպիսկոպոսները ժողով էին հրավիրել և նզովել հայոց թագավորին այն բանի համար, որ վերջինիս հրամանով Պետրոս Գետադարձ կաթողիկոսին զրկել էին կաթողիկոսական աթոռից և բանտարկել Բջնիում: Ժողովի նպատակը Պետրոս Գետադարձին հետ կանչելն և նզովքը վերացնելն էր: Ժողովին մասնակցել են աշխարհիկ և հոգևոր դասի 4000 ներկայացուցիչներ (Մելիք-Թանգյան Ն., նշվ. աշխ., էջ 442-443, հմմտ. Մխիթարյանց Ա., նշվ. աշխ., էջ 106-107):

որոնցով եկեղեցական կարգերի տնօրինման իրավունքը անվերապահորեն տրվում էր Ազգային եկեղեցական ժողովին, որն էլ կազմված էր լինելու հոգևոր ու աշխարհիկ դասերի ներկայացուցիչներից: Ժողովը թագավորին և իշխաններին արգելում էր այլ կերպ, քան Ազգային եկեղեցական ժողովի համաձայնությամբ, միջամտել եկեղեցու գործերին: Հակառակ դեպքում՝ կայացված յուրաքանչյուր որոշում համարվում էր անվավեր[1]: Չնայած այս ամենին՝ Լոռիի և Անիի եկեղեցական ժողովների արդյունքները պայմանավորել միայն վերոհիշյալ հարաբերություններով, ինչպես ներկայացնում է Ն. Մելիք-Թանգյանը, ճիշտ չէ: Նշենք նաև, որ Զաքարեի իշխանական դիրքերից հանդես գալը դատապարտել է նաև Մ. Մուրատյանցը, նշելով, որ. «Զաքարէն, իբրեւ զաւակ եկեղեցւոյ իրաւունք ունէր միայն իւր կարծիքը յայտնել. իսկ Սսական առաջարկութեանց ընդունելութիւնն կամ մերժումը ընդհանուրի որոշման գործն էր»[2]:

Հարկ է նկատել, որ խնդրո առարկա ժողովները կարևորվում են նաև նրանով, որ հստակ վկայում են Զաքարեի կողմից Լևոն Ա-ին ոչ միայն որպես Կիլիկիայի, այլև համայն հայության թագավոր ճանաչելու մասին: Հաշվի առնելով Անիի ժողովում Մխիթար Գոշի հետևյալ խոսքերը. «հրաման ունի ի կաթողիկոսէն եւ ի թագաւորէն առնել զայս. եւ մեք թէ կամիմք և թէ ոչ, սա ոչ դադարէ զայս առնել», Լ. Տեր-Պետրոսյանն իրավացիորեն նկատել է, որ Լևոնի հրամանն օրենքի ուժ է ունեցել ոչ միայն Կիլիկիայում, այլև բուն Հայաստանում[3]:

Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովներն աշխարհիկ ու հոգևոր իշխանական դասերի փոխհարաբերությունների ուշագրավ դրվագներ են: Դրանցում ծավալված իրադարձությունները ցույց տվեցին հոգևոր դասի՝ եկեղեցական հարցերում ինքնուրույնության պահպանման վճռականությունը: Բացի այդ, Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգին հակասող դրույթների մերժումը տվյալ ժամանակաշրջանում ուներ նաև քաղաքական նշանակություն: Պայմանավորված նաև դավանաբանական հարցերում վրացական կողմի դիրքորոշմամբ[4]՝ առավել կարևորվում էր հոգևոր անաղարտության պահպանման անհրաժեշտությունը:

[1] Մելիք-Թանգյան Ն., նշվ. աշխ., էջ 442-443::

[2] Մուրատեանց Մ., նշվ. աշխ., էջ 465:

[3] Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 206:

[4] Հայտնի է, որ Վրաց եկեղեցին հիշյալ ժամանակաշրջանում Հայ Առաքելական եկեղեցու հանդեպ վարում էր անհանդուրժողական քաղաքականություն: Այս մասին վրացիներին ուղղված իր թղթում հստակ նշում է Մխիթար Գոշը. «Զայս գծագրութիւն սակաւուք հարկաւոր կարծեցաք եդաք յաղագս Վրաց, որ ոչ

ВАГЕ ТОРОСЯН
ИИ НАН РА

ЦЕРКОВНЫЕ СОБОРЫ СИСА, ЛОРИ И АНИ

РЕЗЮМЕ

Желая восстановить применение походной церкви в военное время, Захария амирспасалар по совету Мхитара Гоша обращается к католикосу Всех Армян Ованнесу Ссеци (1203-1221) и царю Киликиской Армении Левону I (1187-1219). Последний в связи с этим в 1207 г. в Сисе созывает церковный собор, каторый дает положительный ответ на вопросы возбужденные Захарием. Более того, в соборе принимаются восемь каноны в числе которых имеются канони противоречащие канонам Армянской Апостольской церкви. Получив ответы Сиского собора и католикоса, Захария в Лори (1207 г.) и вскоре в Ани (в конце 1207 г. или в начале 1208 г.) созывает церковные соборы, где встречается с опозицией от большинства священников. И в Лори и в Ани Захария не достигает желаемого успеха. Опозиционная позиция священников объясняется важностью сохранения духовной беспрочности нации в отсутствии государственности.

սակաւ թշնամութեամբ վարին ընդ Հայս, աշակերտելով Յունաց» **Մխիթար Գոշ**, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, էջ 340:

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱԼԵՊԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ

Կիլիկիայի հայկական պետության արտաքին քաղաքականության մեջ Սիրիան, հատկապես նրա հյուսիսային մասը, կարևոր, երբեմն նույնիսկ բախտորոշ նշանակություն է ունեցել: Ընդ որում, այդ նշանակությունն երբեք չի պակասել անկախ այն բանից, թե պետական ինչ կազմավորումներ են եղել այստեղ առավել տիրապետող:

11-րդ դարի վերջից մինչև 12-րդ դարի 40-ական թթ. տիրապետողն խաչակրաց առաջին արշավանքից հետո հաստատված լատին պետություններն էին՝ Անտիոքի իշխանությունն ու Եդեսիայի կոմսությունը: Արդեն հաջորդող երեսնամյակում Վերին Միջագետքում և Հյուսիսային Սիրիայում հզորանում է Զանգիների տոհմը՝ նշանավոր Նուր ադ-Դինի օրոք, ով 12-րդ դարի 70-ականներին դառնում է Կիլիկիայի ամենասերտ դաշնակիցը:

12-րդ դարի 70-90-ական թվականներին հայկական պետությանը սահմանակից է դառնում Եգիպտոսում հիմնված հզոր սուլթանությունը նշանավոր Սալահ ադ-Դին Այյուբիի գլխավորությամբ:

Վերջապես 1193–1260 թթ. Կիլիկիայի հայկական թագավորությունն ամենատարբեր առնչությունների մեջ է մտնում մի նոր, քաղաքական ինքնուրույն միավորի՝ Հալեպի Այյուբյան սուլթանության հետ:

Վերոհիշյալ երկու պետությունների փոխհարաբերությունների պատմությունը շատ քիչ է ուսումնասիրված, իսկ մի շարք պատմական կարևոր փաստեր, որոնք հիշատակվում են բազմալեզու աղբյուրներում, կամ անտեսված են կամ ուսումնասիրողները դրանց անդրադարձել են հապճգիկ:

Այյուբյանները տիրեցին Հալեպին 1183 թ.:

Այստեղ նախ՝ իբրև պարզ կառավարիչ, ապա՝ նաև որպես տիրակալ, սկսեց իշխել Սալահ ադ-Դինի որդին՝ ալ-Մալիք ազ-Զահիրը: Վերջինս ընդարձակելով իր տիրույթները ամբողջ Հյուսիսային Սիրիայում՝ առաջինն էր, որ համարձակվեց իրեն հռչակել սուլթան՝ հիմնելով մի նոր դինաստիա, որը գոյատևեց մինչև մոնղոլական

նվաճումը:[1] Այն իրապես անկախ քաղաքական միավոր դարձավ 1193 թ.Սալահ ադ-Դինի մահից հետո միայն:

Սալահ ադ-Դինը լինելով մեծագույն զորավար և դիվանագետ, հաղթելով խաչակիրներին ու ստեղծելով Տավրոսյան լեռներից մինչև Լիբիա ձգվող մի հսկայածավալ պետություն՝ միաժամանակ ոչ այնքան հեռատես գտնվեց իր իսկ հիմնած պետության միասնականությունն ու հարատևությունն ապահովելու տեսակետից:

Նախ՝ նա անփոփոխ էր թողել Զանգիներից ժառանգություն ստացած ավատատիրական մասնատված համակարգը (մի բան, որ հետագայում հիմնովին փոփոխեցին մամլուքները՝ ստեղծելով խիստ կենտրոնաձիգ պետություն): Իսկ ամենակարևորն այն է, որ նա մահվանից առաջ իր տերությունը բաժանեց 4 մաս՝ դրանք հանձնելով իր բազմաթիվ որդիներից 3-ին և եղբորը: Որդիներից ալ-Աֆդալը ստացավ Հարավային Սիրիան և Պաղեստինը, ալ-Ազիզը՝ Եգիպտոսը, ալ-Մալիք ազ-Զահիրը՝ Հյուսիսային Սիրիան: Եղբորը՝ ալ-Մալիք ալ-Ադիլին բաժին հասան Ջազիրան ու Դիար Բաքրը:

Զարմանալի չէ որ տոհմի անդամների միջև սկսվեց դաժան հակամարտություն, որը շարունակվեց մինչև 12-րդ դարի վերջը: Ի վերջո, ալ-Մալիք ալ-Ադիլը, որ սրանց մեջ ամենափորձված քաղաքագետն ու զորավարն էր, մոտավորապես 1200 թ. կարողացավ մերթ ուժով, մերթ դիվանագիտությամբ գրեթե վերականգնել եղբոր՝ Սալահ ադ-Դինի տերությունը՝ միավորելով Եգիպտոսը, Պաղեստինը, Հարավային Սիրիան և Ջազիրան: Միայն Հալեպի սուլթանությունն է, որ պահպանեց իր դիրքերը:

Մինչ Սալահ ադ-Դինի մահից հետո գրեթե 6-7 տարի ընթանում էր միջդինաստիական պայքար, իր ծաղկման շրջանն էր ապրում Կիլիկյան Հայաստանը: Ավելի քան 100 տարվա ընթացքում Ռուբինյան տոհմը Կիլիկիան հասցրել էր ռազմաքաղաքական զարգացման մի աստիճանի, երբ արդեն հասունացել էր այն թագավորություն հռչակելու պահը: Ի վերջո, ստանալով մեծ պետությունների ճանաչումը՝ 1198 թ. Լևոն Ռուբինյանը հռչակվեց «Թագավոր Հայոց», որով 153 տարի անց վերականգնվեց հայկական պետականությունը: Լևոն Ռուբինյանն ու Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր 4-րդը ճկուն դիվանագիտություն էին հանդես բերել խաչակրաց 3-րդ արշավանքի ժամանակ՝ 1190 թ.: Գտնվելով մի կողմից՝ Ֆրիդրիխ Բարբարոսայի գերմանացի խաչակիրների, մյուս կողմից՝ Սալահ ադ-Դինի բանակների միջև՝ նրանք կարողացել էին Կիլիկիան զերծ

[1] Encyclopaedia of Islam, J. Sauvaget, Halab (III:85a).

պահել ավերումից, իսկ խաչակիր բանակի հեռանալուց հետո նույնիսկ գրավել էին Բաղրաս կարևոր ամրոցը:

Կիլիկիան 13-րդ դար մուտք գործեց որպես ուժեղ պետություն: Եթե մինչ այդ կիլիկյան իշխանապետերը ջանքեր էին գործադրում միավորել Կիլիկիայի Լեռնային ու Դաշտային մասերը, ապա Լևոն թագավորը փորձում է դուրս գալ Կիլիկիայի սահմաններից՝ դրանով իսկ դառնալով խիստ վտանգավոր հարևան պետությունների համար:

Ընդհանրապես, սկսած 1200 -1201 թթ. Միջերկրականի ավազանի հյուսիս-արևելյան անկյունում տիրապետող դառնալու համար ծավալվում է տևական պայքար 4 պետությունների մասնակցությամբ՝ Իկոնիայի սելջուկյան սուլթանություն, Կիլիկիայի հայկական թագավորություն, Անտիոք-Տրիպոլիսի կոմսություն և Հալեպի Այյուբյան սուլթանություն: Տասնամյակներ անց այս պայքարին վերջ դրեցին երկու՝ Իրանի մոնղոլների ու Եգիպտոսի մամլուքների կայսրությունները:

Այսինքն՝ մոտ կես դար Փոքր Ասիայի հարավ-արևելքի ու Հյուսիսային Սիրիայի հիմնական դերակատարները վերոհիշյալ պետություններն էին: Ընդ որում, հաճախ կարելի է նկատել կրկնվող մի երևույթ. երբ այս պետություններից որևէ մեկը հավակնում էր դառնալ տիրապետող, կամ՝ ռազմավարական ինչ որ տարածքներ նվաճել, մյուսները միավորվում էին նրա դեմ: Այս հիմքի վրա ստեղծվում էին ամենատարբեր, հաճախ կարճատև, դաշինքներ ու զինակցություններ:

Վերոհիշյալ երկարատև հակամարտության առաջին փուլ կարելի է համարել 1201-1216 թթ. Անտիոքի համար ծավալված պայքարը, որը արևելագետ Կլոդ Կայենը հենց այդպես էլ անվանել է՝ «Անտիոքյան պատերազմ»:[1] Սա կարելի է համարել Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության հզորության շրջանը, մինչդեռ խաչակիրները ծանր օրեր էին ապրում: Անտիոքը 1203, 1206 և 1216 թվականներին պաշարվեց հայկական զորքերի կողմից: Ի վերջո, 1216 թ. Լևոն թագավորը գրավեց Անտիոքն ու այն դարձրեց ենթակա տարածք:

Ինչ վերաբերում է Հալեպի Այյուբյան սուլթանությանը, ապա ալ-Մալիք ազ-Զահիրը ոչ միայն կարողացել էր պահպանել իր դիրքերը (թեև Եգիպտոսի սուլթանի կողմից նկրտումներ միշտ կային) այլև ընդարձակել էր իր տիրույթները՝ գրավելով Լաթաքիան և Զա-

[1] Sեe Claude Cahen, La Syrie du Nord et la principaute franque d'Antioche, Paris, Institut Francais de Damas, 1940.

բալան, դրանով իսկ ճեղքելով խաչակիրների շղթան և դառնալով ծովային պետություն:

Հալեպի սուլթանության համար վտանգավոր էր Անտիոքի գրավումը հայերի կողմից: Սա ստիպում էր Հալեպի սուլթանին դաշնակցել Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Իկոնիայի սուլթանության հետ: Ահա թե ինչու 1203-1206 թթ. պատերազմ տեղի ունեցավ երկու հարևանների միջև, որը կարող է դիտարկվել որպես «Անտիոքյան պատերազմի» մի մասը: Եռամյա այս պատերազմում ռազմական գործողություններն ընթացան հիմնականում Բաղրասի, Դարպսակի, Դասիրի և Ամկ լճի շրջակայքում: Սրանով ալ-Մալիք ազ-Զահիրը մեծ ծառայություն մատուցեց լատիններին՝ փրկելով Անտիոքը հայկական գրավումից 1203 թ.:

Այս պատերազմի մասին հաղորդում են արաբ պատմիչներ Քամալ ադ-Դին իբն ալ-Ադիմը[1], Իբն ալ-Ասիրը[2] և ազ-Զահաբին[3], իսկ հայ պատմիչներից՝ Կիրակոս Գանձակեցին:[4] Նրանց հաղորդած տեղեկություններն երբեմն հակասական են, սակայն համադրելով դրանք՝ հանգում ենք այն եզրակացության, որ 1203-1206 թթ. պատերազմը Հալեպի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի միջև տարածքային փոփոխություններ չմտցրեց: Բաղրասը մնաց հայերի, իսկ Դարպսակը՝ Այյուբյանների ձեռքին: Այս ամրոցների միջև ընկած տարածքով էր անցնում երկու պետությունների սահմանը:[5]

Հազիվ 2 տարի անց կրկին ծավալվեց պայքար նախ՝ սելջուկների և հայերի միջև, ապա՝ դրան միացավ նաև ալ-Մալիք ազ-Զահիրը՝ օգնելով Քեյխոսրովին ընդդեմ Կիլիկիայի[6]: Այս դեպքերին միջամտեց Եգիպտոսի ալ-Մալիք ալ-Ադիլը, որը Լևոն 2-րդի խնդրանքով դիմեց եղբորորդուն՝ Մալիք ալ-Զահիրին և սուլթան Քեյխոսրովին, որ հաշտություն կնքեն Լևոն թագավորի հետ: Հաշտությունը

[1] Kamal ad-Din Ibn al-Adim, Histoire d'Alep, t. III, Institut Francais de Damas, Damas,1968, p.157-158.
[2] Իբն ալ-Ասիր, (թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Արամ Տեր-Ղևոնդյանի), Ե.,1981, էջ 285-286:
[3] Al-Dahabi, Kitab duwal al-Islam, Damas, 1979, p.187.
[4] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1961, էջ 160-162:
[5] Վ. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թթ., Ե., 1994, էջ 122:
[6] Անանուն Եդեսացի, ժամանակագրություն, թարգմ. Լ.Տեր-Պետրոսյանի, Ե., 1982, էջ 171: Kamal ad-Din Ibn al-Adim, Histoire d'Alep, t. III, Institut Francais de Damas, Damas,1968, p.159-160.

կայացավ. հիմնական պայմաններից մեկն այն էր, որ Կիլիկիան չմիջամտեր Անտիոքի գործերին:[1]

Իրականում Լևոն 2-րդն ընդամենը ժամանակ շահեց, քանի որ, ինչպես տեսանք, 1216 թ. գրավեց Անտիոքը: Այս քաղաքը 3 տարի, մինչև Լևոնի մահը, մնաց հայկական զորքերի հսկողության տակ: 1216 թ. ճակատագրական էր Մերձավոր Արևելքի համար: Այս տարում մահացավ Հալեպի սուլթան ալ-Մալիք ազ-Զահիրը և նրան հաջորդեց որդին՝ ալ-Ազիզը, ով պատմիչի վկայությամբ «ծծկեր երեխա» էր[2] (այլ վկայությամբ՝ 5 տարեկան):[3] Երկիրը կառավարում էր խնամակալը կամ աթաբեկը՝ ներքինի Շիհաբ ադ-Դին Տուղրիլը:

1216 թ. սկսած՝ ծերության նշաններ ցույց տալիս Լևոն թագավորը, իսկ երկրի ներսում գլուխ են բարձրացնում կենտրոնախույս ուժերը: Մեզ հետաքրքրող մյուս 2 պետություններում 1216-1219 թթ. ճիշտ հակառակ երևույթներն էին տեղի ունենում: Բոհեմունդ 4-րդը, հաղթահարելով հակառակորդների դիմադրությունը, վերագրավեց Անտիոքը, կրկին միավորեց Անտիոքն ու Տրիպոլիսը մեկ պետության մեջ և նույնիսկ սկսեց Կիլիկիայի հանդեպ ոտնձգություններ կատարել: Իկոնիայի սուլթանությունը հաղթահարեց իր ներքին երկպառակություններն[4] ու թևակոխեց իր ամենահզոր շրջանը՝ անընդհատ ճնշման մեջ պահելով Լեռնային Կիլիկիան, երբեմն էլ՝ Ջազիրայի ու Սիրիայի Այյուբյան տիրույթները: Վերջապես այս նույն տարիներին տեղի ունեցավ խաչակրաց հերթական, թվով 5-րդ արշավանքը, որը ծավալվեց Եգիպտոսում՝ Դամիեթ նավահանգստի շուրջ: Այն զբաղեցրեց Այյուբյանների զինված ուժերին՝ գործողությունների ազատություն տալով փոքրասիական սելջուկներին:

1216 թ. հետո սկսում են Իկոնիայի սուլթանության անվերջանալի հարձակումներն ու ոտնձգությունները հարևան պետությունների հանդեպ: Պայքար է ծավալվում լեռնային ամեն մի ամրոցի համար: Լևոն թագավորի գահակալության վերջին տարիներին մեծ դժվարությամբ և միայն որոշ զիջումների գնով է հաջողվում զսպել հյուսիսի ագրեսիվ հարևանին:

Լևոն թագավորի մահից հետո, 7 տարի Կիլիկիան ապրում է անկայունության մի շրջան, որը վերջ է գտնում Հեթում Ա-ի գահա-

[1] Kamal ad-Din Ibn al-Adim, Histoire d'Alep, t. III, Institut Francais de Damas, Damas,1968, p.168-169.
[2] Bar Hebraeus, The Chronography of Bar Hebraeus Gregory Abu-l-Faraj, tr.by E.W.Budge, Amsterdam,1976, p.
[3] Տեառն Միխայէլի պատրիարքի ասորւոց ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 520-521:
[4] Նույն տեղում, 1870, էջ 506-507:

կալմամբ՝ 1226 թ.: Այդ շրջանում երկրի կյանքում բախտորոշ դեր է խաղում Կոստանդին պայլը: Սակայն մինչ այդ դրամատիկ դեպքեր են տեղի ունենում Հայոց թագավորության և Անտիոքի լատինների միջև: Նախ՝ 1220 թ. Կիլիկիայի գահին տիրելու անհաջող փորձ է կատարում Ռայմոնդ-Ռուբենը, ապա՝ 1222 թ. Զաբել թագուհու հետ են ամուսնացնում Բոհեմունդ 4-րդի որդուն՝ Ֆիլիպին, որին սակայն 1224 թ. հայ իշխանները ձերբակալում ու Թիլ Համդուն ամրոցում բանտ են նետում: Սկսվում է երկամյա լարված մի փուլ երկու պետությունների միջև:

Ըստ ասորի պատմիչ Բար Հեբրեոսի՝ Բոհեմունդը չհաշտվելով Ֆիլիպի գահընկեցության ու ձերբակալման փաստի հետ՝ պահանջում է իրեն հանձնել որդուն, բայց մերժվում է Կիլիկիայի իշխանների կողմից: Ապա նա մտնում է Կիլիկիա, հասնում մինչև Թիլ Համդուն ամրոցը: Բայց շուտով տեղեկանում է, որ որդին թունավորված է: Մի քանի օր անց Ֆիլիպը մահանում է: Ոչ Բար Հեբրեոսը և ոչ էլ հայ պատմիչ Սմբատ Սպարապետը ոչինչ չեն հաղորդում երկու պետությունների միջև ռազմական գործողությունների մասին: Մինչդեռ այդ մասին բավական մանրամասն շարադրում է Իբն ալ-Ասիրը. «Այդ տարում (հիջրայի 623 թ., 1226 հունվարի 2-1226 դեկտեմբեր 2) Անտիոքի տեր ֆրանկ Բրինսը (իշխան) հավաքեց մեծ զորք և շարժվեց հայերի դեմ, որոնք Իբն Լայունի (Լևոնի որդու) երկրի կիրճերում էին (ամրացած) և նրանց միջև սաստիկ պատերազմ տեղի ունեցավ»[1]: Ապա Իբն ալ-Ասիրը նկարագրում է, թե ինչպես ծագեց այդ պատերազմը: Նա իր շարադրանքում մեծ տեղ է հատկացնում Հռոմի Հոնորիուս 3-րդ պապի վերաբերմունքին՝ Կիլիկիայի և Անտիոքի բախման նկատմամբ: Ըստ արաբ պատմիչի՝ Բոհեմունդը թույլտվություն է խնդրում պապից՝ Կիլիկիայի վրա հարձակվելու համար: Մերժում ստանալով՝ Բոհեմունդը դաշինք է կնքում Իկոնիայի սուլթանի հետ՝ որոշելով հարձակվել հայոց թագավորության վրա: Լսելով այդ մասին և ենթարկվելով իրենց անմիջական ղեկավար Հռոմի պապի ցուցումներին՝ Տաճարական և Հյուրընկալ (Հիվանդախնամ) ասպետները հրաժարվում են ենթարկվել Անտիոքի իշխանին: Վերջինս պատերազմն սկսում է առանց նրանց մասնակցության[2]:

[1] Իբն ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 331: Ibn al-Athir, al-Kamil fi-l-Tarikh, al-Qahira,1353(1934-1935), t.IX, p.371-372.
[2] Իբն ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 332: Ibn al-Athir, al-Kamil fi-l-Tarikh, al-Qahira,1353 (1934-1935), t.IX, p.371-372.

Ըստ եղած համաձայնության՝ Իկոնիայի սուլթանը հարձակման անցավ 1225 թ. վերջերին: Հյուսիսից ներխուժելով՝ սուլթան Քայ Կուբադին սկզբում հաջողվեց գրավել 4 բերդ, սակայն ձմեռը վրա հասավ, և նա ստիպված հետ քաշեց զորքերն ու վերադարձավ իր երկիրը:

Երբ Բոհեմունդը իր բանակով ներխուժեց Կիլիկիա, հայ իշխանները դիմեցին Հալեպի սուլթանությանը և ռազմական օգնություն ստացան այնտեղից: Ինչպես գրում է Իբն ալ-Ասիրը. «Բոհեմունդը առաջ խաղաց, պատերազմեց նրանց (հայերի) հետ, սակայն արդյունքի չհասնելով վերադարձավ»[1]: Նույն դեպքերի մասին պատմիչը գրում է. «Հայերը լուր ուղարկեցին Հալեպի աթաբեկ Շիհաբ ադ-Դինին՝ օգնության կանչելով և զգուշացնելով, որ վատ կլինի, եթե բրինսը գրավի իրենց երկիրը, քանի որ Հալեպի գավառներին դրացի է»:[2]

Հալեպից ուղարկված «զենքն ու զորքը»[3] վճռական նշանակություն ունեցան Բոհեմունդի հարձակմանը դիմագրավելու գործում: Բայց որ շատ կարևոր է, Կիլիկիան վերջապես դուրս եկավ շրջափակումից, որը նրան ստիպում էր երկար ժամանակ միայնակ պայքարել հակառակորդների դեմ:

Իբն ալ-Ասիրը միակ պատմիչն է, որ հաղորդում է Կիլիկիա-Հալեպ վերոհիշյալ համագործակցության մասին: Զարմանալի կերպով այս մասին լռում են ոչ միայն հայ (Սմբատ Սպարապետ, Կիրակոս Գանձակեցի և այլք) այլև արաբ պատմիչները: Օրինակ Քամալ ադ-Դին իբն ալ-Ադիմը, որն այնքան հարուստ տեղեկություններ է հաղորդում նախորդ դեպքերի վերաբերյալ, այս մասին լռում է: Եվ սա այն դեպքում, երբ Իբն ալ-Ադիմի «Հալեպի պատմության» մեջ հարուստ տեղեկություններ կան 1226 թ. զինակցության գլխավոր գործող անձի՝ հենց նույն Շիհաբ ադ-Դին Տուղրիլի մասին:

Մյուս կողմից պատճառ չկա կասկածի տակ առնելու Իբն ալ-Ասիրի տեղեկությունները, որը հայտնի է իբրև ճշմարտապատում հեղինակ: Բացի այդ, հայտնի է, որ նա 1228-1231 թթ. ապրել է Հալեպում հենց որպես Հալեպի աթաբեկի անձնական հյուր:[4] Իսկ այդ տարիներին աթաբեկ էր ոչ այլ ոք, քան նույն Շիհաբ ադ-Դին Տուղ-

[1] Իբն ալ-Ասիր, նշվ. աշխ., էջ 333: Ibn al-Athir, al-Kamil fi-l-Tarikh, al-Qahira,1353(1934-1935), t.IX, p.371-372.
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Encyclopaedia of Islam, F.Rosenthal, Ibn al-Athir (III:723b).

րիլը, որը այդ պաշտոնում էր 1216 թ., այսինքն՝ ալ-Մալիք ազ-Զահիրի մահից անմիջապես հետո մինչև իր մահը՝ 1233 թ.:[1]

Ընդ որում, այդ 17 տարիներից առաջին 14-15 տարիների ընթացքում նա, փաստորեն, ինքնուրույն և բավական իմաստուն կերպով կառավարում էր Հալեպի սուլթանությունը և իր մահից ընդամենը մի քանի տարի առաջ, հիջրայի 628 թվականին (1230-1231) է, որ պետական գանձարանը, բանակը և ամրոցների ղեկավարումը հանձնում է արդեն չափահաս դարձած երիտասարդ միապետին:[2]

1226 թ. հայ-արաբական զինակցությունն ամբողջովին տեղավորվում է վերոհիշյալ 4 պետությունների մրցակցության տրամաբանության մեջ, քանի որ ի տարբերություն 1203 կամ 1208 թվականների՝ Կիլիկիայի թագավորությունն այլևս վտանգ չէր ներկայացնում ոչ Անտիոքի և ոչ էլ Հալեպի համար, ընդհակառակը՝ տրամաբանական էր թույլ չտալ կրկին ուժեղացող Անտիոք-Տրիպոլիսի կոմսությանն իրեն միացնել նաև Կիլիկիան, միաժամանակ նաև մի փոքր զսպել օրեցօր հզորացող վտանգավոր հարևանին՝ Իկոնիայի սուլթանությանը: Բայց և այնպես, Իբն ալ-Ասիրի տեղեկությունը հավելյալ հաստատման կարիք ունի: Այստեղ է, որ մեզ գալիս է օգնելու մեկ այլ պատմիչի՝ Միքայել Ասորի պատրիարքի երկը, որի հայերեն տարբերակում (վերջին հատվածում, որը համարվում է ավելացված Միքայել Ասորու շարունակողի կողմից) կա մի բացառիկ տեղեկություն 7 տարի ավելի վաղ կայացած դեպքերի մասին: Ընդ որում, այս հատվածն առկա է միայն 1870 թ. հրատարակության մեջ, իսկ 1871-ի հրատարակության մեջ այն բացակայում է: Հաշվի առնելով տեղեկության բացառիկությունն՝ այն մեջբերում ենք ամբողջությամբ. «Եվ հենց այդ տարին (1219) սուլթան Քեյքաուսը հավաքելով իր զորքերը, նաև օգնական ուժեր ստանալով Հայոց թագավորից, գալիս է դեպի Հալեպի երկիրը, դեպի Ռաբան և գրավում այն. և այնտեղից գնում դեպի Թլբաշար և Այնթաբ ու դրանք ևս գրավում: Ապա ցանկացավ հարձակվել Հալեպ (քաղաքի) վրա, որտեղ երեք տարի դրանից առաջ վախճանվել էր Հալեպի սուլթան Մալիք ազ-Զահիրը: Իշխանությունը (այստեղ) անցել էր նրա որդուն, որն ընդամենը հինգ տարեկան մանուկ էր: Եվ նա ուներ մի հույժ իմաստուն աթաբեկ, որը (նամակ) ուղարկեց Հայոց թագավոր Լևոնին և խնդրեց նրան օգնել իրեն, հուսալով որ թերևս մի հնարով զերծ մնան (Քեյքաուսի) բարկությունից, և խոստացավ նրան (Լևոնին) բազում ոսկեղեն:

[1] Kamal ad-Din Ibn al-Adim, Histoire d'Alep, t. III, Institut Francais de Damas, Damas,1968, p. 213-215.
[2] Նույն տեղում, էջ 211:

Հայոց թագավորը դրանից հետո մտահոգվեց և իր կորովամիտ իմաստնությամբ, առանց հապաղելու, նամակ ուղարկեց Թլբաշարում գտնվող Ռումի սուլթանին. «Հայոց թագավոր Լևոնից մեր եղբորը՝ սուլթան Քեյքաուսին (...) իբրև մեզ համար սիրելի անձ ուզում ենք տեղեկացնել քեզ, որ հաստատ լուրեր ենք ստացել այն մասին, որ քո զորքերի միջից քառասուն ամիրներ դավադրություն են կազմել որպեսզի քեզ հանձնեն Մալիք Աշրաֆի[1] ձեռքը, և դու հիմա մտածիր, թե ինչպես անես, որ քո անձի մասին մտածելով՝ չընկնես քեզ համար ատելի մարդկանց ձեռքը, ողջ եղիր»[2]

Ապա պատմիչն ավելացնում է, որ երբ Լևոն թագավորի նամակը կարդացին սելջուկ սուլթանին, վերջինս զարհուրեց, զորքին հրաման տվեց շտապ վերադառնալ: Ինքը նույնպես վերադարձավ իր երկիրն ու հրամայեց պատժել վերոհիշյալ 40 ամիրներին: Իսկ Աշրաֆն իմանալով այս մասին՝ ետ խլեց թե՝ Ռաբանը, թե՝ Թլբաշարն ու վերադարձրեց դրանք Հալեպի սուլթանությանը:[3]

Այս տեղեկությունն ի հայտ է բերում մի կարևոր հանգամանք: Պարզվում էր, որ երկու պետությունների համագործակցությունն սկսվում է մեր հիշատակած զինակցությունից դեռևս 7 տարի առաջ՝ 1219 թ. Լևոն թագավորի կյանքի վերջին ամիսներին: Դատելով այն բանից, որ Հայոց թագավորն օգնական զինուժ է տրամադրել սելջուկներին (որպես պարտավորություն) կարելի է եզրակացնել, որ սա տեղի է ունեցել այն բանից հետո, երբ Լևոն թագավորն ամեն գնով Կոստանդին սպարապետին (գունդստաբլ) սելջուկյան գերությունից ազատելու նպատակով՝ թե' տարածքային զիջումներ կատարեց և թե' ընդունեց սուլթանի գերակայությունը, որն ըստ երևույթին ենթադրում էր նաև զինվորներ տրամադրելու պարտավորությունը:[4]

Եթե հիմք ընդունենք Սմբատ Սպարապետի «Տարեգրքի»[5] տվյալն այն մասին, որ Լևոն Մեծագործը վախճանվեց 1219 թ. մայիսի 1-ին, ապա ստացվում է, որ բավական կարճ ժամանակահատվածում, այսինքն՝ 1219 թ. առաջին 4 ամսվա ընթացքում հաջորդաբար տեղի են ունեցել հետևյալ իրադարձությունները՝ Լևոն թագավորի կատարած զիջումներն Իկոնիայի սուլթանին, Կոստանդին սպարապետի ազատ արձակումը, սուլթան Քեյքաուսի հարձակումը Հալե-

[1] Խոսքը հավանաբար Զազիրայի ու Դիար Բաքրի տեր և Հալեբի դաշնակից Մալիք ալ-Աշրաֆի մասին է:
[2] Տեառն Միխայէլի պատրիարքի ասորւոց ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 520-522:
[3] Նույն տեղում, էջ 520-522:
[4] Նույն տեղում, էջ 519-520:
[5] Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 223:

պի սուլթանության վրա, աթաբեկ Շիհաբ ադ-Դին Տուղրիլի դիմումը Լևոն թագավորին, վերջինիս միջամտությունը (կամ ավելի ճիշտ խորամանկությունը), սելջուկյան բանակի ետքաշումը և վերջապես Ռաբանի ու Թլբաշարի ազատագրումն ու վերամիացումը Հալեպի սուլթանությանը:

Ըստ էության՝ սա հաստատում է այն միտքը, որ 1216-1219 թթ. շրջադարձային տարիներ եղան թե՛ Հալեպի սուլթանության և թե՛ Հայոց թագավորության համար: Այդ տարիներին Իկոնիայի սուլթանության կտրուկ հզորացումն ու Անտիոք-Տրիպոլիսի կոմսության նոր աշխուժացումը Կիլիկիային ու Հալեպի սուլթանությանը դարձնում էին բնական դաշնակիցներ, ինչն իր արտահայտությունը գտավ թե 1219 թ. և թե 1226 թ.:

Այսպիսով՝ եթե փորձենք բնորոշել Կիլիկիա-Հալեպ փոխհարաբերությունները և դրանք բաժանել փուլերի, ապա կարելի է ուրվագծել 5 հիմնական ժամանակահատված:

1) 1194-1216 թթ. – մրցակցություն և ռազմական պայքար երկու ուժեղ պետությունների միջև, որի նպատակն էր առաջին հերթին թույլ չտալ հակառակորդին ռազմավարական դիրքեր ձեռք բերել:

2) 1216-1226 թթ. - փոխաջակցություն ու զինակցություն ժամանակավոր դժվարություններ հաղթահարող պետությունների միջև: Այդ զինակցությունը բախտորոշ դեր է ունենում մի դեպքում՝ Հալեպի սուլթանության, մյուս դեպքում՝ Հայոց թագավորության համար: Ընդ որում, 1219 թ. համագործակցություն են հաստատում իր վերջին օրերն ապրող Լևոն թագավորն ու Հալեպի աթաբեկ Շիհաբ ադ-Դին Տուղրիլը, իսկ 1226 թ. զինակցությունը հաստատվում է երկու խնամակալների՝ Կոստանդին պայլի և նույն Շիհաբ ադ-Դինի միջև:

3) 1226-1243 թթ. – չեզոք, հավանաբար հիմնականում բնականոն հարաբերություններ: Զարգանում են առևտրատնտեսական հարաբերությունները: Ալ-Մալիք ալ-Ազիզի մահից հետո նրան հաջորդում է ալ-Մալիք ան-Նասիրը (1236-1260 թթ.), որի գահակալումը դառնում է Հալեպի Այյուբյանների սուլթանության հզորության գագաթնակետը և միաժամանակ՝ վախճանը: Նա կարողանում է գրավել նաև Կենտրոնական Սիրիան և հակամարտության մեջ է մտնում Եգիպտոսի մամլուքների հետ, որը կանխվում է միայն Բաղդադի խալիֆայի միջամտությամբ: Միջնադարյան Հալեպը ապրում է իր ամենածաղկուն շրջանը:[1]

[1] Encyclopaedia of Islam, J. Sauvaget, Halab (III:85a).

4) 1243-1259 թթ. – այս շրջանում Կիլիկիան ճակատագրական ընտրություն է կատարում՝ որոշում ընդունելով հօգուտ մոնղոլների, ապա արդեն 1254 թ. ստորագրվում է հայ-մոնղոլական հայտնի դաշինքը, որով Կիլիկիան պարտավորվում էր զորքով օգնել մոնղոլական նվաճումներին, սակայն մինչև 1259 թ. ռազմական որևէ գործողության չի մասնակցում:

5) 1259-1260 թթ. - Երկու պետությունները հանգամանքների բերումով հայտնվում են թշնամական երկու ճամբարներում՝ գործիք դառնալով հանդիսանալով մոնղոլ-մամլուք մեծ հակամարտության մեջ: Կիլիկյան զորքի մասնակցությամբ մոնղոլները գրավեցին Հյուսիսային Սիրիան, 1260 թ. հունվարի 24-ին գրավվեց Հալեպը, իսկ ալ-Մալիք ան-Նասիրը գերվեց ու մահապատժի ենթարկվեց: Դրանով իսկ վերջ դրվեց Հալեպի Այյուբյան սուլթանությանը: Ապա Եգիպտոսի մամլուքներն ետ խլելով Սիրիան՝ այստեղ վերացնում են Այյուբյանների բոլոր հետքերը:

Այս հոդվածը բնավ չի հավակնում վերջնական խոսք ասել Կիլիկյան Հայաստան - Հալեպի Այյուբյան սուլթանություն կապերի վերաբերյալ: Մանավանդ որ, բացի քաղաքական հարաբերություններից, շատ սերտ են եղել նաև առևտրատնտեսական հարաբերությունները: Սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունը նոր շերտեր կարող է ի հայտ բերել երկու հարևան պետությունների գրեթե 70-ամյա փոխհարաբերություններում:

ВААН ТЕР-ГЕВОНДЯН
ИИ НАН РА

КИЛИКИЙСКОЕ АРМЯНСКОЕ ЦАРСТВО И АЛЕППСКИЙ СУЛТАНАТ: ВЗАИМООТНОШЕНИЯ СОЮЗНИКОВ

РЕЗЮМЕ

Сразу после смерти Салах ад-Дина Аййубида основанное им огромное государство было разделено между его братом и тремя сыновями. Один из них — Ал-Малик аз-Захир создал отдельный султанат на севере Сирии с центром в Алеппо, просуществовавший с 1193 г. до 1260 г. — вплоть до захвата Алеппо монголами.

Находясь в непосредственной близости от Киликийского армянского государства, алеппские Аййубиды то воевали с ним, то держали нейтралитет. Когда же интересы соседних стран совпадали, как это было в течение одного десятилетия (1216-1226), между султанатом и армянским царством налаживались взаимопомощь и военное сотрудничество.

В статье рассматриваются взаимоотношения двух соседних государств в вышеизложенный период на основании армянских, арабских и сирийских источников. Среди них особо ценными являются сведения арабского историка 13-го в. Ибн ал-Асира, а также продолжателя армянского варианта "Хронологии" Михаила Сирийца. В статье также делается попытка периодизации почти 70 лет взаимоотношений Киликийского царства и Алеппского султаната (с делением на 5 основных этапов).

ԶՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (XIII-XIV ԴԴ.)

Միջնադարում միջերկրածովյան առևտրի կազմակերպումն իրականացվել է ընդգրկուն կառուցվածք ունեցող մեթոդների մի ամբողջ համակարգի միջոցով: Խնդրո առարկա ուսումնասիրության շրջանակը ներառում է քննարկվող ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանում ընթացող միջազգային առևտրային ապրանքաշրջառության մեջ կիրառված բազմաբնույթ գործարքների ու պայմանագրերի, ինչպես նաև դրանց համար օգտագործված տարբեր փաստաթղթերի հանգամանալի հետազոտությունը:

Նկատենք, որ սկզբնաղբյուրներում Կիլիկիայի հայ վաճառականության օգտագործած՝ միջազգային առևտրի կազմակերպմանը վերաբերող տեղական ծագման մեթոդների մասին վկայությունների գրեթե չենք հանդիպել: Կիլիկյան Հայաստանը միայն XIII դ. սկզբում սկսեց լիարժեքորեն ընդգրկվել միջերկրածովյան առևտրում, որտեղ առևտրի կազմակերպումը մինչ այդ արդեն հարյուրամյակների ավանդույթներ ուներ: Ամենևին պատահական չէ, որ սույն հետազոտության համար անհրաժեշտ հիմնական և անփոխարինելի սկզբնաղբյուրները կիլիկյան ու կիպրական քաղաքներում գրառված, ապա եվրոպական դիվաններ տեղափոխված ջենովական ու վենետիկյան նոտարական գործերն են: Հայ վաճառականության առևտրային գործունեությանը, նրանց կիրառած առևտրի կազմակերպման տեխնիկային աղերսվող իրավական փաստաթղթերը հավանաբար ուղարկվում էին Կիլիկիո թագավորության արքունական արխիվ, որը մի քանի անգամ այրվել է մամլուքների կողմից՝ 1266, 1275 և վերջնականապես 1375 թթ.: Ցավոք, շուրջ երեքհարյուրամյա փառավոր պատմությամբ հայկական թագավորության պետական դիվանից մեզ են հասել ընդամենը 6 բնագիր, որոնք պահպանվել են եվրոպական արխիվներում[1]: Միաժամանակ, վերոնշյալ իտալական նոտարական սկզբնաղբյուրներում հայ առևտրականների մասին եղած հիշատակությունների սակավությունը կարելի է բացատրել նրանով, որ վերջիններս, ամենայն հավանականությամբ, խուսափում էին հավելյալ ծախսերից և այլազգիների հետ գործարքներ

[1] Տե՛ս Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դարերում, Ե., 1973, էջ 25-26:

կնքելիս չէին դիմում եվրոպացի նոտարական գործակալների ծառայությանը:

XII-XIII դդ. միջազգային առևտրի կազմակերպման՝ գլխավորապես արևմտաեվրոպական ծագում ունեցող եղանակների ամբողջ տեսականին, նույն կառուցվածքային բովանդակությամբ, հաջողությամբ ներդրվել է միջերկրածովյան և սևծովյան ավազանների երկրներում: Դրանց տարածողներն ու ներդրողները հենց եվրոպացի առևտրականներն էին, որոնց անդրծովյան վաճառականական մեծաքանակ համայնքների ցանցերը եթե ոչ մենաշնորհային, ապա առանցքային դերակատարում ունեին Արևելք-Արևմուտք առևտրային փոխհարաբերություններում: XII-XIV դդ. Եվրոպայում ընթացող ֆինանսատնտեսական աննախադեպ փոփոխություններն անդրադարձել էին նաև միջազգային առևտրի իրականացման մեթոդների վրա: Դրանցում առանձնահատուկ դերակատարում ունեին վաճառականական միությունները, որոնց կիրառման գլխավոր ոլորտը մեծ ծավալների ծովային առևտուրն էր: XIII-XV դդ. հյուսիս-եվրոպական պետություններին բնորոշ էին առավել կայուն, երկարաժամկետ վաճառականական միավորումները՝ գիլդիաները, մինչդեռ հարավ-եվրոպական երկրների առևտրային գործունեությանը հատուկ էին կարճաժամկետ պայմանագրային միությունները: Ի դեպ, անտիկ և միջնադարյան ժամանակաշրջաններում միջերկրածովյան առևտրում օգտագործված միությունների կառուցվածքային բազմաթիվ ներքին ընդհանրությունները խոսում են դրանց ժառանգական կապի մասին[1]:

XIII-XIV դդ. միջազգային առևտրում լայն տարածում ստացած վաճառականական միություններից կարևոր նշանակություն ունեին «ընկերությունները» (societates), որոնց թվին էր պատկանում հանրահայտ կոմմենդան (commenda, comanda, accomandatione, collegantza): Չնայած կառուցվածքային շատ տարբերություններին՝ կոմմենդայի ծագումը սերտորեն կապված էր միջերկրածովյան առևտրում նախկինում օգտագործված տարբեր միությունների ավանդույթների հետ: Մասնավորապես՝ դրանցից էին հին հռոմեական «nauticus fenus»-ը, բյուզանդական «chreokoinonia»-ն, հրեա և արաբ վաճառականների գործածած «isqa»-ն, «qirad»-ը և այլն[1]: Կոմմենդայի մասին առաջին հիշատակությունները վերաբերում են Իտալիային՝ սկսած X դարից: Հարմարվելով արագ փոփոխվող շուկայական հարաբերություններին՝ այն լայն տարածում գտավ միջազգային առևտրում և իր զարգացման գագաթնակետին հասավ XIII դ. կեսերին և XIV դ. սկզբներին[2]: Սա բաժնետիրական, կարճաժամկետ պայմանագրային յուրահատուկ ընկերություն էր, որտեղ գործընկերներից մեկը՝ կոմմենդատորը (commendator) գործարքում կապիտալի միակ կամ էլ գլխավոր ներդրողն էր: Մյուս մասնակիցն անվանվում էր տրակտատոր (tractator), որը ներդրված միջոցները ստանալուց հետո առևտրական գործունեություն պետք է ծավալեր նախապես պայմանավորված որևէ վայրում: Կոմմենդատորի ներդրած միջոցները կարող էին լինել ինչպես դրամական, այնպես էլ ապրանքի տեսքով: Սովորաբար կոմմենդայի յուրաքանչյուր գործարք սահմանափակվում էր առևտրի նպատակներով իրականացվող ծովային մեկ ճամփորդությամբ: Վերադառնալուն պես տրակտատորը պարտավոր էր վերադարձնել կոմմենդատորի ներդրած գումարը, ինչպես նաև շահույթի մի մասը՝ ըստ նախապես պայմանավորված բաշխման հարաբերության: Հավելենք, որ եթե կոմմենդատորները հիմնականում առավել հարուստ խավի ներկայացուցիչներից էին, ապա որպես տրակտատորներ հանդես էին գալիս ոչ միայն խոշոր և մանր ձեռներեցները, այլև՝ արհեստավորներն ու հասարակ քաղաքացիները: Հատկանշական է, որ հարավ-եվրոպական երկրներում բավական ակտիվ տրակտատորներ էին նաև նավատերերը[3]: Հետազոտողներն առանձնացրել են կոմմենդայի երկու

[1] Տե՛ս **Тушина Г.**, Из истории средиземноморских торговых объединений (Античность и средние века) // Страны Средиземноморья в эпоху феодализма, Вып. 2, Горький, 1975, с. 20-21. Տե՛ս նաև՝ **Тушина Г.**, Марсельские торговые объединения XIII века // Страны Средиземноморья в эпоху феодализма, Вып. 1, Горький, 1973, с. 39. **Луццатто Дж.**, Экономическая история Италии. Античность и средние века, пер. Абрамсон М. Л., М., 1954, с. 105, 367-369. **Карпов С.**, Итальянские морские республики и Южное Причерноморье в. XIII-XV вв.: проблемы торговли, М., 1990, с. 176-177.

[1] Տե՛ս **Pryor J.**, The Origins of the *Commenda* Contract // Speculum, V. LII, N 1, Massachusetts, 1977, pp. 10, 22-35. Տե՛ս նաև՝ **Stöckly D.**, Le système de l'Incanto des galées du marché à Venise (fin XIIIe-milieu XVe siècle), Leiden, Brill, 1995, pp. 48-49. **Reyerson K.**, Commerce and Communications // The New Cambridge Medieval History, V. 5, c. 1198-c. 1300, ed. D. Abulafia, Cambridge University Press, 1999, pp. 64-65. **Hunt E. S., Murray J. M.**, A History of Business in Medieval Europe, 1200-1550, Cambridge, 1999, p. 61.

[2] Տե՛ս **Дживелегов А.**, Торговля на Западе в средние века, СПб., 1904, с. 131. Տե՛ս նաև՝ **Карпов С.**, Контракт комменды в итальянской торговле в Южном Причерноморье (XIII-XV вв.) // Византийский временник, Т. 48, с. 25-26.

[3] Տե՛ս **Postan M.**, Medieval Trade and Finance, Cambridge University Press, 1973, pp. 68-83. Տե՛ս նաև՝ **Луццатто Дж.**, указ. соч., с. 105, 367-369. **Тушина Г.**, Марсельские торговые объединения XIII века, с. 43, 53. **Карпов С.**, Итальянские морские республики и Южное Причерноморье в. XIII-XV вв.: проблемы торговли, с. 179-180.

տեսակ՝ միակողմանի և երկկողմանի: Գլխավոր սկզբունքը, որը պայմանավորում էր այս երկու ձևերի միջև եղած տարբերությունը, գործարքում արված ներդրումի չափն էր: Եթե տրակտատորը որևէ ներդրում չէր կատարում, ապա նա կարող էր կնքել միայն միակողմանի պայմանագիր: Այս դեպքում կոմմենդատորը ստանում էր շահույթի 3/4-ը և միաժամանակ իր վրա վերցնում ներդրված կապիտալի ապահովության ողջ պատասխանատվությունը. համապատասխանաբար՝ տրակտատորը ստանում էր շահույթի 1/4-ը (երբեմն էլ՝ 1/6, 1/5 կամ 1/3) և չէր կրում որևէ պատասխանատվություն: Երկկողմանի կոմմենդայում, որն անվանվել է նաև «ծովային ընկերություն» (societas maris), կախված տրակտատորի իրականացրած ներդրումի չափից, շահույթը կարող էր բաշխվել նույնիսկ հավասարապես, իսկ կոմմենդատորը ստանձնում էր կապիտալի հնարավոր կորուստի 2/3-ի պատասխանատվությունը: Մինչ առևտրային ուղևորության մեկնելը, տրակտատորը ձգտում էր իր ձեռնարկման մեջ ներգրավել ավելի շատ ներդրողների՝ հետագայում խոշոր շահույթ ապահովելու ակնկալիքով: Մի քանի կոմմենդատորով ձևավորված միությունները սկզբնաղբյուրներում արտահայտված են «accomendatio sive (seu) societas» ձևով, իսկ հետազոտողների կողմից անվանվել են բազմակողմանի կոմմենդա: Այս դեպքում համեմատաբար քիչ ներդրում իրականացնողն էլ ստանձնում էր տրակտատորի պարտականությունները: Կառուցվածքային առումով նման ընկերությունների և կոմմենդայի ավելի պարզ գործարքների միջև շոշափելի տարբերություններ չկային[1]: Միջնադարյան առևտրի պատմության հայտնի հետազոտող Դ. Ստոկլին բերում է պայմանագրային միության ևս մի օրինակ, որը կոչվում էր «եղբայրական ընկերություն» (fraternal compagnia): Այստեղ հիմնականում մասնակցում էին միևնույն ընտանիքի անդամները, որոնք կարող էին գործել միմյանցից հեռու գտնվող տարբեր երկրներում[2]:

Այասում գործած ջենովացի նոտարական գործակալներ Պեդրո դե Բարգոնեյի և Ֆեդերիկո Պիացցալունգայի՝ երեք տարիների ընթացքում կազմած փաստաթղթերի հավաքածուում կարելի է

[1] Տե՛ս **Pryor J.**, նշվ. աշխ., pp. 6-8, 10-11. Տե՛ս նաև՝ **Stöckly D.**, նշվ. աշխ., pp. 45-47. **Reyerson K.**, նշվ. աշխ., pp. 64-65. **Карпов С.**, Итальянские морские республики и Южное Причерноморье в. XIII-XV вв.: проблемы торговли, с. 179, 187-188. **Тушина Г.**, Марсельские торговые объединения XIII века, с. 51, 53-57. **Дживелегов А.**, указ. соч., с. 131.

[2] Տե՛ս **Stöckly D.**, նշվ. աշխ., pp. 47-48.

գտնել կոմմենդայի 45 գործարք[1], որոնցից 13-ը «accomendatio sive societas» կամ բազմակողմանի են, իսկ 32-ում գրանցված են մեկական կոմմենդատոր և տրակտատոր (այսինքն՝ միակողմանի կամ երկկողմանի կոմմենդաներ): Ընդ որում, եթե 1274 թ. «accomendatio sive societas»-ի դեպքերը բավական շատ են (10), ապա 1277 և 1279 թթ. դրանց թիվը ընդամենը 3 է: Պայմանագրերում մասնակցել են արևմտաեվրոպական բազմաթիվ քաղաքներից ժամանած տարբեր խավի ու մասնագիտությունների տեր անձինք, մինչև իսկ՝ հոգևորականներ: Կոմմենդայի հիշյալ ձևերում և՛ շահույթի բաշխման չափը, և՛ ներդրված կապիտալի բնույթը խայտաբղետ են: Նախ՝ անդրադառնանք միակողմանի և երկկողմանի կոմմենդաներին: Այստեղ 32 գործարքից 11-ում ներդրումներն արվել են զանազան ապրանքներով՝ երկաթ, արծաթ, ցորեն, գարի, պղպեղ, բամբակ, մետաքս, մահուդ, կտավ, վուշ և այլն: Այլ կոմմենդաներում ներդրումներն իրականացվել են ինչպես հայկական, այնպես էլ օտարերկրյա դրամական միավորներով: Շահույթի բաշխման չափաբաժինները նույնպես տարբեր են, որոնցից կարելի է երևան հանել գործարքի միակողմանի կամ երկկողմանի լինելը: Առավել տարածված էր 1/4-ի հարաբերությունը[2], (իտալ. al quarto del proffito, լատ. ad quartum proficui)[3], սակայն հանդիպում են նաև 1/3-ի (իտալ. al terzo del proffito, լատ. tercia parte lucri)[4], 1/2-ի (իտալ. alla metà del proffito,

[1] Տե՛ս **Balletto L.**, Notai Genovesi in Oltremare, atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279), Genova, 1989, A. N 1, 2, 12, 16, 17, 19, 21, 23, 24, 25, 31, 40, 63, 70, 72, 73, 74, 77, 82, 85, 88, 93, 94, 95, 108. B. N 6, 17, 20, 43, 48, 51, 52, 53, 70, 84, 87, 88, 94, 125, 133, 134, 135, 137. Տե՛ս նաև՝ **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aias (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois // Archives de l'Orient latin, T. I, Paris, 1881, pp. 443-449, 455, 468, 472-478, 485-486, 500, 507-509, 512, 528, 532-534.

[2] Սկզբնաղբյուրներում շահույթի բաշխման հարաբերությունն արտահայտված է տրակտատորին բաժին ընկնող մասով, ուստի մենք ևս կառաջնորդվենք նույն սկզբունքով:

[3] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 19, 31, 40, 72, 73, 74, 82, 85, 108, B. 43, 84, 87, 88, 125, 133, 137. Տե՛ս նաև՝ **Ferretto A.**, Codice diplomatico delle relazioni fra la Liguria, la Toscana e la Lunigiana ai tempi di Dante (1265-1321), parte prima (dal 1265-1274) // Atti della Societa ligure di storia patria, XXXI.1, Genova, 1901, p. 289.

[4] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 94, B. 48. Տե՛ս նաև՝ **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aias (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois, pp. 485-486.

լատ. medietate lucri)[1] և նույնիսկ «առանց որևէ շահույթի» (senza proffito, nullo proficuo)[2] ու «անհատույց» (gratis et amore)[3] ձևակերպված կոմմենդայի տարբերակներ, իսկ երբեմն էլ բաշխման հարաբերությունը պարզապես նշված չէ[4]: Վերը բերված տվյալներից պարզ է դառնում, որ գործարքներում գերակշռում են միակողմանի պայմանագրերը: «Accomendatio sive societas» կամ բազմակողմանի կոմմենդաներում գերակշռում է շահույթի բաժանման 1/4-ի հարաբերությունը, սակայն հանդիպում են նաև 1/2-ի տարբերակներ[5], իսկ որոշ դեպքերում այն ուղղակի չի ամրագրվել[6]:

Այասում կնքված բոլոր տեսակի կոմմենդաներում առևտրային գործողությունների իրականացման աշխարհագրական ուղղությունները բազմակողմանի են: Դրամը կամ ապրանքը ստանալուց հետո տրակտատորները մեկնել են Սեբաստիա, Աքքա, Բեյրութ, Տյուրոս, Դամիետա, Ալեքսանդրիա, ինչպես նաև Վենետիկ, Ջենովա, Մարսել, Մոնպելիե, Բարսելոն և եվրոպական այլ քաղաքներ: 1274 թ. փետրվարի 7-ի մի պայմանագրում ասվում է, որ իտալական Լուկա քաղաքից ժամանած Ֆեդերիկո Արնալդին Անդրիոլո Ռասպերիոյից Այասում 400 հայկական նոր դրամի[7] բազմակողմանի կոմմենդայի ներդրում (շահույթի 1/4-ի բաժանման պայմանով) ստանալուց հետո պետք է ուղևորվեր Բեյրութ, Կապո Բիանկո (բնակավայր Տյուրոսի մոտակայքում), իսկ հետո հավանական էր նաև Դամասկոս: Նույն թվականի փետրվարի 17-ին պիզացի տրակտատոր Ջովաննի դե Սալան 2400 հայկական նոր դրամի բազմակողմանի կոմմենդայի

[1] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., B. 134, 135. Տե՛ս նաև՝ **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aias (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois, pp. 532-534.

[2] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 70. Տե՛ս նաև՝ **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aias (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois, p. 473.

[3] Տե՛ս նույն տեղում, B. N 20.

[4] Տե՛ս նույն տեղում, A. N 12, 16, 25, 77, B. N 17, 51, 53, 70, 94.

[5] Տե՛ս նույն տեղում, A. N 17, 21, 63, 88, 93, 95, B. N 6.

[6] Տե՛ս նույն տեղում, A. N 1, 2, 23.

[7] Հայկական նոր դրամը սկսել է հատվել Լևոն Գ-ի (1269–1289 թթ.) գահակալության շրջանում: Այն Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական հարաբերություններում ամենից շատ օգտագործված դրամական միավորներից էր: Դրանք 2,9 գրամ կշռով արծաթյա դրամներ էին: Հետագայում՝ XIV դ. առաջին քառորդում նոր դրամի արծաթի պարունակությունը նվազեցվել է, որի հետ միաժամանակ այն սկսել է արժեզրկվել (տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 385: Տե՛ս նաև՝ **Պտուկեան Զ.**, Կիլիկեան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963, էջ 58-59):

ներդրումն օգտագործելու էր Կիլիկյան Հայաստանի, Ասորիքի և Եգիպտոսի ափերով (per riperiam Armenie, Syrie et Egipti) առևտուր անելու համար[1]: Գործարքներում պայմանների իրագործման վերջնաժամկետները հազվադեպ են ամրագրված, օրինակ՝ 1277 թ. օգոստոսի 26-ի փաստաթղթում տրակտատորն իրեն տրված գումարը հատուցելու էր մինչև Ծննդյան տոներ (usque festum Nativitatis Domini), իսկ մի այլ տեղում նշված է ութօրյա ժամկետը[2]:

1296-1310 թթ. Ֆամագուստայում արձանագրված նոտարական փաստաթղթերում գրանցված են Կիլիկյան Հայաստան ուղղված 77 կոմմենդա՝ 133444 սպիտակ բյուզանդ[3] և 748 լիվր[4] ընդհանուր գումարով, որի կեսից ավելին ներդրվել է զանազան ապրանքների տեսքով[5]: Դրանցում մեծ չափաբաժին ուներ հացահատիկը

[1] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 17, 21.

[2] Տե՛ս նույն տեղում, B. N 6, 70.

[3] Կիպրոսի թագավորության հիմնական դրամական միավորը՝ սպիտակ կոչված ոսկե բյուզանդը կշռել է 3,87 գր. (տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսուան, էջ 383-385: Տե՛ս նաև՝ **Պտուկեան Զ.**, նշվ. աշխ., էջ 58-59)

[4] Սկզբնաղբյուրներում ջենովական լիվրի և հայկական նոր դրամի փոխարժեքը բավական փոփոխական է: 1274 թ. տվյալներով՝ 10 լիվրին համապատասխանում էր 177 նոր դրամ, իսկ 1296 թ. համար նշված է 1 լիվրի դիմաց 23 դրամ փոխարժեքը (տե՛ս **Balard M.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (11 ottobre 1296- 23 giugno 1299), Genova, 1983, N 20. Տե՛ս նաև՝ **Պտուկեան Զ.**, նշվ. աշխ., էջ 58-59:)

[5] Տե՛ս **Balard M.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (11 ottobre 1296- 23 giugno 1299), N 2, 6, 23, 43, 63, 79, 153. Տե՛ս նաև՝ **Balard M.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (31 marzo 1304 – 19 luglio 1305, 4 gennaio- 12 luglio 1307), Giovanni de Rocha (3 agosto 1308- 14 marzo 1310), Genova, 1984, A. N 22, 34. B. N 55, 70, 73, 135. C. N 45, 75. **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio-27 ottobre 1301), Genova, 1982, N 85, 121, 158, 225, 226, 227, 228, 229, 236, 237. **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (gennaio-agosto 1302), Genova, 1987, N 9, 18, 114, 120, 135, 136, 138, 147, 174, 205. **Polonio V.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio 1300-3 agosto 1301), Genova, 1983, N 39, 49, 56, 78, 91, 96, 112, 125, 143, 159, 206, 214, 222, 224, 228, 238, 282, 368, 370, 378, 401, 404. **Desimoni C.**, Actes passés à Famaguste de 1299 à 1301 par devant le notaire génois Lamberto di Sambuceto // Archives de l'Orient latin, T. II, Paris, 1884, pp. 30-32, 58-59, 77, 112. Annali storici di Sestri Ponente e sue famiglie (dal secolo VII al secolo XV) // Atti della Società Ligure di storia Patria, V. XXXIV, Genova, 1904, pp. 185-187. **Otten-Froux C.**, Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Clilicie d'après les actes notariés (1270-1320) // L'Arménie et Byzance, publications de la Sorbonne, 1996, pp. 165-166.

(մոտ 30 %). Շրջանառված են նաև մահուդ, կտավ, ցփսի, տարբեր մետաղներ, օճառ, ձիթապտղի ձեթ և այլն: Գերակշիռ մեծամասնություն ունեին շահույթի բաշխման 1/4-ի հարաբերությամբ գործարքները, սակայն հանդիպում են նաև 1/3-ի և նույնիսկ 1/6-ի դեպքերը, որոնք նույնպես միակողմանի կոմմենդաներ էին: Կան նաև «առանց շահույթի» և «անհատույց» ձևակերպված տեսակներ: Կիպրական մուրհակներում գրեթե բացակայում են բազմակողմանի կոմմենդաները: Ներդրումների միջին չափը 1000, իսկ առավելագույնը 14000 սպիտակ բյուզանդ է: Միայն 12 գործարքներից յուրաքանչյուրում կատարված են ավելի քան 3000, 12-ում՝ 2000-3000, 15-ում՝ 1000-2000, իսկ մնացածում՝ մինչև 1000 սպիտակ բյուզանդի ներդրումներ: Քիչ չեն նաև հայկական նոր դրամով ամրագրված կոմմենդաները (առավելագույնը՝ 19593 (կամ 5290 սպիտակ բյուզանդ), նվազագույնը՝ 2000 (540 սպիտակ բյուզանդ) հայկական նոր դրամ): Պայմանների կատարման վերջնաժամկետների միջին տևողությունը մոտ մեկ ու կես ամիս է: 16 կոմմենդաներում որպես ժամանման վայր ընտրվել է Այասը, 7-ում հիշատակված է Տարսոնը, իսկ 2-ում՝ Կոռիկոսը: Մյուս դեպքերում պարզապես նշված է, որ վաճառականը մեկնելու է Կիլիկյան Հայաստան: Սովորաբար Կիլիկյան Հայաստան այցելելուց և ծրագրված առևտուրն անելուց հետո նավն, արդեն նոր բարձված ապրանքով, պետք է շարունակեր իր ճանապարհորդությունը դեպի եվրոպական որևէ քաղաք:

Նոտարական գործերում հանդիպում է գործարքի ևս մի տեսակ, որն արտահայտված է «in zaterio» ձևով: Հազվադեպ օգտագործված այս պայմանագիրը կնքվել և կիրառվել է նույն սկզբունքով, ինչպես կոմմենդան[1]:

Միջնադարյան առևտրի կազմակերպման կարևորագույն միջոցներից մեկը կրեդիտը կամ փոխառությունն էր: Եվրոպայում և միջերկրածովյան շատ երկրներում, այդ թվում և Կիլիկյան Հայաստանում օգտագործվում էին փոխառության տարբեր տեսակներ: Այսպես կոչված «ուղիղ» փոխառությունները (in mutuo, mutuum) խստորեն դատապարտվում էին Կաթոլիկ եկեղեցու կողմից և ընդունվում որպես վաշխառություն (usura): Այդ իսկ պատճառով դրանք, որպես կանոն, ներկայացվում էին իբրև «անհատույց» կամ քողարկվում թույլատրելի այլ ձևերով, որոնցից առավել տարած-

[1] Տե՛ս **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio-27 ottobre 1301), N 10, 65. Տե՛ս նաև՝ **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (gennaio-agosto 1302), N 110, 165.

ված էր «ծովային փոխառությունը»[1]: XIII դ. սկզբին իտալական առևտրում փոխառությունները տրվում էին տարեկան 20-25 %-ով, իսկ ծովային փոխառության դեպքում այն էլ ավելի բարձր էր՝ հասնելով մինչև իսկ 40-50 %-ի: Հետագայում ներդրումների մեծ հոսքի շնորհիվ տոկոսադրույքը նվազում է մինչև 5-8 %: Չնայած միջերկրածովյան առևտրում ծովային փոխառության լայն գործածությանը՝ XIII դ. կեսերից այն աստիճանաբար սկսում է դուրս մղվել՝ իր տեղը զիջելով կոմմենդային[2]:

Թվում է, թե Կիլիկյան Հայաստանը բավական հեռու էր Կաթոլիկ եկեղեցու այդօրինակ հսկողության սահմաններից, սակայն, այդուհանդերձ, Այասում կազմված փոխառությունները նույնպես իտալացիները կազմել են ամենայն զգուշությամբ: 1274 թ. Այասում կազմված նոտարական գործերում կան 13 ուղիղ փոխառություններ, ընդ որում՝ «անհատույց» (gratis et amore) ձևակերպված պայմանագրերում, թվային տվյալների բացակայության պատճառով, վճարվելիք տոկոսադրույքի չափն անհնար է բացահայտել[3]: Բացառիկ է 1300 թ. մարտի 13-ին Ֆամագուստայում կնքված գործարքը, որի համաձայն՝ Սիցիլիայի Մեսինա քաղաքից ժամանած վաճառական Պեդրո Վիդալին իբրև «անհատույց» ձևակերպված 1555 հայկական Պեդրո Վիդալին իբրև «անհատույց» ձևակերպված 1555 հայկական նոր դրամի ուղիղ փոխառություն էր տվել Կիլիկյան Հայաստանի բնակիչներ Սիրոն (Սիրո՞ւն, Sironus), Կարեն (Carenus) և Մեգալ (Megal) անուններով հայ առևտրականներին, ովքեր պարտքը պետք է վերադարձնեին իրենց հայրենիքում[4]: Գործարքներում պարտավորությունների իրականացման վերջնաժամկետները նույնպես

[1] Տե՛ս **Le Goff J.**, Usurai e Purgatorio // Lálba della banca: le origini del sistema bancario tra medioevo ed età moderna, Curato da: Lopez R. S., Le Goff J., Bari : Dedalo, 1982, pp. 33-34. Տե՛ս նաև՝ **Карпов С.**, И тальянские морские республики и Южное Причерноморье в. XIII-XV вв.: проблемы торговли, с. 200. **De Roover R.**, Le marché monétaire au Moyen Age et au début des temps modernes : Problèmes et méthodes // Revue historique, T. CCXLIV, Paris, 1970, pp. 5-6. **Reyerson K.**, նշվ. աշխ., pp. 64-65. **Postan M.**, նշվ. աշխ., pp. 11-13. **Canale M. G.**, Nuova istoria della Republica di Genova, del suo commercio e della sua litteratura, dale origini all'anno 1797, V. 2, Firenze, 1860, pp. 611-617.

[2] Տե՛ս **Луццатто Дж.**, указ. соч., с. 368-369. Տե՛ս նաև՝ **Stöckly D.**, նշվ. աշխ., p. 45.

[3] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 7, 9, 11, 22, 26, 27, 36, 42, 44, 47, 47a, 48, 79. Տե՛ս նաև՝ **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aias (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois, pp. 444-447, 452, 456-459, 476.

[4] Տե՛ս **Desimoni C.**, Actes passés à Famaguste de 1299 à 1301 par devant le notaire génois Lamberto di Sambuceto, p. 47.

տարբեր էին: Մասնավորապես՝ դրանցից երկուսում ասվում էր, որ փոխառությունը կհատուցվի պարտատուի ցանկանալուն պես: 1274 թ. մարտի 12-ին Այասում կազմված պայմանագրի համաձայն՝ Պեդրո Լեկավալլոն Ջիրարդինո դի Սանտա Անդրեայից ստացել է 112,5 աքքայան բյուզանդի[1] չափով փոխառություն, որը պետք է վերադարձվեր 15 օրվա ընթացքում: Նույն թվականի մարտի 14-ի գործարքում խանութատերեր Տոբիասն ու Պեդրոն Բարոնո Քսեբեյից ստացած 428 հայկական նոր դրամի պարտքը պարտավորվում էին վճարել մեկուկես ամսվա ընթացքում: Մեկ այլ դեպքում 200 հայկական նոր դրամի հատուցման վերջնաժամկետը մեկ տարի էր[2]:

Վենետիկյան և ջենովական նոտարական փաստաթղթերում կան տասնյակ պայմանագրեր, որոնցում նշված չէ ուղիղ փոխառություններին հատուկ «in mutuo» արտահայտությունը: Բոլոր նմանատիպ գործարքներում ամրագրվել է, որ պարտք տրված գումարը պետք է հատուցվեր դրամի փոխանցման՝ այսպես կոչված կամբիոյի (cambio, իտալ. փոխանակություն) տարբերակով: Փոխառության այս ձևն անվանվել է «ծովային փոխանակություն» (cambium maritimum), որը 1250-ականից շրջանառությունից աստիճանաբար դուրս եկող «ծովային փոխառության» հմտորեն քողարկված տարբերակն էր: Ի դեպ, այդ քողարկումն իրականացվում էր շատ պարզ եղանակով: Այսպես, մի երկրում պարտք տրված գումարը պարտատուն ստանում էր մի այլ երկրում: Փոխանցման արդյունքում՝ այդ երկրների դրամական տարբեր միավորների փոխարժեքային հնարավոր տարբերությունից անխուսափելիորեն գոյացող գումարն էլ փոխառություն տվող անձի ակնկալած շահույթի գլխավոր գրավականներից էր[3]: Այասում ձևակերպված՝ «ծովային փոխանակություններին» վերաբերող բոլոր պայմանագրերում գերակշռում են դեպի Եգիպտոս, հատկապես՝ Դամիետտա քաղաքն ուղղված գործարքները, որոնց մեծ մասում մասնակցել են պիզացի վաճառականները: Պայմանավորվածությունների իրագործման վերջնաժամկետները տատանվում էին 15 օրից մինչև մեկ ամսի սահմաններում: Պայմանագրերին կարող էին մասնակցել մեկից ավելի պարտատուներ: Օ-

[1] Աքքա քաղաքի անունը կրող բյուզանդն ուներ 3,3 գր. կշիռ, որի 65%-ը ոսկի էր (տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսուան, էջ 385: Տե՛ս նաև՝ **Պտուկեան Զ.**, նշվ. աշխ., էջ 57:)

[2] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 7, 9, 44, 79.

[3] Տե՛ս **Hodgett G.**, A Social and Economic History of Medieval Europe, London, Methuen, 1972, pp. 63-64. Տե՛ս նաև՝ **Cipolla C. M.**, Before the Industrial Revolution: European Society and Economy, 1000-1700, New York, 1994, pp. 185-186. **Otten-Froux C.**, Les relations èconomique entre Chypre et le Royaume Arménien de Clilicie d'après les actes notariés (1270-1320), p. 166.

րինակ, 1274 թ. մարտի 19-ի գործարքում ասվում էր, որ սավոնացի Անսալդո Գարսիան Բաքոնո Մուքսիրիֆոյից և Ջովաննի Կորբուլոյից ստացել էր հայկական նոր դրամի ինչ-որ որ քանակություն և խոստացել հատուցել 300 բաբելոնյան հին ոսկյա բյուզանդ[1] գումարի տեսքով (ընդ որում, 100-ը՝ Բաքոնոյին, իսկ 200-ը՝ Ջովաննիին)՝ 20 օրվա ընթացքում, երբ իր նավը կժամաներ Դամիետտա[2]: Այասում տրված և Եգիպտոսում հատուցվելիք գումարները հաշվարկված են բաբելոնյան հին ոսկե բյուզանդ դրամական միավորով (առավելագույնը՝ 300, իսկ նվազագույնը 10 բյուզանդ), Աքքայում՝ այդ քաղաքի անունը կրող ոսկե սառակիևոսյան բյուզանդով, Կիպրոսի պարագայում՝ սպիտակ բյուզանդով և այլն[3]: 1317-1318 թթ. վենետիկյան նոտարական փաստաթղթերում առանձնացվում են Այաս-Կիպրոս ուղղություն ունեցող «ծովային փոխանակության» 5 պայմանագիր՝ 8983 հայկական նոր դրամ ընդհանուր գումարով[4]: Կիպրական քաղաքներում ջենովացի նոտարական գործակալներ Լամբերտո դե Սամբուչետոյի և Ջովաննի դե Ռոքայի կազմած «ծովային փոխանակություններում» կան Կիլիկյան Հայաստան ուղղված 20 պայմանագիր՝ 15719 սպիտակ բյուզանդ ընդհանուր գումարով, որոնցում պարտք տրված գումարի միջին չափը 500 սպիտակ բյուզանդ է (առավելագույնը՝ 2250, նվազագույնը՝ 47)[5]:

Լայն կիրառություն ուներ այսպես կոչված «պարտքով կամ փոխառությամբ գնումը»: Կրեդիտի մյուս տեսակներից վերջինիս միակ տարբերությունն այն էր, որ այս դեպքում պարտքը տրվում էր ոչ թե դրամի, այլև ապրանքի տեսքով[6]: Փոխառության այս ձևի օրինակները սփռված են Այասում կազմված իտալական նոտարական սկզբնաղբյուրներում, որոնցում շրջանառվել են տարատեսակ ապ-

[1] Ծեն բյուզանդի այս տեսակը չի հիշատակվում Ղ. Ալիշանի կողմից, սակայն նա խոսում է Ալեքսանդրիայի սառակիևոսյան ոսկե բյուզանդ կոչված դրամական միավորի մասին, որը կշռել է 4,1 գր. (տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսուան, էջ 385:)

[2] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 92.

[3] Տե՛ս նույն տեղում, A. N 28, 29, 32, 33, 49, 50, 53, 55, 58, 59, 68, 92, 99, 100, 101, 104, 106.

[4] Տե՛ս **Bondi Sebellico A.**, Felice de Merlis, prete e notaio in Venezia ed Ayas, 1315-1348, V. 1, Venezia, 1973, N 82, 86, 87, 89, 97. Տե՛ս նաև՝ **Otten-Froux C.**, Les relations èconomique entre Chypre et le Royaume Arménien de Clilicie d'après les actes notariés (1270-1320), p. 166.

[5] Տե՛ս **Otten-Froux C.**, Les relations èconomique entre Chypre et le Royaume Arménien de Clilicie d'après les actes notariés (1270-1320), p. 166.

[6] Տե՛ս **Postan M.**, նշվ. աշխ., pp. 5-6. Տե՛ս նաև՝ **Карпов С. П.**, Кредит в системе итальянской торговли в Южном Причерноморье (XIII-XV вв.) // Византийский временник, 1988, т. 49, с. 44-45.

րանքներ՝ երկաթ, ոսկի, արծաթ, թանկարժեք քարեր, մահուդ, մետաքս, պղպեղ, կոճապղպեղ, բրազիլ ծառի փայտանյութ (որդան փայտ) և այլն[1]: Որպես կանոն՝ «փոխառությամբ գնման» գործարքներում նույնպես տոկոսադրույքի չափը չի բացահայտվում: Կարելի է առանձնացնել արտահայտիչ մի օրինակ. 1279 թ. մարտի 30-ին Այասում Գվիզուլֆոն և իր եղբայր Պերչիվալեն Լուչետո դե Ռեկոյից ձեռք էին բերել ոսկու, արծաթի և մարգարիտի ինչ-որ քանակություն՝ խոստանալով 1 ամսվա ընթացքում հատուցել 1009 լիր և 10 սոլդի (ջենովական) գումարով[2]: Պարտավորությունների իրագործման ժամկետները տատանվել են 3 օրից մինչև 5 ամսի սահմաններում: Օրինակ, 1277 թ. հոկտեմբերի 2-ին, 9-ին, 11-ին և 20-ին Այասում կազմված պայմանագրերում ամրագրված է մինչև Ծննդյան տոներն ընկած ժամանակամիջոցը[3]: Ֆամագուստայում կնքված և Կիլիկիայում հատուցվելիք հիշյալ ձևի փոխառություններն առավելապես վերաբերում են հացահատիկին, իսկ վերջնաժամկետները տատանվում են 8 օրից մինչև 1 ամիս[4]:

XIII-XIV դդ. միջազգային առևտրի վարկավորման, ինչպես նաև վաճառականների միջև իրականացված փոխադարձ հաշվարկների առավել տարածված եղանակը կամբիոն էր: Միջնադարում լայն կիրառություն գտած փոխանցումների այս համակարգը թույլ էր տալիս դրամական և այլ տեսակի միջոցները փոխանցել՝ առանց դրանք անմիջականորեն տեղափոխելու, նաև՝ իրականացնել անկանխիկ վճարումներ և այլն:

Ի դեպ, չենք կարող անուշադրության մատնել XII-XIII դդ. Կիլիկյան Հայաստանում հասարակական ակտիվ գործունեություն ծավալած հայ ականավոր առակագիր Վարդան Այգեկցու՝ վաճառականներին նվիրված մի առակ. «Ասի յիմաստնոյ, թէ իմաստուն վաճառականք յորժամ յերկնչին յաւազակաց ի ճանապարհին, ոչ տանեն զգանձս իւրեանց ընդ ինքեանս, այլ տան ի փոխս զգանձս իւրեանց յայնպիսի վաճառական, որ ունին յաշխարհն իւրեանց տուն և գանձ, և առնուն ի նմանէ ձեռագիր և երթայ խաղաղութեամբ և տանի զձեռագիր, վաճառականին և առնու զգանձ իւր ի տանէ նորա»[1]: Առակում հեղինակը, ամենայն հավանականությամբ, ակնարկում է իր ժամանակներում վաճառականների միջև գործածված դրամական կամ այլ միջոցների յուրօրինակ փոխանցման մասին, որից օգտվելու հիմնական շարժառիթն ավազակային հարձակումներից զերծ մնալն էր: Ուշագրավ է, որ վաճառականն ի պահ տրված հարստությունը պետք է ստանար հատուկ փաստաթղթի ներկայացման դեպքում միայն, ինչը բնորոշ էր նաև կամբիոյի փոխանցումներին:

Արդեն նշեցինք, որ կամբիո ներկայացնող գործարքներում պարտքը տրվում էր մի երկրում և ապա վերադարձվում մեկ այլում՝ ինչպես պարտապանի, այնպես էլ նրա վստահված անձի կողմից: Գումարը պարտատուն ձեռք էր բերում կամբիոյի նամակը (lettera di cambio) ներկայացնելուց հետո: Դրամի փոխանակումն իրականացվում էր երկու եղանակով: Առաջին դեպքում փոխանցվող գումարի չափը պայմանագրում ամրագրվում էր տեղական դրամական միավորով, սակայն միաժամանակ նշելով օտարերկրյա դրամի հետ ունեցած դրա փոխարժեքը, որը որոշում էին գործարքի կնքման վայրում (չերտո, certo): Երկրորդում փոխանցման չափն ամրագրվում էր օտարերկրյա դրամական միավորով (չնշելով այլ դրամական միավորով գործարքի կնքման վայրում պարտք տրված գումարի չափը)՝ հաշվարկված այն երկրում գործող փոխարժեքով, դեպի ուր ուղղվում էր կամբիոն (ինչերտո, incerto): Փոխարժեքային տարբերությունը, որի ճշգրիտ չափը միջնադարյան հաղորդակցության պայմաններում գործնականում անհնար էր հաշվարկել, դրամական այս փոխանցումներից շահույթի գոյացման գլխավոր ուղի էր[2]:

Այասում ձևակերպված փաստաթղթերում կամբիոյի գործարքների առատությունը հուշում է վերջինիս լայն կիրառության մասին: Գրեթե բոլոր պայմանագրերը վերաբերում են փոխառությունների ձեռք բերմանը, որոնք հետագայում պետք է հատուցվեին կամբիոյի

[1] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., B. N 27, 29, 30, 31, 32, 34, 39, 46, 47, 50, 56, 60, 64, 73, 74, 77, 82, 83, 85, 86, 101, 106, 120, 130, 131, 138. Տե՛ս նաև՝ **Bondi Sebellico A.**, նշվ. աշխ., N 81. **Otten-Froux C.**, L'Aïas dans le dernier tiers du XIII[e] siècle d'après les notaires génois // Medieval Levant. Studies in Memory of Eliyahu Ashtor (1914-1984), p. 162.

[2] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., B. N 106.

[3] Տե՛ս նույն տեղում, B. N 27, 29, 31, 34.

[4] Տե՛ս **Desimoni C.**, Actes passés à Famaguste de 1299 à 1301 par devant le notaire génois Lamberto di Sambuceto, pp. 23, 36-39. Տե՛ս նաև՝ **Balard M.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (31 marzo 1304 – 19 luglio 1305, 4 gennaio- 12 luglio 1307), Giovanni de Rocha (3 agosto 1308- 14 marzo 1310), C. N 29. **Polonio V.**, նշվ. աշխ., N 139, 205.

[1] Տե՛ս Մառ Ն., Ժողովածոյք առակաց Վարդանայ, նիւթք առ ի պատմութիւն միջին դարուց դպրութեան հայերենի, մասն Բ, Ս. Պետերբուրգ, տպարան Ի. Ն. Սկորոխոդովի, ՌՅԽԳ, էջ 284. Տե՛ս նաև՝ **Микаелян Г.**, История Киликийского Армянского государства, Ереван, 1952, с. 181.

[2] Տե՛ս **Карпов С. П.**, Кредит в системе итальянской торговли в Южном Причерноморье (XIII-XV вв.) с. 45-46. Տե՛ս նաև՝ **De Roover R.**, նշվ. աշխ., pp. 6-10.

եղանակով (լատ. nomine cambia, իտալ. a titolo di cambio): 1274, 1277, 1279 թթ. Այասում կազմված ակտերում կամբիո պարունակող 23 գործարքներից 3-ը բաժին են ընկնում ուղիղ, իսկ մնացածն՝ այլ տեսակի փոխառություններին: Դատելով դրանցում ամրագրված պայմաններից՝ պետք է եզրակացնել, որ փոխանցումների մեծ մասն իրականացվել է կամբիոյի «ինչերտո» տարբերակով: Այսպես, 22 պայմանագրում, թեև ասվում է, որ Այասում պարտքը տրվում է հայկական նոր դրամով, սակայն երբեք չի հիշատակվում չափը: Անկասկած, տեղական դրամով ձեռք բերված գումարի քողարկումը նպատակ ուներ բացառել փոխարժեքային տարբերությամբ ձևավորվելիք շահույթի բացահայտումը: Դրան հակառակ՝ այդ գործարքներում մշտապես նշվում էր այլ երկրներում հատուցվելիք՝ օտարերկրյա դրամական միավորով արտահայտված գումարի ճշգրիտ քանակությունը: Ուշագրավ է, որ փոխանցումների առավել շատ ընտրված նպատակակետը Եգիպտոսի Սուլթանության Դամիետտա քաղաքն է, դեպի ուր ուղարկված գումարները հաշվարկված են բաբելոնյան հին ոսկե բյուզանդով (նվազագույնը՝ 10, իսկ առավելագույնը՝ 300 բյուզանդ): Քիչ չեն նաև Կիպրոս և Աքքա ուղղված փոխանցումները[1]:

Կամբիոյի փոխանցման «չերտո» տարբերակն առավել պարզ ներկայացնելու համար բերենք բնութագրական երկու օրինակ: 1279 թ. մարտի 12-ին Այասում Մանուելե Տավանոն ու Բալիանո Գվիզուլֆոն Պեդրո Գվիզուլֆոյից որպես փոխառություն ստացել էին բրազիլ ծառի փայտ՝ 2830 հայկական սառակինոսյան բյուզանդ[2] արժեքով, որը պետք է հատուցեին Ջենովայում՝ 1 բյուզանդի դիմաց 9 սոլդի և 6 դենար փոխարժեքով[3]: Իսկ արդեն Բեյրութում 1279 թ. մայիսի 10-ին կազմված ակտի համաձայն՝ պիզացի վաճառական Պուչիո դե Պոնցանոն և նոտար Պեդրո դե Բարգոնեն Գաբրիելե Ռապալոյից ձեռք էին բերել 42 ասորական սառակինոսյան

[1] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 11, 22, 27, 28, 29, 32, 33, 49, 50, 53, 55, 58, 59, 68, 92, 98, 99, 100, 101, 104, 106, B. N 86, 126. Տե՛ս նաև՝ **Otten-Froux C.**, L'Aïas dans le dernier tiers du XIII[e] siècle d'après les notaires génois, pp. 161-162.

[2] Ջ. Պտուկյանի կարծիքով՝ հայկական սառակինոսյան բյուզանդը Կիլիկյան Հայաստանում հատվել է վենետիկցիների կողմից և առավելապես օգտագործվել է եվրոպացի վաճառականների միջև կնքված առևտրային գործարքներում (տե՛ս **Պտուկեան Ջ.**, նշվ. աշխ., էջ 50:)

[3] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., B. N 86.

բյուզանդ[1], որը պարտավորվել էին վճարել Գաբրիելեի՝ Այաս ժամանումից սկսած՝ երեք օրվա ընթացքում՝ 1 բյուզանդի դիմաց 10 հայկական նոր դրամ փոխարժեքով[2]: 1296-1310 թթ. կիպրական քաղաքներում նոտարական գործակալներ Լամբերտո դե Սամբուչետտի և Ջովաննի դե Ռոքայի կազմած գործերում գրանցված են Կիլիկյան Հայաստան ուղղված կամբիոյի 26 փոխանցում, որոնցից 16-ը վերաբերում են «չերտո», իսկ մնացածը՝ «ինչերտո» տարբերակներին[3]: Վերոնշյալ կիպրական ակտերում կան անդորրագրերին, հանձնարարականներին վերաբերող բազմաթիվ մուրհակներ, որոնց միջոցով վաճառականները Կիպրոսում ստացել են կամբիոյի փոխանցման պայմանով այլ երկրներում իրենց կողմից պարտք տրված գումարները: Դրանցում բավական շատ են հայկական նոր դրամով հաշվարկված գործարքները, ինչը փաստում է, որ դեպի Կիպրոս ուղղված այդ փոխանցումներն արվել են Կիլիկյան Հայաստանից[4]: Հաշվարկների մեծ մասն իրականացվել է սպիտակ բյուզանդով և հայկական նոր դրամով, սակայն քիչ չեն նաև հայկական մեկ այլ՝ թագվորին[5] կոչված դրամական միավորի և ջենովական

[1] Բյուզանդի այս տեսակը նույնպես ոսկուց էր և կշռում էր 3,93գր. (տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսուան, էջ 385:)

[2] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., B. N 121.

[3] Տե՛ս **Balard M.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (11 ottobre 1296- 23 giugno 1299), N 4, 20, 22, 124. Տե՛ս նաև՝ **Balard M.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (31 marzo 1304 – 19 luglio 1305, 4 gennaio- 12 luglio 1307), Giovanni de Rocha (3 agosto 1308- 14 marzo 1310), B. N 25. C. N 53, 63. **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio-27 ottobre 1301), N 30, 31, 80. **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (gennaio-agosto 1302), N 146, 151, 169, 170, 171, 172, 181, 248, 258. **Polonio V.**, նշվ. աշխ., N 101, 183, 215, 220. **Desimoni C.**, Actes passés à Famaguste de 1299 à 1301 par devant le notaire génois Lamberto di Sambuceto, pp. 119-120.

[4] Տե՛ս **Balard M.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (31 marzo 1304 – 19 luglio 1305, 4 gennaio- 12 luglio 1307), Giovanni de Rocha (3 agosto 1308- 14 marzo 1310), B. N 13, 170. C. N 53. Տե՛ս նաև՝ **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio-27 ottobre 1301), N 57. **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (gennaio-agosto 1302), N 195. **Polonio V.**, նշվ. աշխ., N 60, 67, 97, 185, 385.

[5] Թագվորին (իտալերեն սկզբնաղբյուրներում՝ tacorin, taccolini) արծաթյա դրամը Կիլիկյան Հայաստանում սկսել է հատվել XIII դ. վերջից. այն կշռել է 2,48 գր. (տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսուան, էջ 384-385: Տե՛ս նաև՝ **Ալիշան Ղ.**, Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 56-59. **Պտուկեան Ջ.**, նշվ. աշխ., էջ 59-60:)

լիվրի օգտագործման դեպքերը: Դրանցում քողարկված շահույթը կարելի է բացահայտել՝ հետազոտելով փոխանցման ընդամենը մի քանի պայմանագիր: Այսպես, 1300 թ. նոյեմբերի 6-ին Ֆամագուստայում պիաչենտացի մի վաճառական երկու ջենովացիներից վերցրած 999 սպիտակ բյուզանդը պարտավորվում էր վերադարձնել Այասում՝ 1600 հայկական նոր դրամի տեսքով (ստացվում է, որ 100 հայկական նոր դրամի դիմաց վճարվելու էր 62 սպիտակ բյուզանդ): 1301 թ. հունվարի 12-ին նույն ուղղությամբ կատարված փոխանցումում նշված է 29 բյուզանդի դիմաց 100 հայկական նոր դրամ փոխարժեքը: 1301 թ. փետրվարին նույն ուղղությամբ արված փոխանցումում 1000 սպիտակ բյուզանդի համար հաշվարկվել է 3628 հայկական նոր դրամ (այսինքն՝ 27,5 բյուզանդ - 100 նոր դրամ հարաբերությամբ): Իսկ 1301 թ. օգոստոսի 4-ի գործարքի համաձայն՝ մոնպելիեցի Բելտրամե դե Օրլանդոն ջենովացի Ջենովինո դե Իսոյից Ֆամագուստայում ստացած 1000 սպիտակ բյուզանդի պարտքը խոստանում էր հատուցել Կիլիկյան Հայաստանում՝ 28 բյուզանդի դիմաց 100 հայկական նոր դրամ փոխարժեքով: Ընդամենը ութ ամիս անց՝ 1302 թ. ապրիլի 17-ին կրկին Ֆամագուստայից Այաս իրականացված փոխանցման պայմաններում ամրագրվել է արդեն 32 սպիտակ բյուզանդ - 100 հայկական նոր դրամ հարաբերությունը[1]: Վերոնշյալ տարիների ընթացքում թե՛ Կիլիկյան Հայաստանում, թե՛ Կիպրոսում միջազգային առևտուրն աննախադեպ ծաղկման շրջանում էր, ուստի նրանց դրամական հիմնական միավորների փոխարժեքային նման տատանումներն այդքան կարճ ժամանակային կտրվածքում հազիվ թե եղած լինեին: Հայկական նոր դրամը լայն շրջանառություն ուներ ոչ միայն Կիլիկիայում, այլև Կիպրոսում, որտեղ կնքված գործարքներում այն ամենաշատ օգտագործված օտարերկրյա դրամական միավորներից էր: Ավելին, Ղ. Ալիշանը և Զ. Պտուկյանը հայկական նոր դրամի փոխարժեքի նվազումն արձանագրել են՝ միայն 1313-1316 թթ. սկսած, այն էլ՝ ոչ կտրուկ[2]: Կամբիոյի փոխանցումների՝ վերը թվարկյալ օրինակներում շահույթի հետապնդումն անկներև է: Կիպրական քաղաքներից Կիլիկիա ուղղված փոխանցումների վերջնաժամկետներում տիրապետում է 8

[1] Տե՛ս **Polonio V.**, նշվ. աշխ., N 101, 183, 215. Տե՛ս նաև՝ **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio-27 ottobre 1301), N 30. **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (gennaio-agosto 1302), N 172.

[2] Տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսուան, էջ 385: Տե՛ս նաև՝ **Ալիշան Ղ.**, Հայ-Վենետ, էջ 56-59. **Պտուկեան Զ.**, նշվ. աշխ., էջ 58-59:

օրը, սակայն հանդիպում են նաև 15, 20 օրեր, մեկ ամիս և այլ ժամկետներ:

Որոշ դեպքերում, եթե փոխանցված գումարը ճիշտ ժամանակին և պայմանավորված վայրում չէր հատուցվում, ապա կիրառվում էր այսպես կոչված «ռեկամբիոն», որից ակնկալվող շահույթն էլ ավելի մեծ էր[1]: Եթե կամբիոն փոխանցումներում սովորաբար բերում էր 5-10 % շահույթ, ապա ռեկամբիոն ապահովում էր 10-20 %, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ մինչև 50 % շահութաբերություն[2]: Փորձենք ներկայացնել ռեկամբիոյի դասական մի օրինակ. 1274 թ. ապրիլի 7-ին Այասում իրականացված գործարքի պայմաններով՝ Օտտոբոնո Ցիկադան Լաֆրանկո Ռուբեուսից ստանում էր հայկական նոր դրամի ինչ- որ քանակություն և խոստանում հատուցել Կիպրոսում՝ Ռուբեուսին կամ ոմն Անսալդո Բեգարիոյին (կամ էլ Լաֆրանկոյի կողմից վստահված մեկ այլ անձի) 120 սպիտակ բյուզանդ գումարով: Կողմերը պայմանավորվել էին նաև, որ եթե գումարն ամբողջովին կամ էլ մասնակիորեն չվճարվեր Կիպրոսում, ապա Օտտոբոնոն ստիպված պետք է լիներ այն հատուցել Ջենովայում՝ 1 սպիտակ բյուզանդի դիմաց ջենովական 3 սոլդի և 4 դենարի փոխարժեքով[3]: Ակնհայտ է, որ կողմերից մեկն իր համար փոխարժեքային տարբերությունից ձևավորվելիք որոշակի շահույթ է ակնկալել, սակայն հավելյալ տվյալի բացակայությունն անհնար է դարձնում բացահայտել դրա իրական չափը: Անդրադառնանք նաև Այասում գրանցված՝ կամբիոին առնչվող գործարքների իրականացման վերջնաժամկետներին: Դամիետտա, Աքքա և Կիպրոս արված փոխանցումների դեպքում դրանք տատանվում են 15 օրից մինչև մեկուկես ամսվա սահմաններում, իսկ օրինակ՝ Ջենովա ուղղված կամբիոն վճարվելու էր 4 ամսվա ընթացքում:

Վերը թվարկյալ առևտրային բոլոր պայմանագրերի հստակ ու ճշգրիտ իրականացման համար կողմերը հաճախ դիմում էին օժանդակ տարբեր միջոցների, որոնցից առավել շատ կիրառվում էին հանձնարարականները, վստահագրերն ու անդորրագրերը: Հանձնարարականների (procura) գլխավոր գործառույթներից մեկը հետևյալն էր. կոմմենդայում, փոխառությունում կամ այլ տեսակի

[1] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 68. Տե՛ս նաև՝ **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio-27 ottobre 1301), N 30.

[2] Տե՛ս **Карпов С. П.**, Кредит в системе итальянской торговли в Южном Причерноморье (XIII-XV вв.) с. 48.

[3] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 68.

պայմանագրերում արձանագրված պարտավորությունների չիրագործման պարագայում կողմերից մեկը նշանակում էր իրավաբանական կարգավիճակ ունեցող իր վստահված անձին՝ պրոկուրատորին (procurator), որպեսզի վերջինս լուծեր ծագած խնդիրները: Հարկ է նշել, որ Այասում հանձնարարականներին վերաբերող պայմանագրերի մեծ մասը կնքվել են եվրոպական միևնույն քաղաքը ներկայացնող անձանց միջև[1]: Դրանցում գերակշիռ մեծամասնություն են կազմում տարբեր բնույթի պարտքերի գանձման հետ կապված հանձնարարականները[2]: Երբ նախնական պայմանագիրը բազմակողմանի կոմմենդա էր կամ մի քանի պարտատեր ներառող փոխառության գործարք, ապա հանձնարարական-մուրհակներում հանդես էին գալիս երկու և ավելի պրոկուրատորներ: Այսպես, 1274 թ. հունիսի 20-ին Այասում արձանագրված ակտում գրված է, որ Անտոնիո և Գաբրիելե Գվիզուլֆոները հանձնարարում էին իրենց պրոկուրատորներ Ջովանինո Ռուբեուսին և Օբերտո դի Գավիին՝ Տրիպոլիի բնակիչ Ջովաննի Ադելմեսիայից և մյուս պարտապաններից գանձել տրված պարտքը[3]: Հանձնարարականների և վստահագրերի մյուս կարևոր գործառույթն առևտրական, ինչպես նաև հաշվապահական տարբեր գործերի կառավարումն էր: Դրանցից էին ապրանքների ձեռք բերումը, առաքումն ու սպառումը: Բերենք բնութագրիչ երկու օրինակ: 1274 թ. հունիսի 9-ի գործում նշված է, որ Բանդենակո անունով վաճառականը հանձնարարում է իր պրոկուրատորներ Սեգուերիո Մարպեջոյին և Օրմանո Պերլաքսոյին՝ գանձել էնրիկո Պիտունիոյին բազմակողմանի կոմմենդայով տրված 200 աքքայան ոսկե բյուզանդը, ապա կարգավորել ցորենի առք ու վաճառքի հետ կապված իր հաշվապահական գործերը: Իսկ նույն թվականին Այասում կազմված հանձնարարականում ասվում է, որ Կիլիկյան Հայաստանում Ջենովայի հյուպատոս Ֆիլիպինո Տարտարոն նշանակել էր իր որդի և միաժամանակ վստահված անձ հանդես եկած Նիկոլոզո Տարտարոյին՝ Գվիլելմո Պապիենսիս անունով վաճառականի հետ շրջանառել իրեն պատկանող նավի կեսը[4] (ամենայն հավանականությամբ՝ խոսքը նավի վրա բարձված ապրանքի մասին էր - Ռ. Գ.):

Միջնադարյան ծովային առևտրային համակարգում կարևոր նշանակություն ունեին ապրանքների նավափոխադրավարձերի հետ կապված գործարքները (լատ. naulo, իտալ. nolo, ռուս. фрахта): Դրանցում վճարվող գումարի չափն, անշուշտ, կախված էր ապրանքի տեսակից և աշխարհագրական այն կետի հեռավորությունից դեպի ուր նավը պետք է ուղղվեր: Իհարկե, թանկարժեք ապրանքների փոխադրման համար վճարվում էր ավելի բարձր գումար: Կիլիկյան Հայաստանում նավափոխադրավարձերի հետ կապված պայմանագրերը նույնպես արձանագրվել են նոտարների կողմից և եղել են իրավաբանական լիարժեք ուժ ունեցող փաստաթղթեր[1]: Ներկայացնենք ուշագրավ մի օրինակ: Այսպես, 1274 թ. փետրվարի 27-ին Այասում կազմված պայմանագրի համաձայն՝ կիլիկյան Պալո նավահանգստում խարիսխ գցած «Սանտա Լուչիա» նավի տերեր հանդես եկող երեք բարսելոնցի Պեդրո Մայոլին, Բեռնարդո Դաուրատիսն ու Պեդրո Ռայմոնդին վարձավճարով պետք է Բարսելոնի տեղափոխեին Պեդրո Թոմեի և Գվիլելմո Լիդոնեյի (կրկին բարսելոնցիներ) ապրանքը: Գործարքում ապրանքների թվում նշված են բամբակ, պաղլեղ և պղպեղ, որոնց համար կողմերը հաշվարկել էին ընդհանուր փոխադրավարձ՝ 300 հայկական սառակինոսյան բյուզանդի չափով: Ավելացվում է նաև, որ գումարը պետք է վճարվեր մինչև մարտի վերջ. ժամանակին չվճարելու դեպքում՝ գանձվելու էր 400 հայկական սառակինոսյան բյուզանդ՝ 300-ի փոխարեն: Իսկ 1279 թ. մարտի 24-ի գործը վերաբերում է Այասում խարիսխ գցած՝ Երուսաղեմի հյուրընկալ ասպետներին պատկանող «Սանտա Անդրեա» նավով ինչ-որ ապրանքի տեղափոխմանը: Պայմանագրում գրված է, որ նավի բեռը պետք է տարվեր Ջենովա կամ Լիգուրիայի այլ քաղաքներ կամ էլ՝ Մարսել. ահա ինչու կողմերը պայմանավորվել էին, որ փոխադրավարձը պիտի վճարվի՝ համաձայն փոփոխվող իրավիճակի[2]: Նույն բովանդակությունն ունեին Կիպրոսից Կիլիկիա ճանապարհված նավերի փոխադրավարձերի պայմանագրերը: Ֆամագուստայում գրանցված 5 նմանատիպ գործարքից 4-ը վերաբերում են կիլիկյան նավահանգիստներին[3]:

[1] Տե՛ս **Otten-Froux C.**, L'AÎas dans le dernier tiers du XIII^{e} siècle d'après les notaires génois, pp. 158-159.

[2] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 1, 2, 3, 5, 6, 10, 12, 16,18, 34, 37, 41, 42, 46, 54, 65, 71, 89, 90, 97, B. N 8, 9, 13, 16, 21, 22, 23, 24, 26, 33, 40, 41, 42, 44, 59, 93, 96, 102, 110, 111, 115, 118, 119. Տե՛ս նաև՝ **Bondi Sebellico A.**, նշվ. աշխ., V. 2, Venezia, 1978, N 1307, 1308. **Otten-Froux C.**, Les relations èconomique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie d'après les actes notariés (1270-1320), p. 167.

[3] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 6.

[4] Տե՛ս նույն տեղում, A. N 2, 46.

[1] Տե՛ս նույն տեղում, A. N 3, 35, 60, 61, 91, B. N 35, 69, 92. Տե՛ս նաև՝ **Ferretto A.**, նշվ. աշխ., p. 274. **Otten-Froux C.**, L'AÎas dans le dernier tiers du XIII^{e} siècle d'après les notaires génois, p. 162.

[2] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 35. B. N 92.

[3] Տե՛ս **Balard M.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (31 marzo 1304 – 19 luglio 1305, 4 gennaio- 12 luglio 1307), Giovanni de Rocha (3 agosto 1308- 14 marzo 1310), C. N 30. Տե՛ս նաև՝ **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio-27 ottobre 1301), N 18. **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati

Միջնադարում դրամական փոխադարձ հաշվարկների համար լայնորեն կիրառվում էին անդորրագրեր, որոնց միջոցով կատարվում էին տարատեսակ վճարումներ: Դրանք սփռված են Այասում գրանցված նոտարական ակտերում, որոնք օգտագործվել են պարտքերի տրման, հատուցման, ապրանքների առք ու վաճառքի և այլ տեսակի գործարքների համար անհրաժեշտ դրամական փոխանցումներում[1]:

Հարկ է նկատել, որ վերը թվարկյալ բոլոր տեսակի գործարքները պարունակում են ապահովագրությանը հատուկ որոշակի տարրեր: Թեև նոտարական սկզբնաղբյուրներում բացառապես ապահովագրությանը վերաբերող գործարքներ չեն գրանցվել, սակայն կոմմենդա կամ փոխառություն ներկայացնող պայմանագրերում այն սովորաբար արտահայտվել է գրավի տեսքով[2]:

Առևտրաֆինանսական գործառույթների համար նախատեսված վերը թվարկյալ եղանակների մեծ բազմազանությունը վկայում է XIII-XIV դդ. Կիլիկյան Հայաստանում իրականացված մեծածավալ և զարգացած միջազգային առևտրային ապրանքաշրջանառության մասին: Այդ տարաբնույթ պայմանագրերն ունեն բարձր մակարդակի իրավաբանական կազմություն, որոնցում դրսևորված են ժամանակի քաղաքակիրթ առևտուրը բնութագրող բազմաթիվ հատկանիշներ: Գործարքներում արված բավական խոշոր ներդրումները և դրանց իրագործման ուղղությունների աշխարհագրությունը, որն ընդգրկում էր գրեթե ամբողջ Միջերկրական ծովը, հատկապես վկայում են կիլիկյան քաղաքներում ընթացած չափազանց շահութաբեր առևտրի մասին:

a Cipro da Lamberto di Sambuceto (gennaio-agosto 1302), N 86. **Polonio V.**, նշվ. աշխ., N 89, 204, 299. **Otten-Froux C.**, Les relations èconomique entre Chypre et le Royaume Arménien de Clilicie d'après les actes notariés (1270-1320), p. 168.

[1] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 20, 45, 51, 52, 56, 61, 64, 67, 80, B. N 5, 10, 32, 37, 55, 57, 58, 63, 65, 66, 67, 69, 76, 81, 89, 90, 91, 97, 98, 100, 104, 105, 107, 109, 113, 122, 123. Տե՛ս նաև՝ **Ferretto A.**, նշվ. աշխ., p. 277. **Otten-Froux C.**, L'Aîas dans le dernier tiers du XIII[e] siècle d'après les notaires génois, pp. 158-159.

[2] Տե՛ս **Balletto L.**, նշվ. աշխ., A. N 33. B. N 85, 106. Տե՛ս նաև՝ **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aias (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois, p. 450. **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (gennaio-agosto 1302), N 151, 163, 248.

ЗОГРАБ ГЕВОРКЯН
ИИ НАН РА

СПОСОБЫ ОРГАНИЗАЦИИ СРЕДИЗЕМНОМОРСКОЙ ТОРГОВЛИ В КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ (XIII-XIV вв.)

РЕЗЮМЕ

Средневековая средиземноморская торговля осуществлялась с помощью целой системы многочисленных способов организации торговли. В XII-XIV вв. торговые объединения, преимущественно европейского происхождения, были внедрены по всему Средиземноморью, в том числе и в Киликийской Армении. В этих методах важную роль играли широко распространенный контракт комменда, различные типы кредитования и денежных переводов, поручения, контракты, связанные с фрахтованием торговых кораблей и т. д. В армянских источниках почти отсутствуют сведения о каких либо методах организации торговли местного происхождения. Для изучения проблемы первостепенными источниками являются итальянские нотариальные акты, составленные в Айясе и кипрских городах, а в дальнейшем отправленные и сохраненные во многих архивах европейских городов. В результате тщательного исследования этих источников, можно с уверенностью сказать, что все способы организации средиземноморской торговли в XIII-XIV вв. широко использовались в международном торговом товарообмене Киликийской Армении.

ԱՐՄԵՆ ՎԻՐԱԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՋԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱՎԱԳ ՔԱՆԱՔԵՌՑՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ջաքարիա Քանաքեռցու կենսագրության աղբյուրները սուղ են: Հիմնական աղբյուրը նրա «Պատմագրություն» երկն է, որի տարբեր հատվածներում այս կամ այն առիթով հեղինակը վկայություններ է տալիս իր ծագման, սոցիալական պատկանելիության, ընտանիքի և գործունեության վերաբերյալ: Սակայն դրանք երբեմն իրարամերժ են կամ՝ ոչ վստահելի:

Պատմիչի կենսագրական տեղեկությունների աղքատիկությունը բացատրվում է նրա քիչ հայտնի լինելով, հոգևոր ցածր աստիճանով և ոչ այնքան ակտիվ ստեղծագործական գործունեությամբ: Պատմա-գրության մեջ ևս Ջաքարիա Սարկավագը պատշաճ ուշադրության չի արժանացել, և նրա կենսագրության ուսումնասիրությունն սահմանափակվել է լոկ մակերեսային տեղեկությունների հաղորդումով:

Ջաքարիա Քանաքեռցու կենսագրությանը վերաբերող առաջին խնդիրը, որը ճշգրտման կարիք ունի, նրա ծննդյան թվականն է: Լեոն նշում է, որ պատմիչը ծնվել է XVII դ. 20-ական թվականներին[1]: Մի քանի աշխատություններում էլ հիշատակվում է 1627 թվականը[2]:

Այս թվականը նշելիս հեղինակները հենվում են «Պատմագրության» երրորդ հատորի հատվածներից մեկի վրա, որտեղ Ջաքարիա Քանաքեռցին հիմնավորում է Հովհաննավանքի կոնդակը գրելու անհրաժեշտությունը և նշում մինչ այդ՝ այն գրելուն խանգարող հանգամանքները: Ապա հայտնում է, որ միայն 60 տարեկան հասակում, երբ արդեն ավելի շատ ազատ ժամանակ է ունեցել, որոշել է գրել այն: Այստեղ, երբ հեղինակը նշում է իր տարիքը, տալիս է նաև այն թվականը, երբ ձեռնամուխ է եղել «Կոնդակի» շարադրմանը (1687 թթ.). «Եւ յամենայն օր դեգերէի, թէ ընդէր ոչ գոյ հաստատուն կոնդակ վանացս, որ ամենայն արձանք որմոցն գրեալ լինի ի նմա, և վարանէի միշտ առ այն: Այլև խորհէի առնել, սակայն ոչ լինէի ձեռնհաս յաղագս երկուց. նախ զի ընդ ձեռամբ տերանց էի. երկ-

[1] Լեո, Երկերի ժողովածու, հ. III, Ե.,1969, էջ 354:
[2] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. IV, Ե., 1972, էջ 496: Աբեղյան Մ., Երկեր, հ. Դ, Ե., 1970, էջ 525: Մելիք-Բախշյան Ստ., Հայոց պատմության աղբյուրագիտություն, Ե., 1989, էջ 249: Закарий Канакерци, Хроника, перевод с армянского, предисловие и комментарий М. О. Дарбинян-Меликян, М., 1969, с. 15.

որդ՝ ի մէջ մարմնաւոր զբաղմանց: Բայց յետ վախճանի տերանց իմոց վերոգրելոց՝ հարկեցայ յայժմուս Առաջնորդէս ի Սարգիս վարդապետէ խոհեմոյ և բանասիրէ ... և սկսայ առնել ի ժամանակի ծերութեան իմոյ՝ Կ (60) ամի կենաց իմոց՝ ի թուին ՌՃԼՋ (1687)»[1]: Այսպիսով՝ 1687 թ. վաթսունամյա Ջաքարիա Քանաքեռցին պետք է ծնված լիներ 1627 թ.:

Կա ևս մեկ վկայություն պատմիչի ծննդյան թվականի վերաբերյալ: Մեզ է հասել մի ձեռագիր ժողովածու, որը բավականին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Ջաքարիա Քանաքեռցու կենսագրության վերաբերյալ: Ժողովածուի բոլոր մասերը, բացի Ա-ից, որը վերնագրված է «Ի մեկնութենէ գործոց առաքելոց» և պատկանում է Խաչատուր վարդապետի գրչին, մնացածները վերագրվում են Ջաքարիա Քանաքեռցուն[2]:

Ավարտելով այս ժողովածուի Ե մասի՝ «Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի եւ Հայոց սպարապետի եւ վկայի Քրիստոսի յեղիշայէ սրբոյ,Դաւթայ երիցու հայցեալ գրեաց»-ի արտագրությունը, Ջաքարիա Քանաքեռցին նշում է թվականը. «Եղեւ զրաւ եւ աւարտումն գրոցս, որ կոչի Եղիշե պատմագիր, յերկիրս Արարատեան ի գաւառս Կարբւոյ, յոտն Արագածու՝ հանդեպ Արայու, ի հռչակաւոր եւ գերափառ, աստուածաբնակ քաւարանիս ի Սուրբ մենաստանս ի Սիւղի վանաց, որ ստուգաբանեալ կոչի Յօհաննու վանք... Ի թուականութեան Հայկազեան տոհմի Ռ – երորդի ճ – երորդի Ի երորդի եւ ե – երորդի (1676) սեպտեմբեր ամսոյ ի մուտն, ի թագաւորութեանն Պարսից Շահ Սուլէմանի եւ յամիրայութեան Տանս Արարատեան Սաքի ղանի Երկրորդի եւ կաթողիկոսութեան Սուրբ Աթոռոյն էջմիածնի տեառն Յակոբայ եւ առաջնորդութեան սուրբ եւ հրաշակերտ մենաստանիս հեզահոգի եւ սրբազան մեծի րաբունապետին՝ Յօհաննիսի Կարբեցւոյ»[3]: Ապա շարունակում է. «Գրեցաւ սա ձեռամբ ամենաթշուառ եւ վատահամբաւ Ջաքարիա Սարկաւագի Քանաքեռցւոյ»[4]: Ավելացնում է նաև հետևյալը. «Եւ զիս զփանաքի եւ ցնոտի Ջաքէոս գծողս, զի Ō (50) ամաց էի, որ գրեցի զսա»[5]: Եթե հավատանք այս վկայությանը, ապա Քանաքեռցու ծննդյան թվականը կլինի 1626-ը՝ 1676-50=1626: Ուստի, Ջաքարիա Քանաքեռցու ծնունդը պետք է թվագրել 1626/1627-ով՝ առավելությունը տալով 1626 թ.,

[1] Ջաքարիա Սարկավագ, Պատմագրութիւն, հ. III, Վաղարշապատ, 1870, էջ 2:
[2] Սայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հ. Դ, Ե., 2008, էջ 1178-1179:
[3] Մատենադարան, ձեռագիր № 1404, թ. 606բ:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

որովհետև 1676 թ. նա իր տարիքն ավելի ստույգ կհիշեր, քան տասնմեկ տարի անց՝ 1687 թ.:

Զաքարիա Քանաքեռցու ծննդավայրը Քանաքեռ ավանն է, որտեղ էլ մինչև Հովհաննավանքում հաստատվելը բնակվել է: Դա հետևում է պատմիչի հետևյալ տողերից. «Որպէս և ես վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ՝ քանքարաթաքոյց ծառայ Քրիստոսի Զաքարիա՝ գոալով ի փարթամ աւանէն Քանաքեռոյ՝ որ եկեալ բնակեցայ յԱստուածաբնակ և ի հրաշափառ սուրբ մենաստանս Յովհաննու վանից»[1]:

Զաքարիա Քանաքեռցին իր ծնողներին քանիցս «Պատմագրություն»-ում հիշատակում է: Անդրադառնալով պարսից Շահ – Աբաս Ա-ի կյանքի դրվագներից մեկին՝ պատմիչը նշում է, որ այդ մասին լսել է Առաքել պատմիչից (Առաքել Դավրիժեցուց) և իր մորից, որովհետև շահի կազմակերպած մեծ գաղթի ժամանակ գաղթեցվողների մեջ է եղել նաև իր մայր Խանաղան՝ ծնողների հետ: Ապա, Կոտայքի գավառապետ, Քանաքեռցի մելիք Դավիթը, որի քեռին Զաքարիա Քանաքեռցու մայրական գծով տատն էր, նրանց տեղափոխում է Արծն գյուղ: Նա Զաքարիա Քանաքեռցու մորը կնության է տալիս իր տան վերակացու Մկրտիչին՝ պատմիչի հորը[2]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Զաքարիա Քանաքեռցու մայրը սերել է սոցիալական առնվազն միջին խավից:

Ըստ Զաքարիա Քանաքեռցու՝ հայրական կողմից նա ունեցել է վրացական ծագում: «Պատմագրության» երրորդ գլխում նա անդրադառնում է իր նախնիներին և հորը՝ Մկրտիչին՝ նրա մասին տալով բավականին մանրամասն տեղեկություններ: Նա մասնավորապես գրում է. «Հայրն իմ Զաքէիս Մկրտիչ՝ էր յորդւոցն Վրաց, և էր կարի ճոռոմաբան և ճարտարախօս. ուսեալ էր և լեզու Պարսից և Գաւրաց. ընթերցեալ էր և Սաղմոսն»[3]: Հենց կրթված լինելու շնորհիվ էր Մկրտիչն աշխատում որպես Կոտայքի գավառապետի տան վերակացու, ինչը երևում է Զաքարիա Քանաքեռցու հետևյալ խոսքերից. «Եւ գաւառապետ նահանգին Կոտէից՝ մելիք Դաւուտ անուն, կոչէ առ ինքն զՄկրտիչն, և վասն ճարտարութեան նորա՝ կարգէ զնա վերակացու տանն իւրոյ»[4]: Հեղինակն իր հոր նախնիների մասին տեղեկացել է ժառանգաբար փոխանցված մի գրքից, որտեղ տեղեկություններ են հաղորդվել մինչև Զաքարիա Քանաքեռցու պապը՝ Խաչատուրը, որից հետո գիրքն անընդհատ լրացվել և կորել է 1679 թ. մեծ երկրաշարժի ժամանակ. «Եվ նա (Մկրտիչը – Ա.Վ.) ունէր գիրք մի, որ ի վաղու գրած էր ժողովածու բազում ինչ. և վասն որդւոց գրեալ էր ի հօրէ և յեղբարց իւրոց՝ և վասն իւր. զայն գիրքն կայր առ մեզ. և յորժամ եղև ահագին շարժն, գիրքն այն անյայտ եղև»[1]:

Զաքարիա Քանաքեռցին պատկանել է Քանաքեռում հայտնի Ղապոնց գերդաստանին, որն իր անունը ստացել է նրա նախնիներից մեկի՝ Ղապոյի անունից. «Եվ ոմն Ղապօ անուն՝ առեալ զքոյր իւր Աղուտա անուն՝ գնաց ի Քանաքեռ, և ահա կոչին Ղապոնք»[2]:

Զաքարիա Քանաքեռցին ունեցել է Խաչատուր անունով ավագ եղբայր, որին իր երկում քանիցս հիշատակում է: Ընդ որում, և Զաքարիան, և Խաչատուրը եղել են կաղ.«Իսկ հայրն իմ Մկրտիչ,- գրում է պատմիչը,- շալակեաց զիս զՁաքարիայս, և զեղբայրն իմ զԽաչատուր առաջի արկեալ՝ գնաց. և իբրև ետես զմեզ փոքր և կաղ՝ և թիւր ոտամբ, բարկացաւ (Ասլան աղան – Ա. Վ.)՝ և ասէ, զաղօղ որդիսն քո պահեալ ես, և զանդամալոյծքդ բերեալ ես»[3]: Պատմիչն ունեցել է նաև Չորագյուղում ապրող քույր, որի անունը, սակայն, չի նշում[4]:

Զաքարիա Քանաքեռցին իր ժամանակի համար բավականին լավ կրթություն է ստացել: Այդ մասին տեղեկանում ենք «Պատմագրության» մի քանի հատվածներից: Անդրադառնալով 1637 թ. Հովհաննավանքի վանահայր դարձած Զաքարիա եպիսկոպոս Վաղարշապատցու գործունեությանը՝ Զաքարիա Քանաքեռցին նշում է, որ նա ի թիվս այլ գործերի՝ «Ժողովեաց զբազում գրեանս, և ստացաւ բազում աշակերտս, որ ևս ես տրուպ Զաքէոս ընդ նոսա»[5]: Որոշ ժամանակ անց Զաքարիա եպիսկոպոսն ստեղծում է դպրոց, որտեղ պատմիչը սկսում է դասավանդել. «Հաստատեաց և Դպրատունս, և զնուաստութիւն իմ կարգեաց ուսուցիչ մանկացն»[6]: Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ Զաքարիա Քանաքեռցին եղել է հայերենի ուսուցիչ[7]:

Մինչ Հովհաննավանքում հաստատվելը և այստեղ կրթություն ստանալը, Զաքարիա Քանաքեռցին եղբոր՝ Խաչատուրի հետ սովո-

[1] Զաքարիա Սարկավագ,նշվ. աշխ., հատոր III, էջ 1:
[2] Նույն տեղում, հատոր I, էջ 18: Մատենադարան, ձեռագիր № 3024, թ. 54ա, № 1662, թ. 25ա - 26բ:
[3] Զաքարիա Սարկավագ, նշվ. աշխ., հատոր III, էջ 42:
[4] Նույն տեղում, էջ 45:

[1] Նույն տեղում, էջ 42:
[2] Նույն տեղում, էջ 43:
[3] Մատենադարան, ձեռագիր № 3024, թ. 68բ, № 1662, թ. 87բ:
[4] Զաքարիա Սարկավագ, նշվ. աշխ., հատոր II, էջ 51:
[5] Նույն տեղում, էջ 35:
[6] Նույն տեղում:
[7] Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Ե.,1948, էջ 55:

րել է ոսկերչություն. «Եւ ի թուին ՌՁԶ (1637) էառ զիս եղբայրն իմ Խաչատուր, և գնացաք ի գիւղն Միափոր. և ի տան մելիք Աթային կալաք խանութ, և գործէաք արուեստ ոսկերչութեան. և ի նոցանէ ուսաք զամենայն»[1]: Սա հավանաբար երկարատև բնույթ չի կրել, րովհետև պատմիչը շուտով հայտնվում է Հովհաննավանքում և կյանքի մնացած տարիներն անցկացնում այնտեղ:

Իսկ թե որքա՞ն ժամանակ է պատմիչը անցկացրել Հովհաննավանքում, կփորձենք ճշտել՝ հենվելով Ջաքարիա Քանաքեռցու 1664 թ. հեղինակած ձեռագրերից մեկի վրա[2]: Դրանում պատմիչը նշում է, որ ինքն արդեն 30 տարի է, ինչ գտնվում է Հովհաննավանքում. «Գիտութիւն լիցի սրբասէր ընթերցողացդ, զի ես՝ բազմաչարչար եւ ամենաթշուառ Ջաքարիա կոչեցեալ, որ եկեալ բնակեցայ ի սուրբ եւ հրաշազարդ, հռչակաւոր Սուրբ ուխտս եւ աստուածաբնակ մենաստանս Յոհաննու վանից, ընդ հովանեաւ մեծի Ամլորդւոյն եւ պայծառ արուսեկին եւ անշէջ ճառագայթին եւ առաջընթաց Կարապետին Յովաննու, առ ոտս մեծի եւ քաջ րաբուապետին՝ Ջաքարեայ եւ նորուն ձեռնասուն աշակերտի խոհեմ եւ հեզ Յոհաննէս վարդապետի, որ զկնի նորա յաջորդեաց զաթոռն եւ բազում աշակերտս ժողովեալ ուսուցանէր զգիտութիւն աստուածային իմաստից: Որ եւ ես, վատահամբաւս ընդ նոսին լինելով զամս Լ (30) սակայն ոչ ըստ հաճոյիցն Աստուծոյ եւ ոչ ըստ կամաց Տեառն իմոյ եւ սնուցանողի...»[3]: Եթե 1664 թվականից հանենք երեսուն տարի, ապա կստացվի, որ Սարկավագը 1634 թվականից գտնվել է Հովհաննավանքում և այնտեղ ապրել է մինչև իր կյանքի վերջը: Սակայն մենք արդեն վերը նշել ենք, որ 1637 թ. Քանաքեռցին եղբոր հետ սովորել է ոսկերչություն, ուստի նշված 30 տարին մոտավոր ժամանակ է:

Առավել ճգրիտ եզրակացություն կարող ենք անել նույն ձեռագրի մեկ այլ հատվածից: Դրանում պատմիչը նշում է, որ ինքը տվյալ պատմությունը ավարտել է 1676 թ. և ավելացնում, որ 37 տարի է, ինչ գտնվում է Հովհաննավանքում. «Գրեցաւ սա ձեռամբ ամենաթշուառ եւ վատահամբաւ Ջաքարիա Սարկաւագի Քանաքեռցւոյ, որ Լ եւ է (37) ամ բնակեցայ ի դրան Սուրբ Կարապետիս եւ ոչ մի ժամ հաճոյ եղեալ Աստուծոյ, այլ զկամս իմ պաշտելով եւ զսիրտս եղբարցն խոցոտելով, վա՜յ եղկելոյս»[4]: Ստացվում է, որ Ջաքարիա Քանաքեռցին 12-13 տարեկանից բնակվել է Հովհաննավանքում:

[1] Ջաքարիա Սարկավագ, Ընտ. աշխ., հատոր I, էջ 26:
[2] Մատենադարան, ձեռագիր № 1404:
[3] Նույն տեղում, թ. 468բ:
[4] Մատենադարան, ձեռագիր № 1404, թ. 606ա - 606բ:

Այստեղ 47 տարեկան հասակում ստացել է արշիդիակոնության՝ սարկավագապետության աստիճան[1]: Իսկ թե ե՞րբ է սարկավագի աստիճան ստացել, չի նշում:

Հովհաննավանքում եղած տարիներին Ջաքարիա Քանաքեռցին շատ է ճանապարհորդել: Օրինակ՝ 1675 թ. ապրիլին նա գտնվում էր Ղազվինում: Խոսելով Կախեթի թագավոր Թամրազի թոռան՝ Հերակլի մասին Սարկավագը նշում է, որ երբ վերջինս գտնվում էր Մոսկվայում, պարսից Շահ Սուլեյմանը Գրիգոր Ջուղայեցուն ուղարկում է Հերակլի մոտ՝ նրան հրավիրելով իր մոտ՝ Ղազվին: Քանաքեռցին նշում է շահի՝ Ղազվինում գտնվելու տարեթիվը և ավելացնում, որ քաղաքում էր գտնվում նաև Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին և ինքը նա, որպես վերջինիս սպասավոր, նրա հետ էր. «Յետ Շահ Աբասին եղև թագաւոր՝ որդի նորա Շահ Սուլէյման. սա առաքեաց այր մի Ջուղայեցի Գրիգոր անուն՝ թղթով և երդմամբ, որ գնաց եբեր զնա ի քաղաքն Խզիրան, որ է Ղազուին. Քանզի անդ էր Շահն, ի թուին ՌճԻԴ (1675) յապրիլի ԻԳ: Անդ էր և մեծ Կաթուղիկոսն Յակոբ, և մեք նա ի ծառայութիւն նորա»[2]: Եղել է նաև Թավրիզում, Ջմյուռնիայում և Կ. Պոլսում[3]: Սակայն այս քաղաքներ մեկնելու պատճառները պատմիչը չի նշում:

Ջաքարիա Քանաքեռցու մահվան թվականը հայտնի չէ: «Պատմագրության» երկրորդ գլխի վերջում պատմիչը տալիս է այն ավարտելու թվականը. «Ի սպառել ժամանակիս և ի վերջին դարուս՝ ի նուաստանալ ազգիս Հայոց, և ի զօրանալ ազգին Պարսից, յորում եղիմք և տառապիմք ազգի ազգի կեղեքմամբ և պէսպէս աւարմամբ, ի թուիս մերում Ռերրորդի՝ ճերրորդի ի քառից տասանց և երկից չորից, ի թագաւորութեանն Պարսից Շահ – Հիւսէինի, և յիշխանութեան տանս Արարատեան Ֆարզալի - խանի, և ի կաթողիկոսութեան Հայոց՝ որ ի սուրբ էջմիածին՝ Տեառն Նահապետի Եդեսացւոյ՝ եղև աւարտումն պատմութեանս յերկրիս Արարատեան»[4]: Այսպիսով Ջաքարիա Քանաքեռցու «Պատմագրության» ավարտումն ստացվում է 1699 թվականին, ինչը «Պատմագրություն» - ում հեղինակի վերաբերյալ մեր ունեցած վերջին հիշատակությունն է:

Մեզ է հասել մի ձեռագիր, որն առավել ճշգրիտ պատկերացում է տալիս Ջաքարիա Սարկավագի մահվան թվականի վերաբերյալ: Նրանում տեղ է գտել Սպահանում 1724 թ. Մովսես Ջուղայեցու

[1] Ջաքարիա Սարկավագ, Ընտ. աշխ., հ. III, էջ 2:
[2] Նույն տեղում, հ. II, էջ 95:
[3] Նույն տեղում, էջ 43, 111, 116:
[4] Նույն տեղում, էջ 142-143:

պատվերով Ավետիս երեցի[1] գրած մի ժողովածու, որի բաղկացուցիչ մասերից է հայոց պատմագիրների ցանկը՝ «Պատմագիրք Հայոցը» - ը, ուր հեղինակն անդրադառնում է միջնադարյան հայ պատմագիրներին:

Այս ցանկի մեջ Թովմա Մեծոփեցու և Առաքել Դավրիժեցու կողքին հիշատակվում է նաև Զաքարիա Քանաքեռցու անունը, նրա հետ կապված նշվում պատմիչի հեղինակած պատմության ավարտելու ժամանակը՝ 1701 թ.: Ձեռագրում Զաքարիա Սարկավագը հանդես է գալիս Զաքեոս անունով. «Թովմաս Մեծոփեցի, աշակերտ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյն: Բ հատոր, պատմութիւն վասն Թամուր Կաղին և չարաց նորին: Եւ միւսն վասն նորոգութեան կաթուղիկոսութեան սուրբ էջմիածնին:

Առաքել Դավրեժեցի: Պատմութիւն թագաւորացն պարսից և գերութեան հայոց:

Զաքէոս պատմագիրք. Բ հատոր սկսեալ զկնի բանից առքլին (Առաքել Դավրիժեցուն - Ա.Վ.) մինչև ՌճՁ (1701) թուին»[2]:

Ժողովածուի մեջ 1701 թ. նշված է որպես Զաքարիա Սարկավագի պատմության ավարտելու տարեթիվ: Բայց քանի որ «Պատմագրություն» - ում որպես երկի ավարտելու տարեթիվ հիշատակված է 1699-ը, ուստի այստեղից կարելի է եզրակացնել, որ Ավետիս երեցի հիշատակած 1701 թ. Զաքարիա Քանաքեռցու մահվան թվականն է:

Քանի որ Զաքարիա Քանաքեռցին, ամբողջ գիտակցական կյանքն ապրել և ստեղծագործել է Հովհաննավանքում, հավանաբար, հենց այստեղ էլ հուղարկավորվել է:

[1] Ձուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Ե., 1965, էջ 762:
[2] Մատենադարան, ձեռագիր № 2271, թ. 214ա:

АРМЕН ВИРАБЯН
ПИ НАН РА

БИОГРАФИЯ ДЬЯКОНА ЗАКАРИЯ КАНАКЕРЦИ

РЕЗЮМЕ

Вопрос о биографии Закария Канакерци всегда находился в центре внимания исследователей. Большинство авторов - М. Абегян, Ст. Мелик-Бахшян, М. Дарбинян-Меликян - как год рождения историка отмечают 1627 год. Они ссылаются на один из отрывков "Хроники", где историк описывает время сочинения "Кондака" Ованнаванка как 1687 г. и упоминает, что ему в это время было шестьдесят лет.

Судя по отрывку одного из сборника рукописей, переписывание которого закончилось 1676 году, Закарию Канакерци тогда было пятьдесят лет. Годом рождения историка необходимо считать 1626-1627 годы, отдавая предпочтение 1626-ому, так как в 1676 году он вспомнил бы свой возраст точнее, чем 11 лет спустя.

Семья Закария Канакерци состояла из четырех членов: отец Мкртыч, мать Ханага, старший брат Хачатур и сестра, имя которой он не упоминает.

В молодые годы Закарий Канакерци с братом учился ювилерному делу, потом с 1639 года стал проживать в Ованнаванке, где он и получил образование. Здесь в возрасте 47 лет получил духовный сан дьякона. В годы проживания в Ованнаванке историк много путешествовал. Он был в Казвине, Тебризе, Смирне и в Константинополе. В 1637 г. Игуменом Ованнаванка стал Закария Вагаршапатци. В основанной им школе и преподавал историк.

Год смерти Закария Канакерци можно считать 1701 г., так как это последний известный нам год, с упоминанием об историке.

ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XVIII դ. սկիզբ)

18-րդ դարի հայ ազատագրական մտքի ակունքներում կանգնած նշանավոր դեմքերից է Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը (1701-1728 թթ.), որը կաթողիկոսական աթոռին բարձրացավ իր հորեղբոր՝ Երեմիա կաթողիկոսի (1676-1700 թթ.) մահից հետո:

Եսայի Հասան-Ջալալյանի երկը՝ «Պատմություն համառօտ Աղուանից երկրի»[1], կարևոր սկզբնաղբյուր է հայոց աշխարհի և հատկապես հայոց արևելից կողմերի XVIII դարի առաջին տասնամյակների քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության: Բարձր գնահատելով Եսայի Հասան-Ջալալյանի ներդրումը հայ ազատագրական գործի պատմության և այդ ոգով ստեղծված պատմագրության մեջ՝ Բագրատ Ուլուբաբյանը գրել է. «Եսայի Հասան-Ջալալյանը՝ Արցախական աշխարհի մելիքական ուժերի կազմակերպիչն ու առաջնորդը, եթե կրծքին կաթողիկոսական խաչ ուներ կախած, կողքին՝ զորավարական թուր, ապա ձեռքից վար չէր դնում պատմիչի գրիչը, որը թուրք նվաճողների դեմ մղած թեժ մարտերի կարճ դադարներին անպաճույճ լեզվով, քաջիմացությամբ ու արդար խոսքով գալոց սերունդներին էր հասցնում կրակոտ օրերի շունչը, հայրենապաշտական զորքերի սխրագործությունները... »[2]:

Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև բաժանվածության պայմաններում Հայաստանը պարբերաբար ենթարկվում էր օտար նվաճողների տնտեսական և քաղաքական ճնշումներին: Այդ իրողությունն իր արտացոլումն է գտել Եսայի Հասան-Ջալալյանի երկի հետևյալ դրվագում. «Ի տասներորդ ամի թագավորութեան իւրում՝ Հիւսէին կոչեցեալ Շահ Սուլտանն արար հրաման՝ մարդաթիւ և աշխարհագիր առնել ազգիս Հայոց և ամեն ազգաց ընդ իշխանութեամբ իւրով եղելոց՝ որ ելեալ հրամանատարք նորին՝ արք իբրու հաւատարիմք տան նորա, գրիչք և քարտուղարք զի անսխալ և առանց թագուցանելոյ գրեսցեն զամենայն

[1] Հասան-Ջալալեանց Եսայի, Պատմություն համառօտ Աղուանից երկրի, Յերուսաղեմ, 1868: Եսայի Հասան Ջալալյանը Վելիջան Բեկի որդին էր: (Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ.10, Ե., 1964, էջ 427):
[2] Ուլուբաբյան Բ., Ջրուցարան, Ե., 1987, էջ 253:

հասակ ի հնգետասան ամենից և ի վեր սպառնացեալ ի հրովարտակին...»[1]:

Եսայի Հասան-Ջալալյանն իր վրդովմունքն է արտահայտում Շահ Սուլթան Հուսեյնի (1694-1722 թթ.) որոշմամբ անցկացվող մարդահամարի և աշխարհագրի վերաբերյալ՝ այն համարելով անարդարացի և նվաստացուցիչ: Այդ հրովարտակից բխող դաժան միջոցառումների մասին Գանձասարի կաթողիկոսը գրում է. «Յոյժ յուզմամբ և որոնմամբ զննեալ տեղեկանային պէս-պէս հնարիւք և սպառնալեօք. ի գիւղի ուրումն զտանուտեր գիւղին, և զքահանայսն, և զհիւրընկալն արգելուին ի տունս ուրոյն, և զատ ի միմեանց. և ապա ասել տային զանուանս արանց եղելոց ի գիւղին և գրէին. և բերեալ ի մի վայր, հաւասար տեսանէին. և թե աւելի կամ պակաս գտաներ զասացեալսն ի միմեանց, կախելով ի փայտէ բրածեծ առնէին զարսն ասացեալ սակս տուգանին. ընդ նմին կաչառս[2] հոլովս, և տասանորդս, և զկարգեալ վարձս զինուորացն, առաւել քան զչափն առնուին, և ապա զգրեալն կրկնէին...»[3]:

Ինչպես երևում է շարադրանքից, հարկատու էր դարձել նույնիսկ հոգևորականությունը. «Ապա յետ այսորիկ՝ գրեցին և զվանօրայս, զանապատս, և զգիւղօրէից եկեղեցիսն. ընդ նմին և զեպիսկոպոսունս, զաբեղայս, և զերիցունս, առ հասարակ ի թիւ արկին...»[4]: Դարկերից չէին խուսափել նաև հասարակության այլ խավերը. «Աւարտելով զնոսա սկսան գրել և զվաճառականսն, զծանապարհորդսն, և զորս սուղ ինչ առ և տրոյ տեարքն էին, և զամենեսեան ի համարաթիւն գրելով տարեալ ցուցին ատենի արքային...»[5]:

Ավարտելով հարկերի բեռի ավելացման մասին իր հաղորդումը՝ Եսայի Հասան-Ջալալյանը գրում է. «Իսկ անդ եդին հարկս ի վերայ առաջնոյ սահմանին, և ի վերայ եկեղեցական պաշտօնէից, որ յառաջնումն ոչ երևէր բնավ՝ տասնաց ծանր բեռինս եդին. և զսոյն աշխարհագրութիւն հազիւ մինչև հերիս ամս ավարտեցին, և ի ՌճՕԱ (1702) թուին հրաման արարին զերեք տարւոյ գլխահարկ ժողովրդեանն, զոր նոր եդին, նաև վասն եկեղացականաց և կրօնաւորաց ընդ նմին միահատոյն առնուլ....»[6]:

[1] Հասան-Ջալալեանց Եսայի, նշվ.աշխ., էջ 13:
[2] Կաչառը կողմնապահության համար տրված վարձ էր՝ դրամով կամ իրերով (Ղազարյան Ռ. Ս., Գրաբարի բառարան, հ. Ա, Ե., 2000, էջ 631):
[3] Հասան-Ջալալեանց Եսայի, նշվ.աշխ., էջ 13-14:
[4] Նույն տեղում, էջ 14:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում, էջ 15:

Ստեղծված քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում հրատապ էր դառնում հայ ժողովրդի՝ օտար տիրապետությունից ազատագրվելու խնդիրը, քանի որ այլևս անհնարին էր դիմակայել օրավուր ահագնացող հալածանքներին: Հենց այդ ժամանակաշրջանում էր իր ազատագրական ծրագրերը մշակում Իսրայել Օրին[1]: Հայ ազատագրական պայքարի գործում անգնահատելի ներդրում ունեցավ Եսայի Հասան-Ջալալյանը:

Գանձասարի կաթողիկոսական աթոռին բարձրանալու կապակցությամբ Եսայի Հասան-Ջալալյանը[2] 1702 թ. դեկտեմբերի 7-ին ազգային համախմբության ոգով օրհնության խոսք հղեց Ռուսաստանում ապրող հայերին. «Յիսուս Քրիստոսի ծառայ, Եսաիեա կաթողիկոս ամենայն Աղուանից... յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան և նամակ պահպանութեան շնորհք առաքելական և աստվածային բազմայպատիկ օրհնութիւն և նախախնամական գթութիւն հասցէ և հանգիցէ ի վերայ տիրապահ և Քրիստոսայխնամ օրհնել մայրաքաղաքացդ Մոսկօփու և յԱշթրախանու և ի միջի ձեր օրհնել քահանայից, երեսփոխանաց, իշխանաց, դօվլաթաորաց, և մեծի և փոքու խնդալ ի տէր ամէն»[3]:

Արդեն մի քանի դար էր, որ Գանձասարի կաթողիկոսությունը սերտ կապերի մեջ էր Ռուսաստանի հարավ տեղափոխված հայերի հետ[4]: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ Եսայի Հասան-Ջալալյանը ձգտում էր ամրապնդել այդ կապերը: Իր օրհնության խոսքում նա նշում էր, որ Գանձասարի կաթողիկոսությունը պարտավորված էր հոգ տանել Ռուսաստանում ապրող հայերի մասին, իսկ վերջիններս էլ պետք է հնազանդ լինեին իրենց առաջնորդներին և Գանձասարի կաթողիկոսությանը. «Ահայ մեք շնորհօք սբ. հոգոյն, ողորմութեամբ բարերարին աստծո նստաք ի սուրբ աթոռն Գանձայսարոյ, այժմ պարտիմք իշխող և խնամայտար լինել ի վերայ ձեր, և

[1] Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական պատմության, գիրք 2, Ե., 1959, էջ 227-229:
[2] Եսայի Հասան-Ջալալյանի կաթողիկոսական իրավունքները հաստատվել են շահ սուլթան Հուսեյնի 1113 հ.թ. ջումադի առաջին ամսի (1701 թ. հոկտեմբերի 4 – նոյեմբերի 3) հրովարտակով (Մատենադարանի պարսկական վավերագրերը, հրովարտակները, պրակ III, Ե., 2005, էջ 146-147, Ա.Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Ե., 2007, էջ 134):
[3] Эзов Г., Сношения Петра Великого с Армянским народом, СПБ., 1898, с. 139-140.
[4] Խաչիկյան Լ., Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, Բանբեր Մատենադարանի, 1980, N 13, էջ 13-15:

դուք պարտիք ... հնազանդել առաջնորդաց ձերոց և սբ. աթոռոյն Գանձասարոյ...»[1]:

Իր խոսքի վերջում Եսայի կաթողիկոսը Ռուսաստանի հայությանը տեղեկացնում է Հայաստանում և, մասնավորապես, հայոց արևելից կողմերում տիրող ծանր իրավիճակի և անօրեն բռնությունների մասին. «Եվ ես ծանիջիք սակս կենցաղոյս մերոյ, որ բազում նեղութիւն ունիմք ի մեջ անօրէն բռնայորացս սակս անցիցն առաջնաւորացն... ահայ սիրելիք մեր որպիսութիւն մեր, զայդ էր զոր ծանուցաք ձեզ: Նա միաժամանակ կոչ էր անում Ռուսաստանի հայերին՝ տեղյակ պահել իրենց դրության մասին. «Իսկ դուք պարտիք ձեր զամենայն որպիսութիւնն առ մեզ գրել, եթե տեր կամեցի»[2]:

Եսայի Հասան-Ջալալյանը, իր կաթողիկոսական գործունեության հենց սկզբից դառնալով հայ ազատագրական պայքարի ոգեշնչող և կազմակերպող գործիչներից մեկը, գործում էր մեծ շրջահայացությամբ՝ հույսը չկապելով բացառապես արտաքին ուժերի օգնության հետ, այլ՝ գիտակցելով սեփական ուժերին ապավինելու կարևորությունը: Եսայի Հասան-Ջալալյանի գործունեության նպատակասլացության մասին են վկայում նրա անմիջական նախաձեռնությամբ Արցախի մելիքների անունից գրված և Մոսկվայի դեսպանական վարչությանը ներկայացված դիմումները[3]:

Արցախի այն մելիքները, ովքեր հույս ունեին, թե Հյուսիսային պատերազմի ավարտից հետո ցարը տրամադրված է զբաղվել Հայաստանի ազատագրման խնդրով, 1703 թ. մայիսի 27-ին ուղերձ հղեցին Պետրոս I-ին[4]: Մելիքները գրում էին, որ իրենք բավական երկար ժամանակ է, ինչ խնդրում էին Աստծուց Պետրոս I-ին շնորհել մեծ կարողություն և հզորություն, որպեսզի նա կարողանար օժանդակեր իրենց. «Մեք փոքր ծառայքս քո Մելիքներս գրեցինք առ քո մեծ թագաւորութեանդ, որ մինչև հիմի անդադար առ Աստուած կու աղաղակէինք, որ տա տէր Աստուած այտ մերս մեր մեծ թագաւորիդ կարողութիւն, որի քո բարի ինքնակալութենէդ լինի մեր ցաւիցն բժիշկութիւն»[5]: Մելիքները նաև հայտնում էին Պետրոս I-ին, որ Մինաս վարդապետի և Իսրայել Օրու միջոցով ստացել էին այն նամակը, որտեղ թագավորը խոստանում էր օգնություն ցուցաբերել իրենց. «Մինչև հիմի հինգ ամ էր, որ այդ կողմէն մեզ խապար չէր

[1] Г. Эзов, նշվ. աշխ., էջ 140:
[2] Նույն տեղում:
[3] Դանիելյան Է., Գանձասարի պատմություն, Ե., 2005, էջ 217:
[4] Эзов Г., նշվ. աշխ., էջ 154:
[5] Նույն տեղում:

եկեալ...այժմոյս փառք Քրիստոսի, որ երէկ էիաս մեզ Միևնոյ վարդապետին, և պարօն Իսրայէլին քո առ մեզ մխիթարական գրին...»[1]:

Բարձր գնահատելով Եսայի Հասան Ջալալյանի ներդրումը հայ ժողովրդի ազատագրական պայքարի գործում ու անդրադառնալով Իսրայել Օրու և Միևնոյ վարդապետի գործունեությանը՝ Աշոտ Հովհաննիսյանը գրել է. «1703 թվականին խմբագրած նրանց դիմումներն անմիջականորեն համընկնում էին... Ղարաբաղի մելիքների և մանավանդ սրանց քաղաքական ղեկավարի՝ Գանձասարի Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի տրամադրություններին»[2]:

Պետրոս I-ին ուղղված իրենց դիմումում՝ մելիքները նաև նշում էին, որ «շրջապատված են անհավատների լրտեսներով»[3]: Նրանք պատրաստակամություն են հայտնում ամեն հարցում օժանդակել Պետրոս I-ին, երբ նա իր զորքերով օգնության հասնի հայերին. «երբոր քո շնորհալի արմն մեր աշխարհն մտնելն մեք այն վաղթին ամէն ինչ պիտանի ընչիւք պատրաստեմք քո էզիզ թագաւորութենեդ օղուրումն, Աստված տայ այն օրն ամենայն ինչ պակասութիւն չի լինիր էաքերին: Այսուհետև մեք առանց տքնութեան օրստօրէ դէստուրի կու նաիմք զոր ինչ հրամայես զայն կատարեմք»[4]:

Ակնկալելով Պետրոս I-ի օժանդակությունն իրենց ազատագրական ծրագրերին՝ մելիքները նամակի վերջում հայտնում էին հայոց աշխարհի կարևորության և համաշխարհային քաղաքակրթության մեջ նրա դերակատարության մասին. «Վաղեմէ գրոց լսեր եմք և այսօր երևելի աչօք բացօք կու հաւատամք, որ քեզանով պիտի լինի ամենայն քրիստոնեից արձակումն, և լինիս ամենից ծովու ցամաքի հրամայօղ մեծ թագաւոր: Այս մեր յԱրարատէ աշխարհս սփռեցավ, և բազում թագաւորութիւնների ըսկիզբն այս յերկրես հաստատեցաւ որ քան զամենայն յերկիրս հինէ, և ամէն աշխարհի բանալինք առ ինքն ունի եթե ծովով և եթե ցամաքով կարողութեամբն Աստուծոյ դիւրին է ժամանակաւ տիրել զպիտանիսն»[5]:

Եսայի Հասան-Ջալալյանին հաջողվել էր ազատագրական գաղափարների շուրջ համախմբել մելիքներին: Արցախի մելիքների կողմից Պետրոս I-ին հասցեագրված նամակը ազատագրական

[1] Նույն տեղում:
[2] Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 526:
[3] Այվազյան Ա., Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Ե., 2003, էջ 10:
[4] Эзов Г., նշվ. աշխ, էջ 154:
[5] Նույն տեղում, էջ 156:

ծրագրերի իրականացմանն ուղղված առաջին դրսևորումներից էր այս դարաշրջանում:

Էջմիածնում գիտեին ազատագրական գործում Գանձասարի կաթողիկոսության նշանակության և Եսայի կաթողիկոսի գործադրած ջանքերի մասին, նաև տեղյակ էին, որ այն գտնվում էր տնտեսական ծանր վիճակում, ուստի հնարավորին չափ աջակցում էին Եսայի Հասան-Ջալալյանի դիրքերի ամրապնդմանը[1]:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ալեքսանդր Ա Ջուղայեցին (1706-1714 թթ.) պաշտպանեց Եսայի Հասան-Ջալալյանին՝ հակադրելով կաթողիկոս Ներսեսի (1706-1763 թթ.) հետ ունեցած վեճում: Ներսեսի կաթողիկոսությունը միանգամայն անօրինական էր համարվել: Նախ նա օծվել էր Եսայի կաթողիկոսի աթոռակալության ժամանակաշրջանում: Երկրորդ՝ Ներսեսի օծումը կատարվել էր առանց ժողովրդի հավանության և էջմիածնի կաթողիկոսի հրամանի: Ավելին, Ներսեսը նզովքի և դատապարտման էր ենթարկվել, քանի որ նրան նախորդած Սիմոն Խոտորաշենցի կաթողիկոսը ստորագրություն էր տվել Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցուն, որ իր ազգականներից և ոչ մեկն այլևս չի նստելու կաթողիկոսական աթոռին[2]: Պատահական չէ, որ 1707 թ. Ալեքսանդր Ա Ջուղայեցին Ներսեսին ճանաչում է մեղավոր և դատապարտում, իսկ Եսայի Հասան-Ջալալյանին վերահաստատում է որպես կաթողիկոս[3]: Երբ այդքանից հետո էլ Ներսես կաթողիկոսը չի դադարեցնում իր պառակտիչ գործունեությունը, Ամենայն հայոց կաթողիկոսը ևս մի կոնդակ է գրում, որտեղ նզովում է Ներսեսին: Սիմեոն Երևանցի կաթողիկոսն այդ մասին գրում է. «Իսկ ի յոչ դադարին Ներսիսին ի չարութենէ, վերստին ի ՌճՕէ(1708) թուոջն գրէ կոնդակ մի ևս սոյն Աղէքսանդր կաթուղիկոսն ի յԱղուանս, յորում վերստին բանադրէ զՆերսեսեան նեռն կոչելով, և զընդունողսն նորա, և զձեռնադրեցեալսն ի նմանէ՝ նեռնական, և մեղադրէ զառաջնորդս և զիշխանս երկրին՝ որք սիրեն զնաեև զկողմն նորա պահեն»[4]:

Նույն թվականի մեկ այլ կոնդակով Շամախին և Շիրվանն իրենց շրջաններով շնորհվեցին Գանձասարի կաթողիկոսին. «Այլ և ի սոյն թուոջս սոյն Աղէքսանդր կաթուղիկոս գրէ զկոնդակ մի եւս յատ-

[1] Դանիելյան Է., նշվ. աշխ., էջ 219:
[2] Սիմէոն կաթողիկոս Երեւանցի, Ջամբռ, Գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէից, Վաղարշապատ, 1873, էջ 81:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 82:

կապէս ի վերայ Շամախու, Շիրվանու, և շրջակայիցն թէ՝ թեպետ դուք բնական Սրբոյ էջմիածնի էք վիճակ եւ տերունի, սակայն առաջին կաթուղիկոսքն մեր Գանձասարու Աթոռոյն են շնորհեալ վասն աղքատութեան նորին: Վասն որոյ ի սէր եղբօր մերոյ Եսայի կաթուղիկոսին, եւ վասն աղքատութեան և պարտուց Գանձասարու Աթոռոյն զՁեզ եւ ես շնորհեցի, զի զՁեր արդիւնսն նուիրական Եսայի կաթուղիկոսին տայցէք, իբր մեզ համարելով հասեալ»[1]:

Ամենայն հայոց կաթողիկոս Ալեքսանդր Ա Ջուղայեցու այս քայլերը վկայում են, որ Մայր Աթոռ Ս. էջմիածինը ձգտում էր ուժեղացնել Գանձասարի կաթողիկոսությունը՝ հաշվի առնելով ազատագրական պայքարի գործում նրա կարևորությունը: Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանվածության պայմաններում Ս. էջմիածինն ստիպված էր գործել քաղաքական դժվարին և զգայուն պայմաններում՝ փորձելով այդ երկու տերություններից որևէ մեկին բացահայտորեն չհակադրվել և հայության երկու հատվածներից որևէ մեկը վտանգի տակ չդնել[2]: Այս իրավիճակում ազատագրական պայքարի առաջնորդի դերն իր վրա է վերցնում Գանձասարի կաթողիկոսությունը: Եսայի Հասան-Ջալալյանը, ինչպես իր տոհմի շատ երևելի ներկայացուցիչներ, ծնվել էր մաքառելու, իր ազգի ազատագրությունն արդար կռվով նվաճելու համար[3]: Նա կարողացավ մեկ ընդհանուր գաղափարի շուրջ միավորել Արցախի մելիքներին և ժողովրդի լայն խավերին: Իր հայրենասիրության և ստանձնած պարտավորություններին անմնացորդ նվիրման շնորհիվ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը հսկայական ներդրում ունեցավ XVIII դարի առաջին տասնամյակների հայ ազատագրական պայքարի գործում:

[1] Նույն տեղում, էջ 82-83:
[2] Այվազյան Ա., նշվ. աշխ., էջ 8:
[3] Ուլուբաբյան Բ., Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Ե., 1998, էջ 213:

АЙК КАРАПЕТЯН
ИИ НАН РА

К ВОПРОСУ О ДЕЯТЕЛЬНОСТИ КАТОЛИКОСА ГАНДЗАСАРА ЕСАЙИ ХАСАН-ДЖАЛАЛЯНА (НАЧАЛО XVIII В.)

РЕЗЮМЕ

Есайи Хасан-Джалалян (1701-1728), католикос Гандзасара, крупный духовный деятель и историк, является одной из ключевых фигур в истории национального-освободительного движения армянского народа XVIII века.

Вследствие раздела Армении между Ираном и Турцией, социально-экономическое и политическое положение страны было крайне тяжелым и армянский народ подвергался невыносимым страданиям и гонениям. В сложившиеся ситуации роль лидера освободительного движения взял на себя католикосат Гандзасара во главе с католикосом Есайи Хасан-Джалаляном, который с первых же дней вступления на патриарший престол, путем сплочения широких слоев населения, начал разрабатывать идею освобождения родины от чужеземного владычества. Прекрасно понимая, что нельзя добиться успеха, уповая лишь на помощь внешних сил. он четко осознавал важность принятия самостоятельных решений и решительных шагов к их осуществлению. Как и многие именитые представители рода Хасан-Джалалян, Есайи посвятил свою деятельность национально-освободительному делу армянского народа. Благодаря патриотизму и четкому осознанию своего долга перед родиной, Есайи Хасан Джалалян внес неоценимый вклад в историю освободительного дела армянского народа в первые десятилетия XVIII века.

ԱՐԿԱԴԻ ԱԿՈՊՈՎ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՕԼԹԻԻ ԳԱՎԱՌԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVI Դ. – 1878 Թ.)

Օլթու լիվան[1] զբաղեցնում էր պատմական Տայքի կենտրոնական շրջանները: Այն տեղագրվում է Մեծ Հայքի Տայք աշխարհի Ազորդացփոր գավառի հյուսիսային, Բողխայի հյուսիսային և կենտրոնական, Բերդացփորի հարավային շրջաններում և Պարտիզացփոր գավառում: Որպես Օսմանյան կայսրության վարչական միավոր Չլդրի էյալեթի կազմում Օլթու լիվան սկսել է ձևավորվել XVI դարի վերջերին: Այն հյուսիսից սահմանակից էր Թավուսկերի, հյուսիս-արևելքից՝ Փանակի, հարավ-արևելքից՝ Կարսի նահանգի Թախտայի, հարավից՝ Մամրվանի (Նարիման) գավառներին, իսկ հարավ-արևմուտքից և արևմուտքից՝ էրզրումի նահանգի Թորթումի գավառին: Թավուսկերի գավառի հետ Օլթու լիվայի սահմանն անցնում էր Օլթի գետով,[2] Թախտայի գավառից բաժանվում էր Սողանլուղի (Մեծրաց) լեռներով, Թորթումի լիվայից՝ Սիվրի-դաղ լեռնաշղթայի հյուսիսային հատվածով, որտեղ էին Ազորդեն, Գուլլի-Բագդադ, Ակ, Կախիլբերգ, Ատմեկ և Արավետ լեռները: Հարավում՝ Մամրվանի լիվայի հետ բնական սահմանը հստակ չէ: Օլթու և Մամրվանի լիվաները ճշգրտորեն սահմանազատելու գործում մեզ օգնեցին թուրքական դավթարներում առկա բնակավայրերի ցուցակները: Դրանց տեղագրությունը թույլ տվեց մեզ պարզելու, որ Օլթու և Մամրվանի գավառների բաժանման գիծն անցնում էր Թոփրակ-կալե-Քեսուկ-Քյոփրի գյուղերով՝ վերջիններին թողնելով Մամրվանի լիվայի տարածքում:

Օլթու գավառը XVI դարի վերջի դրությամբ բաղկացած էր Բարդուսի, Անծավի, Արևահայաց, Ստվերոտ, Քեթխութի և Չանուչուրի նահիեներից, որոնցում հաշվվում էր շուրջ 90 բնակավայր: Ցավոք, բնակավայրերի մեծ մասի անունն սկզբնաղբյուրում անընթեռնելի է:[1] Այս հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ Օլթին որպես լիվա լիարժեքորեն կազմավորված չէր, իսկ նրա բնակավայրերը դեռևս մանրամասն հաշվառման ենթարկված չէին:

XVIII դարի առաջին քառորդի դրությամբ Օլթու լիվան ուներ 2 անգամ ավելի քիչ բնակավայր՝ ինչը պայմանավորված էր Օսմանյան կայսրության վարած ներքին դաժան քաղաքականությամբ և կործանարար պատերազմներով:

XIX դարի կեսի դրությամբ Օլթու լիվայում հաշվվում է շուրջ 60 բնակավայր:[2] Գավառի վաչական կենտրոնն Օլթի (Ուղթիք) քաղաքն էր: Չնայած այն հանգամանքին, որ առաջին անգամ հիշատակվում է XI դարի սկզբին, Ուղթիքը հիմնադրվել է շատ ավելի վաղ: Նախապես այն պատկանել է Մամիկոնյաններին, ապա անցել էր Բագրատունիներին՝ դառնալով Տայքի կյուրապաղատության կենտրոնը: Ամենավաղ վկայությանն Ուղթիքի մասին հանդիպում ենք Վարդան Արևելցու մոտ. «Յայնմ ժամանակի վախճանեցավ կիւրապաղատն Դավիթ, անժառանգ գոլով. և տայ անդարձագրով գիայրենիս իւր ի Վասիլն, զՈւխթիսն և զՆամրուան (Մամրվան-Ա. Ա.), զքաղաքն Ապահունեաց՝ զՄանծկերտ, և զամենայն ինչս»:[3] Արիստակես Լաստիվերցին Ուղթիքի մասին խոսելիս այն մի դեպքում՝ անվանում է «քաղաք Ուխտեաց», մյուս դեպքում՝«Մեծ ավան Ուխտեաց»:[4] Այստեղ մի կողմ դնելով բնակավայրի անվանածները (Ուխտիք, Ուղթիք), որոնք առկա են XI-XII դարերի աղբյուրներում նշենք, որ ամեն դեպքում այն քաղաքատիպ բնակավայր է եղել, այլապես

[1] Օլթու գավառի տեղագրությունը ներկայացնելիս մենք հավասարապես գործածելու ենք և՛ պաշտոնական էյալեթ, լիվա կամ սանջակ և նահիե, և դրանց համապատասխանող հայկական տերմինները՝ նահանգ, գավառ և գյուղախումբ:

[2] Օլթու գավառը հարուստ էր գետային ցանցով: Նրա տարածքով էին հոսում Ճորոխի խոշորագույն վտակ Օլթի գետն իր օժանդակներով: Օլթի գետն սկիզբ է առնում Մամրվանի լիվայի տարածքում՝ Կանդիլ և Դավրեա-Կուլկուլ լեռներից: Գավառի կենտրոն Օլթի քաղաքից ոչ հեռու Օլթի գետն ընդունում է իր ամենախոշոր վտակներից մեկը՝ Սիվրի-գետը, Օլթի քաղաքից մոտ 30 կմ հյուսիս՝ Բարդուս (Պարտեզ) և Փանակ (Բանակ) գետերից կազմված միացյալ վտակը: Արևմուտք թեքվելուց առաջ՝ Օլթի գետն աջից ընդունում է Փանագկերտ վտակը, այնուհետև՝ Թավուսկերը: Մինչև Ճորոխի մեջ թափվելը՝ Օլթի գետին է միանում և Թորթում գետը, որի հետ մոտ 7 կմ դեպի արևմուտք հոսելով, միանում է Ճորոխին: Օլթի գետի հետ զուգընթաց հարավից հյուսիս է հոսում Բարդուս գետը, որը սկիզբ է առնում Կիրասլի և Ալակբեր լեռներից, սկզբից հոսում հարավ, հարավ-արևմուտք, ապա ուղղվում հյուսիս-արևմուտք և հյուսիս-արևելք՝ թափվելով Փանակ գետի մեջ: Օլթի գետի ձախակողմյան փոքրիշատե խոշոր վտակներից է նաև Անծավը, որը Օլթուն է միանում՝ մինչև վերջինիս Թորթում գետի հետ միախառնվելը:

[1] ნახ. გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, თურქული ტექსტი გამოსცა, თარგმანი, გამოკვლევა და კომენტარიები დაურთო სერგი ჯიქიამ, წ. 3, თბილისი, 1958, გვ. 595-603.

[2] Ալիշան Ղ., Տեղագիր հայոց մեծաց,Վենետիկ, 1853, էջ 39:

[3] Ցաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 93:

[4] Պատմութիւն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերցւոյ, Թիֆլիս, 1912, էջ 7:

դժվար է բացատրել այն կարևորությունը, որը տրվում էր Ուղթիքին XI դարի առաջին քառորդին, երբ մի կողմից՝ վրացական թագավորությունը և մյուս կողմից՝ Բյուզանդական կայսրությունը՝ հանձին կայսր Վասիլ (Բարսեղ) Բ Բուլղարասպանի, փորձում էին իրենց տիրապետությունը հաստատել այնտեղ:

Հետագա դարերում Ուղթիքը շարունակում էր մնալ գերազանցապես հայաբնակ: Գավառը նկարագրելիս՝ Դ. Ինճիճյանը գրում է. «Ունի քաղաք մեծ պարսպապատ ի համանուն գաւառի, ի մէջ Արտանուշի և էրգիռումայ... կառուցեալ առ ստորոտով լերին ի դաշտավայրի, անցանէ առ նովաւ և ջուր, որ յանուն նորա կոչի: Ունի և արուարձանեայս արտաքոյ պարսպին. բնակիչք նորա տաճիկք և հայք»:[1] Դ. Ինճիճյանի պնդմամբ քաղաքի կլիմայական պայմանները խիստ են. «Յամարայնի ջերմ սաստիկ, և ձմերայնի ցուրտ անհնարին, յորմէ յաճախ են առ բնակիչս կոյր, կաղ և բորոտ»:[2] Պետք է նշել, որ Օլթու կլիմայի այսօրինակ նկարագրությունը պիտի վերաբերեր ոչ թե քաղաքին, այլ գավառի առավել բարձրադիր շրջաններին, ինչպես հաղորդում է Դ. Բաքրաձեն,[3] քանի որ Օլթի քաղաքը հայտնի է իր մեղմ կլիմայով, իսկ Վախուշտի արքայազն Բագրատիոնն Օլթին անվանում էր բարեկարգ և լավ օդով օժտված քաղաք:[4] Ինչ վերաբերում է գավառի բնակչության մեջ հանդիպող «կոյր, կաղ և բորոտ» մարդկանց, ապա հետագա հաղորդումներում Օլթու լիվայի վերաբերյալ նմանատիպ տեղեկությունների այլևս չենք հանդիպում:

Գավառի և քաղաքի այժմյան Օլթի անվանածևը գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանի կարծիքով՝ վրացական-թուրքական է:[5] Վրացական աղբյուրներում հանդիպող անվանածևն «Օլթիսի» է: «Սի» վերջավորությունը բնորոշ է քաղաքների վրացական անվանածևերին (Թբիլի*սի*, Քութայի*սի*, Բոլնի*սի* և այլն): Այնինչ, «Օլթի» ձևը «Ուղթիքի» հնչյունափոխված տարբերակն է (Ուղթիք – Օղթիք - Օլթի):

[1] Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս 1, Ասիա, հ. 1, Վիեննա, 1806, էջ 126:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Бакрадзе Д., Историко-этнографический облик Карсской области, б.м. и г., стр. 5: Դ.Բաքրաձեի հաղորդման համաձայն Օլթու շրջանում ամռանը սաստիկ տոթեր են լինում և 40°C ջերմաստիճանը սովորական է Օլթու համար:
[4] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Ե., 1955, էջ 85:
[5] Տե՛ս Հյուբշման Հ., Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 245:

Օլթի քաղաքը գտնվում է նույնանուն գետի ափին՝ ակունքից մոտ 50 կմ հեռավորության վրա: Մինչև ռուսական տիրապետության հաստատումը Օլթին հայկական փոքրիկ քաղաք էր: 1878 թ. տվյալներով, Օլթի քաղաքն ուներ 458 հայ բնակիչ և հայկական երկու եկեղեցի՝ ս.Գևորգ և ս. Հովհաննես, հոգևոր 2 սպասավորներով:[1] Ինչպես Օլթի քաղաքի մոտ, այնպես էլ գետի ավազանում հանդիպող բազմաթիվ բերդերի, ամրոցների, դղյակների և տաճարների ավերակները գավառի փառավոր անցյալի կենդանի վկաներն են:[2]

Օլթու գավառի բնակավայրերի տեղագրությունն սկսենք հարավ-արևելքից՝ Բարդուսի ճահիճից: Բարդուս գետի ակունքից մինչև Բարդուս ավանը 20 կմ երկարության և 10 կմ լայնության վրա շուրջ 30 բերդերի ու ամրոցների մնացորդներ են պահպանվում, որոնց առկայությունը վկայում է այն մասին, որ միջնադարում Վանանդի ու Բասենի կողմից այս գավառը խիստ սպառնալիքի տակ է եղել և այն պաշտպանելու համար մեծ ուժեր են կուտակվել: Այս շրջանում էին գտնվում հետևյալ բնակավայրերը. Բարդուսի ակունքների մոտ Կուռչի և Վարդանուտ (Վարդանեկ) գյուղերն էին, որոնցից արևելք ընկած էր Բաշքոյ յայլան, որտեղից սկիզբ առնող Կուրբենի առվակը միանում էր Բարդուս-չային Վարդանուտ գյուղի մոտ:[3] Վարդանուտից հարավ ընկած էին Գյորաշկեան և Ջակիմ (Ջակեմ) բնակավայրերը: Սրանցից հարավ-արևելք ընկած էր Ջերմուկ գյուղը, որի միջով անցնող առուն սկիզբ է առնում Սողանլուղի Գեղին Թաշ, Կըզըլ-Ղայա, Չամար և Խդրելյաղ լեռներից իջած Կըզըլ-Քիլիսա (Կարմիր եկեղեցի) և Կըրըկ-Քիլիսա (Կոտրված եկեղեցի) առվակների միացումից: Ջերմուկի հարևանությամբ էին գտնվում Բաշգեղ, Վերանբերդ և Տուրի գյուղերը:

Բարդուսի այն հատվածում, որտեղ գետն իր ուղղությունը հարավ-արևմուտքից փոխում է արևմուտք, Օլթի քաղաքից մոտ 50 կմ. հեռավորության վրա գտնվում էր Բարդուս ավանը:[4] 1878 թ. կնքված ռուս-թուրքական Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաձայն՝ հույներով և 210 տուն հայերով բնակեցված Բարդուս ավանն անցավ Ռուսաստանին: Այն ընկած էր ռուս-թուրքական սահմանի անմիջական հարևանությամբ: Ավանում և նրա մերձակայքում պահպանվում

[1] Центральный государственный исторический архив Грузии (այսուհետև՝ ЦГИАГ), ф. 415, оп. 1, д. 21, л. 15.
[2] Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, էջ 179-180:
[3] Նույն տեղում, Ատրպետ, նշվ. աշխ., էջ 182:
[4] Տե՛ս გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, წ. 3, გვ. 596.

են հայկական ս.Հովհաննես եկեղեցու[1] և Ջարթման բերդի (Ջարթման կալե) ավերակները:[2] Բարդուսից հարավ՝ համանուն առվակի ափին էր գտնվում Չիլխորոզ գյուղը, որից մի փոքր հյուսիս-արևմուտք ընկած էր Գայմաս գյուղը: Գայմասից հյուսիս՝ Բարդուսի աջ ափին էր գտնվում Լուսոնք (Նուսունգ) գյուղը: Մինչև գետի ուղղությունը հյուսիս-արևմուտքից հյուսիս-արևելք փոխվելը, Բարդուսին աջից միանում են նույնանուն գյուղերի միջով հոսող Ջիլոտ, Ջանջխուր (վրացական աղբյուրներում՝ Չանուչուրի) առվակները, իսկ ձախից՝ Փորշունի, Ջաղրագոմ, Ոսկիհատ և Ակ-Քիլիսե (սպիտակ եկեղեցի) առվակները:[3] Ակ-Քիլիսե գյուղից մի փոքր հյուսիս Բարդուսին է միանում նրա խոշորագույն վտակը՝ Դումբուլին, որը սկիզբ է առնում Դելիքլի լեռան Օյուք-Թաշ ապառաժից: Դումբուլին անցնում է Չաթախ, Կաջարթի, Սուլեյման, Նիգիջուկ, Ուռուք, Ջանիկ, Ջրոտ, Դաղեր (Դագիր), Դարբանք (Թերփենք) գյուղերի միջով և Ճաթակ բերդի մոտ թափվում է Բարդուսի մեջ:[4] Ճաթակ բերդից հյուսիս գտնվում էր Աբուսար լեռը, որի ստորոտին՝ Օլթուց 19 կմ արևելք, ընկած էր Փերթուս (Բերդուս) գյուղը: Վերջինիս մոտ պահպանվում են Մզեճապուկ աթաբեկի օրոք (XVI դարի սկիզբ) կառուցված ս.Հովհաննես եկեղեցու մնացորդները:[5] XIX դարի երկրորդ կեսին, ռուսական տիրապետության հաստատումից հետո, այնտեղ բնակվում էին 50 տուն հայեր, որոնք գաղթել էին Օսմանյան կայսրությունից:[6] Փերթուսից հյուսիս ընկած էր Գոտիք գյուղը, որի մոտից սկիզբ առնող առվակը միանում է Փերթուսի առվակին և թափվում Բարդուսի մեջ: Գրեթե նույն հատվածում՝ աջ կողմից գետի մեջ էր թափվում Փոսիք առվակը, որն անցնում էր համանուն գյուղի միջով: Վերջինս գտնվում էր Օլթի քաղաքից 38 վերստ* հեռավորության վրա: Փոսիքից հյուսիս-արևելք ընկած էին Դիլքան-Գոմ, Թոփրակ, էգրիս, էրգումեկ, Որդուլի և Մքնդեր գյուղերը, որոնք գտնվում են նույնանուն առվակների ափերին: Մքնդեր գյուղից հյուսիս ընկած տարածքներն արդեն պատկանում էին Փանակի լիվայի նույնանուն նահիեին (Ագրակ և Ագիտկոմ գյուղերը):

[1] ՀՀԻԱՀ, ֆ. 415, օո. 1, դ. 21, լ. 15.
[2] ՀՀԻԱՀ, ֆ. 1438, օո. 1, դ. 116, լ. 3 .
[3] Ատրպետ, նշվ. աշխ., էջ 183-184:
[4] Նույն տեղում, էջ 184-185:
[5] Տե՛ս Գյուրջիստանի վილայեթի դոդո դավթարո, ֆ. 3, գգ. 597, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Ե., 1986, հ. 1, էջ 672:
[6] Տե՛ս Գյուրջիստանի վիլայեթի դոդո դավթարո, ֆ. 3, գգ. 597,
* 1 վերստը հավասար է 1066 մ:

Բարդուսի նահիեից արևմուտք տեղագրված էին Օլթու լիվայի 2 նահիեները՝ Ստվերոտը և Արևահայացը: Աղբյուրներում առկա տվյալները տեղագրելով՝ խառնաշփոթ մի պատկեր է ստացվում: Ուստի անճշտություններից խուսափելու նպատակով, առավել ճիշտ ենք համարում այս 2 նահիեների բնակավայրերի տեղագրությունը կատարել միասին՝ հաշվի առնելով բնակավայրերի աշխարհագրական դիրքը: Արևահայաց և Ստվերոտ նահիեները տեղագրվում են Օլթի գետի միջին հոսանքի շրջանում՝ իրենց մեջ ընդգրկելով Օլթի գետի ձախակողմյան և աջակողմյան մեծ և փոքր վտակների ավազանները ևս: Հյուսիսում սրանց սահմանը հասնում էր մինչև Փանակ գետի և Օլթի գետի միախառնման վայրը:

Մամրվանի լիվայի հետ սահմանից հյուսիս ընկած էր Տաճարիկ գյուղը, որին հյուսիս-արևմուտքից սահմանակից էր գավառի կենտրոն Օլթին: Օլթուց 5 կմ արևմուտք՝ նույնանուն առվակների ափերին էին գտնվում Կալեբողազ և Զարթենիս (Զարդանես) գյուղերը, որոնցից հյուսիս-արևմուտք ընկած էր Փեստափոր գյուղը: Օլթուց հյուսիս-արևելք՝ գետի աջակողմյան օժանդակների շրջանում, որոնք զուգահեռաբար հաջորդում էին իրար, տեղագրված էին Բաղբաջըք, Բոջուքլի, Դարբենք և Ավտոստ գյուղերը: Նրանցից մի փոքր հեռու՝ Օլթուց 12 վերստ հեռավորության վրա էր գտնվում Ցրտածոր (Սեգդասոր) գյուղը, որից 5 կմ հյուսիս-արևելք ընկած էր Սամիրդոն (Ջմառատուն) գյուղը,[1] իսկ մի փոքր արևելք՝ էրուկ գյուղը, որտեղ 1878 թ. տվյալներով 81 բնակչից 71-ը հայ էին:[2] Փանակի լիվայի հետ սահմանի մոտ էր գտնվում Դովլիա գյուղը:

Օլթուց 7-8 կմ հյուսիս-արևմուտք ընկած էին Ջուջուրիս և Թամրուտ (Թամռոտ) գյուղերը: Թամռոտ անունով մեկ այլ գյուղ գտնվում էր սրանցից մոտ 10 կմ արևմուտք: Ջուջուրիսից հյուսիս ընկած էին Սեխծոր և Սեխջիք գյուղերը: Սրանցից հյուսիս-արևելք էին գտնվում Լուսփակը (Լեսփեք), Իսածորը և Ջարմոգը: Ջարմոգը բաժանում էր Օլթի գետի ավազանը Լուսփակ, Կեոչեք և Հոգամ առուների ավազաններից: Ջարմոգի ավերակների մոտ էին գտնվում Փերիգք, Դիցգոմ և Փերնիկ գյուղերը:[3]

Վերոհիշյալ գյուղերից արևմուտք Անծավի (Անզով) նահիեն էր: Այն զբաղեցնում է Օլթու լիվայի հյուսիս-արևմտյան հատվածը: Նահիեի անունը կապված էր նախ և առաջ կլիմայական պայմանների

[1] Տե՛ս Գյուրջիստանի վիլայեթի դոդո դավթարո, ֆ. 3, գգ. 596, 602.
[2] ՀՀԻԱՀ, ֆ. 415, օո. 1, դ. 21, լ. 15, 20.
[3] Ատրպետ, նշվ. աշխ., էջ 183-184:

հետ: Հայտնի է, որ Անծավի ձորը սաստիկ տոթ է և շոգ: Դա նաև բնակչության նոսր լինելու պատճառներից գլխավորն էր:

Այստեղ ևս բնակավայրերը հիմնականում տեղաբաշխված էին տափարակ վայրերում, առվակների ափերին, որոնք մեծամասամբ կրում էին բնակավայրերի անունները: Նահիեի հյուսիս-արևելքում՝ Չարմոգից ոչ շատ հեռու, գտնվում էին Խորմիկ, Մուկյավ և Չարզով գյուղերը: Նրանցից արևելք գտնվող Քարնավաս գյուղը պատկանում էր Փանակի լիվային: Չարզովից արևմուտք ընկած էր Հոգամ գյուղը: Սրանից հարավ Տիրիդենց և Կամձոր գյուղերն էին, որոնց հարևանությամբ էր գտնվում Կիչիկ (Քյուչուկ, թուրքերեն՝ փոքր) գյուղը, որը հեռու էր Օլթուց 26 վերստ:[1] Հոգամից արևմուտք՝ Օլթի գետի ափին, Թավուսկեր և Օլթի գետերի միախառնման վայրից հարավ գտնվում էր Խորձոր գյուղը: Խորձորից հարավ Կինեպոսն էր, որին հարավից սահմանակից էին Իծաձոր, Կելգիր (Քելգեր) և Անձավ գյուղերը: Սրանցից Կելգիրն Օլթուց 23 վերստ հեռավորության վրա էր գտնվում,[2] իսկ մյուս երկուսը՝ մի փոքր ավելի հեռու: Կելգիրից հարավ-արևելք էրուկ (Անձավի էրուկ) և Գոմէգրեկ (Գոմագրակ) գյուղերն էին: Սրանցից մոտ 10 կմ արևմուտք գտնվում էր Կոտիք գյուղը, որն Օլթուց 25 վերստ հեռավորության վրա էր:[3] Կոտիքից արևմուտք՝ Թորթումի լիվայի հարևանությամբ էր գտնվում Խուվախ գյուղը (Խուվախբերդ): Գյուղով էր անցնում Ոսխիանի առվակը, որը սկիզբ առնելով Լեանշի լեռներից՝ անցնում էր Խուվախ գյուղով, ապա ընդունում էր համանուն գյուղերից իջնող Մեշենեք և Ագդուդ յայլա առվակները: Հետո այն անցնում է Ոսխիան գյուղով, որից հյուսիս-արևելք Ասփեք (Ասփակ) գյուղն էր: Անձավի նահիեի հյուսիսային բնակավայրը Դիվաձոր գյուղն էր, որը գտնվում էր Օլթի գետից մի փոքր հեռու՝ համանուն առվակի ափին:

Չնայած այն իրողությանը, որ XIX դարի ընթացքում Օլթու գավառում բնակչության մեծ տեղաշարժեր եղան, մասնավորապես եկան գաղթականներ Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններից, այսուհանդերձ XVII-XVIII դարերի բռնի մահմեդականացումը և ժողովրդագրական տեղաշարժերը թողեցին իրենց կնիքը գավառի էթնոկրոնական պատկերի վրա: 1878 թ. գավառի բնակչության մեծագույն մասը արդեն կազմում էին մահմեդականները:[4]

[1] Տե՛ս გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, წ. 3, გვ. 597.
[2] Նույն տեղում, էջ 598:
[3] Նույն տեղում, էջ 599:
[4] ЦГИАГ, ф. 1438, оп. 1, д.323.

АРКАДИЙ АКОПОВ
ИИ НАН РА

ТОПОГРАФИЯ ПОСЕЛЕНИЙ ОЛТИНСКОГО ОКРУГА В ПЕРИОД ТУРЕЦКОГО ВЛАДЫЧЕСТВА (XVI В. – 1878 Г.)

РЕЗЮМЕ

Во второй половине XVI века, после захвата княжества Самцхе-саатабаго Османской империей, Олтинский регион исторической области Армении – Тайк вошел в состав Чилдырского вилайета - в статусе отдельной ливы (санджак). В конце XVI века Олтинская лива включала шесть районов (Бардусский, Андзавский, Солнечный, Тенистый, Кетхудский и Чануцурский) и 90 населенных пунктов, которые располоагались в районе реки Олти и ее притоков (Андзав, Сиври-чай, Бардусь). В XVII-XVIII вв. в связи с османским тяжелым бременем и безконечными войнами, число населения и населенных пунктов Олтинской ливы сократилось почти вдвое.

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԿԱԼՎԱԾԱՏԻՐԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՌՈՒ ԳԱՎԱՌՈՒՄ (XVIII Դ. ՎԵՐՋ-XIX Դ. ՍԿԻԶԲ)

Մեծ Հայքի Գուգարաց աշխարհի Ծոբոփոր, Բողնոփոր, Ջորոփոր, Տաշիր և այլ գավառներում ուշ միջնադարում դեռևս շարունակում էին գոյատևել հայ բազմաթիվ ազնվականական տոհմեր, որոնք ավանդաբար կոչվում էին «հայկական օրենքի վրաց ազնվականներ»[1]:

Զաքարյան իշխանության անկումից հետո (XIII դ.) Լոռու պղնձահանքերը մնացին Վրաստանի կազմում: Լոռու տարբեր շրջանների տերերն էին Զաքարյանների շառավիղները, մասնավորապես Սանահինում՝ տիրում էին Արղության-Երկայնաբազուկ իշխանները: Միայն Սանահինի վանքի արձանագրություններում XiV-XVII դդ. հիշատակվում են հայ իշխաններ Արղութը, վերջինիս թոռ Բարսեղ արքեպիսկոպոսը, Բեբեկը և նրա թոռ Սարգիս արքեպիսկոպոսը և այլք[2]: Պղնձահանքի[3] տերերն էին Մելիքով հայ իշխանները[4]: Ալավերդու և Ախթալայի պղնձահանքերը վրաց արքունիքի ուշադրության կենտրոնում էին և հաճախակի ենթարկվում էին վրաց ազնվականության կամայականություններին:

XVIII դ. Վրաստանի տիրապետության տակ հայտնված Լոռու գավառի առանձին շրջաններ կամ գյուղեր շարունակում էին մնալ կամ վանքապատկան՝ պատկանելով Օձունի, Սանահինի կամ Հաղպատի վանքերին, կամ էլ կալվածատիրական՝ լինելով տոհմիկ հայ իշխանների ու մելիքների կալվածքներ (Լորիս-Մելիքյան, Արղության, Քալանթարյան, Շահվերդյան և այլն):

Արդվիում (հնում կոչվել է Մելիքգյուղ) տիրում էին Լոռու-Մելիքյան և Քալանթարյան ազնվականական տոհմերը, որոնք բաղկացած էին 11 գերդաստանից: Այս տոհմերը սերում էին նույն գերդաստանից, որը երկար ժամանակ կառավարել էր Լոռու բնակիչներին

[1] Զավրիև Ս., Միրզոյան Ս., Զավարյան-Զավրիևների տոհմագրությունը, «Վեմ», հուլիս-սեպտեմբեր, թիվ 2, 2009, էջ 31:
[2] Հովհաննես Դրիմեցի, Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, Վիեննա, 1965, էջ 161-163:
[3] Միջնադարյան Պղնձահանքը կամ Ախթալան գտնվում էր Լոռու հյուսիս-արևելյան մասում: Պատմական աղբյուրներում հայտնի է նաև Ագարակ անունով:
[4] Բարխուդարյան Վ., Մելքոնյան Ա., Մաթևոսյան Ռ., Չորեքյան Պ., Պղնձահանքը շահագործել են հայ վարպետները, «Դեբեդ», 1999, 16-ը ապրիլի, N 6:

որպես մելիք: Գյուղը բաժանված էր 3 թաղի՝ Վիշապաձոր, Տայինանց թաղ և Քալանթարյան թաղ: XIX դ. ընթացքում Լոռու-Մելիքյաններին են պատկանել նաև Հագվի, Աքորի, Հովհաննաձոր (Օվանդարա), Ամոջ և այլ գյուղեր: Որնակը (Ակներ) եղել է Սանահինի վանքի, որոշ ժամանակ նաև՝ Լոռու-Մելիքյանների սեփականությունը[1]: Իգահատը (Այգեհատ) կառավարվել է Շահվերդյան ազնվականական տոհմի կողմից[2]:

XVIII դ. սկզբին Զավարաշվիլի կամ Զավրաշվիլի տոհմի անդամները վրացական գույքային փաստաթղթերում բազմիցս հիշատակվում են որպես տեղի հողատերեր: Նրանց էին պատկանում Մեծ ու Փոքր Գիլագդակները, Քարատակ, Խնձորկուտ, Դամբլկուտ, Լուրժի վանք, հետագայում՝ ավելի հարավ գտնվող Խոր (Խորակերտ), Ջելիա (Ջելիզա), Ավազան և Մարց հայկական գյուղերը: Դարավերջին նրանց մի ճյուղը հաստատվում է Օձուն, Այգեհատ (Իգահատ), Արդվի և Մղարթ գյուղերում[3]:

XVIII դ. ընթացքում Լոռիում աստիճանաբար սկսեցին կալվածատերեր դառնալ նաև վրացի ազնվականները:

XVIII դ. II կեսին, երբ փոքր-ինչ աշխուժացավ երկրի տնտեսական կյանքը, վրաց թագավոր Հերակլ II-ի (1744-1798 թթ.) պահանջով Օսմանյան Թուրքիայից Վրաստան հրավիրվեցին հույն հանքափորներ[4]: Վրաց պալատական դիվանադպիր Օման Խերխերուլիձեն գրում է. «1772 թ. ... (Իրակլի թագավորը) շատ հետախուզություններ կատարեց և աշխատանք թափեց, որպեսզի իր երկրում գտնի ոսկու և արծաթի հանքեր, և գտավ այն Սոմխիթի (Հայաստան-Հ. Ա.) երկրում՝ Ախտալայում, որ է *հայրենական (ժառանգությունն) Սոմխիթի մելիք ... իշխանների* (ընդգծումը-Հ. Ա.): Եվ բերել տվեց Հունաստանից հույների մի փոքրաթիվ խումբ, որոնք տեղյակ էին հանքային ոսկի և արծաթ հալելու գործին: Ապա սկսեցին հանքագործությունը, որից (Իրակլի թագավորը) շատ օգուտ ստացավ»[5]: Հույները 1755 թ. Երապիզոնի նահանգի Գյումուշխանե գավառից եկան և հաստատվեցին Ախթալայում:

XVIII դ 30-ական թթ. մինչև XIX դ. սկիզբը երկրամասում ռազ-

[1] «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1880, 13 սեպտեմբերի, N 70:
[2] Նույն տեղում, 1873, 10 մարտի, N 9:
[3] Զավրիև Ս., Միրզոյան Ս., նշվ. աշխ., «Վեմ», հուլիս-սեպտեմբեր, թիվ 2, 2009, էջ 32, 42:
[4] Пиралов А., Краткий очерк кустарных промыслов Кавказа, С. Петербург, 1913, с. 83.
[5] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ե., 1955, հ. 9, էջ 177:

մաքաղաքական իրադրության հետևանքով ավերվում են Լոռու բազմաթիվ բնակավայրեր, ազնվականներից շատերը լքում են տարածքը:

Լոռու՝ վերջին ժամանակաշրջաններում ասպատակություններ ու ավերածությունների ենթարկվելու, բնակչության թվաքանակի մեծ չափերի կորուստներ կրելու հետ էր կապված տարածքը վրաց թագավորի կողմից հնդկահայ մեծահարուստ Շահամիրյանների տոհմին նվիրաբերելը: Լոռին Վրաստանի հարավային սահմանն էր, ուստի անհրաժեշտ էր վերականգնել տարածքի տնտեսական երբեմնի կայուն իրավիճակը: Հերակլ II-ը 1775 թ. հրովարտակով Շահամիր Շահամիրյանին է նվիրում Լոռու գավառը[1]:

Նման մեծահարուստին Վրաստան բերելը ձեռնտու էր Հերակլ արքային, քանի որ Շահամիրյանը մշտապես դրամական նվիրատվություններ էր անում վրացական արքունիքին: «1789 թ. Շամիր աղան կրկին նվերներ ու նշանակալի դրամական գումար է առաքում Հերակլին..., ընդ որում նա ցանկություն է հայտնել անձամբ ընտանիքով ու հազար հնդիկ ստրուկներով փոխադրվել Հնդկաստանից Հերակլի թագավորություն, որտեղ պետք է գործարանային ու ֆաբրիկային գործունեություն ծավալեր, բացեր շաքարի գործարաններ...»[2]:

Ըստ գահաժառանգ Գեորգիին 1790 թ. նոյեմբերի 16-ի հատուկ հրովարտակի՝ Լոռին համարվելու էր Շահամիրյանների հավերժ ժառանգական տիրույթը: Նվիրաբերված երկրի սահմաններն էին՝ արևելքից՝ Շամլուղի, արևմուտքից՝ Կարախաչի, հարավից՝ Դվալի և հյուսիսից՝ Լալվարի լեռները:

Սակայն Շահամիրյանի ժառանգները չեկան տիրանալու իրենց սեփականությանը:

Այսպիսով՝ Հնդկաստանի հայ մեծահարուստն անմասն չէր Հայաստանի ազատագրության գործին ծառայելուն: Նրա ուշադրության կենտրոնում էին հատկապես Լոռու գավառը, Երևանի նահանգը և այլ տարածքներ, որտեղ կարելի էր զարգացնել բամբակի, շաքարեղեգի, լեղակի, ղահվեի (սուրճի-Հ. Ա.) մշակությունը, գործարաններ բացել և հայրենիքը տնտեսապես զարգացնել[1]: Սակայն գործնական հետևանք ունեցավ Շահամիրյանի միայն մեկ ցանկությունը՝ սեփական կալվածք ունենալը Լոռիում:

1783 թ. Ռուսական կայսրության և վրաց թագավոր Հերակլ II-ի միջև կնքված Գեորգիևյան պայմանագրի հատուկ հոդվածով հավաստվում էր Վրաստանի ազնվականության՝ թավադների ու ազնաուրների իրավունքների ճանաչումն իբրև ռուսաստանյան կայսրության տոհմական ազնվականներ[2]:

1790-ական թթ. վերջերին Արցախի մելիքներից[3] Մելիք-Միքել Գուրգենյանն իր գերդաստանով տեղափոխվում է Ղազախ, նրա ազգակիցների մի ճյուղը հաստատվում է Շամշուլդեում, ապա՝ փոխադրվում Թիֆլիս և կոչվում Խանդամյան: Այս տոհմից Երվանդեսը (Վանես, Էվանես) իր խաչեղբայր իշխան Զաքարիա Արղությանցի հրավերով Թիֆլիսից տեղափոխվում է Մադան՝ նշանակվելով պղնձահանքերի աշխատանքների վերահսկիչ և որպես պարգև ստանում է այգի Սանահնածորում, տնատեղ և կալվածք՝ Սանահին գյուղում[4]:

1795 թ. գարնանը պարսից Աղա Մահմադ խանի արշավանքից տուժում են նաև Հաղպատ գյուղն ու վանքը: Գյուղը մոտավորապես 1796 թ. վրաց թագավորի կողմից որպես պարգև տրվում է վրացի իշխան Բարաթովներին՝ այնտեղ բնակություն հաստատելու պայմանով[5]: Ռուսաստանին անցնելու նախօրյակին Լոռիում կալվածքներ ունեին վրաց ազնվականներ Օրբելիանիները և Բագրատիոն Մուխրանսկին[6]:

---

[1] Չոբանյան Պ., Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին (այսուհետև՝ Վրացական ուղեգրությունները ...), Ե., 1981, էջ 81, Տեր-Ավետիսյան Ս., Նյութեր հնդկաստանի հայ գաղթօջախների պատմության համար, Երևանի պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 13, 1940, էջ 83:

[2] Չոբանյան Պ., Նշվ.աշխ., էջ 86:

[1] Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 479:

[2] Զավրիև Ս., Միրզոյան Ս., նշվ. աշխ., «Վեմ», հուլիս-սեպտեմբեր, թիվ 2, 2009, էջ 32:

[3] Վրաց թագավոր Գեորգի XII-ի 1800 թ. փետրվարի 29-ի հրամանագրով Արցախի մելիք Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդն ստացավ Լոռու գավառը՝ ներկա սահմաններով, այսինքն՝ Դեբեդ գետի կիրճից մինչև Օձուն գյուղը, Շնող և Դսեղ գյուղերը, Լոռի ամրոցն իր հարակից շրջաններով և Բորչալուի մի մասը: Մելիք-Բեգլարյան Մելիք-Ֆրեյդունը ստացավ Բորչալուի մնացած մասը, Օձունն ու Ղազախը՝ Աղջա Կալա բերդով:

[4] Ոստոմ-բէկ Երզնկեանց, Ազգաբանութիւն տոհմին Երուանդեանց ի Սանահին, Թիֆլիս, 1896, էջ 9-10:

[5] Երիցեան Ալ., Ամենայն հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 215:

[6] Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., Մեծ Ղարաքիլիսա, Ե., հ. 1, 2002, էջ 140

Վրաց Գեորգի XII թագավորի (1798-1800 թթ.) օրոք մոուրավների պաշտոն ունեցած իշխանների և ազնվականների ցուցակում Բորչալուում և Շնողում հիշատակվում է իշխան Դավիթ Աբաշիձեն[1]:

1801 թ. Վրաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո, Լոռու վերաբնակեցման հարցը ռուսական կառավարության համար դառնում է առաջնահերթ խնդիր՝ կապված հանքերը բանվորական ուժով ապահովելու հետ: Քանի որ պղնձահանքերն ու դրանց շրջակա հողերը հիմնականում կալվածատիրական էին, իսկ այնտեղ ապրող բնակչությունը հարկատու էր իր կալվածատիրոջը կամ վանքին, եթե վանքապատկան էր, հետևաբար ռուսական կառավարությունը սկսեց գնման միջոցով հողերը ձեռք բերել կալվածատերերից: Այդ քաղաքականության արդյունքում Լոռու հողերի մի մասն աստիճանաբար վերածվում էր պետականի: Ընդ որում, գնված հողերում առանց ռուսական պաշտոնյաների և գործարանային գերատեսչությունների թույլ-տվության, ոչ ոք իրավունք չուներ բնակվելու:

Լոռիում հաստատվելու՝ ռուս ազնվականների ցանկության դեպքում կառավարությունը պետք է վերանայեր յուրաքանչյուր ազնվականի իրավունքները, և ովքեր ունենային վրաց թագավորներից ազնվականության հաստատագիր, նրանք կհամարվեին հավասար տեղացի ազնվականներին[2]: Ի դեպ, Ռուսաստանի տիրապետության հաստատմամբ աստիճանաբար ակնհայտ է դառնում հայ ազնվականների կողմից իրենց ազգանունների վերջնամասը «ով» կամ «իև» բառակապակցություններով փոխարինելու միտումը:

Ցավոք, հայտնի չէ, թե ռուսական կողմն ի՞նչ պայմաններ կամ գումարային ի՞նչ չափորոշիչ էր առաջարկում հայ կալվածատերերին: Կամ արդյո՞ք տարածքը դարձել էր պետական հող, և կալվածատերերի ու նրանց հպատակների տեղափոխությունն այլ բնակավայրեր կամավո՞ր բնույթ էր կրել: Նման դեպքեր ռուս հրամանատարության կամ լեռնային վարչության զեկուցագրերում ու նամակներում չեն արձանագրվել: Հայտնի են նմանատիպ մի քանի փաստեր: Բերենք օրինակ: 1803 թ. Կովկասի լեռնային վարչության պետ կոմս Ա. Մուսին-Պուշկինը պայմանագիր է կնքում Լոռու կալվածատերեր Արղությանների և Մելիքովների հետ, որպեսզի նրանք հանքավայրերն ու շրջակա հողամասերը տրամադրեին պետությանը՝

[1]Акты, собранные Кавказской археографической комиссией (այսուհետև՝ АКАК), т. 1, Тифлис., 1866, док. 157, с. 195.
[2] АКАК, т. 4, Тифлис., 1870, док. 252, с. 172.

հանքերը շահագործելու համար[1]:

Հաջորդ քայլը նախատեսում էր ձեռք բերված հողերը բնակեցնել միայն պետությանը հարկատու պետական բնակչությամբ: Այդ բնակչությունն առաջին հերթին ծառայելու էր որպես բանվորական ուժ՝ Ալավերդու և Ախթալայի պղնձահանքերի շահագործման համար: Կոմս Մուսին-Պուշկինը 1803 թ. մայիսի 9-ի զեկուցագրի մեջ մատնանշում է բանվորների ոչ բավարար քանակության փաստերը: Պղնձի արտադրությունը գնալով ընդլայնվում էր, իսկ աշխատող ձեռքերի պահանջը՝ մեծանում, ուստի կոմսը կառավարության ուշադրությունը հրավիրում է այդ հարցի վրա. «Քանի որ գործարանների համար մարդկանց կարիքը գնալով մեծանում է, ...արդյո՞ք նպատակահարմար չի լինի թույլատրել, որ Լոռու տարածքը, որը որոշ չափով, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ գրեթե հազիվ բնակեցված է, ...նախատեսվի բնակեցվել նոր եկածներով, ինչպես հույն, այնպես էլ հայ...: Այն պայմանները, ըստ որոնց կարող է իրականացվել բնակեցումը, ձեռք կբերվեն լեռնային վարչության և Վրաստանի գլխավոր կառավարչապետ գեներալ Պ. Ցիցիանովի փոխադարձ համաձայնությամբ»[2]: Բայց քանի որ Լոռու գավառը նվիրաբերվել էր Արցախի Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանին, ապա Մուսին-Պուշկինն առաջարկում է այդ հողի դիմաց վճարել նրա խնդրած 6000 ռուբլին, որից հետո ավելի հեշտ կլիներ լուծել տարածքի վերաբնակեցման հարցը[3]:

Լոռու իշխան Սողոմոն Արղության-Երկայնաբազուկը որպես փոխհատուցում խնդրում է տրամադրել այլ հող, ուր նա կբնակվեր իր գյուղացիներով: Պ. Ցիցիանովը 1804 թ. փետրվարի 24-ին Մուսին-Պուշկինին գրում է, որ ինքը չի կարող այդ առիթով տալ իր համաձայնությունը, քանի որ ազնվականի առաջարկած տարածքում (չի նշվում, թե՝ որ-Հ. Ա.) արդեն բնակություն են հաստատել մի քանի տուն թաթարներ, և իշխան Արղությանի վերաբնակեցումն այդտեղ կարող է նեղություն պատճառել ինչպես թաթարներին, այնպես էլ հետագայում այդտեղ վերաբնակվել ցանկացողներին: Այնուհետև առաջարկում է իշխանին որպես փոխհատուցում վճարել մշտական թոշակ՝ 350-400 ռուբլու չափով[4]:

Միաժամանակ նկատվում են կալվածատերերի կողմից

[1] Բարխուդարյան Վ., Մելքոնյան Ա., Մաթևոսյան Ռ., Չոբանյան Պ., նշվ. աշխ., «Գեղեդ», 1999, 16-ը ապրիլի, N 6:
[2] АКАК, т. 2, Тифлис., 1868, док. 383, с. 204.
[3] Նույն տեղում, док. 383, с. 205.
[4] Նույն տեղում, док. 187, с. 210.

նկրտումներ վանքապատկան հողերի նկատմամբ: XIX դ. սկզբին Հաղպատի վանքին էին պատկանում Շնող, Ճոճկան, Ախթալա, Որնակ և այլ գյուղեր, այգիներ, արոտավայրեր, Մադանի պղնձահանքը: Սակայն վանքի տնտեսությունը հետզհետե թուլանում էր, ինչից օգտվելով, որոշ գյուղեր զավթում է տեղի կալվածատեր իշխան Բարաթովը: 1815 թ. դրությամբ գյուղն իր բնակիչներով պատկանում էր կալվածատեր Պապունաբեկովներին, գյուղն իրենց սեփականություն են համարել նաև Բարաթյանները (Բարաթովներ) և Թիֆլիսի հայոց թեմը[1]: Հավանաբար այս դրդապատճառներից ելնելով, Ներսես արքեպիսկոպոսը 1815 թ. գրություն է հղում կառավարչապետ Ա. Երմոլովին՝ Հաղպատ գյուղն իր բնակիչներով Հաղպատի վանքին պատկանելու մասին[2]:

1820-ական թթ. Լոռու շրջանի շատ հողեր արդեն պետական էին, որոնց վրա ապրում էին Արևմտյան Հայաստանից և այլ վայրերից եկած հայեր ու թուրքեր[3]: 1820-1823 թթ. թուրք-պարսկական պատերազմը նպաստեց Արևմտյան Հայաստանից նոր վերաբնակեցումների: Ռուս հրամանատարությունը շարունակում էր վերահսկել այդ գործընթացները: Ավելի ակնառու են դառնում վերաբնակիչներին նախատեսված վայրերում՝ հատկապես պետական հողերում տեղավորելու միտումները: Արխիվային վավերագրերը հավաստում են, որ գնդապետ Լ. Սևարսամիձեին հանձնարարվել է Փամբակի և Շորագյալի բնակիչներով, Օսմանյան Թուրքիայից ու Պարսկաստանից եկածներով վերաբնակեցնել Լոռու տափաստանը[4]:

1821 թ. ապրիլին վրացական կառավարության Լեռնային էքսպեդիցիայի հաշվետվության մեջ արտացոլված է նաև Ալավերդու պղնձաձուլական գործարանի հանքարդյունաբերողների և հանքափորների խնդրանքը՝ ուղղված Լ.Սևարսամիձեին առ այն, որ նրանք բավարար քանակությամբ հող չունեին հողագործությամբ զբաղվելու համար, քանզի միայն հանքային աշխատանքներով չէին կարողանում բավարարել իրենց ընտանիքների կարիքները: Խնդրում էին տրամադրել Լոռու գավառում դեռևս Մուսին-Պուշկինի կողմից որպես պետական գնված ամայի գյուղերը, այդ թվում՝ Կոդես և Յաղդան՝ 329 մարդու բնակվելու համար: Սևարսամիձեն դիմումին պատասխանում է, որ այդ գյուղերը նոսր են բնակեցված, և 329 հոգու բնակվելու համար պայմաններ կստեղծվեն[1]:

1833 թ. ապրիլի 21-ին Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Կարբեցին (1762-1849 թթ.) Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ Գ. Ռոզենին գանգատվում է վրաց իշխաններից, որոնք աստիճանաբար սեփականացնում էին վանքի հողերը և տիրում էին ամբողջ գյուղին՝ եկեղեցուն թողնելով միայն 188 օրավար վարելահող[2]:

Չնայած այս ամենին՝ Լոռու հողատարածքների մի մասը շարունակում էր ավանդաբար համարվել հայ ազնվականության սեփականություն: Ճոճկան գյուղը XIX դ. վերջերին որպես կալվածք պատկանել է գեներալ Լորիս-Մելիքյանին և իշխան Լևոն Մելիքովին: Շահնազար և հարևան Շիշքափա, Սարչապետ գյուղերն ամբողջությամբ կալվածատիրական էին[3]: Շահնազարի հողատարածքները պատկանում էին Բորչալուի գավառի մեծահարուստ Մելիք-Շահնազարյանին: Սանահին գյուղի հողերի մի մասը XIX դ. վերջերին պատկանել է Արղության-Երկայնաբազուկների գերդաստանին, մի մասը՝ Սանահինի վանքին:

Այսպիսով՝ XVIII դ. վերջերին, ելնելով տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակից, Լոռու ազնվականները կորցնում են իրենց հողերի մի մասի նկատմամբ սեփականատիրական իրավունքները: Դրանց մի մասն անցնում է վրացի ազնվականների վերահսկողության տակ: XIX դ. սկզբին հիշյալ տարածքը՝ նրանց տիրապետության տակ անցնելուն զուգընթաց՝ հողատարածքների մի մասը դառնում է պետական:

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 27, վավ. 79, թթ. 1-2, վավ. 106, թթ. 1-11:
[2] Նույն տեղում, վավ. 58, թթ. 1-5:
[3] Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., Նշվ. աշխ., էջ 140
[4] Присоединение Восточной Армении к России, сборник документов, редактор Ц. П. Агаян, т. 2, Ереван, 1978, док. 62, с. 87.

[1] Նույն տեղում, с. 87-88.
[2] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 78, վավ. 41, թթ. 1-4:
[3] Լալայեան Ե., Բորչալուի գաւառ, Թիֆլիս, ա. թ., էջ 69:

АСМИК АМИРДЖАНЯН
ИИ НАН РА

ПОМЕЩИЧЬЕ ЗЕМЛЕВЛАДЕНИЕ В ГАВАРЕ ЛОРИ (КОНЕЦ XVIII В. – НАЧАЛО XIX В.)

РЕЗЮМЕ

В течение XVIII в. в Лори землевладение продолжало оставаться в руках местных армянских дворянских семей. Однако в составе Грузии и России они теряют свои права.

Неустойчивая политическая и социальная жизнь в Лори, а также конфессиональные гонения и угнетения коренного населения чужестранными завоевателями стали причиной того, что большинство лорийхских дворян было вынуждено оставить свою родину и поселиться в Грузии, точнее в Тифлисе.

В изучаемый период Лори, в числе других областей Южного - Кавказа, оказался в сфере внешнеполитических интересов Российской империи, а именно в центре внимания русского командования. По мере приобретения новых владений в Закавказье, для защиты новых завоеванных земель и для использования природных богатств этого края русское правительство нуждалось в преданном государственном населении. Стремясь заселить Лорийскую область государственным населением правительство начало покупку дворянских земель. В результате такой политики часть Лорийских земель превращалась в государственную.

ՍԱՆՅԱ ՆԱԶԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

Կ.ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1860-1863 ԹԹ.

XIX դ. առաջին կեսին Կ.Պոլսում աստիճանաբար աշխուժանում էին հասարակական-քաղաքական շարժումները: Օգտվելով 1839 թ. թանզիմաթից՝ հայ աշխատավորները և առաջին հերթին արհեստավորները (էսնաֆները) պայքար են սկսում ազգային կրթական հաստատությունների կառավարմանը մասնակցելու համար: Պայքարն ուղղվում է հիմնականում հայ ամիրաների ու բարձրաստիճան հոգևորականների դեմ, ովքեր մինչև 1840-ական թթ. միանձնյա տնօրինում էին պոլսահայ գաղթօջախի ներքին կյանքը: Ամիրաներն առաջադրում և թուրքական սուլթանների միջնորդությամբ քմահաճորեն հաստատել կամ հեռացնել էին տալիս Կ.Պոլսի հայոց պատրիարքին, լուծում էին կրոնադավանաբանական բնույթի վեճերը, վճռում գավառին հուզող հարցերը, բացում և փակում էին դպրոցները: Ընդարձակ իրավունքներ ունեին նաև Կ.Պոլսի հայոց պատրիարքները: Ամիրաների ու պատրիարքների լայն իրավունքները ծանր էին նստում հատկապես գավառներում ապրող արևմտահայության վրա, ովքեր ենթարկվում էին ոչ միայն թուրքական իշխանությունների հալածանքներին ու հարստահարություններին, այլև եկեղեցական թեմերի առաջնորդների, հայ աղաների չարաշահումներին, բռնություններին: Բայց շուտով սահմանափակվում են նաև ամիրաների և բարձրաստիճան հոգևորականների իրավունքները:

1844 թ. ստեղծվում է Կ.Պոլսի հայ համայնքի ներքին կյանքը կարգավորող մարմինը՝ Ազգային ժողովը: 1847 թ. Ազգային ժողովը վերակազմվում է 2՝ Հոգևոր և Գերագույն ժողովների, որոնց անդամներն ընտրվում են 1847 թ. մայիսի 9-ին Կ. Պոլսի Մայր եկեղեցում: Հոգևոր ժողովը (14 եկեղեցական) զբաղվելու էր կրոնական գործերով, իսկ Գերագույն ժողովը (20 անդամ, որից 10-ը ամիրաներ էին, 10-ը՝ արհեստավորներ)՝ քաղաքական խնդիրներով: Ատենապետերի և ատենադպիրների ընտրության մասին տեղեկություններ չկան: Միայն հայտնի է, որ ամիրաներից Հ. Կրճիկյանով, Մեծ եպարքոս (վեզիր) Ռեշիդ փաշայի օգնականն էր դիվանագիտական գործուղումների ժամանակ, հանձնվել էր «հատուկ և գործադիր» պաշտոն՝ «լօղոֆեթ» անունով, որը պետք է միջնորդ լիներ կառավարության հետ հարաբերություններում, վարեր ժողովների դիվան-

ների աշխատանքները և այլն[1]: Սուլթան Աբդուլ Մեջիդի՝ մայիսի 20-ի հրովարտակով վավերացված, արհեստավորներից ու ամիրաներից կազմված, պատրիարքի նախագահությամբ գործող այս երկու ժողովները նոր երևույթ էին արևմտահայերի կյանքում: Դրանք հետագայում դառնալու էին երկարատև պայքարի գնով ձեռք բերվելիք ապագա Սահմանադրության հիմնաքարերը: Շուտով Գերագույն խորհրդի որոշմամբ ստեղծվում են նաև օժանդակ մարմիններ՝ Ուսումնական Խորհուրդ, ապա Տնտեսական և Դատաստանական ժողովներ: Այս բոլոր մարմիններն իրենց գործունեությունը շարունակում են մինչև 1860 թ.՝ Կ.Պոլսի Ազգային Ընդհանուր ժողովի կողմից Սահմանադրության ընդունումը:

1850-1860-ական թթ. նոր թափ է ստանում արևմտահայության քաղաքական պայքարը՝ «սահմանադրական պայքար» անվան տակ, որն սկսվելով 1854 թ.՝ տարբեր ուժգնությամբ և ընդմիջումներով շարունակվում է մինչև 1863 թ.: Պայքարի գլուխ են կանգնում Եվրոպայում կրթություն ստացած, լուսավորական գաղափարներով տոգորված արևմտահայ մտավորականներ՝ Գրիգոր Օտյանը, Սերվիչեն (Սերովբե Վիչենյան), Նիկողայոս Պալյանը, Նահապետ Ռուսինյանը և ուրիշներ: Նրանք 1854 թ. կազմում են կանոնադրության մի նախագիծ և այն ներկայացնում Ազգային ժողովին: Վերջինս, ցավոք, ամենևին չէր շտապում քննարկել կամ հաստատել նախագիծը: Այն երկու տարի մատնվում է անուշադրության:

Շուտով ստեղծվում է սահմանադրական նոր հանձնաժողով, որը շուրջ մեկ տարի աշխատելուց հետո՝ 1857 թ. մարտի 22-ին Հայոց պատրիարքարան է ներկայացնում սահմանադրության նախագծի նոր տարբերակը, բայց այն ևս մերժվում է:

Մի հանձնաժողովին փոխարինում էր մյուսը և փաստորեն ապարդյուն աշխատանք կատարում: 1859 թ. ստեղծված նոր հանձնաժողովը՝ կազմված հոգևոր 5 և աշխարհիկ 14 անդամներից, սկսում է աշխատանքները: Այդ ընթացքում արդեն հասցրել էր ձևավորվել հակառակ ճակատը՝ հակասահմանադրականը, որն ակտիվ պայքար էր ծավալում սահմանադրության ընդունումը տապալելու համար: Սահմանադրության կողմնակիցների և հակառակորդների պայքարը ընդգրկել էր ողջ արևմտահայությանը՝ նրան բաժանելով երկու ճամբարի: Ծավալված պայքարին մասնակցում էին ժամանակի թերթերը («Մեղու», «Ծաղիկ»), հասարակական-քաղաքական նշանավոր գործիչները (Գարեգին Սրվանձտյան, Հարություն Սվաճյան և ուրիշներ): Վերջիններիս թվում էր մեծ հայրենասեր Սկրտիչ Խրիմյանը, ով ամեն կերպ քաջալերում էր սահմանադրականներին, միաժամանակ իր «Արծվի Վասպուրական» հանդեսի և տարբեր հոդվածների միջոցով ընթերցողներին ծանոթացնում էր Սահմանադրության սկզբունքներին, Ազգային ժողովի կառուցվածքին[1]:

Չնայած հակասահմանադրականների համառ դիմադրությանը՝ այնուամենայնիվ սահմանադրականներին հաջողվում է ստիպել Սարգիս Գոյումճյան պատրիարքին հաստատելու փաստաթուղթը:

1860 թ. մայիսի 24-ին գումարված Ազգային ժողովը միաձայն ընդունում է Սահմանադրությունը: Նույն օրը դադարեցվում է Հոգևոր և Գերագույն ժողովների գործունեությունը: Ընտրվում են ժամանակավոր ժողովներ՝ Կրոնական (7 անդամ) և Քաղաքական (12 անդամ), որոնք մեծ աշխատանք են կատարում ընտրությունները կազմակերպելու համար: Ժամանակավոր այս մարմինների աշխատանքը տևում է ընդամենը երեք ամիս:

1860 թ. Սահմանադրության հիման վրա ընտրված Ազգային Ընդհանուր ժողովի առաջին նիստը հրավիրվում է նույն թվականի օգոստոսի 25-ին, Ազգային պատրիարքարանի մեծ սրահում, Սարգիս պատրիարքի նախագահությամբ: Ազգային ժողովը գործնականում աշխատում է 1860-1862 թթ. (ընդմիջումներով) և իր գործունեությունը վերսկսում է 1863 թ., երբ սուլթանական կառավարության կողմից հաստատվում է Միքայել Նալբանդյանի բնորոշմամբ՝ «թլփատված» Սահմանադրությունը, որի մեջ բացակայում էին ժողովրդավարական, առաջադիմական հոդվածները[2]: Այս ընթացքում հրավիրված նիստերի օրակարգերում քննարկվել են ամենատարբեր բնույթի հարցեր՝ Սահմանադրությունը մայրաքաղաքում և գավառներում գործադրելուն, Երուսաղեմի պատրիարքությանը, լրագրերին և այլն:

Առաջին նիստին մասնակցում էին ընտրված 120 երեսփոխաններ և 60 «անդամակիցներ»: 1860 թ. Սահմանադրության 9-րդ հոդվածի համաձայն՝ անդամակից էին համարվում Կրոնական, Քաղաքական ժողովների, խորհուրդների անդամները, ինչպես նաև ազգի ու տերության կողմից ճանաչված մարդիկ՝ եպիսկոպոսներ, բժիշկներ, ուսուցիչներ, լրագրապետեր և այլն:

[1] Օրմանյան Մ., Ազգապատում, էջմիածին, 2001, հ. Գ, էջ 4398:

[1] Կոստանդյան Է., Սկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2008, էջ 104:

[2] Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Ե., 1955, էջ 347:

Սկզբում ելույթ է ունենում Քաղաքական ժողովի ատենապետ Մկրտիչ Աղաթոնը, խոսում է սահմանադրության ընդունման, նրա դերի մասին, ապա ներկայացնում է առժամանակյա Քաղաքական ժողովի եռամսյա գործունեության հաշվետվությունը[1], որն ընդունվում է գոհունակությամբ: Առաջին նիստում ընտրվում են Դիվանի, ապա Քաղաքական ժողովի 20 և Կրոնական ժողովի 14 անդամները[2]: Արդեն հաջորդ նիստում (1860 թ. սեպտեմբերի 8-ին) ներկայացվում են Քաղաքական ժողովի հինգ անդամների հրաժարականի նամակները[3], հիմնավորված պատճառաբանություններով, որոնք ընդունվում են Ազգային ժողովի կողմից: Նշենք, որ այս վարքագիծը շարունակվում է Ազգային ժողովի գործունեության ամբողջ ընթացքում: Ցավալի մյուս իրողությունն այն էր, որ մեծ մասամբ նիստերի ժամանակ քվորում չէր ապահովվում:

Ազգային ժողովի մարմիններից բավականին ակտիվ գործունեություն է ծավալել Քաղաքական ժողովը, որն իր առաջին նիստը հրավիրել է 1860 թ. սեպտեմբերի 14-ին, Գրիգոր Մարկոսյանի ատենապետությամբ: Արդեն 1860 թ. նոյեմբերի 4-ին, Ազգային ժողովի երրորդ նիստում Քաղաքական ժողովը ներկայացնում է իր Տեղեկագիրը, նշում, որ ելնելով ազգային «սնտուկի» (գանձարանի) ծանր վիճակից՝ առաջին հերթին կազմել և Ազգային ժողովին է ներկայացրել 1861 թ. բյուջեն՝ «Ազգային Ընդհանուր Ելեւմտից Հաշուեցուցակը 1861 տարուան համար»: Ըստ դրա՝ մուտք սպասվում էր 902 հազ. ղուրուշ[4] (մոտ 90 հազ. ռուբլի), իսկ ելք՝ 1.236.000 ղուրուշ (մոտ 120 հազ. ռուբլի), ուրեմն 1861 թ. բյուջեն ունենում էր 334 հազ. ղրշ. դեֆիցիտ: Կար նաև ազգային պարտք՝ 872.686 ղրշ. (մոտ 85 հազ. ռուբլի): Ազգային ժողովի ատենագրություններում մանրամասն կերպով ներկայացված են ստացվելիք եկամտի աղբյուրները, նախատեսված ծախսերը, կուտակված պարտքի պատճառները[5]:

Ազգային ժողովը երկար ժամանակ զբաղվում է բյուջեի հարցով և տարբեր միջոցներ է առաջարկում՝ թե' դեֆիցիտը լրացնելու, թե' պարտքը մարելու համար: Տարբեր առաջարկություններից ընդունվում են մի քանիսը՝ վերցնել Ս. Երուսաղեմից 600 հազ.

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 9:
[3] Նույն տեղում, էջ 13-14:
[4] 1 ղուրուշը կամ եվրոպական բառով՝ պիաստրը հավասար է ռուսական 9 կոպեկին (Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 22):
[5] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ,1860-1870, էջ 20:

ղրշ., ազգային երևելիներից՝ 500-ական ղուրուշ, ամեն մեկից՝ 20-ական ղուրուշ: Նշենք, որ առաջինը չի իրագործվել Երուսաղեմի պատրիարքի մահվան պատճառով, իսկ ազգասեր-բարերարների կամավոր նվերների միջոցներով հարցի լուծումը կիսատ է մնացել՝ չնայած հին պարտքերի մարման համար ազգասերները 200 հազ. ղուրուշից ավելի հավաքել էին:

1861 թ. Ազգային բյուջեի քննարկում եղել է նաև 1861 թ. ապրիլի 4-ին, Ազգային ժողովի 5-րդ նիստում: Քաղաքական ժողովը Ընդհանուր ժողովից խնդրում էր հաստատել այդ տարվա ծախսերի համար նախատեսված գումարի չափն ու հավաքման կարգը, որն առաջարկել էր Ելևմտական խորհուրդն իր հայտագրում: Որոշված գումարը 400 հազ. ղուրուշ էր, որից 240 հազարը պետք է օգտագործվեր ազգային դաստիարակության, 60 հազարը՝ մայրաքաղաքի աղքատ թաղերին օգնելու համար, իսկ 100 հազարն էլ պետք է մնար «Ազգային Կեդրոնական Սնտուկում» (Կենտրոնական գանձարան) որպես պահուստ, և տարեցտարի ավելանալով ազգային տուրքը պետք է կրճատվեր: Ըստ Սահմանադրության՝ ամեն մի հայ պետք է ըստ իր կարողության տարեկան հարկ տար պատրիարքարանի ծախսերի համար: Ընդհանուր գումարը որոշելու էր Քաղաքական ժողովը և ներկայացնելու էր Ընդհանուր ժողով: Նախատեսված գումարի հավաքման համար հարկատուներն ըստ կարողության բաժանվում էին 4 կարգի՝ 1. 20-25 ղուրուշ, 2. 50-60 ղուրուշ, 3. 100-120 ղուրուշ, 4. 120-ից բարձր ղուրուշ վճարողների, ըստ ազգասիրության ու ցանկության: Գումարի հավաքման նման կարգը փոխվում է 1863 թ. Սահմանադրությունից հետո:

Ազգային ժողովը, ծանոթանալով հայտագրին, այս հարցի լուծումը հանձնում է Միրիճան ամիրայի նախագահությամբ ստեղծված հանձնաժողովին, որը պետք է զբաղվեր Ազգային հին պարտքի վճարման խնդրով:

1861 թ. ապրիլի 4-ին Քաղաքական ժողովի՝ Ազգային ժողովին ներկայացրած հայտագրում[1] մանրամասն տեղեկություններ կան ոչ միայն Ազգային Կեդրոնական Վարչության 6,5 ամսվա (1860 թ. սեպտեմբերի 14-1861 թ. մարտի 31) գործունեության, բյուջեի մասին, այլև համառոտ ներկայացված են Ուսումնական, Դատաստանական, Տնտեսական խորհուրդների, Ազգային հիվանդանոցի հոգաբարձության հայտագրերը: Այստեղից պարզ է դառնում, որ Ուսումնական խորհուրդը 4,5 ամսվա մեջ 40 կանոնավոր նիստ է հրավիրել, Դատաստանական խորհուրդը քննել է թվով 30-ի

[1] Նույն տեղում, էջ 35-53:

հասնող գործեր, որոնք ավարտել է խաղաղությամբ և արդարությամբ: Տնտեսական խորհրդի գործունեությունը ավելի բազմաբնույթ է եղել: Վերջինիս կատարած առավել կարևոր գործերից նշվում են Խնամակալ տիկնանց ընկերության, Կտակաց հոգաբարձության ստեղծումը:

Քաղաքական ժողովին և ընդհանրապես Ազգային ժողովին երկար ժամանակ զբաղեցրել է վանեցի Պողոս վարդապետի ամբաստանության հարցը: Վանի հոգևոր առաջնորդի տեղակալ Պողոս վարդապետ (հետո եպիսկոպոս) Մելիքյանը հայտնի էր իր չարաշահումներով[1]: 1860 թ. Ազգային ժողովը Պողոս վարդապետին կանչում է Կ. Պոլիս՝ նրա վրա եղած ծանր մեղադրանքները քննելու: Պողոսը փախչում է դատն ավարտվելուց առաջ, և Կրոնական ժողովը որոշում է արգելել նրան հոգևոր պաշտոն զբաղեցնել մինչև արդարանալը: Այս հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն են արտահայտում նաև ժամանակի թերթերը: «Մեղուն» նախ շնորհակալություն է հայտնում Կրոնական ժողովին, որ «այսպիսի վատ հովիւ մը հեռացուց Քրիստոսի միամիտ հօտեն»[2], ապա պահանջում է վճռական միջոցների դիմել: «Մեղուն» 1860 թ. դեկտեմբերի 20-ի համարում տպագրում է նաև Միքայել Նալբանդյանի նամակը թերթի խմբագիր Հարություն Սվաճյանին: Նալբանդյանը քննադատում էր Կրոնական ժողովի կիսատ-պռատ որոշումը՝ նշելով, որ «ազգը ժառանգութիւն տրված չէ Պողոսին կամ Նիկողոսին (Սսի կաթողիկոս), որ ինչպես կամենան այնպես խաղան ազգի հետ»[3]: Նա պահանջում էր ոչ թե Կրոնական ժողովի, այլ քրեական ու քաղաքական ատյանների պատասխանատվության ենթարկել «հայանուն շեյխին»[4]: Կրոնական ժողովն անկարող է լինում այս հարցը լուծել, անգամ զգուշացնում է Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Ա-ին, որ Պողոսը «եպիսկոպոսության աստիճան ձեռք բերելու փորձ չընե»[5]: Սրանից հետո էլ, հակառակ Ազգային Վարչության կամքի՝ Պողոս վարդապետին հաջողվում է Վանում իր ձեռքը վերցնել առաջնորդությունը (ևս 10 տարի)[6]:

[1] «Մեղու»,1860, N 100, էջ 122-123:
[2] Նույն տեղում, 1860, N 115, էջ 242:
[3] Նույն տեղում, 1860, N 119, էջ 275:
[4] Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 375:
[5] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ,1860-1870, էջ 39:
[6] Պողոսյան-ապողոսյան պայքարի մասին ավելի մանրամասն տես՝ Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց. Կյանքը և գործունեությունը, Ե., 2008, էջ 93-100, Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, էջ 168-172:

Ազգային ժողովի 1861 թ. մայիսի 25-ի նիստում քննարկվում է «Մեղու» և «Մյուսնատի» թերթերի դեմ Երուսաղեմից ուղարկված բողոքների հարցը, որին կցվում է նաև նույն թվականի ապրիլի 1-ին 59 երեսփոխանների ստորագրությամբ գրված մեկ այլ բողոք լրագրերի դեմ՝ Ազգային ժողովի նիստերի բովանդակությունն աղավաղված ներկայացնելու մեղադրանքով: Երեսփոխաններից շատերն առաջարկում են պատիժներ սահմանել մամուլի համար: Երկար վիճաբանություններից հետո, ի վերջո, Ազգային ժողովը միաձայն ընդունում է Սերվիչեի առաջարկը՝ լրագրական օրենք ստեղծելու նպատակով հանձնաժողով կազմելու մասին: 1861 թ. մայիսի 30-ին ընտրվում են համապատասխան հանձնաժողովի անդամները՝ թվով 7 հոգի՝ եկեղեցական 2 (Ներսես վարդապետ Վարժապետյան, Տեր Արիստակես քահանա) և աշխարհական 5 (Սերվիչե, Ստեփան Ասլանյան, Գրիգոր Աղաթոն, Գրիգոր Օտյան, Առաքել Տատյան) գործիչներ[1]: Արդեն հուլիսի 10-ին պատրաստ է եղել և ներկայացվել է տպագրական օրենքի նախագիծը[2]: Թվում էր, թե Ազգային ժողովն այն պետք է ընդուներ, բայց Բ. Դռան կողմից Սահմանադրության խափանումն այն խանգարում է:

Ազգային ժողովի քննարկած ամենավիճելի ու երկար ժամանակ զբաղեցրած խնդիրը Երուսաղեմի պատրիարքության հարցն էր: Այն առաջին անգամ Ազգային ժողովում քննարկման է ներկայացվել 1861 թ. փետրվարի 17-ին: Նույն օրն Ազգային ժողովը հաստատել է Խառը հանձնաժողովի կազմած և Կրոնական ու Քաղաքական ժողովների կողմից ընդունված, ստորագրված Կանոնագիրը («Ս. Երուսաղեմի միաբանության հիմնական կանոնները»)[3], բացի դրսից մի նշանավոր եպիսկոպոս որպես տեղապահ կամ նախագահ նշանակելու կետից:

Նշենք, որ Երուսաղեմի խնդիրն ավելի շուտ էր ծագել: 1860 թ. դեկտեմբերի 23-ին հանկարծամահ էր եղել Երուսաղեմի հայոց պատրիարք Հովհաննես Զմյուռնացին: Սահմանադրությամբ ստեղծված հոգևոր խորհրդի որոշմամբ, պատրիարքի թեկնածությունն առաջադրվելու էր դրսից, իսկ Երուսաղեմի միաբանությունը խոստանում էր հետևել Սահմանադրությանը, բայց խնդրում էր պատրիարք ընտրել ներսից՝ միաբաններից: Հենց այս հողի վրա էլ

[1] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ,1860-1870, էջ 66:
[2] Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Ե., 1989, էջ 43:
[3] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ,1860-1870, էջ 30-33:

սկսվում է «ներսեն»-«դրսեն» պայքարը, որը հայտնի է նաև «սահմանադրականների» («դրսենականներ») և «հակասահմանադրականների» («ներսենականներ») պայքար անունով: Երուսաղեմի պատրիարքական ընտրությունների շուրջը ծագած տարաձայնությունները ու պայքարը երկար ժամանակ են տևում և ի վերջո հանգեցնում Սահմանադրության դադարեցմանը:

Միաբանությունը ոչ միայն չէր ընդունում դրսից պատրիարք ընտրելու առաջարկը, այլև առաջարկում և հարմար էր գտնում վարդապետ Իսահակ Աստվածատրյանի թեկնածությունը: Միաբանությունը 1861 թ. փետրվարի 23-ին, ապա մարտի 16-ին նույն բովանդակությամբ գրություններ է ուղարկում Կ. Պոլիս՝ ուղղված Կեդրոնական վարչությանը և պատրիարքին՝ բացատրելով դրսից պատրիարք ընտրելու բացասական հետևանքները: Մի գրություն էլ ուղարկում է Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Ա-ին: Արդեն մարտի 23-ին ընտրության վերաբերյալ պաշտոնագիրն ուղարկվում է Կ.Պոլիս, որտեղ նշված էր, որ ընտրված երեք թեկնածուներից առավելագույն քվե է ստացել վերոհիշյալ Իսահակը, և լավ կլիներ, որ Ազգային ժողովի կողմից հաստատվեր իրենց նախընտրած թեկնածուն: Միաբանությունն ուղարկել էր նաև Կանոնագրի վերաբերյալ իր դիտողությունները: Քաղաքական ժողովը մերժում է երեք թեկնածուներին էլ՝ պատճառաբանելով, որ Երուսաղեմում ընտրությունը խարդախությամբ է կատարվել, քանի որ ստորագրությունները նույն ձեռագրով են արված, ուստի դրանք կեղծ են: «Մեղուն» գրում է, որ նմանատիպ քվեարկություն չի լինում. «Ե՞րբ է տեսնըված այսպես գաղտնի քուեարկութիւն մը, վարդապետ մը կ' ելնե սեղանին առջեւ կը կենայ ու կ'ըսե. «Պատրիարք ըլլալու համար Սահակ վարդապետը, Յակոբ վարդապետը եւ Եսայի վարդապետը ընտրուած են, անոնց որն որ կ' ուզեք թուղթի մը վրայ գրեցէք ու բերէք հոս դրէք»[1]: Մինչ այդ, Երուսաղեմից բողոք էր եկել, և հերքվել, որ ստորագրությունները կեղծ չեն, այլ «միաբանների մի մասը հեռակա կարգով են ձայն տվել»[2] կամ էլ, ինչպես երևում է «Մեղուի» հրապարակումներից, շատ վարդապետների գրել-կարդալ չիմանալու պատճառով ստորագրել են ուրիշները:

«Մեղուն» դատապարտում է այս երևույթները՝ նշելով, թե «այն վարդապետները, որ ասի ուրիշի ձեռքով ստորագրած են՝ կարդալ գրել չըգիտեն և մինչև իրանց անունը գրել կարօղ չեն... Վարդապե՞տ. ի՞նչ կ'ըսեն ուրեմն այս մարդիկը. եթե գրել կարդալ

[1] «Մեղու», 1861, N 134, էջ 123:
[2] Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 4647:

չգիտեն՝ վանքին մէջ ապու՞ր ուտելու կը նստին... Խղճմտանքնին չէ՞ր տանջէր զիրենք՝ երբ կրօնքի ուսուցիչները կը տեսնէին անուսումն»[1]:

Խառը ժողովը որոշում է, Հովհաննես քահանա Հյունքյարպեյանտյանին ուղարկել Երուսաղեմ, որ քվեարկության ձևը սովորեցնի, հսկի քվեարկությունը և այլն: Այստեղ հարկ է նշել, որ Կ. Պոլսի Ազգային ժողովը և պատրիարքը գերակայություն ունեին Երուսաղեմի պատրիարքության նկատմամբ: Հյունքյարպեյանտյանը մեկնելով Երուսաղեմ՝ ամեն ինչ անում է միաբաններին համոզելու, որ վերջիններս անփոփոխ ընդունեն Կանոնագիրը, բայց հաջողության չի հասնում և վերադառնում է: Այս ընթացքում մայրաքաղաքում տեղի են ունենում բազմաթիվ դժգոհություններ, Քաղաքական ժողովի հայտարարություններ, երեսփոխանների հրաժարականներ, Երուսաղեմից ուղարկված բողոքներ լրագրերի, հատկապես «Մեղուի» և «Մյուճատիի» դեմ:

Երկար վեճերից ու քննարկումներից հետո Խառը ժողովը 1861 թ. հուլիսի 12-ին հրավիրում է առաջին նիստը՝ որոշելու Երուսաղեմի պատրիարքության հարցը: Նիստում որոշվում է ընտրությունները կատարել Սահմանադրության պահանջներին համապատասխան և հանձնարարում է Խառն ժողովին անմիջապես պատրիարքի երեք թեկնածու որոշել ու ներկայացնել: Խառը ժողովը պատրիարքի նախագահությամբ, երկու արքեպիսկոպոսների ներկայությամբ և 31 անդամների մասնակցությամբ առանձին սենյակում կատարված գաղտնի քվեարկության արդյունքը ներկայացնում է Ընդհանուր ժողովին: Ընտրված երեք թեկնածուներն էին՝ Գևորգ արքեպիսկոպոսը (նախկին պատրիարք), Զմյուռնիայի առաջնորդ Պողոս արքեպիսկոպոսը և Ադրիանապոլսի առաջնորդ Արիստակես արքեպիսկոպոսը: Քանի որ քվորում չկար, բացի այդ, երեսփոխանների միջև կային տարաձայնություններ, որոշվում է Ընդհանուր ժողովի բոլոր անդամների կարծիքը իմանալ, թե ովքեր պետք է հուլիսի 18-ին գրավոր քվե ուղարկեին պատրիարքարան՝ առաջարկված երեք թեկնածուներից մեկի համար, ինչը և արվում է (բերվել էր 134 քվե)[2]:

Ազգային ժողովն իր հաջորդ նիստը հրավիրվում է հուլիսի 21-ին, բայց չի կարողանում որևէ գործ ձեռնարկել: Իմանալով նիստի մասին՝ ժողովուրդը ներխուժում է պատրիարքարան, սպառնում

[1] «Մեղու», 1861, N 131, էջ 99-100:

[2] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ,1860-1870, էջ 73:

երեսփոխաններին և պահանջում հավատարիմ մնալ Ազգային սահմանադրության սկզբունքներին: Սակայն կրքերը սրանով չեն հանդարտվում:

Շուտով նոր տարածայնություններ են սկսվում նաև պատրիարքի և Քաղաքական ժողովի միջև: Վերջինս 1861 թ. օգոստոսի 5-ի նիստում մեղադրում է պատրիարքին՝ միանձնյա որոշումներ կայացնելու, Կրոնական և Քաղաքական ժողովների իրավասությունները ոտնահարելու, հակասահմանադրական քայլեր ձեռնարկելու համար: Բանն այն է, որ պատրիարքը հուլիսի 22-ին եկեղեցական համագումար-ժողով էր հրավիրել՝ շրջանցելով Ազգային Վարչությունը: Եկեղեցական համագումարը ժողով է հրավիրում նաև օգոստոսի 2-ին (ապա օգոստոսի 3-ին, օգոստոսի 7-ին, բոլորն էլ՝ անարդյունք), որտեղ որոշվում է, որ Երուսաղեմի պատրիարքը ներսից է ընտրվելու: «Դրսենականները» օգոստոսի 3-ին 10 հոգուց բաղկացած պատգամավորներ են ուղարկում պատրիարքի մոտ, բայց վերջինս նրանց հետ է ուղարկում և հանդարտեցնում:

Օգոստոսի 5-ին Ընդհանուր ժողովը որոշում է, որ «Համագումար ժողովը ապօրինի է, որոշումներն էլ անվավեր»[1], այն նաև «...Քրիստոսի Ավետարանին է դէմ, Հայաստանեայց Եկեղեցու վարդապետութեան դէմ»[2]:

1861 թ. օգոստոսի 21-ին սահմանադրականները պայքար են սկսում պատրիարքի և հակասահմանադրականների դեմ, ստիպում պատրիարքին ստորագրել մի հայտարարություն, որ Երուսաղեմի կանոնագիրն ամբողջությամբ ընդունի և այլն, բայց միջամտում է ոստիկանությունը: Սելիմ փաշան 25 զափթիեների գլուխ անցած վրա է հասնում, ծերբակալում ոմանց, բայց տեղի տալով ժողովրդի դիմադրությանը՝ ստիպված է լինում հետ քաշվել:

Սահմանադրական շարժման ուժեղացումն անհանգստացնում է կառավարությանը: Օգոստոսի 26-ին Բ. Դռան կողմից մեծ վեզիր Ալի փաշան պաշտոնապես հաղորդում է, որ կառավարության կողմից չհաստատված կանոնադրությունն օրենքի ուժ ունենալ չի կարող[3]: Այսպիսով՝ Երուսաղեմի պատրիարքի ընտրությունը պատրվակ դարձնելով՝ սուլթանական կառավարությունը արգելում է Սահմանադրությունը: Հակասահմանադրականները հասնում են իրենց նպատակին:

[1] Նույն տեղում, էջ 79:
[2] «Մեղու», 1861, N 142, էջ 189:
[3] Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 4661, Սարուխան, նշվ. աշխ., էջ 24:

Նշենք, որ հոգևորականության ներկայացուցիչները Սահմանադրության դադարեցման համար մեղադրում էին սահմանադրականներին՝ նշելով, որ նրանք «իրենց անխորհուրդ և անհեռատես ընթացքով իրենց գործը քանդեցին»[1]: Բազմաթիվ գործիչներ էլ դրա համար մեղադրում էին հակասահմանադրականներին. «Սրանք նախապես հոգ էին տարել այն մասին, որ իրենց կողմից վարձված թուլումբաջիներն ու բեռնակիրները տեղնուտեղը զսպեն բողոքավոր սահմանադրականների ձայնը»[2]: Շուտով փակվում են նաև «Մեղու», «Մյուսնատի», «Ծաղիկ» թերթերը: Բայց շարունակվում է ժողովրդի պայքարը: Վերջինիս կամքն ու վճռականությունը վախեցնում են և՛ կառավարությանը, և՛ պատրիարքին: Սարգիս պատրիարքը հրաժարական է տալիս, իսկ Բ. Դուռը 1862 թ. փետրվարի 14-ին պատրիարքական տեղապահ Ստեփանոս արքեպիսկոպոս Մաղաքյանին ուղղած պաշտոնագրով պահանջում է, որ Ընդհանուր ժողովը 7 հոգանոց մասնաժողով կազմի իր միջից և կառավարության կազմած հանձնաժողովի հետ (հայեր և բարձրաստիճան թուրք 1 պաշտոնյա) քննի Սահմանադրությունը: 1862 թ. փետրվարի 20-ին Ազգային ժողովի 10-րդ նիստում կարդացվում է Ալի փաշայի կարգադրությունը՝ Սահմանադրության գործունեությունը դադարեցնելու և այն վերաքննելու նպատակով հանձնաժողով ընտրելու մասին: Ազգային ժողովի արձանագրություններում պահպանված է հրամանագրի թուրքերեն տարբերակը[3]: Հանձնաժողովի կազմում ընտրվում են 7 մարդ (Ստեփան Ասլանյան, Մինաս Մինասյան, Հովհաննես Սուրենյան, Գրիգոր Օտյան, Մկրտիչ Աղաթոն, Նահապետ Ռուսինյան, Մանուկ Մանուկյան)[4]: Ատենապետ Սերվիչեի առաջարկով որոշում են շնորհակալության քվե տալ կայսերական կառավարությանը՝ «հայրաբար խնամքի համար»[5]: 1862 թ. ապրիլին մասնաժողովը ավարտում է իր գործը և կառավարության հաստատմանը ներկայացնում վերաքննած Սահմանադրության նոր նախագիծը, որը կրկին դիտավորյալ ուշացվում է: Պետությունից ու պատրիարքից դժգոհ ժողովուրդը շարունակում է պայքարը:

1862 թ. օգոստոսին ամբոխը հարձակվում է պատրիարքարանի վրա, շենքից վտարում պատրիարքի տեղապահին և Խառը ժողո-

[1] Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 4661:
[2] Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 383:
[3] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ,1860-1870, էջ 81:
[4] Նույն տեղում, էջ 82:
[5] Նույն տեղում:

վի անդամներին: Սելիմ փաշան իր զափթիեների հետ ստիպում է ցուցարարներին ցրվել: Սեպտեմբերի 1-ին պատրիարքի տեղապահ Ստ. արքեպիսկոպոս Մաղաքյանը և խառը ժողովի նախագահ Բարունակ բեյը հրաժարական են ներկայացնում, որը մերժվում է Բ. Դռան կողմից: Սեպտեմբերի 14-ին Սկյուտարում մեծ ժողով է գումարվում (եկեղեցական 25 և աշխարհիկ 70 ներկաներով), որ սեպտեմբերի 19-ին իրենց աղերսագիրը ներկայացնեն նույն խնդրանքով: Նոյեմբերի 24-ին նոր դիմումներ են հղվում Ալի փաշային: Կառավարությունը նորից խոստանում է վավերացնել Սահմանադրությունը, բայց օրեր են անցնում, և պայքարն ապարդյուն է մնում: Նոր դիմումը հղվում է 1863 թ. հունվարի 19-ին: Վերջապես մարտի 16-ին, շաբաթ օրը, պայրամի շնորհավորության այցելության առիթով Ալի փաշան տեղապահին ավետում է Ազգային Սահմանադրության վավերացման մասին:

1863 թ. մարտի 19-ին տեղապահը և պետական հանճնաժողովի անդամներից ոմանք մեծ վեզիրի ապարանքում ընդունում են հաստատված Սահմանադրությունը և հաստատման կայսրական հրովարտակը, որը թվագրված էր մարտի 17-ին:

1863 թ. մարտի 23-ին գումարվում է Ընդհանուր ժողովի նիստ, որի ժամանակ կատարվում է Սահմանադրության հանդիսավոր հրապարակումը:

Փաստորեն, 1860 թ. մայիսի 24-ին Սահմանադրության նախնական կազմությունից 34 ամիս, իսկ 1861 թ. օգոստոսի 26-ի դադարումից 19 ամիս հետո, ի վերջո, օսմանյան կառավարության կողմից հաստատվում է Սահմանադրությունը, սակայն այն այլևս նախկին Սահմանադրությունը չէր: Հոդվածների թիվը 150-ից կրճատվել-հասցվել էր 99-ի, երեսփոխանների թիվը 220-ից իջեցվել էր 140-ի: Այն սակավաթիվ արտոնությունները, որ պիտի տրվեին հայերին, սահմանափակվել էին:

Ազգային ժողովի գործունեությունը կարելի է բաժանել մի քանի փուլերի.

1.1847-1860 թթ.՝ մինչ սահմանադրական պայքարի շրջան,

2.1860-1863 թթ.՝ Բ. Դռան կողմից չհաստատված սահմանադրության շրջան,

3.1863-ից սկսած՝ բուն սահմանադրության շրջան, երբ Սահմանադրությունը հաստատվում է Բ. Դռան կողմից:

Այս շրջանները ևս կարելի է առանձնացնել շրջափուլերի այն առումով, որ մերթ ընդ մերթ դադարեցվում էին Սահմանադրության գործադրումը և Ազգային ժողովի գործունեությունը:

МАНЯ НАДЖАРЯН
ИИ НАН РА

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ КОНСТАНТИНОПОЛЯ В 1860-1863 ГГ.

РЕЗЮМЕ

24 мая 1860 г. Национальное собрание Константинополя и патриарх Саркис Гоюмчян приняли Конституцию, на основе которой было избрано Национальное собрание. 25 августа было проведено первое заседание, на котором избирались Политическое и Духовное собрания. Наиболее активную деятельность развило Политическое собрание в первые 6,5 месяцев своего существования. Об этом свидетельствует представленная им 4 апреля 1861 г. Национальному собранию Ведомость, в которую были включены также краткие сведения о работе Образовательного, Экономического, Финансового, Судебного советов.

На обсуждение Национального собрания выносились различные вопросы относительно выборов, образования, бюджета и т. д. Одним из наиболее обсуждаемых был вопрос Иерусалимского патриаршества. Впервые он был вынесен на повестку дня на четвёртом заседании Национального собрания 17 февраля 1861 г. Тогда же Смешанное собрание представило Устав „Каноны братства св. Иерусалима". Разногласия между Политическим собранием и Иерусалимским братством по поводу избрания патриарха Иерусалима и принятия Устава послужили поводом для султанского правительства, которое запретило заседания Национального собрания, официально заявив, что Конституция, не утверждённая правительством, не имеет силу закона. По указанию султанского правительства 20 февраля 1862 г. на заседании Национального собрания была избрана комиссия для пересмотра Конституции. Уже в апреле 1862 г. программа пересмотренной Конституции была представлена правительству, но лишь 17 марта 1863 г. султан утвердил так называемую „кастрированную" Конституцию.

Как видим, уже на первом году деятельности Национального собрания стали очевидны многочисленные трудности. Деятельность собрания в 1860-1863 гг. прерывалась не только из-за вмешательства правительства, но и по причине внутренних разногласий. Несомненно, была в этом и вина армянского патриарха. Саркис Гоюмчян своим предвзятым отношением к Иерусалимскому вопросу вызвал большое недовольство среди народа.

ԳԵՎՈՐԳ ԱՅՎԱԶՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ – ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1860 - 1870 - ԱԿԱՆ ԹԹ.

«Հյուսիսափայլ», «Կռունկ հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանի» պարբերականների շուրջ համախմբված հայ վերածննդի գործիչների՝ ժողովրդի լուսավորության գերխնդրից բխող հորդորներն Ալեքսանդրապոլում մեծ արձագանք էին ունենում: Նրանց հասարակական մտահոգություններն այստեղ հոգեհարազատ միջավայր են գտնում: Ազատամտականների և ազգային - պահպանողականների միասնության, եղբայրասիրության վերաբերյալ կոչերին ալեքսանդրապոլցիներն ընդառաջում էին՝ համախմբված աշխատանքով մեծ արդյունքների հասնելու, բարեգործություն կատարելու, ընթերցասիրության խթանման պատրաստակամությամբ: Ալեքսանդրապոլում նորասիրությունը ձևամոլություն չէր, այլ հասարակական կյանքի առաջմղիչ ուժը:

Մշակութային ընկերությունները միտված էին բարձրացնելու ժողովրդի կրթական մակարդակը, հոգալու պատմամշակութային հուշարձանների պահպանման կարիքները: Դրանք թեև շոշափելի արդյունքներ չէին տալիս, այնուամենայնիվ հասարակական կյանքի աշխուժացման առաջին ապացույցներն էին: Ունենալով տեղական նշանակություն՝ ունենալով հանդերձ՝ Ալեքսանդրապոլի ընկերություններն անտարբեր չէին համազգային խնդիրների նկատմամբ և իրենց կրթալուսավորական գործունեությունն ընձյուղում էին միաբանված ազգության գաղափարաբանությանը: Հայ երիտասարդությունն ոգևորվում էր իր հայրենիքի պատմական անցյալով և նորովի իմաստավորում այն:

1860 - 1870 - ական թթ. Ալեքսանդրապոլում գործում էին մոտ մեկ տասնյակի հասնող բարեգործական - մշակութային ընկերություններ («Հառիճի վանական ընկերություն»,[1] «Որբախնամ», «Բարեսպատակ», «Արմատ սիրո», «Ընթերցասիրական» և այլն):

[1] 1850 թ. ալեքսանդրապոլցի տասներկու երիտասարդներ, «որք զօրացեալ ի ճգունս բարեացապատճառ վերանորոգութեանց մենաստանին Հառիճոյ», Ալեքսանդրապոլում կազմում են մի ընկերություն (1850 - 1915 թթ.) («Մեղու Հայաստանի», Թ., 1859, N 49, էջ 379 - 380): Ընկերությունն առաջնորդվում էր արած գործերը չբարձրաձայնելու վերաբերյալ հետևյալ նշանաբանով. «Լռութիւն

1859 թ. մի խումբ ալեքսանդրապոլցիներ դիմում են Մատթեոս Ա կաթողիկոսին (1857-1865 թթ.)՝ Մարմաշենի վանքը բարեկարգելու նպատակով մի հոգաբարձություն հաստատելու խնդրանքով: Կաթողիկոսն անհետևանք չի թողնում նրանց դիմումը, ու շուտով Մովսես քահանա Երեմյանի նախագահությամբ 20 հոգուց բաղկացած մի ընկերություն է կազմվում:[1] Մեկական ռուբլի ամսավճարներից բացի ընկերությունը ստանում էր նաև վանքի «Կարմիր Ավետարանի» տված եկամտի կեսը: Ավետարանի հրաշագործ զորությունը դեպի իրեն էր ձգում բազմաթիվ ուխտավորների: Սեղմ ժամանակում հնարին հաջողվում է փոքր ծավալի շինարարական աշխատանքներ կատարել, եկեղեցական սպասք ձեռք բերել, նույնիսկ մի փոքրիկ դպրոց բացել: Մովսես քահանայի անձեռնհասության, անդամավարների մուծման դժվարությունների, Ալեքսանդրապոլի Հոգևոր կառավարության անհետևողականության պատճառով ընկերությունն երկար չի կարողանում գոյատևել և 1860 - ական թթ. կեսերին ստիպված դադարեցնում է իր գործունեությունը:

1862 թ. քաղաքում թանգարան հիմնելու փորձեր են լինում, որոնք, ինչպես հավաստում է ալեքսանդրապոլցի ճանաչված մտավորական Մկրտիչ Արաբաջյանը, ավարտվում են ապարդյուն:[2] Որոշ ժամանակ անց մի քանի երիտասարդների, այնուամենայնիվ, հաջողվում է հիմնել 25 անդամներ ունեցող «Ընթերցասիրական» ընկե-

մեռելութեանն Քրիստոսի հոգասցէ զամենայն» (Հառիճայի վանական ընկերութեան հիշատակարանն ու հաշիւը 1850 - 1882 թ. Յաւելուած 1882 - 1898 թթ., Աղէք., 1909, էջ 21):

[1] Նիկողոսյան քհ. Ն., Շիրակի գիւղական կեանքից, «Արարատ», Վաղարշապատ (Էջմիածին), 1904, թիվ Թ, էջ 787 - 788:

[2] Արաբաջեանց Մ., Մի քանի տեղեկութիւնք Աղէքսանդրապօլու Հայոց ուսումնարանի, Ընթերցարանի եւ Բարեգործական նպատակաւ կազմուած Ընկերութեանց վերայ, «Արարատ», 1869, թիվ Ե, սեպտեմբեր, էջ 113: Բանասեր Կ. Կոստանյանը հիշում է, որ Հոգևոր արական դպրոցին կից երկու սենյակներում տեղավորված այս թանգարանի՝ «հասարակաց ընթերցարանի», հիմնադրումը կատարվել է 1862 թ. վերջին: Ընթերցարանը «կենտրոն էր նոր երիտասարդութեան, որի պարագլուխն էին Յովհաննէս Բաբաեան, Յարութիւն աղա Յարութիւնեան, Գէորգ Շահխաթունեան, թնդանօթածիգ սպայ, եւ Աղէքսանդր Մելիք Դայկազեանն, նոյնպէս թնդանօթածիգ սպայ» (Կոստանյանց Կ., Ընկերութիւններ եւ բարեգործական ձեռնարկութիւններ ԺԹ դարում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Կ. Կոստանյանի ֆոնդ, վ. 450, թ. 5: Նաև՝ Մուշեղեանց Յովհ., Ընթերցարան Հայոց Աղէքսանդրապօլու, «Արարատ», 1871, թիվ է, էջ 414: Հմմտ՝ Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի I կեսին, Ե., 1964, էջ 108):

րությունը:[1] Նրանք Հոգևոր դպրոցին կից բացում են նաև մի ընթերցարան: Չնայած Ալեքսանդրապոլի «մեծայարգի երևելիներից» մի քանիսի դրամական օժանդակությանը՝ ընկերությունը գոյատևում է ընդամենը երկու - երեք տարի՝ մինչև 1865 թ.: 1867թ. ընկերության նախկին անդամներից ոմանց մասնակցությամբ այն վերականգնվում է: Նոր շրջանում անդամակցության պայմանները դյուրացնելու նպատակով նախկին տարեկան 5 ռուբլու փոխարեն սահմանվում էր երեք տեսակի անդամավճար՝ տարեկան 4, 2 և 1 ռուբլի:[2] Երկու անակնկալ արգելառիթներ պատճառ հանդիսացան, որ ընկերությունը գործի միայն մեկ տարի:

1865 թ. գործում էին 25 - ական անդամ ունեցող երկու ընկերություն, որոնց անունները հայտնի չեն: Նրանցից մեկի գլխավոր նպատակը դրամ վաստակելն էր:[3] Ուստի նրա անդամները 10 - ական ռուբլի անդամավճարներից գոյացած գումարով բաց էին արել երկու կրպակ և պայման կապել, որ «բոլոր ընկերներն այն կրպակներից առուտուր անեն»:[4] Նշվածներից մյուսը հիմնվել էր հինգ տարի ժամանակով, ըստ որում ընկերակիցներն իրավունք չունեին բաժանվել միմյանցից մինչև պայմանաժամկետի լրանալը: Դեռ խմորման փուլում գտնվող ընկերության նպատակն էր «ընկերական և ընտանեկան կեանքի մէջ աւելորդ (ժողովուրդին աղքատացնող) բաները վերցնել»:[5]

Հասարակության օգտի համար 3000 ռուբլի ներդնելով կրպակ էին բացել նաև 1860 - ական թթ. կեսերին ստեղծված «Արմատ սիրո» ընկերության փոքրաթիվ անդամները: Վաճառակետից իրենց հարկավոր գնումներ կատարելը պարտադիր պայման էր նրանց բոլորի համար:[6]

1866 - 1868 թթ. 8 պատանիներ (Պետրոս Մատնիշյան, Նազարեթ Փահլևանյան և այլք) կազմել էին անհայտ անվամբ մի ընկերություն՝ նպատակ ունենալով նյութապես օգնել ավերված վանքերին:[7] Երբ նրանք դադարեցրին իրենց գործունեությունը, շաբաթական 2 կոպեկ անդամատուրքերից հավաքված գումարի մնացորդով

[1] Արաբաջեանց Մ., նշվ. աշխ., էջ 114:
[2] Նույն տեղում, էջ 114 - 115:
[3] Քոչարեան Մ., Նամակ Աղէքսանդրապօլից, «Հայկական աշխարհի կռունկ», Թիֆլիս, 1865, N 8 - 9, էջ 353:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:
[6] Արաբաջյան Մ., նշվ. աշխ., էջ 117 - 118:
[7] Ալէքսանդրապօլցի, Նամակ Ալէքսանդրապօլից, «Մշակ», Թ., 1879, N 69, էջ 1 -2:

վաճառական Կարապետ Չալթիկյանից ջահ գնեցին ու նվիրեցին Կաթողիկե վանքին:

1868 թ. հուլիսի 1 - ին Հոգևոր դպրոցի ուսուցիչներ Մ. Արաբաջյանի և Ա. Արշակունու ջանքերով ստեղծվում է «Որբախնամ» - «Ընթերցասիրական» ընկերությունը, որը նպատակ ուներ չքավոր աշակերտներին և որբերին ապահովել դասագրքերով. «Նպատակ ընկերութեանս է գլխաւորապէս նպաստել որբ եւ չքաւոր աշակերտաց գտանեցելոց յԱզգային Ուսումնարանի Հայոց քաղաքիս եւ յայլ ծխական բարեկարգ ուսումնարանս՝ ձրիապէս տալով նոցա դպրագրեանս եւ զայլ հարկաւորելիս ուսման նոցին»:[1] Նրան անդամակցում էր 100 հոգի՝ շաբաթական 3 կոպեկ անդամավճարով: Ընկերության կառավարիչ մասնաժողովը հավաքված դրամով դասագրքեր էր գնում և մատենապահի միջոցով վաճառում գնողունակ աշակերտներին: Ստացված հասույթի շնորհիվ դասագրքեր էին բաժանվում չունևոր երեխաներին: Այդ «ազգախնամ նպատակից» բացի մասնաժողովը ձեռք էր բերում նաև լրագրեր ու զանազան այլ գրքեր:

1872 թ. սեպտեմբերին «Որբախնամ» -ի կառավարիչ մասնախումբը (Մ. քահ. Տեր - Պողոսյան, Ա. Նալյան, Մ. Արաբաջյան, Ղ. Եսայան, Հ. Իսպիրյան, Գ. Չոլախյան) դիմում է Գևորգ Դ կաթողիկոսին (1866 - 1882 թթ.)՝ խնդրելով հաստատել ընկերության՝ 30 կետից բաղկացած կանոնադրությունը, որպեսզի հնարավորություն ունենա չորս տարվա ընթացքում կուտակած 500 ռուբլի գումարով հոգևոր դպրոցին կից գրավաճառանոց բացել: 1873 թ. մայիսին վեհափառը «զգրասենեակս ընթերցանութեան վասն հոգեւորականաց եւ աշխարհականաց»[2] հիմնելու վերաբերյալ մասնախմբի երկու խնդրագրերին Ալեքսանդրապոլի հոգևոր առաջնորդ Սուքիաս վարդապետ Պարզյանի միջնորդությամբ դրական պատասխան է տալիս: Կաթողիկոսը դրանում հույս է հայտնում, որ կանոնադրության կետերը չեն մնա թղթի վրա, այլ օգտավետությամբ կիրականացվեն: Հորդորում է զգուշանալ, որպեսզի ընկերության հավաքները փոխանակ հասարակության առաջադիմության, խռովասիրության ու տարաձայնությունների պատճառ չդառնան:[3]

1869թ. գարնանն «ուսումնասիրական հոգւով վառուած» մի քանի պատանիների ջանքերով (Ա. Կրիտյան, Մ. Չմշկյան, Ա. Ափրիկ-

[1] Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), Կաթողիկոսական դիվան, թղթ. 222, վ. 8, թ. 1:
[2] Նույն տեղում, թ. 7:
[3] Նույն տեղում: «Մշակ», 1872, N 32, էջ 4:

յան, Կ. և Հ. Հովհաննջանյաններ, Օ. Գորոյան, Գ. Ղասաբյան, Ս. Լալայան և ուրիշներ) կազմակերպվում է «աննպատակ» մականունը կրող մի ընկերություն՝ շաբաթական 5 կոպեկ անդամավճարով: Ըստ «Արարատ» - ի հոդվածագիր Մ. Արաբաջյանի, նա առաջնորդվում էր «Որբախնամ ընկերության» նպատակային դրույթներին համընկնող սկզբունքներով:[1]

1869 թ. ապրիլին Ալ. Իսահակյանը, Ա. Խան - Անուշյանը, Ա. Իսահակյանը, Հովհ. Խալաթյանը, Կ. Մելիք - Ադամյանը և Պ. Հայկազունին հիմնում են համբավավոր «Բարենպատակ» ընկերությունը: Այն ուներ 24 կետից բաղկացած կանոնադրություն, որի առաջին կետն ազդարարում էր. «Բարենպատակ ընկերութիւնը ինչպէս որ և պարզ երևում է նորա նշանակութիւնից ունի վախճան և վերջին նպատակ ծառայելու մեր համաքաղաքացի Հայազգի հասարակութեան բարոյական օգտին»:[2] «Բարենպատակ» -ն ուներ գանձապահ (Արշակ Խան - Անուշյան) իր օգնականով (Աբրահամ Սառաջյան), մատենապահ (Ալեքսանդր Իսահակյան) իր օգնականով (Խաչատուր Գրիգորյան), հինգ հոգանոց մասնաժողով (Հովհաննես Խալաթյան, Աստվածատուր Իսահակյան, Աբրահամ Սառաջյան, Խաչատուր Գրիգորյան և Կոստանդին Մելիք - Ադամյան): Նրան ալեքսանդրապոլցիներից բացի կարող էին անդամակցել նաև այլ բնակավայրերից, ընդ որում անսահմանափակ թվով: Վերջիններս, ի տարբերություն տեղացի անդամների, շաբաթական 5 կոպեկ սահմանված անդամավճարն ամբողջ տարվա համար միանգամից պետք է մուծեին: Ընկերության աշխատանքի կազմակերպման, դրամագլխի խոշորացման համար պատասխանատու էին բոլորը. «Իւրաքանչիւր անդամ ունի պարտաւորութիւն խորհել և աշխատել ընկերութեան գումարը շահեցուցանելու, որպիսի և իցէ եղանակաւ, թէ տոկոսով տալով, թէ առևտրոյ պարապեցնելով և թէ որևիցէ օգտող նպատակի գործադրելով»:[3] Ընդհանուր ժողովը գումարվելու էր տարին մեկ անգամ բոլոր անդամների մասնակցությամբ, իսկ դրամական մուտքերի և ծախսերի մասին հետաքրքրվողների առաջ գանձապահը պարտավորվում էր ամեն ամիս հանդես գալ հաշվետվությամբ: Ընկերությունն ունենալու էր ընթերցարան, որտեղ նախատեսվում էր կազմակերպել կիրակնօրյա հրապարակային ընթերցանություն: Առավոտյան ժամերգությունից հետո սկսվող ընթերցանության ընկերության անդամներից յուրաքանչյուրն «իրաւունք ու

[1] Արաբաջյան Մ., նշվ. աշխ., էջ 118:
[2] «Մեղու Հայաստանի», 1869, N 33, 30 օգոստոսի, էջ 258:
[3] Նույն տեղում:

պարտականութիւն» ուներ ներկա գտնվել ոչ ավել, քան մեկ ժամ: Հասարակության շրջանում թյուրըմբռնումներից խուսափելու համար արգելվում էր ընթերցարանում կրոնական վեճեր ծավալել: Անդամությունից հրաժարվողներն իրավունք չունեին հետ պահանջելու իրենց մուծած գումարները:[1] 1870 թ. վերոնշյալ երկու ընկերությունները միավորվում են «Բարենպատակ» անվան տակ:

1872 թ. Ալեքսանդրապոլում ընթերցասեր երիտասարդներն ուրախ ժամանցի և լրագրեր կարդալու նպատակով կազմում են մի ընկերություն՝ չնայած «Մեղու Հայաստանի» թերթի լրատուն իր մտահոգությունն է արտահայտում այս զբաղմունքների համատեղության կապակցությամբ.«Մենք կարծում ենք, որ ընթերցասիրութիւնը և խաղերը միմեանց հերքող բաներ են»:[2]

Այսպիսով՝ 1860 - ական թթ. բարեգործական - մշակութային ընկերությունների ստեղծումն Ալեքսանդրապոլում ազգային վերածարթոնքի անմիջական արտահայտությունն էր: Նրանց բնորոշ էր անհետևողականությունը, կարճատևությունը, նյութական հնարավորությունների և ցանկությունների անհամատեղելիությունը, խանդավառությունը: Ազգային ինքնագիտակցության բարձրացումը նկատելի էր հատկապես ուսուցչության, պատանիների և երիտասարդների մոտ:

ГЕВОРГ АЙВАЗЯН
ИИ НАН РА

БЛАГОТВОРИТЕЛЬНО - КУЛЬТУРНЫЕ ОБЩЕСТВА АЛЕКСАНДРОПОЛЯ В 1860 - 1870 ГГ.

РЕЗЮМЕ

В 1860 - 70 - х гг. интеллигенция Александрополя руководствовалась идеями армянских просветителей. Призывы либералов и консерваторов о единой и образованной нации нах одили большой отклик. Создание на демократических началах благотворительно - культурных обществ, число которых в данный момент достигало приблизительно десяти “Корень любви”, “Общество с благою целью”, “Общество для попечения сирот” и т. д.), являлось плодом восточноармянского национально - просветительского движения.

Главным намерения этих сотовариществ были восстановление исторических памятников и повышение уровня образованности общества.

[1] Նույն տեղում:
[2] «Մեղու Հայաստանի», 1872, N 43, 23 դեկտեմբերի, էջ 172:

ԿԻԼԻԿԻՈՅ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ 20-ՐԴ ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ

15-րդ դարուն, օսմանեան թուրքերը նուաճելով Փոքր Ասիան սելճուքներէն՝ ժառանգեցին անոնց կառավարման հիմնական տարրերը, կայսրութեան կազմակերպման հիմնական սկզբունքները եւ ընկերային ու տնտեսական կեանքի շատ մը երեւոյթներ: Նուաճուած երկիրները կառավարելու համար՝ կայսրութիւնը բաժնեցին վարչական միաւորներու, որ պայմանաւորուած էր մահմետական աւատատիրական դասակարգի քաղաքական եւ տնտեսական շահերով[1]: Անոնք կայսրութեան տարածքը բաժնեցին վարչատարածքային մեծ ու փոքր միաւորներու, որոնց ամենամեծ միաւորները կը կոչուէին էյալէթներ: Կառավարման այս համակարգը, որոշ փոփոխութիւններով շարունակուեցաւ մինչեւ 19-րդ դարու երկրորդ կէս: 16-րդ դարու սկիզբը Կիլիկիան գրաւուած էր օսմանցիներուն կողմէ: Սակայն մինչեւ 19-րդ դարու վերջ Օսմանեան տիրապետութիւնը Կիլիկիոյ վրայ մնաց անկայուն եւ ոչ ամբողջական: Կիլիկիոյ իսկական տէրերը դարձան թուրքմենական եւ աւշարական կիսանկախ իշխանապետութիւնները (տրէպէյութիւն)՝ Ռամազան-օղլու, Քէօր-օղլու, Գարաման-օղլու եւ Գոզան-օղլու ցեղերը, որոնք չենթարկուելով կեդրոնական իշխանութեան՝ մօտ հինգ դար իրենց ենթակայութեան տակ պահեցին ամբողջ Կիլիկիան:

Սուլթան Ապտուլ Ազիզի գահակալութեան ժամանակաշրջանին (1861-1876 թթ.), մեծ վէզիր Միտհատ փաշան ձեռնակեց վարչական նոր բարեփոխութիւններու, որոնց նպատակն էր զօրացնել կեդրոնական իշխանութեան հեղինակութիւնը, ոչնչացնել ու չեզոքացնել տէրէպէյիներու եւ ինքնագլուխ ցեղապետներու ազդեցութիւնը: 1864 թ., ընդունուեցաւ Վիլայէթներու մասին Նոր Օրէնքը, որուն համաձայն էյալէթները վերանուանուեցան վիլայէթներ (հայկական աղբիւրներուն մէջ՝ նահանգ կամ կուսակալութիւն): 1867 թ. եւ 1876 թ. վիլայէթներու մասին նոր կանոնադրութիւններով վիլայէթներու կազմաւորումը շարունակուեցաւ մինչեւ 1870-ականներուն

[1] Տե՛ս Մելքոնյան Ա.Ա., Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., 1994, էջ 25:

վերջը: 1870 թ. կայսրութիւնը բաժնուած էր 23 վիլայէթներու, 1875 թ.՝ 25, իսկ 1893 թ.՝ 27[1]: Ապտուլ Համիտի գահակալութեան ժամանակաշրջանին վիլայէթները կը բաժնուէին երեք մասի՝ կեդրոնին կապուած վիլայէթներ, կեդրոնին կապուած անկախ սանճագներ եւ առանձնայատուկ կարգավիճակ ունեցող էյալէթներ:

Վիլայէթները բաժնուած էին սանճագներու (գաւառ), սանճագները՝ գազաներու (գաւառակ), գազաները՝ նահիէներու (գիւղախումբ), նահիէները՝ քարիէներու (գիւղ): Սկզբնական շրջանին վիլայէթները աւելի մեծ վարչամիաւորներ էին քան նախկին էյալէթները, բայց հետզհետէ անոնք վերածուեցան աւելի փոքր վարչամասերու՝ աւելի ազդեցիկ կառավարում ունենալու նպատակով: Վիլայէթը կը կառավարուէր կուսակալին կամ վալիին կողմէ: Վալին կը նստէր վիլայէթի գլխաւոր քաղաքը. ան կը նշանակուէր Սուլթանին կողմէ եւ կախեալ էր կեդրոնական կառավարութենէն՝ ձեռքը ունենալով գործադիր իշխանութիւնը իր բոլոր ճիւղաւորումներով՝ բացի դատական եւ զինուորական[2] բաժիններէն:

Վալին էր կուսակալութեան ոստիկանութեան գլուխը, որուն իշխանութեան տակ էին կուսակալութեան վարչական այլեւայլ պաշտօնեաները: Կուսակալին կից եւ անոր անմիջական տեսչութեան տակ կը գործէր «ՏԷֆտէրտար»-ը կամ համարակալը, որուն ձեռքն էին ելեւմտական հաշիւները, եւ կուսակալին բացակայութեան կամ հիւանդութեան ժամանակ ան կը փոխարինէր զինք: Յետոյ կու գար «Մէքթուպճի»-ն՝ նահանգի ընդհանուր ատենադպիրը: Այնուհետեւ՝ հասարակաց կրթութեան, առեւտուրի, հողագործութեան, հանրօգուտ շինութեանց, կալուածներու գնահատման, տուրքերու, անտառներու, հանքերու, հեռագիրի եւ թղթատարի, պետական պարտքի եւ ծխախոտի մաքսի վարչութիւններու, մարդահամարի գրասենեակի եւ ուրիշ տեսուչները, ոստիկանապետը եւ այլն:

Կուսակալին կը գործակցէին Վարչական Խորհուրդը (Իտարէ Մէճլիսի), որուն անդամ էին «Նայիպ»-ը կամ կրօնական դատաւորը, ՏԷֆտէրտարը, Մէքթուպճին, Մուֆթին, հայ եւ յոյն Եպիսկոպոսները

[1] Տե՛ս Karpat Kemal, Ottoman Population 1830-1914. Demographic and Social Caracteristics, The University of Wisconsin press, London, 1985, p. 8:

[2] Ատանա վիլայէթը, որ կ՚ընդգրկէր Կիլիկիոյ մեծ մասը, զինուորական տեսակէտէն կը կազմէր Օսմանեան կայսրութեան ընդհանուր Եօթը զօրաբանակներուն Հինգերորդը: Բայց Համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքին, անիկա կցուեցաւ Չորրորդ Զօրաբանակին, որ իր ձեռքին տակ կ՚առնէր ամբողջ Արաբական աշխարհը՝ ճեմալ փաշայի հրամանատարութեան տակ, որ Կիլիկիոյ Աղէտէն ետք Ատանայի վալին եղած էր, (տե՛ս Եղիայեան Բ., Ատանայի Հայոց Պատմութիւն, էջ 143):

եւ ուրիշ չորս ընտրովի անդամներ քաղաքի մեծամեծներէն՝ երկուքը իսլամ, երկուքը՝ քրիստոնեայ: Կը գործէր նաեւ Ծերակուտական խորհուրդը (Իխթիյար Մեճլիսի), որ կը բաղկանար 12 երեւելիներէ՝ 6 իսլամ եւ 6 քրիստոնեայ:

Վալիի իշխանութեան ենթակայ էին սանճագներու կառավարիչները, որոնք կը կոչուէին մութասարիֆներ (գաւառապետ): Անոնք կը նստէին գաւառի կեդրոն քաղաքին մէջ: Մութասարիֆներուն ենթակայ էին գազաներու գայմագամները՝ իրաքանչիւրը իր գայմագամութեան կեդրոնը նստած: Գայմագամներէն ստորադաս կը գտնուէին նահիէի տեսչութիւնները իրենց յատուկ տեսուչ-միւտիրներով: Եւ վերջապէս նահիէներու միւտիւրութեանց ենթակայ էին քարիէները (գիւղեր) իրենց գիւղապետ մուխթարներով[1]: Մութէսարիֆը, գայմագամը, միւտիրը կը նշանակուէին կեդրոնական նահանգային իշխանութեան կողմէն, իսկ մուխթարը կ'ընտրուէր տեղական ժողովուրդին կողմէ: Բոլոր նշանակումները կը կատարուէին կաշառքով: Կը պաշտօնավարէր ան, որ աւելի կաշառք կու տար[2]:

Նոր օրէնքի հռչակումէն ետք, Կիլիկիոյ կեդրոնական մասը ընդգրկուեցաւ Ատանա վիլայէթին մէջ, որու կազմաւորումը տեղի ունեցաւ 1869/70 թուականին[3]: Կիլիկիոյ հիւսիս-արեւելեան մասը ընդգրկուեցաւ Հալէպի վիլայէթին մաս կազմող Մարաշի սանճագին մէջ, իսկ Ալէքսանդրէթն ու Այնթապը Հալէպի սանճագին մէջ առանձին գազաներ դարձան[4]:

Կիլիկիան, Օսմանեան տիրապետութեան տակ մտնելէ ետք, մտած է տարբեր վարչամիաւորներու մէջ: Ատանա էյալէթը, որ կ'ընդգրկէր Կիլիկիոյ հիմնական եւ կեդրոնական մասը, հաւանա-

[1] Տե՛ս Գալուստեան Գր. Հ. (Կիլիկեցի), Մարաշ կամ Գերմանիկ եւ Հսրոս Ջէյթուն, տպ. «Կոչնակ», Նիւ Եորք, 1934, էջ 18-19, տես նաեւ՝ Եղիայեան Բ., նշուած աշխ., էջ 139-142, Առաքէլեան Հ., «Ջէյթուն» տեղակագրական, աշխարհագրական եւ վարչական տեսութիւն, Թիֆլիզ, 1896, էջ 33:

[2] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Ե., 1969, էջ 58, տես նաեւ՝ Ղազարյան Հ., Արեւմտահայերի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կացութիւնը 1800-1870 թթ., Ե., 1967, էջ 50-52:

[3] ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանության Թանգարան Ինստիտուտի գիտական ֆոնդեր, բ. 10, Ադանայի վիլայեթի տարեգրքեր (Սալնամե), (այսուհետեւ՝ ՀՑԹԻ Ատանայի Սալնամէ) 1288 (1871 թ.), էջ 253: Տե՛ս նաեւ Birken A., Die Provinzen des Osmanischen Rieches, Wiesbaden, 1976, p. 137:

[4] Հալէպի վիլայէթը կազմաւորուեցաւ 1866 թուականին: 1865-1869 թուականներուն Ատանան դարձաւ Հալէպի լիվաներէն մէկը: Տե՛ս ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան Ինստիտուտի գիտական ֆոնդեր, բ. 10, Օսմանյան պետական տարեգրքեր (Սալնամե), (այսուհետեւ՝ ՀՑԹԻ Պետական Սալնամէ) 1284 (1867 թ.), էջ 177, 1285 (1868 թ.), էջ 886, 1286 (1869 թ.), էջ 201-202:

բար կազմաւորուած է 17-րդ դարու սկիզբը[1]: Նոյն դարու թուրք պատմիչ Էվլիա Չէլէպին Ատանայի մասին կը խօսի իբրեւ առանձին էյալէթ, իսկ ուրիշ տեղ մը՝ Հալէպի էյալէթին ենթակայ սանճագ[2]: 19-րդ դարու սկիզբը Կիլիկիան ենթակայ էր Ատանայի եւ Իչէլի նահանգներուն, փոքր մաս մըն ալ՝ Գարամանիոյ եւ Գոնիայի նահանգներուն[3]: 1831թ. Կիլիկիոյ տարածքը բաժնուած էր Ատանայի եւ Մարաշի էյալէթներուն մէջ[4]: 1832-1840 թուականներուն Կիլիկիան գրաւուեցաւ Եգիպտոսի Իպրահիմ փաշային կողմէ[5]: Անկէ ետք մինչեւ Հալէպի վիլայէթին կազմաւորումը (1866 թ.) Կիլիկիան Ատանա էյալէթ անունով վերածուեցաւ առանձին վարչամիաւորի, որ կ'ընդգրկէր Ատանա, Տարսուս (Տարսոն), Ուզէյր (հետագային՝ Փայաս, ապա՝ Ճէյհան), Պէրէքէթ), եւ Մարաշ լիվաները[6]: 1866 թ., Ատանան մտաւ նորակազմ Հալէպի վիլայէթին մէջ, իսկ 1869 թ., անջատուելով Հալէպէն՝ դարձաւ առանձին վիլայէթ: Մարաշի սանճագը, որ կ'ընդգրկէր Կիլիկիոյ հիւսիս-արեւելեան շրջանները, մնաց Հալէպի նահանգին մէջ:

1870 թ. կազմաւորուած Ատանայի վիլայէթը ուներ հետեւեալ սահմանները. արեւմուտքէն Ալայիա քաղաքէն արեւելք գտնուող Իմամլը կոչուող աւանը, իսկ Հայոց Ծոցի ափին սահմանը կը վերջանար Ալեքսանդրէթ քաղաքէն հիւսիս, արեւմուտքէն՝ Գոնիա նահանգի Նիկտէ, Գոնիա եւ Ատալիա գաւառները, հիւսիսէն՝ Անկորայի եւ Սիվասի նահանգէն Կեսարիոյ եւ Սեբաստիոյ գաւառները, հարաւ-արեւելքէն՝ Հալէպի նահանգի Մարաշի եւ Հալէպի գաւառները[7]:

[1] Տե՛ս Birken A., նշուած աշխ., էջ 137:

[2] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, Սաֆրաստյան Ա.Խ., Ե.,1967, էջ 25: Էվլիա Չէլէպի Ատանայի մասին կը գրէ. «Ատանայի էյալեթը դիւանի ոչ մի ծառայող չունի, որովհետեւ Հալեպից բաժնվելով էյալեթ է դարձել, սանճագներն են՝ Սիս, Թարսուս, Կարադաշ, Սելեֆկե: Ունի բոյբեյիներ (այսպես կը կոչվէին փոքր աշիրեթներու պետերը): Ապստամբները (աւազակները) շատ են, որովհետեւ էյալեթը քարքարոտ է»:

[3] Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Վենետիկ, Ս. Ղազար, 1806, էջ 354:

[4] Նոյն թուականին Մարաշի էյալէթը կ'ընդգրկէր Մարաշ, Մալաթիա, Սամսատ (Սամոսատ) եւ Գէրգէր սանճագները, իսկ Ատանայի էյալէթը՝Ատանա, Տարսուս, Ալանիա (Ալայիա), Իչէլ, Սիս, Ուզէյր եւ Պէյլան սանճագները: Տե՛ս Karpat Kemal H., նշուած աշխ., p. 14:

[5] Տե՛ս Թորոսյան Շ. Թ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Ե., 1987, էջ 12:

[6] ՀՑԹԻ Պետական Սալնամէ, 1265 (1849 թ.), էջ 81, 1274 (1858 թ.), էջ 105, 1282 (1865 թ.), էջ 164-165:

[7] Տե՛ս Գալուստեան Գր., նշուած աշխ., էջ 15:

Ատանայի նահանգի ընդհանուր տարածութիւնը, ըստ սալնամէներուն, մօտաւորապէս 50 հազար քառ.քլմ. էր[1]: Բայց հայ պատմագիրներէն շատեր Ատանայի նահանգի տարածութիւնը կը ներկայացնեն 40 հազար քառ.քլմ.[2]: Ատանա նահանգը գրեթէ ամբողջութեամբ կ'ընդգրկէր հայկական Կիլիկիոյ տարածքը, բացի Ալեքսանդրէթէն, Սեաւ լեռներու հիւսիսային շրջանէն, Այնթապէն, Մարաշէն, Զէյթունէն, որոնք ենթակայ էին Հալէպի վիլայէթին, բայց փոխարէնը իր մէջ առնելով Փոքր Ասիոյ դաշտէն մաս մը[3]:

Ատանայի նահանգի կազմաւորումէն ետք, վիլայէթը կը բաղկանար Ատանա, Իչէլ, Գոզան, Փայաս (Ջէպէլ Պէրէքէթ) սանճագներէ, 15 գազաներէ, 23 նահիէներէ եւ 1329 գիւղերէ[4] հետեւեալ ստորաբաժանումներով.

1. **Ատանա սանճագը** կը բաղկանար Ատանա (վիլայէթի կեդրոնը, ուր կը նստէր վալին), Տարսուս (Տարսոն), Մերսին, Գարա Իսալու գազաներէն,

2. **Իչէլ սանճագը**[5] Սելեֆկէ (սանճագին կեդրոն), Անամուռ, Արմէնակ, Կիւլնար եւ Մուբ գազաներէ,

3. **Փայասի**[6] **սանճագը**՝ Փայաս (սանճագի կեդրոն) եւ Օսմանիէ գազաներէն,

4. **Գոզան (Սիս) սանճագը**՝ Սիս (սանճագի կեդրոն), Հաճին (Հաճընը), Գարս Ջիւլգատրիէ[7], Պիլան Քէոյ գազաներէն: 1880-ականներուն վերջինիս փոխարինելու եկաւ Ֆէքէն (Վահկա):

[1] ՀՑԹԻ Ատանայի Սալնամէ, 1308 (1891 թ.), էջ 9:

[2] Էփրիկեան Հ.Ս., նշուած աշխ., էջ 272, Գալուստեան Գր., նշուած աշխ., էջ 15: Իսկ ըստ Բիւզանդ Եղիայեանի՝ Ատանայի վիլայէթը ունէր 45 հազ.քառ.քլմ. տարածութիւն, տե՛ս Եղիայեան Բ., նշուած աշխ., էջ 139:

[3] Տե՛ս Գալուստեան Գր., նշուած աշխ., էջ 16:

[4] ՀՑԹԻ Պետական սալնամէ, 1306 (1889 թ), էջ 589: Հ. Առաքելեան կը նշէ 4 սանճագ,19 գազայ եւ 49 նահիէ, տե՛ս Առաքելեան Հ., նշուած աշխ., էջ 35-36: «Արաքս»-ի Կիլիկիան Ատանա վիլայէթի համար կը նշէ 4 սանճագ, 19 գազայ եւ 23 նահիէ, տե՛ս Կիլիկիա, փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Մատենադարան «Արաքս»-ի, Պետերբուրգ, 1894, էջ 38:

[5] Մինչեւ Ատանայի վիլայէթին մէջ ընդգրկուիլը՝ Իչէլը Գարաման էյալէթին մէկ լիվան էր:

[6] Ատանա վիլայէթի կազմատրման սկզբնական շրջանին այս գաւառը կը կոչուէր Փայաս, որ համընուն սանճագի կեդրոնն էր, իսկ 1877 թ. նոյն գաւառը փոխարինուեցաւ Ճէպէլ Պէրէքէթ անունով: Իսկ 1840-ականներուն այս շրջանին համար գործածուած է նաեւ Ուզէյր անուանումը:

[7] 1880-ականներէն ետք այս գազան կը կոչուէր միայն Գարս: Հայկական աղբիւրներուն մէջ գրուած է նաեւ Կարս ձեւով:

1886 թ., երբ բացուեցաւ 68 քլմ. երկարութեամբ Ատանա-Մերսին երկաթուղագիծը[1], Մերսինը դարձաւ Կիլիկիոյ ամէնէն աշխոյժ նաւահանգիստը: 1888 թ. (1305), անջատուելով Ատանայի սանճագէն՝ վերածուեցաւ առանձին սանճագի (գաւառի)[2]: Նոյնը կը վկայէ նաեւ 1894 թուականին տպուած մատենադարան «Արաքս»-ի «Կիլիկիա» գիրքը, որուն մէջ կ'ըսուի. *«Այս թերթը տպագրութեան յանձնելու ժամանակ մեր առած նոր տեղեկութիւններուն նայելով՝ Մերսինը բաւական տարիներից ի վեր գաւառագլուխ (լիվա կամ սանճագ) է դարձել, ուր նստում է միւթէսարըֆ եւ ոչ թէ գայմագամ»*[3]: Տրուած ցուցակով կը ներկայացնենք 1897-ին Ատանայի նահանգի վարչական բաժանումները[4].

Ատանայի նահանգի վարչական բաժանումները 1897 թ.			
սանճագ	**գազայ**	**նահիէ**	**գիւղ**
Ատանա	2	4	480
Մերսին	1	3	269
Ճէպէլ Պէրէքէթ	5	6	238
Գոզան	3	2	324
Իչէլ	4	6	321
ընդհանուր	15	21	1632

Պէտք է նշել նաեւ, որ վարչական միաւորները յաճախ ենթարկուած են փոփոխութիւններու. կրնար գազան վերածուիլ սանճագի կամ վարչամիաւոր մը կրնար անցնիլ մէկ սանճագէն միւսին: Կրնար աճիլ կամ նուազիլ նաեւ սանճագի մը գազաներուն թիւը: 1870 թուականէն մինչեւ 1914 թուականը գազաներու եւ նահիէներու թիւը անընդհատ ենթարկուած է փոփոխութեան: Ինչպէս օրինակ՝ Ճէպէլ Պէրէքէթի սանճագը 1870-ականներուն ունէր 2 գազայ, իսկ 1880-ականներու վերջաւորութեան՝ 5 գազայ, իսկ 1910-էն ետք՝ 4

[1] Տե՛ս Գալուստեան Գր., նշուած աշխ., էջ 24, Հայաստանի սովետական հանրագիտարան, հատոր I, Երեւան, 1974, էջ 69: 1305 (1891 թ.) թուակիր Օսմանեան պետական տարեգիրքին համաձայն Մերսինը կը ներկայանայ իբրեւ առանձին սանճագ, տե՛ս ՀՑԹԻ Պետական Սալնամէ, 1308 (1891 թ.), էջ 576:

[2] ՀՑԹԻ Ատանայի Սալնամէ, 1312 (1894 թ.), էջ 89-98:

[3] Տե՛ս Մատենադարան «Արաքս»-ի նշուած աշխ, էջ 203:

[4] ՀՑԹԻ Պետական Սալնամէ, 1315 (1897 թ.), էջ 443:

գազայ: Օսմանեան կառավարութեան կողմէ դիտաւորեալ եւ յաճախակի տեղի ունեցող վարչական վերաբաժանումներուն նպատակն էր՝ քրիստոնեայ մեծամասնութիւն ունեցող շրջանները կտրատելով միացնել իսլամական մեծամասնութիւն ունեցող շրջաններուն՝ ժողովրդագրականօրէն դիմափոխելու համար զանոնք:

Թէեւ բուն Կիլիկիոյ մեծ մասը կ՚ընդգրկուէր Ատանա նահանգին մէջ, սակայն, ինչպէս նշեցինք, Կիլիկիայէն մաս մըն ալ կը մտներ Հալէպի վիլայէթի սահմաններուն մէջ: Հալէպի նահանգին ծովեզերեայ մասը՝ կիսովին, իսկ հիւսիսային լեռնագաւառը՝ գրեթէ ամբողջովին, կը մտնէին Կիլիկիոյ թագաւորութեան սահմաններուն մէջ: Այսինքն՝ Մարաշի սանճագը, բացի Ալպիստան գազայէն, Այնթապը եւ Ալէքսանդրէթը կը մտնէին Կիլիկիոյ հայկական թագաւորութեան սահմաններուն մէջ: Ասկէ բացի Հալէպի նահանգին մէջ մտնող եւ Կիլիկիոյ սահմանակից Քիսլիս, Պէյլան, Անտիոք գազաները նոյնպէս հայաշատ էին: 19-րդ դարուն շատ մը պատմագիրներ այս շրջանները նոյնպէս ներառած են Կիլիկիոյ շրջանակին մէջ:

Այստեղի հայութիւնը մէկ մասնիկն էր Կիլիկիոյ հայութեան, որոնք նոյնպէս գաղթականութեան հոսքերով շատ հին ժամանակներէն հաստատուած էին այստեղ եւ կիսած էին շրջանի հայութեան ճակատագիրը: Այստեղ ալ կատարուած էին մեծ դէպքեր, որոնք Կիլիկիոյ ժամանակակից պատմութեան մէջ գրաւած են կարեւոր տեղ:

Հալէպի վիլայէթը կազմաւորուած էր 1866 թ., եւ ունէր մօտաւորապէս 70 հազար քառ. քլմ. տարածութիւն: Կը բաժնուէր 3 սանճագներու, 20 կազաներու, 50 նահիէներու եւ 3261 գիւղերու[1]: 1306 (1889թ.) Պետական Սալնամէի համաձայն՝ Հալէպի վիլայէթը ունէր հետեւեալ վարչական բաժանումները[2]:

1. **Հալէպի սանճագը** կը բաժնուէր Հալէպ (վիլայէթի կեդրոն), Այնթապ, Քիլիս, Պէյլան, Ալէքսանտրէթ, Անտիոք, Հարէմ, Ճըսըր-Շողուր, Իտլէպ, Մաարաթ իլ Նուման, Պապ, Մէմպիճ, Րաքքա եւ ճեպէլ Սէմաան գաւառակներուն:
2. **ՈւրՖայի սանճագը**՝ ՈւրՖա (սանճագի կեդրոն), Բում Գալա (Հռոմկլայ), Սրուճ, Պիրէճիկ գաւառակներուն:
3. **Մարաշի սանճագը**՝ Մարաշ (սանճագի կեդրոն), Զէյթուն, Ալպիստան, Անտէրին, Պազարճըգ գակառակներուն:

Ինչպէս նշեցինք, Մարաշի սանճագը, բացի ամէնէն հիւսիս գտնուող Ալպիստան գաւառակէն, ամբողջութեամբ մաս կը կազմէր Կիլիկիոյ հայկական թագաւորութեան:

[1] ՀՑԹԻ Պետական Սալնամէ, 1306 (1889 թ.), էջ 402:
[2] Նոյն տեղը, էջ 396-402:

Մարաշի սանճագը Հալէպի նահանգին ենթակայ երկրորդ կարգի գաւառ մըն էր, որուն սահմաններն էին՝ արեւելքէն Խարբերդ, հիւսիսէն Սեբաստիա, արեւմուտքէն Ատանա, իսկ հարաւէն կցուած էր Հալէպի գաւառին: Մարաշի սանճագի տարածութիւնն էր 18.405 քառ. քլմ.[1]: 19-րդ դարու սկիզբը Մարաշը առանձին փաշայութիւն էր. *«Էյալէթ (նահանգ) Մարաշոյ, յորում նստի եռդուղեան վեզիր, եւ կամ երկդուղեան փաշայ՝ ի Մարաշ քաղաքի, ուր եւ մօնլա, եւ գաւոլըգ (թեմք) պարունակեալք՝ ի սոյն էյալէթ են սոքա՝ Մարաշ, Այնթապ, Գարսի գիւղգատրիէ, Ջամանքի, Պելաս (թերեւս Պէլան), Էլպիստան: Յորս բաց ի Մաֆաշոյ յիւրաքանչիւրումն գատի (դատաւոր) նստի, եւ ի կողմանէ տերանց մալիքանէից եւ թիմարից (դաստակերտաց եւ կալուածոց) նստի վօյվոտա կամ սուպաշի»*[2]:

1848 թ., Մարաշը կը դրուի Ատանայի վալի Օսման փաշային իրաւասութեան տակ[3]: է. Պրէմոն իր «Կիլիկիա 1919-1920-ին» գրքոյկին մէջ Մարաշ գաւառին մասին կը գրէ. *«Մարաշի սանճագը սկիզբը մաս կը կազմէր Ատանայի վիլայէթին: 1880-ի մօտերը Մարաշը կցուեցաւ Հալէպի վիլայէթին: Մարաշը, որ դէպի Կասպից ծով, Թուրքիստան, Պարսկաստան եւ Միջագետք երկարող Միջերկրականի ճամբաներուն հանգոյցն է, բնականաբար կ՚ուղղուի դէպի Ատանա»*[4]: է. Պրէմոնի նշած թուականը ճիշտ չէ, որովհետեւ Սալնամէներուն մէջ յստակ ցոյց կը տրուի, թէ 1866 թուականէն սկսեալ Մարաշը արդէն Հալէպի վիլայէթին մէկ գաւառն էր: 1909 թ. Սալնամէին համաձայն՝ Մարաշի սանճագը ունէր 4 գազայ, 17 նահիէ եւ 471 գիւղ[5]:

Բոլոր վարչական միաւորներուն մէջ ամէնէն հայաշատ սանճագներէն էր Ատանայի կեդրոնական սանճագը, յատկապէս՝ Ատանա քաղաքը շրջակայ կարգ մը հայաբնակ գիւղերով, ինչպէս նաեւ Մարաշի, Գոզանի (Սիսի) եւ ճեպէլ Պէրէքէթի բնակչութեան գերակշռող մասը հայեր էին: Հայաշատ էր նաեւ Այնթապ քաղաքը:

[1] Տե՛ս Գալուստեան Գր., նշուած աշխ., էջ 35:
[2] Ինճիճեան Ղ., նշուած աշխ., էջ 372:
[3] Տե՛ս Birken A., նշուած աշխ., p. 138: Տե՛ս նաեւ Գ. Չագմագճեան, Դրուագներ Կիլիկիոյ նախընթաց կեանքէն, «Հայրենիք» ամսագիր, Պոստըն, 1931, N. 3, էջ 138-139, Թորոսյան Շ. Թ., նշուած աշխ., էջ 12:
[4] Bre'mond E., La Cilicie en 1919-1920, Paris, 1921, p. 4: Այլ աղբիւր մը կը յիշատակէ, թէ Մարաշի սանճագը 1890-ին կցուեցաւ Հալէպի վիլայէթին, տե՛ս՝ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Ե., 1991, էջ 721:
[5] ՀՑԹԻ Պետական Սալնամէ, 1327 (1909 թ.), էջ 624-627:

Համաշխարհային Պատերազմի նախօրէին վիլայէթները դարձեալ ենթարկուեցան վարչական փոփոխութիւններու, որուն իբրեւ հետեւանք Ատանա նահանգէն անջատուեցաւ Իչէլը եւ դարձաւ անկախ սանճագ, իսկ Մարաշը անջատուելով Հալէպի նահանգէն նոյնպէս դարձաւ անկախ գաւառ[1]: Այսպիսով՝ պատմական Կիլիկիոյ տարածքը, ուր կ՛ապրէրին մեծ թիւով հայեր, մասնատուելով՝ բաժնուեցաւ տարբեր վարչամիաւորներու:

САЛБИ САГТЧЯН
ЕГУ

АДМИНИСТРАТИВНОЕ ДЕЛЕНИЕ КИЛИКИИ В КОНЦЕ XIX – НАЧАЛЕ XX ВВ.

РЕЗЮЕ

Согласно принятому в 1824 г. новому закону о вилайетах прежние административные единицы Османской империи стали называться вилайетами. В 1869-1870 гг. большая часть территории прежнего Киликийского армянского царства была включена в созданный вилайет Адана. Остальная территория вошла в санджак Мараш Алеппского вилайета. Накануне Первой мировой войны вилайеты вновь подверглись административному делению. В результате из вилайета Адана был выделен отдельным санджаком Ичел. Также отдельным санджаком стал Мараш, отделившийся от Алеппского вилайета. Таким образом территория исторической Киликии, населенная большим количеством армянского населения, была раздроблена между различными административными единицами.

[1] Տե՛ս Karpat K, նշուած աշխ., էջ 172, 176, 184, 186:

ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԹՈՔԱՏ, ԱՄԱՍԻԱՅ, ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ ՍԱՆՋԱԿՆԵՐԻ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ և 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Սեբաստիայի վիլայեթի հյուսիս-արևմտյան սանջակների՝ Թոքատի (Եվդոկիա), Ամասիայի, Շապին-Գարահիսարի կրթական մակարդակը 19-րդ դ. վերջին և 20-րդ դարի սկզբին բավականին ցածր էր: Կրթական գործը զարգանում էր հիմնականում խոշոր քաղաքներում, իսկ գյուղերում այն գտնվում էր շատ անմխիթար վիճակում: Կային գյուղեր, որտեղ հայկական դպրոցները բացակայում էին: Կրթական կյանքը Թոքատում հիմնականում ծավալվել է սանջակի կենտրոն՝ Թոքատ քաղաքում: 19-րդ դարի երկրորդ կեսին քաղաքի կրթական խղճուկ վիճակին վերջ տալու նպատակով՝ հիմնադրվում է ազգային վարժարան[1]: Նրա տնօրեն է դառնում Կարապետ Ընկուզյանը: Այս վարժարանի կրթական ծրագրերը, ինչպես նաև դասատուների մտավոր մակարդակը անկատար և թերի էին, և դա էր պատճառը, որ վարժարանը, դեռ լիովին չկազմավորված, կանգնում է փակման եզրին: 1871 թ. վարժարանը վերակազմվում է և նրա տնօրեն է դառնում Կարապետ Աբգարյանը[2]: Քաղաքի հայ առաջադիմական գործիչներ Հակոբ Գատեճյանը և Կարապետ Ասլանյանը մասնավոր կերպով հոգում էին դպրոցի ծախսերը[3]: 1875 թ., երբ Պողոս Վարդապետ Նաթանյանն այցելում է քաղաք, վարժարանի մասին գրում է, որ քաղաքն ուներ մեծ ճեմարան, ուր 400 տղա էր դաստիարակվում: Կոլեկտիվը պառակտված էր, քանզի դասատուները, ժողովրդական խռովություններից օգուտ քաղելով, իրենց անձնական շահի համար ճեմարանը մասնատել էին անհատական դպրոցների, որտեղ դասավանդում էին թերականություն, թվաբանություն և ընթերցանություն[4]: Հեղինակը նաև նշում է, որ այդ ժամանակ քաղաքում կար իգական սեռի համար նախատեսված վարժարան, որտեղ ուսանում էին մոտ 100

[1] Փաստերի բացակայության պատճառով, պարզ չէ Թոքատի ազգային վարժարանի հիմնադրման ստույգ տարեթիվը:
[2] «Մասիս», Կ.Պոլիս, 1871, N107, ապրիլի 17:
[3] Այպոյաճեան Ա., Պատմութիւն Եվդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 947:
[4] Նաթանեան Պ., Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ և անոր կուսակալութեան ներքեւ գտնվող մի քանի գլխաւոր քաղաքաց, Կ.Պոլիս, 1877, էջ 169:

աշակերտուհի[1]: Իսկ 1878 թ. այստեղ այցելած Գարեգին Սրվանձտյանցը, բնավ փայլուն չհամարելով քաղաքի կրթական գործը, նշում էր, որ Թոքատն ուներ 5 վարժարան, որոնցից 3-ը «ծաղկոցներ»[2] էին տղաների համար, մեկը՝ նախատեսված էր աղջիկների համար, մեկն էլ ուսումնարան էր: Աշակերտների թիվը հասնում էր 205-ի, իսկ աշակերտուհիներինը՝ 18-ի[3]: Պետք է նշել, որ քաղաքում 19-րդ դարի վերջին գործել են նաև մասնավոր դպրոցներ: Դրանցից էր օրինակ «Ոսկյան» վարժարանը, ուր 1869-1872 ընթացքում դասավանդել էր Մկրտիչ Փորթուգալյանը[4]: Այդ ժամանակ գործում էին նաև մասնավոր փոքր այլ վարժարաններ: Սակայն մասնավոր դպրոցները 1897 թ. դրությամբ փակվեցին, և նրանցից գործում էր «Քառասուն մանկանց» եկեղեցական դպրոցը միայն, որի տնօրենն էր Պողոս Ղազյանը[5]: Քիչ ավելի ուշ այս մասնավոր դպրոցն էլ փակվեց, և ողջ ուշադրությունն սևեռվեց ազգային վարժարանի վրա: Այդ միակ վարժարանը հետզհետե կանոնավորվում էր: Այս վարժարանում դասավանդել են Մկրտիչ Փորթուգալյանը, Գևորգ Փասմանզանջյանը, Հակոբ Բոյաջյանը և ուրիշներ, ովքեր իրենց նպաստն են բերել կրթօջախի զարգացման գործում: 19-րդ դարի վերջում Թոքատում ևս մի փորձ է արվում մասնավոր դպրոց հիմնելու համար: 1883 թ. Մկրտիչ Փորթուգալյանի աշակերտներ Կարապետ Ղազարյանը, Հովհաննես Սարաֆյանը, Կարապետ Քյոլյանը մասնավոր դպրոց են բացում[6]: Կ. Պոլսի Ներսես պատրիարքի հիշատակը վառ պահելու համար դպրոցն անվանվում է Ներսիսյան: Ներսիսյան դպրոցը 1886-1887 թթ. ուստարում ուներ 130 աշակերտ, մինչդեռ ազգային վարժարանն ուներ 420 աշակերտ[7]: Թուրքական կառավարությունը այս դպրոցը համարելով հեղափոխության կենտրոն՝ 1890-ական թթ. փակում է: Ազգային վարժարանը հետագայում շարունակում է գործել, իսկ 1894 թ. տնօրեն է նշանակվում Հովհաննես Ղազանջյանը: Նրա տնօրինությունը տևեց մինչև 1900 թ., երբ նրան այդ պաշտոնում փոխարինեց Միսաք Փանոսյանը[8]: Պետք է նշել, որ նա

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Ծաղկոցները համապատասխանում էին նախակրթարանների մակարդակի:
[3] Սրվանձտյանց Գարեգին, Երկեր, հ. Բ, Ե., 1982, էջ 169:
[4] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 476, ց. 1, գ. 2528, թ. 27 շրջ.:
[5] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 953:
[6] Նույն տեղում, էջ 955:
[7] Նույն տեղում, էջ 958:
[8] Նույն տեղում, էջ 970:

տնօրինում է ընդամենը մեկ տարի, և 1901-1903 թթ. վարժարանի տնօրինությունը հանձնվում է Գևորգ Իբրահոսյանին: Նա իր կրթությունն ստացել էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա նույն պաշտոնին է եղել Իզմիրում և Կ. Պոլսի Ս. Փրկչյան որբանոցում:

Հետաքրքրական է, որ Թոքատում այս վարժարանի կողքին 1901 թ. բացվում է նաև Ս.Ներսիսյան մանկապարտեզ[1]:

Թոքատում ուսումնական գործընթացը կառավարելու նպատակով կազմավորվել էր ուսումնական խորհուրդ, որի ատենապետը 1902-1908 թթ. Հովհաննես Ղազանճյանն էր: Այդքանով հանդերձ, ժողովրդի մի ստվար հատված կրթության հանդեպ այնքան անտարբեր էր, որ մինչև 8-10 տարեկան երեխաներին արհեստ սովորելու էին ուղարկում: 1903-1904 թթ. ուստարվա սկզբին կրկին ազգային վարժարանի տնօրեն է ընտրվում Միսաք Փանոսյանը, որը միաժամանակ նաև դասավանդում էր հայերեն, ֆրանսերեն լեզուներ և երաժշտություն[2]:

20-րդ դարի սկզբին Թոքատի կրթական կյանքը որոշակի զարգացում է ապրում: 1906 թ. հայերն արդեն ունեին երկսեռ նախակրթարան, ծաղկոցներ, մանկապարտեզ[3]: Վարժարանի ուսումնական ծրագրում տեղ էին գտնում նորանոր առարկաներ, ինչպես օրինակ՝ կրոնագիտություն, թվաբանություն, գծագրություն, մարմնամարզություն և այլն: 1911-1912 թթ. վարժարանի գծագրության ուսուցիչն էր Եվրոպայում երկար տարիներ ապրած շապինգարահիսարցի Արսեն Մարկոսյանը, մարմնամարզության դասերը վարում էր Պետրոս Պոնտացին, իսկ մեծ գրող Դանիել Վարուժանն ամեն ուրբաթ գրական ցերեկույթներ էր կազմակերպում:

Արդեն 1910-1911 թթ. ուսումնական տարում Թոքատի վարժարանի երկսեռ նախակրթարաններ հաճախում էին 200 տղա և 150 աղջիկ, իսկ քաղաքի երեք մանկապարտեզներ էին հաճախում 550 երեխա (տղա և աղջիկ)[4]: 1914-1915 թթ. ուստարում Թոքատի ազգային վարժարանի տնօրինությունը հանձնվեց ամուսիններ Ավո և Մարի Բեյլերյաններին: Ցավոք, սկսված Ի-ին համաշխարհային պատերազմը խաթարեց նաև ուսումնական հաստատությունների կրթական կյանքը:

[1] Նույն տեղում, էջ 976:
[2] Նույն տեղում, էջ 976:
[3] Նույն տեղում, էջ 977:
[4] ՀԱԱ, ֆ. 476, ց.1, գ. 2528, թ. 23 շրջ:

Այս կրթական հաստատություններից բացի, Թոքատում գոյություն ունեին մի քանիսը ևս, որոնք չնայած կարճատև գոյատևմանը, դրական հետք թողեցին կրթական կյանքի զարգացման վրա: Դրանից էր, օրինակ՝ «Անծնվեր սանուց» կիրակնօրյա դպրոցը, որը հիմնադրվել էր համանուն ընկերության կողմից 1869 թ.: Նրա առաջին ատենադպիրը դարձավ Մկրտիչ Փորթուգալյանը[1]: Աշակերտների թիվը 1870 թ. հասնում էր 30-ի: Դասախոսությունները կատարվում էին շաբաթը 2 անգամ: 1882-1883 թթ. Հովհաննես Սարաֆյանը, Հակոբ Բոյաջյանը, Գևորգ Փասպանյանը և Գևորգ Նազարյանը դասախոսում էին հայերեն, թուրքերեն լեզուներ և այլն: Համիդյան ջարդերը խաթարեցին այս դպրոցի կրթական կյանքը:

Թոքատ քաղաքում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին գոյություն ունեին նաև հայ կաթոլիկների և բողոքականների վարժարաններ: Կաթոլիկների դպրոցի մասին է վկայում 1875 թ. Թոքատ այցելած Պողոս վարդապետ Նաթանյանը: Նա Թոքատում հանդիպել էր բավականին մեծ թվով աշակերտներով օրինական երկսեռ դպրոց[2]: 1901-1902 թթ. ուստարում այստեղ սովորում էր 25 տղա, 60 աղջիկ[3]: Դպրոցը երկար կյանք չի ունեցել, քանի որ 1914 թ. կաթոլիկ երեխաներն սկսեցին հաճախել կաթոլիկների դպրոց[4]:

Հայ բողոքականների վարժարանը Թոքատ քաղաքում 1864-1890 թթ. արտոնյալ և հայտնի կրթական հաստատություն էր: 1901-1902 թթ. ուստարում աշակերտների թիվը հասավ 110-ի, (80-ը՝ արական սեռի, 30-ը՝ իգական)[5]: Ֆրանսիացի հեղինակ Վիտալ Քինեն իր աշխատության մեջ, փորձում է ցույց տալ, որ թուրքերի կրթական մակարդակը Թոքատ քաղաքում ավելի բարձր էր, քան հայերինը: Նրա բերած վիճակագրության համաձայն 19-րդ դ. վերջերին Թոքատն ուներ 10 բարձրագույն մետրեսե (վարժարան - Ա. Ս.)՝ 200 արական սեռի աշակերտներով, 1 երկրորդական վարժարան՝ 12 արական սեռի աշակերտով և 11 նախակրթարան՝ 880 աշակերտով (տղա և աղջիկ)[6]:

Վ. Քինեն «մետրեսները» ներկայացնում էր իբրև բարձրագույն վարժարաններ, մինչդեռ իրականում դրանք մզկիթներին կից էին գործում և նախակրթարաններին հավասար մակարդակ ունեցող դպրոցներ էին:

1887 թ. թուրքերն ընդամենը մեկ բարձրագույն վարժարան ունեին: Նույն տարում կառավարությունը որոշեց՝ Թոքատի մեջ առաջին անգամ բացել բարձրագույն նախակրթարան 7-ամյա շրջանով[1]:

Խոսելով Թոքատի սանջակի գյուղական վարժարանների մասին՝ ցավով պետք է նշել, որ նրանց մասին տեղեկությունները շատ չնչին են:

1901-1902 թթ. Թոքատի սանջակի դպրոցների վիճակագրությունը[2] հետևյալն էր.

վայր	անուն վարժարան	դաս	տղա	աղջիկ	ընդամենը	ուսուցիչ		գումար
						այր	կին	
1.Թոքատ	Մայր վարժ.	Ջ	450	250	700	12	6	18
2.Զիլե	Ս. Մեսրոպյան	Ջ	336	140	476	9	3	12
3.Նիքսար	Սուրենյան	Ջ	240	70	310	5	2	7
4.Գերեք	Ս. Մեսրոպյան	Ջ	177	93	270	4	2	6
5.Յաքմիշ	Նախակրթարան	Ա	30	---	30	1	-	1
6.Թախթպա	___ ' ___	Ա	25	---	25	1	-	1
7.Գրիգորիս	___ ' ___	Ա	30	---	30	1	-	1
8.Չիֆթլիկ	___ ' ___	Ա	35	---	35	1	-	1
9.Պոլիս	___ ' ___	Ա	30	---	30	1	-	1
10.Պիսկվենճի	___ ' ___	Ա	20	---	20	1	-	1
ք	___ ' ___	Ա	35	5	40	1	-	1
11.Աղապաղ								
			1408	558	1966	37	13	50

- 445 աշակերտներ հաճախում էին հայ կաթոլիկների, հիսուևականների և բողոքականների դպրոցներ:
- Հերեքի հայ բողոքականների վարժարան հաճախում էր 23 աշակերտ:

1912-1913 թթ. ուստարում ազգային և օտար վարժարաններում ուսանում էր 4000 աշակերտ[3]:

19-րդ դարի 70-ական թթ. Ամասիայի սանջակում կրթական գործը գտնվում էր անմխիթար վիճակում: Կրթական կյանքը զար-

[1] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 986:
[2] Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 172:
[3] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 2528, թ. 22 շրջ.:
[4] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 828:
[5] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 2528, թ. 22, շրջ.:
[6] Quinet Vital, La Turquie ol'Asia, v. 1, Paris, 1892, p. 707.

[1] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 2528, թ. 12 շրջ.:
[2] Տե՛ս նույն տեղում թ. 3-4, տե՛ս նաև Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 994:
[3] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 2528, թ. 12 շրջ.:

գանում էր հիմնականում սանջակի կենտրոնում Ամասիա քաղաքում, ուր 1870 թ. կար 3 վարժարան, բայց դրանցից 2-ն անգամ «ծաղկոց» կոչվելու իրավունք չունեին, քանզի երեխաները Աստվածաշնչից և «Նարեկից» բացի՝ այլ ուսում չէին ստանում[1]: Այդ վարժարանների մեջ քիչ թե շատ իր առաջադիմությամբ աչքի էր ընկնում ս.Աստվածածին եկեղեցուն կից գործող Ներսիսյան վարժարանը, որն այդ ժամանակ ուներ մոտ 60 աշակերտ, 1 դասատու և տնօրեն: Վերջինը նաև քահանան էր: Վարժարանում ուսումը բաժանված էր 8 կարգի [դասարանների], դասավանդվող առարկաներն էին հայերեն լեզուն, թուրքերենը, երաժշտությունը[2]: 1878 թ. քաղաք այցելած Գարեգին Սրվանձտյանցը նշում էր, որ քաղաքն ուներ մեկ ուսումնարան՝ ս. Ներսիսյան անվամբ և 5 ծաղկոց, որոնք բոլորը միասին ունեին 409 աշակերտ, 108 աշակերտուհի[3]: Այս ուսումնարանում ուսանում էին 40 աշակերտ, ովքեր սովորում էին հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն, աշխարհագրություն առարկաները[4]: Մինչև 1890-ական թթ. Ներսիսյան վարժարանի շրջանավարտների անունները հայտնի չեն: 1890-ական թթ. շրջանավարտների թվում էին Սմբատ Ֆերհարյանը և Միհրան Թորոսյանը, ովքեր մինչև 1898 թ. ուսուցչական գործունեությամբ էին զբաղվում[5]: 1895 թ. Ամասիայի հայերն ունեին արական սեռի համար նախատեսված 3 ծաղկոց, 2 նախակրթարան, իսկ իգանակ սեռի համար՝ 2 ծաղկոց, որոնք բոլորը միասին ունեին շուրջ 700 աշակերտ[6]: Պետք է նշել նաև, որ նույն ժամանակ հայտնի առևտրական գործիչներ Իբրահոսյան եղբայրները և Հակոբ անունով մի հարուստ անձնավորություն իրենց միջոցներով ս. Հակոբ եկեղեցու մեջ նախակրթարաններ բացեցին[7]: Այս նախակրթարանները բավականին արագ զարգացում ապրեցին և 20-րդ դ. սկզբին արդեն վերածվեցին կայուն վարժարանների:

Ամասիա քաղաքի կրթական կյանքի բարելավման գործում իր ներդրումն է ունեցել «Դպրոցասիրաց ընկերությունը»[8]: Ընկերության ջանքերով Ամասիայում բացվում է վարժարան, որն ընդամենը 4

[1] Սիմոնեան Գ.Հ., նշվ. աշխ., էջ 525:
[2] Նույն տեղում, էջ 525:
[3] Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 2, Ե., 1982, էջ 216:
[4] Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, էջ 67:
[5] Սիմոնեան Գ. Հ., նշվ. աշխ., էջ 534-535:
[6] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1895, 1104, մարտի 7:
[7] Նույն տեղում:
[8] Սիմոնեան Գ.Հ., նշվ. աշխ., էջ 537:

տարվա կյանք է ունեցել: Ընկերության ջանքերով վարժարանը ուսուցչական կազմով ապահովելու նպատակով՝ Բարունակ Բարսեղյանին և Միսակ Շամլյանին ուղարկում է Մուրադ - Ռաֆայելյան վարժարան:

Ամասիա քաղաքի կրթական մակարդակը 20-րդ դ. սկզբին, համեմատած 1870-ական թթ., բարձրացել էր, և գոյություն ունեին այնպիսի կրթական հաստատություններ, ինչպիսիք էր ս. Ներսիսյան վարժարանը՝ 440 աշակերտով (տղա և աղջիկ), ս. Նիկողոսյան վարժարանը՝ արական սեռի 145 աշակերտով և Իբրահոսյան վարժարանն՝ արական սեռի 66 աշակերտներով[1]: Ցավոք, կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերի, ուսուցչական կազմի և այլնի վերաբերյալ մանրամասնություններ մեզ հայտնի չեն: Հայտնի է միայն, որ «Իբրահոսյան» վարժարանը 1902 թ. տվել է իր առաջին շրջանավարտները[2]: Ամասիա քաղաքից բացի, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին կրթական կյանքը քիչ թե շատ զարգանում էր Մարզվանում, Վեզիր-Քյոփրյուում, Սիմ-Հաջիգյուղում և Լատիկում:

Սիմ-Հաջիգյուղի հայերը 20-րդ դ. սկզբին ունեին 2 վարժարան՝ Պարթևյան, նախատեսված արական սեռի համար և Հռիփսիմյան՝ իգական սեռի[3]: Պարթևյան վարժարանի ներքնահարկում գործում էին ծաղկոց և մանկապարտեզ: Վարժարան 20-րդ դարի սկզբին հաճախում էին 250, իսկ Հռիփսիմյան՝ 70 աշակերտ և աշակերտուհիներ: Այն վարժարաններում ուսումնական գործընթացը վարվում էր Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից հաստատված կրթական ծրագրով: Դասավանդվող առարկաների թվում էին հայոց լեզուն, գրականությունը, քերականությունը, թվաբանությունը, երաժշտությունը, եկեղեցական ընթերցանությունը, թուրքերենը: Ուսուցիչների թվում էին Մարզվանից հրավիրված Հովհաննես Գարակյոզյանը, Հակոբ Միտիկյանը, Եղիա Բաթերյանը, Սրբուհի Սյումպոզյանը:

Մարզվան քաղաքում ևս 19-րդ դարի վերջին կրթական կյանքը բավական ցածր մակարդակի վրա էր: Հայտնի է միայն, որ 1878 թ. դրությամբ այստեղ գործում էր ս. Սահակյան երկսեռ վարժարանը, ուր հաճախում էին 328 աշակերտ և 30 աշակերտուհի[4]: 20-րդ դարի սկզբին սրա կողքին գործում էին նաև Արամյան վարժարանը, ուր հաճախում էին 150 աշակերտներ, և Լուսինյան վարժարանը 130

[1] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 81, թ. 12 շրջ:
[2] Սիմոնեան Գ.Հ., նշվ. աշխ., էջ 546:
[3] «Բյուզանդիոն», Կ. Պոլիս 1906 թ., 2928:
[4] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 81, թ. 24 շրջ:

աշակերտուհիներով[1]: Նշենք նաև, որ Մարզվանում հաստատված բողոքականները ևս ունեին վարժարան՝ 50 աշակերտով:

Խոսելով Մարզվանի կրթական կյանքի մասին՝ պետք է անդրադառնալ նաև Մարզվանի այսպես կոչված «Անաթոլիայի քոլեջ»-ին: Ասելով «Անաթոլիայի քոլեջ»՝ պետք է հասկանալ Ամերիկյան միսիոներական հաստատությունները՝ քոլեջը, աղջիկների վարժարանը, հիվանդանոցը և աստվածաբանական դասընթացը[2]: Հաստատությունը գտնվում էր Մարզվան քաղաքի հյուսիսային մասում: Հողային ընդարձակ տարածության մեջ կառուցված էին եղել 35 շենք, յուրաքանչյուր բաժին իր մասնավոր շենքով՝ կոշկակարանոցը, փուռը, բաղնիքը, աղջիկների վարժարանը, հիվանդանոցը, մանուկների համար նախատեսված քոլեջը, ուր հաճախում էին 15 տարեկանից ցածր երեխաներ, համրերի վարժարանը, թանգարանը և այլն[3]: «Անաթոլիայի քոլեջը» մի քանի տարի հետո արդեն հանդես է գալիս իբրև աստվածաբանական ճեմարան: 1883 թ. հայասեր և հայախոս դոկտոր Չարլզ Թրայսիի տնօրինության ժամանակ այն կրկին վերածվել էր քոլեջի[4]: 1911 թ. տնօրինությունն անցավ դոկտոր Ջորջ Ուայթին, որը նույնպես ամեն հնարավոր միջոցներով օգնեց հայ ժողովրդի զավակների զարգացման գործին: Նրա օրոք քոլեջն ամենածաղկուն շրջանն էր բոլորել: Այստեղ դասավանդում էին փորձառու 10 դոկտոր, պրոֆեսոր՝ 6 հայ, 2 ամերիկացի, 2 հույն և 16 տարբեր ազգությունների ուսուցիչներ[5]: Պաշտոնական ուսուցման լեզուն անգլերենն էր: Ուսումնական ծրագրում տեղ էին գտել փիլիսոփայություն, տրամաբանություն, տնտեսագիտություն, հոգեբանություն, տիեզերագիտություն, հայերեն, հունարեն, թուրքերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուներ առարկաները: Աշակերտները՝ հայեր, հույներ, թուրքեր, ռուսներ, բուլղարներ և վրացիներ էին, որոնք և՛ կրոնական, և՛ ազգային ազատություններ էին վայելում: Քոլեջի աշակերտությունն, իր ազգային ու գրական իղձերի գոհացման և զարկ տալու համար, ուներ իր ուսանողական գրական ընկերությունը կամ միությունը, որը արտոնված էր կառավարության կողմից: Այսպես, հայերի գրական ընկերությունը կոչվում էր Շավարշյան, հույներինը՝ Պոնտոսի, թուրքերինը՝ էդեսլիյաթը Օսմանի, որոնք

[1]ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 2595, թ. 70 շրջ:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 173 շրջ:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում, թ. 174 շրջ:
[5]Տե՛ս նույն տեղում:

ունեին քաղաքական երանգ և լոկ գրական էին[1]: Ի-ին համաշխարհային պատերազմից հետո կնքված զինադադարի հետևանքով սկսված հույների տարագրությունը թուրքական կառավարությունն օգտագործեց այս ընկերություններին քաղաքական երանգ տալու համար և շուտով փակեց այդ քոլեջն ու ընկերությունները:

Կրթական ծրագրերով և ուսումնական մակարդակով խիստ անմխիթար վիճակում էին գտնվում Վեզիր-Քյոփրյու ու Լատիկ գյուղաքաղաքները: Մայրենի լեզու, գրականություն իմացողներ չկային[2]: Նույնիսկ ստորագրություն դնողների թիվը շատ քիչ էր: 1878 թ. Վեզիր-Քյոփրյու այցելած Գարեգին Սրվանձտյանցը նշում էր, որ քաղաքն ուներ միայն ս. Սահակյան վարժարանը, ուր հաճախում էր 50 աշակերտ[3]:

Լատիկ գյուղաքաղաքի կրթական կյանքի վերաբերյալ տեղեկությունները խիստ սակավաթիվ են: Սակայն պետք է ենթադրել, որ այստեղ ևս կրթական մակարդակը շատ ցածր է եղել, քանի որ 1878 թ. այն ուներ երկսեռ վարժարան, ուր հաճախում էին 18 տղա և 7 աղջիկ[4]: 20-րդ դարի սկզբին Լատիկում գոյություն ուներ ս. Լուսավորիչ եկեղեցին, որի սենյակներից մեկը ծառայում էր որպես նախակրթարան[5]:

19-րդ դարի վերջին, համեմատած Սեբաստիայի հյուսիս-արևմտյան գավառների կրթական մակարդակի հետ, վիլայեթի հյուսիսային գավառում՝ Շապին-Գարահիսարում կրթական գործն ավելի լավ էր կազմակերպված: Դա բացատրվում է նրանով, որ Գարահիսարցիք «մեծ սեր ունեին դեպի ուսումը»[6]: Դեռ 1878 թ. Շապին-Գարահիսար այցելած Գարեգին Սրվանձտյանցը նշում է, որ քաղաքն ուներ Մուշեղյան ուսումնարան, ս. Փրկչյան ուսումնարան և օրիորդաց ծաղկոց[7]: Այդ ժամանակ աշակերտների թիվը հասնում էր արական սեռինը՝ 440-ի և իգական սեռինը՝ 120-ի: Ծախսերը գոյանում էին եկեղեցիներից և ժողովրդի հանգանակություններից: Քաղաքում գործում էր նաև Արամյան մայր վարժարանը, որը 1886 թ. մեծ հրդեհի հետևանքով այրվել էր, և ժամանակավորապես նրա

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 175 շրջ:
[2] «Փունջ», Կ. Պոլիս 1876, մայիս 19, թ. 1078:
[3] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 81, թ. 33:
[4] Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ, էջ 199:
[5] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 81, թ. 22:
[6] Արամ Հայկազ, Շապին Գարահիսարը ու իր հերոսամարտը, Նիւ Եորք, 1957, էջ 31:
[7] Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 162:

աշակերտությունը և ուսուցչական կազմը ցրվել էին[1]: Շուտով քաղաքի մեջ Ավագ Տուրիկյանի, Սարգիս Քաջունու, Ավետիս Թացյանի և այլ ուսուցիչների կազմով բացվում է ս. Փրկչյան ազգային վարժարանը: Գրեթե միաժամանակ քաղաքում բացվում են 3 ծաղկոց:

Ավելի ուշ, Գրիգոր Վահունին Լեյլևկյաններ նշանավոր ընտանիքի ընդարձակ տան մեջ բացում է անհատական դպրոց և իրեն օգնական է նշանակում Ալեքսան Տաքեսյանին[2]: Սակայն շուտով թուրքական կառավարությունը ձերբակալում է Վահունուն:

Անհատական դպրոցը դրանից հետո շարունակում էր գոյատևել «Փոքր Մուշեղ դպրոց» անվան տակ, և այնտեղ է փոխադրվում Օզանյանների ընդարձակ տունը: Այս դպրոցն ուներ աղջիկների ընդարձակ դասարան:

1898 թ. ազգային գործիչ Սմբատ վարդապետ Տաատեթյանը գալով Շապին-Գարահիսար՝ կազմում է կրթական մարմիններ: Նա փակել տվեց անհատական ու թաղային դպրոցները և տեղի ու Կ. Պոլսից, Կարինից հրավիրված ուսուցչական կազմով ուժերը կենտրոնացրեց ս. Փրկչյան ազգային վարժարանում: Այն դարձավ Շապին- Գարահիսարի միակ դպրոցը: Պետք է նշել, որ նույն ժամանակ Կյուլասյանների տան մեջ բացվեց առանձին մանկապարտեզ[3]: 20-րդ դարի սկզբին հիշյալ ազգային վարժարանի լավագույն ուսուցիչը Տիգրան Կարմիրյանն էր, դաստիարակ ուսուցիչը՝ Կարապետ Նորարևյանը, իսկ թուրքերենը դասավանդում էր Ադել էֆենդին[4]: Վարժարանի ղեկավարությունը միշտ գտնվել է ՀՅԴ կուսակցության ձեռքում և միայն 1 տարով անցել է Վերակազմյալ հնչակյան կուսակցության ձեռքը[5]:

Պետք է նշել, որ բացի ս. Փրկչյան վարժարանից Մեծ եղեռնի նախօրյակին, Շապին Գարահիսար քաղաքում գործում էր նաև Մուշեղյան վարժարանը և դրանցում կրթվում էին 500 աշակերտ[6]:

Ի տարբերություն Թոքատի և Ամասիայի գավառների, այս գավառում կրթական կյանքը որոշ չափով 19-րդ դարի վերջին և հատկապես 20-րդ դարի սկզբին զարգացել է նաև գյուղերում ու

[1] Արամ Հայկազ, նշվ. աշխ., նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 33:
[4] Գանարեան Գ., Հուշեր և խոհեր Շապին Գարահիսար Պոլիս, Կիլիկիա և Լիբանան, Պեյրութ, 1960, էջ 87:
[5] Արամ Հայկազ, նշվ. աշխ., էջ 35:
[6] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 869բ., 13 շրջ., տե'ս նաև Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա., Վենետիկ, 1902, էջ 485:

գյուղաքաղաքներում: Ցավոք, խիստ կցկտուր են գյուղերի կրթական կյանքի վերաբերյալ նյութերը: Այդ գյուղերի կրթական գործի մասին իր տեղեկություններն է հայտնել 1878 թ. Շապին-Գարահիսար այցելած Գարեգին Սրվանձտյանցը[1].

Թամզարա	Արամյան վարժարան	270 արական սեռի աշակերտ, 20՝ իգական
Աներդի	Վահանյան վարժարան (ծաղկոց)	34 արական սեռի աշակերտ
Օիպեռի	1 վարժարան (ծաղկոց)	25 աշակերտ, 7 աշակերտուհի (1878 թ. այս վարժարանը փակվել է)
Քրթանոց	1 վարժարան (ծաղկոց)	30 աշակերտ
Աղվանիս	1 վարժարան (ծաղկոց)	35 աշակերտ
Ապանա	1 վարժարան (ծաղկոց)	25 աշակերտ
Սևենտիք	1 վարժարան (ծաղկոց)	20 աշակերտ
Վերի Այծպտեր	1 վարժարան	45 աշակերտ
Ալամոնիկ	1 վարժարան	30 աշակերտ
Մշակնոց	1 վարժարան	50 աշակերտ
Աղրավիս	1 վարժարան	30 աշակերտ
Բուրգ	Լուսավորչյան վարժարան	/աշակերտների թիվն անհայտ է/
Ենի	1 վարժարան	15 աշակերտ
Էնտիրես	Հայկազյան վարժարան	90 աշակերտ
Սիս	1 վարժարան	35 աշակերտ
Քեչեյուրտ	1 վարժարան	24 աշակերտ
Սահմատ	1 վարժարան	24 աշակերտ

Նկատենք, որ այս ուսումնական հաստատություններից մի մասի մակարդակը շատ ցածր է եղել, քանի որ դրանք եղել են ծաղկոցներ: Սակայն պետք է նկատել, որ Գարեգին Սրվանձտյանցի նշած գյուղերից բացի, 20-րդ դարի սկզբին հայկական վարժարաններ ունեցող գյուղերի թիվն ավելացավ: Դրանցից, օրինակ՝ Գոմեշտուն գյուղն ուներ մեկ վարժարան՝ 50 աշակերտով, իսկ Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով 20-րդ դարի սկզբին Անդրեաս գյուղի վարժարան հաճախել են 270 աշակերտ[2]: 20-րդ դարի սկզբին Բուրգ կոչվող գյուղը ևս եկեղեցուն կից դպրոց է ունեցել[3]:

[1] Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 162:
[2] ՀԱԱ, ֆ. 476, ց.1, գ. 869, թ. 5, թ. 18 և թ. 22, տե'ս նույնը Էփրիկյան Ս., նշվ. աշխ., էջ 181 և 485:
[3] Օոցիկյան Ս., Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947, էջ 491:

Այս բոլոր կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերի, ուսուցչական կազմի և ուսումնական կյանքի այլ մանրամասներ մեզ հայտնի չեն:

Այսպիսով՝ հյուսիսային գավառ Շապին Գարահիսարում ուսումնական գործընթացն ավելի բարձր մակարդակի վրա էր գտնվում, քան Թոքատում և Ամասիայում:

АРМАН СААКЯН
ИИ НАН РА

АРМЯНСКАЯ НАУЧНАЯ ЖИЗНЬ В САНДЖАКАХ ТОКАТА, АМАСИЯ, ШАПИН ГАРАИСАР СЕБАСТИЙСКОГО ВИЛАЙЕТА В КОНЦЕ XIX – НАЧАЛЕ XX ВЕКА

В конце XIX начале XX века в северо-западных санджаках Себастийского вилайета Токате и Амасии научная жизнь находилась на низком уровне. Она в основном развивалась в центрах, в таких городах как Токата и Амасия. В некоторой степени научная жизнь развивалась также в селениях санджаков.

По сравнению с северо-западными санджаками Себастийского вилайета в северном санджаке Шапин Гараисар в конце XIX века научная жизнь находилась на более высоком уровне.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հայկական հարցի միջազգային դիվանագիտության ասպարեզ բարձրացումը նոր խթան հանդիսացավ ազատագրական պայքարի ծավալման համար: Թվում էր, թե մոտ է ազգային իղձերի, դարավոր երազանքների իրականացումը, եթե ո՛չ պետականության, գոնե՝ ինքնավարության ձեռքբերումը, ծայրահեղ դեպքում՝ բարենորոգումների իրագործումը: Երազանքների խորտակումը հասունացրեց զենքի դիմելու անհրաժեշտությունը: Առաջնահերթ խնդիր էր հայ ազատագրական շարժման գաղափարախոսության ձևավորումը, պետք էր ոգի ներարկել ժողովրդին, դուրս բերել թմբիրից, հավատ արթնացնել սեփական ուժերի, հաղթանակի հանդեպ: Դա էր հայ հասարակական, քաղաքական, մշակութային շրջանակների թիվ 1 խնդիրը: Ողջ հայությանը պայքարի էին կոչում հայ գրողներ Միքայել Նալաբանդյանը, Ստեփանոս Նազարյանցը, Ռափայել Պատկանյանը, Գրիգոր Արծրունին, Րաֆֆին, Մուրացանը, Բագրատ Այվազյանցը, Ծերենցը, որոնք իրենց աշխատություններով մեծապես նպաստեցին ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորմանը: Մեծ դեր էր կատարում ժամանակի առաջադեմ մամուլը՝ «Մշակը», «Արարատը», «Ասպարեզը», «Արմենիան» և այլն: Աստիճանաբար արմատանում էր այն ճշմարտության գիտակցումը, որ, ինչպես մեծ վիպասան Րաֆֆին է գրել՝ «ազատությունը տրվում է այն ազգերին, որոնք իրենց ազատությունը սրով պաշտպանել գիտեն: Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց գոհերի փրկություն»[1]:

Իր գործունեության սկզբից ևեթ հնչակյան կուսակցությունը մեծ ուշադրություն էր դարձնում Սասունին և Կիլիկիային, ուղարկելով գործիչներ, ծավալելով քարոզչություն, ստեղծելով կուսակցական կազմակերպությունների ցանց:

1880-ական թթ. վերջերին հեղափոխական գործունեություն էր ծավալել Հարություն – Մարտիրոս Պոյաճյանը (Ժիրայր, Մորուք)՝ Մեծն Մուրադի՝ Համբարձում Պոյաճյանի ավագ եղբայրը (1856-1894 թթ.)[2]:

[1] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1964, էջ 268:

[2] Սկզբնական կրթությունը ստանալով հայրենի Հաճընի Վարդանյան վարժարանում՝ Ժիրայրը 1872-1874 թթ. ուսումնառում է Կ. Պոլսում, վերադառնում

1890 թ., երբ Համբարձում Պոյաճյանը Կ. Պոլսում մասնակցում է Գում Գափուի ցույցին, Ադանայի կուսակալ Շաքիր փաշան հրամայում է ձերբակալել Ժիրայրին՝ մեղադրելով նրան եղբոր հետ համագործակցության, հեղափոխական գաղափարների տարածման մեջ:

Հաճընի հայոց հոգևոր առաջնորդ Հովհաննես եպիսկոպոս Գազանճյանից տեղեկանալով սպառնացող վտանգի մասին՝ Ժիրայրը 6 ամիս գործում է ընդհատակում: Երբ ոստիկաններն իմանում են նրա կացարանի մասին՝ ածիլելով մինչև գոտկատեղը հասնող մորուքը, կանացի շորեր հագած, ուսին՝ սափոր, ջրի գնացող կնոջ տպավորություն ստեղծելու համար, անցնում է ոստիկանների շղթայի միջով և, Գրիգոր Կյուլվարդյանի ընկերակցությամբ Վասակունի, Շահեն և Տիար կեղծանուններով սկսում է գործել Յոզղատում, Կեսարիայում, Երզնկայում և Էվերեկում[1]: Տարածելով ազատագրական գաղափարներ, արթնացնելով ազգային ինքնագիտակցությունը, ապագա արհավիրքներին դիմակայելու և պայքարին պատրաստ լինելու համար Ժիրայրը ձեռնամուխ է լինում զինված ջոկատների, ֆիդայական խմբերի կազմավորմանը: Նրա համախոհներն ու զինակիցներն էին հայտնի Չելլոն (Թորոս Ծառուկյան) և Դերե՝ վանքի վանահայր Դանիել վարդապետը: Ժիրայրի ստեղծած խմբերը 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ բազմիցս խիզախաբար մարտնչեցին՝ բազմաթիվ բնակավայրերում փրկելով հայրենակիցների կյանքը: Առաջին խումբը Չելլոյի գլխավորությամբ սկսում է գործել 1891 թ.՝ պատուհասելով «տեղական բռնավոր, չարագործ թուրք Աղաներն ու Պեկերը, որոնք իրենց բռնության տակ անխղճորեն կը կողոպտեին, կը թալանեին հայ աշխատավոր գյուղացիությունը օրը ցերեկով և անպատիժ սպանություններ կը գործադրեին համաձայն համիդյան ծրագիրներուն»[1]: Խմբի կազմում էին հայտնի ֆիդայիներ Պողոս Շահինյանը, Մինաս Պետրոսյանը (Ասուպ), Ավետիս Սամանճյանը, Հակոբ Գյուլյանը և ուրիշներ:

Իր գործունեության համար վերստին ենթարկվելով հետապնդումների՝ Ժիրայրը ձերբակալվում է, բայց կարողանում է բանտից փախչել՝ շարունակելով «կրկին ժողովուրդին մեջ հեղափոխական ոգի ներմուծել և զանոնք կազմակերպել Վասակունի անունով»[2]:

1892 թ., երբ հնչակյան կուսակցությունը ապստամբություն բարձրացնելու և համիդյան բռնակալությունը տապալելու վերաբերյալ թռուցիկներ է տարածում, իշխանություններն առիթն օգտագործում են առավել բռնություններ կիրառելու, հեղափոխական, ազատագրական պայքարը արմատախիլ անելու համար: Միայն Յոզղատում, էվերեկում և հարակից շրջաններում ձերբակալվում են ավելի քան 1000 հոգի՝ մտավորականներ, վաճառականներ և եկեղեցականներ: Նրանցից 17-ը դատապարտվում են մահվան: Անմեղ հայրենակիցներին փրկելու համար Ժիրայրը հանձնվում է՝ հայտարարելով, որ ինքն է թռուցիկների հեղինակը և 1894 թ. հունվարի 21-ին կախաղան է բարձրացվում Յոզղատում[3]:

Հնչակյան կուսակցության կողմից Սասունի հետ միաժամանակ ապստամբության բարձրացման կենտրոն էր ընտրվել նաև Կիլիկիան, ծայրահեղ դեպքում՝ Լեռնային Կիլիկիան, վտտահ, որ Մարաշի, Զեյթունի, Հաճընի ազատատենչ հայությունը ոտքի կկանգնի զինված պայքարի: Ընդսմին, հնչակյաններին հաջողվել էր, մասնավորապես Մարաշում և Հաճընում, կուսակցական կազմակերպությունների քիչ թե շատ լայն ցանց ստեղծել: Մարաշում էին գործում Ե. Ղևոնդ քահանա Տեր Նահապետյանը, Կարապետ, Հովհաննես և Նշան Չորպաճյանները, Հովհաննես Հարգոյանը, Մինաս Չարփանճյանը: Համաձայն մի տեղեկության՝ 1890-ական թթ. սկզբին Մարաշի գավառում հնչակյաններն ունեին իրենց զինված ջոկատները՝ 800 մարտիկներով, որոնք բաժանված էին 8 հարյուրյակների և 40 դասակների՝ ենթարկվելով Մարաշի 7 հոգուց կազմված վարչությանը[4]: Որքան էլ չափազանցված՝ սա վկայում է հնչակյանների կողմից կատարված զգալի աշխատանքի մասին:

Հաճընը, որպես ուսուցիչ պաշտոնավարում մեկ տարի, ապա կրկին մեկնում Կ. Պոլիս, այնտեղից՝ Ռուսաստան, որտեղ էլ, ապրելով 14 տարի, վարակվում է հեղափոխական գաղափարներով, անդամագրվում հնչակյան կուսակցությանը: Վերադառնալով Կիլիկիա՝ Ժիրայրը դասավանդում է Այնթապում, Դյորթ-Յոլում՝ հայ մանուկների և պատանիների հոգում սերմանելով հայրենասիրություն, ազատագրական պայքարի գաղափարներ, ռազմական, զինվորական մարզումներ անցկացնելով նրանց հետ: Այդ ընթացքում նա համագործակցում էր իր մանկության և պատանեկության ընկերների, Հաճընի Միացյալ ընկերության վարժարանի տնօրեն Մելքոն Մանուկյանի (Օղլուգյան), Մինաս Թուրսարգսյանի, Մարտիրոս Սեքսենյանի հետ:

[1] Պողոսյան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 492:

[2] Նույն տեղում, էջ 545-546:

[3] Մատաղճյան Թորոս Մ., Յուշամատյան Թոմարգայի, Բեյրութ, 1959, էջ 173:

[4] Պողոսյան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 546:

[5] Նույն տեղում: Տե՛ս նաև Армянский вопрос, Энциклопедия, Ереван, 1991, с.175.

[6] Պալուստյան Գր. Հ., Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 735-740:

Հնչակյան առաջին գործիչներից էր հայտնի գրող և մանկավարժ Սմբատ Բյուրատը: Շրջելով գավառներով՝ նա ժողովրդին պայքարի էր կոչում, քարոզում ազատագրական գաղափարներ, անցյալի պատմության հերոսական էջերով ոգևորում երիտասարդությանը: 1891 թ. ձերբակալվում է և 5 տարի տանջվում Մարաշի և Հալեպի բանտերում: 1896 թ. Ս. Բյուրատը հաջողում է փախչել Եգիպտոս՝ զբաղվելով մանկավարժական և գրական գործունեությամբ, հրատարակում «Փյունիկ» և «Նոր օր» թերթերը[1]:

Հաճընում, ինչպես արդեն նշել ենք, ժիրայրի հետ և նրա գլխավորությամբ գործում էին Մելքոն Մանուկյանը, Մինաս Թուրսարգսյանը, Մարտիրոս Սեքսենյանը, Միհրան Գայյանը և այլք: Ընդսմին, Հաճընի հնչակյան վարչությունն աստիճանաբար տարածել էր իր ազդեցությունը և մասնաճյուղեր էր հիմնել Տարսոնում, Մերսինում, Համիդիեում, Օսմանիեում և մի շարք այլ վայրերում:

1890-ական թթ. սկզբին Կիլիկիայում հնչակյան կուսակցության ականավոր գործիչներից էր Աղասին:

Հեղափոխական գործունեության համար 1890 թ. Աղասին 2 անգամ ձերբակալվում է, բայց ազատվում է Կ. Պոլսի ազդեցիկ հայերից Արիկ Ունճյանի միջնորդությամբ: 1891 թ. աշնանը, 20 տարեկան հասակում մահվան դատապարտվելով «Պոլսո Եղեռնադատ Ատյանին կողմեն, իբր դավադրող սուլթան Համիտի կյանքին դեմ»[2], փախչում է Եվրոպա: Աթենքում գտնվող Ս. Դ. հնչակյան Կենտրոնի կողմից նշանակվելով որպես Կիլիկիայում կուսակցության ընդհանուր ներկայացուցիչ՝ Աղասին 1892 թ. աշնանը ապստամբություն նախապատրաստելու հանձնարարականով անցնում է Կիլիկիա[3]: Բեյրութում Աղասին ձերբակալվում է, բայց, ինչպես ինքն է գրում՝ «հաջողեցա փախչիլ Աղեքսանդրեթի նավահանգիստեն ներս և կազմակերպեցի Կիլիկիո բոլոր քաղաքներուն մեջ հեղափոխական շատ զորավոր մասնաճյուղեր, կանոնավոր և գաղտնի հարաբերություններ ստեղծելով իրարու մեջ և կեդրոնին հետ»[4]: Նա կապեր է հաստատում ազատագրական շարժման գործիչներ Ներսես վարդապետ Դանիելյանի, Քերովբե Քեշիշյանի (Տերտերյան), Թորոս Սահակյանի (Ֆահրատ և Ֆարհատ կեղծանուններով հայտնի), Մարտիրոս Սեքսենյանի, Պետրոս Շխրտմյանի, Միհրան Գայյանի հետ: Ապա Աղասին կազմակերպչական հարցերով անցնում է Ալեքսանդրիա, այնտեղից՝ Հալեպ, համագործակցում Գրիգորյան եղբայրների հետ, զգալի աշխատանք տանում Զեյթունի նախապատրաստվող ապստամբության համար դրամական միջոցներ հավաքելու ուղղությամբ[1]: Հալեպից Աղասին մեկնում է Դյորթ-Յոլ, մնում որոշ ժամանակ: Այստեղից Աղասին անցնում է Ալեքսանդրետ, Քիլիս, իսկ 1893 թ. հունվարին՝ Մարաշ, որտեղ նրան ընդունում են Ղևոնդ քահանա Տեր Նահապետյանը, Մարաշի կենտրոնական վարժարանի ուսուցիչ Սարգիս Սամուելյանը: Կազմվում է Մարաշի հնչակյան կուսակցության նորընտիր վարչությունը:

Նախապատրաստվող ապստամբության հետ կապված հարցերը քննարկելու համար Տեր Ղևոնդ քահանան նամակ է գրում Զեյթուն՝ խնդրելով պատվիրակներ ուղարկել[2]:

Զեյթունից ժամանած Ավագ Չագրյանի հետ Աղասին քննարկում է ապստամբության ծրագիրը, զենքի և գինամթերքի ձեռքբերման հարցերը և այլն[3]: Մարաշից Աղասին անցնում է Այնթապ, տեղի գործիչների հետ քննարկում գինված ելույթների հնարավորության խնդիրը: Նա որոշում է իր կենտրոնը դարձնել Սուետիայի Խըստըրպեկ գյուղը, որտեղ մնում է 2,5 տարի: Իր իսկ հիմնավորմամբ՝ «Այս գյուղերը (Սուետիայի-Ռ.Գ.) մոտ էին Սելևկիա նավահանգիստին. և ես կը հուսայի այդ տեղեն ներս բերել 5000 ավստրիական Շասբո հրացանները, որ գնած էր Պեսարապիացի հայ տիկին Անուշ և նվիրած էր հնչակյան Կեդրոնին: Դժբախտաբար Կեդրոնը զիս հուսախաբ ըրավ և չկրցավ ուղարկել»[4]:

Աղասին միաժամանակ մեծ ուշադրություն էր դարձնում հայդուկային խմբերի, զինված ջոկատների կազմակերպմանը: Առաջին ջոկատներից էր Ալեքսանդրետի գավառում կազմավորված հայդուկային խումբը, որի կենտրոնը Քիլիսն էր: Ավելի ուշ այդ խմբին են միանում Ապահը (Պետրոս Գըմգըմյան) և Եղիշեն: 1895 թ. հուլիսին 14 հոգուց բաղկացած խումբը, խույս տալով հետապնդումներից, հաստատվում է Սուետիայի Քեպուսիե գյուղում[53]:

1895 թ. գարնան վերջին և ամռան սկզբին Կիպրոսից Կիլիկիա է մտնում հնչակ գործիչների մի խումբ՝ Ապահը, Ջելլաքը (Կարապետ Ղըրփենիսյան, որը Աղասուն էր միացել դեռևս 1893 թ.),

[1] Նույն տեղում, էջ 117:
[2] Աղասի, Զեյթուն և իր շրջակաները, Պեյրութ, 1968, էջ 139:
[3] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) Ֆ. 420, ց.10, գ.5, թ.1:
[4] Աղասի, նշվ. աշխ., էջ 139

[1] ՀԱԱ, ֆ. 420, ց. 10, գ. 10, թ. 12:
[2] Աղասի, նշվ. աշխ., էջ 139:
[3] Թառոյան Կ. Զ., Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնատիրության դեմ, Ե., 2001, էջ 285:
[4] Աղասի, նշվ. աշխ., էջ140:
[5] Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, հ. Ա, էջ 170:

Հրաչյա-Մարալը (Գրիգոր Ղարիբյան), Քեռին (Սարգիս Պելեյան), Մխո Շահենը (Մխիթար Սեֆերյան), Շավարշը (Պողոս Շիշմանյան), Մուրադը (Բաղդասար Գավուգճյան), Մլեհը (Ասատուր Տամղաճյան), Ժիրայրը, Եփրեմը, Կարոն, Սիսակը, Վահանը և այլք, որոնց հայրենանվեր գործունեությունը չհապաղեց տալ իր պտուղները: Նրանք ինքնապաշտպանության պատրաստեցին և զինեցին Սուետիան, Դյորթ-Յոլը, Քեսապը, Ֆռնուզը, Չեյթունը: Աղասին նրանց բաշխում է ըստ բնակավայրերի, տալիս հանձնարարականներ:

Ապահն անցնում է Սուետիա, միանում Աղասուն, որի հանձնարարությամբ մեկնում է Աբենք ապստամբության համար նախատեսված գումարը և վերը նշված 5000 հրացանները Կիլիկիա տեղափոխելու համար: Բայց, ինչպես գրում է Աղասին.«Զայն վերադարձուցած էին Կիպրոս կղզին, խոստանալով անհապաղ ուղարկել զենքերը: Կեդրոնը իր խոստացած երեք հազար ոսկիեն, ուղարկեց (վերջին պահուն, 1895 հուլիս ամսուն, երբ գրեթե պաշարված էինք Մուսա լերան վրա), Սմբատ Ռստիկյան և Հրաչյա Մարալ անուն 21 տարեկան երիտասարդի մը հետ 600 ոսկի, որուն 540-ը գրավվեցավ Անտիոքի կառավարություն կողմե, անճարակ և ձախորդ փոխադրությամբ, Աղեքսանդրեթի մասնաճյուղիս կողմե»: Վերադառնալուց հետո Ապահը Աղասու հետ մեկնում է Արեգին՝ Սուետիայում որպես գործիչ թողնելով Շավարշին[1]:

Ընդհանուր ապստամբության բարձրացման հարցը քննարկելու և հաճընցիներին ապստամբության մղելու հանձնարարականով Ապահը, Մխո Շահենը, Չին Թորոսը և Աղասու դասընկեր Հովնան Ճինկելյանը մեկնում են Հաճընն, իջևանում Համբարձում Ռեճեպյանի տանը: Նրանք հանդիպում են հնչակյան կուսակցության տեղական կազմակերպության ղեկավար Տեր Թորոս քահանա Սաթամյանի, Հաճընի և հարակից շրջանների հնչակյան կազմակերպությունների փաստացի ղեկավար Միհրան Գայյանի, Խաչեր Թաշճյանի, Եսայի Մանկրյանի և այլոց հետ՝ հիմնավորելով ապստամբության անհրաժեշտությունը, կոչելով միանալ Չեյթունին: Բայց հաճընցիները, առանց իրենց քաղաքի ազդեցիկ հայերի համաձայնության, չէին կարող նման վճիռ կայացնել: Ուստի Թորոս Սաթամյանը «Սբ. Գեորգ եկեղեցվո պաշտոնասենյակին մեջ ժողովի կը հրավիրե Հաճընի երևելիները՝ շոշափելու համար անոնց տրամադրությունները»[2]: Ժողովին չէին մասնակցում Ապահը և Մխո Շահենը:

[1] Աղասի, նշվ. աշխ., էջ 140:
[2] Պողոսյան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 554:

Մոտ 50 հրավիրյալներին, Աստվածաշնչի վրա գաղտնապահության երդումից հետո, Թ. Սաթամյանը տեղեկացնում է, որ Չեյթունն արդեն ընդվզել է, որ «Հաճընն ու Տեորթ-Յոլն ալ միացնելով Կիլիկյան Հայկական կառավարություն մը պիտի կազմվի», հայտնելով, որ Ապահն ու Մխո Շահենն իրենց ուժերով պատրաստ են գրավելու քաղաքի 70-80 զինվորներ ունեցող զորանոցը և սկսել ապստամբությունը[1]: Վերջնական վճիռ կայացնելուց առաջ ժողովականները մի քանի հարցադրումներ են առաջ քաշում, որոնք կարևոր էին ձեռնարկի հաջողության և իրենց դիրքորոշման առումով.

1) Ի՞նչ ֆինանսական միջոցների է տիրապետում հնչակյան կուսակցությունը ապստամբությունը հաջողությամբ պսակելու համար.

2) Արդյո՞ք առկա է բավարար քանակությամբ զենք և զինամթերք.

3) Որքանո՞վ է հավաստի եվրոպական տերությունների օգնության խոստումը, որո՞նք են երաշխիքները.

4) Արդյո՞ք կան ռազմական գործին տիրապետող հմուտ և բանիմաց զինվորականներ, ովքեր կստանձնեն գործի ղեկավարումը:

Ցավոք, պատասխանները գոհացուցիչ չէին: Թ. Սաթամյանի հաղորդման համաձայն՝ այդ պահին Ապահն իր մոտ ուներ ընդամենը 900 օսմանյան ոսկի, զինամթերք հույս ուներ ձեռք բերել Հաճընի և Վահկայի զորանոցների վրա հարձակվելով, իսկ ապստամբության բարձրացումից հետո երեք օրվա ընթացքում «անգղիական կառավարությունը իր զորքերը պիտի հասցնի»: Ինչ վերաբերում էր ռազմական գործի մասնագետներին, ապա, քանի որ Ապահը սովորել է բրիտանական զինվորական ուսումնարանում, ուստի «այդ մասին չպիտի նեղվինք»: Պարզ էր, որ ոչինչ պատրաստ չէր և այդ արկածախնդրության մեջ մխրճվելը կարող էր ունենալ բացասական լուրջ հետևանքներ: Ուստի Հաճընի երևելիների անունից Աստուր Մանկրյանը և Գևորգ Սեհյանը մերժում են առաջարկը[2]: Փաստերը վկայում են, որ եվրոպական տերությունների կողմից օգնության իրական երաշխիքների դեպքում հաճընցիները և, ընդհանրապես լեռնցիները, պատրաստ էին ընդվզման: Դա էր պատճառը, որ հնչակյան գործիչները, չնայած քաջ գիտեին մեծ տերությունների օգնության վերաբերյալ խոստումների սնանկությունը, բայց անվրան տալիս էին՝ լիահույս, որ եվրոպական մամուլում ապստամ-

[1] Նույն տեղում, էջ 554-556:
[2] Նույն տեղում, էջ 556-557:

բության մասին հաղորդագրություններից հետո Եվրոպան հարկադրված և շահագրգռված կլինի միջամտել Օսմանյան կայսրության ներքին գործերին՝ ի շահ հայկական հարցի լուծման: «Սակայն,- նկատել է Հ. Պողոսյանը,- եվրոպական պետություններից և ոչ մեկն այդ պահին նպատակ չուներ հայ ժողովրդի համար իր հարաբերությունները վատացնել Թուրքիայի հետ...»[1]:

Համատեղ ապստամբության ծրագիրը մերժում են նաև դյորթյոլցիները, գտնելով և հիմնավորելով, որ առանց ֆինանսական միջոցների և ռազմամթերքի, իրական օգնության երաշխիքների, այն դատապարտված է ձախողման: Բայց, ամեն
դեպքում, հաճընցիները խոստանում են, որ թուրքերի հարձակման դեպքում կդիմեն ինքնապաշտպանության: Նրանք Ահարոն Գրքշարյանի և Միհրան Սեքսենյանի ղեկավարությամբ գաղտնի արհեստանոցներում սկսում են վերանորոգել հին զենքերը, պատրաստել ուժանակներ՝ հավանական հարձակման դեպքում թշնամուն արժանի հակահարված տալու համար[2]:

Անհաջողության մատնվելով՝ նույն գիշերն իսկ Ապահը Միհրան Գայյանի ուղեկցությամբ բռնում է Զեյթունի ճամփան, իսկ Մխո Շահենն անցնում է Դյորթ-Յոլ:

Ինչպես արդեն նշել ենք, Աղասու կողմից Սուետիայում գործիչ է նշանակվում Շավարշը: 26-ամյա երիտասարդը հեղափոխական պայքարի զգալի փորձ ուներ: Նա և Սարգիս Պելայանը (Պալյան) ԱՄՆ-ից Կիլիկիա են հասնում 1895 թ. մայիսին և «տեղացի հայերի հետ միասին միավորվում են երկու հայդուկային խմբի մեջ և պայքարի ելնում թուրք ավազակախմբերի ու պետական կեղեքիչ պաշտոնյաների դեմ: Սարգիս Պալյանի ղեկավարած հայդուկային խումբը գործում էր Քեսաբի շրջանում, իսկ Շավարշ Շիշմանյանինը՝ Հաճի-Հապիպլիի մոտերքում»[3]: Կ. Պոլսից նրանց դեմ է ուղարկվում Սալիհ փաշան: Շավարշը ջանքեր էր գործադրում հնարավորինս շատ զենք կուտակելու Սուետիայի գյուղերում: Համաձայն մի հաղորդման՝ միայն Հալեպից նրան էր ուղարկվել 10-15 երկփողանի հրացան և 200 փամփուշտ[4]:

Շավարշի և նրա ընկերների ջանքերի արդյունքում Մուսա լեռան հայկական գյուղերը հիմնականում զերծ են մնում կոտորածից, ավեր ու թալանից: Իմանալով, որ Սուետիայում, բացի Շավարշի մարտունակ խմբից, շատ հայեր ևս զինված են և պատրաստ՝ դիմագրավելու թշնամուն, թուրքերը զգուշանում էին հարձակումներից: Այնուամենայնիվ, նրանք բավականին ուժեր էին կենտրոնացրել հայկական գյուղերի մատույցներում՝ պահանջելով Շավարշի և նրա զինակիցների հանձնվելը, հակառակ պարագայում՝ սպառնալով սրի քաշել բոլորին: Գործին խառնվում են նաև օտարերկրյա հյուպատոսները, որոնք իշխանության ներկայացուցիչների հետ բազմաթիվ խոստումներ են տալիս, որ խմբի՝ զենքերը վայր դնելուց հետո հայ ազգաբնակչությանն այլևս ոչինչ չի սպառնա: Տուրք տալով այդ ամենին, իրադրությունն առավել չսրելու և հայրենակիցների մահվան պատճառ չհանդիսանալու համար Շավարշն իր խմբով հանձնվում է 1896 թ. մարտի 20-ին:

Անդրադառնալով այդ հարցին՝ «Կիլիկյան տարեցույցը» նշում է. «Մասնավոր պայմաններով և համաձայնությամբ մը, օտար հյուպատոսների միջոցավ հանձնվելե վերջ իր ամբողջ խումբովը Հալեպի մեջ բանտ կը դրվի 10 ամիսներ»[1]:

Որոշ ժամանակ անց, դեսպանների միջամտությամբ, ձերբակալվածները ներման են արժանանում: Շավարշն անցնում է արտասահման, բայց 1900 թ. կրկին ուղարկվում է Կիլիկիա՝ իր հայրենավեր գործունեությունը ծավալելով 1921-1922 թթ.[2]:

Չնայած երիտասարդ տարիքին, հեղափոխական պայքարի զգալի փորձ ուներ 22-ամյա Զելլաթը: Բնիկ կիլիկեցի, Զելլաթը Կիսոնի Թաշ-Օլուգ գյուղից էր, անդամակցել էր Չելլոյի խմբին, ապա անցել Հաճի Հապիպլի, որտեղ էլ, 1893 թ., ծանոթացել էր Աղասու հետ՝ դառնալով նրա հավատարիմ զինակիցը: Ինչպես գրում է Աղասին՝ Զելլաթը «անզուգական քաջ, ընկերասեր, ռազմագետ, անուս և թրքախոս... ինծի կ'ընկերանար 1893-ի ձմեռեն ի վեր»[3]: Նա մեծ գործ է կատարել Սուետիայի հայությանը զինելու, ինքնապաշտպանության կազմակերպման ուղղությամբ, լինելով «Մարո» ինքնապաշտպանական խմբի ղեկավարներից[4]: 1895 թ. հուլիսին Զելլաթը քարոզչական գործունեություն էր ծավալել Զեյթունի հարակից հայկական բնակավայրերում՝ Կապանում, հայրենի

[1] Պողոսյան Հ. Մ., Զեյթունի պատմությունը 1405-1921 թթ., Ե., 1969 թ., էջ 364:
[2] Պողոսյան Յ.Պ.,նշվ.աշխ., էջ 559-561: Տե՛ս նաև Աղասի, նշվ. աշխ., էջ 144:
[3] Թառոյան Կ. Ջ., նշվ. աշխ., էջ 286-287:
[4] ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 133, թ. 1:

[1] Կիլիկյան տարեցույց, Միամյա օրական գրական-ընկերաբանական-պատմական-գեղարվեստական, Ա Տարի, կազմեցին Նվարդ-Ասպետ, Արամ-Ասպետ Ատանա-Կիլիկիա, Կ. Պոլիս, 1922, էջ 244:
[2] Նույն տեղում, էջ 244-245:
[3] Աղասի, նշվ. աշխ., էջ 141:
[4] Զեյթունի պատմագիրքը, Բուենոս-Այրես, 1960, էջ 505:

Թաշ-Օլուգում՝ ավելի ուշ միանալով Ֆռնուզում գործող Ասլանին (Սինաս Էլմասյան)[1]:

Կիլիկիա անցած հայ խիզախներից էր Մշո Տերգեվանք գյուղում ծնված 30-ամյա հայտնի ֆիդայի Մխո Շահենը, որն իր մարտական մկրտությունը ստացել էր Արաբոյի խմբում:

Հաստատվելով Դյորթ-Յոլում՝ նա հանդիսացավ Չոք-Մարգվանի ինքնապաշտպանության ոգին և փաստացի ղեկավարը: Դյորթ-Յոլում, Օջախլի և Էոզեյրլի գյուղերում էին գործում նաև բնիկ կիլիկեցիներ Քերովբե Տերտերյանը, Վահրամ Քեշիշյանը և Մերուժան (Հարություն) Քեհյանը:

Հերոսական ինքնապաշտպանությունից հետո թուրքերը, որոշ ժամանակ անց հաջողում են ձերբակալել Մխո Շահենին և բանտարկել Հալեպում:

Միջազգային հասարակական և մեծ տերությունների ճնշման ներքո ամիսներ անց սուլթանը ստիպված եղավ ներում շնորհել քաղաքական բանտարկյալներին: Բանտից ազատվում է նաև Մխո Շահենը, որն անցնում է Եվրոպա, այնուհետև Ռուսաստան, Կովկաս և 1903 թ. գոհ է գնում եղբայրասպան գնդակից[2]:

Սլեհը գործում էր Եդեսիայում՝ հանձնարարական ունենալով հնարավորինս դրամական միջոցներ հանգանակել Զեյթունի համար զենք, զինամթերք և պարեն ձեռք բերելու նպատակով:

Նշենք ևս մեկ անգամ, որ Ս. Դ. հնչակյան կուսակցության ներկայացուցիչներն, իրոք, զգալի աշխատանք էին տարել Կիլիկիայում ազգային ոգու դրսևորման, ազատագրական գաղափարների տարածման, ինքնապաշտպանական մարտերի կազմակերպման առումով: Նրանց կազմակերպած հայդուկային խմբերն իրենց ավանդը ներդրեցին թուրք ավարառուների դեմ մղվող պայքարում, բազմաթիվ բնակավայրերում հետ մղեցին թուրք հրոսակների հարձակումը՝ փրկելով հայրենակիցների կյանքը: «Ամբողջ երկու տարի ու կես Կիլիկիայի թշվառ ժողովրդին հետ ապրեցանք,- գրել է Աղասու և Ապահի զինակից հայդուկ Իսրայելը,- անոնց վշտերի հետ վշտակից և ուրախությանց հետ ուրախակից լինելով: Ավելորդ կը համարիմ աստ հիշել մեր չարչարանքները և մեր կատարած գործերը թշվառ հայ ժողովրդին համար, շատ անգամ անցնելով օրերնիս բարձրաբերձ լեռների վրա, սարերի վրա, անտառներում, քարայրերում և այլն և այլն տեղերում: Այս ամեն զոհողությունները սիրով

[1] Աղասի, նշվ. աշխ., էջ 143:
[2] Պողոսյան Հ. Մ., Սասունի պատմություն, էջ 171:

տանում էինք մեր սիրած և պաշտած հայ հասարակության սուրբ Դատին համար»[1]:

Իր ժամանակի համար և տվյալ իրավիճակում հնչակյանները պատմականորեն առաջադիմական գործունեություն էին ծավալել. նրանք ոտքի էին հանում և ոգևորում երիտասարդությանը, ձգտում էին վառ պահել ազատագրական պայքարի բոցը, ժողովրդի ազատաբաղձ ոգին, կոնկրետ ուղղություն տալ պայքարի ընթացքում ծնվող տարերային շարժումներին ու գաղափարներին և հիմնավորում, որ օսմանյան տիրապետությունը թոթափելու միակ ճանապարհը զինված պայքարն է:

Չարդերից հետո դրությունը Կիլիկիայում շարունակում էր մնալ խիստ լարված, նոր թափ ստացան հայերի նկատմամբ կիրառվող բռնությունները և հալածանքները:

Սուլթան Համիդը վարում էր Կիլիկիան Արևմտյան Հայաստանից տնտեսապես, քաղաքականապես և գաղափարապես ամբողջովին անջատելու քաղաքականություն: Չցանկանալով թույլատրել հայության տարբեր հատվածների շփումները, որոնք կխթաներին ազատագրական պայքարը, օսմանյան կառավարությունն օգտվում էր Կիլիկիայի՝ Արևմտյան Հայաստանից բաժանված լինելու հանգամանքից և հետամուտ էր կիլիկիահայության մեկուսացմանը:

Համիդը ցանկանում էր բաժանել հայերին, քայքայել նրանց տնտեսական, հասարակական և կրոնական միասնությունը, անջրպետել միմյանցից, որով կկարողանար հասնել իր գլխավոր նպատակին, այն է՝ հայերի տնտեսական ազդեցության վերացում, ջարդերի իրականացում, ծուլում և ֆիզիկական ոչնչացում:

Այս պայմաններում, ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում, կրկին լայն թափ ստացան ազատագրական շարժումները:

Հնչակյան կուսակցությունը վերստին իր ուշադրությունը կենտրոնացրել էր Կիլիկիայի վրա և, համաձայն Լոնդոնում կայացած համագումարի որոշումների, հետամուտ էր համառ և երկարատև աշխատանքի գնով բարձրացնել ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, ոգին՝ նախապատրաստելով և իրականացնելով համընդհանուր ապստամբություն: Կյանքը և տարիների ընթացքում կուտակած պայքարի փորձը անում էին իրենց շտկումները, փոխվում էր մարտավարությունը, նոր խնդիրներ էին առաջ քաշվում, որոնց լուծման համար անհրաժեշտ էին նոր մոտեցումներ: Այդ հար-

[1] ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 7, թ. 3:

ցերն էին, մոտեցումների տարբերությունները, որոնք քննարկվեցին Լոնդոնի համագումարում և պատճառ դարձան կուսակցության պառակտման:

Արևմտահայ հնչակյանները բաժանվում են Ա. Նազարբեկյանից՝ առաջնահերթ խնդիր համարելով արևմտահայության ազատագրումը: Սա հիմքն էր նոր կազմակերպության, որն ավելի ուշ՝ 1898 թ., ստացավ Վերակազմյալ հնչակյան կուսակցություն անվանումը:

1896 թ. վերջերին Ապահը նշանակվում է Կիլիկիայի ընդհանուր ներկայացուցիչ՝ ղեկավարելով Կիլիկիո նորընտիր վարչությունը:

Ինչպես ինքն էր գրում. «Հավանորեն քայլ մը ևս առնիմ հոնկե և մտնիմ Կիլիկիա. ո՛չ թե ցնորական հույսերով ու տաք գլուխ շարժումներով քաջարի ժողովուրդի մը հանգիստը, երջանկությունը ու կյանքը խռովելու, այլ քարոզելու մեր եղբայրներուն համերաշխություն, ուշիմություն և բացարձակորեն խաղաղասիրական քողի տակ լուծել մնջիկ տոկուն ու հաստատուն նախապատրաստություն...: Թեև մինչև ցարդ թե՛ անհատական նամակներով, և թե՛ մեր պաշտոնաթերթով խռհեմության և իմաստության քարոզություններ կ'ընենք շարունակ, բայց կենդանի խոսքը հայտնի է թե ավելի հզոր ազդեցություն կունենա ժողովրդին վրա. ահա այս պատճառով մտադիր եմ մտնել մեջները, ուսումնասիրելու համար միանգամայն տեղույն վրա՝ ժողովրդին արդի կացությունը»[1]:

Իսկ «արդի կացությունը», մեղմ ասած, մխիթարական չէր: Միանշանակ չէր նաև կոտորած, ավեր ու թալան տեսած կիլիկիահայության վերաբերմունքը հեղափոխական գործիչների նկատմամբ: Հնչակյանների՝ բազմաթիվ և չիրականացված խոստումների պատճառով ժողովուրդն իրեն խաբված էր զգում, երբեմն՝ նրանց մեղադրելով իր դժբախտության մեջ: Դա պարզորոշ երևում է Հովհաննես Կեոյողլյանի և Սմբատ Ղազարյանի՝ 1896 թ. հոկտեմբերի 20-ին Աղասուն և Ապահին ուղղված նամակից: «Ժողովուրդը սկսավ անեծքներ տեղացնել մեր գլխուն և հալածել, որպես թե այսքան կոտորածներու պատճառ մենք ըլլանք, նոյնպես կառավարության կասկածները ավելի ևս սաստկացան մեր վրա, այնպես որ շատ դժվար էր ընկերաց ու բարեկամաց տուներն այցելել, գումարումներ ընել, այս պարագայի մեջ ավելի դառն եղավ մեր ծննդոց հակակրությունը մեզ դեմ...»[2]:

[1] Նույն տեղում, ֆ. 453, ց. 1, գ. 9, թ. 1-3:
[2] Նույն տեղում, ց. 1, գ. 235, թ. 1:

Եվ իրոք, ծանր էր Կիլիկիայում մնացած հնչակյանների վիճակը: Մերժված լինելով հարազատներից և հայրենակիցներից, եռաթակա իշխանությունների մշտական հալածանքներին և հետապնդումներին, տեսնելով երազանքների տապալումը՝ նրանցից շատերը գտնվում էին հոգեկան ընկճված վիճակում, մատնվել էին անգործության, առավել ևս, որ երկրամասում գործող կուսակցական ղեկավարների մեծ մասը բանտարկվել էր, մի մասը՝ հեռացել:

1895 թ. վերջերին Կիլիկիայի վարչության կողմից որպես Պայասի և Մարաշի մասնաճյուղերի պատասխանատու նշանակվել էր Վարդանը (Հարություն Խանիկյան):

Նույն տարածքում և Ալեքսանդրետում էր գործում Կորյունը (Տիգրան Տոնապետյան), որին դեռևս Աղասու կողմից հանձնարարվել էր մասնաճյուղերի միջև թղթակցության ապահովումը[1]: Կորյունն արդեն իր վրա էր հրավիրել թուրքական իշխանությունների ուշադրությունը, ուստի Ապահը խորհուրդ էր տալիս իր փոխարեն նշանակել մեկ ուրիշին[2]: Հնչակյան կենտրոնի և Կիլիկիայի միջև կապն իրականացվում էր հիմնականում Ալեքսանդրետի միջոցով, ուստի այնտեղ խիստ կարևորվում էր հմուտ, բանիմաց և նվիրված գործչի առկայությունը:

Մերսինում էր գործում Աշոտ Շահրամյանը, որն Ապահի հանձնարարությամբ հարաբերություններ էր հաստատել Սուետիայի և Ալեքսանդրետի հետ՝ ջանալով համախմբել ուժերը, բարձրացնել կուսակցության վարկն ու հեղինակությունը, ընդլայնել գաղափարական ազդեցության տարածքները: Ընդհանուր աշխատանքների համակարգումը նույնպես հանձնարարված էր Աշոտ Շահրամին:

1897 թ. աշնանը Աշոտն ացնում է Կիպրոս, բայց, որոշ ժամանակ անց կրկին վերադառնում է Կիլիկիա՝ շարունակելով կազմակերպչական աշխատանքները: Ապահին հղած նամակում նա հաղորդում էր, որ ուղարկած դրամով ձեռք է բերվել զգալի քանակությամբ զենք և զինամթերք՝ թաքցված հուսալի տեղում և որ ոմն Լիպարիտի միջոցով կանոնավորվել են հարաբերությունները Զեյթունի հետ[3]:

Թուրքական իշխանությունները, ամենայն հավանականությամբ, իրենց գործակալների միջոցով, մասամբ տեղյակ էին հնչակյանների գործունեության մասին: Անցյալի փորձը հաշվի առնելով, նրանք առանձնապես մեծ ուշադրություն էին դարձնում Կիլիկիային՝

[1] Նույն տեղում, ց. 1, գ. 238, թ. 1:
[2] Նույն տեղում, ց. 1, գ. 10, թ. 1-2:
[3] Նույն տեղում, ց.1, գ. 79, թ.1:

երկյուղելով նոր հուզումների հրահրումից: Մեծ թվով հեղափոխականների միաժամանակյա, մի քանի օրվա ընթացքում բանտարկությունը դրա ապացույցն էր: 1897 թ. հոկտեմբերին ձերբակալվում են Կորյունը և իր հայրը (որոշ ժամանակ անց նրանք ազատվում են, քանզի թուրքական իշխանությունները կոնկրետ փաստեր չունեին մեղադրանք ներկայացնելու համար, բայց ավելի ուշ Կորյունը նորից ձերբակալվում է), Ադանայի գործիչները՝ ենթարկվելով «ամենախիստ» հարցաքննության»[1], Չոք Մարզվանում գործող Տեր-Սահակը, Վահրամ Քեշիշյանը, Մերուժան Քեհյանը և այլք[2]: Այս ձերբակալությունները համընկան Աշոտի՝ մեկ-երկու ամսով Կիպրոս անցնելու հետ: Հավանաբար վերջինս տեղյակ էր իր անձի շուրջ եղած կասկածներին և որոշել էր ժամանակավորապես հեռանալ իշխանությունների տեսադաշտից:

Ձերբակալվել էին նաև բազմաթիվ հոգևոր գործիչներ, ուսուցիչներ և հայրենակիցների շրջանում հեղինակություն ունեցող անձինք՝ դատապարտվելով տարբեր պատժաչափերի, նաև՝ մահվան: Սակայն, չկամենալով առավել բորբոքել կրքերը, նկատի ունենալով նաև եվրոպական տերությունների և հասարակական կարծիքի հավանական ճնշումը, որոշ ժամանակ անց սուլթանը նրանց մեծ մասին ներում է շնորհում, մի մասին՝ աքսորում:

Այս ամենի արդյունքում զգալիորեն թուլացավ հնչակյան կուսակցության հեղինակությունը Կիլիկիայում: Դարասկզբին այստեղ գործում էին Վահեն (Ալեքսան Արզույան), Վարդգեսը, որոնք չկարողացան վերականգնել կուսակցության նախկին ազդեցությունը երկրամասում:

1890-ական թթ. կեսերից, մասնավորապես՝ Զեյթունի հերոսամարտից հետո, տեսնելով կարող ուժերի առկայությունը, Հ. Յ. Դաշնակցությունը սկսեց զգալի ուշադրություն դարձնել Կիլիկիային՝ ցանկանալով այնտեղ ևս տարածել իր գաղափարական ազդեցությունը:

1898 թ. ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովը ուժերի կենտրոնացման և ապստամբության նախապատրաստման շրջաններ է ընտրում Տարոն-Սասունը (Բարձրավանդակ) և Կիլիկիան (Լեռնավայր)[3]: Ինչպես գրել է Մ. Վարանդյանը՝ ընդհանուր ժողովը «աչքի առաջ ունենալով Լեռնավայրի անառիկ դիրքը, տեղական ժողովրդի հեղափոխական ուժը և ընդհանրապես մյուս հարմարություններն ու առավելությունները, որոշեց լուրջ ուշադրություն դարձնել այդ կետի վրա և այնտեղ ուղարկել կազմակերպող-ղեկավար մի ուժ»: Ավելի ուշ որոշվում է Կիլիկիան ընդունել «որպես Սասնո համարժեք կեդրոնացման վայր» և այնտեղ աշխատանքներ ծավալելու, հեղափոխական և ազատագրական գաղափարներ տարածելու, ազատագրական շարժումները ղեկավարելու համար տրամադրել համապատասխան ֆինանսներ, ապա, անդամությամբ Հրաչի (Հրայր Թիրաքյան, որը մասնակցել էր օսմանյան բանկի գրավմանը) և Մարի (Միքայել Մարտիրոսյան) կազմվում է Կիլիկիո Պատասխանատու մարմինը[1]: Պատասխանատու մարմինները ստեղծվել էին ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ուժերի կենտրոնացման երկու վայրերում աշխատանքները կազմակերպելու և ղեկավարելու համար:

Սակայն ՀՅ դաշնակցությունը Կիլիկիային ուշադրություն էր դարձրել և այնտեղ որոշակի աշխատանքներ էր ծավալել դեռևս 1895-1896 թթ.: «Հ.Յ. Դաշնակցության վարիչները,- գրում է Մ. Վարանդյանը,- չէին կարող անտեսել այդ հարուստ երկրամասի աշխարհագրական դիրքը, որ մեծամեծ առավելություններ կ'ընձեռեր ապստամբական ձեռնարկներու համար:

Անոնք գիտեին, թե ո՞րքան համեմատաբար դյուրին էր այդ վայրերուն մեջ դուրսեն ներս մտցնել զենք ու ռազմամթերք, շնորհիվ ծովի ու Եվրոպայի մերձավորության և թե ո՞րքան արագությամբ արձագանգ կը գտնեին Եվրոպայի մեջ Զեյթուն ու այլուր կատարված դեպքերը»[2]:

1897 թ. հուլիսին Կիպրոս էր անցել դաշնակցական Ա. Թաթոսյանը, որը գործում էր մեծ եռանդով, նվիրվածությամբ, իրեն դրսևորելով որպես «լուրջ երիտասարդ»՝ հաջողություններ գրանցելով քարոզչության բնագավառում: Համաձայն Ֆարհատի տեղեկության՝ նրա խնդիրը Կիլիկիա զենք փոխադրելն էր, որը և վերջինս, ըստ լուրերի, հաջողությամբ իրականացրել էր: Զարմանալի չէ, որ հնչակյան կուսակցության 1896-1897 թթ. հարաբերական անգործության պայմաններում (որը պայմանավորված էր նաև ներքակալությունների վերջին ալիքով) Ֆարհատը բարձր էր գնահատում ՀՅԴ գործունեությունը, գրելով. «Վերջապես դաշնակցականները ինչ որ ալ ընեն իրավունք ունին, այսօր իրենք կը փառավորվին և հաջողություններով կը գործեն, ինչպես առաջ մենք»[3]: Հայերի՝ Կիլիկիա զենք

[1] Նույն տեղում, ց. 1, գ. 19, թ. 2:
[2] Նույն տեղում, ց. 1, գ. 86, թ. 3:
[3] Նյութեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, Բ հատոր, Պեյրութ, 1985, էջ 112:

[1] Վարանդյան Միքայել, նշվ. աշխ., էջ 459-460:
[2] Նույն տեղում, էջ 458-459:
[3] ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 59, թ. 4-7:

փոխադրելու մասին հաղորդագրություններ էին հրապարակել հունական թերթերը: Դա անմիջապես ժխտվեց հնչակյանների կողմից, որոնք այդ թերթերից պահանջեցին հերքում գրել: Մ. Սվազլյանի կարծիքով՝ «ինչպես կերևի հույները կուզեն թուրքին ուշադրությունը հրավիրել Կիլիկիո վրա, ապագա ապստամբության մը կասկածը ներշնչելով անոր որ իրենց փափագած հաշտությունը կնքե սուլթանը, վախնալով հետզհետե ծագելիք ներքին երկպառակություններեն»[1]:

1898 թ. նոյեմբերի վերջերին Մարը բուլղարական անձնագրով անցել էր Կիլիկիա և սկսել կազմակերպչական աշխատանքները: Սակայն կարճ ժամանակ անց նա ձերբակալվում է (Մ. Վարանդյանի պնդմամբ՝ վերակազմյալ հնչակյանների մատնությամբ) և վեց տարի հետո, հաշմանդամ դարձած, դուրս գալիս բանտից[2]:

1900 թ. ՀՅԴ Կիլիկիայի Պատասխանատու մարմնի կողմից Կիլիկիա է ուղարկվում Ռահվերը, որը կազմակերպում և անցկացնում է Կիլիկիո առաջին շրջանային ժողովը՝ ձեռնամուխ լինելով մարտական խմբերի ստեղծմանը: Նրա հետ Կիլիկիա էին անցել Սարիատը և Արամը:

1901 թ. գարնանը Ֆիլիպեում Հրաչի մասնակցությամբ տեղի ունեցած ժողովը կազմեց Կիլիկիո նոր Պատասխանատու մարմինը՝ անդամությամբ Հրաչի, Բուլղարացի Պետոյի, Աշոտ Երկաթի (Արմենակ Լևոնյան) և Մարտին Մուրադյանի: Սակայն նրանք ինչ-ինչ պատճառներով չեն կարողանում անցնել Կիլիկիա:

«Ներսը կը մնար Ռահվեր, որ, մատնության սպառնալիքին տակ, կերպով մը կը վարեր իր քարոզչությունը: Տեղական մարմնին հետզհետե միացան Ա. Լևոն Սամուել և Կիլիկյան»[31]: Կիլիկիայում էին գործում նաև Առանձարը (Միսակ Գույումճյան), Սիմոն Հակոբյանը, Վանա Սարգիսը (Պողոս Օտապաշյան): Սիսում, Հաճընում և Դյորթ-Յոլում գործիչ էր նշանակվել բնիկ սսեցի Պետրոս Աբմաճյանը:

1902 թ. Ալեքսանդրետում տեղի ունեցած շրջանային ժողովը որոշում է առավել ուշադրություն դարձնել Զեյթունին և այնտեղ ուղարկում Լևոն Սամուելին՝ քաջամարտիկ լեռնականների տրամադրությունը շոշափելու համար: Նույն ժամանակ Ալեքսանդրիայում հաստատված Մարտինի առաջարկով Կիլիկիո Պատասխանատու մարմնի մեջ են մտնում Վահրամը, Առանձարը և Աղասերը:

[1] Նույն տեղում, ց. 1, գ. 86, թ. 17:
[2] Վարանդյան Միքայել, նշվ. աշխ., էջ 460:
[3] Նույն տեղում, էջ 460-461:

Նրանց հաջողվում է խմբեր ստեղծել Ադանայում, Մերսինում, նոր անդամներով համալրվում է Աշոտ Լևոնի ղեկավարությամբ գործող Զեյթունի խումբը: Սակայն Ադանայի կոմիտեին այդպես էլ չի հաջողվում իր ազդեցությունը տարածել լեռնային շրջաններում: Գործն առաջ էր ընթանում խիստ դանդաղ տեմպերով:

1904 թ., համաձայն Սոֆիայի 3-րդ ընդհանուր ժողովի որոշման, Կիլիկիան ուսումնասիրելու, տիրող մթնոլորտին ծանոթանալու, կուսակցության գաղափարները քարոզելու և տարածելու հանձնարարականով «Լեռնավայր» են անցնում Սիմոն Զավարյանը և Խանասորի Վարդանը (Սարգիս Մեհրաբյան)՝ մանրամասն տեղեկագիր կազմելով տիրող իրավիճակի մասին[1]:

Դարասկզբին Կիլիկիայում ազատագրական շարժման պայծառ դեմքերից էր հայդուկ Ժիրայրը[2]:

Հայկական «ագիտատորների» գործունեության աշխուժացման մասին էր խոսում Հալեպում ռուսական գլխավոր հյուպատոս Ա. Կրուգլովը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության առաջին դեպարտամենտի տնօրենին 1905 թ. դեկտեմբերի 21-ին հղած հաղորդագրությունում, նշելով, որ հայ հեղափոխականները Կիպրոսից Անտիոքի վրայով զգալի գումար են տեղափոխել Կիլիկիա, իսկ դեկտեմբերին Ալեքսանդրետում ձերբակալվել են 11 հոգի, որոնցից 6-ը անգլիական հյուպատոսի միջամտությամբ փրկվել են բանտարկությունից[3]: Ցավոք, Ա. Կրուգլովը չի նշում նրանց կուսակցական պատկանելության մասին:

20-րդ դարի սկզբին հայ ազատագրական պայքարը, ցավոք, հիմնականում տեղային բնույթ էր կրում: Չնայած Զեյթունում և Լեռնային Կիլիկիայի այլ վայրերում հայ ազգաբնակչությունը պատրաստ էր ընդվզելու համիդյան բռնակալության դեմ, սակայն երկրամասի հայության մեծամասնությունը հեռու էր հեղափոխական, ազատագրական պայքարի գաղափարներից: Ինչպես գրել է Ս. Զավարյանը. «Թույլ է ազգային գիտակցությունը Կիլիկիո հայության մեջ, ավելի ևս թույլ է հեղափոխական գիտակցությունը... Ամեն մեկը խլուրդի նման մտած է իր բույնը, չի տեսնում լույս աշխարհը, չի բացվում եղբորն իսկ»: Նշելով, որ շատ քչերն են զինված և «ան ալ գրեթե միայն չիֆթաներով ու շեշխաներով», Ս. Զավարյանը եզրակացնում է, որ բացի Զեյթունի, Դյորթ-Յոլի և Քեսապի հայերից,

[1] Նույնտեղում,էջ 467:
[2] Բյուրատ Ս., Արյունի ճամբուն վրա, Կ. Պոլիս, 1911, էջ 267:
[3] Архив внешней политики Российской империи (այսուհետև՝ АВПРИ), ф. Канцелярия МИД, оп. 470, г. 1906, д. 42, л. 3.

քչերն են պատրաստ պայքարի: «Գործը հաջողությամբ պսակելու (ապստամբություն կազմակերպելու – Ռ.Գ.) համար պահանջվում է դեռևս շատ ու շատ աշխատանք, գուցե նույնքան ուժեր, որքան մենք տված ենք Վասպուրականին կամ Սասուն-Մշո դաշտին»[1]:

Նույն երևույթն առկա էր նաև Արևմտյան Հայաստանում: Դա բացատրվում էր ոչ միայն արևմտահայության տարբեր շրջանների անջրպետվածությամբ (որն իր վարչական բաժանումներով և քաղաքականությամբ իրականացնում էր սուլթանական կառավարությունը) այլև հայ ազգային կուսակցությունների անջատ, երբեմն իրարամերժ և միմյանց հանդեպ թշնամական գործունեությամբ, որը երբեք էլ նպաստավոր պայմաններ չէր ստեղծում միասնական պայքարի համար: Եվ չնայած ազգային և քաղաքական բոլոր ուժերն էլ ըմբռնում էին համատեղ պայքարի անհրաժեշտությունը, սակայն նրանց միջև առկա հակամարտությունները խանգարում էին ընդհանուր ճակատով հանդես գալուն: Միջկուսակցական տարածայնությունները վերածվել էին ոչ միայն հակամարտության, այլև մրցակցության, երբեմն՝ բացահայտ պայքարի: Կուսակցություններից յուրաքանչյուրը ձգտում էր լինել պայքարի դրոշակակիրը, ջահակիրը՝ ոչ մի պարագայում առաջնությունը չզիջելու մտայնությամբ: Մեկի բացթողումը մյուսի կողմից անմիջապես օգտագործվում էր իր ազդեցությունը տարածելու համար: Այսպես, Մ. Սվազլյանին Ալեքսանդրիայից 1897 թ. հոկտեմբերի 21-ին հղած նամակում Ապահը գրում էր, որ Եգիպտոսում հայ հասարակ ռամիկը դժգոհում է «դաշնակցական կոչված վնասակար տարրերուն դեմ» և դա լավ առիթ է հնչակյան կուսակցության վարկը բարձրացնելու համար[2]:

Այս թշնամանքը, բնականաբար, օգտագործվում էր թուրքական իշխանությունների կողմից, որոնք առավել խորացնում էին հակասությունները՝ նպատակ ունենալով արմատախիլ անել հայ ազատագրական պայքարը:

Ազատագրական շարժումները խեղդելու համար 1890-ական թթ. վերջերին սուլթանը դիմեց նաև խորամանկության՝ հանդես գալով հայ ազգային կուսակցությունների հետ բանակցություններ սկսելու նախաձեռնությամբ: Դրանով Աբդուլ Համիդը մի շարք խնդիրներ էր լուծում, իսկ ամենակարևորը՝ հույս ուներ կանխել մեծ տերությունների միջամտությունը կայսրության ներքին գործերին, հրաժարվել բարենորոգումների իրագործումից և չեզոքացնել վե-

[1] Տե՛ս, Վարանդյան Միքայել, նշվ. աշխ., էջ 463:
[2] ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 18, թ. 1:

րելք ապրող հայ ազատագրական պայքարը[1]: Նրա՝ բանակցելու առաջարկին արձագանքեցին Վերակազմյալ հնչակյան և Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունները, որոնք դրանով ուզում էին ժամանակ շահել, ուշքի գալ կրած հարվածներից և կոորուստներից, կարգավորել կազմակերպական հարցերը, մտորել պայքարի նոր ձևերի, նոր մարտավարության և մեթոդների մասին: Որ սուլթանը կոնկրետ իր նպատակներն էր հետապնդում, քաջ գիտակցում էին երկու կուսակցություններն էլ, ուստի բանակցությունների սեղանի շուրջ նստելուց առաջ մի շարք պահանջներ առաջ քաշեցին, «որոնց իրականացումը պետք է երաշխիք ծառայեր ապագա բանակցությունների անկեղծության համար»[2]: Առաջ քաշված բոլոր պահանջներն էլ մերժվեցին Աբդուլ Համիդի կողմից, որը և պատճառ հանդիսացավ բանակցությունների անարդյունք ավարտի համար:

Այս ձախողված բանակցություններում միասնական ճակատով հանդես գալը կրկին առաջ քաշեց ուժերը միավորելու հրամայականը: Վերակազմյալների հետ համագործակցության կարևորության մասին Քր. Միքայելյանը 1900 թ. գրում էր նաև Ավետիս Ահարոնյանին՝ հանուն դրա առաջարկելով հրաժարվել Փոքր Հայքում և Կիլիկիայում ՀՅԴ ազդեցությունը տարածելուց՝ այն դիտելով որպես հնչակյան ազդեցության գոտի[3]:

Միջկուսակցական համագործակցության փորձ կարելի է համարել օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի 1-ին կոնգրեսի ժամանակ (1902 թ. փետրվար) Հայ հեղափոխական դաշնակցություն և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունների պատգամավորների (նրանցից յուրաքանչյուրը ներկայացված էր երեքական պատգամավորով, իսկ Ս. Դ. հնչակյան կուսակցությունը մերժել էր կոնգրեսին մասնակցելու հրավերը) միասնական դիրքորոշումը:

Ինչպես գրել է «Նոր կյանքը» 1902 թ. N 1-ում՝ օսմանցիները տեսան ո՛չ թե երկու կուսակցությունների ներկայացուցիչների, այլ 6 հայի՝ Հայկական հարցի ներկայացուցիչների, որոնք մինչև կոնգրեսին մասնակցելը քաղաքական բոլոր կազմակերպություններից պահանջել էին հետամուտ լինել 61-րդ հոդվածի և 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրի իրագործմանը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար կոնգրեսը նախագահող Սաբահեդդին փա-

[1] Տե՛ս Кочар Мери, Армяно-турецкие общественно политические отношения и армянский вопрос в конце XIX – начале XX веков, Ереван, 1988, с. 71.
[2] Նույն տեղում:
[3] Վարանդյան Միքայել, նշվ. աշխ., էջ 464:

շան առաջ քաշեց ընդհանրապես Օսմանյան Թուրքիայում բարենորոգումների իրականացման խնդիրը, սակայն հայ պատվիրակներին դա չբավարարեց: Նրանք շարունակում էին պնդել Արևմտյան Հայաստանում ռեֆորմների անցկացման՝ կոնգրեսի կողմից ճանաչման անհրաժեշտությունը և, պատրաստակամություն հայտնելով Թուրքիայի ընդդիմադիր ուժերի հետ համագործակցելու, իրենց կուսակցություններին իրավունք էին վերապահում շարունակել առանձին պայքարը սուլթանական բռնատիրության դեմ՝ բարենորոգումներն իրականացված տեսնելու ակնկալիքով[1]:

Հայ ազգային կուսակցություններն առաջնահերթ ուշադրություն էին դարձնում զենքի, զինամթերքի և դրամական միջոցների հայթայթմանը, զինված խմբերի կազմավորմանը, ամենայն հայոց կաթողիկոսի անունից Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված բարենորոգումների ծրագիրը կենսագործելու խնդրանքով դիմումներ էին հղում մեծ տերություններին, ինչպես նաև կարևորում էին հայ ազատագրական շարժման նպատակների մասին համաշխարհային հասարակայնությանը ծանոթացնելը[2]: Ջանքեր, որոնք ապարդյուն չանցան և մասամբ արևմտահայության վրա բևեռեցին միջազգային առաջադեմ հասարակական-քաղաքական ուժերի և կազմակերպությունների, մտավորականների ուշադրությունը: Հարկավ նաև այդ քարոզչության շնորհիվ էր, որ Հայկական հարցը միջազգային ճանաչում էր ստացել:

Տեսնելով ազատագրական պայքարի աշխուժացումը Կիլիկիայում, հաշվի առնելով կիլիկիահայության տնտեսական հզորությունը՝ Աբդուլ Համիդը ծրագրում էր իրականացնել երկրամասի հայության կոտորածները, որոնք կհանգեցնեին Կիլիկիայում հայերի տնտեսական բարվոք վիճակի փլուզմանը և ազատագրական պայքարի պարտությանը:

Փաստերը վկայում են, որ այդ տարիներին իրադրությունը խիստ լարված էր ողջ Թուրքիայում: Ռուսական դեսպան Ի. Զինովևի՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Վ. Լամզդորֆին ուղղված հաղորդագրության համաձայն անգլիական դեսպան Օ'Կոննորը դիմել էր իրեն և ֆրանսիական դեսպանին՝ առաջարկելով համատեղ հանդես գալ Փոքր Ասիայում թուրք զինվորների և քրդերի կողմից հայերի նկատմամբ կիրառվող բռնությունների դեմ[3]: Թուրք խառնամբոխի կրոնական մոլեռանդությունը,

[1] Кочар Мери, նշվ. աշխ., էջ 101-04:
[2] Գասպարյան Ռուբեն, Հայկական կոտորածները Կիլիկիայում, Ե., 2005, էջ 44:
[3] АВПРИ, ф. Канцелярия МИД, оп. 470, г. 1906, д. N 31, т. II, л. 302-303.

սիրհող ջարդարարական մոլուցքը արթնացնելու նպատակով իշխանությունները հայերին ապստամբության միջոցով Կիլիկիան Թուրքիայից անջատելու մեղադրանքներ էին ներկայացնում: Սակայն Ադանայի նահանգապետ Բահրի փաշան, խելամիտ մարդ լինելով և հասկանալով այդ կոտորածներով Թուրքիային հասցվող տնտեսական վնասը, ժխտում էր հայերին ուղղված զրպարտությունները և կանխում ջարդի սպառնալիք ունեցող շարժումները[1]:

РУБЕН ГАСПАРЯН
ИИ НАН РА

РЕЗЮМЕ

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКИХ НАЦИОНАЛЬНЫХ ПАРТИЙ В КИЛИКИИ В КОНЦЕ XIX НАЧАЛЕ XX ВВ.

В статье на общем историческом фоне исследуемого периода рассматриваются вопросы деятельности армянских национальных партий (АРФД и Гнчак) в Киликии в деле организации и распротранения освободительной борьбы киликийских армян. Делается вывод, что эта деятельность способствовало укреплению национального самосознания армян.

[1] Սերովբյան Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը և պատասխանատուները, Կահիրե, 1909, էջ 10:

ՍԱԼՈՆԻԿՅԱՆ «ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՍԻՈՆԻԶՄԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Երիտթուրքական առաջին կազմակերպությունը 1889 թ. Ստամբուլում Ֆրանսիական բուրժուական հեղափոխության ազդեցությամբ ստեղծված «Միություն և առաջադիմություն» անունով գաղտնի կոմիտեն էր: Այն ստեղծվել է Կ. Պոլսի ռազմաբժշկական ուսումնարանի սան Իբրահիմ Թեմոյի և նրա կողմակիցներ Մեհմեդ Ռեշիդի, Աբդալլահ Ջևդեթի և Իսահակ Սուկուտիի նախաձեռնությամբ: Շուտով այս կոմիտեի հիմնադիրներն ու անդամները բացահայտվում են և հալածվում Օսմանյան կայսրության տարածքում, ինչի պատճառով էլ փախչում են արտասահման և այնտեղ շարունակում ու զարգացնում իրենց գործունեությունը՝ մեծացնելով երիտթուրքական կազմակերպությունների թիվը: Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեի նպատակն էր՝ տապալել աբդուլհամիդյան վարչակարգը և վերահաստատել Սահմանադրությունը[1]: Երիտթուրքերը ցանկանում էին նաև Օսմանյան կայսրությունը զերծ պահել արտասահմանյան միջամտությունից: Այլ կերպ ասած՝ Երիտթուրքերը ցանկանում էին փրկել Օսմանյան կայսրությունը՝ փլուզումից գործող վարչակարգը տապալելու միջոցով:

1902 թ. Փարիզում գումարված օսմանյան ընդդիմադիրների առաջին խորհրդաժողովից հետո երիտթուրքական շարժումը մասնատվում է, և անկում է նկատվում նրա գործունեության մեջ ընդհանրապես: Սակայն ոգեշնչվելով ռուսական և իրանական հեղափոխություններից՝ արդեն 1905-1906 թթ. երիտթուրքական շարժումը ակտիվանում է, բայց այս անգամ՝ արդեն Օսմանյան կայսրության սահմաններից ներս: Այսպես, 1906 թ. Սալոնիկում ստեղծվում է «Օսմանյան ազատության կոմիտե» անվանումով գաղտնի կազմակերպությունը: Այս կազմակերպության նպատակը առանձնապես չէր տարբերվում «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի նպատակներից. պայքարել արտասահմանյան միջամտությամբ և գործող

[1] Տե՛ս Ramsaur E. E., The Young Turks: Prelude to the Revolution of 1908, London, 1958, p. 14, Петросян Ю. А., Младотурецкое движение (вторая половина XIX-начало XX в.), М., 1971, с. 165-166, Миллер А. Ф., Оттоманская империя (султанская Турция), М., 1946, с. 26, Миллер А. Ф., Турция: Актуальные проблемы новой и новейшей истории, М., 1983, с. 280:

բռնապետական վարչակարգի դեմ: Սալոնիկյան կոմիտեի ստեղծումից հետո հիմնվում են երիտթուրքական շարժումը ղեկավարող կենտրոններ և՛ Փարիզում, և՛ Սալոնիկում: 1907 թ. երկար բանակցությունների արդյունքում այս երկու կոմիտեները միավորվում են «Միություն և Առաջադիմության օսմանյան կոմիտե» անվանումով կազմակերպության մեջ, որը հետագայում անվանվում է «Միություն և առաջադիմություն»: Այս կազմակերպերպության արտասահմանյան կենտրոնը Փարիզն էր, ներքինը՝ Մակեդոնիայի գլխավոր քաղաք Սալոնիկը[1]: Ֆրանսիացի աշխարհաքաղաքագետ Ժ. Անսելը գրում է. «Սալոնիկը, որ բարեկործումների կենտրոն էր, դարձել էր դավադրությունների կենտրոն, մասոնական բազմաթիվ օթյակներով հրեական այս քաղաքն է տվել Սիոնի վերականգնման գաղափարը»[2]: Իսկ Սիոնի վերականգնման գաղափարը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Հրեական հարցի լուծումը, հետևաբար՝ և քաղաքական սիոնիզմի գերխնդիրը:

Նշենք, որ Մակեդոնիան դե յուրե գտնվում էր Օսմանյան կայսրության կազմում, սակայն ըստ էության այն ավելի շատ եվրոպական տարածք էր, քան թուրքական: Մակեդոնիայի եվրոպականացմանը մեծապես նպաստում էր այն, որ հիմնականում այստեղ էին գտնվում ֆրանկոմասոնական (Ազատ որմնադիրների) ժողովարանները: Եվ քանի որ մասոնական ժողովարանները եվրոպական կառույցներ էին և գործում էին եվրոպացիների աջակցությամբ, ապա պարզ է դառնում այս շրջանի եվրոպականացման պատճառը: Այսպես, երիտթուրքական կազմակերպությունները գործում էին եվրոպական երկրներում, բնական է, որ մասոնական ժողովարանները կապող օղակ էին դրսի երիտթուրքերի և Օսմանյան կայսրության միջև: Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռում, որ 1908 թ., երբ տեղի ունեցավ երիտթուրքական հեղաշրջումը, երիտթուրքական գաղափարախոսությունը լայն տարածում ունենար Մակեդոնիայում:

Նշենք նաև, որ մասոնական ժողովարանները, որպես կանոն, գաղտնի կազմակերպություններ էին, և դրանց գործունեության մասին մանրամասները ևս գաղտնի էին պահվում: Երիտթուրքերին այդ գաղտնիությունը ձեռնտու էր, և դա նրանց օգնում էր հիմնականում նրանով, որ հավաքներ ու ժողովներ կազմակերպելու հնարավո-

[1] Տե՛ս Шпилькова В. А., Младотурецкая революция 1908-1909 гг., М., 1977, с. 78-81:

[2] Տե՛ս Ancel J., Manuel historique de la Question d'Orient (1792-1925), Paris, 1926, p. 222.

րություն էր տալիս լրտեսներով լեցուն աբդուլհամիդյան վարչակարգի շրջանում:

Երիտթուրքական կազմակերպությունների և մասոնական օթյակների նմանության, համագործակցության ու մասոնականությունից ազդվելու մասին հիշատակում է պատաբան է. Ռամազորը, նշելով, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի առաջնորդներից Թեմոն վերոհիշյալ կոմիտեի ստեղծումից մեկ տարի առաջ, այսինքն՝ 1888 թ. լինում է Բրինդիզիում և Նեապոլում, այցելում է մասոնական ժողովարան և ուսումնասիրում իտալական պատմության մեջ Կարբոնարիի դերն ու նշանակությունը, իսկ ավելի ուշ, երբ արդեն որոշում է գաղտնի կազմակերպություն ստեղծել Թուրքիայում, մեծապես օգտվում է դրանից[1]: Սա թերևս այս երկու կազմակերպությունների նմանության, իսկ հետագայում էլ արդեն դրանց համագործակցության պատճառներից է:

Այստեղ հետաքրքրական է այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրության ֆրանկոմասոնական օթյակներին մեծապես օժանդակում և անդամակցում էին հրեաները՝ հիմնականում դեոնմեները (մահմեդականություն ընդունած հրեաները): Հրեաները Սալոնիկ էին եկել հիմնականում 15-րդ դարում: Դա պայմանավորված էր 1492 թ. Իսպանիայի տիրակալներ Ֆերդինանդի և Իզաբելլայի կողմից հրեաներին Իսպանիայից վտարելու մասին տրված հատուկ էդիկտով: Իսպանիայից աքսորվածների զգալի մասը գալիս է Թուրքիա, իսկ Օսմանյան կայսրության սուլթան Բայազիդ 2-րդը (1481-1512 թթ.) մի եվրոպացու հետ ունեցած զրույցի ժամանակ մասնավորեցնում է. «Նրա համար եք դուք Ֆերդինանդին համարում իմաստուն թագավոր, որ քիչ ջանքեր չգործադրեց, որ քայքայի իր երկիրը և հարստացնի մերը»[2]: Փաստորեն, Օսմանյան կայսրության սուլթանը հրեաներին օգտակար տարր է համարում իր երկրի համար և նպաստում, որ վերջիններս հաստատվեն Թուրքիայում:

Հրեաների՝ Օսմանյան կայսրություն գալու պատճառներից մեկն էլ այն էր, որ նրանք վերջապես «տուն վերադառնալու» հնարավորություն էին ստացել: Հրեաների պատմական հայրենիք Իսրայելը՝ այդժամյան Պաղեստինը, գտնվում էր Օսմանյան կայսրության տարածքում, հետևաբար և Օսմանյան Թուրքիա գաղթելը հրեաների, Պաղեստին վերադառնալու առաջին քայլն էր: Ըստ Ջ. Կիրակոսյանի, Օսմանյան կայսրության «հրեաների մեծ մասը իտալական

[1] Տե՛ս Ramsaur E. E., նշվ. աշխ., p. 15.

[2] Տե՛ս Фадеева И., Статус еврейских общин в Османской империи http://www.lechaim.ru/ARHIV/151/osman.htm

քաղաքացիություն ուներ, օգտվում էր կապիտուլիացիոն պայմանագրերից և ենթակա չէր սուլթանի օրենքներին... Այս հրեաներն էլ կազմում են «Միություն և առաջադիմություն կոմիտեի հիմնական կորիզը»[1]: Հասկանալով, որ Օսմանյան կայսրությունում իրենք ավելի բարձր դիրքի կհասնեին մահմեդականություն ընդունելով, հրեաները գնացին նաև դրան: Բայց և այնպես, Սալոնիկի բոլոր հրեաները չէին մահմեդականություն ընդունել:

Այսպիսով՝ Օսմանյան կայսրության հրեաները, հատկապես մահմեդականություն ընդունածներն, արդեն սերտ կապերի մեջ էին մասոնական օթյակների հետ և մաս էին կազմում համաշխարհային սիոնիզմի: Նրանք իրենց ազգային դատի արդար լուծումը կապում էին Օսմանյան կայսրությունում իշխանափոխության հետ, հետևաբար պետք է շահագրգռված լինեին այդ իշխանափոխությամբ և անգամ իրենք էլ կազմակերպեցին այն կամ էլ նպաստեցին իշխանափոխության արագացմանը: Իսկ տվյալ պահին Օսմանյան կայսրությունում իշխանափոխությունը հնարավոր էր միայն հեղափոխության միջոցով:

Քաղաքական սիոնիզմը, որ առաջացել էր դեռևս 19-րդ դարում, ուներ մեկ հիմնական նպատակ. սկզբի համար ստեղծել հրեական Ազգային օջախ, իսկ հետագայում նաև հրեական պետություն: Այս նպատակն իրականացնելու համար սկզբնական շրջանում հրեաները պաշտպանում էին իշխանությունների վարած քաղաքականությունը, ի տարբերություն հայերի, որոնք արդեն հույսները կապել էին Արևմուտքի և Ռուսաստանի մարդասիրական միջամտության հետ: Հետևաբար և թուրքերի համար ավելի հանդուրժելի ու նաև ինչ-որ տեղ համակրելի էին հրեաները, քան՝ հայերը[2]:

Սակայն հրեաների այս քաղաքականությունը (իշխանամետ) հրեական հարցի լուծման հետ կապված լուրջ արդյունք չբերեց, և վերջիններս փոխեցին իրենց քաղաքական մարտավարությունը՝ անցնելով ընդդիմության շարքերը, կազմակերպեցին ու նպաստեցին «Միություն և առաջադիմության» սալոնիկյան կոմիտեի առաջացմանն ու հետագա բուռն զարգացմանը:

Մի շարք հեղինակներ անդրադառնալով այս կոմիտեի գործունեությանը՝ այն հաճախ համարում են մասոնական, երբեմն էլ՝ հրեական՝ կոմիտեում ու նրա ղեկավար կազմում եղած մեծ թվով հրեաների ու մասոնների առկայության պատճառով: Իսկ պատմա-

[1] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ.- 1914), գիրք 1, Ե., 1982, էջ 237:

[2] Տե՛ս Pernot M., La question Turque, Paris, p.176.

բան, հասարակական գործիչ Պ. Հեպեսը երիտթուրքական «Միություն և Առաջադիմություն» կոմիտեն անվանում է հիմնականում հրեա-մասոնական կազմակերպություն, որի բոլոր ղեկավարները դեոնմեներ էին[1]:

Այս նույն հարցին է անդրադարձել ամերիկացի պատմաբան Ջ. Մ. Բերկնեսը. «Հայտնի փաստ է, որ Սալոնիկի կոմիտեն ստեղծվել է (formed) մասոնական հովանավորչությամբ, որին օգնել են հրեաներն ու դեոնմեները կամ Թուրքիայի կրիպտո-հրեաները, որի շտաբ-բնակարանը Սալոնիկում է և որը, անգամ Աբդուլ Համիդի իշխանության տակ (կազմակերպությունը) ուներ մասոնական կառուցվածք»[2]: Բերկեսը նաև անդրադարձել է այն հարցին, որ երիտթուրքական հեղաշրջումը ֆինանսավորում էին հրեա սիոնիստները:

«Միություն և Առաջադիմություն» կոմիտեի և հրեաների միջև եղած կապի մասին ամենաարժեքավոր տեղեկությունը տալիս է Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջ. Լոուբերը: Նա 1910 թ. խիստ գաղտնի նամակ է ուղղում Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Չ. Հարդինգին: Իր այս նամակում Լոուբերը պնդում է, որ երիտթուրքական շարժումը ղեկավարվում է ֆրանկոմասոնականության կողմից: Մասնավորապես նա նշում է է. Կարասուին, Ջավիդ բեյին, Թալաաթին, Ռեզմի բեյին, Հիլմի փաշային և այլն[3]:

է. Կարասուն, դեռևս 1904 թ. նամակով դիմել է սուլթան Աբդուլ Համիդ 2-րդին, խնդրելով Ռուսական կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունները հաշվի առնելով,[4] հրեաներին Պաղեստին գաղթելու իրավունք տալ: Կարասուն չի դադարեցրեցնում իր գործունեությունն այն բանից հետո, երբ սուլթանը մերժում է նրա առաջարկը, իսկ արդեն 1908 թ. անձամբ սուլթանին գահընկեց լինելու հրովարտակը ներկայացնողներից էր: Նա նաև Բալկաններում ղեկավարել է թուրքական հակահետախուզությունը, իսկ արդեն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նրա վերահսկողության տակ էր գտնվում Օսմանյան կայսրության պարենի ողջ պահուստը: Նա սալոնիկցի հրեա մասոն էր, Օսմանյան խորհրդա-

[1] Нэpess P., La dernier bal du «Grand Soir» ou «La republique Univereselle», 1957, p. 18.
[2] Bjerknes C. J., The Jewish genocide of Armenian Christians, 2007, p. 4. www.honestmediatoday.com/books_available_online.htm
[3] Տե՛ս Kedourie E., Young Turks, Freemasons and Jews, Middle Eastern Studies, vol. 7, Janvary, 1971, N 1, London, pp. 89-104.
[4] Խոսքը Ռուսական կայսրության տարածքում տեղի ունեցող հրեական հետապնդումների մասին է, որոնք պարբերաբար ուղեկցվում էին նրանց դեմ կազմակերպված պայթյուններով:

րանի անդամ, «Վերածնված Մակեդոնիա» օթյակի հիմնադիրը, որն էլ սերտ կապերի մեջ էր իտալական ֆրանկոմասոնականության հետ[1]: Կարասուի մասին խոսելիս՝ Գ. Սարգսյանցը ևս նշում է, որ երիտթուրքական շարժման հիմնադիրը նաև «Բնայ Բրիտ»-ի[2] իտալական անդամ է. Կարասուն էր: Այս օթյակն երիթուրքերի կնիքն էր, երիտթուրքական շարժման բոլոր մասնակիցները նրա անդամներն էին»[3], հետևաբար և Կարասուն էլ երիտթուրքական հեղաշրջման հիմնական կազմակերպիչներից է:

Լոուբերը ևս իր նամակում խոսում է Կարասուի մասին: Նա ևս մեկ անգամ հաստատում է, որ Կարասուն Սալոնիկի հրեա մասոն էր, ով Օսմանյան պառլամենտի անդամ էր դարձել: Նա հիմնել էր «Մակեդոնիա Ռիզորտա» օթյակը, որը սերտ կապերի մեջ էր իտալական Ֆրանկոմասոնության հետ: Նա նաև աշխատում է այն ուղղությամբ, որ երիտթուրքերի քաղաքական ու ռազմական գործիչներին մատնականությանը հաղորդակից դարձնի[4]: Այն բանից հետո, երբ «Միություն և Առաջադիմություն» կոմիտեն հեղաշրջումից հետո տեղափոխվում է Կ. Պոլիս, պարզ է դառնում, որ նրա շատ անդամներ ֆրանկոմասոն էր: Այդ ժամանակից սկսած Կարասուն սկսում է մեծ դեր խաղալ նաև Բալկանյան կոմիտեի վրա:

Վերը նշված նամակում Լոուբերը անդրադարձել է մի շարք փաստերի, որոնք առնչվում էին սիոնիզմի և երիտթուրքական հեղաշրջման հարաբերություններին: Այսպես, նա ևս մեկ անգամ հաստատում է, որ հրեաները կարող էին օգնել իրենց խելքով, եվրոպական մամուլի վրա ունեցած իրենց ազդեցությամբ և ֆինանսապես[5]: Սա ևս մեկ անգամ հաստատում է այն տեսակետը, որ սիոնիստներն երիտթուրքերին ֆինանսավորել են հեղաշրջում կազմակերպելու գործում: Սակայն հրեաների կողմից աջակցությունն երիտթուրքերին ուներ իր պատճառներն ու նպատակները: Նախ՝ այն, որ հրեաներին անհրաժեշտ էր պահպանել իրենց բացարձակ տիրապետությունն երիտթուրքական խորհուրդներում, որպեսզի հնարավորություն ունենային իրականացնել իրենց իսրայելական նպատակները: Բայց հրեաների աջակցությունն երիտթուրքերին չէր սահմանափակվում միայն ֆինանսական օգնությամբ:

[1] Տե՛ս Ногалес де Р., Четыре года под полумесяцем, М., 2006, с. 5, Саркисянц Г., Геноцид армян (организаторы и исполнители), Ер., 2009, с. 10-11 :
[2] Հրեական միջազգային կազմակերպություն, որը ստեղվել է 1843 թ. Նյու Յորքում Գերմանիայից գաղթած հրեաների կողմից:
[3] Саркисянц Г., նշվ. աշխ., էջ 10-11:
[4] Տե՛ս Kedourie E., նշվ աշխ., էջ 94:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 100:

Երիտթուրքերի և սիոնիստ-հրեաների համագործակցությանն է անդրադարձել Լիբանանում և Սիրիայում ճանաչված փաստաբան, հասարակական գործիչ, հրապարակախոս Գ. Տերտերյանը: Նա պնդում է, որ երիտթուրքական շարժման առաջնորդներն ու կազմակերպիչները հրեաներն էին: Տերտերյանը «Միություն և առաջադիմություն» կոմիտեն համարում է «սիոնական շարժման ձեռնասյուն՝ հիմնված, կազմակերպված, ֆինանսավորված և կողմնորոշված Մակեդոնիայի սիոնական-մասոնական օթյակների կողմից»[1]: Իր խոսքերը հիմնավորելու համար Տերտերյանը վկայակոչում է Սալոնիկի «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հիմնադիր քառյակին (Էնվեր, Թալեաթ, Ջավիդ և Ջեմալ), որոնցից Էնվերը, Թալեաթը, Ջավիդը հրեա-սիոնիստներ և Սալոնիկի մասոնական օթյակների ղեկավարներն էին [2]:

Այս վարկածի կողմնակիցներից էր նաև անգլիացի պատմաբան Սեթոն-Ուոսթոնը, որը պնդում էր, թե «Միություն և առաջադիմություն» կոմտեն ո՛չ թուրքական էր, ո՛չ էլ իսլամական, որ նրա բոլոր հիմնադիրները հրեաներ էին եղել, որ երիտթուրքերը ֆինանսավորվել էին հրեաների կողմից: Գրեթե նույնն էր պնդել Ա. Թոյնբին, համարելով, որ Սալոնիկի հրեաները «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անբաժան մասն էին[3]:

Գ. Տերտերյանի և վերոնշյալ մյուս հեղինակների տեսակետն էր պաշտպանում նաև դեպքերի ականատես Ռաֆայել դը Նոգալեսը: Վերջինս սիոնիստ-մասոն հարաբերություններին անդրադառնալիս՝ նշում էր, որ Թուրքիայում գործող մասոնական մի շարք օթյակներ կան ղեկավարվում էին հրեաների կողմից, կամ էլ հրեաները դրանցում մեծ ազդեցություն ունեին[4]:

Նոգալեսի «Չորս տարի կիսալուսնի տակ» աշխատության հենց առաջին էջին տեղակայված «Օսմանյան կայսրության Մեծ Արևելք» թուրքական մասոնական ժողովարանի դրոշմը ևս մեկ ապացույց է սիոնիզմի, մասոնականության և վերջապես «Միություն և առաջադիմություն» կոմիտեի փոխգործակցության մասին: Նշված դրոշմի վրա պատկերված են վերջիններիս խորհրդանիշերը: Դրոշմի անմիջապես կենտրոնում տեսնում ենք «G» տառը (երկրաչափություն բառի լատիներենի առաջին տառը), որը մասոնականության խորհրդանիշն է: Դրոշմի վրա պատկերված են նաև հրեական խորհրդանիշեր՝ Դավթի՝ վեցաթև և Սողոմոնի հնգաթև աստղերը, երիտթուրքական խորհրդանիշներից պատկերված է կիսալուսինը և «Միություն և առաջադիմություն» կուսակցության կարգախոսը:

[1] Տե՛ս Տերտերյան Գ., Սիոնիզմի և պանթուրանիզմի առնչությունները և անոնց սպառնալիքը Հայաստանի լիճելիության: Թուրքիան, սիոնիզմը, մասոնները և Հայոց ցեղասպանությունը (Փաստաթղթեր և ուսումնասիրություններ), Ե, 2005, էջ 67:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս Ногалес де Р., նշվ աշխ., էջ 5:

Նոգալեսը տալիս է որոշ բացատրություններ. 1900-ականների սկզբներին Սալոնիկում դեոնմեները ստեղծում են «Մակեդոնիայի վերածնունդը», «Արժանապատվություն» և այլ օթյակները, որոնք հետագայում ընդգրկվել էին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավար կազմը, որոշել էին նրա մարտավարությունը և կազմակերպել 1908 թ. Աբդուլ Համիդի տապալումը[1]:

Փաստորեն, սիոնիզմի և սալոնիկյան կոմիտեի հարաբերությունների հարցն ուսումնասիրելիս հանդիպում ենք հետաքրքիր փաստի: Դա վերջիններիս համագործակցության հարցն է: Վերջինս հաշվով այս համագործակցությունն էր, որ հանգեցրեց երիտթուրքական հեղաշրջմանը:

Այսպիսով, երիտթուրքական սալոնիկյան կոմիտեի և սիոնիզմի հարաբերությունների հարցի ուսումնասիրումը թույլ է տալիս եզրակացնելու, որ Սալոնիկի «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հիմնադիրներն ու ղեկավար կազմը հրեաներն էին, հատկապես դեոնմե հրեաները, որոնց զգալի մասը սիոնիստներ էին: Սա չի կարելի համարել սոսկ զուգադիպություն: Եթե անգամ այն զուգադիպություն համարենք, ապա պետք է խոստովանել, որ այս զուգադիպությունը բավականին հետաքրքիր էր Հայ դատի առումով:

Այսպես՝ Օսմանյան կայսրությունում հաստատվելուց հետո կարճ ժամանակում հրեաները համալրում են հայերի և հույների շարքերը՝ կազմելով երկրի բուրժուազիան և դառնալով Օսմանյան կայսրության տնտեսական վերնախավի ներկայացուցիչներ: Այստեղ հայերի ու հրեաների միջև հակասություն է առաջ գալիս. հրեաները հայերին հակառակորդ էին համարում տնտեսական ոլորտում, ինչից էլ օգտվում են գրգռում երիտթուրքերը: Այս հակասությունն աստիճանաբար թշնամության է վերածվում: Դրա վառ ապացույցը քաղաքական սիոնիզմի հիմնադիր Թ. Հերցլի գործունեությունն էր, մասնավորապես նրա կողմից Հրեական հարցը Հայկականի հաշվին լուծելու փորձերը:

Նշենք նաև, որ հրեաներն իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու ամենակարճ և ուղիղ ճանապարհը համարում էին տնտեսական ոլորտում թելադրող դիրք ունենալը: Այսպես, այստեղ բախվում

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 12:

են հայ-հրեական շահերը: Բանն այն է, որ հայերը, «ովքեր Բյուզանդական կայսրության ժամանակներից կազմում էին հնագույն Հայաստանի և ողջ Օսմանյան կայսրության տնտեսական և մշակութային ամբողջ ներուժը»[1], հրեաների՝ Օսմանյան կայսրության տնտեսական վերնախավ հասնելու ճանապարհին լուրջ խոչընդոտ էին հանդիսանում: Այլ կերպ ասած, հայերի ներկայությունն Օսմանյան կայսրությունում արդեն հրեաների համար անցանկալի էր:

Բացի ֆինանսատնտեսական մրցակցությունից, հրեաները հայերի մեջ տեսնում էին նաև իրենց քաղաքական մրցակիցներին: Այլ կերպ ասած, հրեաները Հայկական հարցը Հրեականին մրցակից էին համարում, քանի որ այս հարցերն ունենալով որոշակի նմանություններ (արտաքուստ), երկուսն էլ պահանջում էին տարածքային լուծումներ և այն ակնկալում Օսմանյան կայսրությունից: Հրեաները վտանգավոր էին համարում միանման երկու հարցի առկայությունը, հատկապես Թ. Հերցլի և է. Կարասուի՝ սուլթանի հետ ունեցած հանդիպումներից ու դրանց արդյունքում սուլթանի տրամադրությունը պարզելուց հետո հստակ գիտակցում էին, որ բացառվում էր այն տարբերակը, որ Օսմանյան կայսրությունը կլուծի երկու հարցն էլ, իսկ մեկի դեպքում լուծման հավանականությունը մեծանում էր, հետևաբար հրեաներին ձեռնտու էր Հայկական հարցի հեռացումն ասպարեզից:

Հ. Հակոբյանը, նշելով, որ հրեաներն ու հայերը երբեք չեն համագործակցել իրենց նույնանման հարցերի լուծման գործում, գրում է. «Հրեա գործիչները ցանկացել են, որ մարդկությունը զբաղվի միայն հրեական դատով, հավանաբար, համոզված լինելով, որ երկրորդ նմանօրինակ խնդրի արծարծումը միջազգային ատյաններում չխանգարեր իրենց հարցի լուծմանը, մանավանդ, թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում լուծումը կապված էր Օսմանյան կայսրության քայքայման և մասնատման հետ, այսինքն՝ հանգում էր մեծ տերությունների երկրաքաղաքական շահերի բախմանը Արևելյան հարցում»[2]: Դրանով հանդերձ՝ Հ. Հակոբյանը չի ժխտում նաև հայ և հրեա բուրժուազիայի տնտեսական մրցակցության առկայության գործոնը: Եվ վերջապես հենց սալոնիկյան կոմիտեի վերջնական որոշումով «լուծվեց» Հայկական հարցը: Այս դեպքում խոսքը Հայոց ցեղասպանության մասին է:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 5:
[2] Հակոբյան Հ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը, Ե, 2002, էջ 111:

МЕРИ ОГАННИСЯН
ЕГУ

К ВОПРОСУ О СВЯЗИ МЕЖДУ САЛОНИКСКИМ КОМИТЕТОМ «ЕДИНЕНИЯ И ПРОГРЕСС» И СИОНИЗМОМ

РЕЗЮМЕ

В статье предпринята попытка по возможности доказать наличие связей между Салоникским комитетом «Единения и прогресса» и сионизмом, рассмотреть отношения младотурок-масонов и евреев-масонов, особенно по части Салоникского комитета. Также была рассмотрена связь салоникских евреев с комитетом «Единения и прогресса», в частности деятельность Э.Карасу. Заметно влияние связи «Единение и прогресс» сионизм на армян и Армянский вопрос.

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԹԻՖԼԻՍԻ «ՆՈՐ ՀՈՍԱՆՔ» ԱՄՍԱԳԻՐԸ (1913 -1915 ԹԹ.)

«Նոր հոսանք» ամսագիրը լույս է տեսել Թիֆլիսում 1913-1915 թթ.: Ամսագրի պատասխանատու խմբագիրն անվանի գրականագետ Նիկոլ Աղբալյանն էր, իսկ հրատարակիչ-խմբագիրը՝ Արշակ Ղազարյանը: Գրական, գիտական, հասարակական-քաղաքական «Նոր հոսանք» ամսագրի հրատարակության իրավունքն ստացվել էր 1912 թ. դեկտեմբերի 31-ին: Ամսագիրը հրատարակության պատրաստելու, արևելահայ և արևմտահայ հեղինակներից բաղկացած խմբագրակազմը ձևավորելու ընթացքը տևել է մոտ երկու ամիս: Ամսագրի առաջին համարը լույս է ընծայվել 1913 թ. մարտի 6-ին:[1] Ինչպես նշվում էր խմբագրականում՝ «Նոր հոսանք»-ը փորձելու էր լցնել այն բացն արևելահայ հասարակական-մշակութային ուղղվածություն ունեցող պարբերական մամուլի աշխարհում, որն առաջացել էր «Մուրճ» ամսագրի դադարից հետո: «Ռուսահայ գրականութիւնը չունէր մի օրգան, որ ժամադրավայրը լիներ լուրջ պատրաստութիւն ունեցող գրական և հրապարակախօսական ուժերի: «Լումա» և «Արորը», որ հրատարակւում էին «Մուրճ»-ից յետոյ, աւելի ժողովածուներ էին, քան ամսագիրներ բառի իսկական առումով»,- գրում էր Ն. Աղբալյանը:[2]

«Նոր հոսանք»-ն իր նպատակներին հասնելու համար ջանալու էր պահպանել քննադատական ոգին ու նյութերի ընտրության և ուսումնասիրության գիտահետազոտական մեթոդը: «Նոր հոսանք»-ն ելնում էր ծրագրային հետևյալ մեկնակետերից.

- ղեկավարել հասարակական միտքը,
- վերլուծել հասարակական կյանքում նկատվող արատավոր երևույթներն իրենց պատճառահետևանքային կապերի հոլովույթում,
- արտահայտել ամսագրի շուրջ համախմբված մտավորականների տեսակետները հանրությանը մտահոգող և հասարակական հնչեղություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ,

[1] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիվ 1, էջ 233, 234:
[2] Նույն տեղում, էջ 3:

- ստեղծել «մի տիպար ամսագիր մեզանում, որքան կը ներեն մեր մտավորական դասի պատրաստութիւնն ու կարողութիւնը»:[1]

Հայություն ասելով՝ ամսագրի խմբագրակազմը հասկանում էր ազգային միություն, որը հիմնականում ապրում էր երեք պետությունների (Ռուսաստան, Թուրքիա, Պարսկաստան) սահմաններում: Թեև ամսագրում հայելու պես արտացոլվում էր հայության այդ երեք հատվածների, նաև՝ հայկական այլ գաղթօջախների առօրյան, կենցաղն ու գործունեությունը, բայց առաջնային տեղը գրավում էին ռուսական կյանքի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային ոլորտներում ընթացող գործընթացներն ու տեղաշարժերը: Ամսագրի այս դիրքորոշումը պայմանավորված էր պարզ և օբյեկտիվ պատճառով. «Նոր հոսանք»-ն արևելահայ մամուլի օրգան էր և հենց այդ իրականության պահանջով ու թելադրանքով էր ծնունդ առել. «Ամսագրի կարիքը մեր գրականութեան մէջ վաղուց զգացւած է: Հայութեան դեմոկրատիք միտքն այսօր չունի մի բերան, որով պարբերաբար խօսել կարողանար մեր կեանքի և գրականութեան հիմնական խնդիրների մասին այն լրջութեամբ և հիմնաւորութեամբ, որոնց նրանք արժանի են...Ընդառաջ գնալով հասարակութեան մէջ վաղուց նկատւող պահանջին՝...մենք որոշեցինք ինքներս ձեռնարկել այդ կարևոր գործին՝ ապաւինած համակիր մարդկանց աջակցութեան»:[2]

«Նոր հոսանք»-ը հրատարակության տարիներին հիմնականում կարողացել է իրականացնել իր կողմից իսկ առաջադրված առաջնահերթ խնդիրները: Այնուհանդերձ, խանգարող հանգամանքներն, ի թիվս որոնց՝ ֆինանսական անճուկ կացությունը, պարբերաբար ստիպել են ամսագրի աշխատակիցներին նախատեսվածից ուշ հանրությանը հրամցնել պարբերականի հերթական համարը: Դրա վկայությունն են ամսագրում խմբագրության կողմից մերթ ընդ մերթ տպագրված բացատրագրերը: Դրանք ընթերցողներին տեղեկացնում էին, որ թեև ուշացումով, բայց տարվա ընթացքում միացյալ համարների միջոցով նրանք կստանան կամ կգնեն «Նոր հոսանք»-ի 12 համար: Օրինակ՝ ամսագրի անդրանիկ համարի վերջին էջերում զետեղված բացատրության մեջ պարզաբանվում էր, թե ինչո՞ւ էր «Նոր հոսանք»-ի առաջին համարը լույս տեսել հայտարարված ժամկետից 10 օր ուշ. «Մենք խոստացել ենք մեր բաժանորդներին տարեկան 12 գիրք, իւրաքանչիւրը 160 մեծադիր էջով: Յունւարն ու փետրուարը կորցրած լինելով, մենք ընդամենը 10 ամիս ունէինք մեր

[1] Նույն տեղում, էջ 5:
[2] Նույն տեղում, էջ 235:

տրամադրութեան տակ: Խմբագրութիւնս մտածեց հետևյալ ձևով կատարել իր խոստումը և դուրս գալ դժւարութիւնից: 1, 2, և 3 համարներում մենք որոշեցինք ցրել յունւարի N-ի 160 էջը, որով այդ համարները փոխանակ 160 էջի, կը լինեն 200-ից աւելի: Նոյն կերպ կը վարւենք և աշնան համարների հետ, որով մեր բաժանորդները 10 համարով 12 գրքի նիւթ կստանան: Ծաւալի այս մեծացումը, բնական է, որ դժւարացրեց համարն իր ժամանակին լոյս ընծայելը»:[1]

«Նոր հոսանք»-ի հիմնական բաժիններն էին՝ «Գեղարվեստական», «Գրական-քննական», «Գրախոսություն», «Դեմքեր», «Տեղագրական», «Պատմական-փիլիսոփայական», «Հասարակագիտական», «Գիտական», «Գիտական քրոնիկոն», «Պատմական նյութեր», «Հայոց հարց», «Հայ կյանք», «Տաճկահայ կյանք», «Պարսկահայ կյանք», «Ռուս կյանք», «Վրաց կյանք», «Քաղաքական տեսություն», «Արտաքին տեսություն», «Աշխատավորական կյանք», «Գրքեր և պարբերականներ», «Խմբագրության կողմից» և այլն:

«Նոր հոսանք»-ն ունեցել է նաև 16 էջանոց հավելված: Օրինակ՝ 1914 թ. թիվ 4-ը և 1914 թ. թիվ 5-ն իրենց հետ ունեցել են հավելված: Տվյալների բացակայությունը թույլ չի տալիս պատկերացում կազմել դրանցում ընդգրկված նյութերի և ամսագրի հավելվածի բուն նպատակների և ուղղվածության մասին:

«Նոր հոսանք»-ի խմբագրությունն ամսագրի հավելվածից բացի իր էջերում հատվածաբար տպագրված հասարակագիտական ուսումնասիրությունները, վիպակներն ու պատմվածքները լույս է ընծայել ««Նոր հոսանք»-ի գրադարան» մատենաշարի ներքո: Այդ շարքի առաջին գրքույկը Լ.Շանթի «Կինը» նովելն էր՝ հրատարակված 1913 թ. ապրիլի վերջին:

«Նոր հոսանք» ամսագրի խմբագրակազմում ընդգրկված էին Արտաշես Ղազարյանը, Արշակ Ջամալյանը, Երվանդ Ֆրանկյանը, Դ. Անանունը, Ա-ԴՈ-ն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Լևոն Շանթը: Ամսագրի էջերում կայուն խորագրերի ներքո հոդվածաշարերով հանդես են եկել Արսեն Տերտերյանը, Հարություն Սուրխաթյանը, Ցոլակ Խանզադյանը, Արտաշես Վանցյանը, Վահան Խորենին, Ռուբեն Տեր-Մինասյանը (Ռուբեն):

«Նոր հոսանք»-ի էջերում ամփոփված են ժամանակի արևելահայ և արևմտահայ անվանի մտավորականների հոդվածներն ու գրողների արձակ և չափածո ստեղծագործությունները: Ամսագրում տպագրվել են Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Դե-

[1] Նույն տեղում, էջ 233:

րենիկ Դեմիրճյանը, Միքայել Մանվելյանը, Արմենուհի Տիգրանյանը և այլք:

«Նոր հոսանք»-ը թարգմանաբար տպագրել է Ջորջ Բայրոնի, Օմար Խայամի, Ջեկ Լոնդոնի և այլոց ստեղծագործությունները՝ Հովսեփ Միրզոյանի, Հ. Բ.-ի և Սարգիս Երկայնյանի թարգմանությամբ:

«Նոր հոսանք»-ն իրավամբ կարելի է համարել հայ և համաշխարհային գրականության լավագույն երկերն ընթերցող հասարակայնությանը նորովի, մինչ այդ չկիրառված սկզբունքներով և չափանիշներով ներկայացնող ամսագիր արևելահայ պարբերական մամուլի աշխարհում: Սա մի ամսագիր էր, որտեղ ժամանակի ոգուն համապատասխանող գրականագիտական ուսումնասիրություններով և գրաքննադատական վերլուծականներով գրասեր հանրությանը փորձում էին ուղղորդել դեպի ազգային, բայց միաժամանակ համամարդկային գրական արժեքներ: Հարուստ և բազմազան է «Նոր հոսանք»-ի «Գրախոսություն» բաժինը, որտեղ մշտապես արձագանքում էին թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ գրական նոր ստեղծագործություններին: Այստեղ տպագրված են գիտական մեծ արժեք ունեցող ուսումնասիրություններ Ն. Աղբալյանի, Ա. Տերտերյանի, Հ. Սուրխաթյանի կողմից: Բաժնի պատասխանատուն Ն. Աղբալյանն էր իր բեղուն գրչով: «Նոր հոսանք»-ում տպագրված նրա գրախոսություններն ու գրաքննադատական հոդվածները հետագայում լույս են տեսել առանձին գրքերով: Իր առաջին գրախոսականներից մեկում, օրինակ՝ Ն. Աղբալյանն արձանագրում էր վերջին տասնամյակում գրաքննադատական հոդվածների նկատմամբ եղած հետաքրքրության աճը և դրանց նախապատվություն տալու միտումը: Նա դա պատճառաբանում էր հետևյալ հանգամանքներով. «Սա մի կողմից նշան է, որ հայ գրականութիւնն արդէն բաւական բան ունի գնահատելու, միւս կողմից սա նշանակում է, որ հրապարակ է իջել մի նոր սերունդ, տարբեր ճաշակի և գրական ըմբռնումների տէր, տարբեր հայեացք ունեցող աշխարհի վրայ»:[1] Ն. Աղբալյանի կարծիքով՝ այդ սերունդը, գնահատելով անցյալի գրական գործիչներին, անուղղակիորեն կրելու է վերջինների ազդեցությունը, ինչի հետևանքով գտնելու է ազգային քաղաքակրթության շավիղը և ինքն էլ ընթանալու է այդ ճանապարհով: «Քննադատութիւնն այսպիսով պէտք է կցէ նոր սերունդի աշխատանքը հնին և գտնէ այն շղթան, որի օղակներն են կազմում հները, և պիտի կազմեն նորերը»,- այս

[1] Նույն տեղում, 1913, թիվ 3, էջ 620:

եզրակացությանն էր հանգում Ն.Աղբալյանը:[1] Նա համոզված էր, որ ամենախիստ և միակողմանի քննադատությունն անգամ ունենալու էր իր բարերար արդյունքը. գրական նոր սերունդը լծվելու էր «հայի պատմութեան անիւին: Գրական այս շարժումը մենք համարում ենք վերածնութեան սկիզբն և բեկման կէտը հայ մտքի և զգացումի պատմութեան մէջ»:[2]

«Նոր հոսանք»-ը, գրական-մշակութային կյանքի վերածնության հարցադրումները բարձրացնելուն զուգահեռ, ուշադրության կենտրոնում էր պահում Հայկական հարցը և արևմտահայ իրականության առաջնահերթ լուծման կարիք ունեցող խնդիրները: Այս թեմային արևելահայ պարբերականը մոտեցել է սրտացավորեն և ամենայն պատասխանատվությամբ: Հիշյալ հիմնահարցերի վերաբերյալ հրապարակումները գրվել են՝ հիմնվելով լուրջ ուսումնասիրությունների ու տեղում ճշգրտված փաստերի վրա: Տպագրվել են նաև ամսագրի՝ արևմտահայ աշխատակիցների և թղթակիցների կողմից ուղարկված հոդվածներ և վերլուծականներ: Հիշատակության է արժանի ամսագրի՝ 1913-1914 թթ. գրեթե բոլոր համարների «Հայկական հարց» բաժնում տպագրված «Հուշեր Տաճկահայաստանի ճանապարհորդությունից» վերնագրով հոդվածաշարը (հեղինակ՝ Ա-ԴՈ):[3] Հոդվածագիրը 1908 թ. Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջումից մեկ տարի անց՝ 1909 թ. ամռանն արևմտահայերի իրական վիճակին ծանոթանալու և ձեռք բերած վիճակագրական ու այլ կարգի հետազոտությունների արդյունքների մասին արևելահայ հասարակությանն իրազեկելու նպատակով եղել էր Թուրքիայի հայաբնակ 3 վիլայեթներում (Վան, Բիթլիս, Էրզրում): Նա շրջել էր գյուղեգյուղ և տեղի հոգևորականների, գյուղապետերի հետ ունեցած զրույցների ընթացքում գրի էր առել մարդահամարի, հայ գյուղացիների ունեցվածքի, ապրուստի միջոցների, նրանց նկատմամբ իրագործվող անարդարությունների մասին տվյալներ: Մեծ է այդ կարգի օբյեկտիվ տեղեկատվության պատմագիտական արժեքը՝ այդ մեկ տարվա ընթացքում (1908-1909 թթ.) «սահմանադրական» հռչակված Թուրքիայում հայ ժողովրդի ապրելակերպի, իրավունքների, կյանքի և գույքի ապահովության վերաբերյալ պատկերացում կազմելու առումով: Օրինակ՝ Ա-ԴՈ-ն հայտնում էր, որ 17-րդ դարում Բայազետ քաղաքում ապրում էին 2000 տուն հայեր, 1822 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ՝ 1735 տուն, իսկ 1909 թ.՝ 350 տուն:[1] Արդեն 1909 թ. Բայազետի գավառում կային 110 գյուղ, որոնցից հայաբնակ էին 3-ը՝ Արծափը, Քոռունը և Մուսունը:[2] Հայերի թվաքանակի նվազեցումն իրենց հայրենիքում Ա-ԴՈ-ն պայմանավորում էր թուրքական պետության հատուկ մշակած հայաջինջ ծրագրով, որն իր մեջ ներառում էր ալան-թալան, ջարդ, բռնի արտագաղթ, իրավազուրկ վիճակ, հայերի ունեզրկմանը նպաստող հարկային և հողային յուրօրինակ քաղաքականություն: Օրինակ՝ հոդվածաշարում այդ ամենի մասին պատմում են հայկական Ուչքիլիսե գյուղի բնակիչները: Գյուղը գտնվում էր Ուչքիլիսե (նախկինում՝ Սուրբ Հովհաննես) վանքի մոտ, Դիադինից հյուսիս-արևմուտք: Ուչքիլիսեում ապրում էին 27 տուն հայեր: Ա-ԴՈ-յի հետ զրույցի ժամանակ գյուղացիներից մեկն այսպես էր ներկայացնում իրենց դրությունը. «Վերջին 15 տարիների ընթացքում մենք զուլումի տարիներ ապրեցինք, չտեսանք մէկ ուրախ օր, հարւած հարւածի յետևից թափւեց մեր գլխին. շատերը չդիմացան ու կտոր-կտոր 15 ընտանիքից աւելի գաղթեցին Ռուսաստան, իսկ նրանց տեղը Մօկսէն եկան բնակւեցին:

- Այստեղից մօտիկ կա՞յին հայ գիւղեր, որ վերջին զուլումի տարիներում բոլորովին դատարկւեցին:

- Կայ Բօտի անունով մի գիւղ: 15 տարի առաջ այնտեղ հայեր էին բնակւում, նրանց թիւը կլիներ 20-25 տուն, նրանք բոլորը գաղթեցին, ոչ մի տուն չմնաց գիւղում. այժմ նրանց տներն ու հողերը քրդեր են տիրապետում: Մի գիւղ էլ կայ Բալըղ-ղեօլի մօտ, անունը Սարի-բէկ: Մի քանի տարի առաջ այդտեղի հայերն էլ գաղթեցին գնացին, և նրանց տեղը քրդեր բնակւեցին...»:[3]

Մեկ այլ՝ Միրզաջան գյուղի համար Ա-ԴՈ-ն նշում էր, որ այն նախկինում եղել էր զուտ հայաբնակ գյուղ, իսկ արդեն 1909 թ. այնտեղ ապրում էին 7 տուն հայեր, 30 տուն քրդեր ու եզդիներ: Ընդորում, հայերից 4 տուն և քրդերից 6 տուն մարաբաներ էին, ինչը հավասարազոր էր ստրուկի կարգավիճակին:[4]

Արճեշ կամ պատմական Քաջբերունիք գավառի հայաբնակ Ականց քաղաքում 1909 թ. հաշվվում էր 1000 տուն իրենց բնակիչներով, որոնցից 250 տունը հայեր էին, մնացածը՝ թուրքեր և քրդեր: Առևտուրն ու արհեստները գտնվում էին գլխավորապես հայերի ձեռ-

[1] Նույն տեղում, էջ 621:
[2] Նույն տեղում:
[3] Ա-ԴՈ-ն առավել հայտնի է իր՝ «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» աշխատությամբ (Երևան, 1912, 407 էջ):

[1] «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թիվ 2, էջ 356:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, 1913, թիվ 4-5, էջ 793:
[4] Նույն տեղում, 1913, թիվ 6, էջ 1040:

քում: Գործում էին արական (տղայոց) և իգական (օրիորդաց) դպրոցներ և մեկ գրադարան-ընթերցարան: Ա-ԴՈ-յի կողմից բերվում են Արճեշի հայաբնակ գյուղերում 1896 թ. կոտորածից հետո հայ բնակչության ժողովրդագրության վերաբերյալ վիճակագրական տվյալներ:[1] Ականցի բնակիչները փաստում էին, որ թուրքական քաղաքականությունը 1908 թ. հեղաշրջումից հետո ոչնչով չէր փոխվել: Այսպես, բնակության համար Ականց տեղափոխված Գանձակ գյուղի բնակիչ, նախկին մեծահարուստ Առաքել աղան Ա-ԴՈ-յին պատմում է, որ 1896 թ. կոտորածի ժամանակ իր ունեցվածքը (ոսկեդրամներ, ոսկուց և արծաթից պատրաստված զարդեր) ժամանակավորապես պահ էր տվել իրենց տան բարեկամ համարվող քուրդ Ալիբեկին, իսկ ինքն ընտանիքի մյուս անդամների հետ ապաստանել էր Կովկասում: Առաքելն երկու ամիս առաջ էր վերադարձել հայրենիք և պարզել էր, որ Ալիբեկն ոչ միայն այդ հարստությունն էր յուրացրել, այլև՝ իր հողերը. «Ինչ Սահմանադրութիւն, ինչ արդարութիւն. ո՞վ մեզի հող կը վերադարձնի, ո՞ր պաշտօնեան քրդից հողը կը խլի, նորից հային կը տայ»,- արդարացիորեն բողոքում և դժգոհում էր Առաքելը:[2]

Հոդվածաշարում փաստերն ընդհանրացնելով՝ Ա-ԴՈ-ն գալիս էր այն եզրակացության, որ իրավիճակը նմանատիպ էր ոչ միայն իր ուսումնասիրած հայաբնակ 3 նահանգում, այլև՝ ողջ Արևմտյան Հայաստանում: Ա-ԴՈ-յի հետ համակարծիք էր նաև «Նոր հոսանք»-ի խմբագրակազմը: Դա են հավաստում ամսագրում 1913-1915 թթ. «Հայոց հարց» և «Տաճկահայ կյանք» բաժիններում զետեղված գրեթե բոլոր նյութերը: Դրանց շարքում հիշատակենք «Պատրիարքի հուշագիրը» վերլուծականը»: Այդ հոդվածում նշվում էր, որ Սահմանադրության հռչակումից հետո, «մանաւանդ վերջին երկու տարին», Կ.Պոլսի հայոց Պատրիարքարանի կողմից Բ.Դռանն ուղարկած բողոքագիր-դիմումներն անսովոր չափերի էին հասել: Հայերը մատնանշում էին Թուրքիայում իրենց հանդեպ իրագործված ապօրինությունները, բերում էին հարստահարությունների, հալածանքի, բռնագրավման, բռնի իսլամացման և առևանգությունների նորանոր փաստեր, բայց թուրքական կառավարությունը մնում էր անտարբեր այդ դիմումների նկատմամբ՝ շարունակելով իր քաղաքականությունը, այն է՝ «անտանելի դարձնել հայոց կացութիւնը և ստիպել նրանց գաղթելու»:[3] «Նոր հոսանք»-ը տպագրել է մեծ վեզիր Մահմուդ

[1] Նույն տեղում, 1914, թիվ 1, էջ 80-81:
[2] Նույն տեղում, էջ 82:
[3] Նույն տեղում, 1913, թիվ 2, էջ 465:

Շևքեթ փաշային Կ.Պոլսի հայ համայնքի Խառը ժողովի կողմից ուղարկված հուշագիրը: Այնտեղ մատնանշվում էին «գնալով աւելի արագ ընթացք ստացած» հակահայ անօրինությունների բազմաթիվ վկայություններ, որոնց ենթարկվել էր արևմտահայությունը 1908-1913 թթ. ընթացքում:[1] Հուշագրում այն մտահոգությունն էր հայտնվում, որ մահմեդական բնակչության շրջանում այն կարծիքն էր ձևավորվել, թե օսմանյան մասնատվող պետությունն եվրոպական միջամտություններից և ոտնձգություններից հնարավոր էր պահպանել մեկ ճանապարհով՝ հայ տարրը ոչնչացնելով. «Ատանայի, Վանի, Տիգրանակերտի և Բիթլիսի նահանգներում երևացին անհանգիստ անող նշաններ, որ նախորդում են մի կոտորածի, մի աղետի, որ իր սարսափներով կարող է մոռացնել տալ անցեալի ամենից ահաւոր ողբերգութիւնները»:[2]

«Հայոց հարց» բաժնում մշտապես անդրադառնում էին արևմտահայերին մտահոգող քաղաքական խնդիրներին և մասնավորապես՝ Հայկական հարցին: «Նոր հոսանք»-ը գտնում էր, որ 2 կարևոր հարցեր էին զբաղեցնում հայերին և օտարներին. հայերի թվաքանակը Թուրքիայում և նրանց մտավոր ներուժը: Հայերն ու նրանց կողմնակիցներն աշխատում էին ցույց տալ, որ «հայութիւնը մի թւական պատկառելի մեծութիւն է Հայաստանում, ունի ինքնուրոյն կուլտուրական կեանքով ապրելու մեծ տենչանք և ընդունակութիւն»,[3] հետևաբար նրա կացությունն անհրաժեշտ էր բարելավել՝ առանց «Հայաստանի բարենորոգութեանց խնդիրը կապելու համայն Թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան հետ»:[4] Թուրքիան և Հայկական հարցի հակառակորդները, ընդհակառակը, ջանում էին համոզել շահագրգիռ կողմերին, որ խնդրո առարկա նահանգներում հայերն աննշան թվաքանակ ունեին, և այդ պատճառով ավելորդ էր միայն հայաբնակ նահանգների բարենորոգության հարցը բարձրացնել: Նրանք պնդում էին, որ հարկավոր էր «բարենորոգել ամբողջ Թիւրքիան, դրա հետ կը բարւոքւի և հայոց դրութիւնը»:[5]

«Նոր հոսանք»-ն իր վերլուծությունները կատարելիս մշտապես հավատարիմ էր մնում նախնական տեսակետին՝ գրելով. «Մենք չենք անգիտանում, անշուշտ, միջազգային քաղաքական հանգամանքների նշանակութիւնը հայոց հարցի այս կամ այն լուծ-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 466:
[3] Նույն տեղում,1913, թիվ 3, էջ 621:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

ման համար»:[1] Միևնույն ժամանակ ամսագրի խմբագրակազմը համոզված էր, որ «մեծ պետութիւններից եւրաքանչիւրն աշխատում է հաստատ մնալ իր գրաված դիրքի վրայ և մեծագոյն չափով օգտուել ստեղծուած խառն դրութիւնից»:[2] «Նոր հոսանք»-ը նաև չէր հավատում, որ ընդհանուր բարեփոխումներն, եթե անգամ դրանք անցկացվեին, լինելու էին հօգուտ հայերի: Այս տեսանկյունից բնորոշ է Ռուբենի՝ «Տաճկական ռեֆորմները» վերնագրով հոդվածաշարը:[3] Ռուբենն այն տեսակետն էր զարգացնում, որ Թուրքիան բարեփոխումներ անցկացնելու խոստումներ էր տվել ամեն անգամ, երբ «վտանգ էր սպառնացել Տաճկաստանի գոյութեանը, երբ «հիւանդ մարդու» վրայ անդամահատութիւն կատարելու հարց է բարձրացել եւրոպական մեծ պետութիւնների մէջ»:[4] Թուրքիայի պատմությանը բնորոշ էր այն, որ ցանկացած ռեֆորմի հաջորդում էր կոտորածը:[5] Նույնն եղավ նաև հայկական բարենորոգումների խնդրում, միայն թե «Նոր հոսանք»-ն անկարող էր պատկերացնել, որ այս անգամ արևմտահայերի ջարդերը վերածվելու էին ցեղասպանության, որին հաջորդելու էին հայրենազրկումն ու հայրենիքի կորուստը:

Հայաստանի գրադարաններում պահպանվել են «Նոր հոսանք»-ի ոչ բոլոր համարները (թվերը), մասնավորապես՝ ամսագրի 1915 թ. հավաքածուներից չնչին մասն է պահպանվել: Մեզանում դեռևս գրեթե չկան ամսագրի գործունեությանն ու խաղացած դերին նվիրված գիտական ուսումնասիրություններ, հոդվածներ: Այս օբյեկտիվ պատճառներով նույնիսկ այսօր դժվար է հասկանալ, թե ինչպիսի՞ն էին «Նոր հոսանք»-ի մոտեցումները թեկուզ հրատարակության վերջին շրջանում հայ ժողովրդի ճակատագրի և Հայկական հարցի զարգացումների հետ կապված, թեև ամսագրի խմբագրակազմի անդամների հետագա տարիների անհատական կամ կուսակցական տեսակետներով կարելի է ընդհանուր դատողություններ անել: Կարելի է նաև ենթադրել, որ ինչպես արևմտահայ ու արևելահայ շատ պարբերականների, այնպես էլ «Նոր հոսանք»-ի հրատարակությունը դադարել է Մեծ եղեռնի և դրան հաջորդած պատմաքաղաքական հանգամանքների պատճառով: Մեր ձեռքի տակ եղած «Նոր հոսանք»-ի հավաքածուները, սակայն, թույլ են տալիս պնդել,

[1] Նույն տեղում, էջ 624:
[2] Նույն տեղում, 1913, թիվ 3, էջ 658:
[3] Նույն տեղում,1914, թիվ 1, էջ 149-157,1914, թիվ 2, էջ 312-317,1914, թիվ 4, էջ 656-662, 1914, թիվ 6, էջ 1007-1013:
[4] Նույն տեղում, 1914, թիվ 1, էջ 149:
[5] Նույն տեղում, 1914, թիվ 2, էջ 316:

որ ամսագիրը 1913-1915 թթ. պահպանել ու զարգացրել է հայ մամուլի ավանդույթները: «Նոր հոսանք»-ը թեև եղել է գրական, գիտական, հասարակական-քաղաքական ուղղվածություն ունեցող ամսագիր, բայց այս պարբերականի գրեթե բոլոր հետաքրքրություններն ու վերլուծություններն ածանցվել են հիմնական մեկնակետից՝ Հայկական հարցից և դրանից ծյուղավորված կամ սկզբնավորված տարաբնույթ խնդիրներից:

«Նոր հոսանք»-ն անդրադարձել է արևելահայ ու արևմտահայ իրականությունների մեջ եղած և այն օրերի համար սոցիալ-տնտեսական էական հիմնահարցերին: Սոցիալ-տնտեսական վերլուծությունների հիմքում ընկած էր խմբագրության դեմոկրատական կողմնորոշումը, նաև՝ այն, որ ցանկացած հարց ամսագիրը քննարկում էր՝ ելնելով հայ ժողովրդի սոցիալական դրությունից և տնտեսական վիճակից: Օրինակ՝ նավթարդյունաբերող բանվորներին կամ գյուղացիությանը մտահոգող խնդիրներն ամսագրում վերհանվում էին՝ տեղայնացվելով և ազգային միջավայրն ու մտածողությունը հաշվի առնելով: Շարքի պատասխանատուն Դ. Անանունն էր: Նրա հոդվածներն աչքի էին ընկնում նյութի բազմակողմանի վերլուծությամբ և թեմային՝ հեղինակի քաջատեղյակությամբ: Դ. Անանունը մշտապես օգտվում էր սոցիոլոգիական և վիճակագրական հարցումների տվյալներից: Նա հոդվածները կառուցում էր համեմատական վերլուծության մեթոդի սկզբունքներով: Նրա կարծիքով՝ հայ հասարակական մտքի կամ ազգային կուսակցությունների ներկայացուցիչները բավարար չափով ծանոթ չէին ժողովրդի սոցիալական կարիքներին և լուծման կարոտ հիմնահարցերին: Քանի որ «հայ բանւորութեան մի խոշորագոյն հատւածը զբաղւած է նաւթարդիւնաբերութեան մէջ, իսկ հայ բանւորը ժողովրդական առաջաւոր տարրն է», ուստի անհրաժեշտ էր տեղյակ լինել հայ բանվորի խնդիրների մասին:[1] Ծանոթանալով բանվորների նկարագրին՝ կարելի էր ճանաչել նաև հայ գյուղացիությանը, որովհետև «մեր բանւորութիւնը գերազանցապէս գիւղացիական ծագում ունի»:[2] Ընդ որում, ինչպես պարզվում էր հեղինակի ներկայացրած վիճակագրական աղյուսակից, հայն Անդրկովկասի բոլոր անկյուններից (հիմնականում՝ Գանձակի նահանգից), անգամ Պարսկաստանից և Թուրքիայից, աշխատանք էր փնտրում նավթարդյունաբերության մեջ, ավելի կոնկրետ՝ Բաքու քաղաքում: «Աւելի շատ բանւորութիւն ելնում էր այն գաւառներից, որտեղ հայ տարրն աննպաստ հողային պայմանների մէջ էր

[1] Նույն տեղում, 1913, թիվ 4-5, էջ 842:
[2] Նույն տեղում:

գտնւում»,- գրում էր Դ. Անանունը «Նավթարդյունաբերական հայ բանվորի նկարագրի մասին» վերլուծական հոդվածում:[1]

Ռուսաստանի վարած հողային քաղաքականությունը «Նոր հոսանք»-ում արժանացել է սուր և օբյեկտիվ քննադատության: Օրինակ՝ «Կովկասը իբրև գաղթավայր» հոդվածում Դ. Անանունը նշում էր, որ Ռուսաստանի 3-րդ Դումայի բոլոր նստաշրջաններում բուռն քննարկումների և վիճաբանությունների առարկա էր դարձել հողային կամ «գաղութային» քաղաքականությունը: Մասնավորապես Դումայում Անդրկովկասը ներկայացնող պատգամավորները փորձել էին «հաստատել այն իրողութիւնը, որ մեր երկրի գիւղացիութիւնը հողի խիստ կարիք է զգում, և եղած ազատ հողերը պիտի տրւին տեղական բնակչութեանը: Նրանք շեշտել են այն հանգամանքը, որ գաղութային քաղաքականութիւնը իր ներկայ կերպարանքով հրահրում է ազգային թշնամութիւն»:[2] Բերելով կոնկրետ օրինակներ և խոսուն փաստեր ու դրանց հիման վրա ամփոփելով իր վերլուծությունը՝ Դ. Անանունը դեմ էր արտահայտվում առկա պետական քաղաքականությանը. «Մեր վերաբերմունքը ժխտական է դէպի այդ քաղաքականութիւնը: Ժխտական է այն պատճառով, որ Կովկասի արդիւնաբերութիւնը չի կարողանում իր մէջ ամփոփել մեր երկրի աւելցուկ ձեռքերը, ուստի և հողը դառնում է կարևորագոյն պահանջ, այն ինչ սակաւահողութիւնն ու հողազրկութիւնը տեղացիներին նետում է օտար հորիզոններ: Գաղութային ներկայ քաղաքականութիւնը չի բղխում առողջ պետականութիւնից»:[3] Հանձինս Դ. Անանունի՝ «Նոր հոսանք»-ի խմբագրությունն արմատական փոփոխություն էր պահանջում այդ հարցի լուծման համար: Ամսագիրն հանդես էր գալիս կոնկրետ առաջարկներով. «Պետական հողերը օրէնքով պիտի ճանաչւեն գիւղացիների ազատ սեփականութիւն, և դրա դիմաց նրանք ոչինչ չպիտի վճարեն գանձարանին: Հողակարգաւորման մէջ անմիջական մասնակցութիւն պիտի ունենան նաև գիւղացիները: Համայնքին է վերապահւում տնօրինելու իր ներքին հողակարգաւորումը»:[4] Այս և այլ առաջարկները ներկայացված են Դ. Անանունի՝ «Կովկասի գյուղացիության վերաբերյալ նոր օրինագիծը» հոդվածում:[5] Այդտեղ պարզորոշ արտահայտված է նաև «Նոր հոսանք»-ի մոտեցումը: Ամսագիրը հանցավոր էր համարում այն, որ

[1] Նույն տեղում, էջ 849:
[2] Նույն տեղում, 1914, թիվ 1, էջ 107:
[3] Նույն տեղում, էջ 114:
[4] Նույն տեղում, 1913, թիվ 7- 8, էջ 1307:
[5] Նույն տեղում, էջ 1297-1308:

հայ դեմոկրատական միտքը խուսափում էր քննադատել Ռուսաստանի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը և չէր փորձում միջամտել այդ ոլորտի խնդիրների լուծմանը. «Հայ քաղաքական դեմոկրատական միտքը թերացաւ իր կոչման մէջ»:[1] «Նոր հոսանք»-ն առաջարկում էր գործել և չնահանջել հայ գյուղացիության շահերի պաշտպանության գործում:

«Նոր հոսանք» ամսագիրը կրթադաստիարակչական հիմնահարցերը դիտարկում էր որպես հայապահպանության հզոր լծակներ: Մասնավորապես արևմտահայ դպրոցներում տիրող իրավիճակին և մտահոգող խնդիրներին ընթերցող հասարակայնությանը տեղեկացնելու նպատակով «Տաճկահայ կյանք» բաժնում «Նոր հոսանք»-ը պարբերաբար ներկայացնում էր այդ դպրոցները բնութագրող վիճակագրական տվյալներ: Համաձայն «Նոր հոսանք»-ի տրամադրած տվյալների, ասենք, Արաբկիրի 14 գյուղերից յուրաքանչյուրում կար մեկական վարժարան: Աշակերտների նվազագույն թիվը 20 էր, առավելագույնը՝ 100: Յուրաքանչյուր վարժարանում դասավանդում էր մեկ ուսուցիչ, բացի Անջրդի գյուղի վարժարանից, որն ուներ 3 ուսուցիչ: Անջրդին տվյալ գավառի դարձյալ միակ գյուղն էր, որտեղ գործում էր օրիորդաց վարժարան: Անջրդիի վարժարանների վիճակն, ի տարբերություն մյուս 13 գյուղերի վարժարանների, բավարար էր: Վերջինների անմխիթար վիճակը պայմանավորված էր այն հանգամանքով, որ դրանք մատակարարվում էին առավելապես պատահական եկամուտների վրա հիմնված «ամենանիհար պիւտժետներով: Շէնքերը անյարմար և հակառողջապահիկ, ուսուցման մեթոդը գրեթէ նախնական և հակամանկավարժական, ուսուցիչները կրթութեան և դաստիարակութեան հասկացողութեան տեսակէտով ոչ պատրաստուածներ.- ահա ամփոփ պատկերը մեր գիւղական վարժարաններուն, և ափսո՛ս, գրեթէ մեր բոլոր կրթական յարկերուն»,- այսպես է իր վերլուծությունն ավարտում ամսագիրը:[2]

«Հայ կյանք» բաժնի հրապարակումների միջոցով «Նոր հոսանք»-ն անդրադառնում էր հիմնականում դպրոցաշինության խնդիրներին՝ զուգահեռներ անցկացնելով Ռուսաստանի դպրոցների զարգացման ծրագրերի միջև: Ամսագրի այս միտումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ «Նոր հոսանք»-ի խմբագրության կարծիքով՝ «հայ դպրոցը իր ճակատագրով, լավ և վատ կողմերով մեծապէս կապւած է Ռուս դպրոցի հետ, ուստի մենք դիմում ենք ռուս ժողովրդական դպրոցի անցեալ և ներկայ վիճակի վերլուծութեա-

[1] Նույն տեղում, էջ 1297:
[2] Նույն տեղում, 1913, թիվ 9-10, էջ 1533:

նը»:[1] Իսկ ռուս ժողովրդական դպրոցի սկզբնավորումը «Նոր հոսանք» ամսագիրը կապում էր 1864 թ. Ռուսաստանում նահանգային և գավառական զեմստվոների հիմնման փաստի հետ. «1864 թի զեմստուոյական կանոնադրութիւնը ինքնավարութիւնների զբաղմունքների և պարտականութիւնների մէջ ընդգծում է ժողովրդական կրթութեան հարցը: Զեմստուոյական օրէնսդրութեամբ ինքնավար մարմինները կանչւում են հոգ տանել ժողովրդական կրթութեան մասին: Մասնաւորապէս ֆինանսական մասը յանձնարարւում է զեմստուոներին»:[2] «Նոր հո-սանք»-ը, սակայն, հաշվի առնելով ազգային դպրոցի առանձնահատկությունները և այն օրերի վարչական բաժանման գործող համակարգը, գտնում էր, որ եթե զեմստվոները Ռուսաստանում նպաստել են ժողովրդական դպրոցի զարգացմանը, ապա հայ ժողովրդի համար այդ կարգի ուսուցումը վնասակար էր լինելու: Ազգային-մշակութային միություններ կազմելու դեպքում անգամ, երբ Կովկասի «ներկայ վարչական բաժանումներին կը փոխարինէ երկրի աշխարհագրական բաժանումը...զեմստուոների ցանկալիութիւնը կը մնայ նորից վիճելի խնդիր»:[3] Ամփոփելով իր վերլուծության արդյունքները՝ «Նոր հոսանք»-ը գրում էր, որ զեմստվոները օգտակար չէին լինելու մեր եկեղեցական-ծխական կամ այլ խոսքով ասած՝ ազգային դպրոցների առաջընթացին: Ընդհակառակը, դրանք մի կողմից՝ կազմալուծելու էին հայկական դպրոցները, մյուս կողմից՝ ծանրաբեռնելու էին ժողովըրդական տուրքերը: «Զեմստուոներն այդ տեսակէտից օգտակար կարող են լինել այն ցեղերի համար, որոնք դեռ չունեն ազգային դպրոցներ և ընդհանրապէս ցեղային կուլտուրան նրանց համար մահու ու կենաց խնդիր չէ»:[4] Ազգային դպրոցը «Նոր հոսանք»-ը համարում էր հայ ժողովրդի ինքնության պահպանման և հայկական մշակույթի «հիմունքների հիմունքը»,[5] որի «զարգացումից ու բարգաւաճումից էր կախւած ցեղի ապագան»:[6] Ամսագիրն առաջարկում էր կյանքի կոչել դպրոցական ֆոնդի գաղափարը, որի մտահղացումը կապվում էր Գևորգ 5-րդ կաթողիկոսի անվան հետ: «Դպրոցական ֆոնդի յաջողութեան կէսը, եթէ ոչ աւելին, պիտի վերագրել նրա ուսուցչութեանը. այնպէս որ, երբ

[1] Նույն տեղում, էջ 1369 (Արտաշես Վանցյան, «Ժողովրդական կրթությունը Ռուսաստանում», էջ 1368-1399):
[2] Նույն տեղում, 1914, թիվ 7- 8, էջ 1202 (Արտաշես Վանցյան, «Ժողովրդական կրթությունը Ռուսաստանում. 2», էջ 1201-1211):
[3] Նույն տեղում, 1913, թիվ 2, էջ 443:
[4] Նույն տեղում, էջ 444:
[5] Նույն տեղում, 1913, թիվ 1, էջ 194:
[6] Նույն տեղում:

խօսում ենք դպրոցների ապահովութեան մասին և շեշտում Դպրոցական ֆոնդի մեծ անհրաժեշտութիւնը, դրա հետ միասին անկարող ենք մոռացութեան տալ նաև նրա ուսուցչութեան տնտեսական վիճակը, անկարող ենք չզբաղւել Ուսուցչական ֆոնդի խնդրով»,- գրում էր հոդվածագիր Արտաշես Ղազարյանը:[1] Եթե դպրոցական ֆոնդի նպատակն էր՝ «մայրենի կրթութիւնը դարձնել ձրի և պարտադիր»[2], ապա ուսուցչական ֆոնդը պիտի նպաստեր ուսուցիչների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: Ընդ որում, գործառույթների մեջ պիտի մտներ ուսուցիչներին ծերության և հաշմանդամության կենսաթոշակ տրամադրելը: Ուսուցչական ֆոնդին կարող էին անդամագրվել թե՛ եկեղեցական-ծխական, թե՛ թեմական դպրոցներում պաշտոնավարող ուսուցիչներն՝ առանց սեռի խտրության:[3] Ի դեպ, «Նոր հոսանք»-ի այս տեսակետներն ու առաջարկները միանշանակ չեն ընդունվել: Այդ առիթով ամսագիրը նույնիսկ բանավիճել է «Յորիզոն» և «Կովկասի լրաբեր» պարբերականների հետ:[4] Ամեն դեպքում, «Նոր հոսանք»-ը հայ մշակույթի և հատկապես դպրոցների առաջընթացի գործում անվերապահորեն անհրաժեշտություն էր համարում դպրոցական ֆոնդը:[5]

Ամսագրի ուշադրությունից չէին վրիպում գիտական կյանքի նորությունները, իսկ փիլիսոփայական և հասարակագիտական ուսմունքներն ու նորագույն մոտեցումները «Նոր հոսանք»-ին հետաքրքրում էին այնքանով, որքանով դրանք կծառայեին հայության ինքնագիտակցության բարձրացմանը և աշխարհընկալման զարգացմանը: «Կյանք և փիլիսոփայություն» բաժնի պատասխանատուն Երվանդ Ֆրանկյանն էր: Առավել ուշագրավ են նրա՝ «Վերջին փիլիսոփայական ուղղությունը. պրագմատիզմ»,[6] «Յունական փիլիսոփայություն»,[7] «Քննադատական փիլիսոփայություն»[8] վերլուծական հոդվածաշարերը: Հետաքրքիր են նաև

[1] Նույն տեղում, էջ 197:
[2] Նույն տեղում, 1913, թիվ 2,էջ 446:
[3] Նույն տեղում, 1913, թիվ 3, էջ 631:
[4] Նույն տեղում, էջ 631-657(Արտաշես Ղազարյան, ««Կովկասի լրաբերի» դեմոկրատները և դպրոցական ֆոնդը»): Տե՛ս նաև 1913, թիվ 2, էջ 442-448 (Արտաշես Ղազարյան, «Դարձյալ դպրոցական ֆոնդի շուրջ»):
[5] Նույն տեղում, 1913, թիվ 1, էջ 197:
[6] Նույն տեղում, էջ 159-161:
[7] Նույն տեղում, 1913, թիվ 2, էջ 373-387, 1913, թիվ 3, էջ 580-595, 1913, թիվ 4-5, էջ 813-841:
[8] Նույն տեղում, 1913, թիվ 7-8, էջ 1254-1269, 1914, թիվ 2, էջ 237-250, 1914, թիվ 4, էջ 582-594:

Ռ. Գաբրիելյանի՝ «Մարդու ծագման հարցի զարգացումը» հոդվածաշարը,[1] Վ. Խորենիի՝ «Ի. Ֆիխտեի սոցիալ-փիլիսոփայությունը» հոդվածաշարը[2] և այլն:

Հայ գաղթօջախների, հատկապես ռուսահայ, պարսկահայ, վրացահայ համայնքների խնդիրների վերաբերյալ գրված հոդվածներն ու վերլուծականներն ամսագրում հետապնդում էին հայապահպանության և գաղթական դարձած հայերին հայրենիք վերադարձնելու նպատակներ: Իսկ տարածաշրջանի ու եվրոպական զարգացած երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքին նվիրված տեսությունների միջոցով «Նոր հոսանք»-ը փորձում էր դարասկզբի աշխարհաքաղաքական բարդ և վտանգավոր հանգամանքներում հայտնված հայ ժողովրդին (հանձինս իր ընթերցողների) հուշել կամ առաջարկել ծառացած խնդիրների լուծման այնպիսի տարբերակներ, որոնք կհամապատասխանեին դարաշրջանի ոգուն և տարածաշրջանում առկա դիվանագիտական նկրտումներին:

МАРИАМ ОВСЕПЯН
ИИ НАН РА

ТИФЛИССКИЙ ЖУРНАЛ "НОР ОСАНК" ("НОВОЕ ТЕЧЕНИЕ") (1913-1915 ГГ.)

РЕЗЮМЕ

Являясь литературным, общественным и политическим журналом, тифлисский "Нор осанк" за все время своего существования выявлял и обсуждал вопросы всеармянского значения. Журнал создал все условия для свободного волеизъявления на своих страницах армянской демократической мысли. "Нор осанк" старался восполнить тот пробел в восточноармянской прессе, который возник после прекращения выхода в свет журнала "Мурч" ("Молот").

Журнал "Нор осанк" сгруппировал вокруг себя лучшие силы восточной и западноармянской интеллигенции, в частности, таких знаменитых писателей и общественно-политических деятелей, как О. Туманян, А. Исаакян, Н. Агбалян, А. Тертерян, О. Сурхатян, А. Джамалян и другие.

[1] Նույն տեղում, 1913, թիվ 4-5, էջ 799-813, 1913, թիվ 6, էջ 1047-1062, 1913, թիվ 7-8, էջ 1269-1297:
[2] Նույն տեղում, 1914, թիվ 5, էջ 773-780, 1914, թիվ 6, էջ 971-997:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԸ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Իր գոյության ամբողջ ընթացքում (1840-1924 թթ.) Ալեքսանդրապոլի գավառի սահմանները պարբերաբար ենթարկվել են փոփոխությունների: Դեռևս XIX դարասկզբին գավառի տարածքը Փամբակ-Շորագյալի ուղեմաս անվամբ մտնում էր Վրացական նահանգի կազմի մեջ:

1840 թ. ապրիլի 10-ին Անդրկովկասը բաժանվեց երկու խոշոր հատվածների՝ Վրացաիմերեթական նահանգի և Կասպիական մարզի: Վերոհիշյալ կառուցվածքային վերափոխման շնորհիվ Անդրկովկասում ի հայտ եկավ Ալեքսանդրապոլի գավառը, որն ի թիվս տասն այլ գավառների, մտավ Վրացաիմերեթական նահանգի կազմի մեջ: Տարածքային տեսակետից նորաստեղծ գավառը գրեթե ամբողջովին պարփակվում էր նախկին Փամբակ-Շորագյալի ուղեմասի սահմանների մեջ: Այն արևմուտքում սահմանակից էր Կարսի փաշայությանը, հյուսիսում և արևելքում՝ Բորչալուի գավառին, իսկ հարավում՝ Երևանի գավառին:

1844 թ. ստեղծվեց Կովկասի փոխարքայությունը, իսկ 1846 թ. իրագործվեց երկրամասի վարչատարածքային հաջորդ ձևափոխությունը՝ Անդրկովկասը տրոհվեց չորս նահանգների: Ալեքսանդրապոլի գավառն իր Լոռու, Փամբակի և Շորագյալի տեղամասերին ի հավելում ստանալով գերազանցապես հայ տարրով բնակեցված Ախալքալաքի տեղամասը՝ մտավ Թիֆլիսի նահանգի մեջ:[1]

Երեք տարի անց Անդրկովկասը նորից հայտնվեց վարչատարածքային բաժանման փաստի առջև: 1849 թ. հունիսի 9-ին փոխարքայի հրամանով Թիֆլիսի ու Շամախու նահանգների որոշ տա-

[1] Մանրամասն տե՛ս Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին, Գյումրի, 2005, էջ 130-143: Օհանյան Ա., Վարչա-տերիտորյալ բաժանումները նախասովետական Հայաստանում, Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. 5.51, Ե., 1955, էջ 85-89:

րածքների միավորմամբ ստեղծվեց երկար սպասված Երևանի նահանգը:

Նորաստեղծ նահանգի կազմի մեջ մտան Երևանի, Նախիջևանի, Օրդուբադի, Նոր Բայազետի գավառները և Ալեքսանդրապոլինի առանց Ախալքալաքի տեղամասի:[1]

Ի դեպ, այդքանով գավառի տարածքային ձևափոխությունները չվերջացան. Ախալքալաքի տեղամասի կորստից ընդամենը 13 տարի անց Ալեքսանդրապոլի գավառից անջատվեց և Թիֆլիսի նահանգին միացվեց նաև Լոռին, որը կազմում էր Ալեքսանդրապոլի գավառի Փամբակ ոստիկանական տեղամասի մեծագույն մասը[2]:

Սրանք էին Անդրկովկասյան երկրամասում անցկացված այն վարչատարածքային բարեփոխումները, որ XIX դարի 40-ական թվականների սկզբներին հանգեցրեցին նախ՝ Ալեքսանդրապոլի գավառի ստեղծմանը, ապա՝ նաև 1849 թ. նրա՝ նորակազմ Երևանի նահանգի մեջ մտնելուն:

Դարասկզբին մարդաթափ ու կիսավեր Փամբակի և Շորագյալի սուլթանությունների հիմքի վրա ստեղծված Ալեքսանդրապոլի գավառն արդեն XIX դարի վերջերին բաժանվում էր ոստիկանական չորս տեղամասերի և գյուղական 27 հասարակությունների՝ 160 գյուղով. 1. Աղբաբայի ոստիկանական տեղամաս՝ կազմված գյուղական 6 հասարակությունից (պրիստավը նստում էր Ալեքսանդրապոլից 22 վերստ[3] հեռու գտնվող Աղբաբա գյուղում), 2. Ճըզխլարի (Ցողամարգ) ոստիկանական տեղամաս՝ կազմված գյուղական 5 հասարակությունից (պրիստավը նստում էր Ալեքսանդրապոլում), 3. Հոռոմի ոստիկանական տեղամաս՝ կազմված գյուղական 5 հասարակությունից (պրիստավը նստում էր Ալեքսանդրապոլից 14 վերստ հեռու՝ Հոռոմ գյուղում), 4. Մեծ Ղարաքիլիսայի (Վանաձոր) ոստիկանական տեղամաս՝ կազմված գյուղական 11 հասարակությունից (պրիստավը նստում էր Մեծ Ղարաքիլիսա գյուղում):[1]

Գավառը ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական մի շարք կարևոր հանգամանքների բերումով XIX դարի կեսերից վերածվեց նոր ձևավերված Երևանի նահանգի հայաշատ գավառներից մեկի, որը զբաղեցնում էր նահանգի տարածքի 13%-ը (3680 քառ. կմ)[2] հյուսիսից և հյուսիս-արևելքից սահմանակցելով Թիֆլիսի նահանգին ճը-զըխլարի և Մեծ Ղարաքիլիսայի տեղամասերով, հարավից՝ էջմիածնի գավառին Աղբուլաղի (Լուսաղբյուր) տեղամասով, արևելքից՝ Նոր Բայազետի գավառին Հոռոմի ու Մեծ Ղարաքիլիսայի տեղամասերով և արևմուտքից՝ Կարսի փաշայությանը (հետագայում՝ նաև մարզին) սահմանագիծ ջրբաժան ունենալով Ախուրյան գետը:[3]

XIX դարի վերջին քառորդին Անդրկովկասում վարչատարածքային բարեփոխումներ այլևս չեղան, և Ալեքսանդրապոլի գավառի սահմաններն անփոփոխ մնացին մինչև XX դարասկիզբ:

1905-1907 թթ. ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին առաջ քաշվեցին պետական իշխանության ապակենտրոնացման, տեղական ինքնակառավարման, ինչպես նաև ազգային-էթնիկ վարչատարածքային նոր բաժանման, ամբողջ կայսրությունում դաշնային կառուցվածք ստեղծելու ծրագրեր: Առաջին քննարկումները սկսվեցին միայն 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ Ռուսական կայսրությունը թևակոխեց զարգացման ժողովրդավարական փուլ:

Անդրկովկասյան երկրամասի վարչական վերաբաժանման և տեղական ինքնակառավարման խնդիրը քննարկելու համար՝ 1917 թ. գարնանը Պետրոգրադում ժամանակավոր կառավարության

---

[1] Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 332, ցուցակ 1, գործ 715, թթ. 1-2; Подъесаул Ив. Позаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. 1, вып.1, Тифлис, 1890, с. 14-15; К столетию присоединения Грузии к России. Утверждение русского владычества на Кавказе, т. 12, Тифлис, 1901, с. 378.

[2] Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 108-109.

[3] 1 վերստը հավասար է 1066 մ:

[1] Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г. Издан по распоряжению Главноначальствующего гражданской частью на Кавказе, Закавказским статистическим комитетом, Тифлис, 1893, с. IX-X.

[2] Սարգսյան Հ., Ալեքսանդրապոլի գավառի էթնոաշխարհագրական բնութագիրը XIX դարի վերջերին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 1, Գյումրի, 1998, էջ 132-133:

[3] Մոփչեան Ե., Ալեքսանդրապոլի գավառ, «Աղբյուր», N 7, 14-րդ տարի, Թիֆլիս, 1896, էջ 268-269: Հակոբյան Թ. Խ., Մելիքբախշյան Ս. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, Ե., 1986, էջ 74-ի քարտեզը:

որոշմամբ Ներքին գործերի նախարարությանը կից ստեղծվեց հատուկ հանձնաժողով Զուրաբ Ավալովի գլխավորությամբ:[1] Ելնելով Անդրկովկասն էթնիկ, տնտեսական ու աշխարհագրական տեսակետից միատեսակ վարչատարածքային միավորների բաժանելու սկզբունքներից՝ հանձնաժողովը մշակեց ու 1917 թ. ամռանը ՆԳ նախարարությանը ներկայացրեց երկրամասում վարչատարածքային բաժանում անցկացնելու մի նախագիծ. Երևանի, Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների վերադասավորմամբ Անդրկովկասում ստեղծվելու էին նոր նահանգներ (Թիֆլիսի և Քութայիսիի՝ բնակեցված գերազանցապես վրացիներով, Բաքվի ու Ելիզավետպոլի՝ բնակեցված գերազանցապես մահմեդականներով, և Գանձակի, Ալեքսանդրապոլի ու Երևանի՝ բնակեցված գերազանցապես հայերով):[2]

Փաստորեն, նախագծի համաձայն՝ հայկական նահանգների թիվն Անդրկովկասում նախկին մեկի փոխարեն հասնելու էր երեքի՝ 15 գավառներով:

Նախագծում լուրջ տեղ էր հատկացվում նաև Ալեքսանդրապոլի գավառին: Նախկին Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի հիմքի վրա ենթադրվում էր ստեղծել համանուն նահանգ՝ բնակեցված գերազանցապես հայերով (նահանգում հայերը կազմելու էին բնակչության 66%-ը): Ալեքսանդրապոլի նահանգն ունենալու էր հինգ գավառ, որոնցից

1. **Ալեքսանդրապոլի գավառը** կազմվելու էր նախկին Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառից՝ առանց I ոստիկանական տեղամասի և էջմիածնի գավառի IV ոստիկանական տեղամասից,

2. **Ախալքալաքի գավառը**՝ նախկին Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառից, Բորչալուի գավառի Թրիալեթի (Ծալկա) տեղամասի Աշկալայի, Նարդևանի ու Ավրավլիի գյուղական հասարակություններից, Գորիի գավառի Բակուրիանի տեղամասի Մոլիտ ու Ղզըլքիլիսա գյուղերից,

[1] Հանձնաժողովի կազմում վրացիներից ընդգրկված էին՝ Զ. Ավալովը, Գ. Լորդկիպանիձեն ու Ս. Ավալիանին, հայերից՝ Ալ. Խատիսյանը և Ա. Շահխաթունյանը, թաթարներից՝ Խան Խոյսկին և Ա. Շեյխուլիսլամովը, լեռնականներից՝ Վ. Ջաբաթիևը ու Ա. Նամիտովը (Մանրամասն տե՛ս Մելիքյան Վ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, 1917 թ. մարտ-հոկտեմբեր, Ե., 1997, էջ 119-120):

[2] Шахатунян А., նշվ. աշխ., էջ 128-134:

3. **Լոռու գավառը**՝ նախկին Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Լոռու տեղամասից և Ալեքսանդրապոլի գավառի I ոստիկանական տեղամասից (Փամբակ),

4. **Կարսի գավառը**՝ նախկին Կարսի օկրուգից,

5. **Կաղզվանի գավառը**՝ նախկին Կաղզվանի օկրուգից:

Էթնիկ տեսանկյունից ստեղծվելիք նահանգն ունենալու էր հետևյալ պատկերը.[1]

գավառի անվանումը	ընդամենը (հազար մարդ)	հայ (հազար մարդ)		մահմեդական (հազար մարդ)		այլք (հազար մարդ)	
Ալեքսանդրապոլի	204	170	3	22	1	12	
Ախալքալաքի	120	94	9	10		16	3
Լոռու	120	92	7	14	2	14	1
Կարսի	193	83	3	49	5	61	2
Կաղզվանի	82	35	3	26	2	21	3
ԸՆԴԱՄԵՆԸ	719	474	6	121	7	124	7

Անդրկովկասյան երկրամասում վարչատարածքային բաժանում անցկացնելու հատուկ հանձնաժողովի կազմած նախագիծը հավանություն գտավ ՆԳ նախարարության կողմից: Վերջինիս որոշմամբ ՕԶԱԿՈՄ-ին կից Ա. Չխենկելու նախագահությամբ ստեղծվեց 15 հոգուց (յուրաքանչյուր ազգից՝ 5 հոգի) բաղկացած հատուկ կոմիտե՝ տեղում նախագիծը վերջնական տեսքի բերելու համար: 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում կոմիտեն Թիֆլիսում կազմեց նոր նախագիծ, որն, ի դեպ, շատ քիչ էր տարբերվում նախարարության նախագծից:

Ալեքսանդրապոլի նահանգի կտրվածքով այդ փոփոխությունները հետևյալն էին: Օրինակ, եթե նախարարության նախագծով Փամբակը մտնում էր Լոռու գավառի մեջ, ապա ՕԶԱԿՈՄ-ի նախագծով այն մնում էր Ալեքսանդրապոլի գավառի մեջ, կամ եթե նախարարության նախագծով Երևանի նահանգն ուներ Սուրմալուի գա-

[1] Նույն տեղում, էջ 133-134:

վառ, ապա ՕՋԱԿՈՄ-ի նախագծով այն վերացվում էր և արդեն Ալեքսանդրապոլի նահանգում ստեղծվում էր Կողբի գավառ՝ կազմված էջմիածնի ու Սուրմալուի գավառներից և Կաղզվանի օկրուգի Նախիջևանի տեղամասից:[1]

Այսպիսով՝ նոր նախագծի համաձայն՝ ստեղծվելիք Ալեքսանդրապոլի նահանգը հինգի փոխարեն ունենալու էր վեց գավառ՝

1. **Ալեքսանդրապոլի գավառը** կազմվելու էր նախկին Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի II, III և IV ոստիկանական տեղամասերից ու I ոստիկանական տեղամասի Նալբանդի գյուղական հասարակությունից,
2. **Կողբի գավառը**՝ նախկին Սուրմալուի գավառի III ոստիկանական տեղամասից ու I ոստիկանական տեղամասի Ալիկոչաղի գյուղական հասարակությունից, էջմիածնի գավառի IV ոստիկանական տեղամասից՝ առանց Կոշի գյուղական հասարակության, III ոստիկանական տեղամասի Շահրիյարի գյուղական հասարակության Հաջի Բայրամ, Հեյրիբեկլու, Ասսար, Շահվարուտ, Խոջա Յարալու գյուղերից և նախկին Կաղզվանի օկրուգի Նախիջևանի ոստիկանական տեղամասից,
3. **Լոռու գավառը**՝ նախկին Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի I ոստիկանական տեղամասից՝ առանց Նալբանդի գյուղական հասարակության, նախկին Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Օպրետի, Ճոճկանի, Շինիխի և Շուլավերի գյուղական հասարակություններից, նույն գավառի Լոռու ոստիկանական տեղամասից և Ալավերդու ոստիկանական տեղամասից,
4. **Ախալքալաքի գավառը**՝ նախկին Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառից, Բորչալուի գավառի Թրիալեթի (Ծալկա) տեղամասի Աշկալայի, Նարդևանի ու Ավրավլիի գյուղական հասարակություններից և Գորիի գավառի Բակուրիանի տեղամասի Մոլիտ ու Ղզըլքիլիսա գյուղերից,
5. **Կարսի գավառը**՝ նախկին Կարսի օկրուգից,
6. **Կաղզվանի գավառը**՝ նախկին Կաղզվանի օկրուգից՝ առանց Նախիջևանի ոստիկանական տեղամասի:

Ըստ էթնիկ սկզբունքի՝ Անդրկովկասում վրացական, հայկական և թուրք-թաթարական վարչական խոշոր միավորներ ստեղծելու ՕՋԱԿՈՄ-ի նախագիծը հավանության արժանացավ Ա. Կերենսկու կառավարության կողմից, սակայն չիրագործվեց և չէր էլ կարող իրագործվել, որովհետև Պետրոգրադ հրավիրված թուրք-թաթարական պատվիրակությունը լիազորություններ չունենալու պատճառաբանությամբ հրաժարվեց ստորագրել փաստաթղթի տակ:[1] Հետևելով թուրք-թաթարական պատվիրակության օրինակին՝ 1917 թ. աշնանը տարածքային սահմանազատման սկզբունքների հարցում իրենց դիրքորոշումն արմատապես փոխեցին նաև վրացիները:[2]

Փաստորեն, Ալեքսանդրապոլի գավառի հիմքի վրա հանանուն նահանգ ստեղծելու և Հյուսիսային Հայաստանում հայկական հողերը վարչական մեկ միավորի՝ կազմում հավաքելու գաղափարը մնաց անկատար: Ավելին, հաջորդ երեք տարիների ընթացքում տարածաշրջանում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք ընդհանրապես կասկածի տակ դրեցին Ալեքսանդրապոլի գավառի հետագա գոյության հարցը:

1917 թ. նոյեմբերի 15-ին ՕՋԱԿՈՄ-ին փոխարինեց Անդրկովկասյան կոմիսարիատը Եվգենի Գեգեչկորու գլխավորությամբ: Հանդես գալով Անդրկովկասում ազգամիջյան հարաբերությունների մեղմացման և ազգային հարցի լուծման խոստումներով՝ կոմիսարիատը նոյեմբերի 27-ին հատուկ դեկրետով երկրամասում մտցրեց զեմստվային կառավարում: Այս համակարգը, սակայն, գործնական կիրառություն չգտավ, որովհետև հանգեցրեց Անդրկովկասի էթնիկ վերաբաժանման նույն բարդ խնդրին:[3]

1918 թ. փետրվարի 10-ին կոմիսարիատին փոխարինած Անդրկովկասյան սեյմը, Ա. Չխեիձեի նախագահությամբ, ընդհանուր անարխիայի ու թուրքական արշավանքի պայմաններում ընդհանրապես մոռացության տվեց ազգային ներքին սահմանազատումների խնդիրը, իսկ 1918 թ. մայիսի վերջերին Անդրկովկասը բաժանվեց երեք անկախ հանրապետությունների:

---

[1] Նույն տեղում, էջ 136-155:

[1] Մանրամասն տե՛ս Գևորգյան Ա., Տեղական ինքնակառավարման վերակազմակերպման խնդիրն Անդրկովկասում ժամանակավոր կառավարության օրոք (1917 թ. փետրվար-հոկտեմբեր), ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 9, Գյումրի, 2006, էջ 32-37:

[2] Մանրամասն տե՛ս Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 265-270:

[3] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, հ. 1, Ե., 1996, էջ 647-648:

Անկախությունը հայ ժողովրդին տրվեց չափազանց թանկ գնով: 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագրի համաձայն՝ նորանկախ Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում էր 12000 քառ. կմ: Նախկին Երևանի նահանգից Թուրքիային էին անցնում Սուրմալուի գավառն ամբողջությամբ, Էջմիածնի գավառի մեծ մասը, Երևանի և Շարուր-Դարալագյազի գավառների մի մասն ու Ալեքսանդրապոլի գավառը՝ բացառությամբ Մեծ Ղարաքիլիսայի ոստիկանական տեղամասի:[1] Հայ թուրքական նոր սահմանը «Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթգծից հասնում էր Աղբուլաղ գյուղից 5 կմ արևմուտք, այնուհետև՝ մինչև Խանվալի, որտեղից համարյա ուղիղ գծով հասնում էր Ալագյազ լեռան առավել բարձր գագաթը, որտեղից հասնում էր Էջմիածին-Սարդարապատ խճուղին, ապա շրջանցում էր Էջմիածինը 7 կմ տարածության վրա և շարունակում էր գնալ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղուն զուգահեռ ուղղությամբ, մնալով նրանից մոտ 6 կմ հեռավորության վրա»:[2]

Երկրի համար օրհասական այս պահին Երևանի Հայոց Ազգային խորհուրդն Արամ Մանուկյանի նախագահությամբ 1918 թ. հունիսի 22-ին լուծարեց Թուրքիային անցած հայկական տարածքների պետական հաստատությունները, իսկ հունիսի 29-ին Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության և Պետական գույքի վարչությանը տեղեկացրեց ՀՀ տարածքը վարչական փոփոխության ենթարկելու և այն Երևանի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Դարալագյազի ու Դիլիջանի գավառների բաժանելու մասին:[3]

Ինչ վերաբերում է գրավված շրջաններին, ապա թուրքերն այստեղ օսմանյան օրենքներ չմտցրեցին, այլ պահպանեցին տեղական՝ ցարական կառավարությունից մնացած օրենքներն ու վարչական կառույցները: Օրինակ՝ 1918 թ. մայիսի 16-ին՝ Ալեքսանդրապոլ

[1] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 23, թթ. 96-98:
[2] ՀԱԱ, ֆոնդ 222, ցուցակ 1, գործ 24, թ. 332: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.), Ե., 1972, էջ 533: Ավետիսյան Հ, Հայկական հարցը 1918 թ., Ե., 1997, էջ 249:
[3] Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Ե., 2005, էջ 211:

քաղաքը գրավելու հաջորդ օրը, թուրքական հրամանատարության կարգադրությամբ տեղի ունեցավ քաղաքացիների ընդհանուր ժողով, որտեղ ընտրվեց 29 հոգուց կազմված Քաղաքային խորհուրդ (16 հայ, 3 հույն, 3 մահմեդական, 3 ռուս, 2 վրացի և 2 հրեա): Վերջինս իր հերթին ընտրեց 15 հուգուց բաղկացած Քաղաքային վարչություն՝ կարգավորելու համար քաղաքի և ամբողջ գավառի վարչական, տնտեսական ու ուսումնական կյանքը: Միաժամանակ Ալեքսանդրապոլի գավառը բաժանվեց գյուղախմբերի: Քաղաքին ու գավառին վերաբերող բոլոր կարգադրությունները թուրքական իշխանություններն անում էին քաղաքային ինքնավարության միջոցով և նրա միջոցով էլ ընդունում էին խնդրագրեր: Քաղաքային ինքնավարությունն անմիջապես ենթարկվում էր տեղական իշխանության նահապետին (գավառապետ), իսկ վերջինս էլ՝ թուրքական բանակի հրամանատարին:[1]

1918 թ. նոյեմբերից թուրքական զորքերը սկսեցին հեռանալ գրավված տարածքներից, իսկ դեկտեմբերի 3-ին ՀՀ անցած նոր շրջաններում ստեղծվեցին գավառային վարչության մարմիններ: Թուրքական վեցամսյա օկուպացիան բացասաբար ազդեց Ալեքսանդրապոլի գավառի կառուցվածքի ու սահմանների վրա. գավառը զրկվեց Մեծ Ղարաքիլիսայի տեղամասից, որը Դիլիջանի և Քարվանսարայի տեղամասերի հետ կազմեց Դիլիջանի գավառը:[2] Այլևս երբեք Ալեքսանդրապոլի նախկին գավառի տարածքային ամբողջականությունը չվերականգնվեց և նոր Ալեքսանդրապոլի գավառն իր 4 տեղամասերով նախկին 160-ի փոխարեն այժմ ուներ 129 գյուղ, գյուղական 25 հասարակություններով (նախկին 27-ի փոխարեն):[3]

Երկրում կուտակված ռազմաքաղաքական, տնտեսական, սոցիալական ու ազգային խնդիրների առավել նպատակահարմար լուծումների որոնման հրամայական անհրաժեշտությունը հանգեց-

[1] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 125, թ. 8:
[2] 1918 թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ Ղարաքիլիսայի և Դիլիջանի գավառները ժամանակավորապես միավորվեցին մեկ գինվորական օկրուգի մեջ (Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 127, ցուցակ 1, գործ 4, թ. 20:)
[3] ՀԱԱ, ֆոնդ 127, ցուցակ 1, գործ 4, թ. 20:

րեց ՀՀ տիրույթների նոր վերաձևման, որը կյանքի կոչվեց 1919 թ. փետրվարի 26-ին: Մինիստրների խորհրդի որոշմամբ ՀՀ տարածքը բաժանվեց Նախիջևանի, Երևանի, Շարուրի, Էջմիածնի, Դիլիջանի, Նոր Բայազետի, Սուրմալուի, Դարալագյազի, Ղարաքիլիսայի (Լոռու) և Ալեքսանդրապոլի գավառների:

Նույն վարչատարածքային բաժանման համաձայն՝ նորաստեղծ Ղարաքիլիսայի գավառը կազմվեց նախկին Ալեքսանդրապոլի գավառի I ոստիկանական տեղամասից (Մեծ Ղարաքիլիսայի) և Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի ամբողջ Լոռու շրջանից: Գավառը վերանվանվեց Լոռի և ուներ գյուղական 16 հասարակություն՝ Մեծ Ղարաքիլիսայի, Վոսկրեսենովկայի, Նալբանդի, Համամլուի, Սարալի, Ղըշլաղի, Վարդենովի, Մեծ Բեքանդի, Յաղուբլիի, Ղալթախչիի, Ալիխանի, Հայկական Ջելալօղլիի, Գյուլագարակի, Դսեղի, Ջորագյուղի և Լոռուտի (1919 թ. մայիսի 23-ի Մինիստրների խորհրդի որոշմամբ Մեծ Ղարաքիլիսան գյուղից վերածվեց քաղաքի): Նախկին Ալեքսանդրապոլի գավառի մյուս երեք տեղամասերից (Ալեքսանդրապոլի, Քյավթառլուի, Աղինի) ստեղծվեց Ալեքսանդրապոլի նոր գավառ՝ գյուղական 13 հասարակություններով՝ Փոքր Ղարաքիլիսայի, Միրաքի, Նորաշենի, Քյավթառլիի, Արթիկի, Ղզըլղոչի, Ղայդուլի Ղազանչիի, Ալիխանի, Իլլի Ղարաքիլիսայի, Հոռոմի, Տավշանղշլաղի, Մոլլա Գյոկչայի և Սոգութլիի:[1]

ՀՀ տարածքի վերաձևումը կատարվեց հապշտապ, ուներ լուրջ թերություններ և բնակչության ու հատկապես ալեքսանդրապոլցիների շրջանում դժգոհությունների տեղիք տվեց: Արդեն 1919 թ. մարտի 20-ին Ալեքսանդրապոլի գավառային կոմիսարի ՀՀ տարածքային վարչության և միլիցիայի կոմիսարին ներկայացված զեկուցագրում այդ կապակցությամբ ասվում էր. «Ավելի հարմար եմ համարում Ավդիբեկ, Ղարալ, Բեքանդ, Աղբուլաղ, Ղալթախչի, Ղարբաբոյա, Գեղեղուշ գյուղերը հանել Լոռու գավառի Ղարաքիլիսայի գավառամասից և մտցնել Ալեքսանդրապոլի գավառի մեջ, քանի որ դրանք Ղարաքիլիսայից հեռու են 40, իսկ Ալեքսանդրապոլից 20

[1] ՀԱԱ, ֆոնդ 203, ցուցակ 1, գործ 181, թթ. 7-8:

վերստ, և բնակչությունը կապված է Ալեքսանդրապոլի գավառի բնակչության հետ, ինչպես պատմական, այնպես էլ աշխարհագրական տեսակետից»:[1] Հայաստանի Ազգային արխիվում պահպանվել են նմանատիպ բովանդակությամբ տասնյակ զեկուցագրեր ու դիմում-բողոքներ:[2]

1920 թ. մայիսի 25-ին, ՀՀ Պառլամենտի որոշմամբ նախկինում թույլ տրված թերացումները վերացնելու, կենտրոնի և շրջանների միջև կապերը հստակեցնելու ու տեղերում իշխանությունն ուժեղացնելու նպատակով կատարվեց վարչական նոր բաժանում. ՀՀ տարածքը բաժանվեց չորս նահանգի՝ Արարատյան, Վանանդի, Սյունիքի և Շիրակի:[3] Վերջին նահանգի մեջ բացի Ալեքսանդրապոլի գավառից մտան Ղարաքիլիսայի գավառն ամբողջությամբ, Էջմիածնի գավառի Թալինի գավառամասը, Կարսի գավառի 5-րդ գավառամասն ամբողջությամբ, 1-ին և 2-րդ գավառամասերի որոշ մասեր՝ սկսած Չլդըր լճի հարավային ափի Դաշքեորփի գյուղից խճուղով հարավ՝ Ներքին Փարկիթից կտրելով երկաթուղու ուղին մինչև Դայլիխ գյուղը, Ախալքալաքի և Բորչալուի գավառների հայկական մասերն ու Դիլիջանի գավառը (Դիլիջանի գավառը ժամանակավորապես զատվում է Շիրակի նահանգից, կազմում առանձին միավոր և ենթարկվում է ՆԳ նախարարությանը):[4]

Վարչական այս բաժանումը ևս լուրջ դժգոհություններ առաջացրեց տեղերում, մասնավորապես՝ Թալինում և Կարսում: Օրինակ, Թալինի հասարակության ժողովը կոմիսար Միքայել Թադևոսյանի գլխավորությամբ, հունիսի 25-ին, հեռագրով հայտնում էր Էջմիածնի գավառի կոմիսարին, որ ժողովուրդը համաձայն չէ միանալ Ալեքսանդրապոլի գավառին, որովհետև նախ՝ տասնյակ տարիների ընթացքում կապված լինելով Էջմիածնի գավառին, արդեն ընտելացել և յուրացրել է այդ գավառի պայմանները, և հետո Թալինի շրջա-

[1] ՀԱԱ, ֆոնդ 201, ցուցակ 1, գործ 135, թ. 29:
[2] Նույն տեղում, թթ. 3-15, թթ. 35-41:
[3] ՀԱԱ, ֆոնդ 201, ցուցակ 1, գործ 26, թ. 56, ֆոնդ 199, ցուցակ 1, գործ 160, թ. 134:
[4] «Շիրակի աշխատավոր», Ալեքսանդրապոլ, 1920, թիվ 25:

նի գյուղերի մեծ մասն ավելի մոտ են էջմիածնին, քան՝ Ալեքսանդրապոլին:

Նույնն էր նաև կարսեցիների դժգոհության պատճառը: Մայիսի 25-ի օրենքով Ալեքսանդրապոլի գավառին էր միացվել «Կարսի նահանգի այն մասը, որը մոտ էր գտնվում Ալեքսանդրապոլի պաշտպանական ամրություններին՝ սկսած այն կետից, ուր իրար էին միանում Ղարսաչայն ու Արփաչայը, այնուհետև Ղարսաչայով բարձրացած մինչև Շահնազար և այնտեղից Կարախանչայով մինչև Ախալքալաքի սահման»:[1] ՆԳ նախարարությունը սրա անհրաժեշտությունը բացատրում էր հետևյալ կերպ. «Քանի որ զինվորական տեսակետից այս եռանկյունին ենթակա է Ալեքսադրապոլի զինվորական հրամանատարությանը, անհրաժեշտ է, որ զինվորական և ադմինիստրատիվ իշխանությունները կարողանան խորհրդակցել և համերաշխությամբ վարեն գործերը: Դա անհրաժեշտ է նաև Ալեքսադրապոլի պաշտպանության համար»:[2]

Իրականում դրա կարիքը չկար, և անցած 40 տարիների ընթացքում այս եռանկյունին լինելով Կարսի նահանգի մեջ, երբևէ չէր խանգարել Ալեքսանդրապոլի պաշտպանության կազմակերպմանը:

1920 թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի գավառը նորից գրավվեց թուրքերի կողմից, իսկ երբ հինգ ամիս անց ազատագրվեց, Հայաստանի Հանրապետությունն այլևս չկար:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո մինչև 1924 թ. հունվարը, գավառը պահպանեց իր Ալեքսանդրապոլ անունը և ուներ յոթ տեղամաս (գավառակ)՝ Աղբաբայի, Դուզքենդի, Թալինի, Հաջիխալիլի, Ղզըլղոչի, Մոլլա Գյոկչայի, Քյավքառլուի: 1924-1930 թթ. գավառը կոչվում էր Լենինականի: 1930 թ. սկզբներին ՀԽՍՀ-ում գավառներն իբրև վարչական միավորներ վերացվեցին և Լենինականի գավառը դարձավ Լենինականի շրջան, իսկ 1930-ական թվականների վերջերին ընդհանրապես վերացվեց:[3]

[1] ՀԱԱ, ֆոնդ 201, ցուցակ 1, գործ 48, թ. 65:
[2] Նույն տեղում:
[3] Բոյաջյան Ա., Լենինականի գավառի սոցիալ-տնտեսական և տարածքային կազմակերպումը 1920-1940 թթ., ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 2, Գյումրի, 1999, էջ 218:

АРМЕН АЙРАПЕТЯН
ИИ НАН РА

АЛЕКСАНДРАПОЛЬСКИЙ УЕЗД В СИСТЕМЕ ТЕРРИТОРИАЛЬНО-АДМИНИСТРАТИВНЫХ ДЕЛЕНИЙ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XX В.

РЕЗЮМЕ

В начале XX в Александропольский уезд являлся уездом с самым многочисленным армянским населением в Ереванской губернии и занимал 13% ее территории. Весной 1917 г. по решению Временного правительства, МВД и ОЗАКОМ-ом были выработаны два проекта о разделе Закавказья с этнической точки зрения на однообразные административно-территориальные единицы. В них, в числе других, предполагалось на основе Александропольского уезда создать одноименную губернию. Однако идея централизации армянских территорий Северной Армении в состав одной административной единицы осталось незаверщенной.

В течение следующих трех лет Александропольский уезд два раза был захвачен турками, что отрицательно сказалось на строении и границах последнего: уезд окончательно лишился своего Большого Караклисского полицейского участка.

После советизации Армении до 1924 г. уезд сохранил свое старое название и имел 7 участков. В 1924-1930 гг. уезд был переименован в Ленинаканский. В начале 1930 г. в АССР уезды, как административные единицы были распущены и Ленинаканский уезд стал Ленинаканским районом, а в конце 1930 г. вообще был ликвидирован.

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ

Ռուսաստանյան պետության մեջ, այդ թվում և Անդրկովկասում, բոլշևիկյան հեղաշրջումից հետո իշխանության համար պայքարի առանձնահատուկ դրսևորումներից պետք է համարել զուգահեռ ընթացող *քաղաքային դումաների և Սահմանադիր ժողովի ընտրությունները:* Այս գործընթացը մետրոպոլիան Ռուսաստանի հետ *կապող* միակ «պորտալարն» էր, որ երբեմն ձևական, երբեմն *ճակատագրական* նշանակություն ունեցող *բախտորոշ* միջոց էր դիտվում խորհրդային իշխանությունը չճանաչող Անդրկովկասյան կոմիսարիատի համար:

Մինչև բոլշևիկյան հեղաշրջումը, այդ ընտրությունները միապետությունը տապալած և ժողովրդավարության ուղին բռնած Ռուսաստանի ազգերի և հասարակության ընտրած տրամաբանական և քաղաքակրթական զարգացման միակ նախանշված ելքն էին, իսկ հոկտեմբերյան զինված ապստամբությունից հետո՝ իշխանությունը զավթած բոլշևիկների դեմ պայքարի միակ միջոցը: Սահմանադիր ժողովի հրավիրման գաղափարի շուրջ միավորվում էին բոլշևիզմը չընդունող Ռուսաստանյան նախկին պետության հասարակական–քաղաքական բոլոր ուժերը, բանակի պետականամետ հրամանատարությունը, հակաբոլշևիկյան պետական կազմավորումները, հոգևորականությունը, մտավորականությունը, ժողովրդավարության և բազմակուսակցական համակարգի կողմնակիցները:

Սահմանադիր ժողովը և նրա պատգամավորների ընտրությունը ողջ երկրում դիտվում էր որպես միակ իրավասու, իրավազոր, օրինական հաստատություն, որը հեղաշրջումից առաջ, ընթացքում և հետո պետք է ապահովեր Փետրվարյան հեղափոխության նախանշված ժողովրդավարացման ուղին, հասարակության ազատությունն ու բազմակարծությունը:

Անդրկովկասում ընտրություններն ընթացան երկու փուլով:

Առաջին փուլն ընդգրկում էր երկրամասի խոշոր քաղաքների դումաների ընտրությունները: Բաքվում և Թիֆլիսում միաժամանակ ընթանում էին նաև բանվորական-պատգամավորական խորհուրդների ընտրություններ:

Այսպես, Բաքվի բանվորական պատգամավորների խորհրդի ընտրությունները կայացան 1917 թ. հոկտեմբերի 22-ին (նոյեմբերի 4) (այսուհետև կնշվի հին մոմարը – Վ.Մ.), իսկ Քաղաքային դումայինը՝ հոկտեմբերի 29-ին[1]: Երկու ընտրությունների ընթացքն ու արդյունքները լիովին արտացոլում էին արդյունաբերական, բանվորական քաղաքում տիրող տրամադրությունները, միաժամանակ՝ նաև ազգային գործոնի դերը: Բանվորական խորհրդում ամենից շատ ձայներ ստացել էր ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը՝ 6886, սոցիալիստ – հեղափոխականները՝ համապատասխանաբար՝ 4992, բոլշևիկները՝ 4082, մենշևիկները՝ 1005 ձայն: Քաղաքային դումայում՝ սոցիալիստական բլոկը ձեռք էր բերել 17523 քվե, ՀՅ Դաշնակցությունը՝ 12532, իսկ բոլշևիկները՝ 11202:

Կարելի է փաստել և հաստատել Դաշնակցության համոզմունքը, որ Բաքվում հայ աշխատավորական զանգվածների գերակշիռ հատվածը նախընտրում էր հայ ազգային-դեմոկրատական կուսակցությանը: Հոկտեմբերի 29-ին Դաշնակցության կազմակերպած հանրահավաքի ամբիոն է բարձրանում Բաքվի մենշևիկների առաջնորդ Ն. Ռամիշվիլին և հայտարարում, որ «Դաշնակցութեան հաղթութիւնը իմ և դեմոկրատիայի հաղթութիւնն է»[2]: Բաքվի մոտ 22.000 հայ բանվորությունից 20.000-ը ձայնը տվել էր Դաշնակցությանը, և այդ հանգամանքն առիթ էր տվել կուսակցության ղեկավարներին անվերապահորեն եզրակացնելու, թե մենշևիկ Ն. Ռամիշվիլին խաբվել է. հայ էսեռներին՝ «Աթաբեկյաններին» և դաշնակցականներին համարել է ոչ սոցիալիստ, ուստի այդ պատճառով, իբրև թե, Դաշնակցության հետ խմբավորման մեջ չէին մտել[3]: Խնդիրը այն էր, որ,

[1] Տե՛ս «Արև», Բաքու 1917, 3 նոյեմբերի, թիվ 233:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:

իրոք, վրացական մենշևիզմը չէր կարող հայ ազգային ազդեցիկ կուսակցությանը՝ իր ախոյանին սոցիալիստական համարել, դրանով բացահայտելով նաև իր ազգային թաքնված էությունը և ուղղվածությունը: Ուշագրավ է, որ յուրահատուկ խոստովանություն է անում Դաշնակցությունը՝ հանձին Հ. Գյուլխանդանյանի. «Առանձնահատուկ է մեր աշխարհագրական դիրքը, պատմութիւնը, կրոնը, ճարտարապետութիւնը, լեզուն, գրականութիւնը... եւ զարմանալի չէ, որ մեր սոցիալիստական շարժումն էլ առանձնահատուկ լինի»[1]:

Ամփոփելով՝ նշենք, որ Բաքվի Քաղաքային Դումայի ընտրություններին մասնակցել էր 48169 մարդ, որի արդյունքում կուսակցություններին տրված ձայների մեծամասնությունը նախնական տվյալներով բաշխվել էր հետևյալ կերպ՝ սոցիալիստական խմբավորում՝ 17532 (25 տեղ), ՀՅԴ՝ 12532 (17 տեղ), Մուսավաթ՝ 10234 (14 տեղ), բոլշևիկներ՝ 11202 (16 տեղ), Ռուսաստանի մահմեդականների միություն՝ 8063 (11 տեղ), կադետներ՝ 4173 (6 տեղ), հրեական հասարակական հիմնարկությունների միություն՝ 2208 (2 տեղ) ռուս դեմոկրատների միություն՝ 1647 (2 տեղ), պետական հիմնարկությունների ծառայողներ՝ 227, հրեական սոցիալիստական խմբավորում՝ 217: Ըստ ազգային պատկանելիության՝ արդյունքը հետևյալ պատկերն էր արտացոլում. հայեր՝ 38, մահմեդական-թաթարներ՝ 31, ռուսներ՝ 19, հրեաներ՝ 12, լեհեր՝ 3, վրացիներ՝ 2 հոգի[2]: Կարսում ևս, Քաղաքային դումայի ընտրությունների արդյունքում ստացվեց քաղաքական ուժերի նույն դասավորությունը: ՀՅԴ-ն ստացավ 8538, էսեռները՝ 5505, բոլշևիկները՝ 3024, մենշևիկները՝ 754, Հայ Ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ-ը) 225 ձայն[3]: Աղյուսակների համադրման դեպքում ստացվում է հետևյալ համապատկերը, այն է՝ Բաքվում և շրջաններում մենշևիկներին ու էսեռներին համակրում էր 23518, դաշնակցականներին՝ 19418, իսկ բոլշևիկներին՝ 15284 մարդ[4]: Եթե մենշևիկներին ու էսեռներին տարանջատենք, ապա ակնհայտ է դառնում, որ Դաշնակցությունն ամենից շատ ձայներն էր ստացել և Բաքվում իշխանության համար սպասվող պայքարում,

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում, 1 նոյեմբերի, թիվ 231:
[3] Տե՛ս նույն տեղում, 21 նոյեմբերի, թիվ 240:
[4] Տե՛ս նույն տեղում, 3 նոյեմբերի:

որպես գլխավոր քաղաքական-հակառակորդ ձեռք էր բերում բոլշևիկներին: Թիֆլիսում, Բաքվում, Կարսում, Բաթումում, Ալեքսանդրապոլում, Գանձակում, Շուշիում, Թելավում, Գորիում, Ախալքալաքում, Ախալցխայում, Երևանում, Նոր Բայազետում, Արդվինում, Գորիսում, Իգդիրում ընտրվել էր 251 դաշնակցական գանձատու՝ 780 ընդհանուր թվից, իսկ ՀԺԿ-ից՝ 32 գանձատու:

Քաղաքային դումաներում ընտրվել էին նաև Ս.-Դ. Հնչակյան, վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների, Ազգային-դեմոկրատական, Մուսավաթի և այլ կուսակցությունների ներկայացուցիչներ[1]: Դաշնակցությունը գերակշիռ հաղթանակ է տանում Երևանում, Ալեքսանդրապոլում, Ախալցխայում, Նոր Բայազետում, Գորիսում, Արդվինում (սոցիալիստական խմբակցության հետ համատեղ), Իգդիրում: Կուսակցությունը դիրքերը զիջում է Կարսում՝ էսեռներին, Ախալքալաքում՝ սոցիալիստական խմբակցությունը, Շուշիում՝ հայ-թաթարական միացյալ խմբակցությանը, Գանձակում՝ մահմեդականներին և սոցիալիստական խմբակցությանը, Գորիսում՝ մենշևիկներին, Թիֆլիսում և Բաքվում զբաղեցնում է երկրորդ տեղը՝ մենշևիկներից և սոցիալիստական խմբակցության ստացած ձայներից հետո: Հատկանշական է, որ Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Նոր Բայազետի քաղաքագլուխներ, Գանձակի քաղաքագլխի օգնական, Երևանի, Ալեքսանդրապոլի քաղաքային դումաների նախագահներ են ընտրվում դաշնակցականները: Մենշևիկների հետևողական հակազդեցության պատճառով ՀՅԴ կուսակցությունը մեկուսացվում է քաղաքային վարչության համակարգից[2]:

Սահմանադիր ժողովի հրավիրման մասին ժամանակավոր կառավարությունը հայտարարել էր 1917 թ. մարտի 2-ին: Ընտրությունների մասին օրենքի մշակման նախապատրաստման համար ստեղծված Հատուկ խորհրդակցությունն իր աշխատանքներն սկսեց մայիս 25-ին և ավարտեց սեպտեմբերի սկզբին: Այդ խորհրդակցությունը, որը նախագահում էր կադետ Ֆ. Կոկոշկինը, ներառնում էր բազմաթիվ կուսակցություններ, ռուսաստանյան գրեթե քաղաքական ամբողջ դաշտը: Հունիսյան ճգնաժամի ազդեցությամբ, երբ առաջին անգամ բոլշևիկները հակապետական ցույցեր կազմակեր-

[1] Տե՛ս С. Сеф, Революция 1917 г. в Закавказье, (документы и материалы), Тифлис, 1927, с. 283-285:
[2] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս 1917, 7 նոյեմբերի, թիվ 237:

պեցին Պետրոգրադում ժամանակավոր կառավարությունն անգամ հայտարարեց ընտրությունների (սեպտեմբերի 17) և Սահմանադիր ժողովի հրավիրման (սեպտեմբերի 30) ժամկետները: Այնուհետև հաստատվեց նոր ժամանակացույց՝ ընտրությունները՝ նոյեմբերի 12-ին, Սահմանադիր ժողովի հրավիրումը՝ նոյեմբերի 28–ին[1]: Այս հետածգումները բացատրվում են նրանով, որ առաջին դեպքում՝ ժամանակավոր կառավարությունը փորձում էր հաղթանակած դուրս գալ քաղաքական ճգնաժամից և նոր միայն ձեռնամուխ լինել ժողովրդավարական ընտրություններին, իսկ բոլշևիկյան կառավարությունը, զավթելով իշխանությունը, ձգտում էր ամրապնդել իր անկայուն դիրքերը, առայժմ ջլատել համառուսաստանյան դեմոկրատիայի դեռևս ազդեցիկ ճամբարը: Օգոստոսի 7–ին սկսվեցին Սահմանադիր ժողովի ընտրությունների գործերով Համառուսաստանյան հանձնաժողովների՝ Համընտրությունների նիստերը, որոնց խնդիրն ընտրությունների նախապատրաստումն էր: Սեպտեմբերին քաղաքային դումաների և զեմստվոների վարչությունները ձեռնամուխ եղան ընտրողների ցուցակների կազմման աշխատանքներին: Հոկտեմբերին ձևավորվեցին քաղաքական կուսակցությունների թեկնածուների ցուցակները: Նոյեմբերի 17–ին, հակադրվելով Բոլշևիկյան կառավարությանը, նախկին Ժամանակավոր կառավարության անդամների նիստը թերթերում կոչ հրապարակեց՝ նոյեմբերի 28–ին Սահմանադիր ժողովի հրավիրման մասին: Դրան հետևեց Համընտրությունների անդամների՝ կադետների և աջ էսեռների ձերբակալումը և բոլշևիկ Մ. Ուրիցկիի նշանակումը որպես այդ մարմնի նախագահ: Սա առաջին քայլն էր Սահմանադիր ժողովը ցրելու ճանապարհին: Իր հերթին, ժողկոմխորհը հոկտեմբերի 27–ին ընտրությունների օր էր հաստատել նոյեմբերի 12-ը: Հակախորհրդային պայքարի շնորհիվ ընտրությունները կայացան միայն 39 ընտրական օկրուգներում[2]:

Անդրկովկասի ազդեցիկ կուսակցությունները Սահմանադիր ժողովի ընտրարշավին նախապատրաստվում էին համապատասխան ծրագրային դրույթներով և մարտավարությամբ:

[1] Տե՛ս Великая Октябрская социалистическая революция, Энциклопедия, Москва, 1987, с. 549.
[2] Տե՛ս Великая Октябрская..., Энциклопедия, с. 550:

Սահմանադրական - դեմոկրատները Սահմանադիր ժողովը, որը հրավիրվելու էր համընդհանուր, ուղիղ հավասար գաղտնի, առանց սեռական խտրականության սկզբունքների հիմքի վրա, համարում էին ժողովրդի գերագույն կամքի կազմակերպված արտահայտման միակ ճշմարիտ ձևը: Այդ ժողովի հրավիրումը նրանք ընկալում էին որպես «Մեծ հեղաշրջմամբ թելադրված» ժամանակավոր կառավարության պարտականություն: Սահմանադիր ժողովի հրավիրումով այդ կառավարությունը դադարելու էր գործել:

Սոցիալիստ – հեղափոխականները գտնում էին, որ Սահմանադիր ժողովը պետք է հրավիրվի կարճ ժամկետում՝ չկապելով այն պատերազմի ավարտի հետ: Ընտրություններին պետք է մասնակցեր ամբողջ բանակը: Ընտրությունները պետք է կայանային ընտրական հատուկ տեղամասերում, որոնք Անդրկովկասում ձևավորվելու էին ազգերի ազգագրական տեղաբաշխման սկզբունքով: Եվ վերջապես, էսեռների կարծիքով՝ ընտրությունները պետք է իրականացվեին համամասնական սկզբունքով՝ ցուցակներով:

Հայ հեղափոխական դաշնակցության մոտեցումն այս հարցում կրկնում էր զեմստվոների նկատմամբ մարտավարությունը: Կուսակցությունը համոզված էր, որ մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումն անհրաժեշտ է, իրականացնել կենսական այն պահանջները, որոնք ավելի չէին սրի ժողովուրդների և հասարակության տարբեր շերտերի հարաբերությունները: Դաշնակցությունն այսպիսի պահանջներ էր տեսնում 1) Անդրկովկասի վարչական բաժանումների փոփոխում, 2) բանվորների վիճակը բարելավելու նպատակով հաշտարար ատյանների ստեղծում, 3) գյուղացիության վիճակի բարելավում՝ նմանատիպ միջնորդական մարմինների աջակցությամբ, կալվածատիրական հողերի տուրքերի նվազեցում, 4) պետական կարգավիճակում գործող դպրոցների ազգայնացում, ինչպես ղեկավարման, այնպես էլ դասավանդման իմաստով, 5) վարչական և դատական բոլոր հիմնարկներում տեղական լեզուների ներդրում:

Դաշնակցությունը լրջորեն մտահոգվում էր նաև այն հարցով, որ քանի դեռ հայտնի չէր, թե Ժամանակավոր կառավարությունն ինչ տեսքով էր Անդրկովկասում կիրառելու ընդհանուր ընտրական օրենքը, ուստի անհրաժեշտ էր համարում միջոցներ կիրառել, որպեսզի հայ ժողովուրդը վարչական բաժանումների, պատերազմի

ծնած պայմանների պատճառով չզրկվեր բնակչության քանակին համապատասխան ներկայացուցչությունից:

Սոցիալ-դեմոկրատ մենշևիկների կարծիքով՝ երկրում հաստատված ագրարային, բանվորական, ազգային հիմնահարցերի շուտափույթ լուծումն, և այն մակարդակով, որ դա արժանանար հասարակության բոլոր շերտերի հավանությանը, հնարավոր էր իրականացնել միայն Սահմանադիր ժողովի ճանապարհով: Նրանք մեծ հույսեր էին կապում այդ հեղինակավոր մարմնի հետ նաև այն առումով, որ Սահմանադիր ժողովը կկարողանար վերջ տալ պատերազմին:

Սոցիալ-դեմոկրատ բոլշևիկները Սահմանադիր ժողովի նկատմամբ վերաբերմունքը կապում էին ժամանակավոր կառավարության ու զինվորական, բանվորական պատգամավորների խորհուրդների հանդեպ կուսակցական դիրքորոշման հետ և, ինչպես վերևում տեսանք, մեկ գլխավոր խնդիր ունեին, այն է՝ գիտակցելով ուժերի անհավասարությունը, իհարկե ոչ բոլշևիկների օգտին, ձախողել վերջինիս հրավիրումը[1]: Դեռ 1917 թ. հուլիսի 2-ին, Ա. Չխենկելիի ստորագրությամբ շրջաբերական է տարածվում այն մասին, որ Օզակոմին կից կազմակերպվել էր Սահմանադիր ժողովի ընտրությունների անցկացման անդրկովկասյան կենտրոնական հանձնաժողով՝ Ե. Գեգեչկորիի նախագահությամբ: Հանձնաժողովի նախագահության կազմում ընտրվել էին աջ էսեռ Ա. Լոմտատիձեն, դաշնակցական Ալ. Խատիսյանը, մուսավաթական Ա. Թոփչիբաշևը: Սահմանվել էին նաև ընտրությունների անցկացման սկզբունքներն ու մեխանիզմները[2]:

Երկրամասում Սահմանադիր ժողովի ընտրությունը սկսվում են նոյեմբերի 12-ին, Անդրկովկասյան կոմիսարիատի ձևավորման գործընթացին զուգահեռ: Նոյեմբերի 9-ին, Օզակոմի անդամներ Մ. Պապաջանյանի, Մ. Ջաֆարովի մասնակցությամբ խորհրդակցությունը, քննելով Արևելյան Անդրկովկասի մի շարք վայրերից Սահմանադիր ժողովի ընտրությունների հետաձգման մասին արված հայտարարությունները, որոշեց, որ ընտրությունները պետք է սկսվեին նշանակված օրը՝ նոյեմբերի 12-ին և պետք է ընթանային

[1] Տե՛ս А. Ставровский, Программы партий и их отношение к важнейшим вопросам, Тифлис, с. 171-177:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 88, թ. 1-3:

քաղաքներում՝ 3 օրվա ընթացքում, մյուս վայրերում՝ 7 օրվա ընթացքում[1]: Քաղաքներում ընտրությունները տեղի ունեցան նոյեմբերի 24-26–ը: Նոյեմբերի 14-ին, Օզակոմն իր վերջին հրահանգներից մեկով մասնավոր բանկերից փոխառնված գումարները Պետական բանկի միջոցով տրամադրում է Սահմանադիր ժողովի ընտրությունների կազմակերպմանը[2]:

Այսպիսով՝ 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Անդրկովկասի խոշոր կենտրոններում, ապա և բուն հայկական գավառներում իրականացվեցին երկար սպասված Սահմանադիր ժողովի ընտրությունները: «Իրագործուում է ռուսական հեղափոխութեան երազներից ամենաանհիրականը,- գրում էր «Հորիզոնը»,- դեկաբրիստներից սկսած մինչեւ այսօր՝ մի դար շարունակ ռուս հեղափոխութեան կարմիր դրօշակի վրա գրւած է եղել «Սահմանադիր ժողով»[3]: Դեկտեմբերի 2–ին Բաքվի ՀՅԴ «Արև» թերթն ամփոփելով քաղաքի և գործարանային շրջանի ընտրությունների վերջնական արդյունքները, ըստ ընտրացուցակների համարների, ներկայացնում է հետևյալ պատկերը. 1) Ս.-Դ. մենշևիկներ – 5660 ձայն, 2) կադետներ - 9054, 3) Սոցիալիստ-հեղափոխականներ – 18769 4) ՀՅԴ - 20314, 5) բոլշևիկներ - 22258, 6) վրաց սոցիալիստ-ֆեդերալիստներ – 456, 7) Հայ ազգային դեմոկրատներ – 1507, 8) վրաց ազգային դեմոկրատներ – 145, 9) ժողովրդական սոցիալիստներ – 116, Մուսավաթ – 21762, 11) Հումմեթ – 128, 12) Մահմեդական սոցիալիստական բլոկ – 903, 13) Արևմտյան Անդրկովկասի մահմեդականներ - 3, 14) Ռուսաստանի մահմեդականներ – 7850, 15) Հրեական սիոնիստներ - 2081: Այսպիսով՝ թե՛ Բաքու քաղաքի և թե՛ բանվորական շրջանների 178038 թվից քվեարկության մասնակցել էին 108208 հոգի, որից ձայների մեծամասնություն ստացել էին՝ առաջին տեղում, բոլշևիկները, երկրորդ՝ Մուսավաթը, երրորդ՝ Դաշնակցությունը, չորրորդ՝ էսեռները, հինգերորդ՝ կադետները, ապա և մյուսները: Ընտրական պայքարին մասնակցում էին 15 խմբակցություններ և կուսակցություններ: Ավելացնենք, որ քաղաքում ՀՅԴ-ն զբաղեցնում էր բոլշևիկներից (16868) հետո երկրորդ տեղը՝ 12712 ձայնով, իսկ գործարանային շրջաններում՝ երրորդ տեղը (7602)՝ Մուսավաթից

[1] Հորիզոն, 1917, 12 նոյեմբերի, թիվ 241
[2] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 116, л. 4.
[3] «Հորիզոն», 1917, 12 նոյեմբերի, թիվ 242:

(12074) և էսեռներից (8896) հետո[1]: Թիֆլիսի պատկերը բոլորովին այլ էր:

Նոյեմբերի 18–ի տվյալներով առաջին հինգ տեղերը համապատասխանաբար զբաղեցրել էին. 1) մենշևիկները՝ 31290, 2) ՀՅԴ-ն՝ 19595, 3) բոլշևիկները՝ 19172, 4) էսեռները՝ 11504 և կադետները՝ 9565 ձայնով[2]:

Դաշնակցության կարծիքով՝ այստեղ հաղթանակ էին տարել ծայրահեղ երկու թևերը՝ կադետները և բոլշևիկները: Այդ երևույթը կարելի է բացատրել հետևյալ կերպ: Բոլշևիկների հաղթանակը կենտրոնում և իշխանությունը Թիֆլիսում զավթելու վտանգը քաղաքացիների մեծ մասին և զինվորներին շրջեց դեպի բոլշևիզմը՝ այսպիսով թուլացնելով դեմոկրատիայի ուժերը: Մենշևիկները, ովքեր այս ընտրություններում 8000 ձայն պակաս էին ստացել, քան հուլիսին կայացած քաղաքային դումայի ընտրություններում, թեքվեցին դեպի կադետները՝ որպես «Կարգի և սեփականության» միակ հենարանի, ինչպես նաև՝ դեպի Դաշնակցությունը[3]: Հայաստանի գավառում իր լրագրային հաղորդումներով Սահմանադիր ժողովի ընտրությունների ընթացքի իրական պատկեր է ստեղծել Ջորագյուղի (Լոռի) պետական ազգայնացված դպրոցի ավագ ուսուցիչ, դաշնակցական Գևորգ Դեմիրճյանը՝ մեծանուն գրող Դերենիկ Դեմիրճյանի եղբայրը*: Նրա տեղեկությունների համաձայն՝ Դսեղի շրջանի 15-18 գյուղերը ՀՅԴ-ին տվել էին իրենց ձայները (շուրջ 4000): Ջորագյուղից Գ. Դեմիրճյանը հաղորդում էր, որ «ընտրութիւններից մի երկու օր առաջ մէր գիւղն էին եկել երկաթուղու վրա ծառայող երէք հոգի, որոնք հետևերը բերել էին մի մեծ կապոց N1 բյուլետեններով (ս.-դ - մենշևիկների ցուցակը – Վ. Մ.): Երբ բացատրեցինք մէր եւ սոցիալ-դեմոկրատների հողային ծրագրերը, իրենք էլ փոշմանեցին: Բաժանելիս ասացին.- վարժապետ ջան, ի՞նչ անէնք, կայարանում ռոճիկներս բաժանելուց հետո պարտաւորվեցինք այս թղթերը ցրել մոտակա գյուղերում»[1]: Ընտրարշավին մասնակցում էին բազմաթիվ անվանի գործիչներ, Ալեքսանդրապոլից «Յորիգոնին» հաղորդագրություններ էր հղում, օրինակ՝ Իրազեկը (Հակոբ Տեր-Հակոբյան), Մեծ Դարաքիլայից՝ Գարեգին Նժդեհը և շատ ուրիշներ:

Դաշնակցությունն Անդրկովկասի ընտրական շրջանից Սահմանադիր ժողովին ներկայացնում էր 18 գործիչներից բաղկացած թիվ 4 ցուցակը: Կուսակցությունը ժամանակի գլխավոր ընտրությանը գործուղում էր Ստեփան Զորյանին (Ռոստոմ), Միքայել Հովհաննիսյանին (Վարանդյան՝ «Դրոշակի» խմբագիր), Համազասպ Օհանջանյանին, Հակոբ Զավրիյանին, Ավետիք Շահխաթունյանին («Молот»-ի խմբագիր), Կոստանդին Համբարձումյանին, Հովհաննես Տեր-Հովհաննիսյանին (Քաջազնունի), Սիրական Տիգրանյանին, Կորյուն Ղազարյանին, Սարգիս Արարատյանին, Արտաշես Չիլինգարյանին, (Ռուբեն Դարբինյան), Սիմեոն Գրուգինյանին (Վրացյան՝ «Յորիզոնի» խմբագիր), Աբրահամ Գյուլխանդանյանին, Վահան Նավասարդյանին, Լիպարիտ Նազարյանին, Գևորգ Խատիսյանին, Արամ Նալչաջյանին, Համբարձում Սարգսյանին (Յապոն)[2]:

Ինչպես երկրամասի ազդեցիկ մյուս կուսակցությունները, Դաշնակցությունը ևս Սահմանադիր ժողովի ընտրություններն օգտագործեց իր քաղաքական պլատֆորմը հանրությանը ներկայացնելու, կուսակցության որդեգրած ուղու ճշմարտացիությունն ու կենսունակությունը հիմնավորելու նպատակով: Իրավիճակը կտրուկ փոխվել էր այն առումով, որ անդրկովկասյան անջատ կառավարության ստեղծումը և վրացական մենշևիզմի բացահայտ անկախական տրամադրությունները Դաշնակցությանը ևս հարկադրում էին ենթարկվել դեպքերի թելադրվող զարգացումներին և լիովին ստանձնել Անդրկովկասի հայության, մասնավորապես Երևանի նահանգի ինքնակազմակերպման խնդիրը: Կուսակցության ղեկավարները, անվանի գործիչները լիովին չէին գիտակցում այն դարակազմիկ շրջադարձը, որը պատուհասել էր Անդրկովկասին և հայության երկու հատվածներին: Իներցիայի ուժով շարունակվում էր այն մտայնությունը, թե հիմա էլ բոլշևիկյան դարձած Ռուսաստանն է զո-

[1] Տե՛ս «Արև», 1917, 2 դեկտեմբերի, թիվ 247:
[2] Տե՛ս «Յորիզոն», 1917, 18 նոյեմբերի, թիվ 247:
[3] Տե՛ս "Молот", Тифлис 1917, 21 ноября, N 40:
* 1920 դեկտեմբեր-1921 փետրվար ամիսներին նա իր կյանքի վերջին օրերը անցկացրել է Երևանի բանտում հայ ազգային-ազատագրական շարժման այլ անվանի գործիչների հետ, մահացել է անհայտ պայմաններում, թաղվել անհայտ վայրում: Այս մասին պահպանվել են Արշալույս Աստվածատրյանի հուշերը: Գ. Դեմիրճյանը տողերիս հեղինակի մոր պապն է:

[1] «Յորիզոն», 1917, 26 նոյեմբերի, թիվ 253:
[2] Տե՛ս նույն տեղում, 10 նոյեմբերի, թիվ 240:

րավիգ լինելու հայության խնդիրներին, հատկապես Հայկական հարցին: Կուսակցության մի հատվածը գոնե դեկտեմբերի սկզբին ափսոսանք էր հայտնում գեներալներ Կալեդինի և Կոռնիլովի նոր հարձակման կապակցությամբ, որը նպատակ ուներ վերջ տալ բոլշևիզմին: Դաշնակցությունն առայժմ բոլշևիզմը համարում էր դեմոկրատիայի մաս և Թուրքիայի հետ զինադադարի ստորագրման համատեքստում թյուրիմացության մեջ էր հայտնվում: Դաշնակցության «Молот» թերթի թղթակից Ա. Ստեփանյանն իր զարմանքն էր արտահայտում, որ կուսակցությանը կարող էին հակաճառել այն հարցում, թե հնարավոր չէր բոլշևիկների հետ համաձայնության գալ, որ նրանց ծրագիրն անիրականանալի ու կործանարար էր Ռուսաստանի համար: Որպես ասվածի հիմնավորում վկայակոչվում էր այն հանգամանքը, որ Անդրկովկասյան կոմիսարիատն ու Ուկրաինական Ռադան, որոնց անհնար էր մեղադրել բոլշևիզմի հանդեպ համակրանքի մեջ, ռազմաճակատներում զինադադար են կնքել և հրապարակել են դեկրետներ, որոնք «ոչնչով չեն տարբերվում Լենինի և Տրոցկու կազմած չափավոր ակտերից»[1]: Ավելացվում էր, որ ոչ ոք չէր կարող ժխտել այն, որ իշխանությունն Անդրկովկասում, փաստորեն, գտնվում էր երկրամասային կենտրոնների ձեռքին, ինչը և պահանջում էին բոլշևիկները: Ցանկալին հնարավորի տեղ ներկայացնելով՝ հեղինակը եզրակացնում էր, որ «Անդրկովկասյան կոմիսարիատի վարքագիծն անուղղակիորեն մերձենում է չափավոր բոլշևիկյան հոսանքի քաղաքականությանը և լավագույն գրավականն է, որ մենք ի վիճակի ենք հաշտեցնել ռուսական դեմոկրատիայի երկու թևերը և դիմագրավել պետության դեմ կանգնած բոլոր հակահեղափոխական ուժերին»[2]: Այստեղ, նախ՝ արտահայտված է Սահմանադիր ժողովի հանդեպ ունեցած դեռևս լավատեսական միտումը, ապա՝ և՛ անհասկանալի և՛ տարօրինակ կերպով բոլշևիզմի նկատմամբ ունեցած հարգանքը: Եվ դա այն պայմաններում, որ Բաքվի խորհուրդն, ի դեմս Ստ. Շահումյանի, պայքար էր հայտարարել կոմիսարիատի դեմ: Բոլորովին այլ խնդիր է, որ Դաշնակցությունն երկրամասի ռազմաքաղաքական գլխավոր խնդիրների շուրջ փորձեր իրոք համագործակցել բոլշևիկների հետ, ինչը չկար պարզապես: Դաշնակցությունը մաս կազմելով Խորհրդային կառավարությանը չճանաչող Անդրկովկասյան կոմիսարիատին՝ իր ծրագրային դրույթները, չգիտես ինչու, կառուցում էր միասնական Համառուսաստանյան դաշնային ժողովրդավարական հանրապետության շրջանակներում՝ դեռևս հույսեր կապելով Սահմանադիր ժողովի հետ: «Հայրենիքի և հեղափոխութեան փրկութեան միակ ճանապարհը կայանում է Ռուսաստանի բնակչութեան բոլոր շերտերի վրա հենվող իշխանութիւն ստեղծելու մէջ,- գտնում էր Դաշնակցությունը,- այդպիսի մի իշխանութիւն կարող է լինել Սահմանադիր ժողովը»[1]:

1917 թ. նոյեմբերի 4–ին Ավ. Շահխաթունյանն Ախալցխայի գիմնազիայի սրահում ներկայացնում էր Դաշնակցության գաղափարախոսության առանցքը, գլխավոր նպատակները: Դրանք էին՝ ռուսական դեմոկրատիայի աջակցությամբ Հայկական հարցի լուծումը, ռուսաստանյան դաշնային պետության և հողային հարցի նկատմամբ կուսակցության դիրքորոշումը[2]: «Молот» թերթը գտնում էր, որ կուսակցության գաղափարախոսությունը զարգացել է երկու ուղղությամբ. մի կողմից՝ ռուսական նարոդնիկության սուբյեկտիվ դպրոցի, մյուս կողմից՝ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի գիտական սոցիալ-քաղաքական շարժման ազդեցությամբ: Այդ երկու հարազատ սկզբնաղբյուրները ձուլվել են հայկական հասարակության գլխավոր տեսական արժեքների հետ, որոնք բնորոշ են հայ հասարակության բազմադարյան զարգացմանը՝ ձևավորվելով մեկ ամուր տեսական միասնություն: Այստեղից Դաշնակցությունը եզրակացնում էր, որ վստահաբար կարելի է խոսել հայկական սոցիալիզմի մասին, որ կուսակցությանը հաջողվել է ստեղծել «սոցիալիզմի երկմիասնական ճշմարտություն», այն է՝ տեսական երկնքի արևմտյան և պրակտիկ հողի արևելյան ճշմարտությունը: Որպես Անդրկովկասի համար ազգային հարցի լուծման հեռահար նպատակ, Դաշնակցությունն առաջ էր քաշում «Կովկասյան սոցիալիստական ինտեր-

[1] Տե՛ս "Молот", 1917, 3 декабря, N 49:
[2] Տե՛ս նույն տեղում:

[1] «Հորիզոն», 1917, 9 նոյեմբերի, թիվ 239:
[2] Տե՛ս «Շարժում», Ախալցխա 1917, 12 նոյեմբերի, թիվ 26:

նացիոնալի» գաղափարը, հողային հարցի լուծումը կապում էր էսեռական սոցիալիզացիայի ծրագրի հետ, բանվորական հարցի լուծումը տեսնում էր կապիտալի դեմ պրոլետարիատի անզիջում պայքարի մեջ: Քաղաքացիական ազատության ընդունված նորմերը կուսակցությունը դարձյալ կապում էր հայկական բնավորության՝ անձնական կյանքում հայ մարդու ինքնուրույն, ազատ և անհատական պահանջների հետ[1]:

Խնդիրն այն էր, որ Ռուսաստան ասված ամբողջությունը, պետականամետ ուժերը և պատերազմում Ռուսաստանի դաշնակիցները սկզբից ևեթ ըմբռնել էին բոլշևիկյան հեղաշրջման բնույթը, ուստի և անհաշտ պայքար էին սկսել խորհրդային իշխանության դեմ: Անդրկովկասը, սակայն, այդ իշխանափոխությունն օգտագործում էր Ռուսաստանից անջատվելու և ազգային պետականությունների վերականգնման նպատակով: Անշուշտ, խոսքը չի վերաբերում Արևելյան Անդրկովկասի մահմեդական բնակչությանն ու կազմակերպություններին, ուստի և հայտնվել էր բոլորովին նոր, վտանգներով առլեցուն և անորոշ իրավիճակում: Այդ անորոշությունն առավելապես բնորոշ էր հայ իրականությանը, որն ուներ արևմտահայության հարց, գաղթականության խնդիր, ռազմաճակատի պաշտպանության հրամայական: Այս ամբողջությունն էլ թելադրում էր իշխանության ընտրության հարց:

Սահմանադիր ժողովի ընտրությունները Կովկասյան ռազմաճակատում և օկրուգի թիկունքային զորամասերում նույնպես կայացան 1917 թ. նոյեմբերին: Քվեարկությանը մասնակցած զինվորների թիվը կազմում էր 420 հազար:

Արդյունքը եղավ այն, որ տարբեր կուսակցություններից ներկայացված թեկնածուներից Սահմանադիր ժողովի անդամներ ընտրվեցին էսէռներից՝ 4, մենշևիկներից՝ 1 և բոլշևիկներից՝ 1 թեկնածուներ: Միաժամանակ պետք է նկատի առնել ուշագրավ այն հանգամանքը, որ Սահմանադիր ժողովի ընտրություններից 10-15 օր հետո Կովկասյան բանակի զինվորները, որոնք մեծամասամբ

[1] Տե՛ս "Молот", 1917, 14 ноября, N 34:

քվեարկել էին աջ էսէռների օգտին, բանակային 2–րդ համագումար ուղարկեցին գերազանցապես բոլշևիկ պատվիրակներ, որոնք էլ համագումարում անցկացրին բոլշևիկյան բանաձևեր և մեծամասնություն գրավեցին երկրամասային խորհրդում[1]:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությամբ սկսված Ռուսաստանի ժողովրդավարության ու բազմակուսակցական զարգացման հեռանկարը ընդհատվեց բոլշևիկյան հեղաշրջմամբ, սակայն Սահմանադիր ժողովի գաղափարը նոր՝ խորհրդային կառավարությանը հակադրելու միակ հույսը թե՛ Ռուսաստանում և թե՛ Անդրկովկասում ապրեց ընդամենը մեկ ամիս:

1918 թ. հունվարի 5–ին Պետրոգրադի Տավրիկյան պալատում բացված Սահմանադիր ժողովը փակվեց հունվարի 6–ի առավոտյան: Հունվարի 6–ի լույս 7–ի գիշերը Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեն դեկրետ ընդունեց Սահմանադիր ժողովը ցրելու մասին[2]: Թիֆլիսում հիմնվում է կովկասյան ազգամիջյան սոցիալիստական բյուրո՝ Սահմանադիր ժողովը պաշտպանելու նպատակով: Հունվարի 8-ի նիստում ընտրվում է նախագահություն, որի կազմի մեջ մտնում են Տ. Մուշեղյանը (նախագահ), Ս. Չեկալինը (անդամ) և Ա. Գյուլումյանը (քարտուղար)[3]: Հունվարի 15-ին Երևանի հայոց ազգային խորհուրդը հանդես եկավ բողոքով՝ «բոլշևիկների հանդուգն և ուզուրպատորական գործողությունների դեմ», Սահմանադիր ժողովը կրկին անգամ համարելով «համառուսական հասարակապետության միակ լիազոր տերը»[4]:

Եթե վրացական մենշևիկների համար սոցիալիստների երազանք Սահմանադիր ժողովի բռնի դադարեցումը սպասված և հերթական անիք էր Ռուսաստանից վերջնականապես հեռանալու, անկախանալու, նախատեսված ճանապարհի վրա ամուր կանգնելու համար, ապա հայությանը, մասնավորապես Դաշնակցությանը սպասվում էր փորձությունների հինգ ամիս, որն ի հայտ բերեց հայկական քաղաքական, հա-

[1] Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը, Ե., 1970, էջ 392-398:
[2] Տե՛ս Великая Октябрская..., Энциклопедия, с. 550:
[3] Տե՛ս նույն տեղում, 11 հունվարի, թիվ 6:
[4] «Հորիզոն», 1918, 17 հունվարի, թիվ 10:

сарақական ուժերի ամբողջության իրական պատկերը, վճռորոշ և անսպասելի զարգացումների հանդեպ պատրաստվածության աստիճանը:

ВААН МЕЛИКЯН
ИИ НАН РА

ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ СФЕРА ДЕЯТЕЛЬНОСТИ ЗАКАВКАЗСКОГО КОМИССАРИАТА

РЕЗЮМЕ

После большевистского переворота специфическим проявлением борьбы за власть в Закавказье можно считать процесс выборов в городские Думы и в Учредительное собрание. В данной политической ситуации весь этот путь рассматривался в качестве единственного связующего звена, которое имело судьбоносное значение для непризнающего советской власти Закавказского комиссариата.

Демократические выборы в Закавказье проводились двумя этапами: первый охватывал выборы в Думы крупных городов края, второй - в Учредительное собрание. В избирательной компании приняли участие влиятельные политические партии Закавказья, в том числе и армянские.

Выборы в Учредительное собрание начались 12 ноября 1917 г. параллельно с процессом формирования Закавказского правительства — комиссариата. Они охватили также Кавказский фронт и тыловые части округа.

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ԱՄՆ-Ի ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայկական հարցը շարունակում էր մնալ մեծ տերությունների հետաքրքրությունների ոլորտում այնքանով, որքանով այն տվյալ պահին համընկնում էր իրենց սեփական շահերին: Այդ դիրքորոշումը հստակ արտահայտվեց տերությունների միջև կնքված գաղտնի պայմանագրերում: Պատերազմից հետո, ուժերի և հետաքրքրությունների վերադասավորման հետ կապված, այդ դրսևորումները փոփոխության էին ենթարկվում: Գաղտնի պայմանագրերի կետերը փոփոխությունների էին ենթարկվում հատկապես Մեծ Բրիտանիայի քաղաքականության դիրքորոշումներում և իրենց հերթին որոշակիորեն ազդում էին Հայկական հարցի վրա:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Մեծ Բրիտանիան հավատարիմ էր մնացել իր որդեգրած վաղեմի սկզբունքին. բացառել մշտական բարեկամներ և հակառակորդներ ունենալու գաղափարը և ղեկավարվել մշտական շահերով միայն: Այս սկզբունքն աշխարհամարտի ավարտից հետո ենթադրում էր առավել ուշադրություն Հայկական հարցի և հայերի նկատմամբ:

Դեռ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայի պետական այրերը՝ վարչապետ Լլոյդ Ջորջը, արտգործնախարար Արթուր Բալֆուրը, ռազմական նախարարության անդամ Ուինսթոն Չերչիլը և այլք, հուսադրող ելույթներով բազմիցս հանդես գալով, հայտարարել էին, որ պատրաստ էին աջակցել հայ ժողովրդին իր անկախության և պետականության հաստատման համար պայքարում: Իսկ պատերազմի ավարտին՝ 1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, անգլիական ղեկավարները բացահայտ նշում էին նաև, որ պատասխանատվություն էին կրում հայերի

համար՝ պատերազմի ժամանակ անգլիացիներին մատուցած նրանց ծառայությունների դիմաց[1]:

Սակայն այս անորոշ և հաճախ անպատասխանատու ելույթներն ու արտահայտությունները խիստ կասկածելի էին, քանի որ բրիտանական կառավարությունը միևնույն ժամանակ գաղտնի բանակցություններում և ստորագրած պայմանագրերում Մերձավոր Արևելքը և Հայաստանը նույնպես ծրագրում էր բաժանել մեծ տերությունների միջև:[2]

Մեծ տերությունների՝ հայերին օգնելու որոշ շահագրգռվածությունն առաջ եկավ 1917 թ. փետրվարին Ռուսաստանում ցարիզմի տապալումից հետո: 1917 թ. դեկտեմբերին Մեծ Բրիտանիայում ԱՄՆ-ի դեսպան Ուոլթեր Հայնսը հեռագրում էր այդ մասին պետքարտուղարին հետևյալը. «Փրկել այն, ինչ մնացել էր հայերից, բրիտանացիների համար անհրաժեշտ է հատկապես այն պատճառով, որ հայերը միակ պատնեշն են թուրանական շարժման զարգացման դեմ, որը ծրագրված է տարածել Կ. Պոլսից մինչև Չինաստան»[3]:

Հայերին օգնելու բրիտանացիների մտադրությունը գնալով զարգանում և ամրապնդվում էր: Աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո բրիտանական կառավարության՝ Մերձավոր Արևելքի նկատմամբ վարած քաղաքականության մեջ ձևավորվում է նոր ուղղություն: Վերջինն արտահայտվում էր մեծ Հայաստանի ստեղծման գաղափարի մեջ: Տերությունների միջև Հայաստանը բաժանելու փոխարեն Բրիտանիան այժմ ձգտում էր ունենալ մեկ՝ միասնական, ինքնուրույն Հայաստան: 1918 թ. նոյեմբերի 18-ին Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատում կայացած քննարկման ժամանակ պառլամենտականները հանգում են այն որոշմանը, որ Մեծ Բրիտանիան պետք է ստանձներ Հայաստանի կազմավորման գործը: Նորաստեղծ

[1]Armenia's Charter, An Appreciation of the Services of Armenians to the Allied, London, 1918, pp. 3-11.
[2] Ջ. Կիրակոսյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972, էջ 386-387:
[3]Papers Relating to the Foreign Relations of the United States: Russia, 1918, Part I, p. 331.

Հայաստանն, ըստ անգլիացիների, պետք է ընդգրկեր հայկական վեց վիլայեթն ու Կիլիկիան: Արտգործնախարարի օգնական լորդ Ռոբերտ Սեսիլը չանդրադառնալով սահմաններին՝ հայտարարում էր, որ անհնար էր թույլ տալ Հայաստանի որևէ բաժանում և որ անկարելի էր անգամ պատկերացնել թուրքական իշխանության որևէ նշույլ Հայաստանում[1]:

Հայկական հարցի նկատմամբ հետպատերազմյան նոր քաղաքականությունը քննարկման էր ենթարկվում և ձևավորվում Մեծ Բրիտանիայի պետական ապարատի ամենագլխավոր մարմիններից երկուսում՝ Կայսերական ռազմական նախարարությունում և արտգործնախարարության Արևելյան կոմիտեում: Նշված մարմինները հայկական խնդիրը չառանձնացնելով Մերձարևելյան ընդհանուր շղթայից՝ բացառապես դիտարկում էին այն ավելի լայն՝ Կովկասյան խնդիրների շրջանակներում, որի մեջ Մեծ Բրիտանիան ներքաշվել էր պատերազմի ավարտին:

Կովկասյան տարածաշրջանում Բրիտանիայի նոր դրսևորումները կապված էին քաղաքական նոր իրավիճակի հետ: Առաջին աշխարհամարտի ստեղծած բազմաթիվ խնդիրներին ավելացել էր ևս մեկը՝ գաղափարական և քաղաքական նոր ուժի առկայությունը: Ցարական կառավարության տապալումից հետո ժամանակավոր կառավարության և բոլշևիկների իշխանության հաստատումը Ռուսաստանում, փաստորեն, բարդություններ էր առաջ բերել բրիտանական դիվանագետների համար: Ելնելով դրանից՝ Կովկասյան տարածաշրջանում ստեղծված նոր հանրապետությունները, կարող էին հիանալի ձեռքբերում դառնալ Մեծ Բրիտանիայի համար: Դրանք անգլիացիներին հնարավորություն էին տալիս Ռուսաստանի՝ տվյալ պահին արդեն բոլշևիզմի դեմ պայքարում աջակից ուժ ունենալ: Այդ ուժն ունենալու համար՝ բրիտանական դիվանագետները նախ և առաջ պետք է ապահովեին Ռուսաստանից անկախացած այդ պետությունների գոյությունը: Իսկ Ռուսաստանի թուլացման քաղաքականությունը հետապնդում էր երկու նպատակ. առա-

[1] Great Britain, Parliamentary Debates (House of Commons), 5-th ser.,vol. 110 (15 Oct.-21 Nov. 1918), Col. 3268.

ջին՝ ստեղծել բուֆերային մի շարք միավորներ Ռուսաստանի և Մերձավոր Արևելքի՝ Մեծ Բրիտանիայի հե-տաքրքրությունների գոտու միջև, երկրորդ՝ կանգնեցնել բոլշևիկյան հեղափոխության տարածման վտանգը, որն ուղղակի, ըստ անգլիացիների, սպառնալիք էր ավանդական հասարակության համար:

Այս ծրագրերի քննարկումներն իրենց արտացոլումն էին գտել Կայսերական գլխավոր շտաբի պետ, գեներալ Հենրի Հագիսի հուշագրում: Հուշագիրը ենթադրում էր. առաջին՝ աջակցել հակաբոլշևիկյան ուժերին, երկրորդ՝ գրավել Կովկասի կարևոր հենակետերը, երրորդ՝ ստեղծել անկախ պետությունների շարք և աջակցել բոլշևիկների դեմ նրանց պայքարում: Հագիսի հուշագիրը հաստատվել էր արտաքին գործերի և ռազմական նախարարությունների կողմից 1918 թ. նոյեմբերի 4-ին: [1]

Սակայն Մեծ Բրիտանիան չէր պատրաստվում ստանձնել նորաստեղծ պետությունների վերահսկողությունը: Նա չէր ցանկանում նաև երկարաժամկետ մնալ Կովկասում: Արևելյան կոմիտեի ազդեցիկ դեմքերից շատերը՝ Ռ. Սեսիլը, արտգործնախարար Արթուր Բալֆուրը, Հնդկաստանի գործերով նախարար Էդվին Սամուել Մոնթեգյուն, ցանկանում էին, որ Մեծ Բրիտանիան անմիջապես դուրս հաներ իր զորքերը Կովկասից: Նրանք մտավախություն ունեին, որ սեփական երկրի ֆինանսական ծանր կացությունը, ինտերվենցիայի դեմ ձևավորված ընդդիմության առկայությունը, երկրի ներքին կյանքի վերականգնման պահանջն ու հնարավոր դեմոբիլիզացիան, դաշնակիցների զորքերի հոգեբարոյական վիճակի անկումը, ինչպես նաև եվրոպական տերությունների միջև միասնականության բացակայությունը, անհնարին կդարձնեին Մեծ Բրիտանիայի համար Ռուսաստանի հարավում հենակետ պահելը:[2]

Միայն Արևելյան կոմիտեի նախագահ լորդ Քըրզոնն էր, որ պաշտպանելով գլխավոր շտաբի կարծիքը՝ դեմ էր բրիտանական

[1] Richard H. Ullman, Anglo-Soviet Relations, 1917-1921, Vol. II: Britain and the Russian Civil War, Nov. 1918- Feb. 1920, New Jersey, 1968, pp. 11-13.
[2] Richard H. Ullman, Anglo-Soviet Relations, 1917-1921, Vol. II: Britain and the Russian Civil War, Nov. 1918- Feb. 1920, New Jersey, 1968, pp. 71-75.

զորքերի շտապ հեռացմանը Կովկասից: Նա հիմնավորում էր, որ նման քայլը կհանգեցներ այստեղ ազգամիջյան կռիվների և ջարդերի: Բացի դա, նա առաջարկում էր դեռ որոշ ժամանակ պահել զորքերը Կովկասում՝ որպես հաղորդակցության կարևոր ուղիների և Բրիտանիայի համար անհրաժեշտ Բաքվի նավթի պաշարների պահապան:

Աշնանային քննարկումներն այս հարցի շուրջ շարունակվում են դեկտեմբերին: Դեկտեմբերի 16-ին լորդ Քըրզոնը ներկայացնում է Արևելյան Կոմիտեի ժողովին 13 կետից բաղկացած բանածև: Բանածևը, չնայած արժանացած քննադատությանը, ընդունվեց որպես Կովկասի վերաբերյալ բրիտանական քաղաքականության հիմնական ուղեցույց:

Կոմիտեի անդամները քննարկումների ընթացքում եկել էին այն որոշմանը, որ լորդ Քըրզոնի՝ ընդհանուր բնույթ կրող ձևակերպումներն ենթակա էին փոփոխությունների՝ իրադարձությունների հետագա զարգացումներին համապատասխան:

Այսինքն՝ պարզ է դառնում, որ բրիտանական դիվանագիտությունը հստակ պատկերացում չուներ իր հետագա քայլերի վերաբերյալ: Ամեն բան հետածգվում է մինչև խաղաղության վեհաժողովի որոշումների կայացումը: Նշված հարցերում Մեծ Բրիտանիայի անորոշ դիրքի մասին է վկայում ռազմական նախարար լորդ Ալֆրեդ Միլլերի մասնավոր նամակը: Նախարարը գրում էր, որ տվյալ պահին Մեծ Բրիտանիան պատրաստ էր օգնել ցանկացած կողմի, որը կարող էր պայքար մղել բոլշևիզմի դեմ և կանգնեցնել նրա առաջընթացը:[1] Սակայն ըստ Միլլերի՝ իրավիճակը բարդանում էր, քանի որ դժվար էր ընդհանրապես գտնել նման ուժ, և բոլշևիզմի դեմ պայքարում ընդհանրապես չկար համախմբվածության որևէ նշույլ:

Այնուամենայնիվ, Քըրզոնի բանածևի 13 կետերից առաջինն ամրապնդում էր նախկին ռուսական կայսրության սահմանային տարածքներում, մասնավորապես Կովկասում, ուժեղ, անկախ պետություն տեսնելու Մեծ Բրիտանիայի ցանկությունը: Տարածաշրջանում

[1] Ibid., p. 61.

արդեն կազմավորված պետությունների շարքում Անգլիայի կողմից ճանաչելու նախապատվությունը տրվում էր ավելի առաջադեմ Վրաստանին: Ինչ վերաբերվում էր մյուս երկրներին՝ Դաղստանին, Ադրբեջանին, ինչպես նաև Հայաստանին, ապա դրանք կճանաչվեին միայն իրադարձությունների հետագա բարենպաստ ընթացքի և երկրների կողմից իրենց ինքնավարության ամրապնդման դեպքում:[1]

Թեպետ, Հայաստանը բանաձևում կցվել էր երկրների երկրորդ շարքին, Մեծ Բրիտանիայի համար ամենևին նշանակություն չուներ, թե երբ և ինչպես Հայաստանի հանրապետությունը կամրապնդեր իր ինքնավարությունը: Անկախ հանրապետության ճանաչման խնդիր չկար, ավելին, անկախ Հայաստան տեսնելու գաղափարը չէր սահմանափակվում միայն Արևելյան Հայաստանով: Ինչպես արդեն նշվել է, պատերազմի հենց ավարտից հետո բրիտանացիներն առաջ էին քաշել մեծ Հայաստան ստեղծելու գաղափարը, որի մեջ ընդգրկված էր նաև Արևմտյան Հայաստանը: Այսինքն՝ պարզ էր դառնում, որ Արևելյան Հայաստանի անկախության սատարումը Մեծ Բրիտանիայի կողմից ուղղված էր ոչ միայն Ռուսաստանի դիրքերի թուլացմանը, այլև սերտորեն կապված էր մեկ այլ՝ Օսմանյան Թուրքիան թուլացնելու և նրա տարածքում նոր, ուժեղ, քրիստոնյա հայկական պետություն ստեղծելու ձգտման հետ:

Թուրքիան թուլացնելու անհրաժեշտությունն էլ բխում էր նրանից, որ նա երբևէ չկարողանար սպառնալ Մեծ Բրիտանիայի հաղորդակցական ուղիներին Պարսից ծոցի և Սուեզի ջրանցքի շրջանում: Բացի դա, թուլացած Թուրքիան չէր կարող ո՛չ բարոյապես, ո՛չ նյութապես աջակցել անգլիացիների քաղաքականությունից դժգոհ Մերձավոր Արևելքի և Հնդկաստանի մահմեդականներին:

Այսինքն՝ մեծ և միացյալ Հայաստանի ստեղծումն օրվա արդիական խնդիրներից էր Բրիտանիայի համար: Այս կապակցությամբ Բրիտանիայի պետական շահը պաշտոնական ձևակերպում էր ստացել 1918 թ. նոյեմբերի 21-ին շրջանառության մեջ դրված արտգործ-

[1] Great Britain, Eastern Committee, 43-rd meeting, 16 Dec., 1918, Cab. 27/24.

նախարարության՝ միացյալ Հայաստանի ստեղծման մասին հուշագրում:[1]

Հուշագրին կից ներկայացվում էր նաև միացյալ Հայաստանի քարտեզը: Սահմանների գծման կապակցությամբ հուշագրում հստակ ձևակերպվել էր Ֆորին Օֆիսի այն դրսևորումը, որ վերջապես կշտկվեն հայերի նկատմամբ թույլ տրված բոլոր սխալները: Համաձայն ներկայացրած քարտեզի՝ միացյալ Հայաստանի սահմանն արևմուտքում Մերսինից (Միջերկրական ծով) ձգվում էր մինչև Օրդու (Սև ծով), արևելքում սահմանը սկսվում էր Ալեքսանդրետից հարավ և ձգվում դեպի արևելք Տավրոսյան լեռնաշղթայով հասնելով պարսկական սահմանին՝ Վանա լճից հարավ ընկած շրջանում: Նոր Հայաստանն ընդգրկում էր նաև Ռուսական Հայաստանը՝ բացառությամբ Ախալքալաքի, Ախալցխայի և Ղարաբաղի:

Քանի որ արտգործնախարարության նոյեմբերյան հուշագիրը ներկայացվել էր Արևելյան Կոմիտեին արդեն դեկտեմբերի 2-ին: Դեկտեմբերի 16-ի նիստի ժամանակ լորդ Քըրզոնը հիմնավորել էր նաև միացյալ Հայաստանի ստեղծման առումով Մեծ Բրիտանիայի շահագրգռվածությունը: Ըստ Քըրզոնի՝ Մեծ Բրիտանիային անհրաժեշտ էր, անկախ ներկայի քաղաքական շահերից և թե ժամանակին տրված իր խոստումներից, ստեղծել հայկական պետություն, որը վաղ թե ուշ, անկախ իր չափերից, կդառնար ինքնավար հասարակություն: Անհրաժեշտության հիմնական պատճառները հետևյալներն էին: Առաջին՝ տեղահանված հայ ժողովրդի համար ստեղծել ազգային օջախ: Առանց դրա՝ հայ ժողովուրդը, սփռված հիմնականում քրդերով և թուրքերով բնակեցված տարածքներում, ամեն վայրկյան վտանգի և սարսափի առջև կանգնած, չէր կարող ոչ միայն ինքնավար գոյության հասնել, այլև հաստատուն կյանք վարել: Երկրորդ՝ հայկական պետության միջոցով բրիտանացիները ցանկանում էին պատնեշ կանգնեցնել պանթուրքիզմի դեմ, որը կարող էր ներթափանցել Կովկաս, և ընդհանրապես մեծ վտանգ հանդիսանալ Մերձավոր Արևելքի երկրների համար: Երրորդ՝ անգլիացիները ցանկա-

[1] Great Britain, Eastern Committee, 2525, 21 November, 1918, Cab. 2737.

նում էին նաև Կովկասի ուղղությամբ պատնեշ ապահովել եթե ոչ ներկայի, ապա ապագայի վտանգի՝ ցանկացած տերության ոտնձգությունների դեմ:[1]

Արևելյան Կոմիտեի քննարկումներից ակնհայտ էր դառնում նաև, որ մեծ Հայաստանի ստեղծման հետ մեկտեղ Մեծ Բրիտանիան այստեղ ցանկանում էր տեսնել հովանավորող հզոր արևմտյան տերություն, քանի որ նորաստեղծ Հայաստանը, ըստ անգլիական դիվանագիտության, չէր կարող դիմակայել ո՛չ Ռուսաստանին, ո՛չ էլ պանթուրքական և պանիսլամիստական ճնշումներին: Ուստի դեկտեմբերի 16-ի՝ լորդ Քըրզոնի բանաձևի 7-րդ կետը ենթադրում էր, որ խաղաղ վեհաժողովում Մեծ Բրիտանիան առաջ կքաշեր Կովկասյան պետությունների վերաբերյալ ԱՄՆ-ի մանդատի հարցը: Միացյալ նահանգների ընտրության վերաբերյալ հուշագրի նշված կետում ներկայացվում էր յուրօրինակ հիմնավորում: Ըստ Քերզոնի՝ ԱՄՆ-ի ընտրությունն ինքնին ցանկալի չլինելով, գերադասվում էր Ֆրանսիայի ընտրությանը, որը թե՛ քաղաքական, թե՛ ռազմավարական առումով ընդհանրապես անցանկալի էր անգլիացիների համար:

Մեծ Բրիտանիան ցանկանում էր, որ մանդատ ստացող պետությունը պատասխանատվություն ստանձներ ոչ միայն Կովկասի, այլև ամբողջ Հայաստանի նկատմամբ: Այդ մասին նշվել էր արտգործնախարարության դեռևս 1918 թ. նոյեմբերի 7-ի հուշագրում: Հուշագրում հայտարարվում էր, որ Հայաստանի վերաբերյալ «Մեծ Բրիտանիայի քաղաքականության հիմնական գիծը ներկայիս անկախ կառավարության՝ «Երևանի հանրապետության» ճանաչումն էր[2]: Մեծ Բրիտանիան դեմ չէր Արևմտյան Հայաստանին միանալու անկախ հանրապետության ցանկությանը: Դրան հաջորդող բնականոն արդյունքը կլիներ այն, որ Հայաստանի մանդատը ստանձնող տերությունը կտարածեր իրավասություններն ամբողջ՝ միացյալ պետության վրա:

Մանդատ ստանձնող երկրի ընտրության հարցում անհամաձայնությունն անգլիացիների շրջանում լուծվեց հօգուտ ԱՄՆ-ի:

[1] Great Britain, Eastern Committee, 40-th meeting, 2 Dec., 1918, Cab. 27/24.
[2] Great Britain, Eastern Committee, 2359, 7 Nov.,1918, Cab. 27/36.

Բանն այն է, որ ռազմական կաբինետի և գլխավոր շտաբի մեծ մասի համոզմամբ Հայաստանի մանդատի առաջարկը Ֆրանսիային չափազանց կընդլայներ նրա ազդեցությունը Մերձավոր Արևելքում: Ռազմական վերնախավի կարծիքով՝ Մեծ Բրիտանիան առանց դրա էլ շատ առատաձեռն էր գտնվել Ֆրանսիայի նկատմամբ՝ պատերազմի ընթացքում վարած բանակցություններում: Ժամանակն էր վերջ տալ նախկին համաձայնություններին՝ նոր դաշինք ստեղծելով ԱՄՆ-ի հետ: ԱՄՆ-ի ընտրությանը, որպես Հայաստանի մանդատատարի, պետք է առավելություններ ապահովեր Բրիտանիային, քանի որ Ամերիկան Կովկասում որևէ վտանգ չէր առաջացնի իրենց համար:

Սակայն մի խումբ բարձրաստիճան պաշտոնյաներ, հիմնականում առևտրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, դեմ էին ԱՄՆ-ին մանդատ հատկացնելուն: Նրանք հիմնավորում էին իրենց դիրքորոշումն այն մտավախությամբ, թե ամերիկացիները՝ նպատակ ունենալով քայքայել Բրիտանական կայսրության հիմքերը[1], ամեն կերպ ձգտում էին տնտեսական ներխուժում իրականացնել դեպի Մերձավոր Արևելք:

Ամերիկյան մանդատի դեմ հանդես էր գալիս լորդ Սեսիլը: Նա գտնում էր, որ մանդատը միանշանակ պետք է հանձնվեր Ֆրանսիային: Ֆրանսիացիների համեմատ ամերիկացիներին համարելով ավելի քիչ իմպերիալիստ՝ նա, այնուամենայնիվ, կարծում էր, որ վերջիններն երբեք չեն ստանձնի մշտական պատասխանատվություն Կովկասում և չեն պաշտպանի այդ տարածաշրջանը Ռուսաստանից այնքան լավ, որքան դա կարվեր Ֆրանսիայի կողմից:

Ինչևէ, բրիտանական կառավարության մեծամասնությունը որևէ լուրջ անհարմարություն չէր տեսնում՝ Հայաստանում ամերիկացիների հայտնվելու հետ կապված: Ավելին, ներքաշելով Միացյալ Նահանգները Մերձավոր Արևելքի տնտեսապես ոչ կարևոր և քաղաքականապես անկայուն մի տարածաշրջան, անգլիացիներն ամենևին չէին վտանգում Բրիտանիայի տնտեսական շահերը, այլ

[1] Max Beloff, Imperial Sunset, Vol. I: Britain's Liberal Empire 1897-1921, London, 1961, pp. 280-281.

ընդհակառակը, դա կնպաստեր Միջագետքում Բրիտանիայի նոր ձեռքբերումների վերաբերյալ ԱՄՆ-ի համաձայնմանը: Այսինքն՝ Հայաստանը, անգլիացիների կողմից որպես կաշառք, օգտագործվում էր նավթով հարուստ Միջագետքի շրջան՝ ԱՄՆ-ի տնտեսական ներխուժման ծրագրերն ու փորձերը բացահայտելու համար:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ԱՄՆ-ին մանդատային տարածք տրամադրելով, Մեծ Բրիտանիան, ինչպես և մյուս դաշնակիցները, պատրաստվում էր մշտական հսկողության տակ պահել ոչ միայն ամերիկյան գործնական ներկայությունը, այլև դրա տևականությունը:

Ինչ վերաբերում էր ամերիկացիներին, ապա նրանք մերձարևելյան «կարգավորումներում» իրենց սեփական ծրագրերն ունեին:

Առաջին համաշխարհային պատերազմը հնարավորություն տվեց ԱՄՆ-ին ոչ միայն միջամտել Մերձավոր Արևելքի խնդիրներին, այլև փորձել այստեղ որոշակի դիրք գրավել և օգտվել տարածաշրջանի հարստությունից: Հին աշխարհի քաղաքական անցուդարձին խառնվելով՝ ամերիկացիները ստիպված էին որդեգրել այնպիսի դրսեվորումներ, որոնք ի սկզբանե հակասում էին իրենց շահերին: Այսպես, նրանք ստիպված եղան ոչ միայն մասնակցել պատերազմին, այլև հակառակ իրենց ծրագրերի՝ համաձայնվել Թուրքիայի մասնատմանը:[1] Հայկական հարցի վերաբերյալ ամերիկացիների կողմնորոշումները նույնպես հակասական էին:

Խորը համակրանքով վերաբերվելով հայերին՝ ամերիկացիները միևնույն ժամանակ փորձում էին հեռու մնալ նրանց խնդիրներից: Ամերիկյան կառավարությունը հասկանում էր, որ հայերին օգնելու հաստատակամությունը կարող էր իրենց գցել դաշնակիցների՝ մասնավորապես բրիտանացիների հյուսած ծուղակը: Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության կողմից 1918 թ. նոյեմբերի 27-ի՝ Հայաստանի մանդատի վերաբերյալ արված առաջարկը հենց այդպես էլ ընկալվեց ԱՄՆ-ի պետական այրերի կողմից: Դա էր պատճա-

[1] John Denovo, American Interests and Policies in the Middle East 1900-1939, Minneapolis, 1965, p.109.

ռը, որ ամերիկացիները Հայաստանի մանդատը ստանձնելու առաջարկով դիմեցին Ֆրանսիային և Մեծ Բրիտանիային:[1] Ամերիկացիների առաջարկը չէր սահմանափակվում միայն Հայաստանով: Ամերիկյան դիվանագետները հորդորում էին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին դաշնակիցների հետ փոխզիջման գնալ: Այսինքն՝ հնարավորություն տալ Ֆրանսիային և Բրիտանիային իրենց համար ապահովել այն տարածքները, որոնք բաժին էին ընկել յուրաքանչյուրին՝ համաձայն գաղտնի պայմանագրերի: Դա չէր դիտարկվելու որպես բացահայտ զավթախուժում, այլ ընդամենը պիտի ապահովեր մանդատ ստանձնած երկրի կարգավիճակ Ազգերի Լիգայի վերահսկողության ներքո: Այս վերահսկողությունը կթուլացներ մանդատատար պետության իշխանությունը տվյալ տարածքում և ըստ այդմ հնարավորություն կստեղծեր ԱՄՆ-ի տնտեսական ներթափանցման համար:[2]

Դաշնակիցները թեպետև ընդունել էին ամերիկացիների հրավեր-առաջարկը, ամենևին չէին պատրաստվում անգամ տնտեսական ասպարեզում տեղ հատկացնել ԱՄՆ-ին այն տարածաշրջաններում, որոնք վաղուց ի վեր իրենց սեփական հետաքրքրությունների ոլորտն էին կազմում:

Մերձավոր Արևելքի խնդիրները պարզաբանելու, դաշնակիցների հետ ճիշտ հարաբերություններ ձևավորելու, պատերազմի առաջադրած խնդիրներին պատշաճ լուծումներ տալու, խաղաղության վեհաժողովում արդյունավետ աշխատանք ապահովելու նպատակով ԱՄՆ-ի կառավարությունը դեռ պատերազմի ընթացքում ստեղծել էր հետազոտական հատուկ հանձնաժողով՝ հայտնի որպես «Inquiry» (հետազոտություն): Ստեղծված հանձնաժողովը Մերձավոր Արևելքի վերաբերյալ ամենաբովանդակ ուսումնասիրությունն էր ներկայացրել նախագահ Վ. Վիլսոնին 1918 թ. հոկտեմբերին: Ուսումնասիրությունը վերնագրված էր «Թուրքական կայսրության արդար և իրական սահմանների մասին զեկուցագիր»: Զեկու-

[1] Harry N. Howard, The King-Crane Commission, Beirut, 1963, p.10.
[2] L. Evans, The United states Policyand The Partition of Turkey 1914-1924, Baltimore, 1965, pp. 94-95.

ցագիրը նշում էր, որ Միջին Արևելքում երկրների սահմանները որոշելիս անհրաժեշտ էր ղեկավարվել միայն ազգային և կրոնական մոտեցումներով: Նույնն անհնար էր անել Մերձավոր Արևելքի վերաբերյալ: Հայաստանի, Թուրքիայի, Միջագետքի, Քրդստանի, Սիրիայի, Պաղեստինի և Արաբիայի սահմանները որոշելիս անհրաժեշտ էր նաև նկատի ունենալ այնպիսի հանգամանքներ, ինչպիսին էին՝ լեզուն, տնտեսությունը, տեղա- գրությունը, ռազմավարությունը: Հայաստանի վերաբերյալ մասնավորապես նշվում էր, որ հայկական անջատ պետությունը կարող էր ստեղծվել, եթե Կ. Պոլիսն ու նեղուցները միջազգայնացվեին, և ի հայտ գար պետություն, որը կստանձներ ամբողջ Հայաստանի մանդատը:[1] Իսկ այն, որ հայ ժողովրդին անհրաժեշտ էր ինքնավարություն տալ, «Հետազոտություն» հանձնաժողովում ընդգրկված դիվանագետները դեռևս 1917-1918 թթ. ընթացքում բազմիցս զեկուցել էին նախագահ Վիլսոնին:[2] Իսկ 1918 թ. դեկտեմբերի 10-ին անկախ Հայաստան ստեղծելու բանաձևով Սենատում հանդես է գալիս սենատոր Հենրի Քէբոթ Լոդջը:[3]

Ամերիկյան դիվանագետներն այն համոզմունքին էին, որ անհրաժեշտ էր Ռուսական և Թուրքական մասերից ստեղծել Միացյալ Հայաստան, որը կդրվեր Ազգերի Լիգայի ենթակա մանդատատար պետության հովանու տակ: Նրանք հայտարարում էին, որ բնությունն ինքն էր գծել Հայաստանի սահմանները. Անտիտավրոսյան լեռներն արևմուտքում և Տավրոսի լեռները հարավում ընդգծում էին Հայաստանի քարտեզը: Ըստ «տեղեկատվական բաժանմունքի»[4] զեկուցա-գրերի՝ Հայաստանը պետք է ընդգրկեր հայկական վեց վի-

[1] L. Gelfand, The Inquiry: American Preparations for Peace, 1917-1919, London, 1963, pp. 248-249.
[2] R. G. Hovhannisian, The Allies and Armenia, 1915-1918, Journal of Contemporary History, Vol.3, N1, January, 1968, pp. 151-154.
[3] Congressional Records, Senate, 10 December,1918, Res. N 237.
[4] Փարիզի վեհաժողովի նախօրյակին «Հետազոտություն հանձնաժողովը» որպես պատվիրակության խումբ մեկնում է Փարիզ: Այն վերանվանվում է որպես «Խաղաղ բանակցությունների ամերիկյան հանձնաժողովի տարածքային, տնտեսական և քաղաքական տեղեկատվական բաժանմունք»: Տես՝ Lawrence E. Gelfand, The Inquiry: American Preparations For Peace, 1917-1919, New Haven, London, 1963, p. xii.

լայեթները, Կիլիկիան, Սև ծովի մերձափնյա շրջանը՝ Տրապիզոն նավահանգստով, ինչպես նաև՝ Ռուսական Հայաստանի Կարս, Երևան նահանգներն ու Ախալքալաք ու Ախալցխա շրջանները:[1]

Համաձայն «տեղեկատվական բաժանմունքի»՝ միացյալ Հայաստանի ստեղծման համար խանգարող հանգամանքներ կային, այն է՝ Հայաստանի սահմաններում հայերը կազմելու էին ամբողջ բնակչության մոտավորապես 35 տոկոսը: Որպեսզի հայերի թիվը ավելանար, ամերիկյան դիվանագետները խորհուրդ էին տալիս Դարաբաղն ու Ալեքսանդրետը նույնպես ընդգրկել միացյալ Հայաստանի կազմի մեջ: Սակայն այս դեպքում հայերը կկազմեին ընդհամենը 40 տոկոս՝ կրկին մեծամասնություն չապահովելով: Այս պատճառով էլ հանձնաժողովի անդամներն առաջարկում էին ՝ հնարավոր առարկությունների դեպքում պարզապես բացատրել, որ հայերին ինքնավարություն հատկացնելը ուղղակի «պատմական սխալների շտկում էր և դա անհրաժեշտ էր իրականացնել»:[2]

Ինչևէ, անկախ այս նախնական քննարկումների և կարծիքների, թե՛ բրիտանացիները և թե՛ ամերիկացիները մասնակցելով խաղաղ վեհաժողովի աշխատանքներին, հայկական հարցի վերաբերյալ իրենց քաղաքականությունը ձևավորում էին՝ ելնելով իրադարձությունների նոր զարգացումներից: Իհարկե անցյալի հետ կապը կար, և դրանով էին պայմանավորված երկու տերությունների միջև եղած քաղաքական դրսևորումների տարբերությունները: Իսկ հիմնական տարբերությունը հետևյալն էր. Մեծ Բրիտանիան ավելի շատ պատասխանատվություն էր կրում հայերի համար, քանի որ հայերը բավական կարևոր դեր էին խաղացել բրիտանական պատերազմյան քաղաքականության մեջ:[3] Ինչ վերաբերվում էր Միացյալ նահանգներին, ապա նա ոչ միայն որևէ պատասխանատվություն չէր կրում հայերի համար, այլև առանձնակի շահագրգռվածություն չու-

[1] Richard Hovhannisian, The Republic of Armenia, Vol. I, The First Year 1918-1919, Berkley, 1977, p. 265.
[2] Ibid.
[3] Armenia's Charter, An Appreciation of the Services of Armenians to the Allied, London, 1918, p. 7.

ներ Հայկական պետության ստեղծման և գոյատևման վերաբերյալ: Հայերի նկատմամբ նրանց դիրքորոշումը պարզապես քաղաքական չեզոքության և մարդասիրական զգացմունքների յուրատեսակ խառնուրդ էր:

Ընդհանրացնելով՝ կարելի է նշել, որ 1918-19 թթ. շեմին Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի քաղաքական դրսևորումները Հայկական հարցի վերաբերյալ հիմնականում միանման էին: Նրանք երկուսն էլ ցանկանում էին ստեղծել մեծ Հայաստան, սակայն երկուսն էլ չէին պատրաստվում որևէ զոհաբերություն անել այդ գաղափարն իրականություն դարձնելու համար և մեկը մյուսին առաջարկություններ անելով՝ փորձում էին խուսափել ցանկացած պատասխանատվությունից:

АРМЕНУИ ГАМБАРЯН
ИИ НАН РА

ДИПЛОМАТИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ВЕЛИКОБРИТАНИИ И США В АРМЯНСКОМ ВОПРОСЕ ПОСЛЕ ОКОНЧАНИЯ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

РЕЗЮМЕ

В политике Великобритании и США по отношению к армянским проблемам непосредственно после окончания Первой мировой войны проявились новые подходы.

Если в годы войны государственные деятели Великобритании выступали в зашиту армян и в то же самое время планировали раздел Армении, то к концу войны и непосредственно после нее ситуация изменилась.Теперь интересы Великобритании требовали создания единой, объединенной (Восточной и Западной), независимой Армении. Наличие самостоятельной Армении было необходимо для ослабления России, борьбы с большевизмом, создания буфера между Россией и ближневосточной зоной интересов Великобрита-

нии, а также ослабления османской Турции и создания преграды против распространения пантюркистских планов.

Однако, в планы Великобритании не входило закрепление собственных позиций на Кавказе. Для новосозданного слабого государства Великобритания предусматривала покровительство одной из великих держав. Было решено мандат Армении предложить США, одновременно контролируя действия последнего.

Что касается США, то американцы тоже выступали за создание единой , объединенной и независимой Армении. Однако, несмотря на благосклонное отношение к армянам, американские политики не желали быть вовлеченными только из соображений милосердия в проблемы малых народов. Предложение Великобритании принять мандат Армении воспринимался со стороны США в качестве западни для вовлечения в противоречия европейских держав и американцы сами начали выступать со встречными, но подобными же предложениями.

Британские и американские дипломаты, пытаясь избежать отстранить всякую ответственности, откладывали принятие решений, ожидая результатов работы предстоящей мирной конференции.

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ 1917 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայկական հարցի պատմության մեջ 1917 թ. Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների միջև ընկած ժամանակահատվածն առանձնանում է որպես ուրույն փուլ: Հենց այդ ժամանակահատվածում է, որ Անտանտի պետությունների պատերազմական ծրագրերում հայ ժողովրդի ու Արևմտյան Հայաստանի ճակատագրի հարցերը սկսեցին դիտարկվել ճնշված ժողովուրդների ազատագրության, նրանց արդար իրավունքների պաշտպանության համատեքստում, իսկ հայ հասարակական-քաղաքական կուսակցությունները ու հոսանքները, օգտվելով բարենպաստ իրադրությունից, նորովի առաջ քաշեցին Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը:

Սույն աշխատանքի նպատակն է՝ ներկայացնել Պողոս Նուբարի Ազգային պատվիրակության և Հակոբ Զավրյանի ու Գարեգին Բաստրմաջյանի առաքելությունների ծրագրերն Արևմտյան Հայաստանի ինքնավարության վերաբերյալ, որոնց շուրջ 1917 թ. ընթացքում նրանք բանակցություններ են վարել Անտանտի դաշնակից պետությունների ներկայացուցիչների հետ:

1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում և ԱՄՆ-ի մուտքն Առաջին համաշխարհային պատերազմ պատմական նշանակալի իրադարձություններ էին, որոնք ոչ միայն ազդեցին պատերազմի ընթացքի վրա, այլև բեկումնային նշանակություն ունեցան միջազգային քաղաքականության համար: Որոշակի եղավ դրանց ազդեցությունը նաև հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող Հայկական հարցի վրա: Վերջինս, պահպանելով իր միջազգային բնույթը, դեռևս 1916 թ. աշնանից ձեռք էր բերել նոր բովանդակություն. դարձել էր ռուսական պետության ներքին հարց: Դա բացատրվում էր երկու հանգամանքով:

Նախ, օսմանյան «ժառանգության» մասնատման վերաբերյալ 1916 թ. ապրիլ-օգոստոսին ստորագրված անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերով Արևմտյան Հայաստանի մեծ մասն անցել էր Ռուսաստանին[1]: Ապա, դրան միաժամանակ, Կովկասյան ռազմաճակատում ռուս-թուրքական ռազմական գործողություններն ավարտվել էին և ռազմաճակատի գիծը սկսել էր կայունանալ: Այս պայմաններում միապետության տապալումն ու հանրապետության հռչակումը Ռուսաստանում նշանակում էին անցում ժողովրդավարության և ցարիզմի հակահայկական քաղաքականության փոխարինում ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականությամբ: Վերջինս հիմնված էր ազգային սահմանափակումների վերացման, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքների վրա: Ահա թե ինչու Ժամանակավոր կառավարությունը պատրաստակամ էր ապահովել հայ տարրի ֆիզիկական գոյությունն Արևմտյան Հայաստանում, կազմակերպել իր հայրենիքից հարկադրաբար հեռացած հայ բնակչության վերադարձն, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում հիմնել քաղաքացիական կայուն վարչաձև[2]: Դա հույս էր ներշնչում հայ ժողովրդի տարբեր խավերին, որ ժողովրդավարական Ռուսաստանի աջակցությամբ հնարավոր է հասնել Հայկական հարցի արդարացի լուծման: Իսկ այդ իղձը 1917 թ. դեռևս հանգում էր Ռուսաստանի ժամանակավոր կառավարության կողմից Արևմտյան Հայաստանին ինքնավարություն շնորհելու գաղափարին[3]:

Շուտով, 1917 թ. ապրիլին Քառյակ միության դեմ պատերազմի մեջ մտավ մինչ այդ չեզոք ԱՄՆ-ը, որը լուրջ կշիռ ուներ հա-

---

[1] Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան: Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, Աշոտ Հովհաննիսյանի առաջաբանով, Ե., 1926, փաստաթուղթ № 60 և 61, էջ 50-53:

[2] Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 374, ց. 1, գ. 1, թ. 3-20, ֆ. 222, ց. 1, գ. 111, թ. 130-131: Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, էջ 15, 18-19: Մելիքյան Վ.Հ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Ե., 1997, էջ 148-149, 170:

[3] Տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 151, թ. 4, 14-16, 27: Տես նաև Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents. Edited and translated by Vatche Ghazarian, Valtham, 1996, p. 432-433.

մաշխարհային տնտեսության մեջ: Ամերիկյան մի քանի հարյուր հազարանոց զինված ուժի տեղափոխումն Ատլանտյան օվկիանոսով դեպի Արևելք և նրա մասնակցությունն Արևմտյան Եվրոպայում ընթացող ռազմական գործողություններին, աննախադեպ ծավալուն անդրօվկիանոսյան ձեռնարկում էր, որը վկայում էր միջազգային քաղաքական ասպարեզում ևս խիստ ազդեցիկ ուժի ի հայտ գալը[1]:

Վերոնշյալ իրադարձությունները ստիպեցին Անգլիային և Ֆրանսիային ճշգրտումներ մտցնել ինչպես իրենց պաշտոնապես հռչակված պատերազմական նպատակներում, այնպես էլ դաշնակից երկրների, մասնավորապես Ռուսաստանի և ԱՄՆ-ի հետ հարաբերություններում: Ի՞նչ ուղղվածություն ունեին այդ ճշգրտումները Հայկական հարցի առնչությամբ: Ռուսաստանում բուրժուադեմոկրատական հեղափոխության հաղթանակը, ապա պատերազմի մեջ ԱՄՆ-ի մտնելն Անտանտի երկրների քաղաքական օրակարգ բերեցին բռնազավթումների սկզբունքից հրաժարվելու և մեծ տերությունների աջակցությամբ ճնշված ժողովուրդներին ինքնավարություն տրամադրելու հարցը՝ դրանով իսկ լուրջ հարված հասցնելով 1916 թ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերին: Այլևս անհնար էր շարունակել գործել դրանց ոգով[2]: Ուստի մեծ տերությունների կառավարող շրջաններում իրենցից յուրաքանչյուրի պետական շահերին համապատասխան որոշակիացվում էր վերաբերմունքը նաև Հայկական հարցի նկատմամբ: Այժմ արդեն կարևորվում էին ազատ ապրելու հայ ժողովրդի դարավոր իղձը, եղեռն տեսած հայերի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունը: Հայաստանի և հայ ժողովրդի ապագան դիտարկվում էր թույլ ու ճնշված ժողովուրդների ինքնորոշման, նրանց արդար իրավունքների ճանաչման և հարգման, ինչպես նաև ժողովուրդների իրավահավասարության համատեքստում[3]: Այս բարենպաստ մթնոլորտում

[1] Տես Бжезинский З., Великая шахматная доска, Москва, 1998, с. 14.
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 12-14:
[3] Այս մասին տե՛ս Պեյլերյան Արթուր, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918): Փաստաթղթերի ժողովածու (ֆրանսերենից թարգմանեց Վ. Պողոսյանը), հ. 1, Ե., 2005, փաստաթուղթ № 281, էջ 364: Архив полковника Хауза, т. 2, Москва,1937, сс.

Հայկական հարցի լուծման ուղղությամբ 1878 թ. ի վեր կատարված առաջին և, թերևս, գործնական միակ քայլն Արևմտյան Հայաստանում Ընդհանուր կոմիսարության ստեղծումն էր Ռուսաստանի ժամանակավոր կառավարության 1917 թ. ապրիլի 25-ի որոշմամբ[1]: Դրանով իսկ Արևմտյան Հայաստանն այսուհետև կառավարվելու էր ոչ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության և ոչ էլ նույնիսկ ՕԶԱԿոմ-ի կողմից, այլ ուղղակիորեն ենթարկվելու էր ռուսական պետության կենտրոնական կառավարությանը՝ որպես այդ պետության առանձին վարչական միավոր: Արևմտահայաստանի ընդհանուր կոմիսարն ունենալու էր քաղաքացիական հարցերի գծով օգնական: Այդ պաշտոնում նշանակվեց դաշնակցական գործիչ, բժիշկ Հակոբ Զավրյանը(Հ. Զավրիյան, Յա. Զավրիև), որն անձնական լայն կապեր ուներ Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունում[2]: Արևմտյան Հայաստանի տարածքը բաժանվեց երեք շրջանների՝ Վանի, Խնուսի, Էրզրումի: Արևմտահայ գաղթականներին թույլատրվեց վերադառնալ և վերաշինել ավերված օջախները[3]:

Չնայած Արևմտյան Հայաստանի ռուսական զինագրավումից հետո Հայկական հարցում վճռորոշ ծայնը պատկանում էր Ռուսաստանին, ակնհայտ էր, որ նրա դաշնակիցները շահագրգռված էին լինելու խնդրի միջազգային կարգավորմամբ: Դա եզակի հնարավորություն էր հայ գործիչների համար հասնելու տերությունների վերահսկողությամբ ինքնավար Հայաստանի ստեղծմանը, քանի որ, ինչպես վկայում են Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոյի՝ 1917 թ. մարտ-ապրիլին կայացած նիստերի արձանագրությունները, հայ հասարակական-քաղաքական շրջանակներում խիստ անհանգստացած էին Ռուսաստանի քաղաքական անկայունությամբ: Մասնավորապես, երկրում թույլ էր ժամանակավոր կառավարութ-

315-319. Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 11: The Armenian Genocide in Perspective: Edited by R.G. Hovannisian. Introduction by Terrence Des Pres: Preface by Israel W. Charny, New Brunswick, New Jersey, 1988, p. 31-32.
[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 374, ց. 1, գ. 1, թ. 3-20:
[2] Տե՛ս Լազեան Գ., Յեղափոխական դէմքեր, Հալեպ, 1990, էջ 252:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ.374, ց. 1, գ. 1, թ. 3-20: Ռոստոմ. նամականի, Պէյրութ, 1999, փաստաթուղթ №464, էջ 635:

յան իշխանությունը, Կովկասում և Ռուսաստանի այլ մասերում ցրված հայ գաղթականների՝ դեպի Երկիր վերադարձի ճանապարհին ռուսական իշխանությունները երբեմն արգելքներ էին հարուցում, բոլշևիկների քարոզչության ազդեցությամբ ռուսական Կովկասյան բանակը քայքայվում էր, իսկ Կովկասյան ռազմաճակատի մերկացումը հայերին զրկում էր անվտանգության գլխավոր երաշխիքից: Այդ էր պատճառը, որ 1917 թ. Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոն և հայկական հասարակական-քաղաքական տարբեր հոսանքները Հայկական հարցի լուծման անհրաժեշտ նախապայման էին համարում միջազգային հովանավորությունը[1]: Ըստ այդմ, ուրվագծվում էր այդ նպատակի իրագործմանն ուղղված գործունեության երեք ուղղություն՝ Ռուսաստանը, նրա եվրոպական դաշնակիցներ Անգլիան ու Ֆրանսիան և համաշխարհային պատերազմում նրանց դաշնակիցը դարձած ԱՄՆ-ը: Եթե նշված ուղղություններից առաջին երկուսն ավանդական էին, ապա երրորդը՝ նոր էր հայ հասարակական-քաղաքական շրջանակների համար: Բացի այդ, չնայած նշված պետությունները ռազմական դաշնակիցներ էին, այնուամենայնիվ, նրանց տեսակետները հակադրվում էին միմյանց հետպատերազմյան աշխարհակարգին վերաբերող կարևոր հարցերում, որոնց թվում էր նաև Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության՝ Մեծ եղեռնից մազապուրծ բեկորների ճակատագրի հարցը, որպես թուրքական տիրապետությունից հպատակ ժողովուրդների ազատագրության հիմնահարցի բաղկացուցիչ մասը: Հետևաբար, հայ գործիչների աշխատանքային օրակարգը ենթադրում էր ոչ միայն հայ ժողովրդի ակնկալիքների ներկայացում Պետրոգրադում, Լոնդոնում, Փարիզում և Վաշինգտոնում, այլև՝ այդ պետությունների միջև առկա հակասությունների ու տարաձայնությունների իմացություն ու խելամիտ օգտագործում հանուն համազգային կենսական խնդիրների լուծման: Այս կարևոր աշխատանքի անմիջական կազմակերպումն իրականացնում էր Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոն, որն իրավասու էր որոշումներ ընդունել և դրանց հիման վրա առաջարկներ ներկայացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Վերջինս էլ, ոչ միայն համակարգելու էր հայ պատվիրակների գործունեությունն, այլև իր ազդեցիկ իշխանությունն օգտագործելու էր սեփական ժողովրդի ծայնն արտաքին ասպարեզում լսելի դարձնելու նպատակով:

[1] Տե՛ս Մելիքյան Վ.Հ., նշվ. աշխ., էջ 260-276:

Հաշվի առնելով Արևմտյան Հայաստանի խնդրի կարևորությունը՝ Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոն 1917 թ. մարտի 26-ի նիստը նվիրեց այնպիսի կարևոր հարցերի քննարկմանն, ինչպիսին էին Արևմտյան Հայաստանի համար կենտրոնական մարմնի ստեղծումը, կազմակերպվելիք իշխանության ենթակայությունն ու ղեկավարումը, ինչպես նաև հարևանների հետ հարաբերությունները: Նիստում առաջ քաշվեց կովկասյան թաթարների և թուրքերի կապի, նրանց համիսլամական ծրագրերի, Թուրքիային հայկական հողերի բռնակցման վտանգի հարցը: Դրա վերաբերյալ ընդունվեց Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոյի փոխնախագահ Ալեքսանդր Խատիսյանի[1] առաջարկած բանաձևը: Այն նախատեսում էր նոր վարչակարգի հիմնում Արևմտյան Հայաստանում և վերջինիս ուղղակի ենթարկումը ժամանակավոր կառավարությանն, առանց ՕԶաԿոմ-ի միջնորդության: Բանաձևի հաջորդ դրույթներով նախատեսվում էր՝ ընդհանուր կոմիսարի փոխարեն նշանակել հայերի վերաբերյալ հրահանգներ ստացող մի հատուկ մարդ, աշխատել, որպեսզի բանակցությունների գործին չմիջամտեին վրացիները կամ թաթարները և Ա.Ֆ. Կերենսկու մոտ գործուղել Հ. Ջավրյանին[2]: Արխիվային այս վավերագրի բովանդակությունը փաստում է, որ «Թուրքահայաստանի կառավարման մասին» 1917 թ. ապրիլի 25 (մայիսի 6)-ի որո-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց.5, գ. 154, թ. 2: Ալ. Խատիսյանի՝ Ազգային բյուրոյի փոխնախագահը լինելու հանգամանքը հաստատում է նաև նրա ժամանակակիցը՝ հայտնի պետական-հասարակական գործիչ Ս. Վրացյանն, Ալ. Խատիսյանի մասին իր հուշերում: Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 12: Թեև պատմաբան Վ. Մելիքյանն իր աշխատության մեջ, հղում կատարելով Ռուսաստանի պատմության պետական արխիվի1278-րդ ֆոնդի, 5-րդ ցուցակի, 1303-րդ գործի 1-ին թերթին, նշում է, որ 1917 թ. մարտի 3-ին Ալ. Խատիսյանը ներկայացել է որպես Հայկական կենտրոնական Ազգային բյուրոյի նախագահ: Տե՛ս Մելիքյան Վ. Հ., նշվ. աշխ.,172:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111, թ. 103-109:

շումն ընդունելիս ժամանակավոր կառավարությունը հաշվի է առել նաև Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոյի դիրքորոշումը: Ինչ վերաբերում է Հ. Ջավրյանին Ռուսաստանի արդարադատության նախարար Ա.Ֆ. Կերենսկու մոտ գործուղելու մասին որոշմանն, ապա Հ. Ջավրյանն Ազգային բյուրոյի դեռևս մարտի 19-ին կայացած նիստում հետևյալ կերպ էր ձևակերպել իր առաքելության նպատակն ու ազգային հեռանկարների հետ կապված չլուծված հարցերը. «Պետք է Պետրոգրադում աշխատեմ, որպեսզի Հայկական հարցի մասին մի ակտ լինի, թեև չհայտարարվի, և եթե կարելի է, ճանաչվի օտար պետությունների ներկայացուցիչների կողմից: Եթե հարցնեն, թե հայերը ինչ են ուզում, կարո՞ղ եմ ասել-անեքսիա, թե՞ ոչ: Կարո՞ղ եմ պնդել, որ Կիլիկիան էլ մտնի անեքսիայի մեջ»[1]:

1917 թ. մարտին Հ. Ջավրյանը Թիֆլիսից մեկնում է Պետրոգրադ, որտեղ միանում է դաշնակցական գործիչ Լիպարիտ Նազարյանցին[2]:

Հ. Ջավրյանը Պետրոգրադում բանակցություններ էր վարում ժամանակավոր կառավարության հետ Արևմտյան Հայաստանի կարգավիճակի, սահմանների, ապագա կառավարչաձևի հարցերի շուրջ, իսկ Լ. Նազարյանցին հանձնարարված էր բանակցել հայկական ազգային զորամասեր ստեղծելու և Արևմտյան Հայաստանի պաշտպանությունն ազգային զինուժի միջոցով կազմակերպելու հարցերի շուրջ[3]: Նշված խնդիրները փոխկապակցված էին և պահանջում էին համաժամանակյա լուծում:

Արևմտյան Հայաստանի ապագա կարգավիճակի հարցում Հ. Ջավրյանը շարունակում էր պաշտպանել Հայաստանի ինքնավարության գաղափարը: Սակայն նա վերանայել էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության 1915 թ. իր ծրագիրը[1], քանի որ այն իր բովանդակությամբ այլևս չէր համապատասխանում իրականությանը: Հարցն այն է, որ 1917 թ. չէր կարելի անտեսել այն դժվարությունները, որ Արևմտյան Հայաստանի հարցում կարող էին հարուցել թուրքերը և Կովկասի թաթարներն՝ անհանգստացած Օսմանյան կայսրության ճակատագրով: Վերջիններս դեմ չէին Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը, եթե այն մնար Թուրքիայի սահմաններում: Նրանք խոստանում էին հայերի, իբրև փոքրամասնության, իրավունքներն ապահովել հիմնական օրենքներով: Ավելին, բողոքներ էին ներկայացնում ժամանակավոր կառավարությանը՝ պահանջելով Արևմտյան Հայաստանի ընդհանուր կոմիսարի օգնական Հ. Ջավրյանին փոխարինել մի ուրիշ հայով և նրա կողքին ավելացնել կոմիսարի ևս մեկ օգնական՝ թուրք[2]: Թուրքական նկրտումներին ի պատասխան, Հ. Ջավրյանը շեշտում էր Արևմտյան Հայաստանի կառավարումը ժամանակավոր կառավարությանը ենթարկելու հանգամանքը և գտնում, որ երկրամասը, որպես ինքնավար միավոր, պիտի գտնվեր բացառապես ռուսական պետության հովանավորության ներքո: Կիլիկիայի հարցում Հ. Ջավրյանը զգուշավոր էր: Քաջատեղյակ լինելով Միջերկրական ծով դուրս գալու Ռուսաստանի հավակնութուններին՝ նա չէր անտեսում Կիլիկիան ևս ինքնավար Հայաստանի մեջ ընդգրկելու հնարավորությունը: Միաժամանակ, հայ գործիչը գիտակցում էր, որ այդ հարցի արծարծումը դիվանագիտական լուրջ պայքարի առիթ էր դառնալու Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև:

[1] Նույն տեղում, թ. 103:
[2] Տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1928, № 8 - 9: Ռոստոմ. նամականի, փաստաթուղթ № 464, էջ 632, 633: Լազեան Գ., նշվ աշխ., էջ 252, 253: Հոկտեմբերյան հեղափոխությունից մի քանի օր անց Հ. Ջավրյանը վերադառնում է Կովկաս: Բայց 1918 թ. Բաքվի պաշարման ընթացքում կրկին մեկնում է Ռուսաստան՝ ապահովելու համար խորհրդային իշխանության աջակցությունը Բաքվի և Հայաստանի պաշտպանության գործում: Այս անգամ նա գործում էր դաշնակցական մեկ այլ գործչի՝ Արտաշես Չիլինգարյանի (Ռուբեն Դարբինյան) հետ միասին:
[3] Տե՛ս Ռոստոմ. նամականի, էջ 632-633:

[1] 1915 թ. Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունների հետ բանակցություններում Հ. Ջավրյանը պաշտպանում էր Թուրքիայի սահմաններում ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարը: Հայաստանը, որի կազմում ընդգրկվելու էին հայկական վեց վիլայեթները (բացառությամբ մի քանի ծայրամասերի) և Կիլիկիան՝ Միջերկրական ծովի ափին նավահանգստով հանդերձ, պիտի գտնվեր Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի միասնական հովանավորության ներքո: Տե՛ս Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914 – 1917 թվականներին, Ե., 2002, էջ 86-92:
[2] Տե՛ս Ռոստոմ. նամականի, էջ 635:

Այս հարցերը միանգամից լուծել հնարավոր չէր: Պահանջվում էր երկար ժամանակ, տևական ու հետևողական աշխատանք, ինչպես նաև Հայկական հարցում Ռուսաստանի կառավարության դիրքորոշման ու գործնական քայլերի համաձայնեցում Դաշնակիցների հետ:

Եվրոպայում իր գործունեությունն էր շարունակում տակավին 1912 թ. կազմված Հայկական Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի (Պողոս փաշա Նուբարյան) գլխավորությամբ, որին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը համարում էր իր «աշխատակից-պաշտոնակիցը, միակ ներկայացուցիչն առաջի Պետութեանցն... վարչական անձերի տկար ժամին»[1]: Պողոս Նուբարը Եվրոպայում ներկայացնում էր ոչ միայն Հայկական Ազգային պատվիրակությունն, այլև արտահայտում էր հայ ժողովրդի աշխարհասփյուռ հատվածի շահերն ու ակնկալիքները՝ կապված, առաջին հերթին, Արևմտյան Հայաստանի ճակատագրի հարցի հետ[2]: Պատվիրակությունը ջանում էր Անտանտի տերությունների աջակցությամբ նախապատրաստել Հայկական հարցի քննարկումը, այն ներկայացնել պատերազմի ավարտից հետո հրավիրվելիք հաշտության վեհաժողովին: Այդ նպատակով դեռևս 1916 թ. վերջերին պատվիրակության կազմն ընդլայնվել էր: Նախ, անպաշտոն կերպով պատվիրակությանն էր միացել հայ անվանի թարգմանիչ, պետական-հասարակական գործիչ, Բեռլինում Պարսկաստանի դեսպան Հովհաննես Մասեհյանը (Խան-Մասեհյան). անպաշտոն, քանի որ Պարսկաստանում ունեցած անձնական դիրքը նրան թույլ չէր տալիս պաշտոնական հանձնառություն ստանձնել[3]: Այնուհետև, Պողոս Նուբարի առաջարկով Ամենայն Հայոց Կաթողիկոսն Ազգային պատվիրակության անդամ էր նշանակել լոնդոնահայ հասարակական գործիչ Ջեյմս Մալքոլմին՝ հաշվի առնելով վերջինիս մեծ կապերն Անգլիայում և համագործակցությունը Պողոս Նուբարի հետ լոնդոնյան բա-

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 144, թ. 4:
[2] Տե՛ս Պողոսեան Ս., Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Ե., 2004, էջ 128:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 12:

նակցությունների ընթացքում[1]: Ապա, Ամերիկայի նորաստեղծ Հայ Ազգային Միության նախագահ Միհրան Սվազլին (Սվազլյան) նշանակվել էր Ազգային պատվիրակության ներկայացուցիչ ԱՄՆ-ում[2]:

Հայկական Ազգային պատվիրակությունն, ընդհուպ մինչև Ռուսաստանում ժողովրդավարական կարգերի հաստատումն ու Ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականության սկզբունքների հռչակումը, չուներ որևէ հստակ և անփոփոխ սահմանված ծրագիր Արևմտյան Հայաստանի ապագայի վերաբերյալ: Ինչպես Հայկական հարցի լուծումն, այնպես էլ պատվիրակության դիրքորոշումը դրա վերաբերյալ պայմանավորված էին առավելապես իրադարձությունների ընթացքով և այն համաձայնություններով, որոնք կայացվում էին Դաշնակիցների միջև Ասիական Թուրքիայի հարցի շուրջ: Այդ պատճառով էլ Հայկական Ազգային պատվիրակությունը ստիպված էր նախատեսել Հայկական հարցի տարբեր լուծումներ: Դրանք, սակայն, հանգում էին երկու հիմնական տարբերակի: Առաջինը նախատեսում էր Արևմտյան Հայաստանի բաժանումը երկու մասի՝ Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև, իսկ երկրորդի համաձայն, Թուրքիայում գտնվող հայկական բոլոր տարածքները, սկսած Կովկասի սահմաններից և Պարսկաստանից մինչև Միջերկրական ծով, միավորվելու էին և կազմելու միասնական ինքնավար Հայաստան: Ինչ վերաբերում է անկախությանն, ապա Հայկական Ազգային պատվիրակությունն Արևմտյան Հայաստանի անկախության պահանջը համարում էր դեռևս անիրագործելի: Այդ առիթով պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը 1917 թ. մարտի 15-ին Ֆրանսիայի արտաքին հարաբերությունների դեպարտամենտի աշխատակից Լեոպոլդ Ֆավրին տեղեկացնում էր հետևյալը. « ... Հաշվի առնելով այն, որ մենք երբևէ չենք խորհել ան-

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 144, թ. 1:
[2] Տե՛ս Boghos Nubar's Papers..., p. 431. Միհրան Սվազլիի ազգանվեր գործունեության մասին տե՛ս Ավագյան Քնարիկ, Հայ առաջին լոբբիստական կազմակերպությունն ԱՄՆ-ում: «Հայոց պատմության հարցեր», Ե., 2003, թիվ 4, էջ 98-104: Նույնի՝ Արևմտական իրավաբան-դիվանագետ Միհրան Սվազլյանը Հայաստանի ռազմավարական կողմնորոշման մասին: «Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ», Ե., 2010, ապրիլ, թիվ 1, էջ 46-49:

կախություն պահանջելու մասին, որն անիրագործելի ենք համարում այն էքնիկական պայմաններում, որոնցում գտնվում է Թուրքահայաստանը, մենք նախապատվությունը, ես դա կրկնում եմ, միշտ այդ լուծմանը կտանք»[1]: Չնայած 1917 թ. հետփետրվարյան ժամանակահատվածում Հայկական հարցի լուծման համար նպաստավոր իրադրությանը, Պողոս Նուբարը մարտի կեսերին դեռևս չէր բացառում, որ պատերազմող պետությունների ապագա հաշտության բանակցությունների հիմքում կարող էին դրվել Ասիական Թուրքիայի մասնատման վերաբերյալ 1916 թ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերը: Այդ տարբերակի դեպքում Հայկական Ազգային պատվիրակության ղեկավարը նպատակահարմար էր գտնում «գալիք ինքնավար Հայաստանի համար պահանջել հնարավորության սահմաններում լայնածավալ տարածք, որը ծգվի ոչ միայն ծովափի երկարությամբ՝ սկսած Ալեքսանդրետից մինչև Անամուրի հրվանդան, այլև լայնությամբ՝ դեպի արևելք, այնպես, որ ընդգրկի հայկական տարածքների ամենամեծ մասը, որովհետև մենք խիստ շահագրգռված ենք, որ Ֆրանսիայի բաժինը, որտեղ մեր ժողովուրդը կկարողանա վերածնվել լիբերալ վարչակարգի ներքո, լինի այնքան ընդարձակ, որքան այդ հնարավոր կլինի ձեռք բերել»: Գերապատվությունը տալով ֆրանսիական բռնակցման գաղափարին՝ Պողոս Նուբարն ընդգծում էր դեպի Ֆրանսիան ունեցած իր համակրանքը: Նա գտնում էր, որ Ֆրանսիայի հովանավորության ներքո ապագա ինքնավար Հայաստանը կկապվեր առաջադիմական, ազատամիտ կարգերի հետ, կարևոր նախապայման, որի երաշխիքները չէր տեսնում ժողովրդավարական Ռուսաստանում: «Մեզ վստահություն չեն ներշնչում Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների ճակատագրերը, որոնք Ռուսաստանը կբռնագրավի: ... Սա ամենևին չի նշանակում, թե մենք հրաժարվում ենք այս վիլայեթների համար Ռուսաստանի հովանու ներքո, ինքնակառավարման իրավունքով, հատուկ վարչակարգ ունենալու պահանջից: Սակայն մենք գիտենք, որ եթե նույնիսկ այն ձեռք բերենք, ապա այդ վարչակարգը

[1] Պեյլերյան Արթուր, նշվ. աշխ., փաստաթուղթ № 340, էջ 457:

երբեք չի ունենա այնպիսի կշիռ, որը մենք հույս ենք տածում ստանալու Ֆրանսիայից: Ռուսաստանն, իրոք որ, կցանկանա, անկասկած, գաղութաբնակեցնել, ինչպես նա այդ մասին արդեն հայտարարել է և կունենա այդպես վարվելու բոլոր հնարավորությունները, որովհետև սահմանակից է և ունի բնակչության ավելցուկ, որի տեղահանությանը քաջալերելու հարցում շահագրգռված կլինի»[1],- շեշտում էր նա: Սակայն այն փաստը, որ Արևմտյան Հայաստանն անցել էր Ռուսաստանին զենքի ուժով, արդեն իսկ վկայում էր, որ Հայկական հարցի լուծման մեջ վճռորոշ էր լինելու ռուսական կառավարության տեսակետը: Այս պայմաններում հուսալ, թե հաշտության վեհաժողովում Արևմտյան Հայաստանը դիվանագիտական պայքարի միջոցով կանցներ Ֆրանսիային, իրատեսական չէր:

Արդեն 1917 թ. մայիսի կեսերին Ազգային պատվիրակությունը հանդես է գալիս նոր՝ վերափոխված ծրագրով: Այդ փոփոխությունը Պողոս Նուբարը հիմնավորում էր ծանրակշիռ փաստարկներով: Մասնավորապես, նա նշում էր, որ Օսմանյան կայսրությունում արևմտահայերի նկատմամբ սարսափելի հալածանքներից, հարկադիր կրոնափոխությունից, կոտորածներից և տեղահանություններից հետո հնարավոր չէ հայ ժողովրդին թողնել թուրքերի տիրապետության ներքո: Պողոս Նուբարն այլևս անօգուտ էր համարում նաև հայկական վիլայեթներում բարենորոգումների մասին հարց բարձրացնելն ու Հայկական հարցի միակ կենսունակ և վերջնական լուծումը համարում էր օսմանյան տիրապետությունից հայերի ազատագրումը:

Ազգային պատվիրակության նոր ծրագրի հիմքում Ռուսաստանի ժամանակավոր կառավարության հռչակած սկզբունքն էր, որով վերջինս հրաժարվում էր նվաճողական կամ բռնագրավման յուրաքանչյուր գաղափարից: Սակայն Պողոս Նուբարն այդ սկզբունքի իրագործումը չէր կապում ոչ Արևմտյան Հայաստանում Ընդհանուր կոմիսարության ստեղծման և ոչ էլ արևմտահայկական տարածքների կառավարումը ժամանակավոր կառավարությանը հանձ-

[1] Նույն տեղում, փաստաթուղթ № 340, էջ 457-458:

նելու հետ: Դրա փոխարեն Ազգային պատվիրակության ղեկավարը, որպես Հայկական հարցի լավագույն լուծում, պաշտպանում էր միասնական, թուրքական տիրապետությունից ազատագրված ինքնավար Հայաստանի գաղափարը:[1] «Միասնական» բառը նա օգտագործում էր միմիայն Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի տարածքը նկատի ունենալով՝ բացառելով Ռուսաստանի ու Պարսկաստանի հայկական տարածքների միավորումն ինքնավար Հայաստանին:

Պողոս Նուբարը ցանկալի էր համարում, որ ինքնավար Հայաստանը դրվեր Դաշնակից երկրների միասնական վերահսկողության ներքո, իսկ նրանցից մեկը 10-15 տարով ստանձներ Հայաստանի հովանավորությունը կամ մանդատը՝ երկրի տնտեսության վերականգնմանը, հասարակական կյանքի վերափոխմանը նպաստելու և արտաքին հարձակումներից նրան պաշտպանելու նպատակով, մինչև Հայաստանն ի վիճակի դառնար ինքնուրույն ղեկավարվել: Հաշվի առնելով այն փաստը, որ Արևմտյան Հայաստանն անցել էր Ռուսաստանին զենքի ուժով, Պողոս Նուբարը վստահ էր, որ Հայկական հարցի լուծման մեջ վճռորոշ էր լինելու ռուսական կառավարության տեսակետը: Թեև նա գերադասելի էր համարում Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին, քանի որ այդ պետությունն աշխարհագրորեն հեռու էր գտնվում և մինչ այդ այս տարածաշրջանում գաղութացման քաղաքականություն չէր վարել: Ինքնավար Հայաստանն, ըստ Պողոս Նուբարի, դառնալու էր աշխարհասփյուռ հայերի հայրենադարձության կենտրոնը, որտեղ նրանք, ինքնավարության շնորհիվ, ունենալու էին խաղաղ կյանք և աշխատանք: Պողոս Նուբարը չէր բարձրացնում Օսմանյան կայսրության մասնատման հարցը, բայց և ապագա Հայաստանը տեսնում էր որպես բուֆեր Ռուսաստանի, Պարսկաստանի, Անատոլիայում ապագա թուրքական կայսրության ու նոր ինքնավար պետությունների միջև: Հայ ազգային գործիչը վստահ էր, որ ինքնավար Հայաստանը կդառնար տարածաշրջանում խաղաղության հաստատման, մեծ տերությունների վտանգավոր առճակատումներից խուսափելու միջոց:

[1] Տե՛ս նույն տեղում, փաստաթուղթ № 365, էջ 476:

Ինչ վերաբերում է Արևելյան Հայաստանին, ապա այն մնալու էր ժողովրդավարական Ռուսաստանի սահմաններում, որտեղ հայերն ունեին ռուսական բազմազգ պետության բոլոր ժողովուրդներին հավասար իրավունքներ[1]:

Այսպիսով, Պողոս Նուբարի ծրագրում Հայկական հարցը դիտարկվում էր կովկասահայ ազգային հարցից առանձին: Ընդ որում, շեշտվում էր խնդրի միջազգային դիվանագիտական բնույթը: Դաշնակից երկրների դիվանագիտական ոլորտներում այս ծրագիրը քննարկելու դեպքում անխուսափելի էր լինելու Անգլիայի ու Ֆրանսիայի լարված պայքարը Ռուսաստանի դեմ:

Հայ հասարակական-քաղաքական շրջանակներում Հայկական հարցի լուծման տեսանկյունից կարևորում էին նաև ԱՄՆ-ի դերը: Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոն 1917 թ. ապրիլի 8-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ 5-րդ Սուրենյանցին հղած գրության մեջ այս առիթով նշում էր, որ «ամերիկյան ժողովուրդն ու կառավարությունը խոշոր նյութական ու բարոյական օգնություն է ցույց տվել և տալիս թուրքահայ ժողովրդին», որ «ներկայումս էլ, միջամտելով համաեվրոպական պատերազմին, ԱՄՆ-ը կարող է իր առանձին դիրքի շնորհիվ խոշոր դեր խաղալ թուրքահայկական հարցի վերջնական վճռի խնդրում»[2]: Այդ նկատառումներից ելնելով՝ Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոն որոշեց հատուկ առաքելությամբ ԱՄՆ ուղարկել արևմտահայ հայտնի գործիչ և օսմանյան պառլամենտի նախկին անդամ Գարեգին Բաստրմաջյանին (Արմեն Գարո): Նրա գլխավոր խնդիրն «ամերիկյան թե՛ կառավարական և թե՛ հասարակական շրջաններում հայկական դատը պրոպագանդելն էր և կազմակերպելը»[3]: Ծանուցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին

[1] Տե՛ս Boghos Nubar's Papers..., p. 438: Այս դրույթները Պողոս Նուբարն ամբողջացրեց Հայկական հարցի և Հայաստանի ազատագրության վերաբերյալ հուշագրում, որը 1917 թ. մայիսի 24-ին ներկայացվեց Դաշնակիցներին: ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 14-15: Նույն հուշագրի՝ Փարիզի պետդեպարտամենտին ուղղված տարբերակը (թվագրված 1917 թ. հունիսի 12) տե՛ս Պեյլերյան Արթուր, նշվ. աշխ., փաստաթուղթ № 365, էջ 475-479:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ.154, թ.1:

[3] Նույն տեղում, թ. 1-2:

Գ. Բաստրմաջյանի առաքելության մասին՝ Ազգային բյուրոյի փոխնախագահ Ալեքսանդր Խատիսյանը և քարտուղար Հակոբ Քոչարյանն Ազգային բյուրոյի անունից 1917 թ. ապրիլի 8-ի նամակով խնդրում էին Վեհափառին Գ. Բաստրմաջյանին տալ անձը հաստատող գրություն, «որի շնորհիվ նա հնարավորություն ունենա հաջողությամբ կատարել իր նպատակի համար անհրաժեշտ դիմումները»[1]: Իսկ ապրիլի 19-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսին գրած նամակում նույն հարցի վերաբերյալ իր տեսակետը ներկայացրեց ժողովրդական կուսակցության նախագահ Սամսոն Հարությունյանը: Հայտնելով Գ. Բաստրմաջյանի՝ Պետրոգրադում գտնվելու և Ռուսաստանի արտգործնախարարության գիտությամբ ու աջակցությամբ այնտեղից ԱՄՆ մեկնելու պլանների մասին՝ Ս. Հարությունյանը Գ. Բաստրմաջյանին գնահատում էր որպես «մեծ համակրանք վայելող, շատ ազնիվ, խելացի, քաղաքագետ և հմուտ անձնավորություն»: Նա այն կարծիքին էր, որ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի քաղաքական շրջանակների ներքաշումը հայկական «ցավոտ ազգային խնդիրների» մեջ վճռորոշ նշանակություն կունենա Հայաստանի ապագան որոշելու հարցում[2]:

Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, գնահատելով կատարվելիք աշխատանքի կարևորությունը, 1917 թ. ապրիլի 27-ին հատուկ գրությամբ լիազորեց Գ. Բաստրմաջյանին «անցնել Ամերիկա՝ այնտեղ քաղաքական այլ և այլ շրջաններին և պետական բարձր դիրք ունեցող անձերին մոտիկից ծանոթացնելու Հայկական դատի էության հետ, վաստակելու նրանց համակրությունը, աջակցությունը, նախապատրաստելու հասարակական կարծիքը հօգուտ Հայ դատի և այս մասին զեկուցելու Ն. Ս. Օծությանը»[3]: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նույն օրն առանձին նամակով հանձնարարական տվեց նաև Պողոս Նուբարին: ԱՄՆ առաքելություն ուղարկելը Վեհափառը բացատրում էր համաշխարհային պատերազմին ԱՄՆ-ի մասնակցությամբ, ինչպես նաև Ռուսաստանի

[1] Նույն տեղում, ց. 5, գ.154, թ. 1:
[2] Նույն տեղում, թ. 3-4:
[3] Նույն տեղում, թթ. 12-15:

Փետրվարյան հեղափոխությամբ, որը նոր և նպաստավոր նախադրյալներ էր ստեղծում Հայկական հարցի լուծման համար[1]: Բացի այդ, մատնանշվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի հայտարարությունը ճնշված և փոքր ազգերի քաղաքական իրավունքների պաշտպանության մասին: Զեկուցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին Ռուսաստանի արտգործնախարար Մ. Տերեշչենկոյի, ռուս բարձրաստիճան անձանց հետ իր հանդիպումների և ռուսական կառավարության դիրքորոշման մասին՝ Գ. Բաստրմաջյանը տեղեկացնում էր, որ ռուսական կառավարող շրջանակներում հայ գործչի՝ Միացյալ Նահանգներ մեկնելը «շատ նպատակահարմար գտան» և շեշտեցին, որ «Ամերիկայի կարծիքը և բռնելիք դիրքը մեր հարցի նկատմամբ մեծ կշիռ է ունենալու ապագայում»: Արտգործնախարար Մ. Տերեշչենկոյի և ռուսական այլ դիվանագետների կարծիքով, միայն ԱՄՆ-ն է, որ «պիտի կարողանա չեզոքացնել ֆրանսիական ծրագրերը Կիլիկիայի նկատմամբ»,- հայտնում էր Գ. Բաստրմաջյանն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ V-ին: Հայ գործիչը ներկայացնում էր նաև Հայկական հարցի նպատակահարմար ու հնարավոր լուծման վերաբերյալ ռուսական կառավարության կարծիքը. «Բուն Հայաստանը (Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները) և Կիլիկիան միասին կազմելու են մի ինքնավար քաղաքական միություն, որը կդրվի, բոլոր պետությունների համաձայնությամբ, ռուսական պաշտպանության տակ»:[2] Հայկական հարցն այս տարբերակով լուծելը բխում էր Ռուսաստանի պետական շահերից, որովհետև այն հնարավորություն պետք է տար այդ պետությանը տնտեսական անմիջական կապ հաստատել միջերկրածովյան ավազանի և ավելի հեռավոր երկրների հետ, որով միայն «Կոստանդնուպոլսի և նեղուցների խնդիրը կկորցներ իր հրամայողական նշանակությունը»: Իսկ տվյալ խնդրում ռուսական պետության շահը համապատասխանում էր հայերի ազգային իղձերին: Այն, որ Գ. Բաստրմաջյանն ԱՄՆ է մեկնել որպես Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոյի պատվիրակ, մեկնումից առաջ տեսակ-

[1] Տե՛ս նույն տեղ, թ. 12-13, 20-21:
[2] Նույն տեղում, ց. 5, գ.154, թ. 17-18:

ցություններ է ունեցել Ռուսաստանի պետական բարձրաստիճան գործիչների հետ, վկայում են, որ այս ազգային գործչի մոտեցումը խնդրին համընկնում էր Հ. Զավրյանի տեսակետին Արևմտյան Հայաստանի ինքնավարության վերաբերյալ:

Այսպիսով, հայ իրականության մեջ Հայկական հարցի լուծումը 1917 թվականի Փետրվարյան ու Հոկտեմբերյան հեղափոխությունների միջև ընկած ժամանակահատվածում հանգում էր մեծ տերությունների միասնական վերահսկողության ներքո Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներին և Կիլիկիային ինքնավարություն շնորհելուն: Անտանտի պետությունների կառավարող շրջանների հետ բանակցություններում հենց այս գաղափարով էին առաջնորդվում հայ գործիչները: Նրանց մոտեցումներն իրարից տարբերվում էին ապագա ինքնավար Հայաստանի սահմանների, ինքնավար Հայաստանի նկատմամբ միջազգային վերահսկողության կազմակերպման և հովանավոր պետության հետ կապված հարցերում: Մինչդեռ, մեծ տերությունները, ցավոք, հավատարիմ էին մնում շահադիտական նկատառումներով առաջնորդվելու ավանդական սկզբունքին: Հայկական հարցի կարգավորումը ձգձգվում էր՝ բախվելով Մերձավոր Արևելքում նրանց քաղաքական խոշոր շահերին ու հրատապ խնդիրներին:

Ազգային պատվիրակության և առաքելությունների ծրագրերը գործնական հիմքի վրա դնելուն լուրջ հարված հասցրեց նաև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում: Այն ոչ միայն սեպ խրեց Ռուսաստանի ու նրա դաշնակիցների փոխհարաբերություններում, այլև գլխիվայր շրջեց իրադրությունը Կովկասյան ռազմաճակատում՝ ողբերգական հետևանքներ ունենալով Արևմտյան Հայաստանի և արևմտահայության ճակատագրում:

ЛИЛИТ ОГАНИСЯН
ИИ НАН РА

ВОПРОС АВТОНОМИИ ЗАПАДНОЙ АРМЕНИИ В 1917 ГОДУ В ПРОЕКТАХ НАЦИОНАЛЬНОЙ ДЕЛЕГАЦИИ И МИССИЙ

Победа Февральской буржуазно-демократической революции в России и вступление США в Первую мировую войну на стороне Антанты создали политические предпосылки для начала нового этапа дипломатических обсуждений Армянского вопроса.

В армянских общественно-политических кругах были уверены, что освобождение Западной Армении от турецкого господства и ел аннексия Россией являются первым шагом на пути создания автономной Армении под международным контролем и непосредственным протекторатом одной из великих держав. Предусматривалось включить в состав автономной Армении армянские вилайеты Западной Армении и Киликию. Подходы армянских организаций и деятелей отличались лишь в вопросах, касавшихся границ автономной Армении, характера будущего протектората и государства-протектора.

В марте - июне 1917 г. известные политические деятели А. Заврян и Г. Бастрмаджян по решению Армянского Центрального Национального бюро были направлены - первый в Петроград, а второй - в Вашингтон, для ведения переговоров с Временным правительством России и правительством США. С правительственными кругами Франции и Англии продолжала переговоры Армянская Национальная делегация под руководством Погоса Нубара.

Дальнейшие развития политических событий показали, что проект решения Армянского вопроса, предложенный армянскими общественно-политическими кругами, не мог быть осуществим. Великие державы оставались верны своим корыстным целям, по причине чего урегулирование Армянского вопроса затягивалось.

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՋԱՎԱԽՔԸ 1918-1920 ԹԹ.

1918 թ. մայիսի վերջին թուրքական ներխուժման պատճառով դեպի Բակուրիան և Ծալկա Ախալքալաքի հայ բնակչության զանգվածային արտագաղթի օրերին կյանքի կոչվեցին Անդրկովկասի երեք հանրապետությունները: Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը մայիսի 30–ի անկախության հռչակագրում իրեն հայտարարում էր հայկական գավառների գերագույն ու միակ իշխանություն: Անշուշտ, «հայկական գավառներ» բառակապակցության ընտրությունն ինքնանպատակ չէր: Նման ձևակերպումով Ազգային խորհուրդը մի կողմից՝ խուսափում էր ռազմաքաղաքական այդ բարդ իրավիճակում օսմանյան թուրքերի և նորաստեղծ հարևան պետությունների հետ տարածքային վեճերի մեջ հայտնվելու վտանգից, մյուս կողմից, թեկուզև անորոշ սահմաններով, հայտնում էր իր իրավունքները հայկական տարածքների նկատմամբ: Տվյալ դեպքում վերջինիս տակ կարելի էր նկատի առնել և՛ Արևմտյան Հայաստանը, և՛ Ղարաբաղը, և՛ Ջավախքը, և՛ Նախիջևանը, և՛ վիճահարույց այլ տարածքներ:

Սակայն վրաց մենշևիկներն ավելի գործնական քայլեր էին ձեռնարկել վիճելի գավառների հարցը հօգուտ իրենց լուծելու ուղղությամբ: Նրանք Գերմանիայի ներկայացուցիչ ֆոն Լոսովի հետ նախապատրաստել էին ոչ միայն իրենց հանրապետության անկախության հռակումը, այլև որոշակի հավաստիացումներ ստացել վիճելի նկատվող Ախալքալաքն ու Բորչալուն Վրաստանի մաս ճանաչելու խնդրում:[1] Ուստի պատահական չէ, որ նրանք 1918 թ. հունիսի սկզբին գերմանացիների հովանավորությամբ հսկողություն սահմանեցին Հյուսիսային Լոռու նկատմամբ (Հարավային Լոռին բռնա-

[1] Ջամալեան Ա., Իմ պատասխանը «Պրոմեթե»-ի և «Անկախ Վրաստան»-ի հրապարակագիրներին, «Յառաջ», 1928, 19 հունիս, թիվ 677, էջ 2:

զավթվեց թուրքերի կողմից), իսկ հունիսի 4–ին Բաթումում Օսմանյան կայսրության հետ կնքած հաշտության պայմանագրով իրենց իրավունք վերապահեցին հանձնել թուրքերին գերազանցապես հայերով բնակեցված Ախալցխայի և Ախալքալաքի գավառները:

Կարծում ենք, որ նման քայլը թելադրված չէր միայն թուրքերին դիմադրելու անկարողությամբ: Այն նաև հեռու գնացող նպատակ էր հետապնդում: Նախ՝ ստեղծվում էր տպավորություն, թե նորահռչակ Վրաստանը ևս Հայաստանի նման տարածքային լուրջ զիջումներ է անում ռազմական հաղթանակներ գրանցած Թուրքիային, և երկրորդ՝ իր կնքած միջազգային առաջին պայմանագրով, իբրև պայմանավորվող կողմ, արձանագրում է իր իրավունքներն այդ գավառների բախտը տնօրինելու հարցում: Պատերազմում Թուրքիայի ռազմական անհաջողության դեպքում Վրաստանը կարող էր նորից վերականգնել իր «օրինական» իրավունքն Ախալցխայի և Ախալքալաքի նկատմամբ: Եվ վերջապես, թուրքական բռնազավթումը կարող էր արմատապես փոխել Ջավախքի ժողովրդագրական պատկերը. այն է՝ զրկել նրան իր հայկական էթնոնկարագրից: Հետագա դեպքերը բացահայտելու եկան վրաց քաղաքական շրջանակների այդ ազգայնամոլ ծրագրերը:

Ընդհանուր ռազմաքաղաքական բարդ իրադրության մեջ, կարևորելով նորաստեղծ հանրապետությունների միջև սահմանների ճշգրտման հարցը, արդեն հունիսի սկզբից Վրաց և Հայոց ազգային խորհուրդները սկսեցին բանակցությունները: Վրաց ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան և վարչապետ Ն. Ռամիշվիլին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին՝ ի դեմս Ավ. Ահարոնյանի, Հովհ. Քաջազնունու և Ալ. Խատիսյանի, առաջարկեցին Բորչալուի գավառի հարցում առաջնորդվել ազգագրական սկզբունքով: Ախալքալաքի մասին խոսք չկար, քանզի այն գրավված էր թուրքերի կողմից, թեև, ինչպես նշվեց, վրացիները ապագայում այդ հարցի լուծումը ևս տեսնում էին հօգուտ Վրաստանի: Սակայն շուտով սահմանազատման հարցով Հայոց ազգային խորհրդի նշանակած հատուկ հանձնախմբին (Խ. Կարճիկյան, Գ. Խատիսյան և Գ. Ղորղանյան) վրացական պատվիրակության նախագահ Ի. Ծերեթելին հայտարարեց, որ

Վրաստանը ռազմավարական նկատառումներով չի կարող հրաժարվել Ախալքալաքից ու Լոռուց, ինչպես և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանից: Ընդ որում, վրաց գործիչը հավատացնում էր, որ դա բխում է նաև այդ տարածքների հայ բնակչության շահերից, քանի որ Գերմանիայի հովանավորությանն արժանացած Վրաստանում հայերի համար ևս կստեղծվի կյանքի ավելի ապահով վիճակ: Ազգագրական սկզբունքից հրաժարվելու վրացական կողմի քայլի դեմ բողոքեց Խ. Կարճիկյանը՝ վրաց մենշևիկների նման մոտեցումը բնութագրելով Հայաստանը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև բաժանելու գործելակերպ:[1]

Հաշվի առնելով կողմերի մոտեցումների տարբերությունները՝ որոշվեց խորությամբ ուսումնասիրել հարցը և նոր խորհրդաժողովում հանդես գալ միմյանց համար ընդունելի, փոխզիջումային առաջարկություններով: Մինչև նոր խորհրդաժողովը, վիճելի տարածքների հարցը մնալու էր առկախ: Բայց, հակառակ կայացված որոշման, արդեն հաջորդ օրերին վրացական մամուլը հեղեղվեց հոդվածներով, որոնցում ընդգծվում էր, որ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունն իր հայեցողությամբ արդեն գծել է ապագա հայ–վրացական սահմանը՝ Վրաստանի մեջ նախատեսելով Բորչալուի հայաբնակ մասը, Ղազախը (ներկայիս Իջևանի շրջանի տարածքի հետ –Ա.Մ.), թուրքերի հեռանալուց հետո՝ նաև Փամբակն ու Ախալքալաքը: Մինչդեռ, Հայաստանի կառավարությունը, նպատակ ունենալով հարցի կարգավորմանը հասնել միայն խաղաղ եղանակներով, օգոստոսի 3–ին խորհրդարանում հանդես եկավ ծրագրային հայտարարությամբ, որում մասնավորապես խնդիր էր դրվում «Ատրպատականի (ի նկատի է առնվում ներկայիս Ադրբեջանը – Ա.Մ.) և Վրաստանի հետ փոխադարձ համաձայնության գալով, լուծել Հայաստանի և այդ պետությունների սահմանների հարցը, հիմք ունենալով էթնիկական սկզբունքը՝ իբրև միակը, որը համապատասխանում է ռամկավար պետությունների ոգուն և նպատակներին»:[1] Այսպես, ամռանը, սահմանային հարցերում իրարամերժ դիրքորոշումների պայմաններում, հայ–վրացական խորհրդակցությունները մտան փակուղի և վերսկսվեցին միայն աշնանը, երբ թուրքերը սկսեցին հեռանալ գրավված տարածքներից:

Ախալքալաքցի գաղթականների վիճակը շարունակում էր վատթարանալ: Նրանք, փաստորեն, հայտնվել էին յուրահատուկ արգելափակոցում: Դեպի հյուսիս՝ Բակուրիան ու Բորժոմ ճանապարհը փակել էր վրացական զորքը, իսկ ետդարձի ուղին դեպի գավառ՝ թուրքերը:

1918 թ. հուլիսի սկզբին վրաց կառավարությունը մերժեց Հայոց ազգային խորհրդի միջնորդությունները գաղթականներին Վրաստանի խորքերը տեղափոխելու, ինչպես և Բորչալուից հեռացած մահմեդականների բնակավայրերում տեղավորելու իրավունք արտոնելու մասին՝ իր այդ տմարդի քայլը «բացատրելով» համաճարակների տարածումը Վրաստանում կանխելու պատճառաբանությամբ:[2]

Այսպիսով՝ և՛ վրաց կառավարության, և՛ թուրքական հրամանատարության կողմից որևէ ուղղությամբ տեղաշարժվելու իրավունքից զրկված ջավախքցի գաղթականները դատապարտվում էին բնաջնջման: Օգոստոս ամսին, երբ դեռ չէին սկսվել ցրտերը, արդեն գաղթականների շրջանում օրական մահանում էր մինչև 100 մարդ:[3] Խոսելով վրացական իշխանությունների նման անմարդկային վերաբերմունքի մասին՝ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը ցավով նշում էր. «Այս տխուր փաստը հիշատակում ենք ոչ թե մեր ահռելի կորուստների կսկիծը վերարծարծելու համար, այլ որպեսզի ցույց տանք, որ Ժորդանիան և իր ընկերները... Ախալքալակի և Հայկական Բորչալուի հայ բնակիչներին հանրապետության քաղաքացի չէին նկատում, այլ անցանկալի եկվոր-

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Ե., 1993, էջ 214–215, Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 91:

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., փաստաթղթերի ժողովածու, Ե., 2000, էջ 58:

[2] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 127–127ա և ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 264, թ. 1–2:

[3] «Հորիզոն», 1918, 30 օգոստոս:

ներ, որոնց մասին հոգալը իրենց պարտականությունը չէին համարում»:[1]

Գաղթականության հոգսերի ողջ ծանրությունը մնաց Հայոց գաղթականական խորհրդի, Ախալքալաքի Հայրենյաց վարչության, Կովկասի հայոց բարեգործական ընկերության, Վրաստանում Ամերիկյան առաքելության, մասամբ նաև Վիրահայոց Ազգային խորհրդի, Ա. Ջամալյանի ուսերին: Հայաստանի անունից Ազգային խորհուրդը Բակուրիանում մշտական ներկայացուցիչ նշանակեց Արշակ Թորոսյանին, Ծալկայում՝ Արարատ Տեր–Գրիգորյանին: Գաղթականներն էլ իրենց կողմից լիազոր նշանակեցին Մեսրոպ քահանա Մելեյանին:

Մինչև 1918 թ. դեկտեմբերը բծավոր տիֆն ու խոլերան սկսեցին «հնձել» գաղթականությանը: Այդ օրերին «Մշակում» տպագրված մի թղթակցությունում Պողոս Աբելյանը գրում էր. «Ախալքալաքցիների բնաջնջումն այնքան աճող է գնում, որ եթե գաղթականներին փրկելու համար ձեռք չառնվեն ժամանակի պահանջած միջոցներ, ախալքալաքցիների այս սերունդը կլինի վերջինը երկրագնդի վրա»:[2] 1918 թ. հունիսից մինչև նոյեմբեր Բակուրիանիի անտառներում զոհվեց ավելի քան 18 հազ. մարդ: Գրեթե նույնքան զոհ տվեցին Ծալկայի և Մանգլիսի շրջաններում ապաստանած հայ գաղթականները: Մինչև հաջորդ գարուն ախալքալաքցի գաղթականների կորուստը հասավ 40 հազարի:[3]

1918 թ. հոկտեմբերի 30–ին Մուդրոսում Անտանտի երկրների հետ կնքած զինադադարի համաձայն՝ թուրքերն սկսեցին զորքերը ետ քաշել մինչև 1914 թ. սահմանը: Հետևաբար դրվում էր նաև Ախալցխայի և Ախալքալաքի գավառներից զորքերի դուրսբերման հարցը: Ինքնաբերաբար մեջտեղ էին գալիս նաև այդ գավառների պատկանելության և գաղթականության վերադարձի խնդիրները:

1918 թ. նոյեմբերից, հաղթահարելով վրաց զինվորական իշխանությունների հարուցած զանազան արգելքները, հաճախ շրջանցիկ ճանապարհներով, Ախալքալաքի գաղթականության բեկորներն սկսեցին վերադառնալ իրենց ավերված ու թալանված բնակավայրերը: Բակուրիանիից հայրենի գավառ անցնելու թույլտվության դիմաց վրաց զինվորականները գաղթականներից պահանջում էին ստորագրություններ՝ վրացահպատակություն ընդունելու, գավառը Վրաստանի մաս ճանաչելու մասին:[1] Դեպքերի զարգացումն ականատեսից տանում էր դեպի հայ–վրացական հարաբերությունների սրում:

Դեկտեմբերի 1–ին ՀՀ կառավարությունը քննարկեց Ախալքալաքի գավառ կանոնավոր զորքեր մտցնելու հարցը: Զինվորական նախարար Հովի. Հախվերդյանը տեղեկացրեց, որ նախօրյակին բարձրաստիճան զինվորականներ Սիլիկյանի, Դրոյի, Դոլուխանյանի, Զինկևիչի մասնակցությամբ կայացած հատուկ խորհրդակցությունը Ջավախք զորք մտցնելու քայլից առժամանակ ձեռնպահ մնալու որոշում է կայացրել՝ «նկատի առնելով սպասվելիք բարդությունները հարավային սահմանի վրա և մի քանի այլ հանգամանքներ»: Կառավարությունը հիմնավոր գտավ զինվորական նախարարի պատճառաբանությունները և վճռեց «լիազորել նրան՝ չմտցնել ներկայումս Ախալքալաքի գավառը զորք և առայժմ բավականանալ նախապատրաստական գործողություններով»:[2]

Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ հայ զինվորականության և նրա խորհուրդներով առաջնորդվող կառավարության նմանօրինակ գործելակերպն արդարացված չէր: Նախ՝ անհասկանալի է, թե այդ ժամանակ հարավում ի՞նչ բարդություններ կարող էին սպասվել հանրապետությանը: Եթե խոսքը թուրքական վտանգի մասին էր, ապա այն խիստ կասկածելի էր: Թուրքերը ոչ միայն ի զորու չէին նոր հարձակում ձեռնարկել հայերի դեմ, այլև Մուդրոսի զինադադարի ուժով, շարունակում էին հեռանալ Անդրկովկասից և այդ մասին պաշտոնապես տեղեկացրել էին Հայաստանի և Վրաստանի կառավարություններին՝ նրանց զորքերին հրավիրելով Ջավախք:

[1] Ջամալեան Ա., նշվ. աշխ., Հայրենիք, 1928, ապրիլ, էջ 90:
[2] «Մշակ», 1919, թիվ 14:
[3] ՀՀ ԳԱԱ ՊԻ արխիվ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 264, թ. 1–2:

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 131ա:
[2] ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 105, հմմտ.՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 73:

Բնականաբար չէր կարող սպասվել որևէ վտանգ նաև բարեկամ Պարսկաստանից: Այնպես որ այդ «զգուշավոր» քայլը, որ ավելի շուտ անվճռականության և իրավիճակում ճիշտ չկողմնորոշվելու հետևանք էր, ինչպես կտեսնենք, բավական թանկ նստեց Հայաստանի և մասնավորապես Ջավախքի հայության վրա: Պատահական չէ, որ հետագայում Ախալքալաքի խնդրով, բավական ուշացումով, Հայաստանի ղեկավարության ձեռնարկած քայլերն այդպես էլ շոշափելի արդյունք չտվեցին:

Ինչպես երևում է փաստաթղթերից, կառավարության վերոհիշյալ որոշումը՝ Ջավախք զորք չմտցնելու վերաբերյալ, այնուամենայնիվ, կատարվել է մասնակիորեն:

Հայկական զորքերի հրամանատարությունը մի քանի օր անց՝ հավանաբար դեկտեմբերի 6–ին, տեղեկացած չլինելով Ալեքսանդրապոլի գավառից թուրքերի դուրս գալու մասին, Ղարաքիլիսայից Ծալկայի վրայով մի փոքրաթիվ հեծյալ ջոկատ է հասցրել Ախալքալաքի գավառ: Վերջինս կարողացել է մտնել գավառի հարավային մասը՝ Եֆրեմովկա–Տրոյիցկոյե գյուղերի շրջան: Այդ մասին վկայում է նաև Ջավախք շարժվող վրացական զորքերի հրամանատարության մի հաղորդագրությունը՝ ուղղված կառավարությանը, որում խնդրվում էր միջոցներ առաջարկել ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, քանզի սպասվում էր անցանկալի միջադեպ, այն է՝ ռազմական բախում Բոգդանովկա մտած հայկական գումարտակի հետ:[1] Սակայն, ինչպես կտեսնենք, հայկական կողմը հապաղեց, իսկ վրացիները գրավեցին գավառի հիմնական՝ կենտրոնական և հյուսիսային մասը:

Դեկտեմբերի 5–ին Ս. Տիգրանյանն անհրաժեշտ համարեց հուշագիր ներկայացնել ՀՀ-ում Վրաստանի ներկայացուցիչ Մդիվանուն՝ առաջարկելով ձեռնպահ մնալ Ախալքալաքը գրավելու գործողություններից և սկսել բանակցություններ:[2] Այնինչ Հայաստանի ղեկավարությունն անտեղյակ էր, որ նույն օրը՝ դեկտեմբերի 5–ի առա-

[1] Politika, 1998, N 4-6, gv. 7.

[2] Ջամալեան Ա. նշվ. աշխ., «Հայրենիք», 1928, ապրիլ, էջ 94 և Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., էջ 75:

վոտյան արդեն վրացական կառավարությունը, որ մինչև այդ բռնազավթել էր Լոռին, զորավար Մակաևի (Մաղաշվիլի) գլխավորությամբ զորք էր մտցրել նաև Ջավախք և գրավել նրա կենտրոն Ախալքալաքը:

Վրացական գերակշիռ ուժերի հետ չբախվելու նկատառումով, հայկական փոքրաթիվ ջոկատը ստիպված դուրս եկավ գավառից:[1] Առնվազն տարօրինակ է, որ Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորին դեկտեմբերի 7–ին հայկական կողմին ուղարկած իր պատասխան հեռագրում վրացական զորքերի մուտքը Ախալքալաք պատճառաբանում էր տեղական բնակչության շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ և պատմական, քաղաքական ու բարոյական տեսանկյուններից այն Վրաստանին պատկանելու «իրողությամբ»: Ընդ որում, ոչինչ չէր ասվում էթնիկական սկզբունքի մասին:

Վրացական զորքերը, Ախալքալաքում «կարգ ու կանոն հաստատելու նպատակով», զինաթափեցին տեղի ինքնապաշտպանական ուժերը, մինչև դեկտեմբերի 10–ը հսկողության տակ վերցրեցին ամբողջ գավառը, ստեղծեցին վրացական վարչություն, սկսեցին խոչընդոտել դեռ հայրենի օջախներ չվերադարձած գաղթականների մնացած մասի տունդարձը:

Դեկտեմբերի 16–ին Հայաստանի խորհուրդը (խորհրդարան) հավանություն տվեց Ախալքալաքի և Բորչալուի գավառների հայ բնակչության անվտանգության ապահովմանն ու այդ տարածքները վրացական զորքերից ազատագրելուն ուղղված Քաջազնունու կառավարության ուշացած քայլերին և հատուկ որոշում ընդունեց՝ գործադիր իշխանությանն ազատ գործելու իրավունք արտոնելով: Այսպես, դեկտեմբերի կեսերին ծագեց հայ–վրացական պատերազմը, որի սանձազերծման գործում, ինչպես նշվեց, իրենց ամենամեծ դերն ունեցան թուրքերը:

Հայկական ուժերը Դրոյի գլխավորությամբ ազատագրեցին Լոռու մեծ մասը: Դեկտեմբերի 11–12–ին հայկական դիվիզիայի հետևակային 4-րդ գնդի մեկ գումարտակ Ալեքսանդրապոլից

[1] Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 225–226:

շարժվեց դեպի Ախալքալաք և այնտեղ մտած վրացական զորքերի հետ ընդհարումից հետո հսկողության տակ վերցրեց գավառի մեծ մասը: Վրացական ուժերը քաշվեցին հյուսիս:[1]

Չծանրանալով հայ-վրացական երկշաբաթյա ռազմական բախման հայտնի մանրամասների վրա, նշենք, որ դեկտեմբերի 31–ին այն Անտանտի երկրների հրամանատարության միջնորդությամբ դադարեցվեց: Հունվարի 9–17–ը Թիֆլիսում կայացավ հաշտության կոնֆերանս: Այն, որ կոնֆերանսի անցկացման վայր էր ընտրված ոչ թե չեզոք վայր, այլ Վրաստանի մայրաքաղաքը, գերակա դիրք էր ենթադրում վրացական պատվիրակության համար:

Կոնֆերանսը նախագահում էր անգլիական բանակի գնդապետ Ստյուարտը: Ֆրանսիական հրամանատարությանը ներկայացնում էր կապիտան Հասսելդը: Հայկական պատվիրակության մեջ ընդգրկված էին Մ. Հարությունյանը (նախագահ), Ստ. Մամիկոնյանը և ուրիշներ, իսկ ռազմական խորհրդականն էր գեներալ Գ. Կորգանովը (Կորգանյան), քարտուղարը՝ Ա. Ա. Ահարոնյանը: Վրաստանի պատվիրակությունն ավելի ներկայացուցչական էր: Այն ղեկավարում էր արտգործնախարար Ե. Գեգեչկորին: Անդամներն էին Սաբախտարաշվիլին, գեներալ Գեդևանովը և ուրիշներ:

Ախալքալաքի հարցը, որ կոնֆերանսի ամենասուր խնդիրներից էր, քննարկվեց հունվարի 13–ի նիստում: Գնդապետ Ստյուարտն ի սկզբանե դրսևորեց կողմնակալ պահվածք և ամբողջ նիստի ընթացքում գործեց վրացիների հետ փոխհամաձայնեցված սցենարով: Նախ՝ նա առաջարկեց, որ հիմնահարցի կարգավորման վերաբերյալ քննարկման դրվի վրացական պատվիրակության առաջարկը, որը մինչ այդ, հայ–վրացական պատվիրակությունների հանդիպման ժամանակ, արդեն մերժվել էր հայ պատվիրակների կողմից: Խնդիրը վերաբերում էր Ախալքալաքում զորքեր տեղակայելուն: Վրացիներն առաջարկում էին Ջավախքում պահել միայն վրացական զորքեր. 200 հոգանոց մի զորաջոկատ պետք է կանգներ գավառի սահմանի երկայնքով, իսկ 360 հոգանոց մեկ գումարտակ՝

[1] Հարությունյան Կ. Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թվականներին, Ե., 2002, էջ 58:

չորսական հրանոթներով ու գնդացիրներով, պիտի տեղակայվեր Ախալքալաք քաղաքում: Ջավեշտական է, այն որ գավառում վրացական զորքերի ներկայությունը գեներալ Գեդևանովը «հիմնավորում» էր հայ բնակչության շահերի պաշտպանության «մտահոգությամբ». վրացական զորքը պետք է կանխեր արյունահեղությունը գավառ վերադարձող հայ գաղթականության և նրանց բնակավայրերում հաստատված մահմեդականների միջև: Ինչ վերաբերում է հայ բնակչության անվտանգությանը, ապա ըստ վրաց գեներալի, անհանգստանալու հարկ չկար, քանի որ «ձմռանը, ծյան առկայությունն Ախալքալաքի գավառում անհնարին է դարձնում այդ շրջանում ռազմական գործողությունները, և ուստի, այդ զորքերը չեն կարող օգտագործվել Հայաստանի դեմ»:[1]

Հայկական կողմի առարկությունները չեն ընդունվում անգլիացիների կողմից: Ստյուարտն առաջարկում է որպես երաշխիք գավառ մտցնել դաշնակիցների մեկ վաշտ: Բայց շուտով պարզվում է, որ հայերի համար քիչ թե շատ ընդունելի այդ տարբերակը հնարավոր չէ իրագործել, քանի որ դաշնակից զորքերն անմիջապես չեն կարող ժամանել տարածաշրջան: Այդ ժամանակ Ստյուարտն ընդունում է վրացական կողմի առաջարկը՝ մինչև դաշնակիցների ժամանումը Ախալքալաքում տեղակայել վրացական 800 հոգանոց մի զորախումբ: Կորգանովն առաջարկում է ի հակակշիռ վրացական զորքերի այդ քանակության, հայերին թույլատրել իրենց ռազմական ուժերն Հարավային Բորչալուում հասցնել 600 զինվորի: Բայց՝ ապարդյուն: Հասկանալի է, որ այս ամենը նախապես մշակված վրաց–անգլիական դիվանագիտական հնարք էր:

Ստյուարտի ճնշման տակ հայկական պատվիրակությունը համաձայնվում է վրացական նախագծի հետ, որը ոչ միայն արտոնում էր Վրաստանին զգալի քանակությամբ զորքեր պահելու Ջավախքում, այլև՝ առանց դաշնակիցների ներկայության և հսկողության, բացառել Հայաստանի որևէ մասնակցություն Ախալքալաքի գավառի գործերին: Ավելին, Գեդևանովի պահանջով արձանագրության

[1] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 104, թ. 77:

մեջ մտցվում է հատուկ կետ, ըստ որի՝ Վրաստանի նկատմամբ Հայաստանի որևէ ագրեսիվ գործողություն գնահատվելու էր իբրև թշնամական քայլ դաշնակիցների հանդեպ:[1]

Կոնֆերանսում դաշնակիցների ջանքերով ի վնաս հայերի որոշում է կայացվում նաև Ախալքալաքի վարչակարգի ձևավորման սկզբունքների վերաբերյալ: Չի ընդունվում տեղական մարմիններն ընտրովի դարձնելու մասին հայերի առաջարկը: Ստյուարտը խուսափելով իրեն ուղղված հայկական կողմի արդարացի հարցադրումներից՝ առաջնորդվում էր այն «սկզբունքով», որ այդ խնդիրը դուրս է կոնֆերանսի իրավասությունից և արդեն լուծված է դեկտեմբերի վերջին գեներալ Ռայկրոֆտի նախագծով կնքված զինադադարի համաձայնագրով: Հայկական պատվիրակությանը չի հաջողվում հասնել գոնե այնպիսի որոշման, որ վրացական վարչակարգի գործունեությունը հսկելու համար նախատեսվող հանձնաժողովում հայ անդամների թեկնածությունն առաջադրվի Հայաստանի և հաստատվի դաշնակիցների կողմից: Այդ հարցը ևս փաստորեն մնում է միայն Վրաստանի իրավասությանը, որը պետք է տեղի հայերից և մահմեդականներից ընտրված ներկայացուցիչներին, դաշնակից երկրների դիտորդների ներկայությամբ, վստահեր իր գործունեության «հսկողությունը»: Բայց քանի որ ո՛չ դաշնակից զորքերը ժամանեցին Ջավախք, ո՛չ էլ նրանց դիտորդները, վրացական կառավարությունը գավառում հաստատեց իր լիակատար իշխանությունը, իսկ Վերահսկիչ հանձնաժողովում ընդգրկվելու համար տեղի հայ ու մահմեդական ներկայացուցիչներին ընտրելու գործը դարձավ ձևական և նույնպես հայտնվեց վրացական իշխանությունների ձեռքում:

Այսպիսով՝ բրիտանական պատվիրակությունն Ախալքալաքի հիմնահարցի քննարկումը տարավ այնպիսի ուղիով, որ արդյունքում ընդունվի միայն վրացիների համար ընդունելի որոշում: Հայկական կողմի արդարացի բոլոր առարկություններին, հատկապես այն հարցում, որ անհասկանալի է, թե ինչպես կարելի է Հայաստանին զրկել գերազանցապես հայերով բնակեցված այդ գավառի վարչաքաղաքական կյանքին մասնակցելու իրավունքից, գնդապետ Ստյուարտը դեմագոգիկ ձևով պատասխանեց, որ այդ գործառույթը կկատարեն դաշնակիցների զորքերն ու նրանց դիտորդները:

Անգլիացիների կողմնակալ կեցվածքն այնքան ոգևորեց վրացական պատվիրակությանը, որ արտգործնախարար Ե. Գեգեչկորին վստահորեն հայտարարեց, որ «այդ (Ախալքալաքի – Ա. Մ.) վարչակարգի հանդեպ Հայաստանը ոչ մի գործ չպետք է ունենա»՝ նույնիսկ չհամաձայնելով Վերահսկիչ հանձնաժողովի ընտրությունների մասին Հայաստանի կառավարությանը տեղյակ պահելու վերաբերյալ Ստյուարտի առաջարկության հետ: Հատկանշական է, որ վրացական պատվիրակության նախագահի այդ կարծր, հայերի ու դաշնակիցների համար նաև վիրավորական կեցվածքը, անգլիացի գնդապետը բավարար համարեց և առանց հայկական կողմի բողոքները հաշվի առնելու՝ հայտարարեց հարցը վերջնականապես լուծված:[1]

Հատկանշական է, որ կոնֆերանսում վրաց պատվիրակության հանդուգն պահվածքը պայմանավորված էր ոչ միայն անգլիացիների վրացամետ կեցվածքով, այլ նաև հետևանք էր հայ–վրացական հակամարտության շրջանում վրաց–ադրբեջանական մերձեցման: Ինչպես իրավացիորեն նկատել է ակադեմիկոս Գ. Գալոյանը, այդ շրջանում ավելի խորացնելով մենշևիկ–մուսավաթական գործակցությունը, կողմերը շուտով կնքեցին վրաց–ադրբեջանական պայմանագիր, որի գաղտնի հոդվածներից մեկի համաձայն՝ հայ–ադրբեջանական պատերազմի դեպքում Վրաստանը պարտավորվում էր շրջափակել Հայաստանի հաղորդակցության բոլոր ուղիները:[2]

Խաղաղության խորհրդաժողովն ավարտվեց հունվարի 17–ին: Կնքված հաշտությունը խիստ ծեռնտու էր վրացական կողմին: Հայկական զորքերի ռազմական հաջողություններն ի չիք էին դառնում: Լոռու ազատագրված ավելի քան 40 գյուղեր՝ մեծ մասամբ հայաբնակ, մտնում էին Չեզոք գոտու մեջ, իսկ Ջավախքը, թեև դիտվում էր վիճելի տարածք, մնում էր վրացիների հսկողության ներքո:[3]

[1] Նույն տեղում, թ. 78–79:

[1] Նույն տեղում, թ. 80–82:
[2] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, 1917-1923 թթ., էջ 54:
[3] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75, թ. 3ա, 5ա:

Այնտեղ վրացական կառավարությանը թույլատրվում էր պահել ոչ ավել, քան 225 հետևակային (2 վաշտ՝ 2 գնդացիրով): Տեղի վրացական վարչության գործունեության հսկողությունը, ինչպես նշվեց, ձևականորեն դրվելու էր Անտանտի երկրների ներկայացուցիչների վրա, որոնք այն իրականացնելու էին գավառի հայ և մահմեդական բնակչության օժանդակությամբ:[1]

Ինչևէ, հայ–վրացական եղբայրասպան պատերազմն ավարտվեց, ազգամիջյան լարվածությունը հետզհետե տեղի տվեց, և երկու երկրների միջև շուտով հաստատվեցին ընդունելի միջպետական հարաբերություններ: Մարտին երկու հանրապետությունները ճանաչեցին միմյանց անկախությունը, վերականգնվեց երկաթուղային երթևեկությունը, աշխուժացան տնտեսական կապերը: Սակայն Վրաստանի կառավարությունը, օգտագործելով իր աշխարհագրական դիրքը, չմոռացավ ժամանակ առ ժամանակ հակահայ քայլեր կատարել՝ ընդհուպ մինչև տնտեսական շրջափակումն ու արտասահմանից հայ սովյալների համար նախատեսված սննդամթերքի թալանը:[2] Բարեբախտաբար, ռազմական կոնֆլիկտից հետո հայ–վրացական քաղաքական շրջանակներում երկուստեք գերակշռեց հարցերը միմիայն քաղաքական ճանապարհով լուծելու մոտեցումը, որին կողմերը հետագայում հարազատ մնացին անգամ ամենաբարդ իրավիճակներում: Ուշագրավ է, որ թեև վիճելի խնդիրներից շատերին այդպես էլ լուծումներ չգտնվեցին, սակայն բարեկամական հարաբերությունները պահպանվեցին: Ոչ դյուրին տարածքային վեճերը լուծելու համար ևս պահպանվեց քաղաքակիրթ եղանակով բանակցելու գործելակերպը. ձեռք բերվեց համաձայնություն այդ խնդրով մշտապես բանակցային գործընթաց ապահովելու մասին:

1919 թ. հունվարյան հայ–վրացական կոնֆերանսից հետո անգլիացիների առաջարկած լուծումից դժգոհ մնացած հայկական կողմը փորձեց հարցը տեղափոխել միջազգային ատյաններ. նախ՝ Բեռն՝ 2–րդ ինտերնացիոնալի խորհրդաժողով (1919 թ. փետրվար),

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., էջ 82–83:
[2] Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 99–100:

ապա՝ Փարիզի՝ խաղաղության վեհաժողով: Բեռնում վրացական սոցիալ–դեմոկրատ մենշևիկները, այդ թվում՝ նրանց պարագլուխ Ա. Չխենկելին, ընդունեցին Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչների առաջարկությունը՝ հայ–վրացական տարածքային խնդիրը խորհրդաժողովի օրակարգ մտցնելու մասին: Ինտերնացիոնալի կուսակցությունների մեծամասնության առաջարկով վիճելի տարածքների պատկանելության սկզբունք հռչակվեց ազգերի ինքնորոշման իրավունքը, իսկ դրա կիրառման միջոց՝ հանրաքվեն:[1]

Կասկածից վեր է, որ այդ սկզբունքի կիրառման դեպքում Լոռու հայաբնակ մասի և Ախալքալաքի հիմնահարցը կլուծվեր հօգուտ Հայաստանի: Ամենայն հավանականությամբ, Բեռնում վրաց մենշևիկներն «ընդունեցին» հանրաքվեի գաղափարը հանուն Եվրոպայի սոցիալիստական կուսակցությունների հետ համերաշխության և ժամանակ շահելու նպատակով՝ առավել ևս, որ անգլիացիների կողմից Լոռու Չեզոք գոտու ստեղծումով վրացիներն արդեն որոշակի ազդեցություն էին ձեռք բերել այդ տարածքի նկատմամբ, իսկ Ջավախքն էլ առժամանակ մնալու էր նրանց հսկողության ներքո:

Պատահական չէ, որ հետագայում հրավիրված խորհրդաժողովներում խոստացված հանրաքվեի գաղափարը վրաց մենշևիկների կողմից այդպես էլ չպաշտպանվեց: Երբ 1919 թ. գարնանից սկսեց գործել հայ–վրացական սահմանային հաշտարար հանձնաժողովը, վրացական լիազորները հրաժարվեցին հանրաքվե անցկացնելու գաղափարից և հատկապես անզիջում դիրք բռնեցին Ախալքալաքի գավառի խնդրում: Վրացական կառավարությունն այդ հարցում ձգտում էր հիմք ընդունել հունվարյան կոնֆերանսի բանաձևը՝ օգտվելով նաև Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Վ. Թոմսոնի աջակցությունից: Վերջինս վրացիների դրդմամբ 1919 թ. ապրիլի 14–ին Թիֆլիսում հանդես եկավ սահմանային հարցերի ժամանակավոր լուծման որոշումով: Դիմելով Վրաստանի կառավարության նախագահին և Թիֆլիսում

[1] Ջամալեան Ա., Հայ–վրացական կնճիռը, «Հայրենիք», 1928, ապրիլ, էջ 95–96:

Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին՝ նա առաջարկում էր, «ի շահ երկու ժողովուրդների», երկուստեք, շուտափույթ համաձայնվել՝ Ախալքալաքի գավառը վրացական վարչական ենթակայության տակ դնելու, Բորչալուի գավառի մեծ մասը (ներառյալ Ալավերդի քաղաքը), Արդահանի գավառի մի մասը (Կուր գետի ողջ ձախափնյակը՝ Արդահան քաղաքով հանդերձ) Վրաստանին հանձնելու իր ծրագրի հետ:[1] Հատկանշական է, որ անգլիական ռազմական առաքելության պարագլխի այս որոշումը, որ քիչ բանով էր տարբերվում գնդապետ Ստյուարտի և անգլիացի մյուս զինվորականների վերոնշյալ հակահայ դիրքորոշումներից, քննարկման նյութ չէր դառնալու և ուղղակի պարտադրանք էր հայկական կողմին: Այն ևս, հայ–վրացական հունվարյան խորհրդաժողովի օրինակով, հավասար պայմանների մեջ չէր դնում կողմերին:

Նախ՝ դարձյալ խնդրի արծարծման վայր էր ընտրված Վրաստանի մայրաքաղաքը և երկրորդ՝ իբրև վրացական կողմի շահերի պաշտպան, որոշումը հասցեագրված էր Վրաստանի վարչապետին, իսկ հայկական կողմից՝ միայն Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին: Անկասկած, այսքան պատասխանատու խնդրով դիմելով պաշտոնական դիրքով անհամեմատ ցածր կարգավիճակ ունեցող պաշտոնյայի, որպիսին վարչապետի համեմատությամբ դիվանագիտական ներկայացուցիչն էր, անգլիական գեներալը հասկացնել էր տալիս, որ իրենք չեն խորշում անգամ դիվանագիտական էթիկայի նորմերի ոտնահարումից և հաստատապես կանգնած են Վրաստանի շահերի պաշտպանության դիրքերում: Ինչպես երևում է դեպքերի հետագա ընթացքից, Հայաստանի ղեկավարությունն անպատասխան թողեց Թոմսոնի այս յուրահատուկ որոշում–առաջարկությունը, իսկ վրացիները քայլ առ քայլ գործողության մեջ դրեցին անգլիական մոտեցումները եվրոպական միջազգային կուսակցական կառույցներում ևս՝ փորձելով հարցերը լուծել հօգուտ իրենց:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 191, թ. 34 և Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., էջ 98–99:

1919 թ. գարնանը Ամստերդամում կայացած սոցիալիստական կուսակցությունների խորհրդաժողովում վրաց մենշևիկները, օգտվելով այնտեղ Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչների բացակայությունից, հայտարարեցին, որ իրենք հայերի հետ տարածքային որևէ խնդիր չունեն: Ի պատասխան այդ քայլի, հայտնի գործիչ, Իտալիայում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Միքայել Վարանդյանը Դաշնակցության անունից 2–րդ ինտերնացիոնալի գործադիր մարմնին տեղեկացրեց, որ վրացիների այդ հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, և Վրաստանը փաստորեն, հրաժարվում է Բեռնի խորհրդաժողովի որոշումից:

1919 թ. մայիսի սկզբներին 2–րդ ինտերնացիոնալի գործադիր մարմինն անդրադարձավ հայ–վրացական տարածքային վեճերին: Վրացիները համոզված լինելով, որ իրենց կրկին պարտադրվելու է հայերի համար շահեկան հանրաքվեի սկզբունքը, առաջ քաշեցին հիմնահարցի լուծման նոր՝ միջնորդ դատարանի (արբիտրաժի) տարբերակը,[1] որի շնորհիվ նրանք ակնկալում էին հարցի հետագա ձգձգում և ստեղծված ստատուս քվոյի պահպանում: Ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքն օրակարգից հանելու համար վրացական ազդեցիկ մենշևիկներից Ծերեթելին հայերին հարցրեց, թե դուք «պատրա՞ստ եք նույն սկզբունքը կիրառելու նաև Թուրքահայաստանում»:[2] Բնականաբար, ցեղասպանություն տեսած Արևմտյան Հայաստանում հանրաքվեի սկզբունքի կիրառումը հայ ժողովրդի համար ցանկալի արդյունք չէր կարող ապահովել, և տվյալ դեպքում շահարկվում էր հայության ապրած պատմական ողբերգության հանգամանքը: Ավելին, վրաց գործիչներն առաջարկում էին 1919 թ. մայիսից Հայաստանի Հանրապետության մաս կազմող Կարսի մարզն ու դեռ միացվելիք Արևմտյան Հայաստանը հայացնել՝ ախալքալաքցիներին այնտեղ վերաբնակեցնելու եղանակով: Այդ ճանապարհով, ըստ նրանց, «կլուծվեր» Ջավախքի հիմնահարցը և միա-

[1] Ջամալեան Ա., նշվ. աշխ., «Հայրենիք», 1928, ապրիլ, էջ 99:
[2] Varandian M., Le conflit arméno–géorgien et la guerre du Caucase, Paris, 1919, էջ 144, Ջամալեան Ա., նշվ. աշխ., «Հայրենիք», 1928, ապրիլ, էջ 99:

ժամանակ «կվերացվեր» հայ–վրացական հակամարտության գլխավոր պատճառը:

Անդրկովկասում տարածքային վիճելի խնդիրների լուծման վերաբերյալ անգլիական կառավարության մոտեցումները Փարիզում 1919 թ. մայիսի 16–ին հայկական պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանին ներկայացրեց անգլիացի դիվանագետ Լուի Մալլետը: Ի պատասխան Ահարոնյանի այն հարցի, թե ինչո՞ւ են անգլիացիները Հայաստանի համար կենսական տարածքների՝ հայաբնակ Ղարաբաղի, Լոռու և Ախալքալաքի հարցում պաշտպանում Ադրբեջանին և Վրաստանին, Մալլետը պատասխանեց, որ դրա փոխարեն հայերը կստանան Արևմտյան Հայաստանը:[1]

Եվրոպական տերություններից որևէ օժանդակություն չստանալով՝ Հայաստանը փորձեց ապավինել սոցինտերնի պաշտպանությանը: 2–րդ ինտերնացիոնալի գործադիր մարմինը մերժեց միջնորդ դատարանի վերաբերյալ վրացիների առաջարկը և կրկնեց Բեռնի խորհրդաժողովի որոշումը՝ միակ արդարացի սկզբունք համարելով հանրաքվեն: Լոռիում և Ախալքալաքում հանրաքվե անցկացնելու համար որոշվեց տարածաշրջան ուղարկել սոցինտերնի հատուկ պատվիրակություն: Դաշնակցության ներկայացուցիչները նաև առաջարկեցին, որ հանրաքվեի ժամանակ որևէ ճնշում կամ բռնամիջոց բացառելու և տեղական բնակչությանը սեփական կամքը ազատորեն դրսևորելու հնարավորություն ընձեռելու համար անհրաժեշտ է այդ գավառներից դուրս բերել վրացական զորքը: Վրացական կողմը չընդունեց այս առաջարկությունները, և հարցը նորից մտավ փակուղի: Հայաստանի ղեկավարությունը, ինչպես երևում է կառավարության 1919 թ. հուլիսի 19–ի որոշումից, վրացիների նմանօրինակ կարծր դիրքի պայմաններում էլ հարցի լուծման միակ տարբերակ ընդունեց քաղաքական ուղին: Ուստի հանձնարարվեց արտգործնախարարին վերսկսել բանակցությունները վրացական կառավարության հետ՝ արդյունքները ՀՀ խորհրդարանի օգոստոսի մեկին սկսվելիք նստաշրջանի հաստատմանը ներկայացնելու համար:[1] Սակայն հետագա ամիսներին ազգերի ինքնորոշման իրավունքի հարգման, հանրաքվեի անցկացման, էթնիկ–ազգագրական սկզբունքի կիրառման և այլ միջազգային նորմերի ու մոտեցումների հիման վրա լուծումների հասնելու հայկական կողմի բոլոր ջանքերն անցան ապարդյուն՝ ինչպես ուղղակի հայ–վրացական բանակցությունների, այնպես էլ 2–րդ ինտերնացիոնալի միջնորդությամբ հրավիրված խորհրդակցությունների ընթացքում:

[1] Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Ե., 2001, էջ 26–27:

Մինչև 1919 թ. մարտ ամիսը հայրենի գավառ վերադարձան ախալքալաքցի գաղթականների մնացած բեկորները: Գավառը լիովին թալանված էր, հացահատիկն ու անասունների մի մասը տարվել էր Օսմանյան Թուրքիա:

Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց արտասահմանից ստացվող հացահատիկից բաժին հանել նաև Ախալքալաքի գաղթականությանը: Վրաստանը 1919 թ. գարնանը, ապաշրջափակելով ճանապարհները, հրաժարվում էր Ռուսական կայսրության և Անդրկովկասյան սեյմի փլուզումից հետո իրենց մնացած լոկոմոտիվներից ու վագոններից մասնաբաժին հանել Հայաստանին: Դատապարտելով վրացական կառավարության այդ քայլը՝ գրող Ակսել Բակունցը «Հայաստանի աշխատավոր» թերթում ցավով գրում էր. «Քաջասիրտ անտարբերությամբ կխրախուսեն տասնյակ հազարավոր հայության մահացումը սովից, հիվանդությունից (օր. ախալքալակցիները): Իրենց ձեռքին գտնված հազարավոր վագոններից ու լոկոմոտիվներից մեկ–երկու տասնյակն էլ չեն տալ, որ Հայաստանի ժողովրդի հացը փոխադրվի, օրական հարյուրավոր, նույնիսկ հազարավոր մեռնողներին սովից փրկելու»:[2] Միայն հունիսին, երբ Հայկական կառավարությունը զգալի գումարներով գնեց վագոններ, հացահատիկը ներկրվեց հանրապետություն, ապա Ալեքսանդրապոլի վրայով կամ ուղղակի Թիֆլիսից, Հայաստանի միջոցներով, հասցվեց Ախալքալաքի սովյալներին:

[1] ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 84, թ. 28 և Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., էջ 114:

[2] «Նորք», Համերաշխության հիմքը, Ե., 1999, թիվ 2, էջ 22 և «Հայաստանի աշխատավոր», 1919, 26 հունիս, թիվ 81:

Ստացվող հացահատիկից Ախալքալաքի գավառին բաժին հանելու գործը դրվեց պետական մակարդակի վրա: Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչությունում ստեղծվեց հատուկ հաստիք խնամատարության գծով, որը զբաղեցրեց Դ. Դավիթխանյանը: Միայն 1919 թ. մայիսի սկզբին Հայաստանը Ախալքալաքի սովյալներին հատկացրեց 3 մլն. ռուբլու նպաստ և 74 մլն. ռուբլի սերմացու գնելու համար:[1] Այդուհանդերձ, Ջավախքի տնտեսական իրավիճակը չբարելավվեց: Հայրենիք վերադարձած գաղթականությունը չկարողացավ նախապատրաստվել 1919–1920 թթ. ձմռանը և վառելափայտի ու սննդամթերքի սակավության պատճառով անասելի զրկանքներ կրեց: Հարկ եղավ 1920 թ. մարտի 9–ին Թիֆլիսում Հայոց ազգային խորհրդի, Հայոց գյուղատնտեսական ընկերության և Ախալքալաքի Հայրենյաց վարչության համատեղ նիստի կողմից լիազորել Պ. Աբելյանին «մեկնելու Երևան՝ Հայոց կառավարութեան, պառլամենտի և այլ հիմնարկությունների և անձանց առաջ միջնորդելու բաց թողնելու Ախալքալաքի ազգաբնակութեան սերմացուի կարիքների համար ալիւր և դրամական միջոցներ»:[2] 1920 թ. մարտի վերջից Հայաստանի իշխանությունները, հաղթահարելով Վրաստանի հարուցած տնտեսական խոչընդոտները, հացահատիկի նոր խմբաքանակներ ուղարկեցին Ախալքալաք: Վրացական կառավարությունը ծանր մաքսեր սահմանեց ոչ միայն Հայաստան ներմուծվող, այլև Ախալքալաք ուղարկվող այն հացահատիկի վրա, որից մասնաբաժին էր հանվում և՛ հայ, և՛ վրացի գաղթականներին:

Գեներալ Մականը զինաթափեց հայ բնակչությանը, Իմերեթիայից և Թիֆլիսից բերված վրացական միլիցիայի միջոցով հաստատեց խստագույն ռեժիմ: Ընդ որում, վրացիներն ու մեսխեթցի թուրքերը չզրկվեցին զենք կրելու իրավունքից: Հայերից զենք կարող էին ստանալ միայն նրանք, ովքեր «կամովին», բայց իրականում բռնությամբ զորակոչվում էին վրացական բանակ՝ անհնազանդ Աբխազիայի, Օսեթիայի և Աջարիայի դեմ կռվելու համար: «Ախալքալաքցի հայերին,– գրում էր Պ. Աբելյանը,– մեծահիկյան Վրաստանը վաղուց զինաթափ էր արել՝ զինելով գավառի թուրքերին ու վրացիներին»:[1]

Վրացական միլիցիան և ժողովրդական (Ազգային) գվարդիան հայատյաց Ս. Նադիրաձեի գլխավորությամբ հաճախ մտնում էին հայկական բնակավայրերը և կամայականորեն հարկեր հավաքում, բռնագրավում հացահատիկը, գյուղատնտեսական այլ մթերքներ ու անասուններ, համազգեստ պահանջում վրացական բանակի համար: Իրեն շատ սանձարձակ պահող միլիցիայի և գյուղացիության միջև երբեմն լինում էին բախումներ:

Սկսվեց Ջավախքը վրացիներով «գաղութացնելու» քաղաքականությունը: Մինչև 1920 թ. վերջը պետության հովանավորությամբ Ախալքալաքի գավառ փոխադրվեցին մի քանի հարյուր ընտանիք իմերեթցի վերաբնակիչներ:[2] Տեղի վրաց վարչությունը գավառի հյուսիսում և արևելքում ընկած արոտատեղիների մի զգալի մասը խլեց հայերից և հանձնեց թուշերին: Տարբեր մեքենայությունների շնորհիվ մի շարք գյուղեր զրկվեցին իրենց վարելահողերից: Ոտնձգություններ եղան Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցուն պատկանող Կարծախ, Դադեշ, Սուլդա և այլ գյուղերի հողատարածքների նկատմամբ: Վրացական կառավարությունը կանգ չառավ նույնիսկ այնպիսի միջոցի առջև, ինչպիսին ազգաձուլումն էր: Սկսվեց արշավ կաթոլիկ հայերին «վրացացնելու» ուղղությամբ:[3]

Հայ բնակչության համար, մասնավորապես Ախալքալաքի և Ախալցխայի գավառներում, լուրջ դժվարություններ ծագեցին պետական գործավարությունը միայն վրացերենով կատարելու կառա-

[1] Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 266: 1919–1920 թթ. Ախալքալաքի հայ և վրաց գաղթականությունը Ամերիկյան օգնության կոմիտեից ստացավ զգալի քանակությամբ հագուստ և 250 հազ. փութ սպիտակ ալյուր (տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 132):

[2] Ախալքալաքի գավառագիտական թանգարան, գործ 3709, թ. 1:

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 124:

[2] Իմերեթցիների զգալի մասը, չդիմանալով Ջավախքի խստաշունչ կլիմայական պայմաններին, հետագայում վերադարձավ իրենց բնակավայրերը:

[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 122ա: Գտնվեցին առանձին ընտանիքներ, որոնք համաձայնվեցին փոխել ազգանունները: Սակայն հայ-կաթոլիկների ճնշող մեծամասնությունը չընկրկեց վրացական իշխանությունների ազգայնամոլ ձեռնարկումների առջև և կտրականապես հրաժարվեց ազգափոխվել:

վարական որոշման կապակցությամբ: Գաղտնիք չէ, որ այդ շրջաններում վրացերեն լեզուն անհասու էր հայ բնակչությանը և վարչական եղանակով որոշման կիրարկումն անհնարին էր: Նման պայմաններում 1919 թ. կեսերից ինչպես Ախալքալաքի գավառից, այնպես էլ Վրաստանի հսկողության տակ գտնվող հայահոծ այլ տարածքներից, նկատվեցին հայ բնակչության խմբակային արտագաղթեր դեպի Հայաստան:

Անշուշտ, Ջավախքի նկատմամբ մենշևիկների վարած շովինիստական քաղաքականությունն աննկատ չէր մնում Հայաստանում: «Մենք գիտենք,– գրում էր Ա. Ջամալյանը,– հենց վրաց պաշտոնական աղբյուրներից..., թե վրացական իշխանությունները որպիսի՞ անողոք հալածանքների ենթարկեցին այս գավառների (Ախալքալաք և Բորչալու – Ա. Մ.) հայությանը»:[1] Սակայն հայկական կառավարությունը, ինչ–ինչ նկատառումներով, հարկ էր համարում 1919 թ. բավարարվել միայն իր հացահատիկից Ախալքալաքին մասնաբաժին հանելով և Վրաստանի հետ վարվող բանակցություններում սահմանների հարցի լուծումը ձգձգելով՝ մինչև Փարիզի վեհաժողովում ցանկալի արդյունքների ձեռքբերումը: Ռուբեն Տեր–Մինասյանն այդ մասին գրում էր. «Անարդար էին Վրաստանի դիտումները Հայաստանի վերաբերմամբ, անարդար էր, որ նա Ախալքալաք զուտ հայաբնակ գավառը խլած էր մեզնից, թեև թե՛ աշխարհագրական, թե՛ ազգագրական տեսակետով այդ գավառը Հայաստանին կպատկաներ: Անարդար էր նաև Լոռիի վերաբերմամբ նրա ձգտումը...Չնայած այդ վրդովեցուցիչ դրության, Բյուրոն այն կարծիքն ուներ, որ պիտի համբերել և զիջել վրացիներին, ինչքան որ կարելի է»:[2] Նման զիջողական մոտեցման հանդիպում ենք նաև վարչապետ Ալ. Խատիսյանի մոտ: Փարիզում հայկական պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանին 1920 թ. փետրվարին գրած նամակում նա հայտնում էր, որ հանուն Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանման, մենք գնում ենք զիջման և «...գրեթե բոլորը հաշտվել են այն բանի հետ, որ Ախալքալաքի գավառն անց-

[1] Ջամալեան Ա., Հայ–վրացական կնճիռը, «Հայրենիք», 1929, մարտ, էջ 118:
[2] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Թեհրան, 1982, էջ 242:

նում է նրանց (վրացիներին –Ա. Մ.), իսկ Բորչալուի գավառում մենք սահմանազատվել ենք Լալվար–Այրում գծով»:[1] Բայց հանրապետության ղեկավարները պետք է նկատեին, որ որքան հայկական կողմը զիջող էր դառնում, այնքան Ախալքալաքի ու Լոռու հարցում վրացիներն ավելի պահանջատեր էին ներկայանում: Անկասկած, սխալ էր օրեցօր արմատավորվող այն տեսակետը, թե քանի որ Փարիզի վեհաժողովը լուծելու էր Արևմտյան Հայաստանի միացման հարցը, չարժեր վիճելի տարածքների համար վատթարացնել հարաբերությունները հարևան Վրաստանի ու Ադրբեջանի հետ:

Հայաստանի ղեկավարության «զգուշավոր» կեցվածքից հիասթափված՝ 1919 թ. գարնանն ու ամռանը ախալքալաքցիները քանիցս դիմեցին Վրաստան մտած անգլիական զինվորական հրամանատարությանը՝ խնդրելով վերջ դնել հայերի նկատմամբ վրացական իշխանությունների անօրինություններին և միջամտել՝ գավառի իշխանության մարմիններում և միլիցիայում տեղական բնակչության էթնիկ կազմին համապատասխան, ներկայացուցիչներ ընդգրկելու համար: Հունվարից հայ–վրացական միջնորդական առաքելություն ստանձնած անգլիական միսիայի ճնշման տակ հուլիս–օգոստոսից Ախալքալաքի իշխանության մարմիններում որոշ չափով աճեց հայերի, թուրքերի և ռուսների թիվը: Սակայն վրացիները շարունակեցին իրենց ձեռքում պահել կառավարման գլխավոր լծակները: Իսկ անգլիացիների հեռանալուց հետո, 1919 թ. վերջին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծ մասը հեռացվեց ինչպես Ախալքալաքի, այնպես էլ ազգային այլ շրջանների իշխանության օղակներից:

1919 թ. օգոստոսի 29–30–ին Թիֆլիսում հրավիրված հայ–վրացական խորհրդաժողովում վրացական պատվիրակության նախագահ Ն. Ռամիշվիլին հայտարարեց, որ Վրաստանը կտրականապես դեմ է Լոռու հյուսիսային մասը և ամբողջ Ախալքալաքի գավառը Հայաստանին միացնելուն:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 165, թ. 1–2 և Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., էջ 169:

1919 թ. սեպտեմբերի 17–ին Թիֆլիսում բացվեց հայ–վրացական նոր խորհրդաժողով: Վրաստանը ներկայացնում էին Ն. Ռամիշվիլին և Ս. Մդիվանին, Հայաստանը՝ Ստ. Մամիկոնյանը և Ս. Խաչատրյանը: Վրացիները, հավանաբար վախենալով Լոռու Չեզոք գոտուց անգլիացիների դուրսբերման պատճառով հայ–վրացական նոր կոնֆլիկտի ծագման հավանականությունից, առաջարկեցին սահմանների «փոխզիջումային» տարբերակ. Հայաստանին թողնել Աքորի գյուղից հարավ ընկած տարածքները, Լոռու դաշտը (Ջալալօղլի–Վորոնցովկա), իսկ Վրաստանին՝ այդ գծից հյուսիս ընկած հողերը և Ախալքալաքի գավառը: Ընդ որում, նրանք այս «զիջումը» դիտում էին ժամանակավոր՝ մինչև Փարիզի վեհաժողովի որոշմամբ արևմտահայ գավառների միացումը Հայաստանին:

Հայկական պատվիրակությունը հայտարարեց, որ իր կառավարությունից լիազորված է, հօգուտ Վրաստանի, զիջելու Խրամի (Ծալկա) շրջանը, Ախալքալաքի գավառի հյուսիսային և կենտրոնական մասը: Ջավախքի հարավային մասը՝ լճերի շրջանը Հեշտիա–Սաթխա–Հոկամ–Ազմանա գյուղերով մինչև Կուր գետը մնալու էր Հայաստանին: Հատկանշական է, որ «զիջելու պատրաստակամությունը» Վրաստանն ընկալեց իբրև զիջում և Ջավախքի նկատմամբ իրեն վերագրեց ազատ տնօրինության իրավունք: «Վրացիները օգտվեցին մեր ինկած վիճակից, – գրում է Ռուբենը, – և շահագործեցին այդքան խիստ կերպով իրենց աշխարհագրական դիրքը՝ մեր ժողովրդյան թե՛ արժանապատվությունը, և թե՛ կենսական արդար իրավունքները ոտնահարելով»:[1] Ստեղծված «ստատուս քվոն» ձեռնտու էր վրացական կողմին. անգլիացիների հեռանալուց հետո Վրաստանի իշխանությունը տարածվեց ոչ միայն Ջավախքի, այլ փաստորեն նաև Լոռու Չեզոք գոտու նկատմամբ:

1919 թ. նոյեմբերի 3–ին Թիֆլիսում երկու երկրների միջև վրացիների առաջարկով ստորագրված պայմանագիրը, որը նախատեսում էր վիճելի բոլոր հարցերում առաջնորդվել բացառապես խաղաղ եղանակներով կամ չեզոք արբիտրաժի օգնությամբ,[2] ակա-

[1] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 243:
[2] «Աշխատավոր», 1920, 16 հունիսի, թիվ 57:

մայից ավելի ամրապնդեց վրացական վարչակարգն այս գավառներում, իսկ Հայաստանը զրկվեց այդ հարցում կոշտ դիրքորոշում հանդես բերելու հնարավորությունից և «ապավինեց» միայն անհեռանկար բանակցային գործընթացին: Ուստի պատահական չէ, որ Ստ. Մամիկոնյանն ու Ս. Խաչատրյանը, որոնք մնացին Թիֆլիսում և շարունակեցին հայ–վրացական բանակցությունները, ոչ մի արդյունքի չհասան և, ինչպես այդ օրերին պատկերավոր ասում էին, վրացիների հետ զբաղվեցին միայն սահմանների շուրջ անպտուղ «բազարի» խոսակցություններով:

1920 թ. մայիսի 7–ին կնքվեց ռուս–վրացական պայմանագիր՝ փոխադարձ ճանաչման մասին: Համաձայնագրում վրացական կողմի պնդմամբ մտցվեցին կետեր Ռուսաստանի կողմից Լոռու, Ախալքալաքի և Ջաքաբալայի նկատմամբ Վրաստանի իրավունքները ճանաչելու մասին: Այդ կապակցությամբ վարչապետ Հ. Օհանջանյանը բողոքի հեռագրեր հղեց ՌԽՖՍՀ և Վրաստանի կառավարություններին՝ հայտնելով, որ Լոռին ու Ախալքալաքը Վրաստանի մաս դիտելով, վրացական իշխանությունները խախտում են 1919 թ. ձեռք բերված հայ–վրացական համաձայնագրերը՝ այդ տարածքները վիճելի համարելու վերաբերյալ:[1] Արդեն հասկանալի էր, որ այս հարցում վրացական կառավարությունը միայն առերես էր ընդունում խնդրի վիճելի դրվածքը և գործում էր միայն իր հայեցողությամբ:

Չկարողանալով լուծում տալ սահմանային վեճերին՝ հայկական և վրացական պատվիրակությունները դիմեցին Անտանտի երկրների օգնությանը: Պատահական չէ, որ ըստ 1920 թ. օգոստոսի 10–ի Սևրի դաշնագրում մտցված 72–րդ հոդվածի՝ անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանազատման խնդիրը պետք է լուծվեր կողմերի ներկայացուցիչներից բաղկացած շահագրգիռ հանձնաժողովի ջանքերով, իսկ չլուծվելու դեպքում, այն մնալու էր դաշնակից երկրների հայեցողությանը: Հատկանշական է, որ հարցը Փարիզ տեղափոխելուց հետո էլ ուղղակի բանակցությունները շարունակություն ունեցան: Դրանք չդադարեցին նաև 1920 թ. սեպտեմ-

[1] Նույն տեղում:

բերի վերջին սկսված թուրք–հայկական պատերազմի օրերին: Հոկտեմբերի 25–ին Թիֆլիսում Տ. Բեկզադյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպում ունեցավ Ն. Ռամիշվիլու, Սաբախտաշվիլու և Ս. Մդիվանու հետ: Ռազմաճակատում հայկական բանակի կրած անհաջողություններից հետո Հայաստանի կառավարության համար առաջնային էր դարձել Վրաստանի հետ թուրքերի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու խնդիրը: Ուստի հայերը հանդես եկան այդպիսի առաջարկով: Վրացական ղեկավարությունը, որ պատերազմի առնչությամբ հայտարարել էր իր չեզոքությունը, իրականում գաղտնի համագործակցում էր քեմալականների հետ: Օգտվելով Հայաստանի համար ստեղծված ռազմաքաղաքական անբարենպաստ իրավիճակից՝ Վրաստանը փորձեց վիճելի տարածքների հարցում հասնել զիջումների: Ս. Մդիվանին հայտարարեց, որ Հայաստանի համար Վրաստանը չի կարող պատերազմել Թուրքիայի ու Ռուսաստանի դեմ, իսկ Ռամիշվիլին խորհուրդ տվեց բավարարվել միայն իրենց բարոյական աջակցությամբ և տված համաձայնությամբ՝ Վրաստանի տարածքում հայերի զորահավաք կատարելու վերաբերյալ:[1]

Ռազմաքաղաքական ու դիվանագիտական մեկուսացման պայմաններում Հայաստանը ստիպված եղավ տեղի տալ վրացիների ճնշումներին: Նոյեմբերի 13–ին Թիֆլիսում Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված համաձայնագրով հայկական կողմը, քեմալականների մուտքը Բորչալուի գավառ կանխելու նպատակով, ընդունեց Լոռու Չեզոք գոտի ժամանակավորապես (երեք ամիս ժամանակով) վրացական զորք մտցնելու Վրաստանի առաջարկությունը:[2] Սակայն վրացական կառավարությունը, չբավարարվելով Լոռիով, նույն ժամանակ զորք մտցրեց Կարսի մարզի հյուսիսային շրջան՝ Արդահանի գավառ, որի գրավման մասին համաձայնագրում ոչինչ չէր ասվում: Այդ ժամանակ հայ – վրացական վիճելի մյուս տարածքների՝ Արդվինի և Ախալքալաքի գավառների խնդիրը մնաց առկախ, քանզի շուտով դրանք քեմալականների կողմից բռնազավթվեցին:

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., էջ 312–314:
[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 56, թ. 47:

Ինչպես երևում է վերոնշյալից, Հայաստանի Հանրապետությունն իր գոյության ընթացքում չհաշտվեց Ջավախքը Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությանը հանձնելու վրացական կողմի պահանջների հետ, հայ-վրացական սահմանային հանձնաժողովի, հրավիրված խորհրդաժողովների ժամանակ, ելնելով տարածքների սահմանազատման էքնիկական սկզբունքից, հաստատեց իր մոտեցումներն այդ գավառը Հայաստանին միացնելու վերաբերյալ: Սակայն այդ գործելակերպում, հատկապես հայ-վրացական պատերազմից հետո, երբեք չնկատվեց հետևողականություն: Ընդհակառակը, որդեգրվեց ավելի ու ավելի զիջողական գիծ, որը փորձ արվեց հիմնավորել Արևմտյան Հայաստանը հանրապետությանը հանձնելու Անտանտի երկների սին խոստումներով:

Ուշագրավ է, որ Խորհրդային Հայաստանը, որի համար Մոսկվայի պայմանագրերով, փաստորեն, փակվեց Արևմտահայաստանի վերադարձման հարցը, շատ ավելի վճռական գտնվեց սահմանների, այդ թվում Ախալքալաքի ու Ծալկայի գավառների պատկանելության հարցը վիճարկելիս: Սակայն կրկին վրաց-ադրբեջանական գործակցության և ՌԽՖՍՀ ղեկավարության ոչ հայանպաստ կեցվածքի պայմաններում 1921 թ. հուլիսին հարկադրված եղավ հաշտվելու ինչպես Ջավախքի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի կորստյան իրողության հետ:

АШОТ МЕЛКОНЯН
ИИ НАН РА

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ И ДЖАВАХК В 1918-1920 ГГ.

В конце мая 1918 г. после вторжения турецких войск в Ахалкалакский уезд армянское население было вынуждено эмигрировать в Бакурян и Цалку. Грузинские власти запретили армянским беженцам переселиться в Грузию, в результате чего в условиях постоянных набегов турецких полчищ на армян Джавахка, было уничтожено 35-40 тысяч беженцев. После ухода 5 декабря 1918 г., турецких войск из Ахалкалаки, в начале декабря грузинские военные формирования вошли в уезд Из-за Лори и Ахалкалаки начался армяно-грузинский двухнедельный конфликт, который завершился освобождением Лори и южной части Ахалкалакского уезда, однако в январе 1919 г. на конференции в Тифлисе под натиском англо-французских военных властей было принято решение о создании Нейтральной зоны в Лори во главе с английским генерал-губернатором, а Ахалкалакский уезд как спорная территория остался под временным контролем Грузии. В период существования независимых государств Армении и Грузии армянское руководство никогда официально не отказывалось от Ахалкалакского уезда и на разных конференциях и встречах настаивало на своем праве по отношению к этому уезду. Армения по мере возможностей оказывала материальную помощь ахалкалакским беженцам, международных форумах поднимала проблему принадлежности Джавахка на разных. Грузинские власти в1919-20 гг. Ахалкалакском уезде проводили политику национальной дискриминации по отношению к армянскому населению. После советизации Армении и Грузии решение проблемы Джавахка перешло к двум советским республикам.

ԳՈՒՐԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1918 – 1920-ԱԿԱՆ ԹԹ.

Իր գոյության երկուսուկես տարիների ընթացքում Հայաստանի առաջին Հանրապետությունում քայլեր ձեռնարկվեցին գյուղատնտեսության վերականգնման և հետագա զարգացման ուղղությամբ: Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղը էր գյուղատնտեսությունը, որն Առաջին աշխարհամարտի հետևանքով գտնվում էր անմխիթար վիճակում: Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը մեծ աշխատանք էր կատարում դրությունը շտկելու համար, գործուղության մեջ էին դրվել մի շարք ծրագրեր՝ սերմագնման, հողային, ջրաբաժանման և այլն: Արտասահմանից գնվել և հանրապետություն էր բերվել որոշ քանակությամբ գյուղատնտեսական տեխնիկա՝ հնձան մեքենաներ, կալսիչներ և այլ գործիքներ: Գավառներում կազմակերպվել էին գյուղատնտեսական վարչություններ, հողերի պետականացման կոմիտեներ: Լուրջ ուշադրություն էր հատկացվում այգեգործությանը, գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների՝ բամբակի ու հացաբույսերի մշակմանը, ծխախոտագործության զարգացմանը: 1920 թ. սկզբներին գյուղատնտեսության նախարարության կողմից հիմնվեց Սևանի ձկնաբուծական գիտական կայանը, Կարսի պետական օրինակելի կաթնատնտեսությունը, վարկ հատկացվեց գյուղացիությանը մեղվաբուծության զարգացման համար և այլն:[1] Այդ պայմաններում առանձնապես զգացվում էր կադրերի պակաս: Գավառները դիմում էին կենտրոն՝ խնդրելով ուղարկել գյուղատնտեսներ և անասնաբույժներ, սակայն մասնագետների բացակայության պատճառով այդ խնդրագրերը հիմնականում մերժվում էին:

[1] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Թեհրան, հ. 7, 1982, էջ 298-299:

Հանրապետությունը կարիք ուներ որակյալ գյուղատնտեսների, բժիշկների, իրավաբանների և այլն: Կառավարությունը կոչով դիմեց արտերկրի հայ մտավորականությանը՝ առաջարկելով նպաստել հայրենիքի վերաշինության գործին, սակայն ոչ բոլորն արձագանքեցին, քանի որ իշխանությունները չկարողացան բավարարել նրանց կենցաղային պայմանները: Հատկապես գործուն նախաձեռնություն հանդես բերեց Թիֆլիսի Հայ մշակութային ընկերությունների միությանը կից աշխատանքային բյուրոն, որը 1920թ. ապրիլին դիմեց Հայաստանի հիմնարկություններին՝ առաջարկելով տեղյակ պահել պահանջվող մասնագետների մասին: Այս գովելի նախաձեռնությունն արժանացավ կառավարության հավանությանը: Սակայն Վրաստանի հայ մասնագետների թիվն այնքան մեծ չէր, որ հնարավոր լիներ բավարարել հանրապետության պահանջները: Երկրի տարբեր բնագավառները մասնագետ կադրերով ապահովելու գործում կարևոր նշանակություն ուներ բուհական համակարգի առաջնեկի՝ պետական համալսարանի հիմնադրման մասին որոշումը (1919թ. մայիս), որի բացումը տեղի ունեցավ Ալեքսանդրապոլում՝ 1920թ. հունվարին: Սկզբնապես այն ուներ մեկ ֆակուլտետ՝ պատմաբանասիրական, իսկ բնագիտական ֆակուլտետը՝ գյուղատնտեսական բաժնով պետք է բացվեր հետագայում:

Հանրապետության գավառներում բնակվող փոքրաթիվ մտավորականությունը փորձում է սեփական ուժերով հիմնել մասնագիտական հաստատություններ: 1920 թ. փետրվարին Ալեքսանդրապոլի (Գյումրի) մի խումբ գյուղատնտեսների և ուսուցիչների նախաձեռնությամբ հիմնվում է միջնակարգ գյուղատնտեսական դպրոց: Դպրոցի մանկավարժական խորհուրդը կոչով դիմում է գավառի բնակչությանը՝ գրենական պիտույքներ և մասնագիտական գրականություն նվիրելու համար:[1] Նույնանման դպրոց է ստեղծվում գյուղատնտեսության նախարարության կողմից Նոր Բայազետում (Գավառ):[2] Այս դպրոցները չունեին անհրաժեշտ մասնագետներ, լաբորատորիաներ և սարքավորումներ, փորձարարական նպատակների

[1] «Ժողովուրդ», փետրվարի 27, Երևան, 1920, հ. 26:
[2] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 166, թ. 200:

համար հողամաս, սակայն դրանց գոյության փաստը դրական էր, քանի որ պայմաններ էին ստեղծվում գյուղատնտեսական կրթության ձևավորման և զարգացման համար:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող այս միջոցառումների նպատակն էր՝ ստեղծել բուհական և միջնակարգ մասնագիտական ազգային կրթական համակարգ, որը հեռանկարում ժողովրդական տնտեսության առաջնային բնագավառները կապահովեր որակյալ կադրերով: Դժբախտաբար, հանրապետության կարճ կյանքը հնարավորություն չտվեց իրականացնելու այս ծրագրերը:

1920 թ. դեկտեմբերին Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվեցին: Արդեն 1921 թ. հոկտեմբերից իր աշխատանքները վերսկսեց Երևանի համալսարանը, որի կազմում նոյեմբերին բացվեց գյուղատնտեսական ֆակուլտետը: Առաջին դեկան նշանակվեց ականավոր ագրոքիմիկոս – մանրակենսաբան Պապա Բեջանի Քալանթարյանը:[1] Նա եռանդուն գործունեություն ծավալեց ֆակուլտետի դասախոսական կազմը համալրելու և ուսումնական գործընթացը կարգավորելու գործում: 1921 թ. հոկտեմբերին կառավարության հանձնարարությամբ Քալանթարյանը մեկնեց Թիֆլիս՝ գյուղատնտես- մասնագետներ հրավիրելու համար: Նրա ջանքերի շնորհիվ 1922–1923 թթ. համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը համալրվեց եվրոպական ու ռուսական համալսարաններն ավարտած և բարձր մասնագիտական որակավորում ունեցող մի քանի մասնագետներով՝ Գևորգ Գրծելյան, Միքայել Թումանյան, Արշակ Տեր-Պողոսյան, Խորեն Երիցյան, Սարգիս Աբովյան և ուրիշներ:

Ձևավորվում են նաև ֆակուլտետի ամբիոնները: 1920-ական թթ. առաջին կեսին գյուղֆակն ուներ այգեգործության (վարիչ՝ Գ. Գրծելյան), մասնավոր հողագործության (վարիչ՝ Մ. Թումանյան), անասնապահության (վարիչ՝ Խ. Եսայան), ագրոքիմիայի և բակտերոլոգիայի (վարիչ՝ Պ. Քալանթարյան) ամբիոններ: Համալրվում է

[1] Ղարիբջանյան Լ., Երևանի պետական համալսարանը, Ե., 1994, էջ 57:

նաև դասախոսական կազմը՝ Բոգդան Գալստյան (հողաշինություն), Հովակիմ Բեդելյան (բուսաբանություն) և ուրիշներ: 1925 թ. ֆակուլտետի ամբիոնները համալրվեցին գիտական և դասախոսական աշխատանքի ունակություններ դրսևորած շրջանավարտներով՝ Գեղամ Աղաջանյան, Հովհաննես Չալթիկյան, Նշան Մալաթյան (1925 թ.) Էրզրաս Հասրաթյան, Եղիշե Մովսիսյան, Հրանտ Բատիկյան (1927 թ.) , Գագիկ Դավթյան (1929 թ.): Եթե 1921-22 թթ. ուս. տարվա սկզբին համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետում աշխատում էր ընդամենը մեկ գյուղատնտես, ապա 1929-30 ուս. տարում դասախոսում էին 15 մասնագետ:

1928 թ. բացվեց համալսարանի ասպիրանտուրան: Գյուղատնտեսական ֆակուլտետին հատկացվել էր երեք տեղ: Ասպիրանտներ դարձան Հովհաննես Չալթիկյանը (ագրոքիմիա), Վարդան Գուլքանյանը (մասնավոր երկրագործություն) և Հարություն Փաշոյանը (գյուղատնտեսության մանրէաբանություն): Ասպիրանտների մեծ մասը մասնագիտական որակավորումը բարձրացնում էր Մոսկվայի և Լենինգրադի (Ս. Պետերբուրգ) առաջատար բուհերում:[1]

Համաձայն համալսարանի կանոնադրության՝ գյուղատնտեսական ֆակուլտետում ուսուցումը չորս տարի էր: 1921-1922 ուս. տարում գյուղատնտեսական ֆակուլտետ ընդունվեցին 53 հոգի: Հետագա տարիներին ուսանողության թիվը բավականին ավելացավ: Հանրապետության ղեկավարությունը լուրջ խնդիրներ էր դրել գյուղատնտեսական ֆակուլտետի առջև: Նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ) պայմաններում, երբ ժողովրդական տնտեսությունն աստիճանաբար վերականգնվում էր, հատկապես առաջնահերթ էր համարվում պատրաստել գյուղատնտես-մասնագետներ հանրապետության շրջաններում պրակտիկ գործունեության համար: ՆԷՊ-ի կենսագործման առաջին տարիներին գյուղատնտեսության բնագավառում աշխատող անձնակազմի պատկերն այսպիսին էր.[2]

[1] Նույն տեղում, էջ 105 - 106:
[2] Խորհրդային Հայաստանը 5 տարում (1920 – 1925), Ե.,1926, էջ 114:

անձնակազմը	1921 թ.	1925 թ.
գյուղատնտես	4	28
հրահանգիչ	5	33
հողաչափ	3	35
անասնաբույժ	18	32

1925 թ. մի գյուղատնտեսին միջին հաշվով ընկնում էր 29 հազ. գյուղական բնակչություն և 26 հազ. հեկտար վարելահող, մեկ անասնաբույժին՝ 126.647 գլուխ անասուն: Ցածր էր կրթական մակարդակը՝ գավառային գյուղատնտեսները և անասնաբույժները հիմնականում ունեին բարձրագույն, իսկ շրջանների մասնագետների մեծ մասը միջին՝ մասնագիտական և միջնակարգ կրթություն: Խորհրդային իշխանության առաջին տարիներին մասնագետների աշխատավարձը բավականին ցածր էր, իսկ նրանց կենցաղային պայմանները չէր կարելի բարվոք համարել:

1924-1925 թթ. ուս. տարում գյուղատնտեսական ֆակուլտետը տվեց առաջին շրջանավարտները՝ 29 հոգի, որոնց մեծ մասը մեկնեց հանրապետության շրջաններ: Մինչև 1930 թ. ֆակուլտետը տվեց 279 շրջանավարտ, որը կազմում էր համալսարանի շրջանավարտների 30%-ը:[1] Ինչպես տեսնում ենք, իր շրջանավարտների թվով գյուղատնտեսական ֆակուլտետն առաջինն էր, սակայն դա չէր կարող բավարարել բնագավառի պահանջները: Համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի առաջին շրջանավարտների թվում էին ակադեմիկոսներ՝ ականավոր ֆիզիոլոգ Էրզրաս Հասրաթյանը, գյուղատնտես Գեղամ Աղաջանյանը, հանրապետությունում ագրոքիմիայի հիմնադիրներից Գագիկ Դավթյանը, գենետիկ Վարդան Գուլքանյանը և ուրիշները:

1920 - ական թթ. առավել բարդ էր ուսումնական գործընթացի կարգավորումը: Մի քանի անգամ փոփոխվեցին ուսումնական

[1] Ղարիբջանյան Լ., նշվ. աշխ., էջ 89:

ծրագրերը, դասավանդման մեթոդիկան և քննական համակարգը: Այդ ժամանակաշրջանը կարելի է համարել փորձարարական, երբ խորհրդային իշխանությունն, ի հակադրություն դասական համալսարանական կրթության, փորձում էր արևմտյան մանկավարժական նոր մեթոդները համապատասխանացնել խորհրդային դպրոցին: Կիրառության մեջ են դրվում կոմպլեքսային, բրիգադային–լաբորատոր մեթոդները, Դալտոն–պլանը, սակայն դրանք իրենց չարդարացրեցին, և միայն 1930-ական թթ. անցում կատարվեց դասական ուսուցմանը:

Գյուղատնտեսական ֆակուլտետի դասախոսական կազմը սերտորեն համագործակցում էր Հողժողկոմատի հետ: Նշված ժամանակաշրջանում ֆակուլտետի դասախոսներից մի քանիսը Հողժողկոմատի կոլեգիայի անդամ էին: Նրանք մեծ աշխատանք էին կատարում հանրապետությունում գյուղատնտեսական աշխասանքների կազմակերպման, գյուղբնակչության մասնագիտական անհրաժեշտ գրականությամբ ապահովելու, ոլորտի գիտահետազոտական ուսումնասիրության կազմակերպման ուղղությամբ:

1925 թ. սկսում է հրատարակվել համալսարանի «Գիտական տեղեկագիրը», որի 1–6-րդ համարներում գիտական հոդվածներով հանդես են գալիս նաև գյուղֆակուլտետի առաջատար գիտնական-դասախոսները: Հանրապետության հողագիտությանը և հիդրոլոգիական հետազոտություններին էին նվիրված Լևոն Ռոտինյանի, Բոգդան Գալստյանի, Խորեն Միրիմանյանի հոդվածները: Միքայել Թումանյանի հոդվածները շաքարի ճակնդեղի մշակման հեռանկարների և հացաբույսերի ուսումնասիրման վերաբերյալ կարևոր նշանակություն ունեին հանրապետությունում գյուղատնտեսության հետագա զարգացման համար: 1924–1925 թթ. Պ. Քալանթարյանը հայտնաբերում է բամբակի բակտերիաների երկու տեսակ, որի վերաբերյալ հոդվածը գործնական նշանակություն ուներ բամբակագործության զարգացման համար: Տեղեկագրում անասնապահության տարբեր խնդիրների վերաբերյալ հոդվածներ է տպագրել Խ. Երիցյանը:

1920-ական թթ. Հողժողկոմատի և համալսարանի կողմից կազմակերպված գիտական արշավախմբերն այցելում են հանրապետության գյուղական շրջանները, ուսումնասիրում գյուղատնտեսության բնագավառը: Հայաստանում գյուղատնտեսության զարգացման հեռանկարով հետաքրքրվում էր նաև միութենական իշխանությունը: 1926 թ. հուլիսին Մոսկվայից Երևան է գալիս գիտական հատուկ արշավախումբ՝ պրոֆ. Ա. Չելինցևի ղեկավարությամբ: Արշավախմբի անդամները գյուղատնտեսության ոլորտում ճանաչված մասնագետներ էին: Նրանց են միանում նաև համալսարանի առաջատար գիտնական դասախոսներ, պրոֆեսորներ Բ. Գալստյանը, Պ. Քալանթարյանը, Ս. Աբովյանը և ուրիշները: Գիտական արշավախմբի աշխատանքների մեջ ընդգրկվում են նաև ուսանողները: Երկու ամիս շարունակ արշավախումբն ուսումնասիրություններ է կատարում շրջանային տարբեր գոտիներում: Պրոֆեսոր Չելինցևը դասախոսություններ է կարդում Հողժողկոմատի աշխատակիցների և համալսարանի դասախոսների համար:[1]

1926 - 1929 թթ. ընթացքում ֆակուլտետի մասնավոր երկրագործության ամբիոնի վարիչ Մ. Թումանյանն իր աշխատակիցների՝ Ա. Բակունցի, Գ. Աղաջանյանի, Բ. Գարասեֆերյանի, Ա. Սմբատյանի և ուսանողների հետ, Հողժողկոմատի հանձնարարությամբ, կատարում է Հայաստանի տարբեր շրջաններում դաշտավարության և դաշտային մշակույթների ուսումնասիրում: 1928 թ. պրոֆ. Թումանյանի գիտահետազոտական աշխատանքի շնորհիվ հայտնաբերվում են վայրի ցորենի մի քանի տեսակներ: Այդ հայտնագործությունը մեծ հետաքրքրություն է առաջանում արտերկրի գիտական շրջանակներում: Նույն ժամանակահատվածում պրոֆ. Գ. Գրձելյանը և Ա. Վերմիշյանը կատարում են Հայաստանի այգեգործության ընդհանուր հետազոտում: Պրոֆ. Պ. Քալանթարյանի գլխավորությամբ ագրոքիմիայի և բակտերիոլոգիայի ամբիոնն ուսումնասիրում էր հողերի վրա արհեստական պարարտանյութերի ազդեցությունը:

[1] Հոկտեմբեր – Նոյեմբեր. տարեգիրք, Ե., 1932, էջ 621:

1928 թ. հունիսին ՀամԿ(բ)Կ Անդրերկոմի որոշման համաձայն՝ Երևանում հիմնադրվեց անդրկովկասյան անասնաբուժական ինստիտուտը, որը կադրեր պետք է պատրաստեր նաև հարևան հանրապետությունների համար: 1932 թ. այն վերանվանվեց Երևանի անասնաբուժական - անասնաբուծական ինստիտուտի, որի ռեկտոր նշանակվեց ականավոր գիտնական, պրոֆեսոր Բ. Գ. Մասսինոն:

1920-ական թթ. վերջին առանձնապես անհանգստացնող էր գյուղատնտեսական ֆակուլտետի նյութատեխնիկական բազայի խնդիրը: Ֆակուլտետը չուներ տեխնիկական անհրաժեշտ սարքավորումներ, փորձադաշտեր, գյուղատնտեսական տնտեսություն: 1929 թ. Հայաստանի Խորհուրդների 6-րդ համագումարում Լուսժողկոմ Ա. Մռավյանն այդ մասին զեկուցում է. «Հողժողկոմատն իր 5-ամյա պլանով պահանջում է 290 ագրոնոմ. (տեղից քիչ է).ասում եք քիչ է, բայց պետք է հայտնեմ, որ համալսարանն այդքան գյուղատնտես հինգ տարում չի կարող տալ, եթե մնա այժմյան վիճակում: Իսկ գյուղատնտեսական ֆակուլտետի վիճակը փայլուն չի կարելի համարել. երևակայեցեք, մինչև 28 թ. համալսարանի գյուղֆակը չուներ իր սեփական տնտեսությունը, և կային ընկերներ, հեղինակավոր ընկերներ, որոնք ասում էին – ինչ կարիք կա հատուկ տնտեսության, ուսանողները թող գնան Հողժողկոմատի տնտեսություններում աշխատեն: Ծանր պայքարից հետո միայն կարողացանք Հողժողկոմատից ստանալ Ջագ տնտեսությունը և այժմ զբաղված ենք նրա կազմակերպմամբ»:[1]

1920 – 1930 թթ. հանրապետությունում զգալի ուշադրություն էր հատկացվում մասնագիտական միջնակարգ կրթության կազմակերպմանն և զարգացմանը: Արդեն 1920-ական թթ. երկրորդ կեսին գործում էր մասնագիտական միջնակարգ կրթական ցանց, որի մեջ մտնում էին գյուղատնտեսական թեքումով 9 տեխնիկում: Վերջինները տեղաբաշխված էին հանրապետության տարբեր շրջաններում: Դրանց նյութատեխնիկական բազան ևս գտնվում էր անմխիթար վիճակում:

[1] Ա. Մռավյան, Հոդվածներ և ճառեր, Ե., 1961, էջ 361 – 362:

1930 թ. մարտին Հայաստանի Ժողկոմխորհը որոշում է ընդունում գյուղատնտեսական կրթության համակարգի վերակառուցման մասին: Նախատեսվում էր արմատապես վերակառուցել կրթական գործող համակարգը՝ մշակել ուսումնական նոր ծրագրեր, առարկայական դասավանդումը համապատասխանեցնել մասնագիտական կողմորոշմանը, հարստացնել նյութատեխնիկական բազան և այլն: Որոշման մեջ նշվում էր. «Գյուղատնտեսական բարձրորակ կադրերի ճշտված պահանջների համեմատ՝ մի ամսվա ընթացքում ուսումնասիրել Պետհամալսարանի գյուղֆակը վերակազմելու և գյուղատնտեսական ինստիտուտի վերածելու հնարավորությունները, մշակել և համապատասխան նախագիծ մտցնել Ժողկոմխորհի հաստատություն»:[1]

Արդեն հունիսին Անդրֆեդերացիայի Ժողկոմխորհի որոշման համաձայն՝ վերակառուցման ենթարկվեց հանրապետությունում գործող բարձրագույն և միջնակարգ կրթական համակարգը: Երևանի պետական համալսարանը լուծարվեց, իսկ նրա համապատասխան ֆակուլտետների հիման վրա կազմակերպվեցին գյուղատնտեսական, ճարտարագիտական – տեխնիկական (պոլիտեխնիկական), առևտրա - կոոպերատիվ (տնտեսագիտական) , մանկավարժական և բժշկական ինստիտուտները, որոնք անցան տարբեր գերատեսչությունների տնօրինության ներքո:

[1] «Խորհրդային Հայաստան», 1930թ. մարտի 15:

ВАРДАНЯН ГУРГЕН
ИИ НАН РА

СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОЕ ОБРАЗОВАНИЕ В АРМЕНИИ (1918-1920-ЫЕ ГГ.)

Провозглашение Первой Армянской республики явилось предпосылкой развития системы национального образования.

Одним из ключевых вопросов этой системы являлось сельскохозяйственное образование. Открытие университета и специализированных сельскохозяйственных школ создало условия для подготовки и обучения специалистов сельского хозяйства.

Развитие сельскохозяйственного образования продолжалось и в первые годы Советской власти. В ЕГУ был открыт сельскохозяйственный факультет для подготовки кадров. На факультете преподавали высококвалифицированные специалисты, получившие образование в российских и западноевропейских вузах.

Уже в 1925 -1926 гг. выпускники данного факультета работали в народном хозяйстве.

В начале 30-ых гг. университет был реорганизован, на его базе было создано несколько институтов, в их числе Институт сельского хозяйства.

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀՍԽՀ ԱՐՏԳՈՐԾԺՈՂԿՈՄԱՏԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1921-1922 ԹԹ.)

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետությունը խորհրդայնացվեց: Դեկտեմբերի 4-ին Երևան ժամանեց Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) պետական իշխանության բարձրագույն մարմին հանդիսացող Հայաստանի հեղափոխական կոմիտեն (հեղկոմ): Վերջինս ձեռնամուխ եղավ նախկին՝ դաշնակցական կառավարության պետական իշխանության մարմինների լուծարմանը կամ վերածմանը: 1920 թ. դեկտեմբերի 10-ին կազմավորվելով՝ ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը ժառանգություն ստացավ ՀՀ արտգործնախարարության անձնակազմը և կառուցվածքը: Արխիվային փաստաթղթերի համակողմանի քննությունից տեսնում ենք, որ խորհրդային իշխանությունները (հատկապես սկզբնական շրջանում) գրեթե ամբողջությամբ պահեցին ՀՀ արտգործնախարարությունից ստացած ժառանգությունը[1]:

ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատն իր գործունեությունն իրականացնում էր հյուպատոսական, քաղաքական, ընդհանուր և տեղեկատու բաժինների միջոցով: Վերջինը հայերեն փաստաթղթերում «տեղեկատու» անվան հետ զուգահեռ հանդես է գալիս նաև «ինֆորմացիոն» անունով:

Հայաստանի խորհրդայնացման շրջանում ՀՀ արտգործնախարարությունն ուներ տեղեկատու բաժին՝ Մուշեղ Արզումանյանի գլխավորությամբ: ՀՍԽՀ արտգործժողկոմատի կազմավորումից հետո մի շարք աշխատակիցների թվում խորհրդային իշխանությու-

[1] Մանրամասն տես Սուքիասյան Հ., ՀՀ արտգործնախարարության և ՀՍԽՀ արտգործժողկոմատի ժառանգության հարցի շուրջ, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: Տարեգիրք Բ (պատմագիտական հանդես), Ե., 2010, էջ 219-225:

ներն այլ աշխատանքի տեղափոխեցին նաև Մ. Արզումանյանին[1]: Տեղեկատու բաժնի վարիչի պաշտոնը մնաց թափուր: ՀՍԽՀ իշխանությունները գիտակցում էին տեղեկատու բաժնի կարևորությունը՝ հատկապես արտգործժողկոմատի համար բազմաբնույթ տեղեկատվություններ, մամուլի տեսություններ պատրաստելու և կոմունիստական գաղափարների քարոզչության ասպարեզում:

Առանձնահատուկ նշանակություն տալով արևելյան երկրների և մասնավորապես Թուրքիայի մասին տեղեկատվության հավաքագրմանը՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունները կարևորեցին արտգործժողկոմատի կազմում արևելյան բաժնի կազմակերպումը՝ հատկապես թուրքերի հետ կայանալիք կոնֆերանսին նախապատրաստվելու առումով: Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 23-ին պատրաստած «Զեկուցում Խորհրդային Հայաստանի Արևելքի քաղաքականության մասին» փաստաթղթում Մովսես Պետրոսյանն[2] անդրադառնում էր խորհրդային հանրապետությունների արևելյան քաղաքականության մեջ Խորհրդային Հայաստանի դերին և հիմնավորում ՀՍԽՀ արտգործժողկոմատի կազմում արևելքի բաժին ստեղծելու կարևորությունը[3]: Ի պատասխան Արարատյան նահանգի հեղկոմի վարչական բաժնի 1921 թ. հունվարի 3-ի պահանջի՝ հունվարի 5-ի արտգործժողկոմատի պատասխան գրությանը կից ժողկոմատի աշխատակիցների ցանկում Մ. Պետրոսյանը հիշատակվում էր որպես արևելյան բաժնի վարիչ[4]: Բացի այդ վավերագրից, մեզ հանդիպած այլ փաստաթղթերում տեղեկություն չի հանդիպում

[1] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 37, ց. 1, գ. 11, թ. 18, ֆ. 114, ց. 1, գ. 30, թ. 2:

[2] Մ. Պետրոսյանը ՀՀ արտգործնախարարությունում աշխատանքի էր անցել 1920 թ. սեպտեմբերի 1-ին՝ որպես արտաքին գործերի նախարար Համազասպ Օհանջանյանի օգնական: Նա մասնագիտությամբ իրավաբան էր, իսկ կուսակցական պատկանելությամբ՝ դաշնակցական. ներկայացնում էր ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեն (տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 122, թ. 95: «Ռանջբար Իրանի» (Թեհրան), 15 հոկտեմբերի 1921 թ., N 11):

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, թ. 3-6: Հմմտ. Խաչատրյան Կ. Հ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 2007, էջ 112-113:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 40, թ. 5:

արտգործժողկոմատի արևելյան բաժնի մասին: Ամենայն հավանականությամբ, դրա պատճառն այն է, որ շատ շուտ բաժինը վերանվանվել է տեղեկատու և արևելյան, իսկ այնուհետև՝ տեղեկատու բաժնի:

Մ. Պետրոսյանի կողմից պատրաստված «Նախագիծ Խ[որհրդային] Հայաստանի արտաքին գործերի կոմիսարիատի ինֆորմացիոն բաժնի ներքին կազմակերպության» խորագրով փաստաթղթի տակ վերջինիս հեղինակը ստորագրել է իբրև «Արտ[աքին] գործ[երի] կոմիսարիատի ինֆորմացիոն և արևելյան բաժնի վարիչ»[1]: Ըստ նախա- գծի, բաժինն ունենալու էր երեք ենթաբաժին՝ ընդհանուր ինֆորմացիայի, արևելյան երկրների, արտասահմանյան հայ գաղութների: Ինչպես տեսնում ենք, վերջին երկու ենթաբաժիններն իրագործելու էին ժողկոմատի արևելյան բաժնին և ՀՀ արտգործնախարարության գաղութային բաժնին[2] վերապահված գործառույթները:

Սակայն ներկայացված նախագիծը կյանքի չկոչվեց, իսկ բաժինը սկսեց կոչվել պարզապես տեղեկատու (ինֆորմացիոն): 1921 թ. փետրվարյան ապստամբության ավարտից հետո կրկին մեջտեղ եկավ Մ. Պետրոսյանի պատրաստած տեղեկատու բաժնի նախագիծը: Այն որոշակի լրացումներից ու խմբագրումից հետո՝ 1922 թ. օգոստոսի 2-ին ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ս. Լուկաշինի կողմից հաստատվեց իբրև ժողկոմխորհի տեղեկատու բաժնի կանոնադրություն[3]:

1921 թ. հունվար-փետրվար ամիսներին մեզ հայտնի փաստաթղթերում բաժինը հիշատակվում է «տեղեկատու» անունով: Տեղեկատու բաժինն ամուր հիմքերի վրա դնելուն նպաստելու էր այն, որ 1921 թ. հունվարի 15-ին բաժնի վարիչի օգնական նշանակվեց

[1] Նույն տեղում, ց. 2, գ. 40, թ. 51-52 շրջ., 55, ֆ. 1022, ց. 3, գ. 317, թ. 1-2 շրջ.:

[2] ՀՀ կառավարության 1920 թ. օգոստոսի 27-ի որոշմամբ արտգործնախարարության կազմում ստեղծված այս բաժինը ՀՍԽՀ արտգործժողկոմատի կազմավորումից հետո լուծարվեց:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 91, թ. 3-6 շրջ.:

կոմունիստ, Բաքվի հայալեզու «Կոմունիստ» թերթի խմբագրակազմի նախկին անդամ Գեղամ Անտելեայանը[1]:

Հայաստանի հեղկոմի 1921 թ. փետրվարի 14-ի հրամանով լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը համատեղության կարգով նշանակվել էր նաև արտաքին գործերի ժողկոմի պաշտոնակատար: Փետրվարի 17-ին Հայհեղկոմին ուղղված Ա. Հովհաննիսյանի գրությունից տեղեկանում ենք, որ փետրվարի 15-ի գիշերը ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովի (չեկա) կողմից ձերբակալվել է ժողկոմատի «անփոխարինելի աշխատակից», տեղեկատու բաժնի վարիչ Մ. Պետրոսյանը: Ժողկոմը խնդրում էր պարզել ձերբակալման պատճառները և հնարավորության պարագայում միջոցներ ձեռք առնել՝ ազատ արձակելու ձերբակալվածին[2]: Հավանաբար վերջինս բանտից ազատվել է 1921 թ. փետրվարի 18-ին տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում: Այս վարկածը շատ հավանական է, եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ Մ. Պետրոսյանին այնուհետև տեսնում ենք Սիմոն Վրացյանի գլխավորած Հայրենիքի փրկության կոմիտեի արտգործնախարարությունում՝ որպես տեղեկատու բաժնի վարիչ[3]: Մ. Պետրոսյանն այստեղ պաշտոնավարել է մինչև մարտի 15-ը: Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Երևանում վերահաստատված ՀՍԽՀ արտգործժողկոմատի հաստիքացուցակներում նրա անունը բացակայում է: Բանն այն է, որ Մ. Պետրոսյանը Պարսկաստան էր անցել: Դաշնակցության վարած քաղաքական գծին համաձայն չլինելու պատճառաբանությամբ՝ նա 1921 թ. ամռանը հեռացավ կուսակցությունից[4]:

Նշենք, որ Հայրենիքի փրկության կոմիտեի իշխանության շրջանում ՀՍԽՀ արտգործժողկոմատի պաշտոնյաներից աշխատանքից ազատվեց միայն տեղեկատու բաժնի վարիչի օգնական

[1] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 191, թ. 15, գ. 192, թ. 1-21:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 4, թ. 37, ֆ. 114, ց. 1, գ. 7, թ. 69:
[3] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 177, թ. 3 շրջ.:
[4] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 7, թ. 77: «Ռանջբար Իրանի» (Թեհրան), 27 օգոստոսի 1921 թ., N 6:

Գ. Անտելեայանը[1]: Դա պայմանավորված էր նրա կուսակցական պատկանելությամբ: Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանի՝ 1921 թ. փետրվարի 25-ի թիվ 6 հրահանգի համաձայն՝ պետական և հասարակական հիմնարկությունները պետք է պաշտոններից հեռացնեին բոլոր կոմունիստներին: Կարգադրության մեջ շեշտվում էր, որ այն չկատարողները կպատժվեն[2]: Կոմիտեին ենթակա հաստատությունները ձեռնամուխ էին լինում սեփական հիմնարկներում պաշտոնավարող կոմունիստների հաշվառմանը և աշխատանքից ազատմանը: Նման օրինակները բազում են:

Հակախորհրդային ապստամբության պարտությանը հաջորդած շրջանում՝ 1921 թ. մայիսին Գ. Անտելեայանը նշանակվեց տեղեկատու բաժնի վարիչ[3]: Վերջինս այդ պաշտոնում մնաց մինչև 1922 թ. հուլիսին արտգործժողկոմատի լուծարվելը, իսկ դրանից հետո նշանակվեց ժողկոմխորհի քաղաքական բաժնի վարիչ: 1921 թ. հուլիսին ժողկոմատում որպես բաժնի վարիչի օգնական աշխատանքի ընդունվեց Հարություն Թուրշյանը (1969 թ. հրատարակված «Սարդարապատի հերոսամարտը» հայտնի գրքի հեղինակը): Դեկտեմբերի սկզբին արտգործժողկոմ Ա. Մռավյանի կարգադրությամբ նա ազատվեց զբաղեցրած պաշտոնից[4]: Նշենք, որ 1921 թ. հունիսի 22-ին ՀՍԽՀ ժողկոմխորհի կողմից հաստատված արտգործժողկոմատի հաստիքացուցակի համաձայն՝ տեղեկատու բաժինն ունենալու էր բաժնի վարիչ և վերջինի օգնական, իսկ բաժնի գործավարությունն իրականացվելու էր ընդհանուր բաժնի միջոցով[5]:

Տեղեկատու բաժինը զբաղվում էր ինչպես արտգործժողկոմատի, այնպես էլ ՀՍԽՀ հեղկոմի, իսկ այնուհետև նաև ժողկոմխորհի համար բազմաբնույթ տեղեկագրեր, զեկուցագրեր, բյուլետեններ

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 7, թ. 77 և շրջ.:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 37, ց. 1, գ. 12, թ. 15: «Ազատ Հայաստան», 26 փետրուարի 1921 թ., N 7:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 7, թ. 118:
[4] Տե՛ս նույն տեղում, գ. 192, թ. 1-21, գ. 7, թ. 208-209, գ. 160, թ. 183:
[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 44, ֆ. 117, ց. 1, գ. 101, թ. 34, գ. 123, թ. 4:

պատրաստելու գործով: Այս ամենի կարևորությամբ պայմանավորված՝ արտգործժողկոմատի լուծարման շրջանում արդեն ժողկոմխորհի տեղեկատու բաժինը ստանձնեց ներքին օգտագործման համար բյուլետեններ, տեսություններ պատրաստելու գործը: Այս փաստաթղթերի որոշ մասի վրա հատուկ նշվում էր՝ «ժողովրդայնացումն արգելվում է»[1]:

Արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի պատրաստած նյութերի հիմնական մասը (հատկապես 1921 թ. հունվարից մինչև փետրվարի 18-ը պատրաստված տեղեկանքները) նվիրված է Թուրքիային: Այս իրողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Խորհրդային Հայաստանի իշխանություններն ակտիվ կերպով պատրաստվում էին Մոսկվայում գումարվող կոնֆերանսին: Թուրքիայի մասին տեղեկատվություններ պատրաստելու գործը ղեկավարում էր փորձառու Մ. Պետրոսյանը: Այս շրջանում տեղեկատու բաժնի պատրաստած զեկույցներում քննության էին առնվում քեմալական Թուրքիայի ներքին կյանքի հարցերը՝ կառավարության և ժողովրդական զանգվածների փոխհարաբերությունները, Փոքր Ասիայում ու Արևմտյան Հայաստանում մեծ ծավալներ ընդունած թուրքական ազգայնականությանն առնչվող հարցերը, Կ. Պոլսի և Անկարայի թուրքական կառավարությունների փոխհարաբերությունները, Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում տիրող իրավիճակը, այստեղ ներկայացված հոսանքների գործունեությունը: Անդրադարձ էր կատարվում նաև Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի շրջաններում թուրքերի կատարած բռնություններին, ջարդերին ու թալանին: Առանձնապես կարևոր ուշադրություն էր դարձվում Հայաստանի և կոմկուսի մասին թուրքական մամուլի հրապարակումներին, թարգմանաբար քաղվածքներ էին ներկայացվում թուրքական մամուլից[2]: Հետագայում ևս բաժնի պատրաստած զեկույցներում զգալի ծավալ էր կազմում Թուրքիայի մասին նյութը:

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 81, թ. 136-145 շրջ., 149-180 շրջ., գ. 86, թ. 85-88 շրջ.:

[2] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 225, թ. 1-13, 19-23, ց. 2, գ. 86, թ. 3-5 շրջ., 9-13 շրջ., ֆ. 1022, ց. 3, գ. 329, թ. 1-5 շրջ.:

Տեղեկատու բաժնի պատրաստած բյուլետեններում անդրադարձ էր կատարվում նաև եվրոպական երկրների ներքաղաքական վիճակին, նրանց արևելյան քաղաքականությանը, խորհրդային հասարակարգի և բոլշևիկյան կուսակցության նկատմամբ տարբեր պետություններում եղած վերաբերմունքին: Տեղեկատու բաժնի ուշադրությունից չեն վրիպել նաև գաղութահայությանն ու հայ քաղաքական կուսակցություններին առնչվող խնդիրները, Հայկական հարցի զարգացումները, Հայկական հարցին գաղութահայության վերաբերմունքը, կովկասյան վտարանդիական կազմակերպությունների փոխհարաբերությունները և բազում այլ հարցեր[1]: Այս տեղեկատվությունները պատրաստվում էին ռուսական, եվրոպական և գաղութահայ մամուլի հիման վրա, որոնք ժողկոմատը ձեռք էր բերում տարբեր ճանապարհներով:

Տեղեկատու բաժինը տեղեկատվություններ, վերլուծություններ էր պատրաստում նաև Թիֆլիսում բնակվող Հովսեփ Պարսամյանի (Բարսամյան) միջոցով: Գ. Անտելեպյանը 1921 թ. հունիսի 12-ին Հ. Պարսամյանին ուղղված գրության մեջ տեղեկացնում էր, որ նա համարվում է բաժնի արտահաստիքային աշխատակիցը, և առաջարկում որոշակի վարձատրության դիմաց զեկուցումներ պատրաստել Մերձավոր Արևելքի քաղաքական դրության, եվրոպական երկրներում տիրող իրավիճակի, եվրոպական պետությունների և ԱՄՆ-ի փոխհարաբերությունների մասին[2]: Պատրաստած տեսություններում Հ. Պարսամյանը մանրամասն անդրադարձել է մասնավորապես քեմալական Թուրքիայի՝ Անտանտի երկրների հետ համագործակցության խնդրին և հակախորհրդային քաղաքականությանը[3]:

Տեղեկատու բաժինը հարաբերություններ էր պահպանում կուսակցական և պետական կառույցների, հանրապետական և արտերկրի մամուլի օրգանների հետ, պատրաստի նյութեր ուղարկում

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 58-74, 89-96, գ. 40, թ. 48-49, գ. 81, թ. 1-133, գ. 84, թ. 43-46 շրջ., գ. 93, թ. 7-23 շրջ., գ. 192, թ. 14-29:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 91, թ. 12:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 27 և շրջ., գ. 86, թ. 129-138:

«Խորհրդային Հայաստան» թերթին, ՀՍԽՀ ղեկավարների մասին կենսագրական տվյալներ ուղարկում արտերկրի մամուլում տպագրելու համար[1]:

Արտգործժողկոմատի բաժինների գործառույթների մասին մեզ եզակի տեղեկություններ է տալիս անթվակիր, սակայն, բովանդակությունից դատելով, 1921 թ. ապրիլի երկրորդ կեսին կամ մայիսի սկզբին պատրաստված մի փաստաթուղթ[2]: Փաստաթղթի ստեղծման պատճառ կարող էր ծառայել Հայաստանի հեղկոմի կողմից բոլոր ժողկոմատներին ուղղված 1921 թ. ապրիլի 13-ի և 29-ի հանձնարարականները՝ զեկուցումներ պատրաստել կոմիսարիատների դրության վերաբերյալ[3]:

Մյուս բաժինների թվում՝ փաստաթղթում կարևոր տեղեկություններ կան նաև տեղեկատու բաժնի վերաբերյալ: 1921 թ. գարնանը բաժնի առջև ծառացած խնդիրների առնչությամբ մասնավորապես նշվում էր. «մի կողմից արտաքին գործերի կոմիսարիատը բացարձակապես զրկված է վկայություններից այն մասին, թե ինչ է կատարվում այլ երկրներում և հայկական գաղութներում, իսկ մյուս կողմից այդ գաղութները, հայրենի երկրի մասին նորությունների ծարավ լինելով, սկսում են պատահական, եվրոպական մամուլի հաճախ սուտ տեղեկություններով»[4]: Ահա թե ինչու արտգործժողկոմատը, ներքին օգտագործման համար տեղեկանքներ պատրաստելուն զուգահեռ, 1921 թ. հունիսից ձեռնամուխ եղավ լայն սպառման համար բյուլետենների հրատարակմանը:

Պարբերականի ամբողջական անվանումն էր՝ «Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ինֆորմացիոն բաժնի բյուլետեն» (կրճատ՝ «Բյուլետեն»): Այն հրատարակվել է մինչև 1922 թ.

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 122, թ. 96, ֆ. 114, ց. 1, գ. 242, թ. 6, ֆ. 117, ց. 1, գ. 20, թ. 95: «Խորհրդային Հայաստան», 10 սեպտեմբերի 1921 թ., N 169, 6 յունվարի 1922 թ., N 5:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 31, թ. 72-73:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 5, 14:

[4] Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 31, թ. 73:

մարտը և դադարեցվել արտգործժողկոմատի լուծարման գործընթացում: Լույս է տեսել ընդամենը 10 համար: Պարբերականի խմբագիրը և հոդվածների հեղինակները չեն նշվում, սակայն կարելի է ենթադրել, որ այստեղ կարևոր գործ էր կատարում տեղեկատու բաժնի վարիչ Գ. Անտելեպյանը: Օրինակ՝ «Բյուլետենի» 1921 թ. սեպտեմբերի 5-ի թիվ 5-6 միացյալ համարում տպագրված անստորագիր՝ արտերկրի հայկական մամուլի տեսությունը Գ. Անտելեպյանի ստորագրությամբ վերահրատարակված է «Խորհրդային Հայաստան» թերթի 1921 թ. սեպտեմբերի 10-ի համարում:

ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատի տեղեկատու բաժնի «Բյուլետենին» նախկինում մանրամասն անդրադարձել ենք[1], ուստի այժմ ավելորդ ենք համարում խոսել պարբերականի մասին: Միայն նշենք, որ ՀՍԽՀ արտաքին քաղաքականությանն առնչվող խնդիրներին զուգահեռ, պարբերականում լուսաբանվում էին նաև արտգործժողկոմատի գործառույթներին չվերաբերող տարբեր հարցեր՝ կարմիր բանակ, գյուղատնտեսություն, սոցիալական, կրթամշակութային կյանք և այլն: Պարբերականն իր մասնակցությունն էր բերում հանրապետությունում ծավալված հակադաշնակցական գաղափարաքարոզչական պայքարին:

Այսպիսով՝ արտգործժողկոմատի տեղեկատու բաժինը զբաղվում էր ՀՍԽՀ իշխանությունների համար տեղեկանքներ, մամուլի տեսություններ պատրաստելով և սեփական պարբերականի հրատարակմամբ:

[1] Տե՛ս Սուքիասյան Հ. Կ., ՀՍԽՀ արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի բյուլետենը (1921-1922 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, N 3, էջ 87-93: Սուքիասյան Հ., ՀՍԽՀ արտգործժողկոմատի «Բյուլետենը» հակադաշնակցական գաղափարաքարոզչական պայքարում (1921-1922 թթ.), Բանբեր Հայաստանի արխիվների, 2008, N 2, էջ 235-243:

АМО СУКИАСЯН
ИИ НАН РА

ДЕЯТЕЛЬНОСТЬ ИНФОРМАЦИОННОГО ОТДЕЛА НАРКОМИНДЕЛА ССРА (1921-1922 ГГ.)

РЕЗЮМЕ

В системе Народного комиссариата иностранных дел ССРА осуществляли деятельность следующие отделы: консульский, политический, общий, информационный. Путем сопоставления архивных документов в статье освящается деятельность информационного отдела наркоминдела. Отдел готовил справки, обзоры печати, издавал собственную периодику - "Бюллетень". В ней поднимались вопросы достижений и проблем Советской Армении в разных сферах, параллельно пропагандировалась идеология советской власти.

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ՇՈՒՐՋ

Ժամանակակից ժողովրդավարական պետությունների հիմնական հատկանիշներից է բազմակուսակցական համակարգի առկայությունը: Նորանկախ Հայաստանը, ինչպես հետխորհրդային բոլոր երկրները, անցումային շրջան է ապրում ամբողջատիրական (տոտալիտար) վարչակարգից դեպի ժողովրդավարություն (դեմոկրատիա): Դրան հասնելու ճանապարհին շատ կարևոր է նաև պատմական ոչ հեռու իրադարձությունների անաչառ ուսումնասիրությունը, վերլուծությունը և այդ փորձի հաշվառումը: Այդ առումով, հասկանալի պատճառներով, հայրենական պատմագրությունում, թերևս, բավարար խորությամբ չի հետազոտվել Խորհրդային Հայաստանում միակուսակցական համակարգի ձևավորման պատճառներն ու ընթացքը, դրա հետևանքները, ինչն անկասկած իր որոշակի ազդեցությունն է ունեցել նաև նորանկախ Հայաստանի պետականության ձևավորման, ժամանակակից քաղաքական և հասարակական գործընթացների վրա:

Խորհրդային երկրներում միակուսակցական կառավարման համակարգի հաստատումը, անշուշտ, բխում էր մարքս-լենինյան կոմունիստական ծրագրերից ու գաղափարախոսությունից: Քաղաքական այն համակարգը, որը 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հաստատվել էր Խորհրդային Ռուսաստանում և ապա նաև խորհրդային մյուս հանրապետություններում, Հայաստանի խորհրդայնացումից հետո պետք է հաստատվեր նաև այստեղ: Եվ այդպես էլ եղավ: Սակայն Հայաստանում այդ գործընթացն ունեցել է որոշ առանձնահատկություններ: Մասնավորապես Հայաստանում կոմունիստական մենիշխանության հաստատման գործընթացի վրա ազդել են նաև արտաքին մի քանի գործոններ, որոնց քննությանն էլ նվիրված է սույն հոդվածը:

Նախ փաստենք, որ Խորհրդային Հայաստանում միակուսակցական կառավարման համակարգի հաստատումն ունեցել է ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին պատճառներ, ինչը պայմանավորված էր 20-րդ դարի սկզբներին նրան հարող տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական (գլոբալ) բուռն զարգացումներով: Առաջին համաշխարհային պատերազմը, հայ ժողովրդի նկատմամբ կատարված ցեղասպանությունը, հեղափոխական ցնցող իրադարձությունները Ռուսական կայսրությունում և Հայաստանի տարածքներում, Հայաստանի առաջին անկախ հանրապետության կարճատև գոյությունը և վերջապես խորհրդային կարգերի հաստատումն ու դրան հետևած իրադարձություններն իրենց էական ազդեցությունն ունեցան Խորհրդային Հայաստանի պետականության ձևավորման, հասարակական-քաղաքական նոր կարգերի հաստատման ընթացքի վրա: Միակուսակցական համակարգի և այնուհետև ամբողջատիրական վարչակարգի ստեղծման ներքին ամենաէական պատճառը կարելի է համարել երկրի չափազանց սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, ինչն օբյեկտիվորեն կառավարման կենտրոնացում էր պահանջում: Դա բոլորովին կապ չունի պետության սոցիալ-քաղաքական տիպի հետ: Այսպես, աշխարհի ամենաազատական երկիր համարվող Ամերիկայի Միացյալ Նահանգները (ԱՄՆ) 1930-ականների սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամից դուրս գալու համար գնացին պետության կառավարման կենտրոնացմանը, ինչը պատճառ դարձավ այդ բնույթի բարեփոխումների համարձակություն ունեցած ԱՄՆ նախագահ Ֆ. Ռուզվելտին մեղադրելու սոցիալիզմին հարելու մեջ:[1]

Խորհրդային Հայաստանում միակուսակցական համակարգի հաստատման խնդիրը մինչ այժմ առանձին հետազոտության նյութ չի եղել: Կան բազմաթիվ աշխատություններ, որոնցում, այսպես թե այնպես, արծածվել են այդ հարցերը: Մասնավորապես այն, հասկանալի պատճառներով, միակողմանի է ներկայացվել Հայաստանի

[1] Տես Ն.Ն. Յակովլեվ, Ֆրանկլին Ռուզվելտ, Մարդը և քաղաքագետը, Ե., 1972, էջ 257-277, Ամերիկայի պատմության ուրվագծերը, խմբ.Հովարդ Սինկոտա, ԱՄՆ Տեղեկատվական գործակալություն, Ե., 2002, էջ 258-264:

կոմունիստական կուսակցության պատմության այդ շրջանին նվիրված աշխատություններում, հայ ժողովրդի պատմության տվյալ հատվածին վերաբերող հետազոտություններում:[1] Խորհրդային տարիների ուսումնասիրողները հիմնականում շեշտադրումը կատարում են ներքին գործոնների վրա՝ բավարար ուշադրության չդարձնելով արտաքին բավականին լուրջ ազդակներին: Մեր ժամանակներում այդ հարցերին անդրադարձել են հայրենական մի շարք գիտնականներ, սակայն տվյալ խնդիրը չի եղել նրանց հետազոտության բուն առարկան:[2] Իհարկե, ոմանք կարող են պնդել, թե դա համընդհանուր գործընթաց էր, որը տեղի էր ունենում ոչ միայն Հայաստանում, այլ նաև ԽՍՀՄ կազմում ընդգրկված ուրիշ երկրներում: Սակայն ամեն երկրի դեպքում, մասնավորապես՝ Հայաստանում, ինչպես արդեն ասվել է, այդ գործընթացներն ունեին իրենց յուրահատկությունները և ընթանում էին ոչ միանման պայմաններում:

1920-ական թթ. Հայաստանն արդեն քիչ թե շատ ուներ բազմակուսակցության փորձ: Հարկ է նշել, որ հայկական առաջին կուսակցությունների ձևավորումը կատարվում էր այնպիսի պայմաններում, երբ հայ ժողովուրդը դեռևս զուրկ էր անկախ պետականությունից: Ուստի զարմանալի չէ , որ հիմնականում 19-րդ դարի վերջին հիմնված հայկական կուսակցություններն ու քաղաքական կազմակերպություններն իրենց առաջնահերթ խնդիրն էին համարում Հայաստանի ազատագրումը և անկախ պետականության ստեղծումը: Դրա համար էլ այդ կուսակցությունները բնույթով ազգային էին: Ինչևէ, այդ կուսակցությունների հիմնադրումը հող պատրաստեց, որ հետագայում, 1918 թ. առաջացած Հայաստանի Առաջին Հանրապետությունում գործեին արդեն քիչ թե շատ քաղաքական փորձ ձեռք

[1] Տես Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 7, Ե., 1967 և այլն:

[2] Ա.Մանուկյան, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940թթ., Ե., 2002, Ա.Հակոբյան, Հայաստանի Խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920, Ե., 2005, Վլ.Ղազախեցյան, Հայաստանը 1920-1940թթ., Ե., 2006, և այլն:

բերած գործիչներ, հիմնականում ՀՅԴ-ի (դաշնակցության) ներկայացուցիչներ:[1]

Կուսակցությունների վերացման վերլուծության տեսանկյունից ուշագրավ են 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի 5-6 կետերը:

5-րդ հոդվածով սահմանվում էր, որ դաշնակցության և Հայաստանի մյուս սոցիալիստական կուսակցությունների անդամները որևէ բռնաճնշման չեն ենթարկվելու կուսակցական պատկանելության համար:

6-րդ հոդվածում ասվում էր, որ Ռազմահեղափոխական կոմիտեի մեջ մտնելու էին կոմունիստական կուսակցության նշված 5 անդամներ և երկու անդամներ ձախ դաշնակցականների խմբից՝ կոմկուսի համաձայնությամբ:[2]

Փաստորեն, այս համաձայնագրից ելնելով, ոչ միայն չէր կատարվելու քաղաքական այլ ուժերի նկատմամբ հետապնդում ու հալածանք, այլև վերջիններիս անգամ տեղ էր տրվելու կառավարության կազմում:

Սակայն, ելնելով Խորհրդային Ռուսաստանում արդեն իսկ տեղի ունեցող գործընթացներից, ՀԿ(բ)Կ-ից բացի մնացած կուսակցություններին սպասվում էր վտարում Հայաստանի քաղաքական ասպարեզից: Դա էր հուշում կոմունիստական կուսակցության գաղափարախոսությունը և գործելակերպը, որը հստակ բնորոշվել էր 1923 թ. ՌԿ(բ)Կ-ի 12-րդ համագումարի ժամանակ Գ.Ե. Զինովևի կողմից գործածության մեջ մտցրած «կուսակցական դիկտատուրա» հասկացությամբ: Այդ եզրը մտավ ընդունված բանաձևի մեջ[3]: Կարծում ենք, որ դա միանգամայն ճշգրիտ բնորոշում էր. կոմունիստները ձգտում էին բացարձակ մենիշխանության, իսկ այդ առումով մյուս կուսակցությունների գործունեությունն արդեն իսկ համարվում

[1] Տես Ա.Հակոբյան, նշվ. աշխ.:

[2] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 382-383:

[3] История Коммунистической партии Советского Союза, М., 1984, с. 323-325.

էր անթույլատրելի: Սա առաջին ազդակն էր, որը կանխորոշում էր նաև Հայաստանի տարածքում գործող կուսակցությունների վերացման մասին, քանի որ, ինչպես հայտնի է, թեև Խորհրդային Հայաստանը մինչև ԱԽՖՍՀ-ի ձևավորումը (1922 թ. մարտի 12) համարվում էր անկախ սոցիալիստական հանրապետություն, բայց իրականում տեղի իշխանություններն անվերապահորեն ենթարկվում էին ՌԿ(բ)Կ-ին, և առաջնորդվում վերջիններիս կողմից կիրառվող քաղաքականությամբ: Ըստ այդմ, Հայաստանում «կուսակցական դիկտատուրա», նույն է թե «պլորետարական դիկտատուրա» հաստատելու համար հարկ էր իշխանությունից և քաղաքական ասպարեզում ազդեցություն ունենալու հնարավորությունից ամբողջովին զրկել մյուս՝ ոչ կոմունիստական քաղաքական ուժերին:

Այլ՝ ուշադրության արժանի արտաքին ազդակներից մեկը պայմանավորված էր Խորհրդային Ռուսաստանի կողմից տարվող արտաքին քաղաքականությամբ: Խորհրդային իշխանությունները դիտարկում էին քեմալական Թուրքիային որպես իմպերիալիզմի դեմ պայքարի հնարավոր օջախ Արևելքում: Այդ առումով նրանք կարևորում էին Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների հաստատումը: Քանի որ հայկական ազգային կուսակցություններն առաջնահերթ խնդիր էին համարում Արևմտյան Հայաստանի ազատագրումը Թուրքիայի լծից, դրանց այդ մասի գործունեությունը, որ իրականացվում էր Հայաստանում և նպատակ էր հետապնդում պայքարել Թուրքիայի դեմ, միանշանակ բացասաբար էր անդրադառնում Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի մերձեցմանը: Սա ևս մեկ արտաքին ազդակ էր, որը խթանում էր խորհրդային ուժերի կողմից Հայաստանում գործող քաղաքական կուսակցությունների գործունեության վերացմանը: Նման ծրագրերով գործող հայ ազգային կուսակցությունների գործունեությունը բնականաբար դեմ էր քեմալական Թուրքիայի շահերին: Այդ տարիների Հայաստանի միջազգային հարաբերություններին առնչվող խնդիրները բավականին խորությամբ և բազմակողմանիորեն ուսումնասիրվել են մի շարք

պատմաբանների կողմից:[1] Սակայն դրանցում չի ներկայացված, մեր կարծիքով, ուշադրության արժանի հետևյալ իրողությունը, որն անկասկած իր որոշակի նշանակությունն է ունեցել Հայաստանում միակուսակցական համակարգի հաստատման գործում, դառնալով դրա արտաքին գործոններից մեկը: Խնդիրը վերաբերում է 1921 թ. մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև Մոսկվայում կնքված պայմանագրի 8-րդ և 1921 թ. հոկտեմբերի 13-ին ՀՍԽՀ-ի, Ադրբեջանական ՍԽՀ-ի, Վրաստանի ՍԽՀ-ի և Թուրքիայի միջև կնքված Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածներին: Հայտնի է, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրում չկա որևէ նշում կուսակցությունների կամ քաղաքական կազմակերպությունների գործունեությունն արգելելու մասին, սակայն 10-րդ հոդվածում կարդում ենք, որ Հայաստանի կառավարությունը պարտավորվում է հեռացնել պետական կառավարումից բոլոր նրանց, ովքեր սադրում և հետապնդում են իմպերիալիստական նպատակներ երկու երկրների մեջ խաղաղությունը խաթարելու համար:[2] Սա կարծես թե հող է նախապատրաստում Թուրքիայի համար վերոնշյալ մյուս պայմանագրերում ավելի կոնկրետ պահանջներ դնելու համար:

Մոսկվայում կնքված պայմանագրի 8-րդ հոդվածում նշվում է. «Պայմանավորվող 2 կողմերը պարտավորվում են իրենց տերիտորիաներում (տարածքներում-Ա.Մ.) արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի, կամ նրա տերիտորիայի մի մասի կառավարության

[1] Ալիխանյան Ս.Տ., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Ե., 1966, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 1974, Զոհրաբյան Է., Աղայան Ծ.Պ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Ե., 1981, Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, Խաչատրյան Կ. Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Ե., 2007 և այլն:

[2] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 393:

դերն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև պարտավորվում է իրեն տերիտորիայում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարը մյուս երկրի դեմ: Ռուսաստանն ու Թուրքիան փոխադարձության պայմանով ստանձնում են նույնպիսի պարտավորություն նաև Կովկասի Սովետական Հանրապետությունների վերաբերմամբ:

Համարվում է որոշված, որ սույն հոդվածում հիշատակված թուրքական տերիտորիայի տակ հասկացվում է այն տերիտորիան, որը գտնվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության զինվորական և քաղաքացիական անմիջական կառավարման ներքո»:[1]

Այս կետով, փաստորեն, Խորհրդային Ռուսաստանը պարտավորություն էր ստանձնում արգելել Հայաստանում գտնվող քաղաքական այն ուժերի գործունեությունը, որոնք պայքարում էին թուրքական լծից Արևմտյան Հայաստանի ազատագրման համար: Ելնելով այն հանգամանքից, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ձևավորված հայկական քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները բնույթով ազգային էին և ձգտում էին հասնել Թուրքիայի լծի տակ գտնվող հայկական տարածքների վերադարձին օրինական տիրոջը՝ հայ ժողովրդին, ուստի քաղաքական բոլոր այդ ուժերը ըստ պայմանագրի այս կետի ենթակա էին խորհրդային ուժերի կողմից գործունեության դադարեցման:

Գրեթե նույն հոդվածի կրկնությունը հանդիսացավ նաև Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածը:[2]

Այս հոդվածներից արդեն իսկ կարելի էր հետևություն կատարել, որ Հայաստանում գործող ազգային կուսակցություններին չէր թույլատրվելու գործունեություն ծավալել Հայաստանի տարածքում: Այսպիսով, այս պայմանագրերը ևս մտնում էին այն արտաքին գործոնների շարքը, որոնք կանխորոշում էին Խորհրդային Հայաստա-

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Ե., 1972, էջ 502:

[2] Նույն տեղում, էջ 521:

նում քաղաքական կուսակցությունների (բացի ՀԿ(բ)Կ-ից) գործունեության կասեցումը և լուծարումը:

Թեև Կարսի պայմանագիրը բացի հայկական կողմից ստորագրել էին նաև Վրաստանն ու Ադրբեջանը, այդուհանդերձ ակնհայտ է, որ պայմանագրի 10-րդ կետն ուղղված էր միմիայն Հայաստանին: Այս առումով կարելի է օրինակ բերել Ադրբեջանի ազգային կուսակցություններից առաջատար դիրքում գտնվող «Մուսավաթ» կուսակցությանը: 1911 թ. ձևավորված այդ կուսակցությունը, որը 1918-20 թթ. ղեկավարում էր Ադրբեջանը, իր նպատակն էր համարում մահմեդական բոլոր ժողովուրդների բարգավաճումը: Դրա վառ ապացույցն է վերջիններիս ծրագրում տեղ գտած հետևյալ դրույթները. «Բոլոր մուսուլմանական ժողովուրդների միավորումը առանց ազգային խտրականության և կրոնական մեկնությունների», «Մուսուլմանական երկրների հարձակվողական և պաշտպանական ուժերի զարգացում» և այլն[1]: Սրան կարելի է ավելացնել նաև Մուսավաթի կողմից Ստամբուլում 1912 թ. լույս տեսած «Սաբիլ-ուլ-Ռեշադ» ամսագրում տեղ գտած հայտարարության հետևյալ խոսքերը. «Մեր միակ հույսը և փրկության ճանապարհը գտնվում է Թուրքիայի անկախության և զարգացման մեջ»[2]: Բնական է, որ այսպիսի նպատակներ և գաղափարներ ունեցող կուսակցությունը չէր կարող որևէ կերպ վտանգ նպետության կառավարմանը մասնակից դարձնելու մասին: Սակայն հետագայում Մոսկվայի ու Կարսի վերոհիշատակած պայմանագրերում հայտնվում են ներկայացված հոդվածները: Հայտնի է, որ պատմական այդ աննշան ժամանակահատվածում (1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. մարտ-հոկտեմբեր) Հայաստանում տեղի ունեցան քաղաքական լրջագույն իրադարձություններ, մասնավորապես՝ քաղաքացիական կռիվներ, որոնք հնարավորություն ընձեռեցին Թուրքիային առաջ քաշելու և հասնելու վերոնշած պայմանագրերում նման հոդվածների առկայությանը: Բնականաբար դա հաջողեց, քանի որ համընկնում էր Խորհրդային Ռուսաստանի, և,

[1] И. С. Багирова, Политические партии и организации Азербайджана в начале 20-ого века, 1900-1917, «Елм», Баку 1997, стр. 100.

[2] Նույն տեղում, էջ 101:

ինչու ոչ, Հայաստանի կոմունիստ ղեկավարների նպատակներին: Ինչպես տեղին նկատել է Կ.Խաչատրյանը. «Հ.Յ. Դաշնակցության դեմ բռնությունների գործադրումը հետապնդում էր ևս մեկ նպատակ՝ ապացուցել քեմալականներին, որոնք Հայաստանի խորհրդայնացումից հետո էլ շարունակում էին թշնամական քաղաքականություն վարել Հայաստանի նկատմամբ և անվստահություն էին հայտնում Հայաստանի նոր իշխանությունների հանդեպ, մատնանշելով Դրոյի ներկայությունը կառավարությունում, որ թուրքերի համակրանքը և բարեկամութ-յունը հայցելու համար խորհրդային իշխանությունը պատրաստ է անհաշտ պայքար ծավալել Դաշնակցության դեմ»:[1] Դրան կարելի է ավելացնել, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունները հնարավոր է թե ուղղակի կատարում էին պայմանագրերի համապատասխան հոդվածների պահանջները: Ամեն դեպքում, այդ երկու պայմանագրերով Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանը ստիպված, ձևական թե իրական, բայց միջազգային պարտավորություն ստանձնեցին Հայաստանում արգելել Թուրքիայի դեմ հնարավոր գործողություններ կատարող կազմակերպությունների ու խմբերի գործունեությունը, ինչը նշանակում էր, փաստորեն, արգելել բոլոր հայ ազգային կուսակցությունների գոյությունը հանրապետությունում:

Հայ քաղաքական կուսակցությունների գործունեության կասեցման և լուծարման գործում վերոնշյալ արտաքին գործոնները, անշուշտ, դեր խաղացել են, բայց չեն եղել վճռականը: Վճռական գործոնն այն էր, որ խորհրդային երկրում գործող ընդդիմադիր համարվող բոլոր կուսակցությունները պետք է վաղ թե ուշ ասպարեզից հեռանային և երկրում հաստատվեր կոմունիստական մենիշխանություն և ապա՝ ամբողջատիրություն (տոտալիտարիզմ), որը հաստատվեց փոքր ավելի ուշ՝ 1930-ական թթ. կեսերից:

[1] Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Ե., 2007, էջ 59-60:

АРАМ МАНУКЯН
ИИ НАН РА

РЕЗЮМЕ

О ВНЕШНЕМ ФАКТОРЕ УСТАНОВЛЕНИЯ ОДНОПАРТИЙНОЙ УПРАВЛЕНЧЕСКОЙ СИСТЕМЫ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Установление однопартийной управленческой системы в советских странах исходило из коммунистических программ и идеологии. Авторитарный режим, который установился после октября 1917г. в России и других советских республиках, установился так же и в Армении. Становлению коммунистического авторитаризма в Армении способствовали так же некоторые внешние факторы которые представляются в данной статье. В число этих факторов входят так же политика проведенная советской Россией в отношении Турции, которая проявлялся в дипломатических отношениях между ними. В частности, статья восьмая Московского договора 16 марта 1921г. между Турцией и Россией, где говорится о ликвидации в своих государствах тех политических сил, деятельность которых преследует цель достижения власти в части территории или стране в целом другого государства. Почти дословно повторяется данный текст в десятой статье Карского договора между Турцией и Закавказскими республиками 13 октября 1921 г. Это, естественно, не имело решаюшего значения в процессе ликвидации других, не коммунистических партий в Армении, однако имело определенное влияние на данный процесс. Во всяком случае, ход развития дальнейших событий показывает, что Советская Армения приводила в жизнь требования выше указанных статьей. В соответствии с этими договорами, советские Россия и Армения формально приняли некоторые международные обязательства по запрещению в

Армении тех организаций и групп, деятельность которых направлено против Турции. Это означало практическое запрещение деятельности всех армянских национальных партий. Несомненно, эти внешние факторы сыграли определенную роль в ликвидации армянских национальных партий в республике, но, все же, они не были решаюшими, так как в советской стране рано или поздно должны были ликвидироваться все политические партии кроме коммунистической.

ԷԴՈՒԱՐԴ ՋՈՀՐԱԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

1991 թ. Հայաստանի անկախացումից անմիջապես հետո հողի մասնավորեցումով շատ արագ կերպով և միանգամից հեղաշրջվեց գյուղացիության կյանքը: Գյուղում հանդես եկան հողային և տնտեսական նոր հարաբերություններ: Հանրային սեփականության երկու ձևերի հիմքի վրա գործող համակարգը փլուզվեց, և սկսեց ձևավորվել սոցիալ-տնտեսական նոր համակարգ, որի հիմքը մասնավոր սեփականությունն է: Արմատապես փոխվեց գյուղական բնակչության սոցիալական կառուցվածքը, վերացան կոլտնտեսային գյուղացիությունն ու գյուղական բանվոր դասակարգը, սկսեց սոցիալական շերտավորման տևական գործընթաց, առաջ եկավ մանր սեփականատեր գյուղացիությունը, սկսեց ձևավորվել նաև գյուղական հարուստների խավը:

Հապճեպ կատարված ագրարային վերափոխումները կտրուկ փոխեցին գյուղի սոցիալական վիճակը, որը բնութագրվում էր գյուղական հասարակության խիստ ու արագ բևեռացմամբ, գյուղական բնակչության սոցիալական շերտավորմամբ, ինչը գնալով խորանում էր: Ճիշտ է նկատում ազգագրագետ Մ. Գաբրիելյանը, երբ գրում է. «Խորհրդային համակարգը, չնայած նրանում առկա թերություններին, ապահովում էր անհրաժեշտ նվազագույն կենսամիջոցներ: Երաշխավորված նվազագույնը խորհրդային համակարգի կարևոր առավելություններից էր, ուստի կտրուկ հրաժարումը դրանից վտանգում էր ոչ միայն տասնամյակների ընթացքում կայունացած տնտեսական, այլև հասարակական մշակութային հարաբերությունները: Այս և գյուղի վիճակը պայմանավորող բազմաթիվ այլ

գործոնները հաշվի չառնվեցին հանրապետության ղեկավարության կողմից, և 1991 թ. սկսվեց զանգվածային սեփականաշնորհումը»[1]:

Ի տարբերություն խորհրդային շրջանի գյուղի, որտեղ կարծեք թե ստեղծվել էր միատարրություն, չկային խիստ բևեռացում, հարուստների ու աղքատների խավեր: 20-րդ դարի վերջին տասնամյակում Հայաստանում կատարված ագրարային վերափոխումները նպաստեցին գյուղական բնակչության սոցիալական շերտավորմանը. սկսեցին ձևավորվել սոցիալական տարբեր՝ հարուստների, աղքատների, ինչպես նաև միջին հնարավորություններ ունեցողների խմբեր: Անշուշտ, շերտավորման այդ գործընթացը տարբերվում էր քաղաքային բնակչության շերտավորումից: Գյուղում հողի և արտադրության այլ միջոցների սեփականաշնորհումը, չնայած տեղ գտած թերություններին և անօրինականություններին, հիմնականում սոցիալապես արդար կատարվեց: Դրա հետևանքով գյուղը սոցիալապես այնպես չբևեռացվեց, ինչպես քաղաքը: Գյուղում սոցիալական շերտավորման գործընթացը կարելի է բաժանել երկու փուլի՝ առաջինը 1991-2000 թթ. և երկրորդը՝ 2001 թ. սկսած, երբ կատարվեց հողի իրավական ամրագրումը, հողի շուկայի ձևավորումը բերվեց իրավական դաշտ, հողը մտավ ապրանքային շրջանառության մեջ:

Աղքատության մակարդակը գյուղական վայրերում 1996-2001 թթ. եղել է ավելի ցածր, քան միջին հանրապետականը: 2001 թ. աղքատ է եղել գյուղական բնակչության 48,7 տոկոսը, այդ թվում՝ ծայրահեղ աղքատների թիվը կազմել է 11,3 տոկոս՝ միջին հանրապետական աղքատ և շատ աղքատ բնակչության 50,9 և 16 տոկոսի համեմատ: Քաղաքում բևեռացումը շատ ավելի խորն էր ու մասշտաբային, քան գյուղում:

Չեռնարկված ագրարային վերափոխումներին հակառակ՝ գյուղը դարձավ աղքատության զոհ, չնայած այն բանին, որ աղքատության մեջ հայտնվելու ռիսկը քաղաքային բնակչության շրջա-

[1] Մ. Գաբրիելյան, Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Ե., 2001, էջ 20:

նում ավելի բարձր էր, քան գյուղական բնակչության շրջանում: Թեև շատ զարմանալի է, որ սեփականություն՝ հող և անասուններ ունեցողը հայտնվում է աղքատության շեմին և այդ հարցում ետ չի մնում քաղաքային բնակչությունից: Ըստ պաշտոնական տվյալների՝ աղքատությունը Հայաստանում 1996 թ. գնահատվել է 54,7 տոկոս (քաղաքում՝ 58,8 տոկոս, գյուղում՝ 48 տոկոս): 1998-1999 թթ. աղքատ է եղել բնակչության 55,0,5 տոկոսը (քաղաքում 58,27 տոկոս, գյուղում՝ 50,76 տոկոս): 2001 թ. աղքատությունը գնահատվել է 50,9 տոկոս, որից 51,9 տոկոսը քաղաքաբնակներն են, 48,7 տոկոսը գյուղաբնակները[1]: Թվերը վկայում են, որ եթե 1990-ականների կեսերին, ի տարբերություն քաղաքների, գյուղերում աղքատության ցուցանիշը էականորեն ցածր էր, ապա 2001 թ. աղքատության մակարդակը և՛ գյուղում, և՛ քաղաքում գրեթե հավասար էր: Այսինքն՝ անցած տասնամյակում աղքատության մակարդակը փոխանակ իջնելու՝ բարձրացել է գյուղում: Այդ նշանակում է, որ փաստորեն իջել է նաև գյուղատնտեսության արտադրության մակարդակը:

1990 թ. գյուղատնտեսությունը, եթե կազմում էր համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 12,6 տոկոսը, ապա 1993 թ. այդ թիվը հասել էր 46,3 տոկոսի: Այդ աճը ոչ թե գյուղատնտեսության ոլորտի զարգացմամբ էր պայմնավորված, այլ՝ տնտեսության մյուս ճյուղերի աննախադեպ անկմամբ: Այլ խոսքով՝ Հայաստանի Հանրապետությունը կորցրեց արդյունաբերական նկարագիրը, ինդուստրիալ ագրարային երկրից վերածվեց հիմնականում ագրարային երկրի: Ճիշտ է, տնտեսության մյուս ճյուղերը հաջորդ տարիներին սկսեցին զարգանալ, սակայն գյուղատնտեսությունը շարունակում է մնալ որպես տնտեսության գերակա ոլորտ:

Նկատենք, որ եթե 1990 թ. ՀՆԱ-ում գյուղատնտեսության ցուցանիշը 12,6 տոկոս էր, ապա 1999 թ. այն կազմեց 27,2 տոկոս[2]: Գյուղատնտեսության գերակա ճյուղ լինելու մասին է վկայում այն, որ 2002 թ. գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակը

[1] Տե՛ս ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Ե., 2003, էջ 28-29:
[2] Տե՛ս «Իրավունք», N 35, ապրիլ, 2003:

կազմել է ընդհանուր զբաղվածների թվաքանակի 44,4 տոկոսը, իսկ ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշիռը՝ 23 տոկոս, այսինքն՝ գյուղատնտեսությունում արտադրողականությունը 1,9 անգամ ցածր է եղել միջինից և 3,1 անգամ ցածր՝ արդյունաբերության արտադրողականությունից[1]:

Այս փաստերը վկայում են, որ գյուղատնտեսության ոլորտում իրականացված վերափոխումները չնպաստեցին աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, այլ, ընդհակառակը, չնայած զբաղվածության մեծ քանակին, գյուղացու աշխատանքի արտադրողականությունն անկում ապրեց: Փոխվեց հայ գյուղացու սոցիալական կարգավիճակը, որը շարունակում է մնալ բավականին ծանր: Ասենք ավելին, գյուղն աղքատացման ավելի մեծ միտում ունի, քանի որ խոշոր ներդրումներ գյուղում, նշված ժամանակահատվածում, չեն կատարվել: 2002 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ վարկային ներդրումները գյուղատնտեսության մեջ կազմել են ընդամենը 7 մլդ դրամ կամ՝ 2001 թ. գյուղատնտեսության ՀՆԱ-ի 2,25 տոկոսը: Արդյունաբերությունում համապատասխան ցուցանիշը 2001 թ. կազմել է ՀՆԱ-ի 13,2 տոկոսը, իսկ ամբողջ տնտեսության համար՝ 8,1 տոկոս[2]:

Չնայած այն հանգամանքին, որ գյուղատնտեսությունը հանրապետությունում դարձել է գերակա ոլորտ, հայ գյուղացին իրեն յուրահատուկ աշխատասիրությամբ վերածվել է ինքն իրեն և մասնակիորեն քաղաքային բնակչությանը գյուղմթերքներով սպասարկող ու կերակրող սոցիալական խավի, այնուամենայնիվ չափազանց փոքր է պետության կողմից գյուղացիության հոգսերի նկատմամբ անհրաժեշտ ուշադրությունը:

Գյուղացիության զգալի մասը հայտնվել է աղքատների և մեծ մասամբ ծայրահեղ աղքատների սոցիալական վիճակում: Չնայած ներկայումս աղքատությունը գյուղում նվազեցնելու ջանքերին՝ այն մնում է գյուղական բնակչությանը բնութագրող հիմնական գործոնը:

[1] Տե՛ս ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Ե., 2003, էջ 60:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 61:

Մասնավորեցումից հետո մեկ-երկու տարում գյուղից կատարվող արտագաղթը նվազեց, բայց երկար չանցած՝ կյանք մտավ հակառակ գործընթացը[1]:

Աղքատությունը և չքավորությունը 1980-ական թվականների վերջերին գոյություն չունեին Հայաստանում թե՛ որպես հասկացություն և թե՛ որպես քաղաքացիների և ընտանիքների փաստացի դրություն: Դա, անշուշտ, չի նշանակում, թե այն ժամանակ հանրապետությունում չկային աղքատներ: Սակայն այդ երևույթը որակ չէր կազմում և չէր խոսում հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալական շերտավորման ու բևեռացման մասին:

Իրավիճակը կտրուկ փոխվեց 1990-ական թվականների սկզբին: Կարճ ժամկետում տեղի ունեցավ բնակչության երկու նոր, առաջներում գոյություն չունեցող, կատեգորիաների առաջացում՝ չքավորներ, որին պատկանում էր բնակչության 35-40 տոկոսը, և աղքատներ՝ բնակչության գրեթե կեսը:

Բնակչության 35-40 տոկոսի ամսական միջին շնչային եկամուտները 1996 թ. ցածր էր 20 դոլարից, իսկ մոտ 50 տոկոսինը տատանվում էր 20-50 դոլարի սահմաններում, այսինքն՝ հեռու էին կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունից: 1989-1996 թթ. բնակչության իրական եկամուտները կրճատվեցին 7 անգամ[2]:

Սոցիալական այդ ծանր պայմաններն առաջ բերեցին համատարած աղքատություն և թշվառություն թե՛ քաղաքային և թե՛ գյուղական բնակչության շրջանում:

Կոնկրետ գյուղացիությունն իր աղքատությունը հաղթահարելու համար պետք է ստացած հողամասի վրա վարեր արդյունավետ արտադրական գործունեություն, որի համար պայմաններ չկային:

Հողը գյուղացուն հանձնելով՝ պետությունը հոգ չէր տարել, թե գյուղացին ինչ պայմաններում և ինչ միջոցներով պետք է վարեր

[1]Վ. Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը 19-20-րդ դդ., 21-րդ դ. շեմին, Ե., 2001, էջ 368:
[2] Տե՛ս Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, Ե., 1997, էջ 51:

իր տնտեսությունը: Գյուղացին զրկվեց գյուղտեխնիկայից և ագրոսպասարկումից, միայնակ մնաց իր անհամար հոգսերի հետ: Նա ոչ միայն հայտնվեց ապրանքային արտադրություն կազմակերպելու ոչ նպաստավոր պայմաններում, այլ նաև իր արտադրանքը իրացնելու հարցում նույնպես հանդիպեց լուրջ դժվարությունների: Հանդես եկավ գյուղմթերքների վերավաճառողների մի նոր խումբ, որն ըստ էության, իրացնելով գյուղմթերքները, ավելի շահեկան վիճակում է, քան բուն այդ մթերքն արտադրող գյուղացիները: Արտադրող-վաճառող հարաբերությունները, քանի որ կարգավորված չեն փոխշահավետ գործընկերության սկզբունքով, չեն բացառվում գյուղացու արտադրանքի իրացմանը խոչընդոտող հանցավոր դրսևորումները: Սկզբում գյուղացին, կարծեք թե, ուրախ էր, որ հող է ստացել որպես սեփականություն, բայց կարճ ժամանակ հետո արդեն իր արտադրական գործունեության ու տնտեսավարման հարցում հանդիպելով անլուծելի խնդիրների, հիասթափվեց: Այսպես, 1995 թ. սոցիոլոգիական հարցումը ցույց տվեց, որ 1992 թ. գյուղացիների 82 տոկոսը դրական էր տրամադրված կատարված փոփոխության նկատմամբ, երեք տարի հետո այդ տոկոսն իջավ 53-ի: Դրան հակառակ՝ գյուղացիությունը դրական էր վերաբերվում կոլտնտեսություններն ու սովխոզները, այսպես, 1992 թ. կոլտնտեսությունների նկատմամբ դրական էր տրամադրված գյուղացիների 11 տոկոսը, երեք տարի հետո՝ 36 տոկոսը: Սովխոզների նկատմամբ՝ համապատասխանաբար 8 տոկոսը և 32 տոկոսը[1]:

Մասնատված, մանր հողակտորներ և նվազ անասնագլխաքանակ ունեցող ավելի քան 320 հազար գյուղացիական տնտեսությունները պետք է զարգացնեին հանրապետության գյուղատնտեսությունը[2], ապահովեն ապրանքային արտադրանք և այն էլ առանց պետական լուրջ աջակցության: Բնական է, որ ցանկալի արդյունք չէր ստացվի, այլ ավելի կքայքայվեր ամուր նյութատեխնիկական բազա

[1] Տե՛ս նույն տեղում:
[2]Տե՛ս էկոնոմիկա, հ. 1-3, Ե., 1998, էջ 29, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1993-1994, էջ 129:

ունեցող խոշոր տնտեսությունը: Փաստորեն, ապրանքային արտադրանք թողարկելու կոչված անհատական տնտեսությունների փոխարեն, ստեղծվեցին փակ բնատնտեսությամբ զբաղվող գյուղացիական մանր տնտեսություններ, որոնք իրենց առջև խնդիր դրեցին ամենից առաջ ապահովել իրենց ընտանիքների նվազագույն կենսամիջոցները, իսկ մի փոքր մասն էլ շուկայում վաճառելը: Ցավալի է, որ այս ամենը չէր նախատեսվում գյուղում վերափոխումներն իրականացնողների կողմից, թեև տնտեսությունից և առավելապես գյուղատնտեսությունից անգամ նվազ գիտելիքներ ունեցողն այս բանը պետք է գիտակցեր: Տնտեսության գործնական կառավարման փորձ չունեցող, հաճախ նաև տնտեսությունից անտեղյակ իշխանավորների ու տեղական չինովնիկների կողմից իրականացված մեթոդներով ագրարային վերափոխումները չապահովեցին գյուղացու տնտեսական արդյունավետ գործունեությունը: Բնականաբար չապահովվեցին նաև անհրաժեշտ կենսապայմաններ, և հայ գյուղացիության զգալի մասն ընկավ աղքատության հորձանուտը: Հարկային ծանր բեռը, ջրի, էլեկտրաէներգիայի, պարարտանյութերի, վառելիքի, սերմացուի, հացի գների օրեցօր կամայական թանկացումները, դրան ավելացրած իշխանավորների քմահաճ վերաբերմունքը, ծանր կացության մեջ էին դրել գյուղացիությանը:

Ագրարային վերափոխումները միայն մեկ դրական արդյունք տվեցին. գյուղում վերացավ գործազրկությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տեխնիկապես հագեցած խոշոր տնտեսություններում կատարվող աշխատանքի ծավալը կպահանջեր և կբավականացներ 180-185 հազար մարդու զբաղվածություն, մինչդեռ 1995 թ., ըստ վիճակագրության, այդ թիվն անցնում էր 546 հազարից: Այդ ժամանակ հանրապետության նյութական արտադրության բնագավառում զբաղվածների թիվը կազմել է մեկ միլիոն 87 հազար մարդ, որի 50,2 տոկոսը՝ գյուղատնտեսության մեջ: Այսինքն՝ ագրարային վերափոխումներից հետո գյուղատնտեսության բնագավառում աշխատանք է ստացել 360 հազարից ավել մարդ: Այդ ժամանակ արդյունաբերության մեջ զբաղվածները կազմել են տնտեսության մեջ աշխատողների 27,6 տոկոսը[1]: Այսինքն՝ ստացվում է, որ 1990-ական թվականների առաջին կեսին արտադրության մեջ բնակչության զբաղվածության առումով Հայաստանն ավելի շատ ագրարային երկիր էր: Շատ թե քիչ ինտենսիվ գյուղատնտեսությունը մի հարվածով վերածվեց էքստենսիվ գյուղատնտեսության, քանի որ սկսեցին անկում ապրել աշխատանքի արտադրողականությունը, բերքատվությունն ու մթերատվությունը:

Կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների լուծարման հետևանքով հանրապետությունում մշակվող, առանց այն էլ փոքր մակերես ունեցող հողակտորներն ավելի մանրատվեցին: Յուրաքանչյուր տնտեսությանը միջին հաշվով հատկացվեց համապատասխանաբար 1,3 և 1,5 հա հողաբաժին[2]: Առավել բնակեցված և պտղաբեր շրջաններում (Արարատյան դաշտ) տնտեսության միջին հողատարածքը մինչև 0,75 հա էր, երկրի հյուսիս-արևելքում՝ 2,5 հա-ից մի փոքր ավելի[3]:

Փոքր հողակտորների վրա դժվար էր կազմակերպել ագրոմիջոցառումներ, համակարգված ցանքաշրջանառություն, նորմալ ոռոգում, պարարտացում, մեքենայացում, իսկ անասնապահության մեջ անասնաբուծական աշխատանքների բարձիթող վիճակի հետևանքով աճել էր անասունների ստերջութունը: Բացի դրանից, տեղի էին ունենում ցեղական անասնագլխաքանակի կորուստներ, իջնում էին կաթնատվությունն ու մթերատվությունը: 1990-ական թվականներին ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ անասնապահության համար նպաստավոր Սյունիքի մարզում զգալիորեն կրճատվել էր անասունների գլխաքանակը: Այսպես, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1970 թ. կազմում էր 59,3, 1980 թ.՝ 64,6, իսկ 1999 թ.՝ ընդամենը 42,0 հազար: Մարզում զգալիորեն անկում ապրեցին նաև անասնապահության մյուս ճյուղերը: Այս փաստը իր դրսևորումն է գտնում նաև հիմնական անասնամթերքների արտադ-

[1] Տե՛ս Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, Ե., 1997, էջ 52:

[2] Հայաստանի Ազգային արխիվ, Ֆ. 113, ց. 165, գործ 171, էջ 12:

[3] Նույն տեղում, էջ 12:

րության մեջ: Եթե 1980 թ. արտադրվել էին 8,5 հազար տոննա միս, 36,9 հազ. տոննա կաթ և 390 տոննա բուրդ, ապա 1998 թ.՝ համապատասխանաբար 7,9 հազ., 41,2 հազ. և 135 տոննա[1]: Այդ ամենի հետևանքով ձևավորվեցին ոչ թե ֆերմերական տնտեսություններ, այլ արդյունքում, փաստորեն, ստեղծվեցին խոշորացված տնամերձ տնտեսություններ: Գյուղացիական մանր տնտեսությունների մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը. գյուղական տնտեսությունների հողատարածքի միջին մեծությունը 1,37 հա էր, ընդ որում, Արարատի մարզում 0,61 հա, Սյունիքում՝ 3 հա: Հանրապետությունում ընդհանուր առմամբ բավական ցածր էր բերքատվությունը: Օրինակ՝ հացահատիկի միջին բերքատվությունը, որը զբաղեցնում էր ամբողջ ցանքատարածությունների մոտ 60 տոկոսը, 1998-2001 թվականներին կազմել է 1608 կիլոգրամ՝ մեկ հա-ից: Այդ նույն ժամանակ աշխարհում մեկ հեկտարից բերքատվությունը կազմել է 2067 կգ, զարգացած երկրներում՝ 4000 կգ, իսկ եվրոպական միությունում՝ 6067 կգ: Մեկ կովի կաթնատվությունը 2001 թ. կազմել է 1000 լիտր, որը 4-5 անգամ ցածր էր զարգացած երկրների ցուցանիշներից[2]: Բերված թվերը հստակ պատկերացում են տալիս ագրարային վերափոխումներից հետո Հայաստանի գյուղատնտեսության մասին:

Հետևությունը պարզ է. գյուղատնտեսության օպտիմալ զարգացումը պահանջում է միավորել մանր հողակտորները և ստեղծել ֆերմերական խոշոր տնտեսություններ: Իսկ դա նշանակում է, որ պետք է ծավալվեն հողի վարձակալություն, առք ու վաճառք, ստեղծվեն խոշոր տնտեսություններ: Այդ գործընթացն, անշուշտ, իր հերթին նշանակում է գյուղում շերտավորման և բևեռացման ուժեղացում, ագրոպարենային համալիրի բոլոր օղակներում նոր արտադրատնտեսական հարաբերությունների ձևավորում: Այսինքն՝ սկսված ագրովերափոխումները դեռ չավարտվ՝ թևակոխեցին

[1] Մ. Գ. Մանասյան, Ա. Թ. Գրիգորյան, Ա. Հ. Պոտոսյան, Սյունիքի մարզ, բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, Ե., 2002, էջ 119:
[2] Տե՛ս ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Ե., 2003, էջ 24:

իրենց երկրորդ փուլը: Վերջինս սկսվեց շուկայի զարգացմանը նպաստող արմատական նոր քայլով. 2001 թ. ընդունվեց ՀՀ հողային նոր օրենսգիրքը, որի շնորհիվ հնարավոր դարձավ կառավարելու և շրջանառության մեջ դնելու շուկայական առուծախի ենթակա հողատարածքները[1]:

Ագրարային վերափոխումները և դրա հետևանքով գյուղացիության կյանքի արմատական փոփոխությունն երկարատև բարդ ու բազմապլան գործընթաց է, որը շարունակվում է առ այսօր: Ճիշտ չէր այն շուկայի տարերքին թողնելը: Ինքնահոսն այդ հարցում վտանգավոր է և հղի անցանկալի հետևանքներով: Դեռևս կան չլուծված և լուծման ճանապարհին գտնվող խնդիրներ:

Չեռնարկելով ագրարային վերափոխումները, գյուղում նոր համակարգին անցման գործընթացը՝ իշխանությունները լուրջ չմոտեցան խնդրին, հողը տվեցին գյուղացուն և մի կողմ քաշվեցին: Բավականին ուշ, հինգ տարի հետո իշխանությունները, կարծեք թե, սթափվեցին և սկսեցին մտահոգվել ու փորձեցին շտկել դրությունը: Նրանք գիտակցեցին, որ անհրաժեշտ է ագրոպարենային ոլորտի զարգացումը դնել ծրագրային հիմքի վրա: Վերլուծելով ագրարային վերափոխումների առաջին տարիների ընթացքն ու փորձը՝ հանրապետության ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարությունը մշակեց նմանատիպ մի ծրագիր, որն ընդգրկում էր հանրապետության ագրոպարենային համակարգի զարգացման ուղղությունները մինչև 2005 թ.: 1996 թ. ընդունվեց զարգացման տասը տարվա ծրագիր, որի իրագործումն ընթանալու էր երկու փուլով: Առաջին փուլը նախատեսվում էր 4-5 տարի ժամկետով[2] և ընդգրկում էր սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացի շարունակման ու մասնավոր հատվածի գերակայության ապահովման հարցերի լուծումը, ագրոպարենային համալիրի կառավարման, պետական կար-

[1] Է. Մինասյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Ե., 2003, էջ 104:
[2] Տե՛ս Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, Ե., 1997, էջ 95-97:

գավորման և ծառայությունների մատուցման համակարգի կատարելագործումը: Ծրագիրը նախատեսում էր պարենային ինքնապահովվածության ընդհանուր մակարդակի բարձրացում, որի նպատակը բնակչության հետագա աճող պահանջմունքների բավարարումն էր: Այդ կապակցությամբ իրականացվելու էր համալիրի կարևորագույն ճյուղերի զարգացման նպատակային ծրագիր: Ընդգծվում էին պետական տնտեսական քաղաքականության իրավական դաշտի ընդլայնումը և արտադրաֆինանսական հարաբերությունների հստակեցումն ու կատարելագործումը, որի կապակցությամբ անհրաժեշտ էր մշակել մի շարք օրենքներ և օրենսդրական ակտեր, փոփոխություններ կատարել ընդունված օրենքներում և կատարելագործել դրանք:

Ընդունված ծրագիրը շեշտը դնում էր ագրարային վերափոխումների և գյուղատնտեսության զարգացման պետական կառավարման ապահովման խնդրի վրա, այդ առնչությամբ պահանջվում էր հստակեցնել ագրոպարենային համալիրի կառավարման կառուցվածքն ու իրականացվող գործառույթները վերևից ներքև: Նախատեսվում էր ագրոպարենային համակարգում միջազգային համագործակցության ընդլայնում, արտաքին ինվեստիցիերկայացնել Թուրքիայի համար: Ավելացնենք նաև, որ այդ տարիներին Վրաստանում որևէ ընդգծված հակաթուրքական կուսակցություն չկար:

Հարկ է ուշադրություն դարձնել այն իրողությանը, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Խորհրդային Ռուսաստանի (հանձինս Բ. Լեգրանի) և Հայաստանի Առաջին հանրապետության կողմից ստորագրված Երևանի համաձայնագրում ոչ միայն խոսք չկա դաշնակցության կամ որևէ այլ կուսակցության կամ կազմակերպության գործունեության արգելքի մասին, նույնիսկ ավելին, պայմանավորվածություն կար Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի մեջ երկու ձախ դաշնակցականների ներգրավելու, այսինքն դաշնակցականներին աների ներգրավման նպատակով: Նշված խնդիրները պետք է լուծվեին ծրագրի կատարման առաջին փուլում, երկրորդ փու-

լում, որն ընդգրկում էր 2001-2005 թթ., նախատեսվում էր լուծել հետևյալ հարցերը.

1. Ագրոպարենային ոլորտի սպասարկումների ու ծառայությունների ընդլայնում, կոոպերացիայի տարբեր ձևերի և ինտեգրացիոն գործընթացի զարգացում և մրցակցային դաշտի ընդլայնում,

2. կարևոր էր նաև ծրագրային մյուս պահանջը. շուկայական տնտեսավարման պայմաններում պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև փոխհարաբերությունների հստակեցումը, պարենային շուկայի հավասարակշռումը, հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը, ազատ մրցակցային միջավայրի ընդլայնումը՝ գնորդների շահերի պաշտպանության ճանապարհով: Այս պահանջը բխում էր շուկայական հարաբերությունների պետական կարգավորման անհրաժեշտությունից, որը չպետք է վնասեր ազատ մրցակցությանը, շուկայի կարգավորիչ դերին: Հակամենաշնորհային քաղաքականության իրականացման միջով ենթադրվում էր հավասարակշռել պարենային շուկան՝ պաշտպանելով արտադրանքի և գնորդների շահերը:

Ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել նաև ըստ մարզերի հանրապետության գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման ու մասնագիտացման վիճակը, և տրվել են դրանց հետագա խորացման ուղիներն ու քանակական գնահատումները: Ծրագրում որոշակիորեն նշվում է, որ շուկայական տնտեսության պայմաններում գյուղատնտեսությունը, որպես կանոն, պետք է գտնվի պետության հովանավորության ներքո: Գործնականում դա պետք է արտահայտվեր գյուղատնտեսության ֆինանսական ապահովման, կոնկրետ հարկային, վարկային և դոտացիոն մեխանիզմների կիրառման մեջ: Մինչև 2005 թ. միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրվող արտաքին վարկերը պահպանելու էին իրենց կարևորու- թյունն ու մեծ նշանակությունը՝ զուգակցելով տնտեսությունների ներքին ֆինանսական ռեսուրսների հետ: Ծրագրի իրագործման երկրորդ փուլը (2001-2005 թթ.) պահանջում էր 164 միլիոն դոլարի ներդրում: Իսկ ծրագրի հաջող իրականացման արդ-

յունքում գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը 1995 թ. նկատմամբ 2005 թ. կազմելու էր շուրջ 30 տոկոս:

Շուկայական հարաբերությունների պայմաններում գյուղացու համար լուրջ խնդիր է արտադրանքի իրացումը, որն առանց պետության աջակցության հնարավոր չէ հաջողությամբ լուծել: Սակայն մինչև օրս չի հաջողվել օպերատիվ ու փոխշահավետ լուծում գտնել արտադրողների և մթերող ու վերամշակող ձեռնարկությունների միջև հարաբերությունների կարգավորման համար: Իսկ դա իր բացասական կնքին է դրել գյուղատնտեսության զարգացման ու գյուղացիության բարելավման վրա:

Գյուղում և գյուղատնտեսության բնագավառում շուկայական հարաբերությունների զարգացումն ու խորացումը, բնականաբար, առաջադրում է նոր խնդիրներ, գլխավորապես հողերի վերաբաշխման և խոշորացման խնդիրը, որն անմիջապես շոշափում է գյուղացիության շահերը: Խնդրի լուծումը կարող է կատարվել հողի առք ու վաճառքի ծավալման միջոցով: Նախ՝ անհրաժեշտ է մշակել օրենքներ և կիրառել տնտեսական այնպիսի լծակներ, որոնցով գյուղացին ստիպված լինի հրաժարվել սեփականաշնորհված հողի այն մասից, որն ինքը չի մշակում և վարձակալության չի տալիս: Նման հողերը 1995 թ. կազմել են շուրջ 80 հազար հեկտար: Բանն այն է, որ գյուղացին հոգեբանորեն դժվար է հաշտվում ստացած հողամասի չմշակած մասից վաճառքի կամ վարձակալության տալու երևույթի հետ: Ահավասիկ, վիճվարչության կողմից անցկացված հարցման արդյունքում 1995 թ. այն հարցին, թե ապագայում ի՞նչ եք մտադիր անել հողի հետ, գյուղացիները պատասխանել են հետևյալ կերպ. վաճառել՝ 13 տոկոս, տալ վարձակալության՝ 10 տոկոս, փոխանակել մեկ այլ արտադրամիջոցի հետ՝ 9 տոկոս, տալ ընտանիքի մեկ այլ անդամի՝ 47 տոկոս, դժվարացել են պատասխանել՝ 21 տոկոս[1]:

Արտադրատնտեսական կյանքն ու շուկան, անշուշտ, փոխել են գյուղացու հոգեբանությունը: Նա մասնակցում է հողի առք ու վաճառքին, հողի շուկային, որը կնպաստի հողերի խոշորացմանը, ֆերմերական խոշոր տնտեսությունների ստեղծմանը, հողի արդյունավետ օգտագործմանը:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 53-54:

Այդ գործընթացը գյուղում առաջ է բերել սոցիալական որոշակի լարվածություն, գյուղական բնակչության շերտավորման խորացում: Բայց այլ ճանապարհ չկա, քանի որ զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրների փորձը վկայում է, որ մանր հողակտորների վրա ապրանքային արտադրություն կազմակերպել հնարավոր չէ: Միայն ֆերմերական խոշոր տնտեսությունների ստեղծումն է գյուղատնտեսության զարգացման ճիշտ ուղին: Անշուշտ, սոցիալական շերտավորման արդյունքում գյուղում կձևավորվեն հարուստ գյուղացիների, միջակների և չքավորների կամ վարձու աշխատող գյուղացիների խավ եր: Գյուղում սոցիալական լարվածությունը մեղմելու և սոցիալական շերտերի գոյացումն առանց ցնցումների իրականացնելու գործում լուրջ դեր կարող են կատարել վարկային թափանցիկ և մատչելի քաղաքականությունն ու հարկային բեռի թեթևացումը: Դա նոր խթան կհանդիսանա գյուղական բնակչության զբաղվածության և կենսամակարդակի ապահովման համար:

2003 թ. օգոստոսի 8-ին հանրապետության կառավարությունն ընդունեց աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, որի իրագործման վճռական պայմանը տնտեսական անհամեմատ բարձր աճի ապահովումն է բոլոր ճյուղերի գծով: Քննարկելով գյուղական աղքատության հաղթահարման հիմնական ուղղությունները՝ ծրագիրը, բնականաբար անդրադառնում է նաև գյուղատնտեսության հեռանկարային զարգացման խնդիրներին՝ 2003-2015 թթ. կտրվածքով: Իրավամբ նշվում է, որ գյուղացիական տնտեսությունների ներկայիս ցածր արդյունավետության հիմնական պատճառներից մեկը դրանց տնօրինվող ռեսուրսների և արտադրության փոքր չափերն են, ինչպես նաև՝ հողակտորների մասնատվածությունը, որը մասնավորապես դժվարացնում է նաև կոլեկտիվ ենթակառուցվածքների օգտագործումը: Որպես կարևորագույն խնդիր առաջադրվում է տնտեսությունների խոշորացումը: Այն դիտվում է գյուղտնտեսության արդյունավետության աճի հիմնական նախապայմաններից մեկը, իսկ խոշորացման գլխավոր ու ելակետային

պայմանը հողի շուկայի կայացումն է, որի անհրաժեշտ բոլոր նախադրյալների ստեղծումը ավարտվել է 2004-2005 թթ.:

Նախատեսվում է ներդնել մասնավորապես հողի շուկայական արժեքի որոշման և օտարման համար անհրաժեշտ մեխանիզմները: Լայնորեն օգտագործվելու է հողի գրավը, որն անհրաժեշտ է գյուղատնտեսության բանկային վարկավորման էական ավելացման համար: Ընդ որում, նախատեսվում է նշված ժամանակահատվածում գյուղատնտեսության զարգացման ծավալներն ավելացնել մոտ 10 անգամ՝ 2015 թ. դրանք հասցնելով ծյուղի ՀՆԱ-ի 11 տոկոսին՝ 2001 թ. 2,3 տոկոսի համեմատ:

Միաժամանակ 2005-2006 թթ. կառավարության ընդունած որոշումներով սկսվեց և ակտիվացավ պահուստային հողերը գյուղական համայնքներին վերադարձնելու և դրանք աճուրդով վաճառելու մի գործընթաց: Դրա հետևանքով կտրուկ նվազեց մասնավոր հողատերերի հողի առքն ու վաճառքը: Աճուրդի հանված պահուստային հողերի գնորդները հիմնականում քաղաքաբնակներ են, ինչպես նաև `տեղական ինքնակառավարման մարմիններում վարչական լծակներ ունեցողներ: Փաստորեն խոշոր տնտեսությունների ձևավորումը տեղի է ունենում վարչական միջամտության հետևանքով, որը լուրջ խոչընդոտներ է ստեղծում մանր և միջին արտադրողների համար:

Խոշոր տնտեսությունների առաջացումը հնարավորություն է ստեղծում արդյունավետ և նոր սկզբունքներով կազմակերպել տեխնիկական սպասարկման, գյուղատնտեսական կադրերի պատրաստման, գյուղում աշխատելը խրախուսելու, գյուղացու սոցիալական, կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման, գյուղացու՝ համայնքների ճանապարհների վերականգնման, գազաֆիկացման, խմելու ջրի մատակարարման և այլ ենթակառույցների զարգացման համար:

Գյուղում մասնավոր խոշոր հողատիրության խրախուսմանը զուգընթաց, մանր արտադրողի շահերը պաշտպանելու և սոցիալական բևեռացումը հաղթահարելու նպատակով՝ անհրաժեշտ է խթանել կոոպերացիայի տարբեր ձևերը գյուղում: Դրա շնորհիվ տնտես-

վարող սուբյեկտները կպահպանեն իրենց ինքնուրույնությունը: Միաժամանակ անհրաժեշտ է մեծացնել և խրախուսել պետական աջակցությամբ ներդրումները, ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի տրամադրումը փոքր և միջին գյուղացիական տնտեսություններին:

ЭДУАРД ЗОГРАБЯН
ИИ НАН РА

НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕОБРАЗОВАНИЯ И СОЦИАЛЬНЫЙ СТАТУС СЕЛЬСКОГО НАСЕЛЕНИЯ АРМЕНИИ

РЕЗЮМЕ

Статья посвящена тем радикальным преобразованиям в деревне, которые произошли в 1991 г., сразу же после провозглашения независимости Армении. Приватизация земли и процесс перехода на рыночные отношения положили начало также и формированию новой социальной структуры. Но этот процесс не гладкий, он сопровождается многохарактерными задачами и определенными проявлениями. Вследствие социального расслоения деревни образовались слои бедных, крайне бедных, средних (середняков) и богатых. Однако, социальная поляризация в деревне не такая уже глубокая, как в городе. Новый этап аграрных преобразований, начавшийся в 2001 г. в деревне, ознаменовался также социальной поляризацией, которая углубила процесс расслоения.

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՊՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՎՐԱՍՏԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Սամցխե-Ջավախք-Ծալկան Հայկական լեռնաշխարհի, սակայն, Հայաստանի Հանրապետության կազմում չգտնվող միակ տարածաշրջանն է, որի վրա այսօր էլ ապրում է հայահոծ բնակչություն: Եվ որպեսզի ճշմարիտ պատկերացում կազմենք այս ժողովրդի ապագայի նկատմամբ, պետք է նախ հասկանանք, թե ինչ հիմքերի վրա է տարածաշրջանի կրթամշակութային կյանքը: Այս ամենին փորձել ենք անդրադառնալ Հայաստան-Վրաստան կրթամշակութային կապերի լույսի ներքո, որտեղ ՀՀ-ն պետք է, որ առանձնահատուկ ուշադրության արժանացներ այս հարցերը:

2008 թ. հունիսի վերջին Հայաստան այցելեց Վրաստանի ԿԳ նախարար Գիա Նոդիան: Հարևան երկրների նորանկախ պատմության մեջ Վրաստանի ԿԳ նախարարը ՀՀ էր այցելում առաջին անգամ: Սա արդեն ինչ-որ բան խոսում է, սակայն մինչ այս «պատմական» հանդիպմանն անդրադառնալը, հայ-վրացական կրթամշակութային կապերին անդրադառնանք 1991 թ.՝ անկախացումից ի վեր:

Հայաստան-Վրաստան կրթամշակութային կապերն սկզբնավորվել են անկախության սկզբնական տարիներից, երբ Հայաստանի և Վրաստանի միջև դեռևս նոր-նոր էին ձևավորվում դիվանագիտական կապերը[1]: Դեռ 1992 թ. երկու երկրների միջև կնքվել էր «Վրաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի

[1] Երկու երկրների մայրաքաղաքներում դեսպանատներ բացելու մասին պայմանավորվածություն ձեռք բերվեց Լ. Տեր-Պետրոսյանի և է. Շևարդնաձեի՝ Ստեփանավան քաղաքում 1992 թ. հունիսի 5-ի հանդիպման ժամանակ: Այս գործընթացն իր շարունակությունն ստացավ 1992 թ. հունիսի 18-ին երկու երկրների արտգործնախարարների երևանյան հանդիպման ժամանակ, երբ կողմերը ստորագրեցին երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնագիրը, տես՝ «Հայաստանի Հանրապետություն», 06.06.1992, «Ազգ», 18.07.1992, հմմտ.՝ «Հայաստանի Հանրապետություն», 18.07.1992:

Հանրապետության կառավարության միջև 1992-1995 թվականների տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին» համաձայնագիրը[1]: 1993 թ. մայիսի 19-ին երկու երկրների նախագահների երևանյան հանդիպման ժամանակ վարչապետներ Թ. Սիգուայի, Հ. Բագրատյանի, և համապատասխան այլ գերատեսչությունների կողմից, ի թիվս այլ պայմանագրերի, կնքվեցին նաև «ՀՀ և ՎՀ կառավարությունների միջև մշակութային, գիտական և հումանիտար համագործակցության մասին»[2]՝ երևանյան և այդ հիմքի վրա՝ 1993թ. հոկտեմբերի 15-ին «ՀՀ Կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչության և Վրաստանի Հանրապետության Սպորտի դեպարտամենտի համագործակցության մասին»[3]՝ վանաձորյան համաձայնագրերը:

Հարկ է նշել, որ վերոնշյալ պայմանագրերում բացակայում են հիշատակումները Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի մասին: 1990-ականների սկզբներին երկուստեք գտնվելով պատերազմական իրավիճակներում՝ փոխադարձորեն ձեռնտու էր թեմայի արծարծումից և կնճռոտ հարցերը մեջտեղ բերելուց խուսափելը: Հայկական կողմի համար անչափ կարևորվում էր Վրաստանի տարածքով բեռների և շարժակազմերի անվտանգ երթևեկումն ու այս հարցում Վրաստանից երաշխիքների ապահովումը, իսկ Խորհրդային Վրաստանից իր տարածքները ժառանգություն ստացած նորանկախ Վրաստանի համար, որից օրըստօրե անջատվում էին նախկին ինքնավար միավորումները, պետական-տարածքային անվտանգության կարևորագույն խնդիր էր Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի հարցը լուծության մատնելը: Այս շրջանում հայ-վրացական մշակութային կապերի «ջերմացում» կարելի էր համարել հայ մեծանուն

[1] «Հայաստանի Հանրապետություն», 06.06.1992, հմմտ.՝ ՀՀ Գերագույն Խորհրդի որոշումը՝ «Վրաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև 1992-1995թթ. տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին, 28 ապրիլի 1993 թ, ք. Երևան, Հ.Ն-0818-1:

[2] Համաձայնագիր՝ «ՀՀ և ՎՀ կառավարությունների միջև մշակութային, գիտական և հումանիտար համագործակցության մասին», Երևան, 19.05.1993: Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թ. մայիսի 19-ից:

[3] http://www.armeniaforeignministry.am/doc/conventions/3-15-georgia-sport-19-05-93-a.pdf.

բանաստեղծ Վ. Տերյանի ծննդավայր Գանձա գյուղում կազմակերպված պոեզիայի ավանդական տերյանական օրվա տոնահանդեսը (այդպիսի տոնահանդես կազմակերպվում է ամեն տարի), երբ 1993 թ. հուլիսի 18-ին Գանձայում հանդիպեցին ՀՀ Խորհրդարանի առաջին փոխնախագահ Արա Սահակյանի և Վրաստանի Խորհրդարանի խոսնակ Վախթանգ Գոգուաձեի գլխավորած պատվիրակությունները[1]:

Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի հարց պաշտոնական հանդիպումներում սկսվեց շոշափվել 1990-ական թթ. կեսերին, երբ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը 1996 թ. հունիսին Վրաստան կատարած իր այցի շրջանակներում եղավ նաև խնդրո առարկա Սամցխե-Ջավախք-Ծալկայում[2]: Չնայած Լ. Տեր-Պետրոսյանի այցն ընդհանրապես ուղղված չէր տարածաշրջանի զարգացմանն ու կնճռոտ խնդիրների լուծմանը, այլ այն կրում էր նախընտրական բնույթ, այնուամենայնիվ այցը եզակի էր այն իմաստով, որ հենց տեղում նախագահների մակարդակով պայմանավորվածություն ձեռք բերվեց տարածաշրջանում բացել ինչպես Թբիլիսիի, այնպես էլ Երևանի բուհերի մասնաճյուղեր[3]: Սակայն, ինչպես պարզ դարձավ հետագայում, պայմանավորվածությունն ի կատար ածվեց միակողմանի. 2002 թ. փետրվարի 7-ից մինչև 2007 թ. ուսումնական տարվա ավարտը Ախալքալաքի նախկին Պրոֆտեխուսումնարանի շենքում գործեց Իվ. Ջավախիշվիլու անվան ԹՊՀ-ի Ախալքալաքի մասնաճյուղը: Այդ տխրահռչակ մասնաճյուղը ևս մի չհաջողված փորձ էր՝ փոխելու տարածաշրջանի էթնոժողովրդագրական նկարագիրը: Հաստատությունում, ուր ուսուցումն իրականացվում էր միայն վրացերենով, բազմապիսի արտոնություններով սովորում էին ոչ թե տեղացի, այլ Վրաստանի այլ տարածաշրջաններից եկած ուսանողները, ովքեր մասնագիտանալով տարբեր ոլորտներում՝ աշխատանք-

[1] «Հայաստանի Հանրապետություն», 20.07.1993:

[2] Հայոց նորանկախ պետականության պատմության մեջ առաջին և ցավոք վերջին դեպքը էր, երբ նախագահն այցելում էր Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջան: ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանը, չնայած շատ հարցերում իր որդեգրած ազգային քաղաքականությանը, այնուամենայնիվ տասը տարիների ընթացքում չայցելեց տարածաշրջան՝ իր քաղաքականության մեջ այդպես էլ չկարողանալով կարևորություն տալ վերջինիս դերին ու նշանակությանը:

[3] «Ազգ», 07.06.1996:

ների էին նշանակվելու տեղում: Նշենք, որ արդեն 17 տարի Վրաստանի այլ վայրերից խնդրո առարկա տարածաշրջան վրացի երիտասարդների վերաբնակեցման քաղաքականություն է իրականացնում նաև ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղը[1], իսկ Ախալցխայի հայկական միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Ախալցխայի գյուղատնտեսական տեխնիկումի հայերեն լեզվով ուսուցմամբ հաշվապահական ֆակուլտետը, փակվել էր դեռևս Զ. Գամսախուրդիայի իշխանության օրոք: Զ. Գամսախուրդիային ուղղված դիմումի մեջ Ախալքալաքի Շրջխորհրդի գործկոմի ներկայացուցիչները բողոքում էին, որ «Ջավախքի հայ երիտասարդությունը փաստորեն դրանով զրկվում է Ախալցխայում սովորելու հնարավորությունից...»[2]: Իսկ Ախալքալաքի մասնաճյուղի «առաքելությունը» պերճաշուք կերպով ներկայացնում է հենց ինքը՝ մասնաճյուղի տնօրեն, պատմաբան Ռոին Կավրելիշվիլին. «Այս մասնաճյուղը, առաջին հերթին, ինչ խոսք, ծառայում էր ինտեգրմանը: Այստեղ տեղական բնակչության հետ միասին գալիս էին ուսանողներ Վրաստանի այլևայլ տարածաշրջաններից՝ մասնավորապես Սամտրեդիից, Ասպինձայից, Կախեթից, Բաթումից... Մ ինչ այդ, տեղական վրացի բնակչությունը չէր ճանաչում Վրաստանի այլ մասերի բնակչությանը: Համալսարանի շնորհիվ նրանք բարեկամացան, շատերը ընտանիքներ կազմեցին: Արևմուտքից ժամանած մասը մնաց Ախալքալաքում՝ նրանք բաշխվեցին դպրոցներում աշխատանքի: *Այնպես որ, համալսարանը իր գործը կատարում էր* (ընդգծումը մերն է – Վ.Ս.): Լուսավորության նախարարության նոր նախագիծը, հավանաբար այս գործը կշարունակի»[3]: Իսկ այդ «նոր

[1] http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=793&SectionID=0&Date=07/31/2008&Page Position=21, վերջինս նույնպես հայտնվել է փակման եզրին, դրա դեմ հանդես եկած Ախալցխայից կենտրոնական իշխանություններին հասցեագրվել է նաև ուղերձ: 2007 թ. լուծարվեց նաև նույն քաղաքականությունն իրականացնող ԹՊՀ-ի մեկ այլ՝ ադրբեջանաբնակ Մառնեուլիում գործող մասնաճյուղը, տես՝ http://www.bagin.info/default.asp?Lang=Am&NewsID=1610&SectionID=0&Date=07/31/2008&PagePosition=1.

[2] Обращение президенту Республики Грузия гос. Звиаду Гамсахурдия (Ջավախք, ք. Ախալքալաք, Դավիթ Ռստակյանի անձնական արխիվ, դիմումն անթվագիր է – Վ. Ս.):

[3] http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=888&SectionID=0&Date=07/19/2008& PagePosition=17.

նախագիծը» վերաբերում էր պետական միասնական բակալավրական ծրագրով քոլեջի ստեղծմանը:

Հայ-վրացական կրթական հարաբերությունների մասին պայմանագրեր ստորագրվեցին նաև 1997 թ. մայիսի սկզբին՝ Երևանում, դարձյալ նախագահների մակարդակով: Կողմերը համատեղ հրապարակեցին հուշագիր, կրկին հիշեցին իրենց հավատարմությունը՝ միմյանց պետական անկախության և տարածքային ամբողջականության սկզբունքներին հավատարիմ լինելու կարևորության մասին[1], ստորագրեցին շուրջ 11 փաստաթուղթ, որոնցից երկուսը վերաբերում էին կրթության և գիտատեխնիկական համագործակցություններին[2]: 1997 թ. նոյեմբերի 18-ին ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյանը Վրաստան երկօրյա պաշտոնական այցի ընթացքում Թբիլիսիում՝

[1] «Ազգ», 06.05.1997:

[2] Համաձայնագիր «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև կրթության բնագավառում համագործակցության մասին», ընդունվել է 03.05.1997 թ., ուժի մեջ է մտել 29.09.1998 թ., հմմտ.՝ Հանուն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀՀ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Դատարանի Որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև կրթության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 09.06.1998 թ., ք. Երևան, համար՝ ՍԴՈ-108, ուժի մեջ է մտել՝ 09.06.1998 թ., հմմտ.՝ ՀՀ Աժ Որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև կրթության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին, 15.09.1998 թ., ք.Երևան, համար՝ Ն-282-1, ուժի մեջ է մտել՝ 11.10.1998 թ.: Համաձայնագիր «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին», ընդունվել է 03.05.1997 թ., ուժի մեջ է մտել 29.09.1998 թ., հմմտ.՝ Հանուն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀՀ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Դատարանի Որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 30.06.1998 թ., ք. Երևան, համար՝ ՍԴՈ-120, ուժի մեջ է մտել՝ 30.06.1998 թ., հմմտ.՝ ՀՀ Աժ Որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին, 15.09.1998 թ., ք.Երևան, համար՝ Ն-280-1, ուժի մեջ է մտել՝ 11.10.1998 թ.:

Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի շենքում տեղի հայության հետ հանդիպման ժամանակ անդրադարձավ նաև կրթական ոլորտին առնչվող հարցերին[1]: «Չնայած մինչ այժմ ստորագրված հայ-վրացական ավելի քան 50 պայմանագրերին, հարկավոր է համագործակցությունն այս իրավական հիմքի վրա տեղափոխել ավելի գործնական դաշտ», - իր խոսքում նշեց ՀՀ վարչապետը[2]: Հանդիպմանը ներկա Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի ներկայացուցիչներից՝ Ախալքալաքի ժողկրթբաժնի (ներկայումս այն կոչվում է Վրաստանի ԿԳՆ-ի Ախալքալաքի շրջանի կրթական ռեսուրս կենտրոն) վարիչ Կ. Սնխչյանի կողմից բարձրացվեցին կրթական ոլորտին առնչվող բազմաթիվ սուր հիմնահարցեր[3]:

1998 թ. ընթացքում Երևանում ու Թբիլիսիում կնքվել են կրթամշակութային կյանքին առնչվող ևս երկու պայմանագրեր[4]: Երկրորդ՝ թբիլիսյան պայմանագիրը ստորագրվել է երկու երկրների նախագահների նոյեմբերի 20-21-ը տեղի ունեցած թբիլիսյան հանդիպման ընթացքում, որտեղ կողմերի միջև ստորագրվեց «Վրաստանի և Հայաստանի համագործակցության հետագա խորացման մասին» 17 կետից բաղկացած հռչակագիրը, որի 5-րդ կետում ասվում էր. «Հայկական կողմը ողջունում է Վրաստանի ղեկավարության ջանքե-

[1] «Ազգ», 19.11.1997:

[2] Նույն տեղում:

[3] «Վրաստան», 22.11.1997:

[4] Համաձայնագիր «ՀՀ Կառավարության և Վրաստանի գործադիր իշխանության միջև գեոդեզիայի, քարտեզագրության և երկրատեղեկատվության բնագավառում համագործակցության մասին», 26.10.1998 թ., ք. Երևան, ուժի մեջ է մտել՝ 07.06.1999 թ., հմմտ.՝ ՀՀ նախագահի հրամանագիրը «ՀՀ Կառավարության և Վրաստանի գործադիր իշխանության միջև գեոդեզիայի, քարտեզագրության և երկրատեղեկատվության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին, 18.05.1999 թ., համար՝ ՆՀ-272, ուժի մեջ է մտել՝ 27.05.1999 թ.: Համաձայնագիր «ՀՀ կառավարության և Վրաստանի գործադիր իշխանության միջև բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության մասին», 20.11.1998 թ., ք. Թբիլիսի, ուժի մեջ է մտել՝ 14.06.2001 թ., հմմտ.՝ ՀՀ նախագահի հրամանագիրը «ՀՀ կառավարության և Վրաստանի գործադիր իշխանության միջև բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին, 21.07.1999 թ., համար՝ ՆՀ-340, ուժի մեջ է մտել՝ 26.07.1999 թ.:

րը՝ ուղղված Վրաստանի հայազգի քաղաքացիների, այդ թվում նրա հոծ բնակության վայրերում, սոցիալ- տնտեսական հարցերի լուծմանը նպաստող և ազգային-մշակութային պահանջմունքների իրագործման համար լավագույն պայմանների ստեղծմանը»[1]:

Կրթամշակութային կապերին ու ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերը շոշափվեց ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի և Վրաստանի նախագահ Է. Շևարդնաձեի հերթական հանդիպման ժամանակ, որտեղ Ռ. Քոչարյանը Վրաստանին վերստին հայտնեց Սամցխե-Ջավախք-Ծալկայի հիմնախնդիրների լուծման գործում իր պատրաստակամության մասին: Ստորագրվեց «Հայաստանի և Վրաստանի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» պայմանագիրը[2]:

Հայ-վրացական հարաբերություններում 2004-2007 թթ. կրթության ոլորտին առնչվող հերթական ծրագիրը ստորագրվել է Թբիլիսիում՝ 2004 թ. հուլիսի 26-ին[3]: Պայմանագրի համար հիմք էր հանդիսացել 1997 թ. մայիսի 3-ին կնքված «Հայաստանի և Վրաստանի կառավարությունների միջև կրթության ոլորտում համագործակցության մասին» պայմանագիրը: 11 հոդվածից բաղկացած և մինչև 2007 թ. ուժի մեջ եղած սույն պայմանագրում[4] նույնպես որևիցե հիշատակում չկա Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի կրթամշակութային խնդիրների մասին:

Տրամաբանորեն նույնը կարելի է նշել նաև «Վրաստանի և Հայաստանի Կրթության և գիտության նախարարությունների միջև կրթության և գիտության ոլորտում 2008-2011 թթ. համագործակցության վերաբերյալ» 2008 թ. հունիսի 27-ին ստորագրված ծրագրի

[1] «Վրաստան», 28.11.1998:

[2] «Հայաստանի Հանրապետություն», 23.10.2001:

[3] Программа сотрудничества Министерства образования и науки Республики Армения и Министерства образования и науки Грузии в области образования на 2004-2007 гг., 26.07.2004 г., г. Тбилиси.

[4] 2004-2007 թթ. ծրագրի իրականացման ընթացքի և արդյունքների հետ կապված հարցերը քննարկվել են ՀՀ կրթության և գիտության փոխնախարար Բագրատ Եսայանի՝ հուլիսի 27-28-ը Թբիլիսի կատարած պաշտոնական այցելության ու Վրաստանի կրթության և գիտության փոխնախարար Թեյմուրազ Սամադաշվիլու հետ հանդիպման ժամանակ: Տես՝ http://www.panorama.am/am/education/ 2007/07/07/kg/.

վերաբերյալ[1]: Վերջին պայմանագիրն իր կառուցվածքային կետերով կրկնում է 2004-2007 թթ. «Հայաստանի և Վրաստանի կառավարությունների միջև կրթության ոլորտում համագործակցության մասին» 2004 թ. հուլիսի 26-ին ստորագրված թբիլիսյան պայմանագիրը, թեև վերջինիս համար նույնպես հիմք է ընդունվել 1997 թ. մայիսի 3-ի պայմանագիրը:

Հայաստանի Հանրապետությունը և Վրաստանը, որպես ԱՊՀ պետություններ, մաս են կազմել նաև «ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար համագործակցության մասին» 2005 թ. օգոստոսի 26-ին Կազան քաղաքում ստորագրված համաձայնագրին[2]:

Ընդհանուր գծերով ներկայացնելով անկախության շրջանում գիտատեխնիկական և կրթամշակութային ոլորտներին առնչվող հայ-վրացական միջպետական բոլոր պայմանագրերը՝ նշենք, որ դրանցից ոչ մեկը չէր ուղղված Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի կրթամշակութային կյանքի զարգացմանը: Ե՛վ Լ. Տեր-Պետրոսյանի, և՛ Ռ. Քոչարյանի նախագահության տարիներին այն նույն «զգուշավոր» քաղաքականությունը, որը վարվում էր Վրաստանի նկատմամբ բազմաթիվ ոլորտներում, տարածվում էր անչափ կարևոր այս ոլորտի վրա ևս:

Չկարողանալով իրավական ճանապարհով, միջպետական պայմանագրերով հասնել հարցի կարգավորմանը՝ Հայաստանի Հանրապետությունն առ այսօր բավարարվում է միայն Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի, այդ թվում՝ Աբխազիայի ու Վրաստանի հայկական դպրոցներին դասագրքեր տրամադրելով[3]: Չնա-

[1] Ծրագիր՝ «Վրաստանի կրթության և գիտության նախարարության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջև կրթության և գիտության ոլորտում 2008-2011 թթ. համագործակցության վերաբերյալ», 27.06.2008 թ., ք. Երևան:

[2] Համաձայնագիր «ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար համագործակցության մասին», 26.08.2005 թ., ք. Կազան: Պայմանագիրն ստորագրած 10 պետություններից Հայաստանի Հանրապետությունը, Վրաստանը, Ադրբեջանը, Մոլդովան և Ուկրաինան պայմանագրին միացել են վերապահումներով: Համաձայնագիրը ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2006 թ. ապրիլի 17-ին:

[3] ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ 2004 թ. Պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին, ք. Երևան, ընդունվել է՝ 12.02.2004 թ., ստորագրվել է՝ 10.03.2004, վավերացվել է՝ 15.03.2004, համար՝ N 216-Ն, ուժի մեջ է մտել՝ 30.03.2004 թ.: Հմմտ.՝ ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ 2005 թ. Պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին, ք. Երևան,

յած Հայաստանի կառավարության որոշումների մեջ պետական միջնաժամկետ ծախսերում «կշարունակվեն Վրաստանի և Աբխազիայի հայկական դպրոցներին դասագրքերով ապահովման աշխատանքները, կստեղծվի հայ գրականությունից ուսումնական ձեռնարկ Սփյուռքի համար, կբավարարվի մնացած երկրների ուսումնական գրականության հայտերը՝ առնվազն 15000 օրինակ»[1], սակայն Վրաստանն արդեն վաղուց կատարել է իր հակաքայլերը. արդեն երկու տարի է, ինչ Վրաստանի Կրթության և գիտության նախարարությունն ընդունել է որոշում՝ հրաժարվել ՀՀ-ից ուղարկված դասագրքերից և ինքնույն ստեղծել նորը: 2007 թ. հայկական դպրոցների համար հրատարակվեցին մի շարք դասագրքեր (մաթեմատիկայի, քիմիայի, ֆիզիկայի, բիոլոգիայի, երաժշտության և այլ), սակայն, ինչպես այդ մասին նշում են Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի դպրոցների տնօրենները, այդ գրքերով հնարավոր չէ դասավանդել, քանի որ թարգմանությունն այնքան անորակ է, որ ոչ միայն աշակերտները, այլ նաև ուսուցիչները դժվարանում են հասկանալ շարադրված մտքի իմաստը: Հետևաբար, Վրաստանի քմահաճ հայեցողությամբ, Մայր պետությունից ուղարկվող դասագրքերը դառնում են դպրոցների գրադարանների կամ ներքնատների զարդը:

Չնայած այս ամենին՝ Հայաստան-Վրաստան կրթական հարաբերությունների առանցքում շարունակում է մնալ արդեն իրեն սպառած՝ «Վրաստանում հայկական դպրոցներին դասագրքերով ապահովելու եւ աշակերտների/ուսուցիչների փոխանակման ծրագրի»[2] քաղաքականությունը: Սա խոսում է հայ-վրացական գոնե այս

ընդունվել է՝ 24.02.2005 թ., ստորագրվել և վավերացվել է՝ 18.03.2005 թ., համար՝ N 265-Ն, ուժի մեջ է մտել՝ 02.04.2005 թ.: Հմմտ.՝ ՀՀ Կառավարության որոշումը՝ ՀՀ 2004 թ. պետական բյուջեով նախատեսված կրթական մի շարք ծրագրերի ֆինանսավորման, ՀՀ 2004 թ. պետական բյուջեում վերաբաշխում և ՀՀ Կառավարության 2004 թ. փետրվարի 12-ի N 216-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, ք.Երևան, ընդունվել է 05.08.2004 թ., ստորագրվել է 18.09.2004 թ., վավերացվել է՝ 22.09.2004 թ., համար՝ N 1279-Ն, ուժի մեջ է մտել՝ 07.10.2004 թ.:

[1] ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ 2006-2008 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին, ընդունվել է՝ 01.06.2005 թ., ստորագրվել է՝ 22.06.2005 թ., վավերացվել՝ 27.06.2005 թ., համար՝ N 777-Ն, ուժի մեջ է մտել՝ 12.07.2005 թ.:

[2] http://yerkir.am/newspaper/?id=884:

ոլորտի հարաբերությունների՝ արդեն իրեն սպառած լինելու կամ գոյության բացակայության մասին:

Ներկա Վրաստանի տարածքում հայկական մշակույթի զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության հաջորդ քայլը Թիֆլիսի Պ. Ադամյանի անվան հայկական դրամատիկական թատրոնի և «Վրաստան» (նախկինում՝ «Խորհրդային Վրաստան», թերթը լույս է տեսնում 1920 թվականից) հայատառ թերթի հրատարակման սուբսիդավորումն է[1]: 2003-2007 թթ. ընթացքում յուրաքանչյուրին հատկացվել է տարեկան հինգական միլիոն դրամ (մոտ 17.000 $)[2]: Սակայն այստեղ էլ Հայաստանի կառավարությունը հետևողական չի գտնվել հատկացվող գումարների նպատակային և արդյունավետ ծախսման հարցում. Թիֆլիսում հրատարակվող «Վրաստան» թերթը իրականության մեջ ծառայում է ոչ թե հայ մշակույթին ու հայությանը, այլ վրացական իշխանության ղեկին գտնվող մարդկանց: Թերթում հրատարակվող նյութերը վրաց իշխանության գովքն երգելուց բացի, ոչինչ չեն տալիս հայությանը՝ ազգային ինքնագիտակցությունը խորացնելու, կազմակերպվելու, սեփական իրավունքները պաշտպանելու, հիմնախնդիրներն անաչառ ներկայացնելու և այլնի առումով: Միայն այս չորս տարիների ընթացքում ՀՀ պետբյուջեից հատկացված շուրջ 70.000$-ը (չհաշված թերթի վաճառքից ու բաժանորդագրությունից գոյացած գումարները) թերթի խմբագիր, վրաց իշխանություններին քծնվելու մեծ փորձ ունեցող, այժմ նաև՝ Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրդը վատնել է սեփական հայեցողությամբ: Ինչպես այդ մասին պերճախոս նշվում է, օրինակ՝ «Մշակույթի պահպանման, տարածման և զարգացման 2004 թ. պետական տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքում՝ «Վրաստանում հայ մամուլի զարգացման խթանում» և այլն[3], այս ամենից հետո, փաստորեն, կարելի է խոսել վերոնշյալի ճիշտ հակառակի մասին:

[1] ՀՀ Կառավարության որոշում՝ ՀՀ 2005-2007 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին, ք. Երևան, ընդունվել է՝ 17. 06. 2004 թ., ստորագրվել՝ 10. 07. 2004 թ., համար՝ N 985-Ն, ուժի մեջ է մտել՝ 27. 07. 2004 թ.:

[2] Տես՝ նույն տեղում:

[3] ՀՀ Օրենք՝ «Մշակույթի պահպանման, տարածման և զարգացման 2004 թ. պետական տարեկան ծրագիրը հաստատելու մասին», ընդունվել է՝

ՀՀ կառավարությունը պետբյուջեից պարբերաբար գումարներ է հատկացնում նաև Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի դպրոցներում վերանորոգչական աշխատանքների համար[1]: 2008 թ. սկզբին ՀՀ կառավարության որոշմամբ «Ջավախքի ներքին դպրոցների վերանորոգման համար» հատկացվել է երեք միլիոն դրամ (10.000$)[2], և ծրագիրն իրականացնելու համար այդ գումարը փոխանցվել է ՀՀ Քաղաքաշինության նախարարությանը, սակայն 2008 թ. մայիսին, ինչ-ինչ պատճառներից ելնելով, ՀՀ կառավարությունը հետ է վերցրել հատկացված գումարը[3]:

ՀՀ Կառավարությունը պարբերաբար միջոցներ է տրամադրում ««Ջավախք» հայրենակցական միություն» բարեգործական և «Վիրահայերի միասնություն» հասարակական կազմակերպություններին՝ վերջիններիս միջոցով «Ջավախքի ներքին դպրոցների վերանորոգում իրականացնելու համար»[4]: Այստեղ նույնպես ՀՀ կառավարությունը հետևողական չի գտնվել հատկացվող գումարների նպատակային և արդյունավետ ծախսման հարցում:

---

28. 04. 2004 թ., ստորագրվել է՝ 29. 05. 2004 թ., համար՝ ՀՕ-71-Ն, ուժի մեջ է մտել՝ 19. 06. 2004 թ.:

[1] ՀՀ Կառավարության որոշում ՀՀ 2008 թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին, ընդունվել է՝ 20. 12. 2000 թ., ստորագրվել է՝ 29.12.2007 թ., համար՝ N 1540-Ն, ուժի մեջ է մտել՝ 22. 01. 2008 թ.:

[2] ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ 2008 թ. պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ Կառավարության 2007 թ. դեկտեմբերի 20-ի N 1540-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ 2008 թ. պետական բյուջեով նախագծային այլ աշխատանքների իրականացման համար նախատեսված հատկացումների բաշխումն ըստ առանձին օբյեկտների հաստատելու մասին, ք.Երևան, ընդունվել է՝ 25.01.2008 թ., ստորագրվել է՝ 26.01.2008 թ., համար՝ N 35-Ն, ուժի մեջ է մտել՝ 07.02.2008 թ.:

[3] ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ 2008 թ. պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ Կառավարության 2007 թ. դեկտեմբերի 20-ի N 1540-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ Քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին, ընդունվել է՝ 08.05.2008 թ., ստորագրվել է՝ 27.05.2008 թ., համար՝ N 474-Ն, ուժի մեջ է մտել՝ 05.06.2008 թ.:

[4] ՀՀ Կառավարության որոշումը՝ ՀՀ 2008 թ. պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ Կառավարության 2007 թ. դեկտեմբերի 20-ի N 1540-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ Կառավարության աշխատակազմին գումար հատկացնելու մասին, ք. Երևան, ընդունման ամսաթիվը՝ 10.04.2008 թ., ստորագրման ամսաթիվը՝ 05.06.2008 թ., համար՝ N 544-Ն, ուժի մեջ է մտել՝ 21.06.2008 թ., հմմտ.՝ http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=1315&SectionID=0&Date=07/21/2008& PagePosition=7:

Սամցխե-Ջավախք-Ծալկայի կրթամշակութային կյանքի ներկա ընթացքը, փաստորեն, ամբողջովին վերահսկվում է Վրաստանի կողմից: Հայաստանի Հանրապետության մասով տարածաշրջանը ստանում է միայն դասագրքեր (որոնք, ինչպես նշեցինք, արդեն հարկավոր չեն) և դպրոցների վերանորոգման համար Կառավարության հատկացումների՝ հեռվից լսվող կամ չլսվող ձայնը միայն:

Իսկ այս ամենին հակազդող քայլերը, որոնք կկազմակերպեին ազգային արժանապատվության, սեփական մշակույթի ու ինքնագիտակցության պահպանման հողի վրա մեկ բռունցք կդարձնեին տարածաշրջանի բնակչությանը (հայությանը), բացակայում են: Դա չեն անում տեղի մի քանի՝ «ինտեգրման ճանապարհով քայլող» պաշտոնյաները, դա չի անում նաև ՀՀ-ն: Վերջինս չի խրախուսում անգամ տարածաշրջանի պատմությանն ու տարբեր հարցերին առնչվող մասսայական գրականության ստեղծմանը (այդպիսի գրականությունը լույս է տեսնում միայն բարերարների ու առանձին նվիրյալ մարդկանց միջոցով): Նշենք զավեշտի հասնող մեկ փաստ միայն. 2003 թ. մանկական, հանրագիտարանային, գիտահանրամատչելի և այլ գրականության հրատարակման գծով պետական պատվերների մասին ՀՀ Կառավարության որոշման մեջ տեղ գտած ավելի քան 121 անուն գրականության ցանկում մեկ գիրք է նշված Սամցխե-Ջավախք-Ծալկայի մասին, այն էլ՝ Մանկական գրականություն բաժնում՝ «Սրամիտ և միամիտ ջավախքցիներ» վերնագրով[1]...: Հայաստանի Հանրապետությունը նույնկերպ պետականորեն չի խրախուսում (կարելի է ասել՝ խոչնդոտում է) Սամցխե-Ջավախք-Ծալկայի մասին ռազմավարական հետազոտությունների կենտրոնների ստեղծմանը. այդ գործը նույնպես ընկած է շահագըր-

---

[1] ՀՀ Կառավարության որոշումը մանկական, հանրագիտարանային, գիտահանրամատչելի և այլ գրականության հրատարակման գծով 2003 թ. պետական պատվերների մասին, ընդունվել է՝ 15. 05. 2003 թ., ստորագրվել է՝ 02.06. 2003 թ., վավերացվել է՝ 10. 06. 2003 թ., համար՝ N 655-Ն, ուժի մեջ է մտել՝ 03. 07. 2003 թ.:

գիռ առանձին հասարակական կազմակերպությունների ու բարեխիղճ/ անբարեխիղճ մարդկանց վրա[1]:

ՀՀ կրթության ու գիտության նախարարության կողմից բազմիցս արված՝ Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանում հայ-վրացական համատեղ բուհ հիմնելու մասին առաջարկները, շարունակում են քաղաքավարի մերժվել վրացական իշխանությունների կողմից: Այդ մասին պարզորոշ հայտարարվել է Վրաստանի գրեթե բոլոր ԿԳ նախարարներ կողմից[2]:

Հայ-վրացական կրթամշակութային հարաբերությունների հետխորհրդային շրջանի ընթացքի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրականության մեջ այդ հարաբերությունները միրաժային են:

Վերոնշյալի համայնապատկերի վրա Հայաստանի Հանրապետության ջանքերն, ուղղված Սամցխե-Ջավախք-Ծալկայի կրթամշակութային կյանքի պահպանմանն ու զարգացմանն, ունեցել են ձևական բնույթ և դրանք որպես այդպիսին արդեն սպառել են իրենց:

---

[1] 2007 թ. փետրվարին ԵՊՀ շրջանակներում վերջապես հիմնվեց Շոթա Ռուսթավելու անվան Վրացագիտության կենտրոն, որի ֆունկցիաները բոլորովին այլ են, և վերջինիս պարտականությունների մեջ բոլորովին չի մտնում, բնականաբար, Սամցխե-Ջավախք-Ծալկայի մասին հետազոտությունների անցկացումը:

[2] Դեռ 2007 թ. նոյեմբերին Վրաստանի ԿԳ նախարար Ալեքսանդր Լոմայան հայտարարել էր, որ Վրաստանում հայկական դպրոցներ և ԲՈՒՀ-եր չեն բացվելու, քանզի դրան անհրաժեշտությունը չկա: Այդպես էր նա մեկնաբանել Հայաստանի կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանի հայտարարությունը, ըստ որի՝ Վրաստանում անհրաժեշտ է բացել հայկական մի քանի դպրոցներ և հայ-վրացական ԲՈՒՀ: Սամցխե-Ջավախքում հայ-վրացական ԲՈՒՀ բացելու մասին հայկական կողմի պահանջների կապակցությամբ Լոմայան հայտարարել է, որ ներկայումս Վրաստանում չկան մասնագետներ, որոնք կկարողանան դասավանդել այդ ԲՈՒՀ-ում: Նախարարը հայտնել է, որ Ի. Ճավճավածեի անվան համալսարանում (համալսարանը նախկինում կոչվում էր Ս. Սաբա-Օրբելիանու անվան Թբիլիսիի պետական մանկավարժական համալսարան) գոյություն ունի հայոց լեզվի և գրականության ամբիոն: Այն հայալեզու դպրոցների համար մանկավարժներ է պատրաստում: Լոմայայի խոսքերով, Վրաստանի քաղաքացիները ցանկանում են բարձրագույն կրթություն ստանալ Վրաստանի պետական լեզվով, իսկ նրանք, ովքեր ցանկանում են կրթություն ստանալ հայերենով, գնում են Հայաստան և այնտեղ են կրթություն ստանում (http://www.panorama.am/am/education/2007/08/22/krtutyun/)

Հայաստանի Հանրապետության պետբյուջեից տրամադրված միջոցներն, ուղղված տարածաշրջանի կրթամշակութային կյանքի պահպանմանն ու զարգացմանը, չեն ծառայել իրենց նպատակին: Դրանում մեղավոր է և՛ պետությունը, և՛ դրամական միջոցները տնօրինած հայաստանյան համապատասխան գերատեսչությունը կամ հասարակական կազմակերպությունները:

Վրաստանն իր վրացացման՝ վրաց լեզուն ու մշակույթը Սամցխե-Ջավախք-Ծալկայում արհեստականորեն տարածելու քաղաքականությամբ փակուղու առաջ է կանգնեցրել վերջինիս բնակչությանը (հայությանը), որի տարաբնույթ հետևանքների ի հայտ գալը իրեն ուշացնել չի տալու:

ВАЭ САРКИСЯН
ЕГУ

КУЛЬТУРНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ - ГРУЗИЯ В ПОСТСОВЕТСКИЙ ПЕРИОД

РЕЗЮМЕ

В постсоветский период между Грузией и Республикой Армения, как в культурно-образовательной сфере, так и в ряде других областей, были сделаны попытки создать основы взаимного сотрудничества. В связи с этим был подписан ряд международных договоров и соглашений, были составлены и подписаны протоколы совместных заседаний, связанных с данной сферой сотрудничества. Этот процесс продолжается до сих пор. Вместе со всем этим сдвиги в данной сфере не достигли высокого уровня, предусмотренные этими договорами и рядом других межгосударственных соглашений шаги так и остались на бумаге.

В условиях существующего хаоса в различных районах Грузии в среде армян, так и в Самцхе-Джавахке-Цалке, полученные из РА средства либо были потеряны, либо были потрачены не по назначению, став игрушкой в руках некоторых армян. С другой стороны, со стороны РА также не были разработаны.

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌԿ(բ)Կ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՊԼԵՆՈՒՄԻ 1921 Թ. ՀՈՒԼԻՍԻ 4-Ի և 5-Ի ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ադրբեջանական զանգվածային լրատվական որոշ միջոցներ (մասնավորապես՝ կայքէջերը) ողողված են ադրբեջանցի պատմաբանների և քաղաքագետների նյութերով, որոնցում փորձ է արվում հավոզել հասարակայնությանը, թե «վերջապես գտնվել է Ղարաբաղի՝ Ադրբեջանին «ի սկզբանե» պատկանելու ամենագլխավոր «ապացույցը»»: Խոսքը վերջիններիս մի «հայտնագործության» մասին է, որը կապված է 1921 թ. հուլիսի 2-7-ը Թիֆլիսում գումարված ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 4-ի և 5-ի նիստերի՝ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հայտնի որոշումների հետ: Մինչ հարցին անցնելն անհրաժեշտ ենք համարում համառոտ անդրադառնալ 1917-1921 թթ. Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի խնդրին:

1917 թ. փետրվարին Ռուսաստանում ցարական ինքնակալության տապալումից հետո Լեռնային Ղարաբաղը փաստացի դուրս էր մնացել նախկին կայսրության ելիզավետպոլի նահանգի կազմից (նրա կազմում էր 1868 թ.) և հավակնում էր դառնալ առանձին վարչաքաղաքական միավոր:

Ադրբեջանի և Հայաստանի անկախության հռչակումից հետո, 1918 թ. հուլիսի 22-26-ին Ղարաբաղի հայ գրեթե բոլոր քաղաքական ուժերի մասնակցությամբ Շուշիում հրավիրված ղարաբաղցիների առաջին համագումարն երկրամասը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր, լուծարեց հեղափոխական ուժերի ստեղծած ազգային ճակատի ժամանակավոր կառավարությունը և կազմեց նոր կառավարություն: Վերջինս ստացավ «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն» անունը, որի իշխանությունը տարածվում էր ինչպես Շուշի քաղաքի, այնպես էլ ողջ գավառի վրա: Սակայն տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական հետագա

զարգացումները, մասնավորապես՝ թուրք-ադրբեջանական հակահայկական քաղաքականությունը, նոր մարտահրավերների առջև կանգնեցրեց արցախահայությանը: Դիմագրավելով 1918-1920 թթ. ճակատագրական փորձություններին՝ Ղարաբաղը ոչ միայն չհայաթափվեց, այլև նորանկախ Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական ծանրակշիռ օգնության շնորհիվ 1920 թ. գարնանն ազատագրվեց և արցախահայության 9-րդ համագումարի (23-29 ապրիլի 1920 թ.) կողմից հռչակվեց Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը:

Իրադրությունն երկրամասում փոփոխության ենթարկվեց Անդրկովկասում Խորհրդային Ռուսաստանի քաղաքականության աշխուժացման, Կարմիր բանակի՝ տարածաշրջան ներխուժելու և Ադրբեջանի խորհրդայնացման արդյունքում: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ 1920 թ. մայիսի 25-ին Թաղավարդ գյուղում տեղի ունեցած արցախահայության 10-րդ համագումարը Լեռնային Ղարաբաղը հռչակեց խորհրդային:

Տարածաշրջանում գործող բարձրաստիճան բոլշևիկ գործիչների աջակցությամբ Բաքուն թեև շարունակում էր ջանքեր գործադրել Կարմիր բանակի զինագրավման տակ գտնվող Ղարաբաղում (ինչպես նաև Զանգեզուրում և Նախիջևանում) Ադրբեջանի գերիշխանությունը տարածել, սակայն՝ անարդյունք: Դրան էր խոչընդոտում արցախահայության ազգային-ազատագրական պայքարը:

1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում ՌՍՖԽՀ կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված համաձայնագրով իրավական ձևակերպում ստացավ «կարմիր զորքերի» կողմից Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի «վիճելի տարածքների» «ժամանակավոր» զինագրավումը: Վերջինս «չէր կանխորոշելու վիճելի տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության կամ Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության իրավասության խնդիրը»:[1]

Այսպիսով՝ պետք է փաստել, որ միջազգային իրավական տեսակետից 1917-1920 թթ. (Ռուսական կայսրության փլուզումից մինչև Ադրբեջանի և Հայաստանի խորհրդայնացումը) Լեռնային Ղարաբաղը հանդիսանում էր վարչաքաղաքական ինքնուրույն միավոր

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ереван, 1992, с. 574-575.

(եթե անգամ փորձենք անտեսել արցախահայության մի քանի հա-մագումարների՝ Արցախը Հայաստանի Հանրապետության անբա-ժանելի մաս հռչակելու մասին որոշումները), այն երբեք չի եղել ադրբեջանական անկախ պետության կազմում:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը քաղաքական նոր զար-գացումներ ստացավ 1920 թ. աշնան վերջին՝ պայմանավորված Հա-յաստանի խորհրդայնացումով: Հայաստանի խորհրդայնացումից հետո Լեռնային Ղարաբաղի հարցը լուծվում էր Խորհրդային Հա-յաստանի օգտին: Խորհրդայնացման կապակցությամբ Ադրբեջանի հեղկոմը նոյեմբերի 30-ին հանդես եկավ հռչակագրով, որում նշվում էր, որ Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի միջև սահմանային խնդիր այլևս գոյություն չունի, Զանգեզուրը և Նա-խիջևանն անցնում են Հայաստանին, Ղարաբաղի Լեռնային մասին տրվում է ինքնորոշման իրավունք: Հռչակագիրը դեկտեմբերի 2-ին հրապարակվեց Բաքվի «Կոմունիստ» թերթում: Ավելին, Ադրբեջանի հեղկոմը շուտով «Բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն» խորագրով դիմումով (որում Լեռնային Ղարաբաղին վերաբերող մասը տարբերվում էր հռչակագրից) ազդարարեց. «Այսօրվանից վերացված են հայտա-րարվում սահմանների մասին վեճերը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համար-վում են ՀՍԽՀ մասեր»: Որոշում-դիմումը տպագրվել է Երևանի «Կո-մունիստ» թերթի 1920 թ. դեկտեմբերի 7-ի համարում:

Հիմնախնդրի լուծման նման քաղաքականություն էր իրակա-նացնում նաև ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն: Վերջինիս կող-մից 1921 թ. հունիսի 3-ին ընդունված որոշման 5-րդ կետով Հայաս-տանի կառավարությանը հանձնարարվում էր հռչակագրով հայտա-րարել «Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելիության մասին»:[1] Բյուրոյի որոշումն ընդունվեց միաձայն, կողմ արտահայտ-վեց նաև Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը:

Ի կատարումն կովկասյան բյուրոյի որոշման՝ ՀՍԽՀ ժողկոմ-խորհը, կառավարության նախագահ Ալ. Մյասնիկյանի ստորագրութ-յամբ 1921 թ. հունիսի 12-ին ընդունեց համապատասխան հայտա-րարություն. «Ադրբեջանի ՍԽՀ հեղկոմի հռչակագրի (նկատի է առնվում 1920 թ. նոյեմբերի 30-ի դեկրետը – Կ. Խ.) և Հայաստանի ու

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1187, թ. 13: Տե՛ս նաև Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 633:

Ադրբեջանի ՍԽՀ-ների կառավարությունների միջև եղած համաձայ-նության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմվանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մաս»[1]: Հայտարարությունը հայերեն, ռուսերեն ու ադրբեջաներեն լեզուներով հունիսի 19-ին հրապարակ-վեց Երևանի «Խորհրդային Հայաստան», իսկ հունիսի 22-ին Բաքվի «Բակինսկի ռաբոչի» ռուսալեզու թերթերում:

Այսպիսով՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո մինչև 1921 թ. կեսերը Ղարաբաղի հարցը լուծվում էր բացառապես հա-յության օգտին, և թվում էր, որ ադրբեջանական կողմը վերջնակա-նապես հաշտվել է այդ իրողության հետ: Սակայն դա ամենևին էլ այդպես չէր. ադրբեջանցիները նախապատրաստվում էին «վճռա-կան գրոհի»:

1921 թ. հունիսի 25-ին Թիֆլիսում հրավիրվում է կովկասյան բյուրոյի մայիսի 2-ի որոշումով կազմավորած Անդրկովկասի հան-րապետությունների ներքին սահմանները որոշող հանձնաժողովի անդրանիկ նիստը: Հանձնաժողովում Հայաստանի միակ ներկայա-ցուցիչ Ալ. Բեկզադյանը նիստի մասնակիցներին ներկայացնում է վերջին տարիներին հայ ժողովրդի կրած ծանր կորուստների, Հա-յաստանի սոցիալ-տնտեսական ներկա դժվարին կացության, երկ-րում կուտակված բազմահազար գաղթականների բնակեցման խնդրի, վերջապես՝ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով Հա-յաստանի համար ստեղծված ծանր վիճակը: Հաշվի առնելով նշվա-ծը՝ Բեկզադյանն առաջարկում է Ադրբեջանից և Վրաստանից հայ-կական տարածքների կտրակցումներ կատարել Հայաստանի օգ-տին:

Հանձնաժողովի ադրբեջանցի և վրացի ներկայացուցիչները կտրականապես մերժում են տարածքային փոփոխությունների մա-սին Բեկզադյանի առաջարկը, դա որակում ազգայնական դիրքորո-շում, իսկ հանձնաժողովի նախագահ Ս. Կիրովը, որն աջակցում էր վրաց-ադրբեջանական այլանսին, շեշտում է. «Քաղաքական նկա-տառումներից ելնելով՝ ներկայումս տարածքային կտրակցումների մասին խոսք անգամ լինել չի կարող»:[2]

[1] Նույն տեղում, էջ 636:
[2] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 640-642.

Հանձնաժողովի հունիսի 25-ի նիստում առաջ քաշվեց նաև Լեռնային Ղարաբաղի հարցը, որի քննարկումը, սակայն, Ադրբեջանի ներկայացուցիչ Մ. Հուսեյնովի խնդրանքով հետաձգվում է՝ հարցի վերաբերյալ Բաքվից անհրաժեշտ հրահանգներ և լիազորություններ ստացած չլինելու պատճառաբանությամբ:[1]

Ստեղծված լարված մթնոլորտում, որը սպառնում էր ծախողել հանձնաժողովի աշխատանքները, Ս. Կիրովը և Գ. Օրջոնիկիձեն հունիսի 26-ին շտապում են հեռագրել Բաքու՝ Նարիմանովին. «Զանգեզուրում ստեղծված իրավիճակում Հայաստանի սահմանների որոշման բանակցություններում ընդմիջումը թողնում է խիստ աննպաստ տպավորություն: ... Խնդրում ենք շտապ հրավիրել քաղբյուրո և ժողկոմխորհ ու լուծել Ղարաբաղի հարցը»: Օրջոնիկիձեն և Կիրովը հայտնում են նաև հարցի վերաբերյալ իրենց կարծիքը՝ «Անհրաժեշտ է ղեկավարվել այսպիսի սկզբունքով՝ ոչ մի հայկական գյուղ չպետք է միացվի Ադրբեջանին, ինչպես և ոչ մի մուսուլմանական գյուղ չի կարելի միացնել Հայաստանին»:[2]

Նույն օրը հրավիրվում է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղ-բյուրոյի և կազմբյուրոյի համատեղ նիստ, որտեղ Օրջոնիկիձեի և Կիրովի առաջարկությունն արմատապես սխալ է համարվում: Ինչ վերաբերվում է Ղարաբաղի խնդրում Բեկզադյանի հարցադրմանը, ապա ընդունվում է հետևյալ որոշումը. «Նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի տնտեսական բացարձակ կապն Ադրբեջանի հետ՝ հարցը պետք է լուծել հենց այդ իմաստով»:[3] 1921 թ. հունիսի 27-ին որոշման մասին Բաքվից հաղորդելով Թիֆլիս՝ Հուսեյնովին, նշվում է, որ հակառակ դեպքում Նարիմանովը սպառնացել է Ադրբեջանի ժողկոմխորհի հրաժարականով: Պատասխանում Հուսեյնովը Նարիմանովին հուշում է, որ որոշումը սառնությամբ կընդունվի, որովհետև իր հետ զրույցում Օրջոնիկիձեն շիտակ հայտնել է, որ Ղարաբաղի հարցի լուծումը խորհրդային իշխանության պատվի հարցն է և պետք է լուծել վերջնական ու այն ձևով, «ինչպես ես Ձեզ երեկ հաղորդել եմ»:[4]

[1] Նույն տեղում, էջ 642:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 105, թթ. 7-10:
[3] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 645.
[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 105, թ. 11:

Սակայն անգամ բոլշևիկ բարձրաստիճան ղեկավարների վըճռական «հրահանգը» չազդեց Նարիմանովի վրա: Ադրբեջանը կոշտ և անզիջում քաղաքականություն որդեգրեց Ղարաբաղի հարցում: Հանդիպելով ադրբեջանական կողմի նման դիրքորոշմանը՝ Ալ. Բեկզադյանը հունիսի 27-ին հրաժարվում է մասնակցել անդրկովկասյան հանրապետությունների սահմանների հարցի որոշման հանձնաժողովի հետագա աշխատանքներին և պնդում, որպեսզի վիճելի հարցերը փոխանցվեն կովկասյան բյուրոյի քննարկմանը:

1921 թ. հուլիսի 2-7-ը Թիֆլիսում գումարված ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 4-ի նիստում, որին Օրջոնիկիձեի հրավերով մասնակցում էր Հյուսիսային Կովկասում (Նալչիկում) իր հանգիստն անցկացնող ՌԿ(բ)Կ կենտկոմի անդամ Ի. Ստալինը, քննարկելով Ղարաբաղի հարցը՝ քվեարկության արդյունքում ընդունվում է օրինական և արդարացի որոշում՝ «Լեռնային Ղարաբաղը ***մտցնել*** (ընդգծումը մերն է - Կ.Խ.) ՀՍԽՀ կազմ»: Սակայն որոշմանը դեմ է արտահայտվում Ն. Նարիմանովը, նա պնդում է, որպեսզի հարցի վերջնական որոշումը փոխադրվի ՌԿ(բ)Կ կենտկոմ: Պլենումն ընդառաջում է Նարիմանովին և վերջինիս առաջարկի ոգով փոխում իր որոշումը. «Քանի որ Ղարաբաղի մասին հարցն առաջացրել է լուրջ տարաձայնություններ, - նշվում է նրանում, - ՌԿԿ կենտկոմի կովկասյան բյուրոն անհրաժեշտ է համարում այն փոխադրել ՌԿԿ վերջնական որոշմանը»:[1]

Սակայն հարցը կենտկոմ չհասավ: Հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, հրավիրվում է կովկասյան բյուրոյի պլենումի արտահերթ նիստ, ուր վերանայվում են Ղարաբաղի հարցի վերաբերյալ հուլիսի 4-ի պլենումի որոշումները: Առանց քվեարկության պլենումը որոշում է. «Ելնելով մուսուլմանների ու հայերի միջև ազգային խաղաղության և Վերին ու Ներքին Ղարաբաղների տնտեսական կապի անհրաժեշտությունից, Ադրբեջանի հետ նրա մշտական կապից՝ Լեռնային Ղարաբաղը ***թողնել*** (ընդգծումը մերն է - Կ.Խ.) ԱդրՍԽՀ սահմաններում՝ նրան տրամադրելով մարզային լայն ինքնավարություն ...»:[2]

Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 4-ի և 5-ի նշված որոշումներում մեր կողմից ընդգծված բառերը՝ «***մտցնել***» և «***թողնել***», մեծ իրարանցում են առաջացրել ադրբեջանցի մասնագետների

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 649-650.
[2] Տես նույն տեղում:

շրջանում: Վերջիններս պնդում եմ, որ գտել են Ղարաբաղի՝ Ադրբեջանին պատկանելու «ամենահիմնական ապացույցը». ««Թողնել» կարելի է միայն այն, - գրում են նրանք, - ինչը մինչ այդ այնտեղ գտնվել է ի սկզբանե: Այս մեկ պարզ փաստաթուղթը վկայում է, որ Ղարաբաղը միշտ գտնվել է Ադրբեջանի կազմում»:[1] Ադրբեջանցի հետազոտողների «մտքի թռիչքին», «խորը գիտելիքներին» և «երկաթյա տրամաբանությանը» կարելի է նախանձել: Թող մասնագետները պնդեն իրենցը, սկզբնաղբյուրների վրա հիմնված հարյուրավոր հատորներ հրատարակեն, անհերքելի փաստաթղթեր ներկայացնեն, միևնույնն է՝ ադրբեջանցի մասնագետները ռուսերեն ընդամենը երկու բառի՝ «включить: և «оставить» բառախաղի միջոցով «ապացուցել են» Ղարաբաղի պատկանելիության խնդիրը: Իրոք որ, ինչպես նման դեպքերում են ասում՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Մեկ հարցում, թերևս, կարելի է համաձայնվել ադրբեջանցի պատմագիրների հետ: Դա այն է, որ նրանք «զարմանում և ծիծաղելի են համարում», թե ինչու հայերը, ինչպես նաև «անկախ մեդիաաղբյուրները և անգամ երրորդ երկրների քաղաքական գործիչները», նշում են, թե «Ղարաբաղը Հայաստանից խլվեց և Ադրբեջանին փոխանցվեց Ստալինի թեթև ձեռքով»: «Հիշեցնենք սակայն, - շարունակում է ադրբեջանցի պատմագիրը, - որ գործը տեղի է ունենում 1921 թ. կեսերին, երբ իշխանությունն երկրում ամբողջությամբ գտնվում էր գործունակ և ուժեղ Վ.Ի. Լենինի ձեռքերում, իսկ ՌԿ(բ)Կ կենտկոմի շարքային անդամ Ի.Վ. Ստալինի մասին դեռ շատ քչերը գիտեին»:[2]

Այո, հուլիսի 5-ի որոշման ընդունման գործում ՌԿ(բ)Կ կենտկոմի անդամ Ստալինի բացասական դերը մեծ էր, բայց, կարծում ենք, ոչ՝ որոշիչ: Այլապես, ինչո՞վ բացատրել, որ Ստալինի ներկայությունը հուլիսի 4-ի նիստին չէր խանգարել Հայաստանի օգտին արդարացի որոշման ընդունմանը: Չի բացառվում, որ հուլիսի 4-ի որոշումից հետո ադրբեջանական կողմին հաջողվել էր ստանալ ՌԿ(բ)Կ կենտկոմի առավել ազդեցիկ անդամների՝ Լենինի և Տրոցկու աջակցությունը, համոզել նրանց՝ հրահանգել Կովկասյան բյուրոյին

[1] http: //news.bakililar.az/news_razvenchanie
[2] Տե՛ս նույն տեղում:

Ադրբեջանի օգտին վերանայել հուլիսի 4-ի որոշումը: Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշման կայացման նշված վարկածի օգտին է խոսում նաև այն փաստը, որ պլենումին Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Մյասնիկյանը, Նարիմանովի օրինակով, չկնդեց ղարաբաղյան հարցի վերջնական լուծումը ՌԿ(բ)Կ կենտկոմ փոխադրելու հարցում, որի իրավունքը նա ուներ:

Հայկոմկուսի առաջին համագումարում (26-29 հունվարի 1922 թ.) ունեցած ելույթում, հերքելով իր և ՀԿ(բ)Կ կենտկոմի հասցեին հնչած խիստ քննադատությունը և ծանր մեղադրանքները, որ վերջիններս Ղարաբաղի հարցում չդրսևորեցին վճռականություն և ավելի հաստատակամ չկնդեցին երկրամասը Խորհրդային Հայաստանին միացնելու հարցում, Ալ. Մյասնիկյանը, կարծես արդարանալով, նշում է միայն, որ կովկասյան բյուրոյի պլենումի նիստը հիշեցնում էր Անդրկովկասի հանրապետությունների նախկին ղեկավարների պայքարը. «Այսպես՝ Ադրբեջանն ասում էր, եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա մենք նավթ չենք մատակարարի»:[1] Սակայն պետք է ենթադրել, որ անդրկուլիսյան բանակցություններում Նարիմանովի կողմից որպես որոշիչ կռվան առաջ է քաշվել ոչ միայն ադրբեջանական նավթի, այլև «թուրքական գործոնը»: Գաղտնիք չէ, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում բոլշևիկյան առաջնորդների համար որոշիչը ոչ թե ճշմարտությունն էր և հայ ժողովրդի արդար պահանջատիրությունը, այլ հենց Բաքվի նավթը և քեմալական Թուրքիայի բարեհաճ տրամադրվածությունը՝ համաշխարհային հեղափոխությունը դեպի մուսուլմանական Արևելք տարածելու հեռանկարի առումով: Հավելենք նաև, որ Խորհրդային Ռուսաստանի վրա թուրք-ադրբեջանական ճնշումը կրում էր հետևողական և շարունակական բնույթ:[2]

Պատմության նմանատիպ «սպիտակ էջերի» բացահայտման խնդիրն է, որ պետք է մտահոգի իրական մասնագետին, այլ ոչ բառախաղի օգնությամբ անհեթեթ և ճշմարտությունից շատ հեռու հետևություններ կատարելը, ինչով տարված են ադրբեջանցի շատ «մասնագետներ»:

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 2, թթ. 13, 23:
[2] Մանրամասն տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 2007, էջ 106-111:

Ինչևէ, ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշումով խախտվեց միջազգային իրավունքի հիմնարար՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, ոտնահարվեցին Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը (94,4 տոկոս) կազմող հայության իրավունքները, անտեսվեցին Խորհրդային Հայաստանի շահերը: Ահա թե ինչու ՀԿ(բ)Կ կենտկոմը 1921 թ. հուլիսի 16-ին միանգամայն սխալ և անբավարար ճանաչեց Ղարաբաղի հարցի վերաբերյալ կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի որոշումը:[1]

Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի կազմում «թողնելու» կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշումից հետո Ադրբեջանի ղեկավարությունը ջանք ու եռանդ չէր խնայում՝ ստանալու արցախահայության համաձայնությունը՝ Ադրբեջանի գերիշխանությունը ճանաչելու հարցում: Այդ նպատակին հասնելու համար ադրբեջանական իշխանությունները Լեռնային Ղարաբաղի տարբեր շրջաններում լայն քարոզարշավ անցկացրեցին, սակայն ամենուրեք հանդիպեցին «սառը դիմադրության»: Բաքվի ջանքերով Ստեփանակերտում հրավիրված շրջանի գործադիր կոմիտեների ներկայացուցիչների 1921 թ. հուլիսի 28-ի համագումարի աշխատանքների մասին Ղարաբաղից Երևան ուղարկած գաղտնի զեկուցագրերից մեկում նշվում է. «Դրությունն օրհասական է, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու համար»:[2] Այդպիսին էր Արցախի ողջ հայ բնակչության միահամուռ ցանկությունը, սակայն դրա հետ ոչ-ոք հաշվի չէր նստում:

Այնուհանդերձ, արցախահայության և Խորհրդային Հայաստանի ղեկավարության հաստատակամ և հետևողական ջանքերի շնորհիվ (երկու տարվա համառ դիմադրությունից հետո) Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ստիպված էին նահանջել և 1923 թ. հուլիսի 7-ի որոշումով Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավար մարզի կարգավիճակ:[3] Ճնշումների պայմաններում գնալով այդ քայլին՝ ադրբեջանական կողմը, սակայն, նոր ծուղակ էր նախապատրաստում արցախահայության համար՝ մարզի սահման-

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 18:
[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թթ. 41-42:
[3] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., էջ 669-670.

ներն այնպես «ճշգրտվեցին», որ Լեռնային Ղարաբաղի զգալի մասը (այդ թվում՝ Լաչինի (Քաշաթաղի) հատվածը) անջատվեցին մարզից և դրվեցին Ադրբեջանի անմիջական ենթակայության տակ:

Ինքնավար մարզի կարգավիճակի շնորհիվ էր նաև, որ խորհրդային տարիներին Արցախը դիմակայեց Ադրբեջանի սադրանքներին և ազգային խտրականության քաղաքականությանը, չհայաթափվեց: Իսկ պատմական ճշմարտությունն ու արդարությունը վաղ թե ուշ հաղթանակում են, և դրա ցայտուն օրինակն է ներկայիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (Արցախ), որը հայ ժողովրդի ազգային-ազատագրական հերոսական պայքարի շնորհիվ ձեռք է բերել իր անկախությունը, դարձել Մայր Հայրենիքի անբաժան մասը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԱԳԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ԱՂՋՆԻՔԸ ԽԵԹԱԿԱՆ ԵՎ ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ (Ք. ա. 14-9-րդ դդ.).....3

ԱԼԻՍ ԴՈՒՄԻԿՅԱՆ
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԱՐԺԵՎՈ-
ՐՈՒՄԸ ՎԻԿՏՈՐ ԼԱՆԳԼՈՒԱՅԻ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....11

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ՍՍԻ, ԼՈՌԻԻ ԵՎ ԱՆԻԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ.....20

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ
ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ՀԱԼԵՊԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ.....45

ՋՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ
ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (XIII-XIV դդ.).....57

ԱՐՄԵՆ ՎԻՐԱԲՅԱՆ
ՋԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱՎԱԳ ՔԱՆԱՔԵՌՑՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....78

ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԳԱՆՋԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԸ XVIII
ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԻ
ՈԳԵՇՆՉՈՂ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ 86

ԱՐԿԱԴԻ ԱԿՈՊՈՎ
ՕԼԹՈՒ ԳԱՎԱՌԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ (XVI Դ. – 1878 Թ.).....94

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ԿԱԼՎԱԾԱՏԻՐԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՌՈՒ ԳԱՎԱՌՈՒՄ
(XVIII դ. ՎԵՐՋ -XIX Դ. ՍԿԻՋԲ).....102

ՄԱՆՅԱ ՆԱՋԱՐՅԱՆ
Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1860-1863 ԹԹ. 111

ԳԵՎՈՐԳ ԱՅՎԱԶՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ – ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1860 - 1870 - ԱԿԱՆ ԹԹ. 124

ՍԱԼԲԻ ՍԱՂՏԸՃԵԱՆ
ԿԻԼԻԿԻՈՅ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒ
ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ 20-ՐԴ ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ.....130

ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ
ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԹՈՔԱՏ, ԱՄԱՍԻԱ, ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ
ՍԱՆՋԱԿՆԵՐԻ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ
ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....139

ՌՈՒԲԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....151

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՍԱԼՈՆԻԿՅԱՆ «ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՄԻՏԵԻ
ԵՎ ՍԻՈՆԻԶՄԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ.....172

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԹԻՖԼԻՍԻ «ՆՈՐ ՀՈՍԱՆՔ» ԱՄՍԱԳԻՐԸ (1913 -1915 ԹԹ.) 182

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԸ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....197

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ 210

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԲՐԻՏԱՆԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ.....225

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
1917 ԹՎԱԿԱՆԻՆ 240

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՋԱՎԱԽՔԸ
1918-1920 ԹԹ.....258

ԳՈՒՐԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
/ 1918 – 1920-ական թթ./.....285

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ՀՍԽՀ ԱՐՏԳՈՐԾԺՈՂԿՈՄԱՏԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԱԺՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1921-1922 ԹԹ.).....295

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ՇՈՒՐՋ.....305

ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲՅԱՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒ-
ՆՈՒՄ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.....316

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՎՐԱՍՏԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....332

Հ Ա Վ Ե Լ Ո Ւ Մ
ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Ռ.Կ(բ)Կ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ
ՊԼԵՆՈՒՄԻ 1921 Թ. ՀՈՒԼԻՍԻ 4-Ի և 5-Ի ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....346

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....356